



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Unpublished
by [unclear]
Th
=

891.99
U-99

19 NOV 2011

391.99

5-99

այ

3

ՄՈՒՐԱՑԱՆԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՆՈՅԻ ԱԳՈՒԱԻԸ

ԱՌԱՔԵԱԼԸ

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՅԻ

ԹԻՖԼԻՍ, 1904

ԱՐԱԳԱՏԻՊ ՏԳ. ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
Գուշկինեան փողոց № 12.

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ն

Հետևելով առաձին թէ՛ «լաւ է ուշ՝ քան երբէք», որոշեցի վերջապէս առանձին գրքերով հրատարակել իմ երկասիրութիւնները, որոնք 1880-ից սկսած մինչեւ ներկայ թուականը հետզհետէ լոյս են տեսել մեր պարբերական թերթերով, քայց առանձին չարտատպուելով մնացել էին ցարդ այդ թերթերով ցիրուցան:

Այս դիտաւորութեամբ ըլլոր գործը քաժանեցի տասը հատորների, իսկ դրանց նիւթերը փոխանակ ժամանակագրական կարգով դասաւորելու, ինչպէս առհասարակ ընդունուած է անել, քարուք դատեցի համադրել ներքին ըովանդակութեան համաձայն, որպէս զի կարելի լինէր միեւնոյն հատորի մէջ միաժամանակ ամփոփել այնպիսի երկեր, որոնք իրար հետ ունին որոշ կապ, կամ որոնք միասին առած՝ կազմում են մի ամբողջութիւն:

Այս իսկ պատճառով ներկայ հատորը, որ առջինն է ըստ հրատարակութեան, ամփոփում է իւր մէջ ա) Նոյի Ագռաւը, բ) Առաքեալը եւ գ) Խորհրդաւոր Միանձնուհին, որոնք թէպէտ լոյս են տեսել զանազան ժամանակներում եւ ունին տարբեր նիւթեր, քայց, ըստ գաղափարի էութեան, կազմում են ամբողջութիւն:

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Февраля 1903 г.



ՆՈՅԻ ԱՔՌԱԻԸ

(Առաջին անգամ լոյս է տեսել «Լուսնայ»
հանդիսում 1899 թվականին):



Ա.



գոստոսի սիրուն առաւօտներից մինն էր, երբ ես ու ընկերս՝ կանխաւ արած մեր որոշման համաձայն՝ դուրս եկանք քաղաքից ձիով՝ հայրենի գաւառակի գիւղերը պրտտելու և մի քանի աւերակներ անձամբ տեսնելու:

Մենք պատկանում էինք «տուն վերադարձող» այն նորեկների թուխն, որոնք ընտանիքի հացը հայթայթելու համար ստիպուած են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում, ծծել միշտ նրա անառողջ օդը, սնուել աւելի փոշիով քան թէ կերակրով և հետևապէս կարօտիլ այնպիսի բարիքների, որ բնութեան մէջ ապրող մարդը վայելում է

առատօրէն, առանց սակայն նրանց արժէքը գնահատել կարենալու:

Ի՞նչ բան է, օրինակ, մաքուր օդը, դաշտի կանաչը, հովտի առուակը, անասուի զովր... մի՞թէ կարելի է կարօտիլ դրանց, կամ ցանկացած ժամին չըվայելել: Լեռնցի գեղջուկը, որ կարիք բառը հասկանում է միայն նիւթականի վերաբերմամբ, անշուշտ կը ծիծաղէր, եթէ իմանար թէ՛ մեր գրկանքը կազմում են այդ չնչին, հազիւ երբեմն իւր կարիքը լցուցանող բաները:

Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում, միշտ միևնոյն նեղ փողոցի վրայ, նոյն ապականուած միջնուրտի մէջ և գործել շարունակ լուսից ու օդից զուրկ մի գրասենեակում, որի բոլոր հրապոյրը կազմում են եղել չոր հաշուեյտաեանները, երկաթէ պահարանը և անմիտ համարիչը, իրեր, որոնք առնչութիւն ունին միայն փողի և հաշուի հետ, բայց որոնց անձանօթ է սիրտը և աւելի ևս զգայուն հոգին, իրեր, որոնք մարդու ուղեղը բխացնում, աշխոյժը մարում և հոգին նուաստացնում են... այդպիսին, հարկաւ, կարօտելով կը կարօտի այն ամենին, ինչ որ անարժէք է բնութեան զաւակի համար. կը կարօտի նրա դաշտին ու մարդին, նրա հովտին ու առուակին, նրա անտառի անոյշ հովերին:

Մենք էլ, ահա, այդ կարօտեալներից էինք: Ընկերս վերագարձել էր Մոսկուայից, իսկ ես Թիֆլիսից: Երկուսս այժմ միացած՝ գնում էինք բնութեան քաղցրութիւններից մեր կարօտն առնելու:

Պետրոս Մինարեանը (այս էր ուղեկցիս անունը), հայոց հոգևոր դպրոցի սան էր. տակաւին երկսասարդ, միջհասակ, փոքր ինչ թուլակազմ, բայց աշխոյժ ու գրաւչազէմ: Բնաւորութեամբ բաւական անհամբեր և դիւրագրգիռ էր, երբեմն նոյն իսկ յանդուզն ու անքաղաքավար, բայց սրտով բարի և անկեղծ: Ունէր տարօրինակ հայեացքներ, որոնք իւր խօսակիցներին մերթ զայրոյթ և յաճախ՝ զուարճութիւն էին պատճառում: Միրում էր խառնուել ուրիշների գործին, կամ յաճախ՝ ինքնակոչ դատաւոր հանդիսանալ: Միրում էր վիճաբանել, ազատ մտքեր յայտնել, բայց երբեմն աւելի հակառակելու, քան մի ճշմարտութիւն ասելու համար: Այսուամենայնիւ, այս բոլոր տարօրինակութիւնների հետ միասին, ճանապարհի լաւ ընկեր էր. որովհետև սրտոտ էր, կամարար և սակաւապետ:

Բաւական ժամեր էին անցել՝ ինչ ելել էինք քաղաքից և թէպէտ առաւօտը զով էր ու հեշտալի, այսուամենայնիւ, քանի արեւ բարձրանում էր՝ այնքան աւելի օդը ջերմանում և նեղացնում էր մեզ: Միջօրէի մօտ՝ մենք գտնուում էինք արդէն բաց դաշտի վրայ: Արևի ճառագայթները այրում էին. չըկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի ջրարան: Այդ պատճառով աշխատում էինք ժամ առաջ համեւել զիւզը, որ գտնուում էր մեր հանդէպ եզոզ լեռան գեղազիւ լանջի վրայ:

Չընայելով որ քաղաքից ելածներս միջոցին ընկերս պատմում էր թէ՛ մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկեանի մասին՝ երբ մայրաքա-

դաքից հեռացած՝ գտնուում կը լինէր հայրենիքում, նրա ազատ օդի ու դաշտերի մէջ և չընայելով որ այդ ժամին նրա փափագն արդէն կատարուած էր, այսուամենայնիւ, նկատուում էի որ երիտասարդի համբերութիւնը ենթարկուում է փորձութեան: Տօթից, ըստ երևոյթին, նա շատ էր նեղանում, ուստի և յաճախ գանգատուում էր:

Երբ մի ձորակի գետակն անցնելով՝ սկսանք դէպի գիւղը տանող առաւարը բարձրանալ, միջօրէի տապը աւելի ևս զգալի դարձաւ. որովհետեւ արևի ճառագայթներէց զատ՝ այրել սկսան մեզ, նաև, կեծացած ժայռերը, որոնք եղբրում էին առաւարը երկու կողմից:

— Ա՛խ, մի համնէինք այն սօսիներին, բացականչեց յանկարծ ընկերս այնպիսի մի կարօտով, որ կարծես գտնուում էր Սահարայի անապատում և ուր որ է խորշակը շնչատարու պիտի անէր իրեն:

— Համբերութիւն, բարեկամ, սօսիներին էլ կը համենք, նկատեցի ես:

— Համբերութիւն... միշտ համբերութիւն, շնչաց Պետրոսը, դժգոհ իմ խօսքից և ապա դառնալով ինձ՝ հարցրեց. — Ի՞նչ ես կարծում, սովքեր են համբերում:

— Ի՞նչպէս թէ սովքեր, համբերատարները, պատասխանեցի ես:

— Իսկ ես չեմ կամենում համբերատար կոչուիլ:

— Ինչո՞ւ, հարցրի նրան:

— Որովհետեւ համբերում են միայն թոյլերն ու ակարները. այսինքն մարդիկ, որոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրենցից հեռացնել չըկարենա-

լով՝ տանում են նրա պատճառած նեղութիւնները ստրկաբար: Եւ որպէս զի այդ անարգանք չըհամարուի իրենց՝ ասում են թէ՛ «համբերում ենք»:

— Է՛հ, եթէ չըհամբերես, ի՞նչ պիտի անես. կարո՞ղ ես արևի հրավառ գունդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանաւոր ծառերի փոխել:

— Չեմ կարող:

— Ինչո՞ւ ուրեմն ի գուր աղմուկ ես հանում:

— Նրա համար որ ցոյց տամ թէ՛ անզգայ արարածին մէկը չեմ, թէ իմ մէջ կեանք ու կենդանութիւն կայ, թէ հեշտութիւնն ինձ հաճոյք՝ իսկ նեղութիւնը՝ դժգոհութիւն է պատճառում:

— Իսկ դրա օգո՞ւտը:

— Այն, որ մարդիկ ճանաչելով ինձ՝ զգաստ լինեն իմ վերաբերմամբ և զգուշութեամբ վարուեն հետս: Ինքզ էլ հօ գիտես որ աշխոյժ ու չըսանձահարուող ձիուն մօտենում են երկիւղով ու փողաքշանքով և հազիւ ուրեմն կարողանում հեծնել. մինչդեռ համբերատար իշին ականջներից քաշելով՝ բարձում են միշտ որքան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկութիւնը հարցնելու:

Ես ծիծաղեցի:

— Դու այս կարծիքին չե՞ս. հարցրեց ընկերս:

— Ո՛չ, ասացի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ համբերել բառը աւելի բարձր նշանակութիւն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան: Էշերի ու ձիաների ընկերութեան մէջ, հաւանական է

որ համբերութիւնը համարուի անարդ ունակութիւն, բայց մարդկային հասարակութեան մէջ ճանաչուում է այն իբր առաքինութիւն:

— Միջնագարեան վարդապետները կարծիքով, ընդհատեց Պետրոսը:

— Նոյն իսկ դարավերջի փիլիսոփաները կարծիքով, յարեցի ես:

— Պատճառը:

— Որովհետև համբերութիւնը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերութիւնից միայն չարիք է առաջանում:

— Ի՞նչպէս:

— Աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ոյժ, հոգւոյ արիութիւն և սրտի կորով ունեցողները, հետևապէս, մեծ գործերն էլ ստեղծում են դրանք: Կարգան պատմութիւնը և կը տեսնես որ աշխարհի բոլոր նշանաւոր զիւտերը, բոլոր մեծամեծ գործերը արդիւնք են եղել դժուարատար նեղութեանց ու հերոսական համբերութեանց: Անհամբերութիւնն, ընդհակառակը, նշան է թուլութեան և անգորութեան: Ուստի երբեք չէ տեսնուած որ անհամբերին մէկը կարողանար մարդկութեան համար ստեղծել մի մեծ բարիք: Այս է, անա, պատճառը որ համբերութիւնը համարւում է առաքինութիւն և բարոյախօսանքից մինչև, մինչև անգամ, աւելի մեծ փառք է համարում մարդու համար՝ մեծամեծ նեղութեանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը:

— Այդ գուցէ այդպէս է. բայց երբ արևն այրում

է, հօ կարելի է նրա դէմ տրանջալ: Չէ որ տրտունջը թեթևացնում է մարդու նեղութիւնը:

— Ընդհակառակը, պէտք է սովորել՝ երբեք և ոչ մի բանի դէմ չըտրանջալ. այլ դրա փոխարէն աշխատել՝ նեղութեան պատճառը մէջ տեղից հեռացնել: Ծոյլ ու անգոր մարդը ճանճի շիթելու դէմ էլ է տրանջում, փոխանակ լուծեամբ ձեռքը բարձրացնելու և նրան քշելու:

— Ճանճը կարելի է քշել, արևը որ տեղ քշենք:

— Այդ դէպքում էլ՝ արևը քշելու փոխարէն քո ձին պէտք է քշես և մի կէս ժամ առաջ հասնես տուն. համբերատար և գործունեայ մարդու համար միշտ փրկութեան ճանապարհ կայ:

Ընկերս լուռ էր: Չըզիտեմ համաձայնուէց ինձ հետ, թէ չըկամեցաւ անգոր երևալ իմ աչքում: Այսուամենայնիւ, ոչ մի նոր առարկութիւն չանելով՝ շարունակեց ճանապարհը, առանց այլ ևս տրանջալու արևի դէմ, որ այրում էր մեզ, արդարև, անողորմաբար:

Քիչ ժամանակից յետոյ մենք գիւղը հասանք և ուղղակի դիմեցինք ընկերոջս ազգական զիւղացու տունը: Վերջինի հովանաւոր սրահը և հիւրընկալի քաղցր ընդունելութիւնը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոգից կրած մեր նեղութիւնը:

Բ.

Հետեւեալ օրը, նախաճաշ անելուց յետոյ, դուրս եկանք տանից՝ գիւղն ու նրա շրջակաները դիտելու: Հարկ չըկայ ասել որ ամենից առաջ այցելեցինք գիւղի եկեղեցին, որ գտնուում էր շինութիւններից դուրս, մի առանձնացած բլրակի լանջի վրայ, որտեղից բացուում էր մեր առաջ թէ գիւղի և թէ շրջակաների տեսարանը: Եկեղեցին մի անպաճոյճ շինութիւն էր, մամուապատ կտուրով և փայտէ, խարխուղ գանգակաանով: Տեսնելու արժանի ոչինչ չուներ իւր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը, որ գտնուում էր եկեղեցու առաջ և ոռոգւում բաւական յորդ առուակով: Մեզ ուղեկցող հիւրընկալի ասելով՝ այդ բանջարանոցը ծառայում էր տեղական քահանային և տալիս էր նրան ուտելու սոխ, կանաչեղէն, մի քանի տասնեակ վարունգ և ձմեռուայ համար մի քանի հատ գդում:

— Այս ջրով կարելի էր դրախտ ստեղծել այստեղ, իսկ ձեր քահանան միայն սոխով ու վարունգով է բաւականանում, նկատեցի ես հիւրընկալիս:

— Էդ ջրով, հրամանք ես, շատ բան կը շինուէր ըստի. ամա ինչ արած որ դէրը (քահանան) էշի (աշխոյժ) չունի, պատասխանեց գիւղացին:

— Դուք շինեցէք, վրայ բերաւ ընկերս:

— Մենք ինչ շինենք:

— Ծառեր անկեցէք, վագեր շարեցէք, գբօսնելու ճանապարհ բացէք, եկեղեցին հօ տէրինը չէ:

— Դէրինը չի, գիւղամ. Ժողովրդինն ա. ամա որ դէրը չըթողնի, մենք ինչ կարանք անել:

— Ի՞նչպէս թէ չըթողնի. ինչ իրաւունք ունի արգիլելու, բացականչեց Պետրոսը և տեսնելով որ քահանան եկեղեցու կողմից իջնում է դէպի մեզ, աւելացրեց, — սո՛ւ է ձեր քահանան. թող մի գայ այստեղ, տես ի՞նչպէս եմ յանդիմանում:

— Թո՛ղ, այ մարդ, ինչ գործ ունիս, ինչ յանդիմանութեան ժամանակ է. դեռ առաջ մի ծանօթացիւր մարդուն, նկատեցի ես:

— Ի՞նչ ծանօթութիւն, բան չունիս, պատասխանեց ընկերս և կռուելու պատրաստուող աքաղաղի նման յարձակողական դիրք բռնեց:

— Թո՛ղ, քե մատաղ, խօսալ մի. դէրն ինձանից կը նեղանայ, խնդրեց հիւրընկալը:

Բայց Պետրոսն արդէն մի քայլ առաջացել էր դէպի քահանան, որը մօտենում էր:

Սա տարիքով յիսունի մօտ, առողջակազմ, հաստամարմին, ալեխառն մօրուքով և բարի դէմքով մի մարդ էր: Հագած էր սև մահուղից կարած մի պարեգօտ, որն հնութիւնից արդէն մաշուել, գունատել էր: Ծածկած էր գառան մորթուց պատրաստուած գլխարկ. ոտքերին ունէր քոշեր, իսկ ձեռքին՝ դեղնափայտի գաւազան:

Միջանկեալ ասենք որ տարիներ առաջ, քանի դեռ լրատարուլթեան ճառագայթները այսքան չէին

մօտեցել մեր եկեղեցու շէմքերին, հայ քահանան հայր էր համարուում ամեն մի հայ քրիստոնէի. նրանք միմեանց պատահելուց՝ սիրով ողջունում էին իրար, առանց նայելու թէ՛ ծանօթ են միմեանց, թէ ոչ: Այժմ ի հարկէ, այդ գեղեցիկ և բուն քրիստոնէական սովորութիւնը մոռացութեան է տրուած՝ իբրև անպէտք հնութիւն: Քաղաքներում, մանաւանդ, անհրաժեշտ է որ այս ինչ հային՝ անպատճառ մի երկրորդը ծանօթացնէ պաշտօնապէս այն ինչ քահանային, որպէս զի այնուհետև առաջինը՝ բարեհաճէ ողջունել վերջինին, երբ պատահէ նրան ճանապարհին, կամ որ և է հասարակութեան մէջ:

Տէր-Մակունչը (գիւղի քահանայի անունն էր) անծանօթ էր ի հարկէ քաղաքներում ընդունուած այս սովորութեան. ուստի հեռուից տեսած լինելով մեզ, իբրև հայ քահանայ, շտապել էր մեզ ողջունելու և, իբրև նորեկների, բարի գալուստ մաղթելու:

Այդ իմանալով ես՝ շտապեցի Պետրոսից առաջ անցնել և գլխարկս հանելով՝ «օրհնես տէր» ասել:

— Աստուած օրհնեսցէ, բարի լինի գալներդ, պատասխանեց տէր հայրը և ձեռքը նախ ինձ՝ ապա Պետրոսին տալով՝ ողջունեց մեզ սիրով և այնպիսի մըտերմութեամբ, որ կարծես թէ հին բարեկամներ էինք:

Պետրոսը, որ անհամբերութեամբ էր սպասում ողջունի այս ծիսակատարութեան, յանկարծ, առանց որ և է յառաջաբանի, հարցրեց.

— Տէր հայր, ի՞նչ է նշանակում աւետարանի այս

խօսքը, «դուք ոչ մտանէք և որոց մտանենն՝ չտաք թոյլ մտանել»:

— Քահանան, որ այսպիսի անախնկալ հարցի չէր սպասում, նախ շիտթուեց, ապա ինքն իրան գալով՝ ժպտաց և մեղմով հարցրեց.

— Ընչի՞ հմար ես հարցնում:

— Ի՞նչպէս թէ ինչի համար. քահանայ ես, շատ անգամ ժողովրդի առաջ կարդում ես աւետարանի այդ խօսքերը. այժմ կամենում եմ իմանալ թէ՛ հասկանում ես դրանց նշանակութիւնը թէ ոչ:

— Բաս որ չըճասկանանք, ո՞նց կարանք կարգալ, ո՞րդի, պատասխանեց տէր հայրը:

— Դէհ, որ հասկանում ես, թարգմանիր տեսնեմ:

— Ո՞նց թարգմանեմ, աւետարանը ըստի պտի, որ կարդամ թարգմանեմ. առարկեց քահանան ժպտալով:

— Այ, ես բերան ասում եմ է՛լի, «դուք ոչ մտանէք և որոց մտանենն՝ չտայք թոյլ». դէհ, թարգմանիր:

— Սաքի դու դրա միտքը իմանում չէ՞ս:

— Իմանում եմ:

— Բա՛ իսի՞ ես հարցնում:

— Հարցնում եմ տեսնեմ դու էլ իմանում ես թէ՛ ոչ:

— Ա. Մնւքի (Միքայէլ), էս մեր Մինարանց Ակոբի տղան չի՞, դարձաւ քահանան մեր հիւրընկալին:

— Հա, ա՛ դէր, Ակոբ աղի տղան ա, պատասխանեց գիւղացին:

— Աստօժ պահի, լաւ մենծացել ա հօրը քէօմակ կըլի (կօզնի), յարեց քահանան, աշխատելով այս մի-

ՓՈՒՐԵՑԱՆ Ե. ՀՅՏ.



ջանկեալ հաճոյախօսութեամբ ազատուել Պետրոսի հետապնդութիւնից:

Բայց վերջինս՝ անխիղճ պարտատիրոջ պէս՝ տէ հօր օձիքը չըթողեց:

—Այդ իմացանք, տէր հայր, դու իմ հարցին պատասխանիր. կրկնեց նա՝ քահանայի թևից քաշելով:

Տէր հայրը, կարծես, բարկացաւ, և խօսակցի վրայ մի քննական հայեացք ձգելուց յետոյ՝ դարձաւ մեր հիւրընկալին:

—Ա. Մնք, դժնադր (հիւրդ) կոռւարար մարդ րևում (երևում):

—Չէ, ա՛ դէր, լաւ տղայ ա, ասենք մի քիչ հանաք չի ա, պատասխանեց գիւղացին, աշխատելով արդարացնել Պետրոսին:

—Տօ, տնածակ, ըսէնց հանաք կլլի՞. ինձ պատի գէմ ա արել թէ՛ հէնց դու ես որ պտի թարգմանես խի, ես Սողոմոն իմաստունն եմ:

Մենք սկսանք ծիծաղել:

—Այ, տեսնում ես, տէր հայր, եթէ մի փոքր առաջ խոստովանէիր թէ չգիտես, այն ժամանակ ինք կը թարգմանէի, դարձաւ Պետրոսը քահանային. այժմ բացատրեմ, լսիր. «դուք ոչ մտանէք և որոց մտանեն»՝ չտայք թոյլ», կը նշանակէ թէ՛ դուք չէք մտնում, և ովքեր էլ որ մտնում են, նրանց չէք թողնում...

—Գիտում եմ, գիտում, ընդհատեց յանկարծ քահանան, չըկամենալով, այսուամենայնիւ, բոլորովին ազէտ երևալ մեր աչքում—Քրիստոս էդ խօսքերը մեր

վարդապետներին ա ասում. եանի թէ՛ (այսինքն) դուք ամուսնութենի մէջ չէք մտնում ու հով որ էլ ուզում ա մտնի, նրան թողում չէք:

—Վայ տունդ չըծակուի տէրտէր, բացականչեց Պետրոսը և բարձրաձայն ծիծաղեց. նրան հետևեցի և ես:

—Խի էք ծիծաղում, բա ըսենց չի. հարցրեց քահանան մի առանձին յաւակնութեամբ:

—Չէ, չէ, տէր-հայր, մէջ մտայ ես. Քրիստոս արքայութեան համար է խօսում, և դպիրներին ու փարիսեցիներին է ասում թէ՛ դուք արքայութիւն չէք մտնում և ովքեր էլ որ կամենում են մտնել, թոյլ չէք տալիս նրանց:

—Դէ, հէր օրհնած, ամուսնութիւնն էլ արքայութեան նման բան ա, ես ըսկի շատ չեմ եանլիշ եկել (սխալուել), ժպտալով ասաց քահանան և ապա դառնալով Պետրոսին հարցրեց՝

—Մի ասա տեսնեմ՝ ինձ խի ես ըսենց հարցուփորձ անում:

—Այ թէ ինչո՛ւ: Մենք եկել ենք ձեր եկեղեցին այցելելու և տեսնում ենք սրա առաջ այս ողորմելի բանջարանոցը, որի մէջ միայն մի քանի ածուներ ունիս դու: Միևնոյն ժամանակ այստեղ հոսում է այս յորդ առուակը, որից դու կարող էիր օգտուել և եկեղեցու առաջ, այս ահագին տարածութեան վրայ՝ ծառեր տնկել, զբօսարան շինել. իսկ այդ ծառերը օգուտ կը բերէին թէ քեզ, թէ եկեղեցուն և թէ ժողովրդին: Բայց դու չես արել. որովհետև, ինչպէս Մուքին ասում

է, էշխ չունիս: Հարցնում ենք սրան թէ՛ ինչո՞ւ դուք, գիւղացիներդ չէք անում, պատասխանում է թէ՛ «աէր հայրը չի թողիլ»: Այ հէնց դրա համար էլ կասեցայ հասկացնել քեզ թէ՛ Քրիստոսի՛նայն խօսքը, որ ասում է՝ «դուք չէք մանում և ուրիշներ էլ որ մանում են, չէք թողնում» հէնց ձեզ նման հովիւների համար է ասուած:

Տէր Մակուշը մի դժգոհ հայեացք ձգեց մեր հիւրընկալի վրայ և ապա դառնալով Պետրոսին՝ ասաց.

— Հէր օրհնած, էս եղցումը (եկեղեցում), ինձանից առաջ, մինչև տասը, տասներկու քահանայ ծառայել են, ծերացել ու մեռել: Դիփուհանց գերեզմաններն էլ, հրէս, ըստի, եղցու քամակին ա. ուղձւէք, գնանք մի մի շանց (ցոյց) տամ: Ընդոնցից ո՞րն է ըստի մի չոփ (ոստի կտոր) տնկել որ ես տնկեմ:

— Նրանք չեն արել, դու արա. դու բարի օրինակ էղիր քեզանից յետոյ եկողներին:

— Միթօ՞մ էդ ի՞նչ օգուտ պտի բերի ինձ, ես (կամ) եղցուն:

— Նախ այն՝ որ այս չոր գետինը կը ծածկուի ծառերով, իսկ ծառաստանը աւելի լաւ է, քան թէ չոր տափաստանը: Երկրորդ՝ եկեղեցու շրջապատի օդը աւելի մաքուր և առողջարար կը լինի, իսկ տեսարանը՝ դիւրական. երրորդ՝ տնկածդ ծառերը պտուղ կը բերեն, որից թէ դու կօզտուես և թէ եկեղեցին: Չորրորդ...

— Դէ մի խրէ (մի քիչ) սպասիր. ընդհատեց քահանան Պետրոսին. և ապա կրթներով գաւազանի վրայ, սի առանձին, հեղինակաւոր եղանակով շարունակեց.

— որդի, գիղան, ի՞նչ կայ, խօսիլը հեշտ ա քանց անիլը: Մի բան պատմեմ լսիր: Մի քսան օր սրանից առաջ մեր յաջորդը վանքն էր գնում. քաղաքից գալիս մեր գեղովն անցաւ. շնորհակալ եմ, պատուեց. եկաւ մեր տանը դինջացաւ (հանգստացաւ), հաց կերաւ. վերջը ասեց. — «Տէր Մակուշ, գնանք մի ձեր եղցին տեսնենք» — ծառայ եմ, ասեցի, հայր սուրբ, գնանք: Վեր կացանք եկանք: Քեօխվէն էլ մեզ հետ էր, սուրբիան էլ, մի երկու էլ գեղի իշխան (առաջաւոր) մարդիկ: Վարդապետը հէնց որ եղցին մտաւ, աչքերը մի դէս ու դէն գցեց, ինքն իրան փնթփնթաց ու ասեց. «Տէր Մակուշ, էս խի՞ եղցին անգարդ ես պահում»: — Ո՞նց եմ անգարդ պահում, հայր սուրբ. հարցրի ես. — «Էնէնց ես անգարդ պահում, ասեց, որ այ, էս սուրբ սկիհի տակը մի աբրեշում աղլուխ չես գցում. էս աւետարանը մի գառ շորում չես փաթաթում. էս ատենին կազմել չես տալիս. ես չէ, էս ի՞նչ պատկեր ա, որ դրել ես սեղանի վրայ, ըսենց Քրիստոս կըլի. էս հու դուխաբօր մալական ա:» Ի՞նչ մեղքս ծածկեմ. շատ նիկացայ (վրդովուեցայ), ամա ի՞նչ կարի անիլ. իշխանաւոր էր. ասում էր. պտի սուս կենայի: Վերջը էրբօր խօսքը կտրեց, ասեցի. — Հայր սուրբ, ծառայ եմ կարգիդ. իրաւունք կը տաս որ խօսեմ. — հա, խօսիր, ասեց. թէ քեզ արդարացնելու բան ունիս, ասա — էս ա ես էլ էս առակն ասեցի: — Մին անգամ, Հայր սուրբ, ասեցի, մօլլա Նասրէդինի կնիկը գնում ա շահին գանգատուում, թէ շահն յապրած կենայ, իմ մարդն ինձ կուշտ փորով հաց չի տալի, ինձ հմար շոր չի առնում.

այ, տեսնում ես, տկլոր եմ, ասում ա, էս եմ, էն եմ. կնիկը հօ գիտաս, որ խօսիլը կցեց էլ տազ չի անիլ (չի լուիլ): Շահը բարկանում ա, ու էն սհաթին ֆարրաշ ղրկում, մօլլա Նասրէգլինին բերել տալիս: — էյ մօլլա, ասում ա, նէ իւշուն արվաղնայ խօրակ ալմըրսան — հրամանքդ թուրքերէն գիտաս, խօսքն ընդհատելով հարցրեց քահանան Պետրոսին:

— Ոչ, լաւ չեմ հասկանում, պատասխանեց վերջինս:

— Լաւ, քեզ հայերէն կասեմ. ամա հայր սուրբին թուրքերէն պատմեցի. — հն, ասում ա, այ մօլլա, խի կնկանդ հմար կերակուր չես առնում որ մի կուշտ ուտի. խի նրա հմար մի քանի ձեռք շոր չես առնում, որ մինը մաշելուց, մէկէլը հագնի: Մօլլան պատասխանում ա. — Շահն ապրած կենայ, ասում ա, զրա հմար օխտը մանի (պատճառ) ունեմ: — Ո՞րն ա օխտը մանին. մէկ մէկ ասս, հրամայում ա շահը. — առաջինն էն ա, ասում ա մօլլան, որ ջիբումս մի շահի փող չըկայ. երկրորդը... — Մնացած վեց մանին գլխիդ տուած, ասում ա շահը. կորի գնս: Հմի դուն ես, ասեցի, հայր սուրբ, ախար փող որ չըկայ, ես սրգիան (աբրէշում աղլուխ առնեմ. սրգիան զառ ճոթ գտնեմ. եա չէ. սնց դուխարոր մալականը վեր ունեմ տեղն օրինաւոր Քրիստոս գնեմ: — Խի, ասում ա հայր սուրբը, էսքան ժողովուրդ ունես, կարճում չես մընին մին աղլուխ առնիլ տալ, մընին մի զառ ճոթ. եա խի վետունց Սարգսի տղին գրում չես, հրէն Թիփլիզ նստած ա, մին լաւ Քրիստոս առնի ղրկի: Ասում եմ, հայր սուրբ,

ծառայ եմ քէ, ախար «էն վաղ էր որ էշը կաղ էր», հիմի էլ սիլ ա տէրտէրի խօսքին մտիկ տալի, էլ սրգիան ա հաւատ մնացել, բարեպաշտութիւն մնացել. առաջ, զրուստ ա, քահանաներն ին ժողովրդին պլօկում, ամա հըմի ժողովուրդն ա քահանի վրէն ընկել ուզում ա հագի փարաջէն հանի, եա չէ, գլխի գդակը թոցնի: Մի կտոր հացը որ ուտում ենք, հէնց գիտում են թէ՞ հարամ ա. տեղից վեր կացողը մեր գլխին ա բռնիում (խփում), էլ ասում չեն թէ՞ ինչ ենք տուել էս խեղճերին՝ որ էսքան պհանջում ենք: Հիմի, ասում եմ, էս այամումը (ժամանակում) որ եղբայրն ուզում ա եղբօրը խեղդի, որդին ուզում ա հօրը ծախի, մարդ կարս բարեգործութենի անուն տալ: Հայր սուրբը տեսաւ որ զրուստ եմ ասում, էն ա սուս կացաւ: —

— Հըմի դու ես, որդի, դարձաւ քահանան Պետրոսին, ասում ես ըստի բաղ շինի, բաղչայ շինի: Սօսք չունեմ, լաւ ես ասում. ամա պըտի էն էլ մտածես թէ՞ էս քեասիբ դէրը սրգիան ըտունք անի: Ախար ըստի հող փորելու, ծառ տնկիլու, չափար (ցանկապատ) քաշիլու հըմար փող ա հարկաւոր թէ ոչ: Եա ես փող սրգիան գլխեմ. փող որ ունենամ, խի դէնց դարտակ բաների կը տամ, հրէն, այ, Սօջա Մարութը թումանին իրեք շահի շահ ա տալիս. ասում ա, ս դէր, թէ որ հարիւր մանէթ բերես, քեզ տարին տամնութ մանէթ շահ կը տամ: Տասնութ մանէթը գիղաս, մի տուն քիւլփաթ (ընտանիք) կը կառավարի. ամա հարիւր մանէթն ինձ սիլ ա տուել:

— Երէկ դու ինձ համբերութիւն էիք քարոզում.

դարձաւ ընկերս ինձ՝ ոռւսերէն լեզուով, այժմ ասան, խնդրում եմ, ինչպէս անեմ որ չընայոյեմ այս մարդուն:

— Հայոյե՛լ. ինչո՞ւ, հարցրի ես զարմանալով:

— Ի՛նչպէս թէ ինչո՞ւ. մի՛թէ քեզ չեն զայրացնում սրա առարկութիւնները:

— Բնաւ:

— Եւ ոչ էլ այն, որ սա տոչորում է հարիւր ըուբլ ունենալու և այն շահացնելու տենչո՞վ:

— Եւ ոչ էլ այդ:

— Դու ինձ վրդովում ես:

— Եթէ արդարութեամբ մտածես, չես վրդովուիլ: Քահանան մեղաւոր չէ՝ որ տգէտ է այդ աստիճան:

— Բայց հօ մեղաւոր է որ տգէտ լինելով՝ դիմել է քահանայութեան:

— Ոչ էլ այդ դէպքումն է մեղաւոր: Մարդուն հաց էր հարկաւոր և ահա այդ հացը ձեռք բերելու համար նա ընտրել է քահանայութիւնը:

— Բայց ախար նա իրաւունք չունէր:

— Իրաւունք ձանաչելու համար, մարդ, նախ և առաջ, տգէտ չըպէտք է լինի: Մի՛թէ դու կարող ես իրաւունքի տեսակետից մեղադրել քո եզին, եթէ նա հարևանի բակում փափուկ խոտ տեսնելով՝ մօտենայ և ուտէ: Այդ դէպքում յանցաւորը ոչ թէ եզը, այլ դու կըլինիս, որ չես կապել անբանին, կամ թէ քո հարևանը՝ որ չէ փակել իւր դուռը:

— Այդ ասելովդ սենք ովքե՛ր ենք:

— Դու եպիսկոպոսն ես, որ ձեռնադրել ես տէր

Մակուչին, իսկ հարևանդ՝ ժողովուրդը, որ իրեն յանձնել է նրա ձեռքը:

— Էդ խօսմ ինձանից էք խօսում, իւր անունը լսելուն պէս, մէջ մտաւ քահանան, դէ հայեվար խօսեցէք, ես էլ հասկանամ:

— Այո՛, տէր հայր, քեզանից ենք խօսում, պատասխանեց Պետրոսը:

— Բա ի՛նչ էք խօսում:

— Ասում ենք վայ էն ժողովրդին, որի քահանան տէր-Մակուչն է:

— Խի՛ էք ըզենց ասում, որդի, հարցրեց քահանան այնպիսի մի ճնշուած ձայնով՝ որ ես խղճահարուեցայ:

— Որովհետեւ դու տգէտ ես, պատասխանեց Պետրոսը կոշտ սառնասրտութեամբ:

— Այդ արդէն չափազանց է, պարոն, նկատեցի կամացուկ և միևնոյն ժամանակ վրդովուելով:

— Ընդհակառակը դեռ քիչ է, յարեց Պետրոսը և ապա դառնալով քահանային հարցրեց. — Դու նեղանում ես որ ես տգէտ եմ ասում քեզ:

— Խի՛ եմ նեղանում, որդի, ջահիլ ես, ասում ես. որ ահիլ (հասակաւոր) լինիս կը մտածես թէ՛ էս մարդն ի՛նչ մեղաւոր ա որ Աստօժ սրան անուսում ա ստեղծել:

— Ինչո՞ւ. Աստուած ո՞րին է ուսումով ստեղծել:

— Ո՞ւց թէ որին. այ, մինը հէնց քեզ, մինն էլ քո ընկերին. հրէն քաղաքն էլ լիքն ա ձեզ նմաններով:

— Մենք էլ քեզ պէս անուսում ենք ծնուել, բայց

յետոյ մեծանալով, աշխատել ենք, չարչարուել և ուսում առել:

— Խի՞ ես ըզենց ասում Պետրէ-Չան, մէջ մտաւ մեր հիւրընկալը. — Թէ որ քու հէրը, Ակոբ աղան չըլէր, դու ո՞նց կարիր յուսում առնի:

— Այ, քու հօրն ողորմի, ա՛ Մուք, մի ըտենց խօսան է, տեսնում ես քու դէրին նեղն են լծել, քաջալերեց քահանան գիւղացուն և ինքն էլ, կարծես սիրտ առնելով դարձաւ Պետրոսին.

— Հը՛, ըստուր ի՞նչ պատասխան ունես, դէ տուր:

— Ի՞նչ պատասխան պիտի ունենամ: Իմ հայրը, ի հարկէ, վճարել է իմ ուսման վարձը, բայց ես էլ հօ աշխատել ու չարչարուել եմ, օրերս պարապ չեմ անցրել:

— Դէ լաւ, հմի լսիր: Քո հերը փող ա ունեցել, քեզ կարդացրել ա. բա իմ հէրը որ փող չունէր, որդիան կարդացնէր: Ինքը մի խեղճ նախրապան ա լել. քարով, կարկուտով (մեծ գժուարութեամբ) մի կտոր հաց ա ճարել մեզ ուտացրել, մի գազ կտաւ ա գտել ծակել, սեր ճիտը գցել. վերջն էլ հանդումը շատ բաց պարկելուց, արևի ու անձրևի հետ կռուելուց ու հազար ու մի չարքաշութիւն անելուց հիւանդացել, մեռել ա ու մեզ էլ անտէր, անտիրական թողել: Աստօծ ա իմանում թէ՛ մենք ու մեր խեղճ մերը ի՞նչ օրեր ենք տեսել, ի՞նչ նեղութիւններ ենք քաշել: Մեր ամեն մի թիքա հացը լեղի ու արտասուք ա լել: Դժար բան ա աղքատութիւնը, էն էլ գեղի միջումը, Աստօծ ոչ շանց տայ ձեզ...: Հմի, որդի ես որ էն խեղճ դրու-

թենում էսքան էլ ա գրաճանաչ եմ դառել, գրել կարդալ եմ սովորել, քանի տարի վանքումը տիրացութիւն արել ու վերջը էս մենծ գեղի վրայ քահանայ դառել, էս քի՞չ բան ա: Թէ որ մինը քեզ վրայ խարջած փողն ինձ վրայ խարջէր, ո՞վ գիդա, հըմի փիլիսոփայ կլէի դառած: Ամա դու, տեսնում ես, ըսկի մարիփաթիւն (քաղաքավարութեամբ) խօսալն էլ չես սովորել: Կըբաշխես, որ էս խօսքը երեսիդ ասում եմ. ամա ես քու հօր տեղն եմ. հախկ (իրաւունք) ունեմ: Ընչի՛ հմար եմ ասում, գիտա՛ս. այ, դու դարիբ (օտար) տղայ ես, եկել ես մեր գեղը. ես էլ ըստեղի քահանան եմ. շնորհակալ եմ, մենծ ու պատիկ պատուում են: Բայց ես, ոնց որ Քրիստոս ասում ա, որ խոնարհեցցէ գանձն, բարձրացցէ. ես էլ խոնարուեցի, եկայ որ բարի գալսւտ ասեմ ձեզ, ու օրհնեմ. ամա դու իմ գեղականի առաջ, ինձ անպատիւ արիր: Ասում ես՝ վայ էն գեղին որ դու նրա քահանան ես, ասում ես դու տգէտ ես. քիչ ա մնում որ ասես թէ՛, հայվան ես: Ախր ըսենց չեն խօսի, որդի, աշխարհում մինը տգէտ կըլի, մինը յուսումնական. մինը աղքատ կըլի, մինը հարուստ. ամա, բոլորի Աստօծը մէկ ա. ոչ հարուստն ու յուսումնականը պըտի հմպարտանան, ոչ էլ տգէտն ու աղքատը ոտի տակ ընկնեն: Ի՞նչ մեղքս ծածկեմ, որդի. առաջ մի քիչ դարդ էի անում որ Վեդունց Սարգսի խօսքին լսեցի ու որդիքս յուսման չըղրկեցի: Ամա հմի փառք եմ տալիս Աստուծո՛ւ որ զրկել չեմ. չուն (որովհետեւ) տեսնում եմ որ յուսումը մարդին հրեշտակ շինելու տեղ՝ սատանայ ա շինում:

Դէ որ ըզենց ա աղբէր, խի՞ եմ յուսման զրկում որ վերջը փոշմանեմ:

Տէր հօր վերջին խօսքերը տպաւորութիւն արին Պետրոսի վրայ և նա լռեց: Բայց ես, քահանայի սիրտը ամոքելու համար, կամեցայ խօսակցութիւնը մեղմով վերջաւորել, ուստի հարցրի.

— Դու, ուրեմն որդիներ ունիս:

— Ո՞ւց չէ. չորս հատ, պատասխանեց երէցը, կարծես պարծենալով:

— Հասակաւոր են նրանք:

— Մենծը քսան ութ տարեկան ա, մնացած երեքը մինը մնից էրկու էրկու տարով պակաս են: Չորսն էլ աժդահա (հսկայ) տղամարդիկ են: Էրկուսին պակեւ եմ. էրկուսին էլ, թէ որ Աստօծ յաջողի, գեալաջող (պալ տարի) պտի պակեմ:

— Չորսին էլ ուրեմն անուսում ես թողե՞լ:

— Չէ, վանահօր մօտ քիչ ու միչ կարդացել են. ընենց որ իրանց բանը եօլա կը տանեն:

— Դու, ուրեմն, չէ՞ր կարող, գոնէ, քաղաքի դպրանոցը ուղարկել նրանց, կրկին մէջ մտաւ Պետրոսը և այս անգամ, արդէն, գրգռուած:

— Խի՞ չէի կարող:

— Բաս ինչո՞ւ չուղարկեցի՞ր, մեղք չէ՞ որ չորս աժդահա տղամարդ, ինչպէս որ դու ես անուանում նրանց, անուսում ես թողե՞լ:

— Ընդուն որ... ամա չէ, ըտուր մասին էլ վէզուսնց Սարգիսը կասի:

Տէր հայրը դիտմամբ խոյս տուաւ Պետրոսին պա-

տասխանելուց, որպէս զի նորէն վէճի չըբռնուի նրա հետ:

— Ո՞վ է վէզուսնց Սարգիսը. հարցրի ես:

— Հրէն, այ, տունն ընդի ա. էն սենծ մենծ չընարուցը տակին, ասաց քահանան ցոյց տալով գիւղի հարաւակողմը, ուր մի ընդարձակ դարևանդի վրայ բարձրանում էին մի խումբ գեղուղէշ սօսիներ:

— Որդիքը քոնն են, ինչո՞ւ դու չես բացատրում թէ՛ ինչո՞ւ ես նրանց անուսում թողել, հարցրեց Պետրոսը:

— Որդիքն իմն են, ըտենց ա, ամա Սարգիսն էր սաբար (պատճառ) որ նրանց ուսման չըզրկեցի: Այ, թէ ուզո՞ւմ էք, գնացէք, հարցրէք: Նա խելօք մարդ ա. սուտ չի խօսիլ: Դորդ ա, գեղացի ա, ամա հարիը քաղաքացու խելք ունի գլխումը: Հարցրէք, նա ամեն ինչ տեղն ու տեղը կասի ձեզ: Դէն, շատ խօսեցի, որդիք. չգլուխներդ ցաւացրի. կը բախշէք, հրմի ես գնամ. բարով էք եկել, բարով էլ գնաք...

Այս ասելով տէր հայրը ողջունեց մեզ վերջին անգամ և երեսը դարձնելով ծանրաքայլ հեռացաւ:

Գ.

Յանկանալով շարունակել սեր պտոյտը, սենք իջանք դէպի ձորակն, ուր հոսում էր գիւղի լեռնային վտակը: Չը նայելով ջրի փոքրութեան, նա շարունակ խօսու-

ջուժ, ազմուկ էր հանում. որովհետև իջնում էր աստիճանաւոր բարձրութիւններէց, որոնցից իւրաքանչիւրը, առանձին առած, ներկայացնում էր մի գատ գեղանկար պատկեր: Վտակի ասիերը քերելով մենք հետզհետէ դիտում էինք այդ պատկերները և գուարձանում: Մի տեղ ժայռերը միմիանց վրայ կուտակուած, փորձում էին, կարծես, վտակի հոսանքն արգելել. իսկ սա աւազով ու խճով նրանց խորշերը լցած՝ իւր փրփրուն ալիքները գահավիժում էր ժայռերի բարձունքից: Մի ուրիշ տեղ մոշենին, վայրի վարդը, կամ նունենին գետակի կրկին ասիերը գրաւած՝ իրենց ճկուն ոստերը դէպ իրար ձգելով և իրար շաղապատելով՝ կազմում էին ջրի վրայ կանաչազարդ մի կամուրջ և այդպիսով հոսանքը մեր աչքերից ծածկում: Մի երրորդ տեղ ուռենին՝ կանաչագեղ ոստերն աջ ու ձախ տարածելով՝ հովանաւորում էր մի փոքրիկ ու վճիռ լճակ, որի ջուրը, կարծես, կարկաչելուց յոգնած՝ հանգստանում էր այդտեղ ժայռերի խորշում և իւր ջինջ հայելու մէջ արտացոլում թէ ասի կանաչազարդ ուռենին, թէ ժայռերն ու թուփերը և թէ երկնքի կապուտակը:

—Տէր Աստուած, ինչո՞ւ մարդիկ այս գեղազուարճ վայրերը թողած՝ շնչասպառ են լինում ապականութեամբ լի քաղաքներում: Մի՞թէ նրանցից ամեն մէկի համար չի գտնուել վայելչութեան սի անկիւն այս ազատ լեռների մէջ, այս սիրուն ջրերի ասիին, այս կապուտակ երկնքի տակ, բացազանչեց ընկերս՝ շրջապատող տեսարաններից գմայլուելով:

—Իսկ դու կարծում ես թէ՛ բնութեան այս գե-

ղեցկութիւնները անաղարտ կը մնային՝ եթէ մարդիկ հաստատուէին այստեղ, հարցրի ես:

—Բնութեան գեղեցկութիւնները... ինչո՞ւ չէ, ո՞վ կաղարտէր նրանց:

—Նոյն ինքը մարդը: Նա չի կարող ապրել՝ առանց այդ գեղեցկութիւններն եղծանելու, առանց իւր շուրջն աւեր ու ապականութիւն սփռելու: Ընդհակառակն, աւելի լաւ է որ մարդկանց մեծամասնութիւնը խոնուած է քաղաքներում. այդպիսով, գոնէ, բնութիւնը աւելի քիչ է տուժում և նրա գեղեցկութիւններն աւելի քիչ են աղարտում. իսկ սրանցով գմայլելի գիտցող սակաւաթիւ մարդկանց համար՝ բնութեան մէջ տակաւին մնում է մի բան, որը գոնէ նրանք կարող են վայելել:

—Դու իրաւունք ունիս... պատասխանեց ընկերս՝ մի փոքր մտածելուց յետոյ—մարդը, արդարև, բնութեան եղծանիչն է. ի գուր են կեղծաւորները «բնութեան զարդ» անուանել նրան. իմ կարծիքով խոզը աւելի քիչ է վնաս պատճառում բնութեանը քան մարդը: Ինչ ես կարծում, Մուքի, դարձաւ ընկերս հիւրընկալին—եթէ վեց ամիս շարունակ հարիւր խոզ պահէիք այս ձորում, նրանք շուտ կը փչացնէին այս տեղերը, թէ՛ եթէ այդքան ժամանակում հարիւր մարդ ապրէր այստեղ:

—Հէր օրհնած. խոզն ի՞նչ ա, որ ինչ փչացնի. պատասխանեց զիւղացին ժպտալով. նա մի խեղճ հայ վան ա. թէ կաթուկից, բանից գտաւ կուտի, թէ չէ, էն ա սաղ օրը խոխուարով ման ա գալու ու իրա հմար արածի. ծառը չի պոկիլու, քարը չի շուռ տալու: Ամա

Թէ որ ըստեղ հարիւր մարդ ապրի, վեց ամիս չէ, վեց շաբթուան էլ վերանայ (աւերակ) կանի սաղ ձորը: Քոլերը կրակ կը տայ, ծառերը կը կոտորաւոր. կանաչը կը մոռուտաւոր (կապականէ), ես ո՞ր մէկն ասեմ:

Այսպէս խօսակցելով՝ մենք անցանք ուրիշ կողմեր, դիտեցինք հինաւուրց շրաղացը՝ իւր հնատարագ շէնքով ու կազմութեամբ. պտտեցինք գիւղացւոց մի քանի պարտէզները, որոնք ընկած էին գետի տափարակի ուղղութեամբ, նայեցինք դրանց սէջ գանուող մեղուանոցները, իրենց հնաձև, շաղախապատ փեթակներով, և, վերջապէս, նորէն շրջան առնելով՝ բարձրացանք դէպի գիւղը:

— Երէկ, յիշում ես, երբ արևը այրում էր, անս այս սօսիներին էի ուզում հասնել, սկսաւ խօսել Պետրոսը՝ երբ մօտեցանք այն դարևանդին, որի վրայ քահանայի ցոյց տուած սօսիներն էին բարձրանում, — այժմ էլ բաւական յոգնած ենք, անցնենք այս լանջի վերը և հանգստանանք այդ սիրուն ծառերի տակ:

— Անցնենք, ասացի ես և ապա դառնալով մեր հիւրընկալին՝ հարցրի. — ո՞րինն են այդ սօսիները:

— Սօսին ո՞րն ա:

— Ա՛յ այս ծառերը:

— Բա էդ չընար ա, դու խի՞ սօսի ես ասում, հարցեց նա:

— Հայերէն չինարին սօսի կասեն, բացատրեցի ես:

— Որ ըստեց ա, բաս չընարը թուրքերէնն ա:

— Այն հաստատեցի ես:

Գիւղացին գլուխը շարժեց և ապա նորէն դառնալով մեզ՝ հարցրեց:

— Էս մենք որ չընարու անունն էլ հայեվար ասելը գիտում չենք, մեր ճարն ի՞նչ կլի, հաւատաս, քանի գնանք էնքան էւելի հայկան դառնանք:

— Ինչո՞ւ, բարեկամ, մի բառ չիմանալով՝ մարդ հայկան կդառնայ, հարցրի ես ժպտալով:

— Աղբաթիխէր, էս օր մի բառը կը մոռանանք, էգուց էրկուսը, գալ օրն իրէքը. մին էլ էնա կը տեսնես որ խօսքի կէսը հայեվար ենք խօսում կէսը՝ թուրքեվար: Մարդ որ իրա ազգի լեզուով խօսիլը գիտա ոչ՝ հայկան չի բա ի՞նչ ա:

Ընկերս նայեց ինձ խորհրդաւոր հայեացքով և հարցրեց.

— Ի՞նչպէս ես գտնում այս գիւղացու կարծիքը:

— Շատ բանաւոր, պատասխանեցի ես. ապա Մուքիին դառնալով նկատեցի, — ինչո՞ւ չասացիր թէ՛ ումն են պատկանում այս սօսիները:

— Էս սօսիքը Վէդուենց Սարգսինն են. պատասխանեց նա:

— Հապա ո՞րն է նրա տունը, հետաքրքրուեցայ ես:

— Հէնց, այ ծառերից դէնը. կտուրն ըստիան էրեւում ա, ցոյց տուաւ գիւղացին:

— Ի՞ դէպ, այդ Վէդուենց Սարգսից մի հարցնենք թէ՛ ինչո՞ւ է քահանային արգիլել իւր որդիքը ուսման զրկելու, խօսեց Պետրոսը:

— Անշուշտ կը հարցնենք, երևի մի պատճառ է

ունեցել. բայց նախ հանգստանանք այս սիրուն ծառերի տակ, յարեցի ես:

— Կառ կըլի, գնացէք. էդ ծառերի տակը որ նրատէք, կը մխիթարուէք. ես էլ մի մեր գիւմովն (գոմովն) ընցնեմ, էլ շուտ եդ կը գամ տուն, ասաց հիւրընկալը:

— Դու ուրեմն չե՞ս գալիս մեզ հետ, հարցրեց ընկերս:

— Չէ, ձեզ մատաղ. էս անգամ դուք մենակ գնացէք, պատասխանեց գիւղացին և ճանապարհը ծռեց:

Ըստ երևութին, նա չըկամեցաւ ընկերանալ մեզ, վախենալով թէ՛ մի գուցէ Պետրոսը դարձեալ իւր անտակտ հարց ու փորձով ամաչեցնէ իրեն Վեդուհց Սարգսի առաջ, որի ով լինելը, սակայն, մենք չըգիտէինք: Երբ այս մասին իմ կարծիքը յայտնեցի Պետրոսին, նա ուսերը թոթուելով ասաց.

— Շատ կարելի է... բայց և չայնպէս, նա ինչո՞ւ պիտի ամաչի, եթէ ես, մինչև անգամ, շատ յիմար բաներ խօսեմ:

— Կամաչի նրա համար, որ դու իւր հիւրն ես: Չե՞ս լսել հայկական առածը թէ՛ «գիժը չի ամաչիլ, գժի տէրը կամաչի»:

Պետրոսը յառեց աչքերը վրաս, կարծես, կասենալով հարցնել թէ՛ սի՞թէ ինքն այնքան անմտաբար է խօսում որ ամաչեցնում է նոյն իսկ մի հիւրընկալ գիւղացու:

— Այդպէս է բարեկամ, շարունակեցի ես, անհամբերութիւնը միասում է ասենքին, իսկ քեզ՝ առաւել ևս: Խորհուրդ եմ տալիս՝ չըշտապել երբէք կարծիքներ յայտնելու՝ եթէ գիտես զրա համար ժամանակ ունիս

դեռ: Հին փիլիսոփաների պատուէրը՝ «քիչ խօսիր և շատ լսիր» ամենից աւելի դու պիտի կատարես:

— Այս անգամ պիտի աշխատեմ բոլորովին չըխօսել, միայն թէ դու կարողանաս ինձ հետաքրքրող հարցերն առաջարկել այդ գիւղացուն: Ճիշդն ասած, ես շատ եմ ցանկանում իմանալ թէ՛ ինչո՞ւ նա իւր հարեւաններին այդպիսի յետադէմ խորհուրդներ է տալիս: Ես շատ հայ գիւղերում եմ եղել և միշտ էլ զրոյցներ ունեցել գիւղացիների հետ. բայց ինձ երբէք չի պատահել հայ գեղջուկ, որ ուսման և կրթութեան դէմ խօսէր: Ընդհակառակն, ամեն մի՛նի փափագը եղել է այն՝ որ կարողանայ ուսում տալ իւր որդուն: Եւ այդ՝ ես համարել եմ հայ գիւղացու բնաւորութեան համակրելի գծերից մի՛նը: Այժմ ինձ թւում է թէ՛ այդ Սարգսիսը, որի մասին խօսում ենք, նախապաշարեալ ապուշին մէկն է լինելու:

— Դու դարձեալ շտապեցիր քո կարծիքն յայտնելու, առանց այդ մարդուն տեսած կամ լսած լինելու, նկատեցի ես:

— Ով որ ընկերին խորհուրդ է տալիս՝ թողնել որդուն անուսում, նրան կարելի է ապուշ անուանել, նոյն իսկ առանց նրան տեսած կամ լսած լինելու:

— Բայց կարող է պատահել, որ այդպիսի խորհուրդ տալու համար՝ մարդ ունենայ մի բանաւոր պատճառ:

— Բանաւոր պատճառ... խելագարուե՞լ ես, ի՞նչ է մի՞թէ կարելի է զրա համար բանաւոր պատճառ ունենալ:

— Գուցէ այդ Սարգիսն ունի:

— Անկարելի է: Մի մարդ, որ պաշտպան է հանդիսանում ագիտութեան, նա չի կարող որ և է ուրիշ պատճառ ունենալ, բացի այն՝ որ կը լինի ապուշ, կամ խելագար: Իսկ այդ Սարգիսը եթէ ապուշ չէ, անշուշտ այն ցեցերից մինն է, որոնք այսպիսի անյայտ անկիւններում ապրելով՝ գուարճութիւն են համարում իրենց համար՝ ժողովրդի միտքն ու հոգին թունաւորելը: Մի՞թէ, արդարև, կարելի է ուսման ու գիտութեան դէմ խօսել. այդ միևնոյն է թէ ասես՝ խաւարն աւելի դիւրական է քան լոյսը:

— Երբեմն խաւարը ոչ միայն դիւրական, այլ և աւելի օգտաւէտ է լինում, նկատեցի ես ժպտալով:

— Լո՛ր, լո՛ր, խելքդ ցնդել է. լաւ է որ ոչ ոք չէ լսում մեզ. այդ խմաստութիւնը ռոտեղից ես ամբարել... իրար ետևից վրայ տուաւ Պետրոսը:

— Տեսա՞ր որ էլի շտապեցիր:

— Հապա ի՞նչ անեմ, մի՞թէ խաւարը երբ և իցէ կարող է դիւրական կամ օգտաւէտ լինել մարդուն:

— Իսկ եթէ մարդու աչքերը հիւանդ, կամ վատաւիճ լինին:

— Այդ ուրիշ բան է. դու նիւթական լուսի ու խաւարի մասին ես խօսում: Չափազանց պայծառ լոյսը, այն, հաճելի չէ լինում վատաւիճ աչքերին:

— Հոգւոյ ու մտքի աչքերն էլ երբեմն վատաւում, կամ հիւանդանում են:

— Ուրեմն դրանց էլ հոգեկան կամ մտաւոր խաւարն է օգտում:

— Եթէ չէ օգտում, գէթ, հանգստութիւն է բերում: Կան դեղեր, որոնք չեն բուժում սուր ցաւ պատճառող հիւանդութիւնը, բայց առ ժամանակ թրմրեցնում են սրա պատճառած կսկիճը: Հիւանդն այդպիսի դեղը հաճութեամբ է ընդունում:

— Այդ մէկի միտքը չեմ հասկանում:

— Այդ էլ կը հասկացնեմ՝ վեդունց Սարգսի կարծիքները լսելուց յետոյ:

Այսպէս խօսակցելով մենք աւարտեցինք դարիվերը և մօտեցանք սօսիներին: Դրանք հինաւուրց ծառեր էին, թուով մի քանի հատ, որոնք իրարից անջատ բուսած էին դիւղի վրայ իշխող այդ դարեանդի վրայ: Նրանց վիթխարի բունները՝ բարձր ու գեղուղէշ բազուկներով և լայնատարած ոստերով՝ զբաւել էին հարթավայրի մեծագոյն մասը: Սաղարթախիտ ճիւղերի հովանին ծածկում էր ոչ միայն կանաչազարդ տափարակն ու դարեանդի լանջերը, այլ և վեդունց Սարգսի տունը, որ գտնւում էր հարթավայրի արեգընդդէմ կողմը, և արտաքինով զանազանում էր գիւղի հասարակ տներից: Նա առջին ունէր ընդարձակ բակ, որի սի մասում գետեղուած էին գոմն ու հորթանոցը, իսկ ետևից՝ պտղատու ծառերի մի պարտէզ, որ ոռոգւումէր լեռնալանջի կողմից իջնող մի առուակով:

Ի՞նչ հրաշալի հովանոց է, ճիշդ որ Աստուածաշէն, բացականչեց ընկերս և նստելով փոքրիկ կոճղի վրայ, որ գրուած էր սօսիներից մինի տակ իբրև նստարան, հանեց գլխարկը և ճակատի քրտինքը սրբելով՝ շարու-

նակեց. — նստիր, բարեկամ, և բացադրիր ինձ թէ՛ ինչու «անտառի լաւ տանձը արջն է ուտում»:

— Ո՞ր տանձի և ո՞ր արջի մասին է խօսքդ, հարցրի ես, նստելով նոյնպէս կոճղի վրայ:

— Ահա այս սիրուն հովանոցի, որ արժանի էր գեղանի մի իշխանուհու սեփականութիւնը լինելու, բայց որ վիճակուել է մի ապուշ գիւղացու:

— Մի գեղանի իշխանուհու... այն, իրաւունք ունիս, յարեցի ես ժպտալով և, անշուշտ, այնպիսի իշխանուհու, որ լինէր նորատի, քնքոյշ և գեղահասակ, գրաւիչ դէմքով, կախարդող աչքերով և, միևնոյն ժամանակ, անմեղձ ինչպէս հովտի շուշանը և կեանքով լի՛ ինչպէս գարնան առաւօտը...:

— Դրանք արդէն աւելորդ մանրամասնութիւններ են:

— Հոգ չէ լսիր: Եւ այդ գեղեցկուհին ապրում լինէր այստեղ՝ հոյակապ դղեակի մէջ, շրջապատուած գեղանի նաժիշտներով: Եւ մի գեղեցիկ օր, դու քո որսորդական հագուստներդ հագած, որսողի մախաղն ու հրացանը ուսիդ, որսկան շունը ետևիցդ ձգած՝ անսպաս կերպով յայտնուէիր այստեղ:

— Կատակդ թող:

— Եւ տեսնէիր որ այս սօսիւների հովանիում, շքեղ գահաւորակի վրայ՝ հանգստանում է դղեակի մանկամարդ տիրուհին և Մորփէոսն իւր քնաբեր թևերով նինջ է սփռել նրա գեղանի աչքերին. իսկ լեռնից իջնող այս առուակը օրօր է երգում նրա ականջին...: Դու, ի հարկէ, իսկոյն, հիացմունքից այլայլուած, յետ կը քաշ-

ուէիր այս բնի ետևը և գողունի հայեացքով դիտելով գեղեցկուհուն՝ քեզ ու քեզ կասէիր, — «Օ՛, եթէ ես իրաւունք ունենայի չոգել սրա առաջ և աղօթել...»: Եւ ապա մտածելով որ դու այդ կարող ես անել՝ առանց գեղեցկուհուց տեսնուելու և նրանից նախատուելու, կը չոգէիր և կաղօթէիր... Քո այդ վարմունքը, ի հարկէ, կը զարմացնէր քո շանը և նա իւր այդ զգացմունքը արտայայտելու համար՝ կսկսէր հաջել: Այդ անսպաս ձայնից կը զարթնէր գեղեցկուհին և տեսնելով քեզ իւր առաջ ծնկաչոգ, բարկացայտ ձայնով կը բացականչէր. — «Ո՛վ ես դու, յանդուգն արարած, որ համարձակուում ես խանգարել իմ մենաւոր հանգստութիւնը»: Եւ մի ակնթարթում դուրս կը թափուէին դղեակից նաժիշտներն ու ծառաները և պարանով կապկպելով քեզ, կառաջնորդէին դէպի դղեակի գնդանը...

— Լաւ, բաւական է:

— Սպասիր վերջացնեմ: — Յետոյ մի սիրուն օր գեղանի իշխանուհին իւր պարտիզում զբօսնելիս կը լսէր որ մինը երգում է իւր գնդանում մի շատ տխուր, բայց հրաշալի երգ: Նա յանկարծ կը մտաբերէր բանտարկեալ որսորդին, բերել կը տար նրան իւր մօտ և մանրամասն հարցաքննելով՝ կիմանար որ դու չոգել էիր իւր առաջ ոչ թէ իրեն անարգելու, այլ պաշտելու նպատակով: Ապա քո արկածներով լի անցեալի պատմութիւնը լսելով՝ կը գորովուէր քեզ վրայ, կը սիրահարուէր և հետո ամուսնանալով՝ քեզ իւր սրտի և դղեակի իշխան կը կարգէր:

— Ինչո՞ւ համար է այդ կատակը, հարցրեց ընկերս, այս անգամ արդէն, մի քիչ բարկանալով:

— Նրա համար որ դու և քեզ հետ էլ շատերն այն երիտասարդներին, որոնք, իրենց ասելով, զիշեր ու ցերեկ ժողովրդի ցաւերը դարմանելու վրայ են մտածում, որոնց մշտական զրոյցը գիտութեան վերջի խօսքի, բարձր գաղափարների և ազատ մտքերի համար է լինում, չեն կարողանում հանդուրժել, երբ տեսնում են որ խեղճ արջին մէկը անտառում գտել է մի տանձ և ուտում է. չեն կարողանում ներել որ այս սիրուն սօսիները պատկանում լինին մի խեղճ գիւղացու և ոչ թէ մի գեղանի իշխանուհու: Կարծես բաւական չէ, որ այդ իշխանուհի կոչուածները և գեղեցիկ են, և հարուստ, և բազմից գուրգուրուած, դեռ նրանք պէտք է տիրեն, նաև, երկրագնդի բոլոր գեղեցիկ անկիւններին: Կայ արդեօք այդ խօսքի մէջ խելք, արդարութիւն, կամ ազատ մտածութիւն, որով սիրում էք դուք ամեն տեղ պարծենալ:

— Սպասիր, բարեկամ, դու ասածս չըհասկացար, ուստի և իմ վերաբերմամբ արած զիտողութիւնդ անտեղի է: Ես, ի հարկէ, միշտ կը ցանկանամ որ երկրագնդի վրայ գտնուած լաւագոյն անկիւնները, պարարտ հողերը, պողաբեր հովիտները և այլն և այլն պատկանեն միայն խեղճերին, ճակատի քրտինքով ապրողներին և ոչ թէ բազմից երես առած մարդկանց: Սակայն սօսիների մասին ասածս բացառիկ նշանակութիւն ունէր, հետևապէս և դու ուրիշ կերպ պիտի հասկանայիր: Ես ուզում էի ասել թէ՛ որովհետև

Վեդունց Սարգիսը մի խաւարամիտ և ուսման ու գիտութեան դէմ խօսող ու գործող մարդ է, ուրեմն չարժէ որ այս գեղավայրը պատկանէ նրան:

— Լաւ, ենթադրենք թէ այդպէս է, հապա ինչո՞ւ չասացիր թէ՛ լաւ կը լինէր որ այս սօսիները պատկանէին մեր հիւրընկալ Մուքին, կամ մի ուրիշ, քո կարծիքով աւելի ուսումնասէր, գիւղացու. այլ ցանկացար որ նա լինի մի գեղանի իշխանուհու սեփականութիւն:

— Ասացի հէնց այնպէս, առանց մտածելու:

— Ուրեմն ասել ես աւելի անկեղծօրէն, քան կարող էիր ասել՝ եթէ մտածէիր: Առաջին դէպքում դու արտայայտել ես քո իսկական զգացմունքը, մինչդեռ երկրորդ դէպքում պիտի աշխատէիր վարագուրել այդ զգացմունքը և ասել այն՝ ինչ որ, առհասարակ, ընդունուած է ասել՝ լուսամիտ և ազատախօս երևալու համար:

— Սխալում ես:

— Ինձ համար նշանակութիւն ունի այն, ինչ որ ասացիր առանց մտածելու: Մի աշխատիր արդարանալ: Դրանով միայն ծանրացնում ես յանցանքդ: Թէ՛ դու և թէ՛ նրանք, որոնք հրապարակն ազակում են արդարութեան և ազատամտութեան անունով, ստում էք միշտ ու կեղծում: Եւ դուք մեղաւոր չէք: Մի ժողովուրդ, որ մօտ հազար տարի ապրել է ստրկական կեանքով, չի կարող ծնել այնպիսի որդիք, որոնք ազատ մտածելու հետ միասին՝ կարողանային, նաև, ազատ գործել: Ազատամտութեան գլխաւոր յատկանիշը այն է՝ որ նախ՝ ներողասիտ աչքով նայես ընկերօրջ

թերութեան և սխալանքների վրայ. երկրորդ՝ ցանկանաս որ նա ևս վայելէ այն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կը ցանկանայիր վայելել, և երրորդ՝ որ նրան էլ իրաւունք տաս խօսալու կամ գործելու այնպէս, ինչպէս որ դու ես խօսում կամ գործում: Բայց ձեզանից քանիսի մէջ կարելի է գտնել այս օրինակ ազատամտութիւն: Թուրքը մի առած ունի, որ ասում է՝ «կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կգայ», Այս ճշմարտութեան մենք հանդիպում ենք ամեն քայլափոխում. թէ ինչպէս, բացառելով:—Մեր խօսքն ու գործը, առ հասարակ, չեն յարմարում իրար: Սօսքն առաքինական է, գործը՝ մոլեկան: Ներքող ենք կարգում ազատամտութեան և արդարութեան համար, բայց առանց խղճահարուելու բռնանում մեր մրցակցի վրայ և կամ ընկերի իրաւունքը յափշտակում: Դրուատում ենք գութն ու բարեգործութիւնը և, սակայն, առանց ամաչելու, հանում մեր եղբօր վերջին շապիքը, առարկելով թէ՛ դա մեզ է պատկանում: Ինչո՞ւ է այս այսպէս: Նրա համար որ «կաթի հետ» միասին ստորկութեան, բռնութեան և անարդարութեան շատ սաղմեր են մտել մեր արեան մէջ և նրանք միայն մեր «հոգու հետ պիտի դուրս գան»:

—Դու չափազանցում ես:

—Ձեմ չափազանցում, այլ ասում եմ ճշմարտութիւնը: Եւ այդ զէպքումն էլ, ինչպէս ասացի, անպայման չեմ մեղադրում ոչ քեզ, ոչ քո նմաններին: Իդուր է աշխարհը հայհոյում հրէաներին, թէ նրանք չեն պարապում ծանր աշխատանքով, թէ նրանք երկ-

չոտ են, խաբող, վաշխառու և այլն: Այդ հօ իրենք չեն այդպէս արել իրենց, այլ աշխարհի բռնապետութիւնը: Եթէ այսօրուայ հրէան, որի նախահայրերը, ըստ Մաքս Նորդաուի, «շիտակ են եղել և հպարտ», փախչում է աշխատանքից, այդ նրա համար է՝ որ նրա երակներում դեռ վազում է եգիպտացուց աղիւսէ գործարաններում չարաչար աշխատող հրէայի արիւնը: Եթէ նա ստում է ու թագցնում, այդ նրա համար է՝ որ հրէական արունները խեղդող Փարաւոնի և Երուսաղէմի գերեալներն այրող Նաբուգոդոնոսորիները շա՞տ սարսափը դեռ հալածում է նրան: Եթէ նա խնամում և պինդ է բռնում ոսկու քսակը, այդ նրա համար է՝ որ նոյն ոսկու գորութեամբ հին բռնակալների կատարութիւնը սեղմող և խարուկահանդէսների կրակը մարող հրէաների հողիները դեռ շնչում են այսօրուայ հրէայի ականջին թէ՛ «ոսկու մէջ է միայն քո փրկութիւնը»: Այս տեսակէտից էլ կարող ենք նայել մեր բարոյական շատ թուլութիւնների վրայ: Եթէ իրաւ է որ դարերի ընթացքում մեր հայրերն ու պապերը հեծել են անլուր բռնութիւնների տակ և նրանց թողնել են ու թողնորդիները շարունակ ծառայել անիրաւութեամբ ու անարդարութեամբ իշխող բռնակալների կամքին, ինչո՞ւ պիտի զարմանանք, եթէ նրանց որդիներից մինը, թէկուզ Պետրոս Մինարեան անունով, կամ իշայնքան մեծ նշանակութիւն տայ իշխանին, կամ իշխանուհուն, որ մինչև անգամ ցանկանայ՝ Վեդունց Սարգսի սօսիները յատկացնել նրանց:

—Եթէ իմանամ թէ իմ մէջ խօսել է ստրկա-

մտութեան հոգին, յուսահատութիւնից ինձ կսպանեմ:

— Ինչո՞ւ ես յուսահատուում, դու հօ մենակ չես. քեզ նման հազարաւորները կան: Բացի այդ, ես քեզ կարող եմ մխիթարել, նաև, մի ուրիշ բացադրութեամբ: Այդ այն է՝ որ մարդ արարածը, որքան էլ որ զարդանում և գիտութեան լուսով լուսաւորում է, այսուամենայնիւ, նա իւր մէջ՝ դեռ կրում է բնագոյններն այն հին մարդի, որ վայրենութեան դարեշրջաններում ապրելով՝ վախենում էր փայլակից ու որոտից, որ ստեղծում էր իւր համար գերբնական և անտեսանելի ոյժեր ու նրանց երկրպագում ու գոհում: Այն ժամանակներից սկսած՝ մարդը սովորել է՝ հպատակել գերազանց ուժին և նրա վրայ նայել հիացմունքով: Այդ հպատակութեան ու հիացման մէջ՝ նա գոհութիւն է գտնում և շատ տկարասիտներ, մինչև անգամ, անհանգրստանում են, երբ տիրող, կամ բռնացող ոյժը վերանում է մէջտեղից: Այդ առաջ է գալիս նրանից, որ տկարամիտը վախենում է թէ՛ մի գուցէ ազնուատոհմ գազանի տեղը բռնէ իրեն հաւասար մի ոչխար...: Ես տեսել եմ զարգացած և, ինքն իրեն ազատաստ համարող մարդ, որ դառնացել ու սրտմտել էր՝ իմանալով՝ որ սեպհական աշխատասիրութեամբ յառաջադիմող անտոհմիկ մի գաւառացի գնել է Թիֆլիսում՝ անհաշիւ շուայութեամբ հօր գոյքը վասնող մի իշխանի կալուածքը: Նա սրտմտում էր ոչ թէ նրա համար՝ որ իշխանը շուայտ էր կամ անառակ, այլ նրա համար որ անտոհմիկ գաւառացին տիրում է իշխանական կալուածքին:

Ուրեմն զարգացած մարդը չէր մեծագրում աշխատասիրութիւնն ու գործունէութիւնը, որովհետև նա այդ տեսնում էր անտոհմիկ գաւառացու մէջ. չէր էլ զարշուում անառակութիւնից ու շուայտութիւնից, որովհետև դա՛ իւր աչքում մեծ համարուող իշխանի ունակութիւնն էր: Այսպիսով ուրեմն, այդ զարգացած մարդու մէջ միաժամանակ գործում էին՝ թէ՛ նախկին վայրենիի ստրկական բնագոյն և թէ՛ գոհիկ նախանձը, որ թոյլ չէր տալիս նրան՝ ծագումով իրեն հաւասար գաւառացուն տեսնել՝ իշխանական կալուածքի տէր: Այս տեսակէտով էլ ես բացադրում եմ քո արտայայտած ցանկութեան միտքը:

Պետրոսը լուռ էր և չէր պատասխանում: Նա, երևի, որոճում էր իմ ասածները՝ նրանց մէջ հերքելի կէտեր գտնելու համար: Բայց երբ ես հարցրի— համաձայն ես ինձ հետ թէ՞ ոչ, նա պատասխանեց.

— Քո ենթադրութիւնները վիճելի կէտեր շատ ունին. բայց որպէս զի մեր խօսքը չերկարի, ես առարկութիւն չեմ անում. այդ մասին կը խօսենք ուրիշ ժամանակ: Այժմ՝ դեռ այցելէնք սօսիների տիրոջը:

Այս ասելով՝ նա վերկացաւ տեղից: Ես ևս հետևեցի նրան:

Դ.

Վեդունց բակը մտնելով՝ մենք ոչ ոքի չըպատահեցանք: Այդտեղ լուսթիւն էր տիրում: Եթէ գոմի դրան մօտ կապած ուլը շըլինէր, որը թէ առջև թափած խոտը ուտում և թէ մեզ էր նայում, այլ և պառաւ, ուժագուրկ շունը, որ սրահի շքարանից ելնելով մի երկու բերան ծուլաբար հաջեց և ապա նորէն բակի մէջ ընկած հին սայլի տակը մտաւ, սենք կը կարծէինք թէ՛ այս տան մէջ կենդանի շունչ չըկայ: Բոլոր նշաններից երևում էր որ մի օր այդ յարկը շէն ու փարթամ է եղել, որովհետև բացի շքեղ սօսիներից, որոնք նրա բակի մի մասն էին բռնում, տունն էլ, ըստ ինքեան, գրաւում էր ընդարձակ տեղ և շինուած էր հարուստ գիւղացու ճաշակով: Նա բաղկացած էր մի մեծ, բարձրաշէն օդայից և երկու ուրիշ, նոյնպէս բարձրադիր սենեակներից: Նրանց մէջտեղում գտնուում էր ընդարձակ, սիւնազարդ սրահ: Վերջինի սիւները տաշուած էին կաղնու հաստ գերաններից և ունէին, մինչև անգամ, խոյակներ, որոնք թէպէտ ծխից ու հնութիւնից սևացած, այսուամենայնիւ, իրենց վրայ կրում էին հիւսնի ձեռքերի ճարտարութեան նշանները, այն է՝ զանազան քանդակներ, որոնք ներկայացընում էին կենդանիներ, բոյսեր և այլ նկարներ: Բակի, գոմի և հորթանոցի ընդարձակութիւնը ցոյց էին տալիս որ այդ տունն ունեցել է մի օր բազմա-

թիւ անասուններ: Իսկ թոնդրատան սնից հետու զրանուիլը, արդէն ապացոյց էր որ Վեդունք շէն օջախ լինելով՝ սիշտ ունեցել են հիւրեր, որոնց ծխից ազատ պահելու համար՝ թոնիրը ոչ թէ ուրիշների պէս տան սրահում, այլ բակի մի անկիւնումն են գետեղել: Չընայելով այս բոլորին, այսուամենայնիւ, երևում էր ոչ սիայն նախկին կեանքը չէր ետում այդ տան մէջ, այլ և մի աւերիչ ձեռք ծանրացել էր նրա վրայ: Որովհետև տան կտուրը մի կողսից արդէն ծռուել էր, իսկ բաշերի հողը մի քանի տեղ թափուել: Երկու սենեակների պատուհանները մեծ մասամբ ապակիներից գուրկ՝ ծածկուած էին ձէթած թղթով. գոսի դուռը կըրնկնածան եղած՝ ընկած էր պատի տակ, իսկ հորթանոցը, մինչև անգամ, գուրկ էր այդ բանից:

— Այստեղ մարդ չէ երևում, վերադառնանք, առացի ընկերոջս:

— Չէ, թող միանգամ էլ հնչակը քաշենք, գուցէ մէկը երևայ, պատասխանեց նա:

— Հնչակը սրն է, հարցրի ես զարմանալով:

— Գիւղացու հնչակը չըգիտէս, սա է, այ, տես ինչպէս լաւ է հնչում: Այս ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրայ: Վերջինս վերկացաւ տեղից և այս անգամ սկսաւ հաջել աւելի աշխուժով: Մի քանի բոպէից, արդարև. օղայի դուռը բացուեցաւ և այդ տեղից դուրս եկաւ աղքատ հագնուած մի պառաւ, որն յուշիկ յառաջանալով, մօտեցաւ ու կանգնեց սրահի սիւների մէջտեղը: Սա մօտ վաթսուն տարեկան կին էր, միջահասակ ու

վտիտ մարմնով, խորշումած երեսով, կկոցուած աչքերով՝ բայց դէմքի բարի ու միամիտ արտայայտութեամբ։
Տեսնելով մեզ բակում, նա ձախ ձեռքով հովանի արաւ աչքերին, կարծես, աշխատելով՝ ճանաչել մեզ և ապա հարցրեց։

— Ո՞ւմ էք ուզում։

— Վեղունց Սարգսի տունը սա՞ է, հարցրի ես, իբր չըճանաչելով։

— Հա՛, էս ա, պատասխանեց պառաւը։

— Սարգիս-ապերը տա՛նն է։

— Հրէն բախչումը (պարտէզ) ծառի տակը բճում (փորում) ա։

— Բախչան սրտեղից գնանք, հարցրի ես։

— Ա՛յ կիւսի կողքով վեր անցէք, դուռն ընտի ա, յայտնեց պառաւը։

Հազիւ թէ մենք շուռ եկանք, նա աւելացրեց. — ամօթ չըլի հարցնիլը, դուք հո՞վ էք։

— Օտար մարդիկ ենք. եկել ենք ձեր գիւղը տեսնելու, ասացի ես։

— Բա սրգիան էք գալի, հետաքրքրուեց նա։

— Շատ հեռու տեղից, պատասխանեցի ես։

— Էլ հա, հօ աշխարքի էն ճնդիցը (ծայրիցը) չէք գալի. սին ասեցէք տեսամ սր շհարից էք։

— Ես թիֆլիզից եմ գալի, իսկ իմ այս ընկերը՝ Մոսկովից։

— Դու թիֆլիզից ես գալի. վա՛յ քէ մատաղ ըլեմ, բա խի՞ շուտ չես ասում... Այս խօսքերով պառաւը մօտեցաւ և ձեռքը տալով ինձ՝ ողջունեց այնպէս սիրով

որ, ասես թէ, իւր քեռորդուն, կամ որ և է հարազատին էր պատահել և ապա հարցրեց. — Մի ասա՛, քե մատաղ, մեր Վանուն (Յովհաննէսին) էլ տեսա՞ր։

— Ձեր Վանուն... կը ներես, նանի, չեմ ճանաչում ասացի։

— Ճնաչում չես... բա մեր Վանուն արարած աշխարը ճնաչում ա, էդ սո՞նց ա որ դու ճնաչում չես։

— Ո՞րտեղ է լինում։

— Սուղումն ա ըլում, քե մատաղ, ատվակատ ա, գողերին ու մարդասպաններին նա ա Սիբիրից ազատում։ Դու խի՞ չես ճնաչում։

Պառաւի վերջին տեղեկութիւնը օգնեց յիշողութեանս։

— Այո՛, այո՛, այժմ ճանաչում եմ, այնտեղ նրան Վեղով են ասում։

— Հա, քե մատաղ. սո՞նց ա, սաղ, սալամաթ ա։

— Տեսել եմ, նանի, շատ առողջ է. միամիտ եղիլը, ապահովացրի պառաւին։

— Մատաղ ըլեմ քու աչքերին. էս է՛ս հինգ տարի ա, երեսը տեսել չեմ... քոռանայ ինձ նման մերը, ասաց պառաւը ու լացակումեց։

— Ինչո՞ւ չես տեսել. այստեղ չի՞ գալիս, հարցրեց Պետրոսը։

— Ձէ, քե մատաղ, գալիս չի։ Ասում ա զամ գեղումն ինչ շինեմ։ Ասում եմ, որդի, եկ, կողքիս նստիլ, սկի բան մի շինիլ. եկ, որ ամեն օր էրեսդ տեսեմ, բօյիդ, բուսաթիդ եաշեմ... Ախար աչքումս մազ ա

կանաչել որ քէ էդ օրին եմ հասցրել... Ասում ա, նանի, ասիլ մի, էդ ըլելու բան չի...

Վերջին խօսքերի հետ՝ արտասուքի կաթիլները գլորուեցան պառաւի խորշոմած դէմքի վրայ: Նա գլխափակած ծայրով աչքերը սրբեց:

— Ինչո՞ւ ես լաց լինում նանի. որդիդ, փառք Աստուծոյ, ողջ առողջ է, գործն էլ յաջողակ, քո ուզածն էլ այդ պիտի լինի, սիրտ տուի ես պառաւին:

— Հա, քե մասաղ. բա ի՞նչ ա. որտեղ ըլում ա ըլի. թաքի (միայն թէ) սաղ ըլի... Ինչ անեմ թէ ես ըստի իրա կարօտը քաշում եմ... պատասխանեց պառաւը, աշխատելով իւր վիշտը ծածկել: Բայց մի փոքր յետոյ աւելացրեց. — Շատ վախտ ա գիր չենք ստացել. Աստուած պահի քե որ իմ վանուցը խեր խաբար (բարի լուր) բերիր...: Ապա տեսնելով որ ընկերս շարժում է դէպի առաջ, ասաց... Կուզէ՞ք, ըստի էյ վանումը նստեցէք, ես դնամ մեր հալւորին կանչեմ:

— Չէ, նանի, մի նեղանար. մենք ինքներս կերթանք, ձեր բախչէն էլ կը տեսնենք, ասացի ես և ողջունելով պառաւին՝ առաջ անցայ Պետրոսի հետ:

— Այս ի՞նչ հանելուկ է, հարցրեց վերջինս, երբ մենք հեռացանք: — Այս մարդը Տէր Մակուչին խորհուրդ է տալիս՝ անուսում թողնել իւր չորս որդիներին, մինչդեռ ինքն իւր որդուն բարձր կրթութիւն է տուել և փաստարան շինել:

— Այդ հանելուկը լուծելու համար՝ մենք պիտի մի փոքր էլ համբերենք և ծերունուն լսենք, պատասխանեցի ես:

Պետրոսը ոչինչ չըխօսաց և մենք միասին պարտէզը մտանք:

Դա մի ընդարձակ տարածութիւն էր, որի մեծ մասը ծածկում էին մի քանի շարք պաղատու ծառեր, այն է՝ խնձորենիներ, տանձենիներ, սալորենիներ և սերկելիներ, ամենքն էլ, գրեթէ, պտուղներով ծանրաբեռնուած:

Պարտիզի վերջում մի մարդ, գլուխը կապոյտ թաշկինակով կապած՝ փորում էր կիսաչոր մի դեղձենու շուրջը:

— Անշուշտ սա է Վեդունց Սարգիսը, ասացի ես Պետրոսին և նրա հետ միասին առաջացայ դէպի նրան:

Սա յաղթանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորաքամակ ծերունի էր, մօտաւորապէս եօթանասուն տարեկան: Թաշկինակով կապած գլխի շուրջը մագ չէր երևում, բայց ընչացքն ու կարճ մօրուքը բոլորովին ճերմակ էին: Նրա դէմքի արտայայտութիւնը խիստ էր, բայց ոչ չար. իսկ աչքերը, թէպէտ ծածկուած թաւամագ յօնքերով, սակայն ցոլացնում էին խելք և բարութիւն: Նա հազած էր կոշտ կտաւէ շապիք՝ կապոյտ նաշուրի օձիքով, իսկ դրա վրայից սև դաղաքի, մի հնամաշ արխալուխ: Վարտիքը, որ կարած էր դիւղում գործուած բրթէ շալից, ունէր նոյնպէս մի քանի կարկատան և սրունքների մօտ սեղմուած էր սև սօլաղններով: Ոտքերին ամրացրած էին հասարակ կաշուի տրեխներ. իսկ մէջքը սեղմած սև կտաւի մի դօտիով:

Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռաւորութեան

վրայ, նա իսկոյն գործելուց դադարեց և բահը դեղ-
ձենու բնին յենելով՝ առաջացաւ դէպի մեզ:

— Բարի աջողում, Սարգիս ապէր, ասացի ես
առաջին անգամ, և մօտենալով՝ ձեռքս պարզեցի դէպի
ծերունին:

— Այ Աստուծոյ բարին, բարով էք եկել, պատաս-
խանեց նա ժպտալով և իւր կոշտ աջով մեր ձեռքը
թոթուելուց յետոյ շարունակեց. — Հաւատաս (երևի)
դուք էք Սհարանց Մուքու ղօնաղները:

Ամբողջ գիւղն արդէն գիտէր որ մի օր առաջ
հիւրեր են եկել Սհարենց Մուքու տունը, և մեզ, ահա,
այդ անունով էր ընդունում ծերունին:

— Այո, Սարգիս ապէր, մենք ենք:

— Բարով էք եկել, հազար բարով. կլի որ լաւ
բանի հմար ըլէք եկած, Աստօծ աջողի:

— Մի առանձին բան չունինք, հենց ման գալու
համար ենք եկել:

— Ինչ որ ա, բարի ըլի: Աշխարի շտոն (չարն)
էնքան շատացել ա, որ մարդ շուր խմելու հմար էլ թէ
տեղիցը վեր կենայ, պտի Աստօծ կանչի որ բարի ըլի:
Ձեզանից ո՞րն ա Մինարենց Ակոբի տղէն:

— Ես եմ, պատասխանեց Պետրոսը:

— Հա, քու հէրը լաւ մարթ ա, լաւ էլ հայ ա.
դադրը (երախտիքը) գիտում ես, պատիւ ես տալի:

— Ինչպէ՞ս կարող եմ պատիւ չըտալ. քանի որ
նա իմ հայրն է:

— Ի՞նչ գիտամ. էս այամուսը ըսկի որդին հօրը
ճնաչում չի: Էդ շլապէն ո՞ւմ գլխի տեսում եմ, հենց

գիտում եմ հօր տանիցը շուգա ընկած (տարագիր
եղած) ա:

— Ձէ, ես ծնողներիս շատ եմ սիրում և հենց
նրանց տեսնելու համար է որ Մոսկովից վեր եմ կա-
ցել եկել:

— Հա, որ ըտենց ա, շատ ապրես, Աստօծ պահի
քեզ. բարի ժառանգ ըլես. օրհնեց ծերունին և ապա
դառնալով ինձ հարցրեց. — Կը բաղշես, քե ճնաչում
չեմ. դու ումանցից (որոնցից) ես:

— Ես էլ տէր Օվանէսի թոռն եմ, պատասխա
սեցի ես:

— Ասատուրի տղէն:

— Այո,

— Դէ շուտ ասա, հեր օրհնած. ախար քու ողոր-
մած հոգի հերը իմ տան լաւ բարեկամն ա լի. առանց
իրար թիքա չենք կտրել: Քանի քանի անգամ էս բախ-
չումը նստել, քեֆ ենք արել — քանի անգամ մեր չը-
նարուցը տակին ղուռնա դաւալով մարաքա ենք սար-
քել... Օղորմիքո հոգուն, Ասատուր... ասում էր, ա Սար-
գիս, էս չնարիքը որ քունն ա, լաւ կլի որ տանդ գլխին
մին ատաժ (յարկ) էլ շինես, ու առաջը լէն ու բոլ
մի թախտապանդ (պատշգամ), ընենց ըլի որ՝ չնարու-
ցը ճղները կուսան թախտաբանդի վրէն շուք անեն:
Էն չախը (ժամանակ), ասում էր, տունդ ամարաթի
(պալատի) նման մի բան կը դառնայ. հենց որ թախ-
տաբանդին նստես էս սարերին մտիկ տաս. եա չէ,
սարինն (գովը) ընկած վախտը ընտի մի ստաքան
չայ խմես, հենց կը մանաս թէ դրախտումն ես:

—Նւ իրաւ, լաւ է ասել, մեզ էլ հէնց այսօր ձեր չինարիքն են բերել այստեղ: Ափսոս չէ՞ որ այդ գեղեցիկ ծառերի առաջ դուք երկյարկանի մի տուն չունիք, յարեցի ես:

Ծերունին նայեց ինձ վրայ քննական հայեացքով, կարծես, ստուգելու համար թէ՛ արդեօք իւր սիրտը ցաւեցնելու համար ասացի այս խօսքերը: Բայց ես, ի հարկէ, ասել էի միամտաբար, առանց իմ խօսքերին մի առանձին նշանակութիւն տալու: Սակայն յետոյ իմացայ որ գրանք ծերունու սիրտը խոցած պիտի լինէին:

—Լաւ ես ասում, որդի, շատ լաւ կլէր որ շինի, ամա ի՞նչ անես որ...

—Հա՛, ինչո՞ւ չըշինեցիր:

Ծերունին փոխանակ պատասխանելու նայեց իւր շուրջը, ապա դառնալով մեզ՝ ասաց.

—Էս խի՞ ենք ըստի կադնել. գնանք էյվանումը թախտի վրէն նստենք, եդոյ կը խօսանք: Կը բաշխէք, մարդ որ ծերանում ա, մարիֆաթով (քաղաքավարութեամբ) ժած գալն էլ ա մոռանում... գնանք, ըսենց կադնած կը նեղանար:

—Չէ, Սարգիս ապեր, այստեղ աւելի լաւ է, այ, այս սիրուն ծառի տակը կը նստենք, ասացի ես:

—Լաւ, որ ըտենց ա, թող մի խալիչա բերեն... Ախչի հէյ, ա՛ Սաւգիւլ, մի խալիչա դրկի ըստեղ, ձայն տուաւ ծերունին գէպի տան կողմը:

Մի քանի ըոպէից յետոյ, մի փոքրիկ, աղքատ հագնուած աղջիկ, մի հին գորգ քաշ տալով բերաւ

փոեց ծերունու ցոյց տուած տեղը: Վերջինի հրաւերով մենք նստանք գորգի վրայ:

—Հա, ասում ես թէ՛ խի՞ չըշինեցիր, շարունակեց ծերունին ընդհատուած խօսակցութիւնը. լաւ ես ասում, որդի, որ շինած ըլէի, հմի էս ա որ եկել էք, կը տանի ու կը նստացնի ձեզ էն հովահար թախտաբանդումը ու մի թիքա հաց կը դնի առաջներիդ... ամա դէ կարացի ոչ...

—Երևի փող չունէիք, հարցրեց Պետրոսը:

—Փո՞ղ, ընչի՞ չունէի, փող էնքան ունէի, որ մի ստափ չէ, երկուս էլ կը շինէի:

—Հապա, ինչո՞ւ չըշինեցիր, հետաքրքրուեցայ ես:

—Նոյի ազոաւը չըթողեց, որդի, Նոյի ազոաւը:

—Նոյի ազոաւը:

—Հա՛:

—Ո՞րն է Նոյի ազոաւը, հարցրի ես զարմանալով:

—Նոյի ազոաւը գիտում չես ո՞րն ա:

—Ոչ:

—Բաս դու սկի յուսումարանումը կարդացել չե՞ս:

—Կարդացել եմ:

—Դէ, էսա վարժապետը ասած կլի թէ՛ հո՞վ ա Նոյի ազոաւը, էլ խի՞ ես ասում՝ գիտում չեմ:

—Ջրհեղեղի՞ ժամանակի Նոյի ազոաւն ես ասում:

—Հա՛, բա էլ ուրիշ ի՞նչ Նոյի ազոաւ կայ:

—Ա՛յն ազոաւն է, որ չի թողել քեզ տունդ շինելո՞ւ:

—Հա՛, հէնց համին (խկ և իսկ) էն ազոաւը:

Ես դժուարութեամբ էի ծիծաղս գսպում, իսկ Պետրոսը արդէն քան քան ծիծաղում էր:

— Խի՞ ես ծիծաղում, որդի, հարցրեց ծերունին ընկերիս:

— Հապա, ի՞նչ անեմ որ չըծիծաղեմ. ասում ես Նոյի ազուսը չի թողել որ տունդ շինես: Առաջինը՝ ազուսը ո՞նց կարող է արգելել քեզ քո տունը շինելու, երկրորդ՝ Նոյի ազուսը մինչև այսօր ապրում է որ քեզ արգելի:

— Բաս չի՞ ապրում:

— Ի հարկէ ոչ:

Ծերունին ժպտաց: Սակայն նրա այդ ժպտի մէջ այնքան ծաղր կար ուղղուած գէպի ընկերս, որ ես չը կարողացայ իմ հետաքրքրութիւնը գապել

— Բացադրիր, աղաչում եմ, ի՞նչ ազուս է այդ, կամ ո՞ւմն ես դու ազուս անուանում խնդրեցի ես:

— Առաջ դու ինձ ասա, էդ ազուսի պատմութիւնը գիտում ես թէ՛ չէ:

— Ի՞նչպէս չէ:

— Դէ պատմիր:

— Ի՞նչ պատմեմ. ջրհեղեղի պատմութիւնը:

— Չէ, էդ ես քեյանից լաւ եմ իմանում: Չասես թէ՛ Սարգիս ապերը գեղացի ա, գատ չի գիտալ: Վանքումը իրեք տարի կրգացել եմ. իրեք տարի էլ կէս-գէրութիւն (տիրացութիւն) եմ արել: Աստուածաշունչը էրկու անգամ անց եմ կացել (կարգացել եմ):

— Ուրեմն միայն ազուսի պատմութիւնն ես ուզում:

— Հա՛

— Էհ, նա մեծ պատմութիւն չունի: Երբ Նոյի

տապանը Արարատ սարի վրայ կանգնեց, այդ ժամանակից քառասուն օր անցած՝ Նոյը տապանի պատուհանը բացաւ և դուրս թողեց ազուսին, որպէս զի իմանայ թէ՛ ջրերը ցամաքել են թէ՛ ոչ: Բայց ազուսը զնաց, յետ չը դարձաւ:

— Խաբար չըբերեց Նոյին:

— Այո՛:

— Բա խի՞ յետ չըդարձաւ:

— Յայտնի չէ. դրա համար Աստուածաշնչումը բան չըկայ գրած:

— Գիտում եմ բան չըկայ գրած. ամա դու ի՞նչ ես փիքը անում, խի՞ յետ չեկաւ:

— Ազուսը ծանրամարմին թռչուն է, երևի շատ թուշելուց յոգնելով՝ ընկաւ ջրի մէջ ու խեղդուեցաւ, յարեց Պետրոսը:

— Հը՞... ժպտաց ծերունին. էդա ձեր յուսումնաբանումը ըզենց խամ են թողնում ձեզ է՛. ազուսը խեղդուող ջանավար (զազան) ա:

— Ապա, ձեր կարծիքով, ինչո՞ւ չըվերադարձաւ, հարցրի ես:

— Նրա համար, որ քերձերի գլխին, ես չէ, սարերի դօշին մարդի, ես հէյվանի ջամդաք (գէշ) տեսաւ, վրան ընկաւ ու սկսեց լափիլը: Խի՞, ազուսը մտածելու էր թէ՛ ընտեղ տապանումը Նոյը՝ աչքը ջուր կտրած (ակնկառոյց)՝ իրան ա ըսպասում:

— Կարելի է այդպէս է՛:

— Ոչ թէ կարելի ա, հէնց դրուստ էս ա որ ասում եմ:

—Թող այդպէս լինի. միայն ասան տեսնենք այդ ազուան ինչպէս արգելեց քեզ քո տունը շինելու, հարցրի ես:

—Ինչպէս արգելեց. մը քիչ մաջալ (միջոց) տու, ասեմ...

Այս խօսքերով ձերունին գլխի թաշկինակը հանեց և կոշտ ձեռքով ճաղատ գլուխը շոյելով ու գովացնելով՝ շարունակեց:

—Գիտնում էք ինչ կայ: Աշխարու մս առանց Աստուծո թան չի ըլում. ըսկի տերեն էլ ծառիցը տափը չի ընկնում: Հալբաթ էս էլ Աստու կամքն էր, որ բռնեց ըլաւ:

Ծերունին դարձեալ լռեց. ապա նորէն գլխի թաշկինակը կապելով շարունակեց:

—Ինչ որ պտի պատմեմ, հնուց բան ա. կլի որ բասնհինգ տարի ըլի. ես չէ էրսուն. էն չախը ես հլա բաբաթ (բաւական) ջահելի: Մի օր Օսէփ վարդապետը եկաւ մեր տուն: Օսէփ վարդապետի անումը լսած կաք, հարցրեց, ձերունին:

—Ոչ, պատասխանեցի ես:

—Հա, լսած չէք ըլի, դուք ջահել էք: Նրա մեռնիլը, հաւատաս, տասը ես տամներկու տարի ըլի: Աստօծ հոգին լուսաւորի. արդար մարթ էր, ասիլ (ազնիւ) հոգևորական: Վանքի վանահայրն էր. շուտ շուտ կը գար մեր տուն. կը նստինք էս ծառերի շուքումը, զրից կանինք: Օղորմած հոգի քո հերն էլ շատ կը սիրէր նրան: Էնա մի օր եկաւ տեսաւ որ գերաններ եմ բերել տուել որ տախտակ քաշել տամ.

գեղականի հետ էլ խօսում եմ որ քար ու կիր բերի: —Ա. Սարգիս, ասեց, էդ ընչի հմար ես թագարիք (պատրաստութիւն) ասնում: — Հայր սուրբ, ասեցի, ծառայ եմ քե, ուզում եմ տանս գլուխը շինել տալ: Մեր աղա Ասատուրն էլ ա խորհուրդ տալի: Ես էլ տեսում եմ որ լաւ կըլի: Ափսոս ա որ էս լաշին (գեղուղէշ) չնարուցը առաջին էրկու ատաժանի մի տուն չըլի, որ եկող գնացողը նրա հովհար թախտաբանդումը նստի, մի սնաթ էլ ա քէֆ քաշի: Էս խօսքի միջումը մեր Վանին հորթի եղից վագելով եկաւ որ մեր մօտիցը անց կենայ՝ թէ ինչ ա, հորթի առաջը կտրի, բունի ու վրէն նստի: Էն չախը նա հլա տասը տարեկան էր: Էն ա հայր սուրբը բէխի ձեռքը բռնեց ու ասեց. —ա Սարգիս, գիտաս ինչ կայ. տանդ գլուխը մի շինիլ. այ, սրա գլուխը շինիր: Էն փողը որ խարջելու ես թէ ինչ ա տանդ վրան մին ատաժ աւելացնես, լաւն էն ա որ խարջես ու էս բէխի գլխումը ուսում ու գիտութիւն մտցնես: —Ասեցի հայր սուրբ, բէխին հօանուսում չեմ թողնիլ. մը քիչ վախտից եզը վանքը պտեմ զրկիլ որ լաւ կարգալ սովրացնես: Վայ ինձ, հէնց գիտում ի թէ՛ Հայր սուրբը նրա համար ա աւսում՝ որ բէխին իրա մօտ զրկեմ, հինչ ա մեզանէ խերուի (օգտուի): Ամա օղորմած հոգին պատասխանեց. —Ա. Սաք, ասեց, ես ինչ ուսում ես գիտութիւն ունեմ, որ դրան ինչ տամ: Հրէն դարկի թիֆլիս, գիմեագումը կարթի, լաւ յուսում ստանայ: Ընդիան եղն էլ զրկի Մոսկով, ես չէ Պետրպօլկ, որ ունիվերս մտնի, ընտեղի մեծ յուսումն էլ առնի, փիլիսոփ դառ-

նայ: Էնչազը կը գայ, էս գեղը միջուճը մին հատ
մարթ կըլի: Համ իրա ձեռովը տանդ գլուխ կը շինի.
համ էլ միջուճը յուսումնարան կը բանայ. խեղճ են
էս գեղըցիքը, խաւար մնացել են, խաւար էլ պտի
մեռնեն. սրանց ըխեքը կը հաւաքի, ուսում կը տայ,
ու մի քանի տարէն եղը սաղ գեղը կը լուսաւորի: Էս
բանը համ Աստծուն դուր կը գայ, համ բանդին (մարդ-
կանց). — Հայր սուրբն էս որ ասեց, խեղճումս նստեց:
Ասեցի, Հայր սուրբ, լաւ ես ասում. թող տանս գլու-
խը հին մնայ, ինձ հո՛վ ա տնազ անելու (ծաղրելու).
Թաք ըլի իմ Վանուն գլուխը զարթարուի: Ասենք,
ի՞նչ մեղքս ծածկեմ, ես էլ հէնց էն գլխից յուսումի
ու գիտութեան գերի էի: Երբ մի յուսումնական մարթ
կը գար մեր գեղը, ում տան էլ որ վէր գար, կը գնայի
զօռով զոնաղ կը բերի մեզ մօտ, թէ ինչ ա, աշխարհի
էն լաւ լաւ բաներիցը մին էրկու բերան խօսա, լսենք,
բան իմանանք: Մեր հայր սուրբը մի լաւ Չամչեան
ունէր: Նրա հմար շուտ շուտ վանք կը գնայի, թէ
ինչ ա, կշտիս նստի, մին մին գլուխ կարգայ: Էն
Հայկի, Արամի, ես չէ վարդան զօրավարի լաւ լաւ
պատմութիւնը որ կը լսի, հոգիս կը մխիթարուէր: Շատ
վախտ էլ սիրտս էն հանգի կը լցնուէր, որ լաց կլէի,
ու արտասուքս ջրի նման կը թափուէր: Ի՞նչ երկա-
բացնեմ, տեսայ որ հայր սուրբի խորհուրդը լաւն ա,
վճռեցի որ տանս շինութիւնը թողամ ու ըխեքն թիֆ-
լիս զրկելու թագարիքը տեսնամ: Եփ որ էս բանը
մեր տնացուն (կնոջը) ասեցի, քիչ մնաց որ խեղճը
խելքիցն ընկնի: Ի՞նչ լաց, ինչ շիւան, ինչ գլուխ

թակիլ: Ա մարթ, ասում ա, էդ խի՞ ըսենց անաստօծ
բան ես բռնում. բա մենք ճար ու ճրագ մի տղայ
ունենք էն հնց վեր ունինք զրկենք դարիբ տեղ ու
մենք, էրկու հոգի, մնանք ըստի բայդուշ: — Ա, կնիկ,
ասում եմ. տղին հօ ծախում չենք. զրկում ենք որ
յուսում առնի, մարթ դառնայ ու էլ նոր եդ գայ, մեր
օջախը լուսաւորի: Դորթ ա էս ասում ի, ամա մեր
օղլուշաղին (կնոջը) էլ դնամիշ անիլ (մեղադրել) չէր ըլիլ:
Ախար Աստօծ մեզ չորս ըխայ էր տուել ու էլ ես
իրեքին տարել, մին էդ էր մնացել, որ դիփունանցից
պուճուրն (փոքրն) էր: Ի՞նչ մեր ըլէր, որ լսէր թէ
իրա մինուճար ըխիւն ուզում են ձեռիցը խլել, ջանը
կրակը չըզցէր ու թողէր որ տանեն: Կնիկ արմատը,
դորթ ա, խելքը կարճ ա, ամա սիրտը բարակ ա,
ըսենց ցաւին դժար ա դիմանում: Նրա համար լաւ ա
որ իրա տղան սաղ սալամաթ իր աչքի առաջը կանգ-
նած ըլի, թէկուզ հէնց չօբան (հովիւ), ես հորթարած
ըլի, քանզ գնայ, երկրէ երկիր, յուսում առնի, ես
փիլիսոփ դառնայ: Ամա դէ ես տնացոց լաց ու շիւա-
նին մտիկ չարի. իմ թագարիքը տեսայ ու վանին իմ
ձեռքովը տարայ թիփլիզ, թափշուր արի (յանձնեցի)
մեր կնքաւորի տղին: Նա էլ ընտեղ լաւ վաճառական
էր. ծանօթ բարեկամ ունէր. ըխիւն պատրաստել
տուաւ, ու մի տարէն եղը գիմեազը տուաւ, որ
ըխան գշեր-ցերեկ ընտեղ մնայ, համ էլ կարթի:
«էդ օրից դէսը վանին դառաւ իմ դարդն ու
դէյիզը (ցաւն ու հոգսը): Դորթ ա, ըխիւն սաղ սա-
լամաթ թողեցի եկայ, ամա օր ու գշեր հենց նրա

վրէն ի մտածում: Եարա՞ք, ասում ի, ըէխաս հօ չմըր-
 սեց, եա չըհիւանդացա՞ւ: Եարա՞ք եադի (օտարի) տանը
 ըէխի սիրտը հօ չըկտարուե՞ց: Ես ո՞ր մի՞նն ասեմ. ինսան
 ենք էլի՞. մտածմունքը Աստօծ մեզ ա տուել: Ամա
 ինչ որ նրա մէրն էր անում, բերանով ասուիլ չի ըլի:
 Խեղճը ոչ գշերը քուն ունէր ոչ ցերեկը դարար (հան-
 գատութիւն): Տափը, ասես, տեղ չէր տալի որ նստի.
 էն ա ամեն մի ներս ու դուս անխլով ընենց էր ախ
 քաշում, որ ասես ջիգարը պոկ ա գալու: Բէխի սի-
 րած շունը որ տենում էր թէ հոտոտելով դէս ու դէն
 ա գնում, ասում էր.— ա Դաթար, Վանսուն ես ման
 գալի ըստի չի, քե մատաղ, էնա օխտը սարի քմա-
 կին, ասում էր ու լաց ըլում: Նախիրը որ հանդումը
 եդանում էր, հորթերը բռանչում ին. ասում էր—
 ջան, եարաք իմ ըխէն էլ ձեզ նման անմեր մնացած
 բռանչում ա, հու ձէնը լսող չէայ... Եփ որ մանում
 էր էս բախչէն հու տեսնում ծառերը տանձ ու խնձո-
 բով լիքը, ասում էր — ձեր աչքը քոռանայ, էդ ո՞ւր էք
 ըդէնց կանանչ կարմիր լցուել, ձոնքոտել (ծանրա-
 բեռնուել), ախար որ Վանին ըստի չի, խի՞ չէք չո-
 բանում, վեր թափում: Խուլասայ (վերջապէս) ես
 ո՞ր մի՞նն ասեմ: Շատ վախա էլ ա կանջներս ծածկում
 ի հու փախչում, ինչ ա, խեղճի լացն ու արտասուքը
 չըտեսնեմ: Գիտում էք, ծնող ըլիւր հեշտ բան չի.
 ըխի տէր պաի ըլէք որ էս ցաւը քաշէք հու իմա-
 նաք թէ ինչ դժար բան ա: Ամա դէ ես էլի դիմա-
 նում ի. ըեսանց ըկցնում չի. հրա Սաւգիւլին էլ
 սիրա ի տալի. ասում ի, աղջի, ըտենց վրովթալ (մըր-

մնջալ) մի: էս ա ըխան յուսումը կը պրծնի կը գայ.
 էնչախը ուրախութիւնդ տասնապատիկ կըլի: Դորթ
 ա, հմի նեղութիւն ես քաշում, ամա դէ էն վախտը
 որ տեսնես թէ քու աղէն գեղի միջումը մի՞ն հատ ա,
 ու դիփուկանք նրա դուլումն (ծառայութիւնում) են
 կանգնած, տեսնես որ սրանց էլ հերերն ու մերերը
 նրա արևովն են երգում ուտում, սիրտդ կը փառաւո-
 բուի, քաշած ցաւերդ կը մոռանաս...: Խեղճ կնիկը,
 զորթ ա, էս խօսքերով մի՞ն օր հանգստանում էր.
 ամա էլ էգսը իրա ցաւն իրա հետ էր:

«Վրա էրկու ամառն էր գնում որ մենք մեր օրե-
 ըը ըտենց դժուարութիւնով անց ինք կացնում: Մին
 օր վանքումը Օսէփ հայր սուրբին տեսայ: Հա, մոռա-
 ցել ի ասեմ ձեզ, թէ էն օրից որ Վանին տարել ի Թիֆ-
 լիզ, Հայր սուրբն իրա ոտը մեր տանից կտրացրել
 էր: Չուն լսել էր որ Սաւգիւլն ասել ա թէ՛ «իմ ըէ-
 խին էդ սեպուլիսը զարիբութիւն գցեց. էլ իմ աչքը
 դրան տեսնա ոչ»: Խեղճն էն ա սրա հմար էլ մեր
 տուն չէր գալի: Էդ օրը որ վանքում պտահեցի, ասե-
 ցի «Հայր սուրբ, մատաղ ըլեմ կարգիդ, ախր մեր
 տանեցին ինձ դիմջութիւն (հանգստութիւն) չի տալի,
 կարում չի դիմանայ: Չի՞ ըլի որ Վանուն էլ եդ բե-
 ըել տանք»: Ասեց՝ ա Սաք, խեղճ կորցրել ես. բա
 ըխէն անջախ (հազիւ) ա յուսումի վրէն տաքացել,
 բերում ես որ ինչ անես, չօբան պիտի շինես: Ասեցի
 բա մնց անենք որ մօրը սիրտը դիմանում չի: Ասեց,
 հէր օրհնած, դէ էն ա տարին իրեք ամիս պուզնիկ ա.
 խի՞ չէք էն վախտը բերել տալի: Ես էլ, ինչ մեղքս

ծածկեմ, պռագնիկի բանը սկի լսել չի: Ասեցի, Հայր սուրբ, պռագնիկը ի՞նչ բան ա: Ասեց ըսենց, ըսենց, ըսենց: Վայ Ասծու խեր խաբարը քե, ասեցի, Հայր սուրբ, բա էդ խի մինչև հմի ասել չես: Դէ շուտ, մի գիր գրի մեր կնքաւորենց տղին, որ ըխիին զրկի: Էս որ ասում եմ, Մայիսի միջումն էր: Էն ա հայր սուրբը, Աստօժ հոգին լուսաւորի, գիրը գրեց ու մի քսան օրից եզը ըխան եկաւ:

«Դէ հմի դուք ըստեղ պտի ըլէիք որ տեսնիք թէ՛ մերը ոնց էր գնում տղի առաջը: Ըսկի մուռանալ չեմ: Իրիկուայ չախն (գէմն) էր. նախիրը նոր էր հանդիցը էկել: Սաւգիւլը կովկիթը ձեռին՝ Սոնա անուամով մի սիրուն կով ունինք, նրա առաջը չոքած՝ կթում էր: Հէնց որ չըլսեց թէ ըխէն գալիս ա, կովկիթը ձեռէն վեր գցեց, ու գժի նման վազ տուաւ:

— Սաւգիւլ, Սաւգիւլ, աղջի էդ ուր ես վազ տալի, ըխէն հլա հեռու ա, կանչեցի եղիցը. ամա լսեց ոչ: Աղջի, կացի ես էլ գամ, մենակ գնալ մի, բղաւում ի եղիցը. ամա Սաւգիւլի ականջումը որ թոփ էլ տրաքէր լսելու չէր: Ծարս կտրեց, ես էլ վեր կացայ ու եղիցը վազեցի: Գեղըցիք բանից բխաբար (անգիտակ) կտրներիցը ես էլ վաններիցը մտիկ ին տալի մեզ ու արմանում: Հենց գիտում ին թէ՛ կնիկս պելացել (գժուել), տանիցը փախչում ա, ու ես էլ եղիցը վազում եմ որ բռնեմ: Էդ սհաթումն հնով էր կանգնիլու թէ, ի՞նչ ա, նրանց բան հասկացնի: Ինչ կլի մին վերստաչափ ըսենց իրար եղից վազ տուինք: Հէնց էնա, էլի (հասարակաց) ձամպին հաս ու հաս

ինք որ թումբի եղիցը ըխան ըկաց: Սաւգիւլը, որ ինչ կլի էն՝ դուշի նման թռչում էր հու ես եղիցը կարում չի հասնեմ, հմի որ ըխին տեսաւ ո՞չ, ասես տեղն ու տեղը մեխուեց. «Վանի ջան, բալա ջան, դու եկա՞ր, մայամ (ուրեմն) ես քե տեսա՞լ պտի...» ասեց ու ծնկները թուլացած ձամպի միջումը չոքեց: Բխան ձի վրիցը թռաւ, վազ տուաւ, մօրը ձտովն ընկաւ: Էլ հնով կարա պատմիլ թէ ի՞նչ էր անում ըստեղ մերը՝ տղին: «Վանի ջան, բալա ջան» էր ասում ու գլխիցն ինչ կլի ոտը պաչում, լիզլիգատում, թողում չէր որ դօշիցը պուկ գայ, թէ ի՞նչ ա, մի հետ էլ ես խտտեմ (գրկեմ), էրեսիցը պաչեմ, որ սիրտս հովանայ... Ուզում էր, ասես, սիրտն էն մնութին (բոպէին) ճղի ու ըխէն միջումը դնի, ես չէ, աչքի լիսերն հանի որ Վանու ոտի տակը գցի...: Ի՞նչ երկարացնեմ, էս թահրով ըխին վեր կալանք, եկանք տուն:

Ծերունին լռեց: Ապա ձեռքը դէպի ճակատը տանելով նորէն գլխակապը հանեց, ճաղատ գլուխը շոյեց և կրկին շարունակեց.

— Հմի դուք կասէք, էս հալեօրը ի՞նչ ա ըսենց էրկէն-բարակ խօսում. մենք ուղեցինք որ Նոյի ագուաւի բանն իմանանք, սա իրա տղի պատմութիւնն ա կցել:

— Զէ, պատմիր, մենք սիրով լսում ենք, ապահովացրի ես ձերունուն:

— Հա, ինչ կլի հմի պատմեցի թէ՛ ծնողն ի՞նչ ցաւ ու կրակի մէջ ա ըլում, եփ իրա ըխին դարիբութին ա զրկում: Հմի էլ մի ուրիշ ցաւ պատմեմ:—

Քիչ առաջ եփ ընկերդ ասեց տունդ խի՞ չըշինեցիր, կլի որ փող չունիր. ասեցի ընչի՞ չունի. փող էնքան ունէի որ մինը չէ, էրկու էտած էլ կը շինի, թէ որ ուզի: Սրանով ուզում ի ասեմ թէ՛ ես հարուստ եմ: Ամա դէ գեղականի հարստութիւնն ի՞նչ ա: Մին հազար, եա էրկու հազար մանէթ որ ունենում ա, եա չէ մի քսան, էրսուն գլուխ տաւար, մին պուճուր իլիսի (ջուկ) ձի, մին քանի ուլախ (գրաստ), էն ա ասում են թէ՛ մեծ դովլաթի (հարստութեան) տէր ա: Ես էլ ըտենց հարուստ ի: Եփ Օսէփ հայր սուրբն ասեց՝ փողդ խարջի ըէխին ուսում տու, ես հենց գիտացի թէ՛ իմ նաղդ (կանխիկ) փողը բաւական կլի դրան: Ասեցի էն լաւ ա իմ Վանին յուսումնական ըլի, քանզի ես հազար, եա էրկու հազար մանէթի տէր: Փողը նրա գլխին մատաղ. իմ բաղն ու բաղչէն, իմ տունն ու ջրաղացը, իմ տաւարն ու ձիանը որ ինձ մնան, էն էլ ինձ հերիք ա: Ամա դէ որ փողին ճնդիցը կցեցի ոչ խարջի՛լը—հեշտ բան չըգիտաք գեղականի հմար տարին իրեք հարիւր մանէթ գիմեազը փող զրկիլը,— էն ա տեսայ որ օխտը տարուայ մէջ՝ էլած փողս ձեռքէս դուրս եկաւ ու ես մնացի դարդակ: Էդ տարին Վանին գիմեազը պրծել էր: Գրեց թէ, ա հեր, ինձ պախիմ օգնես որ գնամ ունիվերս: Էս բանը ինձ փիքրի մէջ գցեց. ընդուր որ տեսնում ի թէ, օրս փիս տեղ ա մըթնում: Գնացի վանահօր մօտ խորհուրդի: Հայր սուրբ, ասեցի, ախր ձեռիս փողը դուրս էկաւ, ըէխէն էլ գրում ա թէ՛ ինձ ունիվերս զրկի: Ես ի՞նչ անեմ: Ուզում եմ Վանին բերել տամ. բոլ ա (բաւական է)

որքան յուսում առաւ: Հայր սուրբը, հախ Աստծու (ճիշտն ասած՝) իմ ղօլը (կողմը) խօսաց:—Ա. Սաք, ասեց, թէ որ փող չունես, գիմեազի յուսումն էլ ա բաւական. գրի թող գայ: Էն ա ես էլ գրեցի: Ամա դէ Վանին թարսի ձին նստեց էլ վեր չեկաւ (հակառակուեց): «Ա. հեր, գրում ա ինձ, դու մի բաղ ես տնկել, պահել, բշարել (մշակել), ծառերը հասցրել, մին ջուր տուել ես, մնացել ա մէկէլը՝ որ բաղը հասնի պտուղը քաղես: Հմի դու էդ ջուրը բէվախտ (անժամանակ) կտրում ես, պտուղը խակ թողնում, էդ Աստօծ վեր չ'ունիլ: Իմ ընկերները դիփ գնացին՝ որը Մոսկով, որը Պետրպօլք. մինակ ես եմ մնացել ձեռս ծոցումս, գլուխս քաշ: Եկ էդ բանը դու մի անիլ, իմ վիզը մի կտրիլ...» Դէ ձեզ եմ հարցնում, մի հեր, որ իրա մին ու ճար ըէխիցը ըսենց նամակ ստանայ, ի՞նչ կանի:

—Ի հարկէ, բոլոր էլած չելածը կըծախէ, նրան կուղարկէ, արագ պատասխանեց Պետրոսը:

—Հա, ապրես, ես էլ ըդէնց արի: Ինչ որ ջէբումըս, եա սանդուխումս փող էր մնացել, էն հւաքեցի, ղրկեցի Վանուն, ասեցի, որդի, էս քե՛ ճնապարի խարջուլս. գնա, Աստօծ քե հետ. յուսումի ու ապրուստի փողն էլ կըզրկեմ: Սրանից եզը՝ հօրենական մի թթի բաղ ունինք, էն ծախեցի քաշալ Մօսու տղի վրէն ութ հարիւր մանէթի ու փողը եաւաշ եաւաշ ղրկեցի Վանուն: Էդ հերիք չարաւ: Եդոյ մեր էս ջրի վրայ մի ջաղաց ունինք, կլի որ տեսած ըլիք:

—Այն, տեսել ենք, հաստատեցի ես:

— Հա, էն ջաղացը ծախեցի խօժա Մարութի վրէն չորս հարիւր մանէթի ու փողն էլի ղրկեցի Վանուն: Սա էլ իմ քոռ բաղդիցը, ունիվերսի մի կլասումը իրար վրայ էրկու տարի մնաց: Գրում էր թէ, միթօմ, վարժապետները փախլութին են արել (նախանձել էին) որ ինքն ընենց լաւ կարթում ա ու ճգրու մին տարի աւել ին պահել էն կլասումը: Ամա դէ ուրիշներն էլ ասել ին մեր կնքաւորենց տղին՝ թէ Վանին մի նախշուն աղջկայ սէր ա տուել, եղիցն ընկել, դէս ու դէն շուռ եկել, ու դրա համար ա կլասումը մնացել: Սուտն ու զորթը Աստօժ ա իմանում, անջախ էս կայ որ էդ մին տարուայ խաթրին՝ ջաղացի փողը քոռ ու փուշ էլաւ (ոչնչացաւ): Էն ա ջլիզ (բոլորովին) դա՛յամիշ ի ըլել (յոգնել էի), գնացի Հայր սուրբի մօտ, ասեցի. ա վարդապետ, ախր էլ դմանալու ուժ չունեմ, ի՞նչ անեմ: Ասեց, ա Սաք, շատին դմացել ես, քչին էլ դմաց. ձիանդ ծախի, եգներդ ծախի, փող հասցրու: Դու սկի վախիլ մի. տղադ որ եդ դառնայ, իրա սովորած թահրովը լաւ բաղ էլ ա սնկելու, նոր դայդի (տեսակի) ջաղաց էլ ա շինելու, եգներդ ու ձիանդ էլ ա շատացնելու: Ուսում առած տղան որ կայ, նոյի աղանին ա, որ ձթենու շիւր բերանումն եդ ա գալիս ու բախտաւորութենի խաբարը բերում ծնողին: Ի՞նչ երկարացնեմ, Հայր սուրբի խօսքերը սիրտ տուին ինձ, ես էլ կցեցի առաջ ձիաներիցս, վերջը եգներիցս մի մի ծախել ու փող ղրկել Վանին: Էն ա վերջին տարին էր. ամառը Վանին ամեն բան պտի վերջացնէր ու եդ վար գեղը: Խօսք չըկայ որ ես էլ օրեր

եմ հմբարում (համարում) թէ՛ եփ ա ըէխէն եդ գալու, որ համ էս դժար հոգսիցը մեզ ազատի, համ էլ իրան տենանք ու կարօտնիս առնենք:

«Մին էլ էս ա մին գիր եմ ըստանում թէ՛ ա հէր, յուսումն վերջացրել, պրծել եմ, ամա ըստեղ պարտք ունիմ, բաց չեն թողնում ինձ. որդիան որ ա, մին էրկու հարիւր մանէթ հասցրու որ էս պարտքը թափեմ ու գամ: Դօրթ ա, պարտքի անումը որ լսեցի սիրտս շատ կոտրուեց, ամա դէ ասեցի «գիւշան աղլամազ» (ընկնողը լաց չի լինիլ), թող էս մինն էլ եօլայ տանենք: Գնացի Խօջա-Մարութից էրկու հարիւր մանէթ պարտք արի, թիւմանին մի աբասի շահով (1/2%) ու մին ամիս ժամանակով: Էդ փողն էլ ղրկեցի Վանին: Մաքումն էլ ասըմ ի թէ, էս ա ըէխէս կը գայ, համ էս պարտքը կը տայ, համ էլ իրա ծոացրած բաները կը դրստի: Հէնց գիտում ի թէ՛ Վանին որ իրա յուսումովը գեղ մտնի, էն ա փողը երկնքիցը վեր ա թափուելու:

— «Անց կացաւ մին ամիս, էրկու ամիս, Վանունը խաբար չըկայ: Մեծ փիքրի մէջ ընկայ: Եւրաք էս ի՞նչ էլաւ. Վանին սրդի մնաց. չըլի մի քամբախտութիւն պատահեց. ես չէ, Պետրպոլքումը բռնեցին ըէխիս, չուն ըսենց բաներ շատ ի լսել: Մի խօսքով, սիրտս ճաքում էր:

«Մին էլ էս ա մի օր Վանիցը գիր եմ ստանում, գրում ա թէ՛ ա հէր, աչքդ լիս ըլի, եկել եմ Թիփլիս ու մի սիրուն աղջկայ հետ պսակում եմ, հալի հալբաթ (անպատճառ) քու ու նանի օրհնութիւնը դուշի թևովը հասցրու ինձ:

«Ոնց որ մարդու գլխին մի թոփ արաքի, ընէնց էս խաբարը արաքեց իմ գլխին ու ինձ շճացրեց: Սաղ մին քանի օր ես ու կնիկս ջլիգ պելացել, ընկել ինք ըստեղերք, ոչ արածներս ինք իմանում, ոչ չարածներս: Շատ մտածելուց ու փիքը անելուց եղը՝ վեր եմ կենում գրում տղիս թէ՛ «ս որդի, ախար հլա քու ինչ պսակուելու վախտն ա. հլա նոր ես յուսումդ վերջացրել, մին եկ քե տենենք, մեր կարօտն առնենք, մեր ցաւերիցը խօսանք. ախար քու աբովն (յուսով)՝ էլած չէլածս ծախել, պարտքի տակ եմ ընկել, եկ իմ ցաւին մի ճար արա, էլ եդ գնա պսակուիր»:

«Հմի դուք փիքը կանէք թէ՛ գեղացին իրա տըղին պսակում ա տասնհինգ, ես չէ, տասնըվեց տարումը. էս խի՞ Սաքի ապերը ուզում չէր որ իրա քանըչորս տրեկան տղէն պսակուի: Իրա մանին, դրուստն ասած, մին էն էր, որ ես թիփլիսի աղջկերանցից վախում ի. չուն դրանցից շատ բաներ ի լսել: մտածում ի թէ՛ չլի՞ տղիս գլխից հանեն ու մին քոռ ու քաչալ գատ գլխին կապեն: Զահելը, հօ գիտաք, քոռ կըլի. ասում ի. ընենց ըլի՞ որ մինուճար տղիս անբաղգ չանեն. մին էլ էն էր՝ որ գիտում ի վանին թիփլիզում պսակուելուց եղը էլ մեզ մօտ չի գալու, վաթանն (հայրենիքն) էլ ա մտքիցը գցելու, հօր տունն էլ: էս ցաւին, գիտաք, դմանալ չէր ըլիլ:

«Իմ գրին տղէս պատասխանում ա թէ՛ ա հէր, էս աղջկանը Պետրպօլքից եմ սէր տուել, ինչկլի հեղը չըպսակուեմ՝ կարալ չեմ գեղը գալ. հալի հալբաթ քոռ օրհնութիւնը դրկի:

«Գրում եմ, ա որդի, ախար մին ասես էլ ա՛ էդ ինչ աղջիկ ա. ինչ ազգի որդի ա. հայ ա, ոսկա ա ջհուգ ա: Ախար ես սնց իմ օրհնութիւնը դրկեմ էն հարսին, որի էրեսը տեսել չեմ, ձէնը լսել չեմ: Գրում ա թէ՛ — ս հէր, խի՞ ես էդ բանը հարցնում. ես հօ թուրքի ես ջհուգի աղջիկ չեմ ուզիլու: Գիտում չես որ ուզածս քրիստոսի աղջիկ կլի: Ամա մի էրկու օր եղը մեր կնքաւորենց տղէն գրում ա, (չուն նրան էլ ի հարցրել), թէ՛ ասիլ չես, վանին պսակում ա մի գիւրջու (վրացու) աղջկայ հետ...:

«Հմի ձեզ եմ հարցնում. մին հեր, որ էս բանը լսի, ինչ կանի: Հը՞: Ամա սըր եմ հարցնում. դուք ինչ գիտաք: Էն ա կցեցի գլխիս վայ տալն ու ան ու վա՛շ անիլը: Ամա դէ էլ սըր կըհասնէր: Բանը բանից անցել էր:

— Ուրեմն քո օրհնութիւնը չուզարկեցիր, հարցրի ես:

— Զէ, չըզարկեցի: Ամա ինքը առանց դրան էլ պսակուել պրծել էր: Եդոյ էլ հլա ինձ վրա ուռած, փքուած գրում ա թէ՛ «ա հեր, դու որ քոռ օրհնութիւնը ինձ չըզարկեցիր ու էս իշխան մարդկանց միջումն ինձ խայտառակեցիր, էլ յօրէս դէնը ես քոռ որդին չեմ:

— Յետոյ դու ինչ պատասխանեցիր:

— Ոչինչ: Մինակ էն արի, որ նրա գիրը վեր կալայ, գնացի վանքը: Էն վախար Օսէփ հայր սուրբը մեռել էր: Գնացի նրա գերեզմանի ռաջին չոգեցի, քարը համբուրեցի ու լաց ըլելով ասեցի — «Օսէփ հայր սուրբ, լուս դառնաս դու հողովդ ու քարովդ»:

ախար դու ինձ ասեցիր որ իմ Վանին Նոյի աղա-
նին ա, էս ա ձիթենու շիւր բերանում եդ ա գալու, որ
բանդաւորութենի խաբարը բերի ինձ. բա խի՞ ըտենց
չիլաւ... ախր Վանին հսի Նոյի ագոաւն ա գառել,
Չամդաքի վրէն նստել ա՛ ու էլ եդ չի գալի. սրա
ճարն ի՞նչ կլի...:

Ծերունին լռեց, կարծես, այլ ևս չըկամենալով
խօսել:

Բայց Պետրոսը, որ, ըստ երևութին, չէր նկա-
տում ձերունու յուզմունքը, հարցրեց.

—Վերջը ի՞նչպէս եղաւ. տղադ պսակուելուց յե-
տոյ գիւղը չեկա՞ւ:

—Եկաւ հինգ տարուց եղը. կնիկն էլ բերաւ,
մի երեք էլ գիւրջու ճտեր հեղը:

—Յետո՞յ:

—Յետոյ էլ ի՞նչ. մի տաս օր մնաց, սաքի (որ-
պէս թէ) մեր խաթրը առնելու հմար ու էլ եդ գնաց:

—Բաս ըսկի չհարցրի՞ր թէ ինչո՞ւ է այդ աղջկայ
հետ պսակուե՞լ:

—Հարցրի. ասեց սրա հէրը ընտի մեծ դուրու-
ղում (պաշտօնի մէջ) ա. պսակուեցի որ ինձ էլ կռան
տակը քաշի ու մենձ մարդկանց ջարգը (շարքը) գցի:

—Այսուասենայնիւ, դու քո նպատակին հասել
ես. տղիդ բարձր ուսում ես տուել՝ ու թիֆլիսի նման
քաղաքում յայտնի մարդկանց շարքը գցել, այդ էլ
մեծ բան է, նկատեց ընկերս:

—Ա. քե մատաղ, բա ես իմ էլած չելածը փչա-
ցրել, Վանին յուսում եմ տուել՝ որ նա թիֆլիզին

պէտք գայ. խի՞ թիֆլիզումը նրա նմանները քիչ կան.
եա չէ, իմ սիրտը շատ էր ցաւում էդ բարբաղի (քան-
դուածի) հմար...: Ես իմ տղին ուսում եմ տուել՝ որ
առաջ իմ օջախը շինի, իմ հանգած ճրագը վառի, իմ
տունը հարս բերիլով՝ ինձ ու իմ պառաւին ուրա-
խացնի, եդն էլ իրա ուսումով էս խաւար գեղը լու-
սաւորի. մեր խեղճ ու հայվան շինականին գոռից,
բեգառից ազատի... Թիֆլիզում Վանին թող հէնց
երկնքից հրեշտակ վեր բերի. ինձ ի՞նչ... հրէն, որ
երկրում որ լուսաւէր, եա չէ փանդ ու փիլով (հնա-
բազէա) մարդ կայ, հէնց դպայ թիֆլիս ա վագ տա-
լի. դուք մեր էս խեղճ գեղի դարդը քաշեցէք, որ ոչ
տէր ունի, ոչ սրտացաւ...:

—Վանին գոնէ փող ուղարկում է քեզ, հարցրի
ես ձերունուն:

—Չէ, չի դարկում, մեր կնքաւորի տղին ասել ա
թէ՛ ապուն ասա՛ ինձանից նեղանայ ոչ. խարջս շատ
ա մենձ. տարին 3 - 4 հազար մանէթը հերիք չանում,
ես էլ անջախ (հազիւ) էդքան եմ աշխատում:

—Իսկ խօջա Մարութի պարտքը վճարե՞ց:

—Չէ, քե մատաղ. նրան էլ էրկու դոմշակովս
տուի, հոգիս ազատեցի:

—Հապա երբ այստեղ եկաւ, իսկի չասացի՞ր թէ
ինչո՞ւ գոնէ իւր համար արածդ պարտքը չի վճարում:

—Ասեցի. ասում ա, ա՛ հեր, դի՛փ մէկ չի՞. ինչ ու-
նես չունես, ծախիւր կեր. եփ որ կը դարտակուես, կը-
գաս թիֆլիս իմ տանը կապրես:

—Դու ի՞նչ ասացիր:

— Ասեցի եանդլիշ ես, որդի, որ իմանամ թէ քաղցած մեռնելու եմ, իմ ոտն իմ գեղիցը դուրս չեմ գնիլ. ըստեղ ծնուել եմ, ըստեղ էլ պաի մեռնեմ. իրա վաթանը մոռացողը, հօր տունն աչքից ու մտքից քցողը մարդ չի, հայվան ա:

— Եւ այդ դրութեան մէջ ուրեմն դու ոչ մի մխիթարութիւն չունիս, հարցրի ես ծերունուն, ի սրտէ ցաւակցելով նրան:

— Ունեմ, ո՞նց չունեմ, պատասխանեց նա յուզուած ձայնով. իմ մխիթարութիւնն էլ էն ա, որ եփ լսում եմ թէ մեր գեղականին մինը ուզում ա իրա տղին քաղաք դրկի յուսում առնելու, էն սնաթին գնում եմ կռնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնացնում ու ասում. — տես, որդի, էս Վեդունց Սարգսի շէն օջախն ա, որ էս օր վերանայ (աւերակ) ա դառել: Այ, տես, կտուրը ծռուել ա, պէշերը թափուել են, գերանը կախ ա ընկել, գիւմը դարտակուել ա, ու մեզ թացան (թաց կերակուր) սուտղը մի էծ (այծ) ա մնացել... Մենք էլ, տեսնում ես, մարդ ու կնիկ ծերացել, մնացել ենք անտէր. ոչ ձեռք կայ, որ մեր դուռը բանայ, ոչ ձէն կայ, որ սրտներս ուրախացնի... էս դիփ նրա մեղն ա, որ ես իմ տղին յուսումի դրկեցի... Վախիւր էդ բանիցը, որդի, բէխէդ քու կշտին պահիր, տանիցդ մի հեռացնիլ որ իմ վանու նման Նոյի ազուաւ չըդառնայ...:

— Բայց դուք հօ գրանով չարիք էք գործում, բացառանչեց Պետրոսը, վրդովուելով:

— Չարիք խի եմ գործում, պատասխանեց ծե-

րունին եռանդով. լաւն էն չի որ մեր գեղը յիսուն վար անող տղամարդ էւելի ունենայ, քանց թէ հարիւր Նոյի ազուաւ: Վար անողը հլա հաց կը բերի տուն, քիւլփաթի (զաւակների) ուղղին կը շտացնի. Նոյի ազուաւն ի՞նչի ա պէտք: Ես չէ, հո՞վ ա մեղաւոր որ ես հմի ըսենց եմ խրատում մարդկանց, էս, թէ իմ տղէն: Մի սնաթ առաջ գնացել էք Տէր-Մակուչի եախէն (օձիքը) բռնել թէ՛ էս խի՞ դու գիտուն չես, էս խի՞ տղերանցդ յուսումի չես դրկել... Խեղճն էն սնաթին եկաւ ինձ գանգատուեց: Ասեցի, ո՞ւր ա, էդ շապաւոր տղերանց մի դրկի ըստեղ՝ ես էլ նրանց իմ հարցմունքն անեմ: Հմի հագիր եկել էք. խնդրում եմ որ ասէք. — հո՞վ ա մեղաւոր որ գեղի քահանան Տէր Մակուչն ա. հո՞վ ա մեղաւոր որ եղցու առաջը անապատ ա. հո՞վ ա մեղաւոր որ գեղը կեղտոտ ա, տները տափից կը պած, հայաթները թրքով լիքը, քուչէքը ծռու ու մուռ... ասեցէք տեսամ, հո՞վ ա մեղաւոր, խեղճ գեղակա՞նը թէ՞ Նոյի ազուաները: Ախար ինչ կլի հմի էս գեղաւանքից մի տասը, քսան տղա գնացել են յուսում առել, լուսաւորուել. հմի ո՞ւր են. ընչի՞ նրանցից մի՞նն ու մի՞նը եդ չեկաւ որ իրա հօր օջախը վառի, իրա վաթանը պայծառացնի, որ գեղացին հենց մին օրինակ էլ ա տեսնի ու ասի թէ՛ «գորթ ա, յուսումը լաւ բան ա, եկէք մենք քար ու քացախ ուտենք, ամա մեր բէխանց յուսում տանք, լուսաւորենք...»:

Ծերունին լռեց. իսկ մենք պատասխանելու ոչինչ չունէինք: Բարեբաղդաբար այդ միջոցին պարտիզի դռնում երևաց մեր հիւրընկալը, որ եկել էր մեզ ճաշի

կանչելու: Օգուտ քաղելով առիթից՝ վերկացանք տեղից
և ողջունելով ծերունուն՝ հեռացանք ծանր տպաւո-
րութեան տակ:

Երբ իջնում էինք սօսիների գառիվայրով՝ հարցրի
Պետրոսին թէ՛ — արդեօք յիշում է այն խօսքը, որ ասում
էի՝ թէ «կը գտնուին հողւոյ կամ մտքի աչքերով հի-
ւանդներ, որոնք խաւարը կորոնեն իբրև դեղ, իրենց
ցաւը մեղմելու համար»:

— Յիշում եմ, ասաց նա, և այս ծերունին այդ
հիւանդներից մինն է:

— Այո. սակայն նրա միտքն առողջ և հոգին կայ-
տառ է եղել. երկունն էլ հիւանդացրել է լուսաւոր
որդին, յարեցի ես:

— Անշուշտ, պատասխանեց ընկերս և այս անգամ
արդէն խոր համոզմունքով:




Ա Ռ Ա Ք Ե Ա Լ Ը

(Առաջին անգամ լոյս է տեսել «Լուսնայ»
համադրում 1902 թուականին):

336
 80
 244
 559
 339
 220

U. R. & P. U. T. C.

(Printed and Published by
 J. G. R. & P. U. T. C.



Եւ այլն անկաւ յաղաւածիս ուր ոչ գոյր
 հոյ բաղում, և վաղվարակի բուսաւ աւ և
 չգոյէ հիւթոյ երկրին, և ծագել արևու տա-
 պացաւ, և զն ոչ գոյին արմատք չորացաւ:
 Աւետ. Մատթ.

Ա.



Սղբ մեղմ էր և տաքուկ, եր-
 կինքը պարզ և աստղագարդ:
 Տների ներսը չէր գրաւում
 մարդկանց. ուստի ժողովուրդը
 լցուած էր դուրսը և զբօսնում
 էր սալած մայթերի վրայ, կամ
 նոր կանաչող ծառուղիներում:
 Շառագոյն լուսինը, որ նոր էր
 բարձրանում մթնացող հորիզոնում, խոստանում էր
 զեղեցիկ, լուսնկայ գիշեր: Այդ պատճառով փողոցնե-
 րում աջ ու ձախ սրացող կառքերի թուխն՝ հետզհետէ

աւելանում էին և այն ղեսպակները, որոնք իրենց մէջ խնամքով ծածկում էին հեռաւոր զբօսարանների խորհրդաւոր յաճախորդներին: Այդպիսով դրսի աղմուկը գնալով սաստկանում էր և կենդանութիւնը տիրում ամեն տեղ:

Միայն ծերուկ փիլիսոփան, կամ գեղեցկուհուց մերժուած սիրահարը կարող էին այդպիսի անորժելի երեկոյին փակուել տան խորշերում և մտածել մինը՝ աշխարհի ունայնութեան և միւսը՝ իւր վշտի ծանրութեան վրայ: Բայց կեանքի արժէքը մեծագրել գիացող մարդը, մանաւանդ եթէ դա երիտասարդ էր կամ երիտասարդուհի, չէր կարող այդպիսի գրաւիչ ժամերին չըզբանուիլ զբօսնողների ընդհանուր ժխորի մէջ:

Սակայն արի աես որ հենց այդպիսի մի ժամանակ՝ ներքին յարկի մի ցածուն, բայց և ընդարձակ սենեակի մէջ ժողուած էին մի խումբ աշխոյժ երիտասարդներ, որոնք չէին մտածում ոչ նորեկ գարնան, ոչ սիրուն լուսնի և ոչ ճեմելիքներում զբօսնող գեղեցկուհիների մասին: Նրանք զբաղուած էին աւելի արժանաւոր, կամ ինչպէս իրենք կասէին՝ «ազնուական» գործով: Դրանք հայ ուսանողներ էին՝ համալսարանի կամ այլ բարձրագոյն դպրոցների վերջին կուրսերից, որոնք յաճախ ժողովում էին այդտեղ միմեանց հետ տեսնուելու, մտերմապէս զրուցելու, մայրենի լեզուով կարգալու, կամ հեռաւոր հայրենիքից ստացուած նորութիւնները միմեանց հաղորդելու, երբեմն էլ իրենց ցաւերի մասին միմեանցից կարծիք, կամ խորհուրդ հարցնելու:

Այդ քաղաքում կային և ուրիշ հայ ուսանողներ, որոնք իրենց ազատ ժամանակը տնօրինում էին այլ կերպ: Ոմանք սիրում էին չափել փողոցները՝ աշխարհի չար ու բարին այդ տեղերում միայն ուսումնասիրելու նպատակով. ոմանք զբաղւում, էին սովորական թղթախաղով՝ ժամանակի ձանձրոյթը մեղմելու համար. ուրիշներն այցելում էին հարուստ ընտանիքներին՝ նրանց տիրուհիներին զբաղեցնելու կամ օրիորդներին գրաւելու յուսով և երբ նրանց չէր յաջողում ոչ մինը և ոչ միւսը, շատանում էին համեղ ընթրիք վայելելով: Մի մասն էլ էպիկուրեան փիլիսոփայութեան հետևելով՝ ազատ ժամերը նուիրում էր հաճութեան աղջիկների ընկերակցութեան, մտածելով թէ՛ այդպիսով աւելի լաւ է ծառայում մարդ արարածի իսկական կոչման:

Բայց ներքնայարկի ցածուն առաստաղով սենեակում ժողովուածները չէին պատկանում յիշեալների թուին: Նրանք ուսանողութեան ամենարնտիր մասը, կամ բանաստեղծօրէն ասած՝ ծաղիկներն էին, որոնք իրենց կոչման նշանակութիւնն ըմբռնելով՝ ժողովուել էին այդտեղ, ինչպէս ասացինք, լաւագոյն մի գործով զբաղուելու համար:

Եւ նրանց այսօրուայ պարապմունքի առարկան նշանաւոր էր շատ կողմերից: Այսօր քննուում էր այն կարևոր հարցը թէ՛ նրանցից ո՞րը ինչպէս պիտի դորձէ կեանքի ասպարէզը մանելուց յետոյ:

Այդպիսի հարցեր, ինչպէս յայտնի է, փորձուած մարդիկ չեն տալիս իրար, միշտ մտածելով թէ՛ «բանը»

բան ցոյց կը տայ»։ Իսկ փորձուած հոգևորականը մինչև անգամ ասում է «Օր աւուր բղխէ զբան և զիշեր՝ զիշերի ցուցանէ զգիտութիւն», ուստի և երբէք խոստում չէ անում։ Բայց ուսանողն, հօ գիտէք, անձնիշխան է ասեն դէպքում, հետևապէս և կարող նման հարցեր քննելու։ Անփորձութիւնն էլ, անշուշտ, մի արտօնութիւն է, որից մարդիկ երբեմն օգտուում են յաջողութեամբ։ Եւ քիչ չէ պատահում որ բազան աւելի ժպտում է նրանց, որոնք գործում են առանց երկար մտածելու։

Ինչ և է, առաջադրեալ խնդրի մասին արդէն երկար խօսել ու վիճել էին ուսանողները, երբ նախագահը, որ մի առողջ, գուարթիստայն և կոպիտ արտաքինով երիտասարդ էր, ուժգին զանգահարելով՝ ժողովականների ուշադրութիւնը հրաւիրեց իւր վրայ։

Դանիւժում լռութիւն տիրեց։

— Խնդիրը մենք քննեցինք ամեն կողմից, ասաց նախագահը, մինչև անգամ աւելորդ մանրամասնութիւնների մէջ մտանք. այժմ արդէն ժամանակ է ամփոփել մեր մտքերը, ձևակերպելով այսպէս.

Քարտուղարն իսկոյն լարեց ուշադրութիւնը՝ նախագահի խօսքերը գրի առնելու համար։

— Մենք որդիք ու անգամներ ենք այնպիսի մի ազգի, շարունակեց նախագահը, որ ունի կարիքներ ու ցաւեր։ Այդ ազգն իրաւունքով սպասում է մեզ, իւր հարազատ որդիներին, որովհետև գիտէ որ մենք բարձր ուսում ու կրթութիւն ստանալով՝ ձեռք ենք բերում այն ոյժը, որով պիտի կարենանք իւր կարիքները

լցնել և ցաւերը դարմանել։ Հետևապէս, մեզ վրայ դրւում է սրբազան պարտք՝ ի դերև չըհանել սպասող ազգի յոյսն ու ակնկալութիւնը։ Մեզանից իւրաքանչիւրը պիտի համարէ իրեն մի պարտապան, որ ունի վճարելիք իւր պարտատիրոջ, այսինքն ազգին, ուստի և մտածէ՝ այդ պարտքը վճարելու եղանակի վրայ, և վճարէ սիրով, համարելով այդ պարտքը ոչ թէ բեռն ու ծանրութիւն, այլ իւր սրտին հանգիստ և հոգւոյն՝ հաճոյք բերող մի գործ։ Մի երկու ամիս ևս և մենք կը թողնենք այն տաճարները, որոնց յարկերի տակ մեր սրտերում ցանեցին գիտութեան ու բարւոյ, ճըշմարտի և գեղեցկի լաւագոյն սերմերը. մի երկու ամիս ևս և մենք կը բաժանուինք իրարից, ո՞ գիտէ, գուցէ յաւիտեան։ Արդ, քանի միասին ենք, քանի տեսնում և լսում ենք իրար, անա խոստանում ենք միմեանց՝ ընկերի և ուսանողի ազնուագոյն խոստումով, որ մեր սրտերում ցանուած սերմերը պիտի աճեցնենք կեանքում յիսնապատիկ, հարիւրապատիկ և այդ սերմերից ելած պտուղները վայելել տանք նախ՝ այն ազգին ու ժողովրդին, որին պատկանելու պատիւն ունինք և ապա թէ զրանից բաժին հանենք մեզ։ Չենք որոշում, ի հարկէ, թէ ո՞վ մեզանից ի՞նչ չափով է պարտաւոր ծառայել ազգին, բայց հաւատում ենք թէ՛ մեզանից իւրաքանչիւրը սիրով պիտի լսէ այն ձայնը, որ կանչում է՝ «հունձք բազում են և մշակք սակաւ...» հետևապէս և պիտի շտապէ դառնալ «մշակ» այդ «հունձերի» համար և աշխատել ու քրտնել ազգի անդաստանում։ Խոստանում ենք որ ոչ ոք մե-

զանից պիտի յետ քաշուի վատաբար, կամ ասէ թէ՛ իմ ոյժն անկարող է ազգի կարիքները լցնելու. այլ պիտի աշխատէ ըստ իւր կարողութեան, յիշելով այն առածը թէ՛ «ուր կամք կայ, այնտեղ կայ և ճանապարհ»։ Եւ իրաւ, եթէ ջուրը իւր կաթիլներով ծակում է ապառաժը, մի՞թէ մեր կամքը այդ չի կարող անել։ «Ամենալաւ իմաստութիւնը, հաստատ որոշումն է», ասում էր Նապօլէօնը։ Եւ ես կարծում եմ, եթէ մենք ևս կեանքի մէջ հետեինք այդ իմաստուն խրատին, անշուշտ կը գործենք աւելի յաջողութեամբ, քան կարող ենք այժմ երեւակայել։ Մեր ժողովուրդն, իրաւ, կարիքներ շատ ունի և այդ ամենը մենք չենք կարող դարմանել։ Բայց եթէ այսօր մենք մի մասը դարմանենք և վաղն ուրիշները՝ մի ուրիշ մասը, և այսպէս գործը շարունակուի անընդհատ, կարիքները կը դարմանուին կարճ ժամանակում և ցաւերը կը վերանան անզգալապէս։ Աշխատող ձեռքը, պարոններ, չի պարիլ երբէք վարդալիւր պարտէզ, այլ կերթայ այնտեղ, ուր հողն անմշակ է և դաշտերը խոպան, նա իւր քրտինքը կը թափէ այդ հողում, որպէս զի ապագայում միտիթարուի այն մտքով թէ՛ ինքն իրաւամբ կրում է Արարչի պատկերը, վասն զի կարողացաւ «ինչն ստեղծել ոչնչից»։ Պատմութեան մէջ յայտնի բազմաթիւ անձինք նշանաւոր են դարձել և ազգերի ու սերունդների սէրն ու սիրտը գրաւել ոչ այն պատճառով որ իրենց անձն են սիրել, կամ շահը խնամել, այլ որովհետեւ նուիրուել են հասարակաց բարւոյն, ժողովրդին ու հայրենիքին։ Դրանցից շատերը սկսել են գործել ամենաանպատ

պայմաններում, շարունակ արգելքների ու հալածանքների հանդիպելով. բայց որովհետեւ ունեցել են հաստատուն կամք, որովհետեւ անկեղծօրէն սիրել են ժողովուրդը, ուստի և յաղթել են ամեն արգելքների և ստեղծել աշխարհում հոյակապ գործեր։ Մենք էլ, ուրեմն, գործելու ժամանակ առաջնորդ ունենանք պատմութեան հերոսներին և ինչ անպատ պայմանում էլ որ սկսենք մեր գործը, յիշենք այն իմաստուն նշանաբանը, որ փորուած է եղել մի հին կայնի վրայ՝ «կամ կը գտնեմ ճանապարհը և կամ ինքս բաց կ'անեմ»։ Այսպիսի որոշումով գործել ցանկացող մարդուն արգելքը՝ չի վնասեցնիլ, այսպիսի մարդու առաջ՝ ժայռերն անգամ կը հալուին...։

Այս եզանակով դեռ երկար խօսեց նախագահը, որ ձեմարանի նախկին սան լինելով՝ վարժ էր հայ լեզուով ճառ արտասանելուն, ուստի երբ աւարտեց, ուսանողները ոգևորուած ծափահարեցին նրան։ Ապա սկսան ամեն կողմից հանդիսաւոր խոստումներ անել այն մասին թէ՛ արգարե, կեանքի մէջ մտնելուց յետոյ՝ պիտի նուիրուին հասարակաց շահին։ Երիտասարդներից ոմանք, մինչև անգամ, իրենց ապագայ գործունէութեան ծրագիրն առաջարկեցին, ոմանք էլ այդ ծրագիրը պակասաւոր գտնելով, աւելի ընդարձակ խոստումներ արին։ Գտնուեցան ի հարկէ և այնպիսիները, որոնք համեստութեամբ խոյս տուին թէ՛ ծրագիր առաջարկելուց և թէ՛ այն քննադատելուց։

Բայց բոլոր խօսողների մէջ աւելի դրական և

կշիռ ունեցող խոստումն արաւ Պետրոս Կամսարեանը, որ մի բարեկազմ և զեղեցիկ արտաքինով երիտասարդ էր: Լինելով հարուստի զաւակ, նա միևնոյն ժամանակ բարեսիրտ էր և դիւրագգաց, կարիքի ժամանակ օգնում էր ընկերներին և ուսանողական աշխատութեանց՝ մասնակցում սիրով: Բայց լինելով ի բնէ զգոյշ ու կարգապահ, ամեն ինչ անում էր չափով ու կանոնով: Նոյն իսկ օգնութեան կամ աշխատութեանց վերաբերեալ գործերում, նա իւր համար ունէր որոշ չափ ու կշիռ: Ատում էր ինչպէս անհոգութիւնը, նոյնպէս և ամեն ծայրայեղութիւն. ուստի և խոյս էր տալիս այնպիսի ընկերներից, որոնք ներկայացնում էին իսկական ուսանողի տիպ. այսինքն, լինում էին անփոյթ՝ վաղուայ պարտքի նկատմամբ, անհաշիւ՝ իրենց ծախսերի մէջ, անտարբեր՝ դէպի կարգ ու կանոնը, մաքրասիրութիւնը և ճշգրտագիտութիւնը: Եւ թէպէտ այս պատճառով նա ընկերներից ստացել էր պեղանա մականունը, այսուամենայնիւ, այդ բանից նա չէր վիրաւորւում, որովհետեւ փորձով գիտէր որ անկարգ ու անկանոն եղանակով ապրողները՝ միշտ այդ անունով են մկրտում կարգապահ մարդկանց, որպէս զի գրանով իրենց թերութիւնը ծածկեն:

Այս իսկ պատճառով ուսանողներն ապշեցան, երբ Կամսարեանը հանդիսաբար յայտնեց թէ՛ որոշել է քննութիւններից յետոյ վերադառնալ հայրենիք և իրեն նուիրել իւր ազգակիցների ամենից աւելի օգնութեան կարօտ դասակարգին, այսինքն, մտնել գիւղը և այնտեղ հիմնել օգնութեան մեծ գործ, յատկացնելով այդ

նպատակին՝ իւր հարուստ հօրից իրեն հասանելիք ժառանգութիւնը:

Սկզբում ընկերները, կարծես, չընտանացան այդ յայտարարութեան միտքը և նայում էին իրար հարցական հայեացքներով: Բայց երբ երիտասարդը կրկնեց իւր որոշումը աւելի մեկին և հաստատապէս, ներքնայարկի դահլիճը թնդաց կէցցէների որոսնդոստ ձայներից և մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացրին Կամսարեանին դէպի առաստաղը և սկսան շրջեցնել դահլիճի շուրջը՝ շարունակ «կեցցէ» գոռալով և «Հերիք ընկերք» երգելով: Աղմուկը դադարելուց յետոյ Պետրոս Կամսարեանի յայտարարութիւնը ընդունուեց ուսանողների պաշտօնական գովեստով և իսկոյն էլ մուծուեցաւ արձանագրութեանց տետրակը:

Բ.

Ամառ է. քննութիւնները վերջացել են: Կամսարեանն ստացել է աւարտման վկայական: Այժմ նա իրաւաբան է. կարող է ապրել քաղաքում և շրջապատել իրեն յարմարութիւններով, այսինքն կահաւորել մի փառաւոր տուն՝ համաձայն իւր նուրբ ճաշակի պահանջներին. ապա ընդարձակել ծանօթութիւնների շրջանը, այցելել բարձր դասակարգի անձանց, կապեր հաստատել. խնդրարկուներ ընդունել, դատեր պաշտ-

պանել և իւր հասարակական գործունէութեամբ՝ անուն
ու հռչակ վաստակել:

Բայց միթէ այդ պիտի լինի երիտասարդ կամ-
սարեանի կեանքի նպատակը: Երբէք. նա աւելի ար-
ժանաւոր, աւելի բարձր և սուրբ նպատակ ունի աչքի
առաջ. նա այժմ իրեն չէ պատկանում, հետևապէս և
չէ կարող ծառայել իւր անձին: Նա պիտի նուիրուի
իւր տկար ազգակիցներին, շինականին ու գիւղացուն,
նրանց համար պիտի հոգայ. նրանց համար պիտի մտածէ:

Եւ այդ պիտի անէ ոչ թէ նրա համար որ հան-
գիսաբար խոստացել է ընկեր ուսանողներին, ոչ, այլ
որովհետև ինքն այդ կամենում է սրտանց. որովհետև
ամեն անգամ, երբ խօսք է եղել այդ ազգակիցների
մասին, իւր սիրտը թունդ է առել ու թռել դէպի
նրանց. որովհետև ինքը միշտ մի առանձին սէր, մի
թագուն գորով է տածել դէպի այդ հեռաւոր եղբայր-
ները: Եւ թէպէտ անձամբ չէ տեսել նրանց, բայց
միշտ լսել ու կարգացել է թէ՛ բարի մարդիկ են,
ազնիւ և աշխատասէր. թէ սեփական շահի համար ոչ
ոքի չեն վրասում, այլ ապրում են իրենց ճակատի
արդար քրտինքով: Բայց թէ, որովհետև տգէտ են և
անուսում, ուստի մնում են անգոր աշխարհի չարիք-
ների առաջ. որով և մի կողմից բնութիւնն է նրանց
զրկում, իսկ միւս կողմից՝ չար մարդիկն են կեղեքում.
այդ պատճառով էլ նա վարում է դառն ու չարքաշ
կեանք և մնում կարօտ բարի մարդկանց օգնութեան,
Բայց միևնոյն ժամանակ, նա լսել ու կարգացել է և
այն, թէ իւր այդ ազգակիցները կարող են ազատուել

կեանքի դառնութիւններից և հասնել մի օր երջանիկ
դրութեան, եթէ խելօք գլուխները մտածեն նրանց
մասին և կարող ձեռքերն աջակցեն նրանց աշխա-
տութեան:

Եւ անս կամսարեանն ունի թէ խելօք գլուխ և
թէ կարող ձեռքեր. ինչո՞ւ, ուրեմն, չերթայ չորոնէ
այդ սիրելի ազգակիցներին, չապրէ նրանց հետ, չը-
սովորեցնէ նրանց իրենց դրութիւնը բարւոքելու և
մարդավայել կերպով ապրելու եղանակը:

Այս մտածութիւնները ոգևորում էին երիտասարդ
իրաւաբանին այն երկար ճանապարհին, որը հիւսիսից
տանում էր նրան հարաւ: Այդտեղ նա շարունակ ծրա-
գիրներ էր կազմում իւր ապագայ գործունէութեան
համար և նրանցով հիանում: Այդ ծրագիրների մէջ
մտնում էին նախ՝ գիւղական հասարակութեան իրա-
ւունքների պաշտպանութիւնը, որ արդէն վերաբերում
էր իւր մասնագիտութեան և ամփոփում իւր մէջ գիւ-
ղացու կալուածների յափշտակութիւնից ազատելու,
հարկահանութեան ժամանակ՝ տեղի ունեցող անար-
դարութիւններն արգելելու, գիւղացուց յաճախ անտեղի
կերպով պահանջուող կտոն ու ձրի մշակութիւնը մեր-
ժել տալու և պաշտօնի մէջ՝ ի վրաս գիւղացու՝ գեղ-
ծումներ կատարող և արդարադատութեան աչքից
խուսափող պաշտօնեաների արարքը մերկացնելու կա-
րևոր խնդիրները. երկրորդ՝ լրասւտրութեան գործի
հիմնադրութիւնը, որ կայանում էր կանոնաւոր դպրոց-
ներ հաստատելու, գեղջուկ մանուկներին ձրի ուսում
մատակարարելու, մանկական-ժողովրդական գրագա-

բան հիմներու և հասակաւոր գիւղացիներին ազատ ժամերում և, մանաւանդ, ձմեռ ժամանակ օգաներում, կամ եկեղեցիներում դասեր խօսելու և աշխարհի չար ու բարիի հետ նրանց ծանօթացնելու մէջ. երբորդ՝ զխղացու տնտեսական դրութեան քարուքումն, որ կախումն ունէր նրա երկրագործական, այգեպահական, անասնապահական, հաւաբուծական, և այլ այսպիսի աշխատութիւնները կանոնաւորելուց, իսկ այդ նպատակին համար՝ պէտք էր սովորեցնել գեղջուկին գիտութեան մշակած ձևերով տնկելու և պատուաստելու, հերկելու և ցանելու, հնձելու և կալսելու, անասուն, հաւ և մեղու դարմանելու, պարտէզ ու բանջարանոց մշակելու դիւրին եղանակները: Տրնտեսական դրութիւնը բարւոքելուն էր վերաբերում, նաև փոխատու գանձարան հիմներու դիտաւորութիւնը, որ եթէ յաջողէր նրան իրագործել, դրանով ոչ միայն վաշխատութիւնը կը հալածուէր գիւղերից, այլ և կը ստեղծուէր բարութեան մի գործ, որ կօզնէր գիւղացուն իւր աշխատութիւնն ու արդիւնքը ոչ թէ կեղեքիչների ձեռքը, այլ իւր յարկի տակ ժողովելու:

Բոլոր այս ծրագիրներն այնքան ընդարձակ էին՝ որ նոյն իսկ նրանց համառօտ կազմութիւնը խլեց Կամսարեանի՝ Մոսկուայից մինչև Կովկաս հասնելու միջոցում ունեցած ազատ ժամերը: Եւ երբ նա վերջին անգամ նայեց իւր Note-երի տետրին և տեսաւ նրան ծայրէիծայր լիբը իւր ապագայ գործունէութեան վերաբերեալ դիտողութիւններով, զգաց իւր սրտում մի թագուն ուրախութիւն, որ բղխում էր երբ և իցէ

«առաքեալի» փառք ու հռչակ ստանալու հաստատուն յոյսից:

Վերջապէս երիտասարդը հասաւ Թիֆլիս: Հարկ չըկայ նկարագրելու այն ընդունելութիւնը, որին հանդիպեց նա հօր տանը: Ամենքդ արդէն գիտէք թէ՛ պանդխտութիւնից վերադարձող որդուն ի՛նչպէս են ընդունում կարօտակէզ ծնողները, կամ նորատի քոյրերն ու եղբայրները: Որքան ջերմ համբոյրներ, որպիսի գրկախառնութիւն, խանդաղատանք, ուրախութեան արցունքներ և ապա ինչպիսի քաղցր ու երջանիկ ժպիտներ շրջապատում են նորեկին: Եթէ դրա վրան էլ աւելացնենք այն, որ այդ բոլորը տեղի էր ունենում մի հարուստ տան մէջ, ուր մեծ թէ փոքր, աղջիկ թէ տղայ չըգիտէին թէ՛ ի՛նչ է կարօտութիւնը, որ աղքատի տան մէջ իւր ներկայութիւնը զգալ է ապիս նոյն իսկ այն վայրկեանին, երբ մայրը ողջագուրում է պանդխտութիւնից վերադարձող որդուն, որ յաճախ ցրտացնում է համբուրի ջերմութիւնը և և շուրթերի վրայ ժպիտը սասեցնում, այն ժամանակ կը հասկացուի թէ՛ որպիսի երանութեամբ էր շրջապատուած նորաւարտ, գեղեցիկ արտաքինով և դեռ ամենքին սիրելի Պետրոս Կամսարեանը:

Թողնենք ուրեմն նրան գուարձանալ առ այժմ իւրայինների հետ:

Գ.

Անցաւ մի շաբաթ և այդ միջոցին խօսք ու զրոյց չեղան երիտասարդի սկսելիք պարապմունքի մասին. որովհետև ամենքի համար էլ պարզ էր թէ՛ ինչո՞վ կարող է զբաղուել մի իրաւաբան: Նրա առաջ բաց էին թէ՛ պետական պաշտօնների և թէ՛ մասնաւոր պարապմունքի արդիւնաւոր ճանապարհները: Եթէ առաջինը չըյաջողէր, երկրորդի համար բաւական էր երկու տող յայտարարութիւն և, ահա, յաճախորդները իրար թևակոխելով՝ կըլցուէին փաստաբանի նորաբաց ընդունարանը:

Այս էին մտածում Կամսարեանի ծնողները և ցանկանում որ Պետրոսը առ ժամանակ հանգստանայ և մանաւանդ թէ՛ կազդուրուի գովարար ամարանոցում ուր մտադիր էին տեղափոխուել քիչ ժամանակից յետոյ:

Սակայն մի օր զարմանքով տեսան նրանք որ իրենց որդին ինչ որ պատրաստութիւններ է տեսնում: Նա գնել էր ճանապարհի նոր հագուստ, երկարաճիթ կօշիկներ, ձիու թամբ, նոր տեսակի պայուսակ, որ սորդական հրացան և այլ այնպիսի իրեր, որոնք կարող էին հարկաւորուել միայն վայրենի տեղերում, ուստի հետաքրքրուեցան իմանալ թէ՛ ինչո՞ւ համար են գրանք:

— Պիտի ճանապարհորդեմ. ասաց նա ծնողներին:

— Պիտի ճանապարհորդե՞ս... ի՞նչպէս, ուրե՞մն ամարանոց չի՞ պիտի գաս հարցրեց երիտասարդի մայրը անհանգստութեամբ:

— Ոչ. պիտի զնամ դէպի հեռաւոր հայ գիւղերը և, ո՞վ գիտէ, գուցէ շատ ուշ չվերադառնամ, կամ... (ուզում էր ասել «բոլորովին չըվերադառնամ»), բայց զգալով որ լաւ չէ վախեցնել ծնողներին, խօսքն ընդհատեց):

— Այդ անկարելի է, ճշաց իսկոյն տիկին Կամսարեանը, կամ իւր լեզուով ասած՝ Լիդիա Պաւլովնան, որ մի պարարտ, կլորիկ և թէպէտ յիսունը անցած՝ բայց դեռ զբաւշտէմ և հաճելի լինելու առաւելութիւններով օժտուած կին. էր — այո, անկարելի է... այսքան ժամանակ յուսով սպասել եմ քո դարձին որ գոնէ ամառուայ ամիսները միասին անցնենք, իսկ դու ասում ես թէ՛ պիտի ճանապարհորդե՞ս. ոչ, այդ չի լինիլ, ասաց տիկինը վճռաբար և մէջքը թիկնաթողին տալով՝ աշխատեց պարարտ մարմինը գետեղել նրա վրայ կարելւոյն չափ հանգիստ:

Տիկին Կամսարեանի «Ո՛չ, այդ չի լինիլ» վճիռն ունէր իւր յարգելի պատճառները: Բացի այն որ նա, իբրև սիրող մայր, կը ցանկանար անշուշտ ամառն անցնել իւր որդու հետ, կար և մի ուրիշ հանգամանք, որ զրգում էր նրան չըհամաձայնուել որդու հետ: Դա՛ մօր փառասիրութիւնն էր. այն թագուն գգացմունքը, որ շատերը խնամքով փայփայում են չարտի խորքում, բայց որի գոյութիւնն ուրանում են մարդկանց առաջ:

Լիդիա Պավլովնան առաջին անգամը չէր գնում ամա-
րանոց, ուստի գիտէր որ ամեն ամառ այնտեղ ստեղ-
ծւում է ծանօթների ու բարեկամների հետաքրքրական
ըջան. տեղի են ունենում նոր տեսակի ընդունելու-
թիւններ ու այցելութիւններ, սարքւում են փայլուն զբո-
սանքներ, ճաշեր ու պիկնիկներ, երբեմն և երեկոյ-
թիւններ: Արդ, չէ՞ որ մեծ փառք էր ամեն մօր համար
այդ բոլոր տեղերում երևալ նորաւարտ, գեղեցիկ ար-
տաքինով, հաճելի ձևերով և տակաւին ամուրի երի-
տասարդ որդու հետ... այդպիսի մայրն, առ հասարակ,
ամարանոցի սիրած ու փայփայած անձն է լինում:
Բոլորը, (խօսքս ի հարկէ հարսնացու աղջիկ ունե-
ցող մայրերի, կամ փեսացու փնտրող հարսացունների
մասին է— իսկ եթէ դրանց թւում ընթերցողները դա-
սեն, նաև, նորատի այրիներին, դրա դէմ էլ ոչինչ
չունիմ), շրջապատում են նրան սիրով, քնքշութեամբ
ամենասանկեղծ բարեկամութեամբ: Այդպիսի մօրը, բնա-
կանաբար, այցելում են յաճախ և այն՝ միշտ երկու-
սով կամ երեքով (նայելով թէ՛ այցելողը քանի՞ հար-
սնացու աղջիկ ունի,) հրաւիրում են շատ տեղերից,
նոյն իսկ այնպիսի տներից, ուր այդ մայրը երբէք ոտք
դրած չէ եղել, բայց ծանօթացել է նրանց տիրուհիներ-
ին այս ինչ պիկնիկում կամ պարահանդիսում: Բացի
այդ, հանդիսաւոր ճաշերի ժամանակ՝ ամենից պատ-
ուաւոր տեղը առաջարկում են այդպիսի մօրը և ամե-
նից համեղ պատառը հրամեցնում նրան: Հարկ չըկայ
ասել որ զբօսարաններում էլ ամենից սիրելի ու քըն-
քոյշ խօսակիցները շրջապատում են նրան, եթէ երի-

տասարդ որդին էլ զբօսնում է նրա հետ: Միով բանիւ
ամեն տեղ կատարւում է այն, ինչ որ հայկական առածն
է բնորոշում, այսինքն «ձուագեղի համար թաւի կոթը
պաշում են»:

Այս ամենը գիտէր տիկին կամսարեանը. այս
ամենի մասին նա մտածել, երագել էր և այն՝ երկար
ամիսներով... այժմ յանկարծ լսել՝ թէ իրեն զրկում
են իւր քաղցր յոյսերից, ի հարկէ նա չէր կարող. հե-
տևապէս և չի պիտի թոյլ տար որդուն իրագործել
այդպիսի մի անհեթեթ որոշում:

Դժբաղդաբար, երիտասարդն էլ իւր կամքի տէրն
էր, (գոնէ ինքը յաճախ այդպէս էր ասում), ուրեմն
և հեշտ չէր յետ կեցնել նրան իւր ընտրած ճանա-
պարհից: Այդ պատճառով մօր «ոչ, այդ չի լինիլ»
վճռին նա պատասխանեց խստութեամբ.

— Ամարանոցում զուարճանալուց առաջ՝ ես պարտք
ունիմ կատարելու, մայրիկ. մի յուսար թէ ես կը յե-
տաձգեմ իմ գործը քեզ ընկերանալու համար:

— Պետեա, Պետեա, մէկ մտածիր թէ ի՞նչ ես
ասում... ամբողջ տարի աչքներս ջուր կտրած սպասել
ենք քեզ, կարօտից հալուել... (կամենում էր ասել
«հալուել ու մաշուել ենք»), բայց մէկ էլ մտածելով
որ ինքը խիստ պարարտ է, ասաց) մաշուել է սրտներս,
այժմ դու նորէն կամենում ես մեզ թողնել... Ուրեմն
դու սիրտ չունիս, դու հայր, մայր, եղբայր ու քոյր
չես ճանաչում...:

Վերջին բառի վրայ տիկինը հեկեկալու նման մի
սրտաշարժ ձայն հանեց, յետոյ հուպ տուաւ աչքերը՝

յուսալով թէ նրանցից մէկն ու մէկը մի կաթիլ արտասուք կը գլորէ իւր սպիտակ ու փափուկ այտերի վրայ, (որ ի հարկէ շատ տեղին կը լինէր) բայց տեսնելով որ այդ չեղաւ, ընդհատեց խօսքը...:

Երիտասարդին այնպէս թուաց թէ՛ դիւրագոյաց մայրը սրտի նեղութիւնից չէ կարողանում այլ ևս խօսել, ուստի որպէս զի չըյաղթահարուի այդ սրտաշարժ տեսարանից, իսկոյն ծոցից հանեց իւր յուշատետրը և սկսաւ թերթել...: Այն, բաւական էր նայել այդ յուշատետրի էջերին, կարդալ գոնէ կէսը «մեծ գործերի» այն ցանկին, որ նա կազմել էր մայրաքաղաքից վերադառնալիս, որպէս զի նա նորէն ոգևորուէր և առ ոչինչ գրէր մօր թախանձանքն ու արտասուքը, կամ արհամարհէր ամսրանոցի հանգստութիւնն ու գուարճութիւնները:

Եւ այդպէս էլ եղաւ: Երբ Պետրոսը յուշատետրը դրաւ նորէն ծոցը, նրա սիրտն արդէն այնքան էր ամբացել, որ նա ուղղակի ասաց.

— Դու, մայրիկ, բաղդաւոր կլին ես. ունիս ամուսին, առողջ զաւակներ, մեծ հարստութիւն, սեփական ապարանք, գեղեցիկ ամառանոց, ապրում ես գոն ու երջանիկ և, միևնոյն ժամանակ, չես կամենում զրկել քեզ նոյն իսկ մի աւելորդ գուարճութիւնից, այսինքն, որ ամառուայ ամիսներում չընկերանայ քեզ որդիդ...: Բայց կան աշխարհում մարդիկ, որոնք շատ անհրաժեշտ բաներից են զրկուած. այ, ես գնում եմ նրանց մօտ, որպէս զի կարողանամ նրանց մի փոքր մխիթարել, նրանց կարիքներից մինը կամ երկուսը լցնել:

Լիդիա Պավլովնան որդու այս ճառից ոչինչ չըհասկացաւ, բայց Կիրիլ Կարպիչը (հայր Կամսարեանը) որի անունը ճիշդին Տէր Օվանէսի ձեռքով չափաբերական մատենաւում նշանակուած էր «Կարապետի վուրթի Կիրակոս» և որը դեռ խալաթով նստած էր բազմոցի վրայ և երկար ծխափողը ձեռքին թէ ծխում և թէ լսում էր յիշեալ վիճաբանութիւնը, որդու վերջին խօսքերի վրայ մի անհանգիստ շարժումն արաւ: Քաղցր ժպիտը, որ մինչև այն փայլում էր նրա ածիլած ու գերութիւնից փայլող դէմքի, կրկնաձայ ծնօտի և գորշ ընչացքով հովանաւորուած հաստ շրթունքի վրայ, չքացաւ իսկոյն. թաւամազ յօնքերը կարծես վայր իջան աչքերի սուր հայեացքը աւելի խստացնելու համար. իսկ անխառն հայկական քիթը, որ պատկառելի տեղ էր բռնած խոշոր դէմքի վրայ, զգալի կերպով կախուեցաւ՝ որպէս զի տիրոջ դժգոհութիւնը մարմնացնէ իւր մէջ ամբողջովին:

Ինչո՞ւ անհանգստացաւ Կիրիլ Կարպիչը — դրա պատճառը բոլորովին այլ էր: Նա, ի հարկէ, չէր մտածում ոչ Լիդիա Պավլովնայի մայրական փառասիրութիւնը գոհացնելու և ոչ էլ որդու ամարային հանգստութեան մասին. նրան հետաքրքրում էր աւելի լուրջ ու դրական խնդիր. այսինքն այն՝ որ իւր որդին տասն երկու տարի շարունակ ուսման համար իրենից հազարներ ստանալուց յետոյ՝ այսօր, երբ արդէն ուսումն աւարտած վերադարձել է, փոխանակ լրջօրէն գործի կաշելու և հօրից ստացած փողերի գէթ մի մասի տոկոսը իւր ձեռքի աշխատանքով հօրը վերա-

դարձնելու և դրանով նրան ուրախացնելու, ընդհակառակը, դեռ նոր ծախսեր է անում և ինչ որ ճանապարհորդութեան կամ հեռաւոր ազգակիցների վրայ է մտածում:

Անհանգիստ շարժումն անելով հանդերձ, Կիրիլ Կարպիչը մի կողմը դրաւ ծխափողը և ձեռքերը խրելով խալաթի գրպանները, որոնք գանձում էին տկիպէս ուռած և խալաթի փնջազարդ ժապաւէնով հազիւ սանձահարուած փորի աջ ու ձախ կողմերում, հարցրեց որդուն:

— Պե՛տօ, չըլինի՞ թէ քո գլխումն էլ հոպոսներ են լոյս ընկել:

Երիտասարդ Կամարեանը, որ այսպիսի մի հարց ընկերներից լսելուց կարող էր նրանց մենամարտի հրուիրել (որպէս զի ապացուցանէ թէ՛ որքան պատուասէր է), հօրից լսեց այդ խօսքը նոյն իսկ առանց բարկանալու, համոզուած լինելով որ նա ուրիշ կերպ հաճոյախօսել չի կարող:

— Ի՞նչ ես կամենում դրանով ասել, հայրիկ, հարցրեց նա:

— Այն, որ ուսումը խելքահան է արել քեզ, սրբի... ախար մի գնա դատարան և տես թէ քեզանից մի տարով առաջ աւարտողները ի՞նչպէս են այնտեղ գործեր պաշտպանում, ժամերով վիճում կամ ճառեր խօսում, և դրա համար նրանք հարիւրներ, հազարներ են ստանում. իսկ դու դեռ «կոծների» մասին ես մտածում, կամ նրանց հոտած գիւղերում ապրելու պլաններ քաշում: Սա ինչի՞ նման է...:

Կիրիլ Կարպիչը նորէն ձեռք առաւ ծխափողը և հաստ շրթունքները կպցնելով երկար բնի ծայրին, երկու անգամ առատօրէն ներս քաշեց ախորժելի ծուխը և ապա արտաշնչելով այն, վեր կացաւ տեղից:

— Գործի վրայ մտածիր, որդի, գործի վրայ, թէ չէ կոծներից շահ չի լինելու քեզ: Այս ասելով նա դուրս գնաց սենեակից, չըկամենալով աւելի ձանձրացնել որդուն: Որովհետեւ, իբրև փորձառու մարդ, գիտէր որ խելքի հասած երիտասարդին անօգուտ է երկար խրատներ կարդալը: Բաւական է որ մարդ երկու խօսքով յայտնէ նրան իւր դժգոհութիւնը և ապա թողնէ նրան մտածել ու որոշել անելիքը:

Մինչդեռ Լիդիա Պավլովնան այդ կարծիքին չէր. նա, իբրև կին, միշտ իւր ուզածն անել էր առել երկար խօսելով, կամ թախանձելով, հետևապէս, հաւատում էր շատախօսելու փրկարար զօրութեանը: Այդ պատճառով էլ, երբ ամուսինը հեռացաւ, նա մօտ քաշեց որդուն, (որ դարձեալ ձեռքն էր առել իւր յուշատետրը, անշուշտ հօր խօսքերի ազդեցութիւնը իրենից հեռացնելու նպատակով) և իբրև մի մեծ նորութիւն, հաղորդեց նրան հետևեալը.

— Ես որ քեզ ասում եմ՝ գնանք միասին ամառանոց, հօ նրա համար չեմ ասում որ միայն քաղաքի շրջերից ազատեմ քեզ. ոչ. ես ուրիշ միտք էլ ունիմ և դրա համար է որ չեմ ուզում քեզ թողնել...

— Ի՞նչ միտք, հարցրեց երիտասարդը:

— Մարկոսովենց տուն հօ գնացիր, Ադելինին տեսնա՛ր, հարցրեց մայրը խորհրդաւոր եղանակով:

— Այո, գնացի. Ազելինին էլ տեսայ. յետոյ:

— Իբրև թէ չըզիտես ինչո՞ւ համար եմ հարցնում, նկատեց մայրը խորամանկ ժպիտով:

— Ոչ:

— Չէ՞ որ մի օր հաւանում էիր նրան:

— Հենց հիմա էլ հաւանում եմ:

— Հօ տեսնում ես թէ ի՞նչ է գառել... ինչպէս մեծացել, գեղեցկացել է:

— Այո, շատ է գեղեցկացել:

— Է, Այդպէս աղջիկը որ քեզ սիրում լինի և քո պատճառով էլ Բօրժօմ լինի գալիս, ի՞նչ կասես դրան: Երիտասարդը նայեց մօր աչքերին և ուսերը վեր բաշեց:

— Գեղեցկութիւնը կայ, ուսումը կայ քառասուն հազար էլ բաժինք... Այս ամառ անպատճառ բանը կը վերջանայ, որովհետև ծնողները համաձայն են, աղջիկն էլ համաձայն է համաձայն. հարցը մնում է քեզ վրայ: Ի՞նչ ես ասում դու:

Երիտասարդը, կարծես, տատանւում էր: Ազելինին անունը մի փոքր պղտորեց նրա միտքը. եթէ երևակայութեանը ևս թոյլ տար իւր առաջ պատկերացնելու գեղանի օրիորդին, այն ժամանակ արդէ՞ն հոսանքը կը տանէր իրեն: Այդ պատճառով, կարծես, իւր թուլութիւնը զգալով, վեր կացաւ տեղից և «դեռ տեսնենք, մտածենք, ժամանակ շատ ունինք» ասելով՝ դուրս գնաց պատշգամ:

Դ.

Բայց բաղբը շատ անգամ կատակներ է անում և դրանցից զուարճալին լինում է այն, երբ նա չարիքից փախչող մահկանացուին՝ հենց նրա փախստեան ճանապարհի վրայ, բերում հանդիպեցնում է նոյն չարիքին, որից սա խոյս էր ապրիս: Այդպէս պատահեց և Կամսարեանին: Հագիւ նա ելել էր պատշգամ և ձեռքը տարել ծոցը, որպէսզի յուշատետրը հանէ, և անս տան մուտքի հնչակը քաշեցին: Սպասուհին վագեց դուռը բանալու: Եւ որովհետև Պետրոսն ևս մօտեցել էր սանդուխտին, ուստի հետաքրքրուեց իմանալ թէ՞ ո՞վ է եկողը: Եւ ո՞րքան մեծ եղաւ նրա յուզմունքը, երբ տեսաւ թէ՛ գեղանի Ազելինան է՛ իւր մօր հետ: Անշուշտ նրանք գալիս էին երիտասարդի այցելութիւնը փոխարինելու և սրա մօրն իրենց խնդակցութիւնը յայտնելու: Կամսարեանն իսկոյն ծոցը դրաւ յուշատետրը, որ նոր էր հանել և վայրկենաբար համոզուելով որ «հայոց ազգը խիստ դժբախտ ազգ է», որովհետև նման արգելքներ խանգարում էին իրեն նրա վրայ մտածել, քնքոյշ ժպիտը դէմքին զիմաւորեց հիւրերին և սիրալիւր կերպով ողջունելով նրանց, առաջնորդեց դէպի ընդունարանը, ուր գտնւում էր արդէն Լիզիա Պաւլովնան:

Չափ... չրփ. չրփ... չափ, համբուրուեցան բա-

բեկամուկները և սկսան իսկոյն մի սիրալիր զրոյց, որն առ հասարակ սկզբում լինում է աղմկալի և ապա հետզհետէ մեղմանում, կանոնաւորում:

Ամենից առաջ Լիդիա Պավլովնան մեղադրեց բարեկամուկուն՝ իրենց այդքան ուշ այցելելու համար, և հաւատացրեց որ ամեն օր սպասում է եղել նրանց:

Տիկին Մարկոսեանը ներողութիւն խնդրեց իւր ակամայ զանցառութեան համար, առարկելով թէ՛ չափազանց զբաղուած են թէ՛ ինքը և թէ՛ դուստրը, ընդ նմին և հաւատացրեց (աւելի ջերմ խօսքերով՝ քան տան տիկինը) որ իրենց բոլոր բարեկամուկները մէջ Լիդիա Պավլովնան միակն է, որին ցանկանալով ցանկանում են տեսնել թէ՛ ինքը, թէ՛ աղջիկը, հենց որ ազատ են լինում զբաղմունքից: Դժբախտաբար, ազատ ժամեր քիչ են ունենում:

Լիդիա Պավլովնան, ի հարկէ, գիտէր թէ՛ ի՞նչ զբաղմունք կարող է ունենալ տիկին Մարկոսեանը, իբրև բազմանդամ ընտանիքի մայր. բայց ցանկացաւ լսել մի բան, նաև, օրիորդ Ադելինայի մասին, մանաւանդ, իւր որդու, Պետրոսի ներկայութեամբ:

Տիկին Մարկոսեանը, որ մի քիչ աւելի տարիքով էր քան Լիդիա Պավլովնան և մի քիչ էլ պակաս գեղեցիկ քան թէ նա, բայց որը նազելու մէջ գերազանցում էր բարեկամուկուն, նազելով էլ պատասխանեց:

— Ա՛խ, սիրելիս, չես կարող երևակայել թէ՛ որքան գործ ունի խեղճ երեխաս: Առաւօտից մինչև ճաշը ձրի դասեր է տալիս «որբերի» ուսումնարանում. ճաշից յետոյ՝ մեր չարածձիների դասերն է սովորեցնում,

երեկոյեան փոքրիկ աղջկաս դաշնամուրի վրայ վարժութիւն է անել տալիս: Դրա վրան էլ աւելացրու այն, որ բարեգործական նպատակով տրուող ներկայացումներին ու նուագահանդէսներին մասնակցում է անխտիր, որովհետև խնդրում, աղաչում են: Իսկ իմ Ադէլինան, հօ գիտէք, փափուկ սիրտ ունի և չի կարող մերժել...:

— Այդպէս չի կարելի, սիրելիս, այդպիսով դու կը յոգնեցնես քեզ, իսկ շատ յոգնելը վնաս է առողջութեանդ, դարձաւ Լիդիա Պավլովնան օրիորդին որ լսում էր մօր յայտարարութիւնը:

— Ո՛չ, ես չեմ յոգնում. ընդհակառակը, որքան շատ եմ գործում, այնքան աւելի առողջ եմ զգում ինձ, պատասխանեց օրիորդն աշխուժով և թեթև շառագունելով:

— Այն պարագութիւնը աւելի է վնասում առողջութեանը, քան չափազանց զբաղմունքը. հաստատեց երիտասարդ կամսարեանը:

Օրիորդի մայրը համաձայնուեց Վերջինի հետ և առանց մի վայրկեան կորցնելու սկսաւ պատմել թէ՛ ի՞նչպէս ինքն առաջ թոյլ էր ևտկար, որովհետև տան գործը մեծ մասամբ թողել էր սպասուկներին: Բայց այն օրից որ իմացաւ թէ՛ գործունէութիւնը կազդուրում է մարդուն աւելի, քան բժիշկների գեղերը (այդ բանն էլ ասել էր նրան մի բարեկամ բժիշիկ, որ հիւանդները չունենալու պատճառով ինքը յաճախ հիւանդանում էր), նա սկսաւ այնուհետև տան գործերից շատերը իւր ձեռքով անել և այն օրից ի վեր այնքան առողջացաւ որ էլ չէր գանգատուում ո՛չ սրտի ցաւից, ո՛չ թուլութիւնից:

Այս գրուցի ժամանակ Լիդիա Պաւլովնան լսում էր բարեկամուհուն ուշադրութեամբ և ընդ նմին աշխատում՝ որ իւր լայն բացուած և ուղիղ բարեկամուհու դէմքին նայող աչքերը համոզեն վերջնիս թէ՛ ինքը չափազանց հետաքրքրական է գտնուում նրա բացազրութիւնը: Մինչդեռ երիտասարդը զբաղուած էր նրա աղջկանով:

Աղելինային, իրաւ, սա ճանաչում էր վաղուց՝ այսինքն, երբ դեռ ինքը գիմնագիօնի աշակերտ էր, իսկ նա՝ ինստիտուտի փոքրիկ աշակերտուհի: Այդ ժամանակ նրանք դրացիներ էին, իսկ ծնողները՝ միմեանց բարեկամ: Եւ որովհետև վերջիններս յաճախ այցելում էին միմեանց, ուստի իրենք էլ տեսնում էին իրար հետ: Բացի այդ, նրանք հանդիպում էին միմեանց դպրոց գնալիս և այդ դէպքում երիտասարդը միշտ ուղեկցում էր օրիորդին մինչև ինստիտուտի փողոցը, խօսակցելով նրա հետ աշկերաններին հետաքրքրող նիւթերի մասին, կամ պատասխանելով այն հարցերին, որ Աղելինան յաճախ տալիս էր իրեն:

Այդ ժամանակ օրիորդը 14 տարեկան էր և թէպէտ մարմնով նիհար ու չրկազմակերպուած, բայց դէմքով գեղեցիկ էր և բնութեամբ խիստ աշխոյժ: Այդ պատճառով կամարեանին դուր էր գալիս այնքան որ սա նրա մասին գովութեամբ էր խօսում միշտ՝ ոչ միայն ընկերներին, այլ և մօր առաջ: Իսկ եթէ մի փոքր էլ տղայի սրտին հաւատայինք, կարող էինք ասել թէ՛ հէնց այդ ժամանակ նա սիրահարուած էր փոքրիկ դրացուհուն. որովհետև միշտ մի առանձին փափագով էր հետամտում այն սի-

րուն ժպիտներին, որոնցով Աղելինան առաւօտեան ժամերին հանդիպում էր նրան փողոցում:

Բայց շուտով երիտասարդը աւարտեց գիմնագիօնը և գնաց համալսարան, ուր շատերի հետ միասին մոռացաւ նաև Աղելինային: Որովհետև համալսարանը նոր զբաղմունքներից գատ, տուաւ նրան, նաև, նոր բարեկամներ, որոնք իրենց կողմից ծանօթացրին նրան նոր զգացմունքների և ձգտումների հետ, որոնք զբաւեցին նրա բոլոր ուշը: Բացի այդ, մայրաքաղաքում շատ կային Աղելինաներ. այնպէս որ եթէ կամսարեանը ցանկանար երբ և իցէ ժպիտներով զմայլուիլ, ստիպուած չէր լինիլ յիշել իւր նիհար դրացուհուն:

Սակայն անցաւ ժամանակ և նա, վերադառնալով հայրենիք, տեսաւ նախկին Աղելինային բոլորովին փոխուած: Այժմ նա այլ ևս ոչնչով նման չէր առջինին: Նրա տասն և իննամեայ ծաղկափթիթ հասակը ամփոփում էր իւր մէջ արբունքի հասած մի ազնուական կուսութիւն՝ դեղանի դէմքով, զբաւիչ աչքերով, արեան ու կաթի խառնուրդն այտերին, վարդը՝ շուրթերին, որոնք նշան էին կեանքով ու կրակով լի քաջողջութեան: Նրա ճկուն հասակն աճել էր արդէն սպասածից աւելի, կուրծքը զարգացել փայելուչ չափով, իսկ մարմնի մասերը լցուել, բոլորուել այնպէս համաչափ որ երիտասարդը համեմատելով նրան մայրաքաղաքի ծանօթ գեղեցկուհիների հետ, գտնում էր գրեթէ բոլորից գերազանց:

Եւ նա այժմ նայում նրան անթարթ աչքերով, միշտ էր մօր առաջարկութիւնը և ինքն իրեն մտա-

ծուժ. — «իրաւ որ արժէ ժառանգել այս գանձը»:

Լիդիա Պավլովնան, որ աչքի տակով նայելով՝ տեսնում էր թէ ինչպէս որդու հայեացքը անշարժ մեխուել է գեղանի օրիորդի վրայ, շտապեց օգուտ քաղել դէպքից և խօսքը դարձնելով ամարանոցի վրայ, յայտնեց թէ ինչպէս սպերախտ Պետեան որոշել է միայնակ թողնել իրեն այս ամառ:

— Ի՞նչպէս, սիթէ կարելի է, բացականչեց տիկին Մարկոսեանը այնպիսի մի եղանակով որ, կարծես, յայտնուած նորութիւնը վերաբերում էր մի մեծ եղեոնագործութեան:

— Այո՛, միայնակ է թողնում և գնում է ճանապարհորդելու, աւելացրեց նա տխրութեամբ և ընդ նմին սպասելով որ բարեկամուհին մեղադրական մի ազգու ճառ ուղղէ որդուն:

— Այդ ձեզ չի վայելիլ, պարոն Պետրոս, նկատեց տիկինը լրջութեամբ. ի՞նչպէս կարելի է որ այսքան ժամանակ օտարութեան մէջ մնալուց յետոյ, չըմառք այժմ ծնողներիդ մօտ գոնէ այնքան որ նրանք իրենց կարօտը առնեն ձեզանից: Ուրիշները նոյն իսկ գործերնին թողնելով՝ գալիս են ծնողների հետ ամառն անցնելու, իսկ դուք, որ այստեղ էք մի՞թէ պիտի թողնէք նրանց ու հեռանա՞ք:

— Բայց երբ հարկը պահանջում է:

— Ի՞նչ հարկ, ամառը հանգստութեան ժամանակ է և ոչ գործի. ոչ մի հարկ այդ ամիսներում չի կարող ստիպել մարդուն զրկել իրեն ամարանոցի մաքուր ու զով օդից, հանգստութիւնից...: Ա՛յ, մենք էլ անով՝

տեղով գնում ենք Բօրժօմ, եթէ դուք էլ գաք, միասին կը լինինք և հիանալի ժամանակ կանցնենք:

— Հանդէսներ կը սարքենք, կոնցերտներ կը տանք, իսկ այդ բաներում դուք մեզ միշտ կօգնէք, աւելացրեց օրիորդը շտապելով մասնակցել մօր ցանկութեանը:

— Հանդէսներ, ի՞նչ նպատակով, հարցրեց երիտասարդը հետաքրքրութեամբ:

— Ի հարկէ բարեգործական. այդ մասին խնդրել են մեզ մի քանի ընկերութեանց վարչութիւններ:

— Ձեզ.

— Այսինքն ի՞նձ և ընկերուհիներիս:

— Հասկանում եմ: Եւ, իրաւ, ամարանոցում յաջող մուտք կունենաք: Ափսոս որ չեմ կարող օգնել ձեզ այդպիսի բարի ձեռնարկութիւնների մէջ:

— Եթէ գաք ամարանոց, կարող էք օգնել, նկատեց օրիորդը ժպտալով:

— Այո՛, եթէ գամ. բայց եթէ չըզամ:

— Կըխնդրեմ որ գաք, ասաց օրիորդը այնպիսի մի քնքշութեամբ, որի մէջ, կարծես, խօսում էր մտերմութեան ձգտող մի թագուն զգացմունք:

Երիտասարդը ժպտաց և չիմացաւ ի՞նչ պատասխանել: Նրան թուաց թէ՛ այդ ըրպէին նա լսեց Ադելինայի նախկին, մանկական ձայնը, այն անմեղ, միշտ ժպտող, միշտ շարժուն ու կրակոտ Ադելինայի, որ ամեն առաւօտ հանդիպում էր իրեն դպրոց գնալիս, ողջունում այնքան սիրալիր և գանում միշտ հարցեր իրեն զբաղեցնելու համար: Նրան թուաց թէ՛ այդ վայրկենին նորոգուեց նախկին մտերմութիւնը և թէ

ինքն այլ ևս իրաւունք չունի սառն և անտարբեր խօսքերով այդ նորոգուող բարեկամութեան հաճելի տպաւորութիւնը թուլացնելու:

— Ճշմարիտն ասած, շատ կը ցանկայի կատարել ձեր խնդիրը, բայց...

— Ի՞նչն է արգելք լինում, ընդհատեց օրիորդն աշխուժով:

— Մի բարոյական պարտք, որ յանձն եմ առել դեռ այստեղ գալուց և ձեզ տեսնելուց առաջ:

— Եթէ այդպէս է, ուրեմն ամենից առաջ այդ պարտքը պիտի կատարէք. մենք իրաւունք չունինք պահանջել որ դուք անկատար թողնէք այն, ինչ որ կատարել խոստացել էք դեռ այստեղ գալուց առաջ:

— Շնորհակալ եմ, օրիորդ, դուք ինձ հասկանում էք. որքան ուրախ կը լինէի, եթէ մայրս էլ այդ ձևով մտածէր, բայց նա...

— Մայրդ գիտէ թէ՛ ի՞նչ է մտածում, ընդհատեց որդուն Լիզիա Պաւլովնան. դու իրաւունք չունէիր մեզ լսելուց առաջ՝ ուրիշներին բաներ խոստանալ:

— Ի հարկէ, առաջ մայրն է, յետոյ ուրիշները, ձայնակցեց տիկին Մարկոսեանը:

— Բայց դուք հօ չըգիտէք թէ՛ ինչ խոստումի մասին է խօսքը, նկատեց Ադելինան մօրը:

— Իսկ դու գիտե՞ս, հարցրեց վերջինս:

— Ես էլ չըգիտեմ, բայց կարծում եմ որ պարոնը մի գատարկ բանի պատճառով չէր համաձայնուիլ զրկել իրեն ամարանոցի հանգստութիւնից և զուարճութիւններից...:

Այս ասելով Ադելինան մի խորհրդաւոր հայեացք ձգեց երիտասարդի վրայ, կամենալով, կարծես, հարցնել թէ՛ «այդ ի՞նչ բարոյական պարտք է, որի կատարումը աւելի անհրաժեշտ է, քան ինձ նման գեղեցկուհուն ամարանոցում ընկերանալը»:

Երիտասարդն էլ, գրեթէ, այսպիսի մի նշանակութիւն տուաւ այդ խորհրդաւոր հայեացքին, բայց ոչինչ չըբացատրեց, որպէսզի այդպիսով հասկացնէ օրիորդին թէ՛ իրաւ, ինքը խիստ մեծ ու արժանաւոր նպատակի համար է զրկում իրեն ամարանոցի զուարճութիւններից: Բայց որպէսզի բոլորովին անբաղաւժար չըզամուռի օրիորդի հարցասիրութիւնը գոհացնելու նկատմամբ, կարևոր համարեց այսքանը յայտնել թէ՛ — կըզայ մի օր, երբ ինքը կը բացազրէ նրան այն կարևոր պատճառները, որոնք ստիպում էին իրեն զրկուիլ Ադելինայի աննման ընկերակցութիւնից:

Ե.

Տիկնոջ ու օրիորդի հեռանալուց յետոյ, Պետրոսն զգաց որ վերջինի իւր վրայ թողած ազդեցութիւնն այնքան է սաստիկ, որ իւր նախկին մտածմունքներին վերադառնալու համար՝ ի զուր պիտի լինէր այժմ դիմել յուշատեարի օգնութեան: Նրան այժմ հարկաւոր էր աւելի գօրեղ ցնցում, որպէսզի իւր մտքերը նորէն փարէին գաղափարական յայտնի նպատակին:

Այդ պատճառով նա առաւ Աբովեանի «Վէրք Հայաստանին» և իջաւ պարտէզ: Այդ գիրքը նրան սիրելի էր դարձել մանաւանդ այն օրից, երբ ուսանողական ժողովում իւր յայտնի խոստումն արաւ: Ճեմարանաւարտ ուսանողն, որին ծանօթացանք պատմութեանս առաջին գլխում և որն ուսանողական ժողովներին նախագահելուց զատ՝ առաջնորդում էր ընկերներին, նաև, մայրենի լեզուին ու գրականութեանը ծանօթացնելու գործում, խորհուրդ էր տուել Կամսարեանին՝ կարդալ Աբովեանի «Վէրքը», որքան կարելի է շատ: «Իսկ, որ նուիրում ես քեզ հայ ժողովրդի մոռացուած մասին, այսինքն գիւղացուն ու մշակին, այդ գիրքը պիտի կարդաս յաճախ, ասել էր նա նրան, որովհետև բոլոր մարդկանցից ու զրքերից աւելի «Վէրք Հայաստանին» կարող է քեզ ծանօթացնել հայ զեղջուկի հողուն ու զգացմունքներին, նրա արժանիքին ու թերութիւններին, նրա կարիքներին ու ցաւերին»: Եւ իրաւ, քանի Պետրոսը կարդացել էր այդ գիրքը, այնքան աւելի նա սկսել էր շփուրել հայ շինականն ու գիւղացին, որոնց նա իւր հարազատ ազգակիցներն էր համարում, բայց որոնց, աւանդ, չէր ճանաչում անձամբ:

Նստելով հովանաւոր ակաթենու տակ, նա բաց արաւ գիրքը, բայց... մեքենայաբար: Նրա թւում էր թէ՛ գեղեցկուհին դեռ նայում է իրեն իւր սիրուն աչերով թէ՛ նա հէնց նոր ժպտալով ասաց իրեն՝ «կը ինդրեմ որ գաք»: Իսկ մի փոքր յետոյ՝ աշխուժով աւելացրեց «Ի՞նչն է արդելք լինում...»: Այո, այս ձայները հնչում էին դեռ երիտասարդի ականջում,

իսկ զեղանի պատկերն ու փայլուն հայեացքը չէին հեռանում նրանից:

— «Իժուար է... իրաւ որ դժուար է, մտածում էր երիտասարդը ամենքին կարելի է թողնել ամեն ինչ կարելի է գոհել, բայց այս հրեշտակին, այս դիցունուն... ճիշդ որ դժուար է. չէ՞ որ սա ինձ համար կարող էր լինել ամեն ինչ... և եթէ նա, իրաւ, անտարբեր չէ դէպի ինձ... այն ժամանակ արդէն կատարեալ խելագարութիւն է թողնել նրան...: Բայց հէնց այս մտածմունքի հետ յիշեց երիտասարդն ուսանողների ժողովը, իւր հանդիսաւոր խոստումն և այն ուժգին ծափահարութիւնը, որ հետևեց իւր յայտարարութեանը... յիշեց թէ՛ ինչպէս «կէցցեները» դղրդացրին ներքնայարկի ցածուն դահլիճը:

«Ոչ, ես հաստատ կը մնամ իմ վճռին, ես կը կատարեմ իմ խոստումը», որոշեց երիտասարդը և նորէն առաւ գիրքը, որ արդէն փակել, դրել էր նստարանին: Բանալով գիրքը, նայեց նրան նորէն և ապա դրաւ ծնկներին: Այս անգամ էլ մի ուրիշ, սակարկող պայման գրաւեց նրա մտածութիւնը:

— «Ես կը կատարեմ իմ խոստումը, ես կը նուիրեմ ինձ մոռացուած ժողովրդին... բայց եթէ Ագեւլինան ընկերանար ինձ այս գործում, օ, որպիսի մեծ յաջողութեամբ կը պսակուէր իմ նուիրումը... իրաւ, չէ՞ որ ամենաեռանդուն աշխատանքն իսկ ապարդիւն կանցնէ, եթէ նրան չըխրախուսէ կնոջ սէրն ու ժպտաւր... Եւ ի՞նչ երջանկութիւն. մենք միասին կաշխատէինք, միասին կը գործէինք...»:

Այս միտքը երկար զբաղեցրեց երիտասարդին: Նա մտածում էր, մինչև անգամ, համակերպիլ առ այժմ իւր մօր ցանկութեան, գնալ ամարանոց, մտերմանալ այնտեղ Ազելինային, նշանուել, պսակուել և յետոյ... ի հարկէ Ազելինայի հետ միասին վերադառնալ գիւղը: Իսկ այնտեղ... չէ՞ որ երկու խելքը կարող էին աւելի լաւ գործել, քան մէկը:

Բայց յայտնի չէ թէ ինչո՞ւ երիտասարդի երեակայութիւնը նորէն այդ գիւղից փոխադրեց նրան ամարանոց: Նա պատկերացրեց իւր առաջ նշանադրութեան հանդէսն, ապա հարսանեաց պատրաստութիւնները, վերջը՝ փառայեղ պսակադրութիւնը, հարուստ հիւրերը, մետաքսի, ազամանդի և փարիզական ճոխութեանց մէջ փայլող կիսամերկ կրծքերով ու հոլանի թևերով գեղեցիկուհիները, որոնց մէջ սպիտակագգեստ և ծաղկապսակ Ազելինան պիտի երևար իբրև մի հրաշագեղ գիցունի, յաւերժահարսներով շրջապատուած...:

Բայց հէնց այս փայլի ու շքեղութեան պատկերը, կարծես, մարմին առնելով՝ շնչաց իւր ախանջին՝ «մի թէ չէս ցնորում... մի՞թէ Ազելինան, այն կըրթուած, դարգացած, փափկութեան մէջ մեծացած, թատրոնի, երեկոյթների և պարահանդէսների սովոր աղջիկը կը համաձայնուի թողնել քաղաքը, նրա կեանքով ու հրապոյրներով լի միջնորդարը և գնալ, մտնել գիւղը, աշխարհի մի լուռ, անծանօթ անկիւնը, թէ ինչ է՞ այդտեղ պիտի հոգայ շինականի կեանքը բարելաւելո՞ւ մասին...»:

Այս գաղտնի շշուշը ցրեց երիտասարդի նախկին մտքերը:

— «Նա, մինչև անգամ, կարող է ինձ վրայ ծիծաղել, իմ նպատակը ծաղրել, եթէ ես դրա մասին խօսեմ նրա հետ» տրամաբանեց Պետրոսը և տխրելով գլուխը կախեց:

Նրա աչքերն ընկան ծնկանը դրուած գրքին և նա, կարծես, մտածելուց յոգնած, սկսաւ կարդալ բաց երեսի վրայ Աթոյենց աղջիկ Թագուհու մասին գրուած հետևեալ տողերը.

«Բաս ի՞նչ կըլէր որ էսպէս չէր էլէլ: Մինչև էս հաղաղը (միջոցը) նրա (Թագուհու) ախանջը՝ մէկ թթու խօսք չէր լսել, նրա աչքը՝ մէկ դառը օր չէր տեսել. նրա երեսը՝ մէկ կոշտ գրից չէր եկել: Վարդի պէս ծաղկել, մանիշակի պէս մեծացել էր: Տասնը հինգ տարին անց էր կացել, դեռ նրա անմեղ հոգին աշխարհքիցս մէկ բան չէր խաբար: Նրա ընկեր աղջիկերքը դռներին կտրներին ման էին գալիս, «օր անց կացնում, նա ծունկը մօր ծնկանը կպցրած, «եա կար էր անում, եա քարգահ, . եա իրենց տանն ու դռանն էր մտիկ տալիս, եա իրանց մալին, ապրանքին աչք ածում: Ղուշը գլխի վրով թուչելիս՝ «կարմրատակած, շունչը կտրած տուն էր ընկնում որ էր շվաքն էլ ա ոք մին չըտեսնի: Մօր մէկ մասը «փուշ ըլելիս, եա մէկ տեղը ցաւելիս, ուզում էր հոգին հանի իրան տայ. էլ քար, էլ խոտ չէր մնում որ «նա վրէն չըչոքի ու Աստծու ողորմութիւնը խնդրի: «Աղքատ տեսնելիս՝ բերնի թիքէն հանում, իրան էր

«աալիս, որ նրան օրհնի, արեշատութիւն խնդրի: Բա-
 «ղըն էն ժամանակն էր գնում որ լիան ու մութը դեռ
 «չէր բաժանուած ըլլում, բաղիցն էլ էն վախան էր տուն
 «գալիս որ մութը գետինն առած, ոտը քաշուած,
 «խաղաղուած էր ըլլում: Ով նրան ուզենար սեսնի,
 «եա ծառի, եա պատի տակի պէտք է տափ կենար՝ որ
 «նրա երեսին մտիկ տար, նրա աչքերի լսովն հայիլ
 «մայիլ մնար...: Չայիր չիմանի, մանիշակի վրայ, վար-
 «զի, թթենու տակին, եա քչքչան առուի մօտ որ բա-
 «զի վախտ քնած չէր ըլլում, հենց իմանաս երկնքիցը
 «լիս ա վեր եկել, ամինիքը հայլի դառել... Քունը նրա
 «աչքերին էնպէս էր մօտանում, ինչպէս մէկ սրբի՝
 «երկնային հրեշտակը, թևերն երեսին փռում, անմա-
 «հական էրագով նրան զրկում, գգւում, արթնացնում,
 «էլ եզ իր գիրկը դնում... Ախ, որ մէկն ասեմ: Նրա
 «ամեն մէկ շարժմունքը ամեն մէկ խօսքը, ամեն մէկ
 «մտիկ տալը, ամեն մէկ աչքի ու պոօշի ժաժ գալը՝
 «հրաշք էր: Էն լուսակողով աչքերը, էն ինկան ծաղիկ
 «շրթունքը, որ բաց չէր ըլլում, մարդ ուզում էր ոչ
 «ուտի, ոչ խմի հենց նրան մտիկ տայ, նրա սուրահի
 «բօյին թամաշա անի, նրա ոտքի տակին հոգին տայ՝
 «նրա ձեռիցը իր մահն առնի...: Եւ էս երկնային
 «հրեշտակը, էս անմեղ գառն էր էն հաղաղին՝ էն գա-
 «զանների (Հասան-խանի ֆարրաշների) ձեռին... Ի՞նչ
 «քարացած, ապառաժ սիրտ պէտք է ըլի, որ նրան
 «սեսնելիս, կամ նրա պատմութիւնը լսելիս գլխին
 «կրակ չըվառուի...»:

Երիտասարդն էլ չըշարունակեց: Որքան թագու-

հու գեղեցիկութեան նկարագիրը հիացմունք պատճա-
 «նեց իրեն, այնքան էլ վերջին տողերը յուզեցին իւր
 հոգին: Նա փակեց գիրքը և ինքն իրեն շնչաց.

— «Ամօթ ինձ, հազար ամօթ... Եւ ես դեռ տա-
 «տանուում եմ, դեռ երկմտում եմ: Մի՞թէ կարելի է մի
 վայրկեան անգամ ուշանալ... Մի ժողովուրդ, որ այս-
 պիսի ծնունդներ ունի իւր մէջ, մի՞թէ արժանի չէ
 մեր խնամքին ու օգնութեան: Ո՞ւմ մասին եմ մտա-
 «ծում,— մի Աղելիկայի, բաղդից երես առած մի կեն-
 «ցաղասէր աղջկայ... Ինչո՞ւ չըգնամ Աթոյեաց աղջկե-
 «րանցը, Թագուհիներին պարելու... Եթէ այսօր Հասան
 խանի ֆարրաշները չեն սպառնում նրանց, հօ տգի-
 «տութիւնն ու խեղճութիւնը, հօ վաշխառուներն ու
 օրինազանցները սպառնում են: Ինչու ուրեմն չեր-
 «թամ, օգնութեան կարօտ այդ ժողովրդի մօտ, ինչո՞ւ
 չըծառայեմ նրանց և իմ աշխատութեան ընկեր չընտ-
 «րեմ Թագուհիների միջից... Մի՞թէ նրանց անմեղ ու
 միամիտ սէրը պակաս ուժով կը խրախուսէ և կոզկորէ
 ինձ: Այն աղջիկը, որ աչքը բանալու օրից ճանաչում
 է միայն իւր ծնողներին, իւր տունն ու դուռը, իւր
 արան ու այգին, որ իւր ուրախութիւնը գտնում է
 ծնողական յարկի տակ, արդար աշխատութեան մէջ,
 որ իւր սէրը խնամքով ծածկում, պահում է սրտի
 խորքում և նուիրում միայն նրան, ով Աստուծոյ կամ-
 «բով վիճակուել է իրեն ամուսին և որն ապա իւր
 կեանքն ու ուրախութիւնը որոնում է այդ ամուսնու
 մէջ, մի՞թէ հազար անգամ աւելի մեծ, բարձր ու ար-
 «ժանաւոր չէ, քան այս զուարճասէր, փողոցի ու հան-

դէմները սիրահար, նորածնութեանց երկրպագու, դէմքեր ու զգացմունքներ կեղծող, շողակրատ, նազող, հաճոյասէր, ամուսնանալուց առաջ արդէն աշխարհը ճանաչող, թագուն անկիւններում օտարի հետ պաշպշուող, իսկ սալօններում՝ սիրոյ սրբութիւնը դրուատող օրիորդներն ու մեծուհիները... Այն, որոշուած է, ես կերթամ և ինձ այլ ևս չի արգելիլ ոչ ոք:

9.

Դեռ այս մտքի վրայ էր կամսարեանը, երբ յանկարծ նրա ետևից հնչեց մի թաւ ձայն.

—Տօ, Պետօ, դեռ ախտեղ ես, իսկ ես կարծում էի թէ՛ Մասիսն արդէն անցել ես:

Պետրոսը յետ նայեց և տեսաւ մէկին այն ընկերներից, որոնք ուսանողական ժողովում լսելով իւր խոստումը, դրդացրել էին օղը կեցցէներով և իրենք բարձրացել ձեռքերի վրայ:

—Գնում եմ, բարեկամ, գնում եմ, պատասխանեց նա կարծես շփոթուելով և արագ տեղից ելաւ:

—Ճշմարիտ, թէ՛ կատակ ես անում, հարցրեց երիտասարդը պարզելով ձեռքն ընկերին:

—Ի հարկէ, ճշմարիտ, կատակ ինչո՞ւ եմ անում:

—Եղբայր, մեծ մարդ ես, խոստովանում եմ. բայց երբ:

—Շուտով, հենց այս քանի օրը:

—Ուրեմն պատրաստութիւնդ տեսել ես:

—Արդէն: Կամենում ես, արի ցոյց տամ:

—Հապա, տեսնե՞ք, հետաքրքրական է, ասաց երիտասարդը և հետեց Պետրոսին:

Առաջնորդելով ընկերին իւր սենեակը, Պետրոսն սկսաւ մի մի ցոյց տալ նրան այն ամենը, ինչ որ գնել էր գիւղ տանելու համար:

—Ամենից առաջ տես այս թամբը, հունգարական է, բոլորը խոզի կաշուից. 60 ըսելի արժէ. սանձը, ասպանդակները մաքուր պողպատից:

—Այդ ինչո՞ւ համար է:

—Ի՞նչպէս թէ՛ ինչո՞ւ. գիւղերը չի՞ պիտի պտտեմ. միշտ հօ մի տեղ չե՞մ մնալ:

—Իսկ ձի՞ն:

—Ձին էլ այնտեղ կը գնեմ, այստեղից հօ չե՞մ տանելու, ի՞նչ աւելորդ հարց է:

—Հասկացայ. յետո՞յ:

—Սա էլ հրացանս. ամերիկական նոր տեսակի, երկփողեայ, իւր բոլոր պարագաներով արժէ 120 ը.:

—Ա՞յդ ինչու համար է. աւագակներ պիտի հալածես:

—Ի՞նչ աւագակներ, ինչե՞ր ես հարցնում. որսորդութեան չի՞ պիտի գնամ. բոլոր օրը հօ պարապելով չե՞մ անցցնելու. մի մի անգամ էլ գուարձութիւն է պէտք. —այս էլ պայուսակս, բոլորը կաշուեկար պղնձէ օղակներով, թամբի վրայ յարմարեցնելու համար. — այս էլ դաշտային հեռագրիտակ. միշտ հարկաւոր է լինում. — այս էլ կողմնացոյց...

— Կողմնացոյց. այդ ինչու համար է, ծովերի վրայ պիտի թափառես:

— Ախ, ի՞նչ ապուշն ես: Տօ չի՞ պատահիլ որ անտառներում պտտելիս յանկարծ մոլորուեմ. այ, հենց այդպիսի ժամանակ կողմնացոյցը կարող է ինձ ցոյց տալ թէ՛ ի՞նչ ուղղութիւն բռնեմ որ գիւղը դուրս գամ:

— Այդ հօ բոլորը քեզ համար ես հոգացել, գիւղացիների համար ի՞նչ ես տանում:

— Սպասիր, նրանց համար էլ կայ. տեսնում ես... այս ասելով Պետրոսը ցոյց տուաւ սեղանի վրայ գրանուող գրքերի մի կոյտ և նրանցից մի մի հաս առնելով՝ շարունակեց. — այ «Полный курсъ охоты» — Маркса—Маннъ. սա էլ ասեք ինձ համար է, բայց գիւղացիներին էլ կը հարկաւորուի: Չէ՞ որ որսորդութեան մասին ես կարող եմ խորհուրդներ տալ նրանց: — «Лягавая собака» — Фридриха Освальдъ. սա նոյնպէս կարևոր գիրք է որսորդական շներ վարժեցնելու համար:

— Այ մարդ, դու կարծում ես թէ՛ հայ գիւղացին բան ու գործ չունի, հենց միշտ որսի ետեւից պիտի լինի:

— Համբերիր, բարեկամ. ախար մենք էլ քեզ չափ մտածել գիտենք թէ ոչ: Այ «Плодовая школа и плодовый садъ» — Раевского, սա հօ պատուական ձեռնարկ է ծառեր տնկելու, պատուաստներ անելու, պտղատու այգիներ խնամելու համար:

— Հա, դրան խօսք չունիմ:

— Իսկ սա՞ «Домашний огорождъ» — Мицуля,

ընտիր ձեռնարկ է բանջարանոցների համար: Սրան կցուած է Черноглововъ-ի մի գեղեցիկ աշխատութիւնը՝ «Огурцы, дыны, арбузы и тыквы» վերնագրով, յատուկ այդ չորս տեսակ պտուղները անեցնելու համար:

— Յեանոյ:

— Սա էլ «Общедоступное Руководство къ земледѣлію» — Костычева. թէպէտ համարում, բայց շատ պարզ և հասկանալի ոճով կազմուած մի ձեռնարկ է երկրագործութեան համար: Իսկ սա Կօպպէի յայտնի «Երկրագործութիւն և անասնապահութիւն» աշխատութիւնն է, որ թարգմանել է պրօֆեսոր Վօյլֆը. յիսուն տարուց աւելի գործածութեան մէջ է և, հմուտների կարծիքով, գիւղատնտեսական գրականութեան մէջ համարուում է իբրև կլասիք գրուածք: Իսկ սա՛ «Скотоводство» — Трипольскаго, յատկապէս կազմուած եղջիւրաւոր անասուններ և ձի, ոչխար ու խոզ պահելու համար:

— Ուրի՛շ:

— Իսկոյն. «Практическое Руководство виноградарства и винодѣлія» — Винберга. սա անհրաժեշտ գիրք է այգեգործութեան և գինեշինութեան համար: Մեր գիւղացիների գլխաւոր պարապմունքը, կարծեմ, դա է: Այդ պատճառով այս ձիւղին վերաբերեալ ձեռնարկներ մի քանիսն եմ ընտրել: Այ, «Руководство по виноградарству» — Цабеля, բազմաթիւ ու բազմազան նկարներով...:

— Իսկ մեղրապահական, հաւարուծական...:

—Սպասիր, սպասիր, գրանք էլ ունիմ. այ «Птицеводство» Д-ра Прибыля. պատուական աշխատութիւն է՝ գերմաներէնից թարգմանուած: Իսկ սա «Пчела и пчеловодство» — Бутлерова. մեղուապահական ընտիր ձեռնարկներից մինն է: Սա էլ «Какъ добывать шелкъ» — Иверсена, շերամապահութեան վերաբերեալ մի գեղեցիկ աշխատութիւն է: Սրանից դատ, ես գնել եմ, նաև, մի քանի հատ հայերէն գրքեր, այ, օրինակ, Մելիք-Շահնազարեանցի «Բուսական աշխարհը», «Գործնական գինեգործութեան» և «Շերամապահութեան» ուղեցոյցները: Նոյնպէս Քաջունու «Մեղուաբուծութիւնը» և «Շերամապահութիւնը»: Թէպէտ ոռւսերէն ձեռնարկներով ես կարող եմ լիովին ծանօթանալ գիւղատնտեսական այս ու այն ճիւղին և, ըստ այնմ, հարկ եղածը սովորեցնել գիւղացիներին, այսուամենայնիւ, այդ ձեռնարկների մէջ կը լինին բազմաթիւ տերմիններ, որոնց հայերէնը չը գիտեմ. անս այդ գէպքում օգնութեան կը հասնեն ինձ հայերէն ձեռնարկները:

—Այո, լաւ ես մտածել, գիւղացու աչքում ամեն կերպ պէտք է հեղինակաւոր երևալ: Բայց ուրիշ էլ ի՞նչ պատրաստութիւն ունիս:

—Էլ ի՞նչ պիտի ունենամ, մնացածն էլ գըլ՝ խումս է...

—Եւ գրպանումդ, ի հարկէ:

—Առանց գրան հօ բան չի առաջանալ: Բայց սկզբում, կարծեմ, հարկ չի լինիլ գրպանի օգնութեան գիմելու: Դեռ առաջ պէտք է գիւղը մտնել, գիւղա-

ցուն ու նրա կարիքներին ծանօթանալ, իսկ այնուհետև ամեն բան հեշտ է:

—Նախանձում եմ քեզ, բարեկամ, որքան բազմապար ես որ կարող ես այդպէս ազատօրէն նուիրուել հասարակաց դործին. իսկ ես...:

—Ո՞վ է քեզ խանգարում հետևել ինձ:

—Ո՞վ է խանգարում... աղքատ ծնողներ պահելու, քոյր ու եղբայր ապրեցնելու և, նոյն իսկ, ինձ նման անազին մարդուն կերակրելու անհրաժեշտութիւնը:

—Այո, իրաւունք ունիս, քո գրութիւնը ծանր է, յարեց իսկոյն կամսարեանը, զգալով որ ընկերի ցաւոտ տեղը շօշափեց:

—Բայց վիճակս մասամբ բարւոքելուց յետոյ, պիտի յիշեմ նա և քեզ հետևելու պարտքս, մի կարծիք թէ՛ ուսանողական ժողովի որոշումը կարող եմ երբ և իցէ մոռանալ:

—Մի վշտանար, բարեկամ, քո ծնողներն ու հարազատները նոյնպէս հասարակութեան անդամներ են. եթէ դու նրանց խնամում ես, գրանով արդէն որոշ չափով ծառայում ես հասարակութեանը: Ես հաւատացած եմ որ երբ գրութիւնդ բարւոքուի, կաշխատես աւելին անել:

—Անշուշտ:

—Ուրեմն, չըխօսենք այլ ևս այդ մասին. դառնանք իմ ձեռնարկութեան: Ի՞նչ խորհուրդ ես տալիս. որ կողմում հաստատեմ օգնութեան դործը:

—Դու գեռ չէս որոշել:

— Ոչ, որովհետև մտածում եմ թէ՛ բոլոր կողմերն էլ մի և նոյն են ինձ համար. ուր որ հայ շինական կայ, այնտեղ էլ կարող եմ գործել:

— Եւ շատ լաւ ես մտածում: Նստիր երկաթուղի և գնա դէպի աջ: Հենց որ հասար Ադատափա (դա մեր պատմական Ադատեն է, չըմոռանաս), իջիր այնտեղ: Փոստայի կառքը Ադատե գետի ուղղութեամբ կը տանէ քեզ դէպի Դիլիջան: Անցել ես դու այդ ճանապարհով:

— Ո՛չ:

— Լաւ ուրեմն, կերթաս և կը տեսնես այն աշխարհն, ուր քո պապերն են ապրել: Կարող ես հենց առաջին պատահած գիւղում իջնել և այնտեղ էլ քո օգնութեան գործը հիմնել: Այժմեանից, ի հարկէ, դժուար է որոշել թէ՛ ի՞նչ պիտի անես. բայց երբ կը մտնես ժողովրդի մէջ, այն ժամանակ արդէն ինքզ կը տեսնես նրա կարիքները և կսկսես հոգալ կարևոր դարմանը: Ինչպէս լաւ, նոյնպէս, և վատ օրինակը վարակիչ է: Երբ քո ձեռքը կստեղծէ մի գիւղում գովութեան արժանի գործ, կը տեսնես որ յետոյ լոյս կընկնեն ուրիշ ձեռքեր, որոնք նոյնը կանեն ուրիշ գիւղերում: Ո՞ գիտէ, գուցէ հենց քեզ է վիճակուած կարապետ լինել այն գաղափարական գործին, որ ամփոփում է իւր մէջ գիւղական ժողովրդի ապագայ բարօրութիւնը և որի մասին այնքան շատ խօսել ու քարոզել է հայ լրագրութիւնը: Երևակայիր թէ՛ ինչպիսի հռչակ պիտի վաստակես դու հայ հասարակութեան մէջ, երբ յայտնի լինի մի օր թէ՛ այն, ինչ որ գրողները միայն երա-

գել են, դու արդէն մարմնացրել ես քո հաստատուն կամքով:

— Դու ինձ ոգևորում ես, բարեկամ, բացականչեց կամսարեանը և ընկերոջ ձեռքն առնելով ամուր ամուր սեղմեց:

— Ոգևորուիր ու գնա գործիր. Աստուած անշուշտ կ'օրհնէ քո ընտրած ճանապարհը:

Այսքանն արդէն բաւական էր որ կամսարեանն իւր որոշումը իրագործէր անպատճառ: Ընկերոջ հեռանալուց յետոյ, նա սկսաւ կարգի բերել իւր իրեղէնները և կապկպել:

Չընայելով որ այդ առթիւ Լիդիա Պավլովնան ու Կիրիլ Կարպիշը մի անգամ ևս լուրճ վիճաբանութիւն ունեցան իրենց որդու հետ և այս անգամ մայրը ոչ միայն յուզուեց, այլ և կարողացաւ լաց լինել, այսուամենայնիւ, Պետրոսը մնաց անընկճելի: Միակ զիջումը, որ նա արաւ ծնողներին, այն էր, որ խոստացաւ չերկարել ճանապարհորդութիւնը և աշխատել մի քանի շաբթով վերադառնալ Բօրժում:

Այս պայմանը խաղաղացրեց երկու կողմերն էլ և Պետրոսը մի լուսնկայ երեկոյ իւր պարկ ու պուրկը կառքի մէջ ժողովելով, ճանապարհուեց դէպի երկաթուղու կայարանը:

Է.

Կէս գիշեր էր որ գնացքը կանգ առաւ Ազատե կայարանի առաջ: Ղազարս ու Գիւլիջան գնացողները թուում՝ իջաւ գնացքից և Պետրոս կամսարեանը: Ուղեւորներին իրենց ծառայութիւնն առաջարկող կառապանները մօտեցան, նա և, վերջինիս և սկսան գովել՝ մէկն իւր «թուչկան ձիերը», միւսն՝ իւր «սլոդ կալասկան», երրորդն՝ իւր «գինջ օմնիբուսը» և այլն և այլն:

Պետրոսն, ինչպէս յարմարութիւններ սիրող մարդ, չէր կամենում փոստի սայլակով ճանապարհորդել, որպէս զի չենթարկուի կայարանների քմահաճոյքին, այդ պատճառով էլ ընտրեց «սլոդ կալասկան», թէպէտ հաստատ չըզիտէր թէ՛ սրբան է նա յարմար առաջիկայ ճանապարհորդութեան համար: Եւ որովհետև օմնիբուսի, կամ ուրիշ կառքերի տէրերը վախեցնում էին նրան ասելով՝ «էդ կալասկան էդա ճամպի միջումը կոտորուելու ա, քէ էլ թողի արևումը խաշուելիս և այլն», ուստի երիտասարդը սկսաւ կասկածել թէ՛ մի գուցէ սխալուել է իւր ընտրութեան մէջ:

—Սուտ են ասում, աղա՛ջան, քէ վախեցնում են որ իրանց փայտօնը բռնես, առարկում էր «կալասկի» տէրը և աւելացնում.— իմ կալասկէն կըլի չորս տարի որ բանեցնում եմ, հրա պոռնգը փա-

սուել չի: Հրէն մէկ էլ օրը պրիստաւին տարայ Ղազարս, ընդիան էլ նաչախիկին դուրս բերի Գիւլիջան, բա խի՞ չըկոտորուեց: Հրա նաչախիկն էլ ասեց «մալադեց Օվանես տվոյ կալասկա օչեն խարօշի»:

Պետրոսն, անշուշտ, երկար կը մնար երկբայութեան մէջ, եթէ նրան օգնութեան չըհասնէր կարճահասակ մի մարդուկ, որն, ըստ երևութին, ծանօթ էր տեղական կառապանների սովորութեան ու հնարներին:

—Ազա՛, էս մարդի կալասկէն լաւն ա. ըսկի սիրտըդ շաք (կասկած) մի գցիլ, նստի ու գնա: Դու թէ ամեն խօսողի լես, էրկու օր կը մնաս ըստեղ, ասաց նա բարեկամաբար:

—Ա՛յ քու հերը լիս դառնայ, ըտենց խօսա՛ Է, ուրախացաւ Օվանէսը և ապա դառնալով Պետրոսին՝ աւելացրեց. Տես, ազա՛, սա վարժապետ մարդ ա, սուտ չի խօսալ. որ ասում ա իմ կալասկէն լաւն ա. իմանց որ լաւն ա:

—Շատ բարի. գնա՛, լծիր. կարգադրեց Պետրոսը, նախապէս վարձագինը որոշելով: Ապա դառնալով միջամտող մարդուկին՝ հարցրեց.— սրտեղի վարժապետ էք:

—Գիւլիջանից դէնը հայի գեղ կայ, ընդեղի վարժապետն եմ:

—Ուրեմն դուք էլ Գիւլիջան էք գնում:

—Հրամանք ես:

«Սա կարող է լաւ առաջնորդ լինել ինձ», մտածեց Պետրոսը և առաջարկեց նրան՝ ընկերանալ իրեն:

—Չէ, աղան, ես փուրղոծով պտի գնամ, առարկեց վարժապետը:

—Ինչո՞ւ, միթէ կառքը աւելի՞ հանգիստ չէ:

—Հալբաթ որ (ի հարկէ) հանգիստ ա, ծիծաղեց վարժապետը:

—Ինչո՞ւ ուրեմն չէք գալի:

—Բա գեղի վարժապետը սրղիան կարայ կառքի փող տալ:

—Ի՞նչ փող, ես փող չեմ ուզում:

—Բա սո՞ց:

—Հենց այնպէս, ձրի: Ես, մի և նոյն է, կառքի փողը պիտի վճարեմ. շատ սւրախ կը լինեմ, եթէ դուք էլ ինձ ընկերանաք:

Վարժապետը քաշուով էր և չէր կամենում երկտասարդի առաջարկութիւնն ընդունել:

—Ա, շա՞շ (ապուշ), խի՞ ես մաթ մնացել (զարմացել), լաւ բանը գլուխդ վեր չ'ունում, նկատեց վարժապետին Ղազարեցի ծանօթներից մինը:

—Դէ խի՞ չի վեր ունում, ասում եմ, ծանդրութիւն չըլեմ աղի հմար:

—Ոչինչ, ծանրութիւն չես լինիլ, գնանք, ասաց կամսարեանը և իրեղէնները յանձնելով բեռնակրին՝ առաջ անցաւ:

Մարդուկը հետևեց նրան:

Կառապանը, որ մի քանի վայրկեանում արդէն «կալասկէն» լծել, բերել էր կայարան, ժողովեց իսկոյն Պետրոսի իրեղէնները և կառքի ետքին ու առաջին դարսելով՝ սկսաւ ամրացնել: Ապա իմանալով որ վարժ

ժապետն ևս ընկերանում է «աղին», նրա խեղճ կապոցն էլ տեղաւորեց մի խորշում: Յետոյ բարձրանալով իւր նստատեղը, ասաց.

—Ես իմ Աստօծը, աղա, լաւ ընկեր ես վե կալել, արժանաւոր մարդ ա. ըտենց ընկերի հետ գնացած ճանպան էլ բարի կըլնի:

—Հապա ես վատ մարդ կընկերացնե՞մ ինձ, պատասխանեց կամսարեանը և կառքը բարձրացաւ:

—Տենձում ես, վարժապետ. լաւութիւնը կորչում չի, նորէն խօսեց Օվանէսը, դու որ ինձ հմար բարեխօս չէիր ըլել, Աստօծ էլ քէ էս բանին ուստ չէր բերիլ. փուրղոծի ճոճուցից ազատուեցար, ութ արասին էլ մնաց ջէբումդ:

—Լաւ, մի՛ երկարացնիր, քշիր տեսնենք, նկատեց կամսարեանը՝ զգալով որ կառապանի խօսքերը անհաճոյ պիտի լինին վարժապետին:

—Քշիլ տեմ, աղա, բա քշիլ չըպտե՞մ, քե ընենց լեղով (շուտով) տանեմ, որ նաչալնիկի պէս ասես՝ «մալադեց Օվանես»:

Այս ասելով՝ կառապանը շարժեց սանձերը, խրախուսեց ձիաներին և կառքը սլացաւ խճուղու ուղղութեամբ:

Լոյսը բացուած չըլինելով՝ գիշերային զովը զգալի էր դեռ: Պետրոսը փաթաթուելով վերարկուի մէջ՝ կծկուեցաւ կառքի անկիւնում և սկսաւ խօսակցել վարժապետի հետ:

—Չեր անունն ի՞նչ է, հարցրեց նա:

—Քե ծառայ՝ Մօսի, պատասխանեց վարժապետը:

— Չասացիք որ գիւղի վարժապետն էք:

— Չբուխրու:

— Չիբուխրու: Դա հայոց գիւղ է:

— Հայոց ա, բն ի՞նչ ա:

— Անունը, կարծեմ, հայերէն չէ:

— Հրամանք ես, թուրքերէն ա, ամա մեր վանահայրն ասում ա, շատ առաջ հայերէն ա ըլել, Ճապոտիկ են ասել:

— Վանահայրն ո՞վ է. ձեր գիւղում վանք էլ կայ:

— Չէ, Սեանայ վանահայրն եմ ասում:

— Սեանն, ուրեմն, մօտ է ձեզ:

— Մօտ ա, բն, հենց մեր առաջին ա:

Այս նորութիւնը ուրախացրեց Պետրոսին: Որքան ժամանակ էր որ նա փափագում էր տեսնել Գեղամայ ծովակը, որքան լաւ բաներ էր լսել նրա մասին, որքան բաներ կարդացել: Այժմ, ահա, նա կը հասնէր փափագին:

— Ձեր գիւղում, ուրեմն ուսումնարան էլ ունիք՝ շարունակեց նա իւր հարցերը:

— Ուսումնարան որդիան ա. մի տասը—քսան ընկալ ես եմ հւարել մեր տունը, կարդացնում եմ... թէ գրուսան ասեմ. ես էլ ըսկի օրինաւոր վարժապետ չեմ: Եղցումը որ էրէցին օգնում եմ, տիրացութիւն անում էն ա գեղականն անունս վարժապետ ա գրել:

Ուրեմն Պետրոսի ուղեկիցը տիրացու էր և ոչ վարժապետ: Սրանով էլ պարզւում էր երիտասարդի համար այն հանելուկը որ վարժապետ կոչուածը գիւղական բարբառով էր խօսում:

Այս նորութիւնը թէպէտ որոշ չափով ձգեց ուղեկցի վարկը Կամսարեանի աչքում, այսուամենայնիւ, վերջինս դարձեալ հետաքրքրուեց նրանով:

— Ո՞րտեղ ես ուսում առել, հարցրեց նա:

— Հրէս, առաջներին գեղ կայ, Քարվանսարայ են ասում, ընդեղ եմ կարդացել: Ես ինքս էլ Ղազախի գեղերիցն եմ. միայն Չբխրուի էրէցը մեր ազգական էր, զօռեց, տարաւ իրա կուշտը (մօտ), ասեց՝ ըստի տիրացութիւն պտես անիլ. ժամանակով էլ քահանայ կշինեմ քե:

— Լաւ գիւղ է Չիբուխրուն:

— Հլէ մեզ հմար լաւ ա, ուրիշի հմար ի՞նչ գիղամ:

— Որքան ժողովուրդ ունի:

— Իսկը գիտում չեմ. կըլի որ հարիւր յիսուն տուն ըլի:

— Ի՞նչպէս է որ այդքան տուն չի կարողացել իւր համար ուսումնարան հիմնել:

— Բա գեղականը որ դիան կարայ ուսումնարան հիմնիլ: Մաղ օրը չարչարուելով, արևի, անձրևի հետ կը ռիւ տալով ըսկի կարում չի էնքան աշխատի որ իրա ընկանց ուղղին հասցնի, ես նրանց տկոր լաշը ծածկի, ուսումնարան ո՞նց տի հիմնիլ:

— Իսկ եթէ գանուի մէկը, որ ցանկանայ իւր ծախքով այդ բանն անել, գիւղացիք հօ չէն հակառակիլ:

— Բն, էդ ի՞նչ ես ասում, աղա-ջան, մարդ իրա աչքը քոն կուղի. գեղացիք չէ թէ հակառակիլ չեն, հլա գհենց մարդու ոտն էլ կը պաշեն:

«Այս գիւղն, ուրեմն, կարժանանայ իմ ուշադրութեան», մտածեց ինքն իրեն Կամսարեանը և շարունակեց.

— Իսկ գիւղաանտեսութիւնը ի՞նչ դրութեան մէջ է ձեր կողմերում:

— Գիւղաանտեսութիւնը ո՞րն ա:

— Վար ու ցանքը, անասնապահութիւնը, գինեգործութիւնը...:

— Վար ու ցանքն էս տարի լաւ ա, տաւարն էլ, փառք Ասծու, ցաւ ու չոռից ազատ ա. ամա դէ գինին մեր կողմերում չի բլիլ, չուն մեր տեղը սար ա, բաղն արշայ չի գալ (չի առաջանալ), պատասխանեց տիրացուն, այլ կերպ հասկանալով իրեն տրուած հարցը:

Այդ հանգամանքը, կարծես, սառեցրեց Պետրոսի հետաքրքրութիւնը և նա այնուհետեւ սկսաւ աւելի մտածել՝ քան խօսել: Դրա հետեանքը եղաւ այն որ երիտասարդը տաքուկ վերարկուի և զով օդի ազդեցութեան տակ սկսաւ նիրհել: Եւ որովհետեւ երկաթուղու վրայ շատ քիչ էր քնել, ուստի շուտով էլ քաղցր քուն մտաւ:

Տիրացուն իր կողմից աշխատեց չարթնացնել նրան և քիչ ժամանակից յետոյ ինքն էլ հետևեց նրա օրինակին:

Սակայն Օվանէսի «կալասկէն» շարունակ սլլում էր հարթ խճուղու վրայ: Նա արդէն Ղազախը, Գագկայ դաշտը և Ուզունթալան անցել և Քարվանսարի ճանապարհն էր մտել, երբ Կամսարեանն անուշ քնից

արթնացաւ: Աչքերը բանալով՝ նա չորս կողմը նայեց և իրեն շրջապատող տեսարանները դիտելով՝ հիացաւ:

Ճանապարհի մի կողմից ընկած էին հասուն արտեր կամ սիգաւէտ արօտներ, որոնք ուղղադիր, կամ վայրահակ տարածոււմ, հասնում էին մինչև հեռաւոր բարձրութիւնները. իսկ միւս կողմից կանաչազարդ թումբեր, ձորակներ ու բլուրներ, որոնց հետևում էին՝ նախ մանր ու ծառախիտ և ապա խոշոր, մշշապատ լեռներ: Դրանց մէջ, իրենց բարձրութեամբ, աչքի էին ընկնում աջ կողմից Նալթեօքանը, իսկ ձախից՝ Կարմիր-քարը՝ իւր երկար լեռնաշղթայով, ապա Համգասարը, Արտազը և այլն, որոնք հետզհետէ իրար յաջորդելով հորիզոնը դարձնում էին վեհ և գեղատեսիլ: Սակայն աջ ու ձախ տարածուող այդ տեսարանների գեղեցկութիւնը պսակում էր Աղստեի հինաւուրց գետակը, որ շարունակ անծայր խճուղուն ընկերանալով, գուարճացնում էր նրա մշտական անցորդներին մերթվճիտ ջրերի քաղցր կարկաչով, մերթ փոքրիկ ջրվէժների փափուկ շառաչով և յաճախ՝ իւր եզերքը ծածկող, կամ իւր եղտիւրներում հմբովին ցոլացող ծառերի պուրակներով: Արևը, որ նոր էր իւր շողերը սփռում Աղստեի ձորի վրայ, այդ տեսարաններին տուել էր մի դիւթական պայծառութիւն, վառելով մշուշ լեռների լանջերում, կանաչը՝ ծառերի կատարին, դալարը՝ դաշտերի մէջ և ցօղը՝ ծաղիկների վրայ:

— Օհ, ի՞նչ գեղեցիկ և որքան հրաշալի է մեր երկիրը, բացազանչեց Կամսարեանը՝ հրապուրուելով բնութեան այդ սիրուն տեսարաններով և ապա ձեռ-

քերն աջ ու ձախ տարածելով՝ կամենում էր կարծես հորիզոնը գրկել:

— Ըստեղ հլա ի՞նչ գեղեցկութիւն կայ, գեղեցկութիւն, գեղեցկութիւն Դիլիջանայ դէնն ա, Շամուխի ձորումը, Մայմեխի լնջերին, հրէս գնում ենք, կը տեսնաս, նկատեց տիրացու Մօսին:

Կամսարեանը, որ դեռ քննական աչքով չէր նայել ուղեկցին, որովհետև գիշերանց էր ծանօթացել նրան, թաւ ձայնով արած նրա դիտողութիւնը լսելուց, յետ նայեց մի վայրկեան և տեսաւ որ դա մի մարմնացեալ աններդաշնակութիւն էր նկատմամբ այն պօէզիայի, որ շրջապատում էր իրեն: Տիրացուի կարճ ու գիրուկ մարմինը, որ նստած լինելու պատճառով կորացել էր, նմանում էր մի տձև մսագնդի, որի վրայ գլուխը շարժւում էր, կարծես, առանց պարանոցի: Նրա թուխ դէմքը, որ արևահար լինելուց աւելի էր սևացել, ծածկուած էր խիա և երբէք չըսանրուած մօրուքով: Վերջինս թէպէտ տարածւում էր մինչև նրա այտոսկրները, այտուամենայնիւ, չէր ծածկում տիրոջ մեծ բերանը, որ եզերուած էր հաստ, լրթագոյն շրթունքներով: Խոր ընկած աչքերը, չընայելով իրենց սևութեան, թաւալում էին նեղ կապիճներում առանց կրակի և արտայայտութեան. իսկ դրանց հովանաւորող թաւարձի յօնքերը տալիս էին նրա դէմքին մի առանձին գոեհկութիւն: Հաստ շալի կապան, կեղտոտ օձիքով արխալուխը և մորթէ մեծ գգակը, որ նա խնամքով քաշել էր մինչև հաստ բլթակներով՝ լօշի պէս կախուած ու փոշոտած ականջները, տիրացուին նմանեցնում

էին անտառաբնակ խոզարածի. նրան պակասում էր մի մահակ՝ ձեռքին և մի պարկ՝ մէջքին:

Պետրոսը ուշի ուշով նայելով ուղեկցի վրայ՝ զգաց այնպիսի մի անհանգստութիւն, որ պաշարում է մարդուն՝ զգուանք զգալուց առաջ: Նա զարմացաւ իւր անմտութեան վրայ որ մի առաջնորդ ունենալու պատճառով նստացրել էր կողքին այնպիսի մի գոեհկի, որից, մինչև անգամ, կեղտի ու քրտինքի հոտ էր փչում: Այս պատճառով երիտասարդն անզգալի կերպով քաշուեցաւ մի կողմ և, որպէս զի տիրացուից աւելի անջատուի, առջևը դրած իրերից մինն առնելով՝ գետեղեց նրա և իւր մէջտեղը՝ ասելով.

— Սրա մէջ կտարելու բան կայ, լաւ է այստեղ գնենք:

— Լաւ կըլի, յարեց տիրացուն և ինքն ևս յետ քաշուեցաւ:

Բայց որովհետև Պետրոսին այնպէս թուաց թէ՛ Մօսին հասկացաւ իւր միտքը, ուստի սկսաւ զբաղեցնել նրան:

— Ասում ես թէ՛ այն կողմերն աւելի գեղեցիկ են, հա՛:

— Գեղեցիկ են, բա՛, ըստեղ հլա շատ փայլ դիւզ (դաշտ) ա, արևը որ աշմիշ ա ըլում (բարձրանում է) էն դայդի ա էրում, որ ասես թէ մարդի կաշին պուկիլ տի. ամա դէնի ճամպէն չիմ մեշալղով (անտառով) ա անց կենում. ոտով էլ որ գնաս՝ մէջքդ տաքանալ չի: Չընայելով տիրացուի յայտարարութեան, կամսարեանն, այտուամենայնիւ, թերութիւն չէր գտնում

ըրջապատող տեսարանների մէջ. ընդհակառակը նա որքան յառաջանում՝ այնքան աւելի էր հիանում նրանցով: Մանաւանդ Աղստեի մշտակարկաչ հոսանքը և նրա սիրուն, ծառագարգ ափերը գրեթէ շարունակ զմայլեցնում էին նրան, այնպէս որ մի ժամանակ նա, մինչև անգամ, մոռացաւ տգեղ տիրացուին և ինքն իրեն խօսեց. —

— Ահա թէ՛ ի՞նչ տեղեր և ի՞նչ գեղեցկութիւններ են անյայտ մնում մեզ... Իսկ սրանց մէջ ապրող մեր ազգակիցները... չէ՞ որ նրանք էլ ունին գեղեցկութիւններ ու կատարելութիւններ, որոնք անծանօթ են մեզ: Պէտք է շնորհակալ լինել բաղդից, որ վերջապէս օգնեց ինձ՝ իմ նուիրական խոստումն իրագործելու (այդ վայրկեանին երիտասարդի հայեացքը հանդիպեց իւր ուղեկցին և նա մի քայլ յետ կասեց իւր մտածութեան մէջ՝ աւելացնելով) կամ, գոնէ, ծանօթանալու այս երկրին ու ժողովրդին, որպէս զի համոզուիմ թէ՛ ի՞նչ չափով է հնարաւոր այդ որոշումն իրագործել:

Քիչ ժամանակից յետոյ՝ երիտասարդ Կամսարեանը նստած Քարվանսարայ գիւղի առաջ, կարկաչահոս Աղստեի ափին, մի հովանաւոր ծառի տակ, ախորժակով նախաճաշում և թէյ էր վայելում: Այստեղ արդէն տիրացուն չէր ընկերանում նրան, որովհետև յանդրդ՝ նուրբին էր համարում ձգուիլ «աղայի» հետ, նաև՝ նախաճաշի ժամին: Նա համեստութեամբ խոյս էր տուել դէպի մօտակայ կրպակը, ուր խոնուած էին Ղազարի զանազան կողմերից գիւղացիներ և նրանց հետ խօսում էր: Տիրացուի այդ վարմունքը դիւր

եկաւ Կամսարեանին և համոզեց նրան որ իւր ուղեկիցը այնքան էլ անտաշ գոեհկին մէկը չէ: Այդ պատճառով էլ երբ նախաճաշն աւարտեց, կանչեց վերջինիս և առաջարկեց նրան՝ նոյնպէս թէյ խմել և նախաճաշել, իսկ ինքն հեռացաւ մի փոքր ըրջապայելու:

Տիրացուն իւր կողմից հրաւիրեց նա և կառապան Օհանէսին: Նրանք երկուսը նստեցին նոյն հովանաւոր ծառի տակ և սկսան վայելել «աղայի» թէյի ու նախաճաշի առատ մնացորդը: Կառապանը տեսնելով որ «աղան», ի միջի այլոց, թողել էր իրենց համար տասը կտոր շաքար, այդ համարեց առատասարտութիւն և դրանից էլ եզրակացրեց որ նա «մենծ մարդ պիտի ըլի»:

— Մենծ մարդ ա, բա՛. մենծ որ չըլէր, մենակ կալասկայ կը բռնէր կը գա՞ր, հաստատեց տիրացուն:

— Ես չէ, առանց փողի քէ կողքին կը դնէր կը բերէր:

— Ես էլ էդ չե՛մ ասում:

— Թիւնդ յուսումնական կըլնի, այ.

— Յուսումնական ա, բա՛:

— Ձի՞ թէ ընջներ ա:

— Ձէ, ընջներ չի ըւում:

— Բա խի՞ ետշչիկը ծանդր ա. ես նըհենց եմ՝ մանում թէ՛ ընջների ետրաղ (գործիք) կայ միջումը:

— Ձէ, կլի որ գրեր ըլին:

— Գրերը ինչի՞ն ա պէտք:

— Ո՞նց թէ ինչի՞ն ա պէտք, բա յուսումնականն առանց գրերի ման կը գա՞յ:

— Ես ի՞մ (ի՞նչ գիտեմ), հրէն մեր դէրի տղան էլ

ասրմեն յուսումնական ա, ամա ճամպա գնալուց՝ արա-
ղից սաւայի գատ չի ըլում հետը:

—Է՛, շնչ, դու էլ մարդու անուն տուիր. գեղի
յուսումնականն ու քաղաքինը մի՛ն ա ըլում: Գեղի
յուսումնականը սաղ կեանքումը հինգ, ես վեց գիր
անշախ (հագիւ) ա կարդում, ամա քաղաքինը՝ աշ-
խարքումս էլ գիր չի թողնում չիմ (բոլորը) կարդում
պրծնում ա:

Այսպէս զրուցելով տիրացուն ու կառապանը վեր-
ջացնում էին իրենց նախաճաշը, երբ Կամսարեանն
իւր շրջագայութիւնից վերադառնալով՝ տեսաւ նրանց
միասին:

—Այս տիրացուն, իսկապէս, կառապանի ընկերն
է, ես ինչո՞ւ յիմարաբար իմ կողքին եմ նստեցրել,
մտածեց նա և որոշեց առաջարկել որ սա այնուհետև
նստէ կառապանի մօտ: Բայց ի՛նչպէս անէր առաջար-
կութիւնը որ տիրացուն չըվիրաւորուէր, նա այդ մա-
սին էլ մտածեց:

Երբ Օվանէսը իւր գահին բազմած՝ կառքը մօ-
տեցրեց «աղին», վերջինս հրամայեց ծածկել հովա-
րանը, որովհետև արևն այրում էր արդէն: Կառապանն
իսկոյն կատարեց հրամանը:

—Նախաճաշից յետոյ ես սիրում եմ հանգստանալ.
արդեօք չէ՞ կարելի պառկել քո կառքում և այնպէս
գնալ, հարցրեց Պետրոսը կառապանին:

—Խի՞ չի կարելի. տենո՞ւմ չես որքան լէն ա իմ
կալասկէն: Դու ոտերդ ձգի ու պառկի, վարժապետն
էլ իմ կողքին կը նստի, պատասխանեց Օվանէսը:

—Հա, ես ըստի կը նստեմ, դու նեղանալ մի՛, յա-
րեց տիրացուն՝ ցոյց տալով կառապանի նստատեղը:

Կամսարեանը հիացաւ այս յաջողութեան վրայ և
կառքը բարձրանալով՝ գլխի տակն առաւ փոքրիկ բարձը
և ձգուեց բազմոցի երկարութեամբ:

Տիրացուն սեղմուեց կառապանի կողքին:

Քարվանսարայից երնելուց՝ Աղստեղ գարձեալ ըն-
կերանում էր ճանապարհորդներին իւր ընդդիմակաց
հոսանքով, երբեմն փոքրիկ ձորակներից անցնելով, եր-
բեմն գաշտերի եզերքը քերելով, իսկ շատ տեղ թում-
բերի ետևը թագնուելով: Քանի շարունակուում էր տե-
սարանների միակերպութիւնը, Կամսարեանը նրանցով
չէր հետաքրքրւում, այլ պառկած մտածում էր: Բայց
նենց որ հասան Ալիճ-Ղայայ կոչուած ժայռերի ստո-
րտին, նա ուղղուեցաւ իսկոյն և գլուխը կառքից
դուրս հանելով՝ սկսեց ուշի ուշով դիտել այդ անաւոր
և մի և նոյն ժամանակ գեղատեսիլ պարեխները, որոնք
ճանապարհի աջ կողմից ձգուելով՝ իրար վրայ դիգուած՝
հետզհետէ բարձրանում, կազմում էին տարօրինակ
ամբարտակներ, մի տեղ սուր ու միապաղաղ, միւս
տեղ՝ խրոխտ ու բարդ բարդ, իսկ շատ տեղ՝ թեք դէ-
պի ճանապարհը, կարծես, սպառնալով փլչել ու իջնել
բարձր գահաւանդից և իրենց փլուածքի տակ ծածկել
տեղի խաղաղութիւնը վրդովող յանդուզն ուղևորներին:

Խարակների այդ անաւոր ամբարտակներից յետոյ
տեսարանը գարձեալ մեղմանում ու գաշտանում էր,
իսկ խճուղու մի քանի կեռմաններ անցնելուց՝ հորի-
զոնը գարձեալ փակում էին նոր, կանանչ սարալան-

ջեր, որոնք հետզհետէ դէպի վեր բարձրանալով՝ ձգւում, հասնում էին մինչև Ղրղզալի սարը:

Մի երկու ժամ այսպէս ճանապարհորդելուց և տարբեր տեսարաններ անցնելուց յետոյ, մեր ուղևորներն հասան Թարս-չայ կայարանը, որ գտնւում էր Դիլիջանի սարաւանդը հանող բարձրութիւնների ստորոտում:

Որովհետև կառապանը կեր պիտի տար այստեղ ձիերին, ուստի առաջարկեց «աղին» վայելել իւր ճաշը առանց շտապելու:

— Արևն էս սարին թեքելուց՝ կալասկէն կը լծենք ու սարինով (հովով) Դիլի դիւս կը գանք, յայտարարեց նա խորհրդատու եղանակով:

— Ինչո՞ւ այդքան ուշ, հարցրեց Պետրոսը:

— Ուշ չի, աղա, էրկան ճամպայ ենք էկել. հայ վաններն էլ խեղճ են. մի քիչ կորմ (կեր) կուտեն, մի քիչ էլ կը դինջանան. հլէ թէ կուգես, մի քիչ էլ դու կը դինջանաս, էնդունց եղբ կը լծենք կը գնանք:

Որովհետև երիտասարդը շտապելու ոչինչ չունէր՝ ուստի չըհակառակուեց: Պատուիրելով որ պաշարի կապոցը տանեն կայարան, (որից ինքը, իբրև մասնաւոր կառքով եկող, հեռու էր իջած), ինքն ևս իւր քայլերն ուղղեց դէպի այդ մենաւոր տունը, որ հովանաւոր պատշգամ և շուրջը ծառերի ստուեր ունենալով՝ արևի այդ տաք ժամանակը դէպ իրեն էր քաշում խոնջ ուղևորին:

Կայարանի վերակացուն ձեռքը լրագիր առած կարդում էր, երբ Կամսարեանը մօտեցաւ սանդուխների:

— Կարելի՞ է մի քանի վայրկեան հանգստանալ այստեղ, հարցրեց նա ուսերէն:

— Ինչո՞ւ չէ, համեցէք, պատասխանեց վերակացուն մաքուր հայերէնով:

— Ախ, ներողութիւն, դուք ուրեմն հայ էք:

— Այո, պարոն, գտարիւն հայ. պատասխանեց ժպտալով վերակացուն, որ միջհասակ, բարեղէմ և, ըստ երևութին, բարեխառն բնաւորութեամբ մի անձն էր:

— Օրուայ այս ժամին՝ որքան անհաճոյ է բաց ճանապարհը, նոյնքան հաճելի է ձեր այս պատշգամը, ուր ոչ միայն հովանի, այլ և հանգստանալու լաւ բազմոց ունիք...: Այս ասելով Կամսարեանը մօտեցաւ վերակացուն և ողջունելով նրան՝ նստեց մօտիկ դրուած, կաշեծածկ ու հնատարազ բազմոցի ծայրին:

— Հրամանքդ, երևի, Դիլիջան էք գնում, հարցրեց վերակացուն՝ մի կողմ դնելով լրագիրը:

— Կարծեմ, աւելի հեռու:

— Աւելի հեռո՞ւ:

— Թւում է թէ՛ այո.

— Ի՞նչպէս թէ թւում է. դուք չէ՞ք որոշած թէ՛ ո՞ւր էք գնում:

— Համարեա՞ թէ՛ չեմ որոշած:

— Հասկանում եմ. ուրեմն, ճանապարհորդում էք առանց որոշ դիտաւորութեան:

— Չէ, որոշ դիտաւորութիւն ունիմ:

— Ներեցէք որ հետաքրքրւում եմ... եթէ որոշ դիտաւորութիւն ունիք, ուրեմն պէտք է որ գիտենաք թէ՛ ո՞ւր և ինչի՞ համար էք գնում:

— Հենց բանն էլ այդ է որ՝ ինչի՞ համար գնալս գիտեմ, բայց ո՞ւր գնալս չըզիտեմ:

— Այդ հետաքրքրական է. յարեց վերակացուն ծիծաղելով և բազմոցի միւս ծայրին նստելով:

Այդ միջոցին տիրացու Մօսին բարձրացաւ պատըշ֊
գամը՝ բերելով իւր հետ պաշարի կապոցը և խորը գլուխ
տալով վերակացուին՝ կանգնեց Կամսարեանի առաջ:

— Օ՛ հօ, տիրացու, դ՞ուր էլ այստեղ, այդ սփնց է
պատահել, հարցրեց վերակացուն:

— Հա, ես էլ ըստի եմ. շորհակալ եմ, աղան բերաւ:

— Դէ որ եկել ես, այ էն սեղանը մօտ բեր, հրա՛
մայեց վերակացուն:

Տիրացուն ցոյց տուած սեղանը մօտեցնելով բազ՛
մոցին, բերած պաշարը դրեց վրան և հեռացաւ:

Կամսարեանը բացաւ կապոցը և սենեցածը շարե՛
լով սեղանի վրայ՝ խնդրեց վերակացուին մասնակցել
իւր «համեստ» ճաշին:

— Շնորհակալ եմ, արդէն ճաշել եմ, առարկեց
վերակացուն:

— Խնդրում եմ, որքան կարող էք. կամ գոնէ մի բա՛
ժակ գինի... այս ասելով՝ Կամսարեանը հանեց բաժակը
և սրբելով այն՝ լցրեց գինով և դրեց վերակացուի առաջ:

Վերջինս, որ կայարանում ապրելով սովորած էր
անխտիր ամեն ուղևորի ճաշին ու ընթրիքին մաս՛
նակցելու, երկար չընդդիմացաւ, և կամենալով, ինչպէս
ասում էր, իւր հիւրի ախորժակը բանալ, վայելեց մի
կտոր բան և գինու բաժակն զգուշութեամբ կիսելով՝
վերսկսեց ընդհատուած խօսակցութիւնը:

— Հա, այն էի ասում, ձեր պատասխանն ինձ
չափազանց հետաքրքրեց... այդ ի՞նչպէս է որ դուք
որոշ դիտաւորութեամբ գնում էք մի տեղ, բայց չըզի՛
թէ ո՞ւր էք գնում:

— Իսկապէս գիտեմ թէ՛ ո՞ւր եմ գնում, որովհե՛
տև գնում եմ մի որ և է հայ գիւղ, բայց թէ՛ ո՞ր
գիւղ, անձ այդ մէկը չըզիտեմ:

— Ներեցէք, խնդրում եմ, ես դարձեալ չեմ հաս՛
կանում:

Կամսարեանը ծիծաղեց և ապա սկսաւ համա՛
ռօտ կերպով բացատրել թէ՛ ի՞նչ է իւր դիտաւորու՛
թիւնը:

Վերակացուն, որ նորէն ձեռքն էր առել բաժակը,
որպէս զի գինու մնացորդը վայելէ, երիտասարդի բա՛
ցադրութիւնը լսելուց՝ իսկոյն վայր դրեց այն և բա՛
զուկները դէպի վեր պարզելով՝ բացականչեց.

— Փառք քեզ, Աստուած, վերջապէս գտնուեց
մէկը, որ մեր տրտունջը լսեց... ապա դառնալով Կամ՛
սարեանին՝ աւելացրեց. — Դուք, ուրեմն միակ մեծ
մարդն էք՝ մինչև օրս իրենց ուսումն աւարտած հայ
երիտասարդների մէջ: Թոյլ տուէք խմել ձեր պատուա՛
կան կենացը:

Այս ասելով՝ նա լցրեց բաժակը և մի առանձին
ոգևորութեամբ պարպեց այն միանուազ:

Կամսարեանին դիւր եկաւ վերակացուի գովա՛
սանքը. բայց կամենալով սրա ո՞վ լինելն իմանալ, որ՛
պէս զի ըստ այնմ որոշէ իւր ստացած գովասանքի
արժէքը, նա հարցրեց.

— Դուք էլ ուրեմն պատկանում էք ուսանողներին դէմ արանջող հայերի թուխն:

— Հապա:

— Չէի կարծիլ թէ այդ արտունջը կարտայայտուի, նա և, այսպիսի մի յետ ընկած կայարանում:

Վերակացուի դէմքի վրայ դառը ժպիտ խաղաց:

— Իսչո՞ւ չէիք կարծիլ, մի՞թէ այսպիսի տեղերում ապրող հայ մարդը սիրա ու զգացմունք չի՞ ունենալ:

— Ո՛չ, այդ չէի ուզում ասել... շփոթուեց Կամսարեանը:

— Հասկանում եմ. ուզում էիք ասել թէ՛ այս յետ ընկած կայարանում, այս անմաքրութեանց դէպերի կողքին, ձիաների ընկերութեան մէջ ապրող հայ մարդը՝ ինչո՞ւ պէտք է տեղեակ լինի մեր ցաւերին այնքան, որ նոյն իսկ արտունջ յայտնէ այդ ցաւերին դարման տանել կարող, բայց չըկամեցող երիտասարդների դէմ:

— Այո՛, համարեան, այդ էի ուզում ասել:

— Բայց ես, բարեկամ, ամենից աւելի իրաւունք ունիմ արանջալու. որովհետեւ հենց ինքս, մինն եմ եղել այն մարդկանցից, որոնք սիրով նուիրուել են հայ շինականին, կամենալով սովորեցնել նրան խեղճութեան դէմ կռուելու և մարդավայել կերպով ապրելու եղանակը... բայց իմ ունեցած կարողութիւնը՝ հաւասար չէր իմ ցանկութեան, ուստի չըյաջողեցայ համնել նպատակիս:

— Ի՞նչպէս, փող էր հարկաւոր և չունէիք:

— Ոչ, ես վարժապետ էի գիւղում և հենց այժ պաշտօնի շնորհիւ էլ մօտ լինելով գիւղացուն՝ կարո՞

զանում էի օգնել նրան իւր կարիքների ժամանակ, երբեմն խորհրդով, երբեմն գործակցութեամբ, և եթէ երկար մնայի այնտեղ, գուցէ կարողանայի որոշ օգուտ տալ: Գոնէ կը կրթէի մի ամբողջ սերունդ այնպէս, ինչպէս որ պէտք էր և այնուհետեւ այդ սերունդը ինքը կը շարունակէր իմ գործը...:

— Է՛հ լաւ, ինչո՞ւ երկար չըմնացիք:

— Որովհետեւ չէի կարող:

— Պատճառը:

— Մեր ուսումնարանական կեանքում նոր փոփոխութիւններ եղան, նոր օրէնքներ հրատարակուեցան: Վարժապետը պէտք է ցենզ ունենար, իսկ ես չունէի, որովհետեւ թեմական դպրոցն էի աւարտել: Այդ պատճառով, ահա՛, ինձ պաշտօնից արձակեցին:

— Եւ յետոյ:

— Յետոյ շատ դէս ու դէն ընկնելից վերջը եկայ և այս կայարանում չորքոտանիների վարժապետ դարձայ:

— Հասկանում եմ...:

— Ուրախ եմ որ հասկանում էք. ուրեմն և իրաւունք էք աւելիս ինձ՝ արանջալ այն երիտասարդների դէմ, որոնք չբարձր կրթութիւն ստանալով՝ կարողութիւն են ձեռք բերում ժողովրդին ամեն կերպ ծառայելու, և սակայն այդ ծառայութիւնից փախչում են վատաբար:

— Անշուշտ:

— Դէհ, հենց այդ իրաւունքի հիման վրայ էլ ես ձեզ մեծ մարդ եմ անուանում, որովհետեւ քաջութիւն էք ունեցել կեանքն արհամարհելով՝ այդպիսի վսեմ նպատակի նուիրել ձեզ:

— Շնորհակալ եմ, դուք ինձ քաջալերում էք. բայց ես դեռ ոչինչ չեմ արել, դեռ նոր եմ որոշում անել:

— Այդքանն էլ բաւական է. գործի սկիզբը՝ գործի կէսն է: Կամենալը՝ կարենալ է:

Կամսարեանը, որ մեծ հաճութեամբ էր լսում այս խօսքերը, յանկարծ պահանջ գրաց վերակացուի բաժակը նորէն լցնելու և պաշարի ընտիր մասերից մի քանի նոր կտոր նրա առաջը դնելու:

— Նեղութիւն մի՛ կրէք, ես շատ ուտողներից չեմ. ասաց վերակացուն և, միևնոյն ժամանակ, տապակած հաւի մի չաղ կտոր աղ ու պղպեղով համեմելով՝ փաթաթեց լոշի մէջ, ախորժակով վայելեց, ապա լցուած բաժակը մինչև վերջը դադարեցնելով՝ շարունակեց. — ճիշդն ասած՝ գեղեցիկ ու բազումաւոր միտք էք յղացել. ապրիք, եղբայր, ապրիք: Այդ օրինակն, անշուշտ, շատերին կը բերէ ձեր ետեկից...: Բայց ասում էք որ դեռ չէք որոշել թէ՛ սր գիւղում պիտի հաստատուիք:

— Այո՛, չեմ որոշել:

— Բայց վատ միտք չէ այն՝ որ ասում էք թէ՛ կը կամենայիք իջնել առաջին պատահած գիւղում:

— Ճշմարիտ:

— Այո՛, ի՞նչ հարկ կայ խտրութիւն դնել գիւղերի մէջ. դրանցից ամեն մէկում ապրում են մեր եղբայրներն ու քոյրերը: Ահա հենց բազաի բերմունքով ձեռնապարհի վրայ գտնուող առաջին հայ գիւղը ամենից աւելի կարօտ է ձեր խնամքին:

— Ո՞րն է դա:

— Չիբուխուն. մեր հին ծապտախիլը:

— Այո՛, նրա մասին լսեցի ես տիրացուից:

— Պէտք է տեսնէք, եղբայր, թէ՛ սրբան բան կայ այդպիսի մի խեղճ գիւղում անելու: Հաւատացած եմ որ շատ պիտի յուզուիք ու վշտանաք՝ տեսնելով այդտեղի ձեր ազգակիցների դրութիւնը և միևնոյն ժամանակ յիշելով անտարբերութիւնն այն մարդկանց, որոնք կարող էին օգնել գիւղացուն իւր վիճակը բարելոքելու, բայց չարին, որովհետև չըկամեցան:

— Կարծում եմ որ այդ ամենը պիտի ցաւեցնէ ինձ:

— Եւ, մի և նոյն ժամանակ, սգևորէ ու ստիպէ գործել:

— Անշուշտ:

— Եւ երևակայեցէք թէ՛ որպիսի քաղցր երանութիւն պիտի գգաք մի օր, երբ ձեր աչքով տեսնէք այն ամենը, ինչ որ արել էք, երբ տեսնէք ամային ձեր ձեռքով շէնացած, աւերակը վերականգնած, խեղճութիւնը խնամուած, տգիտութիւնն ու նրանից յառաջացող չարիքները գիւղից հալածական... երբ տեսնէք թէ՛ թշուառ մի ժողովրդի մատաղ սերունդը ուսուցել ու կրթել էք այնքան որ նա այժմ կարողանում է սեփական աշխատութեամբ իւր վիճակը բարելոքել, իւր ջանքն ու քրտինքը արդիւնաւոր գործադրել:

Այս եղանակով երկար խօսելով վերակացուն, այնպէս էր քաջալերել ու ոգևորել Կամսարեանին, որ երբ Մօսին եկաւ յայտնելու, թէ կառքն արդէն լծուած, պատրաստ է, նա վեր թռաւ տեղից իսկոյն և, կարծես

շտապելով որ ժամ առաջ հասնէ որոշուած գիւղը և սկիզբը դնէ իւր անունը փառաւորող «մեծ գործին», հարցրեց տիրացուին.

— Գիտե՞ս, բարեկամ, որ ձեր գիւղն եմ գալիս:

— Չէ, աղա, գիտում չեմ, պատասխանեց տիրացուն:

— Այո՛, գալիս եմ ձեր գիւղը և, գուցէ, այնտեղ էլ ապրեմ:

— Վա է, զարմացաւ տիրացուն:

— Ի՞նչ վա է, գիւղում ապրել չի՞ լինիլ. մէջ մտաւ վերակացուն:

— Խի՛ չի ըլիլ, հրէն աշխարքի կէսը գեղումը չի ապրում. ամա դէ, ասըմեմ, աղան քաղաքի սովոր մարդ ա, գեղումը ո՞նց կարայ ապրիլ:

— Կարող եմ, ինչո՞ւ չեմ կարող, հաստատեց կամսարեանը:

— Դէ որ կարող ես, էնա լաւ կըլի էլի... միան ամօթ չըլի հարցնիլը, խի՛ ես ուզում գեղումն ապրիլ:

— Նրա համար որ կարողանայ ձեզ օգնել, ձեզ բաղաւորացնել, բացաղբեց վերակացուն:

Տիրացուն թէպէտ այդ բացաղբութիւնից էլ բան չըհասկացաւ, բայց կամենալով մի քաղաքավարի խօսք ասել, «բարով ա գալի, հազար բարով, Աստուած թող սրտի խորհուրդը կատարի», ասաց ու հեռացաւ:

— Խեղճ մարդիկ... չեն ուզում հաւատալ թէ՛ կը գանուին աշխարհում անձինք, որոնք երբ և իցէ՛ կը հետաքրքրուին իրենց կեանքի դառնութիւններով և

կըկամենան օգնել իրենց՝ առանց շահախնդրութեան, ասաց կամսարեանը, գրեթէ յուզուած:

— Եւ իրաւունք ունին. որովհետեւ կեղեքիչներից ու վաշխառուներից գատ՝ դեռ մինչև այսօր չեն տեսել ոչ ոք ին իրենցմով հետաքրքրուելիս, նկատեց վերակացուն:

— Որ այդպէս է, մենք կը փոխենք դրանց համոզումը և կստիպենք հաւատալ՝ որ շարերից գատ, կան աշխարհում նաև կարեկից մարդիկ:

— Գնացէք և համոզեցէք, Աստուած թող օրհնէ ձեր ճանապարհը, ասաց վերակացուն և սեղմելով երկտասարդի ձեռքը, ճանապարհ դրաւ նրան մինչև կառքը:

Մի քանի վայրկեանից Օվանէսի ձիերը թռցնում էին կամսարեանին դէպի Դիլիջանի բարձրութիւնները:

Ը.

Արևը մայր մտնելու մօտ՝ մեր ուղևորները հասան ամառանոցի հոշակ վայելող Դիլիջան աւանը:

Այնտեղ կամսարեանը, Օվանէսի ցուցմունքով, հիւրանոցի անուն կրող մի տան մէջ գիշերային հանգրատարան գտնելուց յետոյ՝ ելաւ փոքրիկ աւանը դիտելու: Փոշոտ խճուղու աջ ու ձախ կողմերում կառուցած երկու կարգ քարաշէն աները, որոնք աւանի ամբողջութիւնն էին կազմում և որոնց մէջ ապրում

էին ամարանոց եկողները, հաճելի սպաւորութիւն չարին Կամսարեանի վրայ: Նա խակոյն յիշեց Բորժոմը իւր գեղեցիկ վիլլաներով, մաքուր փողոցներով, ընդարձակ պարկերով, ջրերի առատութեամբ և առաւել ևս, բնակիչների փայլուն արտաքինով ու գրաւիչ նիստ ու կացով և եկաւ այն համոզման որ Դիլիշանը միայն հասարակ մանկանացուների համար կարող է ամարանոց համարուիլ:

Բայց երբ՝ խճուղին երկուստէք փակող շինութիւններից հեռանալով՝ բարձրացաւ դէպի աւանի ձախակողմը, նրա առաջ բացուեցաւ մի գեղանկար հորիզոն, որ ամփոփում էր իւր մէջ Ադսանի ձորահովիտը՝ իւր կարկաչանոս գետակով, դալար արօտներով, ոսկեփայլ արտերով, իսկ մի փոքր հեռուով՝ խաղաղանիստ գիւղի միաշար տնակներով և նրանց առջև կարգով տարածուող կանաչագարդ բանջարանոցներով: Իւր կանգ առած տեղից քիչ հեռու՝ սկսւում էր եղևնիների խիտ անտառ, որ գնալով տարածւում էր դէպի հեռաւոր լեռների կատարները, որոնց այդ վայրկենին ոսկեգօծել էին արևի վերջին շողերը: Զորահովիտը եզերող դիմացի բլուրներից, որոնց ետևը շուտով պիտի թագչէր արևը, փչում էր ախորժ գեփիւն՝ բերելով իւր հետ կենարար մի գով՝ սոգորուած լեռնային օդի, դալարի և ծաղիկների անուշ բուրմունքով:

Կամսարեանը սկսաւ լիքը կրծքով շնչել լեռնային թարմ օդը և ինքն իրեն խոստովանել որ փոքր առաջ արած իւր համեմատութեամբ մեծ սխալ է գործել Բորժոմը գերադասելով Դիլիշանից: Որովհետև նա

այժմ տեսնում էր՝ որ եթէ առաջինում արհեստական է փաթեամ, վերջինում, ընդհակառակը, գերազանց է բնականը: Եւ այդ կարծիքի վրայ նա հաստատուեց աւելի, երբ լեռնալանջից իջնելով՝ մտաւ նորէն աւանը և փոստային կայարանի առաջ բղխող յորդ ու սառն աղբիւրից իւր ծարաւը յագեցրեց: Այդպիսի անոյշ ու բարեհամ ջուր Բորժոմն, ի հարկէ, չէր տեսած իւր օրում, ինչպէս և նրա նեղ, կարծես պատնիշափակ, ցերեկը սօթով, իսկ գիշերը՝ խոնաւութեամբ լի խորածորը չէր շնչել երբէք այն թեթև ու անոյշ սղոխն ու հովերը, որոնք գիշեր ու ցօրեկ գուրգուրում էին Դիլիի առոյգ լեռնալանջերը:

Բայց արի, տես որ հենց այս անմահական աղբիւրից քիչ հեռու, փոստային կայարանի և մասնաւոր աների դէպի ձորահովիտը հանող բակերում՝ բլուրի պէս դիզուած էին տարիների ընթացքում հաւաքուած աղբն ու անմաքրութիւնը, որոնց գարշահոտութիւնը ապականում էր ամարանոցի շրջակայ օդը և դրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում:

— Ահա, թէ սրտեղ է հարկաւոր մեր միջամտութիւնն ու ազդեցութիւնը... բնութիւնը զարդարել է մեր երկիրը իւր լաւագոյն հարստութեամբ, իւր քնքոյշ գեղեցկութիւններով և սակայն մարդկային անձաշակ սղիտութիւնը այլանդակել է նրան անխղճօրէն: Ժամանակ է, արդարև, որ մենք մտնենք ամեն անկիւն և սղիտութեան բուռները աւերենք ամեն տեղ... մտածեց Կամսարեանը և իւր նուիրումը աւելի ևս կշիռ ստացաւ իւր աչքում:

Հետևեալ առաւօտ՝ դեռ արևը չըծագած՝ Կամսարեանը նստած էր Օվանէսի կողքում, որ հանգիստ սուրում էր «Նրևանեան» խճուղիով: Վերջինս Դիլիշանի հարաւ-արևմտեան կողմից սկսելով՝ անցնում էր Շամլուզ գետակի ուղղութեամբ՝ Մայմեխ լեռան ստորոտը ծածկող անտառների միջով և ապա հեռագհեատ լեռան լանջերը բարձրանալով՝ պիտի հասնէր մինչև նրա կատարը: Արևը դեռ նոր էր Մայմեխի բարձունքը վառում, երբ մեր ուղևորները անցնում էին նրա ստորոտով: Առաւօտեան գեփիւտը, որ հով էր բերում սարի լանջերից, մեղմով շարժում էր անտառի ծառերը: Նրանց խուլ շրջիւնը խառնուելով Շամլուխի քաղցր խոխոջի և թռչնիկների այգածին ճուռողիւնի հետ՝ կազմում էր հաճոյական մի ներգաշնակութիւն, որ խանգարւում էր երբեմն կառքի կոշտ դղրդիւնով:

Երբ ուղղադիր ծմակներն անցնելուց յետոյ՝ սկսան դէպի լեռնալանջը բարձրանալ և Շամլուխը ծածկուելով անտառի խորքում՝ սկսաւ իւր խոխոջի խուլ ձայնով ուղեկցել ճանապարհորդներին, տիրացու Մօսին, որ դարձեալ նստած էր կառապանի կողքին, անհրաժեշտ համարեց յիշեցնել «աղին» իւր երէկուայ դիտողութիւնը:

— Միտդ ա էն, որ ասում ի թէ՛ Դիլիշանայ դէսի ճամպէն էվելի սիրուն ա, քանդ դէսինը: Դէ հմի մտիկ տու, տես, ըսկի քու օրումը ըսենց տեղեր տեսել ես:

Կամսարեանը, որ արդէն գրաւուած էր շրջապատող տեսարաններով, տիրացուի «դէ հմի մտիկ տու»

խօսքի վրայ, յետ նայեց և տեսաւ, արդարև, մի նոր, ակնապարար տեսարան:— Իրենք այդ միջոցին գտնուում էին որոշ բարձրութեան վրայ, իսկ տափարակի ծմակները մնացել էին վաբ: Բարձրից նայողը տեսնում էր միայն նրանց կատարները, որոնց կանաչը վառուել էր արևից երփներանգ գոյներով: Այդ վառուող մակերևոյթը նմանում էր նոյն վայրկենին լայնածաւալ մի ծովակի, որի յեղյեղուկ ալիքները փոխարինում էին ծառերի հովից շարժուող կատարները: Այդ տեսարանը այնքան էր սիրուն ու գրաւիչ որ կամսարեանը տեղը փոխելով՝ նստեց գիմացի նստարանի վրայ՝ որպէս զի կարողանայ աւելի դիւրութեամբ նայիլ ու զմայլուիլ գեղեցիկ հեռանկարով:

Չընայելով որ խճուղին սարի լանջովն էր բարձրանում, այսուամենայնիւ, ծառերը հովանաւորում էին նրան: Մեծ մասամբ նա անցնում էր բնական ծառուղիների միջով, որոնց, երբեմն, փոխարինում էին նաև ժայռերի շարքեր: Իսկ գրանց, իւր հերթում, հովանաւորում էին դարձեալ հինաւուրց ծառեր, որոնք բուսած լինելով ժայռերի վերևում, այդտեղից իրենց սաղարթախիտ ոստերը ձգում, տարածում էին ճանապարհի վրայ, որն յաճախ անցնում էր և՛ սիգաւէտ բարձունքներով, ուսկից տեսարանները բացւում էին աւելի շքեղ ու ընդարձակ: Այդպիսի գիրքերից երևում էին Մէլզան լեռան անտառապատ լանջերը և նրա մերկ, ծառազուրկ կատարը, որ, սակայն, պատած էր բաց կանաչ թաւիշով: Նրան հետևում էին ուրիշ շատ լեռներ, որոնք գազաթների բարձրութեամբ մէկը միւսին գերա-

զանցելով հորիզոնը դարձնում էին վսեմ ու փառայեղ:

— Հրէն Սիսիանայ սարերը. բացազանչեց յանկարծ տիրացուն, չըժուժալով, կարծես, որ ուսումնական մարդը այդ վեհափառ տեսարանների առաջից անցնում էր լուռ ու մունջ:

— Որո՞նք են, հարցրեց Կամսարեանը՝ նստելով նախկին տեղը:

— Հրէն, ա՛յ, էն որ կատարնին մշուշակալած՝ լեյլ թէ (կարծես) լաղ են անում (ծաղրում են) մնացած սարերի վրայ. տենում չէս:

Այս խօսքերով ցոյց տուաւ տիրացուն Սիւնեաց աշխարհի կապուտակ լեռները, որոնց կատարները, կարծես, ծրարում էին ամպերի մէջ:

Կամսարեանը դիտում էր լեռներով ծածկուած այդ հորիզոնը խորին հիացմունքով:

— Քիչ վախտից եղբ էս ա հւասարիլ տենք նրանց, չուն էս ճանապարհը բանցրանում ա Մայմեխը վեր տանըհինգ վերստ, աւելացրեց տիրացուն:

Բայց նրա «քիչ վախտը» շատ էլ շուտ չանցաւ, անթիւ կեռամաններով վերելքը տևեց մօտ երկու ժամ:

Եւ սակայն Մայմեխի ամենաբարձր լանջերին հասնելուց, արդարև, ուղևորներին թւում էր թէ՛ իրենք հաւասարուել են Սիւնեաց լեռների բարձրութեան:

— Տենում էս, աղա, հրէս հաւասարուեցինք: Բա էլ Սիսիանը խի՞ ա լաղ անում մեր Մայմեխի վրայ՝ զուարճախօսեց տիրացուն:

— Ձենք հաւասարուել, քեզ այդպէս է թւում, պատասխանեց Կամսարեանը:

— Ո՞նց թէ հաւասարուել չենք. հրէս քթիս թուշովը (ուղղութեամբ) որ մտիկ եմ տալի, ասես, իմ գլուխն ու Սիսիանայ գլուխը մի չուանի են դրած:

— Այդպէս կերևայ միշտ հեռուից, բայց եթէ անցնես քո և դիմացի սարի մէջտեղը գտնուող տարածութիւնը, կը տեսնես որ սարը հետզհետէ բարձրանում է, բացաղբեց երիտասարդը:

— Դհէ (այդպէս) բան էլ կ'ա՛յ:

— Հապա՛:

— Բա էդ խի՞ դհենց ա ըլում, հետաքրքրուեց տիրացուն:

— Նրա համար որ երկիրը կոլոր է և այդ պատճառով էլ քանի սարը հեռու է լինում, այնքան էլ նա փոքր է երևում. որովհետև հեռուից մենք տեսնում ենք միայն նրա վերին մասը: Իսկ յետոյ՝ որքան մօտենում ենք, այնքան նա մեծանում է, որովհետև հետըզհետէ տեսնում ենք նաև միջի և ապա վարի մասերը:

Տիրացուն այս բացաղբութիւնից ոչինչ չընտելացաւ, բայց երկրի կոլոր լինելովը հետաքրքրուեց:

— Ատում ես երկիրը կլոր ա՛:

— Հա՛:

— Եանի (այսինքն) ո՞նց ա կլոր, տափակ թարախի (խան) նաման, թէ՛ կլոր ձմերուկի:

— Կոլոր ձմերուկի:

— Բա էդ ո՞նց կըլի, զարմացաւ տիրացուն:

— Այդպէս է, կրկնեց Կամսարեանը:

— Ա՛ խի՞, գիտօ՞ւմ չես որ դհենց ա՛. մէջ մտաւ Օվանէսը:

Վերջինի միջամտութիւնը գրգռեց տիրացուին:

—Սրան մտիկ առւ. լէյի ինքը գիտում ա, նկատեց նա խէթ խէթ նայելով կառապանին:

—Բա գիտում չեմ... վստահօրէն հարցրեց Օվանէսը:

—Իէ որ գիտում ես, ասա տեսեմ ո՞նց ա կլոր:

—Հրէն աղան ասեց էլի, ձմերուկի նման կլոր ա:

—Ա, շնչ, ձմերուկի նման որ կլոր ըլի, բա թոյ չի լիլ (չի գլորուիլ) ծովն ընկնիլ:

—Ես ի՞մ... տարակուսեց Օվանէսը, տեսնելով որ նեղ տեղը լծուեցաւ:

Կամսարեանը ծիծաղեց:

—Խի՞ ես ծիծաղում, աղա, սո՛ւա եմ ասում, դարձաւ նրան տիրացուն:

—Ա՛յ տղա, դու կարո՞ղ ես քո բերանի կամ աչքի մէջն ընկնել, հարցրեց Պետրոսը:

—Բա ո՞նց կարամ ընկնիլ իմ բերանը:

—Հապա, ծովերն էլ գտնուում են երկրի վրայ. երկիրն ի՞նչպէս կարող է նրանց մէջն ընկնել:

—Երկրի վրայ ծովեր կան, գիտում եմ, հրէս միւնրն էլ մեր առաջին, Սևանայ ծովն ա, ամա դէ ես էդ ծովերը չեմ ասում:

—Հապա ո՞րը:

—Ասումեն, աշխարհը որ վերջանում ա, դէնը շատ մենծ, անտակ ծով կայ, որ ըսկի ձոնդ (ծայր) չունի: Հմի որ ասում ես՝ աշխարհը կլոր ա, ես էլ ասում ես՝ բա խի՞ չի թոյ ըլում էդ ծովն ընկնում:

Կամսարեանը նորէն ծիծաղեց և ապա տեսնելով

որ տիրացուն տարակուսած նայում է իրեն, սկսեց մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ նրան երկրի, լուսնի ու արևի կազմութեան և նրանց շարժումների մասին:

Մօսին ուշադրութեամբ լսում էր նրան և երբեմն երբեմն գլուխը շարժելով ասում.

—Հիէ տես ինչէ՞ր ա ըլէ աշխարում է... փառքդ շատ ըլի, Աստուած—ջան, բա էս խի՞ մեզ ըսենց հայվան ես ստեղծել:

—Ա՛, Մօս, ես ընենց եմ՝ մացել թէ՛ դու էդ բաները չիմ (բոլորը) գիտում ես. բա էլ ընչի՞ վարժապետ ես որ բան չես՝ մանում, նկատեց կառապանը շարախնդութեամբ:

—Ա՛, ես սրդիան՝ մանամ, ես հու խալիս (խակահան) վարժապետ չեմ, խոստովանեց տիրացուն իւր տկարութիւնը:

—Բա խի՞ ես ըխանց կարգացնում:

—Ընդուր որ կարգացրածս իմանում եմ:

—Ի՞նչ ես կարգացնում, հեռաքրքրուեց Կամսարեանը:

—Ի՛նչ որ ձեռք ա տալիս:

—Օրինակ:

—Օրինակ, Սաղմոս, Պարզև—Մանկանց, Մայրենի լեզու, Աւետարան, Եփրեմ—խորի...:

—Առաջ ո՞րն ես կարգացնում:

—Առաջ «այբ-բենի» տետրը. եղուց ով ինչ գիր բերում ա, նրանից էլ սկսում եմ:

—Ի՛նչպէս. ամեն մէկը մի ջոկ գրքի վրայ է կարդում:

— Բն:

— Ինչո՞ւ ամենքին մի տեսակ գրքի վրայ չես կարդացնում:

— Էդ ո՞նց կըլի: Ընենց մարդ կայ որ տանը սաղմոս ունի. ընենց մարդ էլ կայ որ Պարզեմանկանց ունի. ես չէ, Աւետարան, ես Մայրենի լեզու, բերում ա հուս առում. վարժապետ, քե մատաղ, ըելին էս գիրը կարդացրու, հազիր տանն ունենք, մին էլ վեր չըկենամ գնամ Դիլի, ես Րևան, նոր մէկէլանց գիր առնեմ. աղքատ մարդ եմ. կարալ չեմ գրի փող տալ...: Ես էլ վեր եմ ունում էն գիրը կարդացնում:

— Հապա քո աշակերտները ոչինչ չեն հարցնում քեզ երկրի, ծովերի կամ այլ այդ տեսակ բաների մասին:

— Պատահում ա որ հարցնում են:

— Էհ, դու ի՞նչ ես պատասխանում:

— Ինչ որ 'մանում եմ:

— Իսկ դու բան չես իմանում:

— Իէ չիմացած վախան էլ տողաշարով (քանոնով) գլխին տալիս եմ հուս առում. «ձէնդ կարի, դասդ սըւորի, էդ քու ի՞նչ 'մանալու բան ա, որ հարցնում ես»: Էն ա խեղճն էլ գլուխը քաշ ա գցում գիրը կարդում:

— Այ, քու հերը լիս դառնայ, ասիլ վարժապետը դու ես, որ կաս, նկատեց Օվանէսը ծիծաղելով:

Բայց այս անգամ արդէն կամսարեանը չըծիծաղեց. նա սկսաւ մտածել լսածների մասին և տեսաւ որ դրանք շատ ցաւալի են: Այս առթիւ, գուցէ, նա մինչև անգամ, տխրէր, եթէ մի փոքր աւելի խորա-

սուզուէր իւր մտածմունքների մէջ, եթէ խորհէր այն մասին թէ՛ ի՞նչ թշուառ դրութեան մէջ պիտի գտնուի մի ժողովուրդ, որի առաջաւոր մարդը — տիրացուն, կամ վարժապետը խարխափում է այս աստիճան տգիտութեան մէջ: Բայց տեսարանների յանկարծական փոփոխութիւնը նորէն գրաւեց նրա ուշադրութիւնը: Օվանէսի կողքը բերում էր այժմ Մայմեխի կատարը և հին Գուգարաց սահմանն անցնելով՝ մտնում Միւնեաց գաւառամասը: Այստեղ արդէն հետզհետէ նուազում էին անտառները և սպառում մացառուտը. իսկ դրանց փոխարինում էին սիգաւէտ լեռնադաշտեր և գեղեցիկ մարմանդներ, ուր խոտը գունաւորուած երփնեբանդ ծաղիկներով՝ ծածանում էր կանգնաչափ բարձրութեամբ: Լեռնային հովերը խաղում էին այդ դաւարազուարճ մարգերում քաղցր ու մեղմաշունչ. իսկ արևի շողերը ոսկեգօծում կանանչը ոչ թէ նրանց ջերմացնելու, այլ փայլեցնելու շափով: Երիտասարդը իւր օրում չէր տեսած այսպիսի ճոխ ծաղիկ ու կանաչ: Նա հիացած նայում էր աջ ու ձախ և ինքն իրեն մտածում.

— «Ափսոս, ինչո՞ւ բնութիւնը այսպիսի բարձրութեան վրայ է հանել այս հրաշալի արօտները: Միթէ գեղջուկի հօտերն ու նախիրը կարող են երբ և իցէ օգտուել նրանցից»: Բայց հազիւ անցան մի քանի ըուպէներ, և ահա նա տեսաւ որ հեռում խոտը շարեշար հարել ու փռել են գետնին՝ ցամաքեցնելու համար:

«Ուրեմն այս բարձրութեան վրայ էլ մարդիկ են սպրում» մտածեց նա և իսկոյն յիշեց իւր աշխատա-

սէր և ճակատի քրտինքով ապրող» ազգակիցներին:

Մի փոքր էլ առաջանալով՝ նա տեսաւ խմբակներ մարդկանց ու կանանց, տղաների և աղջկերանց, որոնցից ոմանք լեռնալանջերի վրայ, միւսները՝ լեռնահովտում, կամ ցամաքած խոտն էին հաւաքում, կամ սայլերի վրայ բարձում, իսկ աւելի փոքրիկները՝ խաղում ու վազվզում էին կանաչ արօտներում:

Երիտասարդը հետաքրքրութեամբ դիտում էր այդ շարժուն բազմութիւնը և աշխատում ծանօթանալ այդ տեղի հայոց տիպերին: Բայց սրբան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ տիրացուն բացադրեց՝ որ դրանք հայեր չեն, այլ մալականներ—Միմեծնովկայ գիւղից:

Իրաւ է, Պետրոսը գիտէր որ Սեմեծնովկան առաջիկայ կայարանն է. և Սիւնեաց սահմանակից այդ սարերի վրայ՝ կարելի էր երևակայել մի փոստային կայարան. բայց մալականի մի բազմամարդ գիւղ՝ նա չէր սպասում տեսնել: Եւ ի՞նչ հրաշալի հովիտներ, մարդեր ու մարմանդներ էին շրջապատում այդ գիւղացիներին. ի՞նչ շքեղ արօտներ, ի՞նչ յորդառատ աղբիւրներ, որոնց մասին պատմում էին Մօսին ու Օվանէսը: Դա, արդարև, մի լեռնային դրախտ էր:

Երբ նրանք հասան կայարանին Կամսարեանը հաճոյքով սկսաւ դիտել աւանը, իոր աչքի էր ընկնում իւր լայնադիր փողոցով և նրա ուղղութեամբ շինուած կոկիկ, մաքուր ու սպիտակ տնակներով: Դրանցից շատերի առաջ գտնւում էին փոքրիկ ծաղկոցներ, ուր նարգիսի և նարնջածաղկի հետ միասին փթթում էր մայրսեան վարդ, թէպէտ յունիսը վերջանալու վրայ

էր: Տներից քիչ հեռու ձգւում էին բանջարանոցներ, կաղամբի և գետնախնձորի ցանքեր ու արևածաղկի ընդարձակ ածուներ: Աւելի հեռուն՝ տարածւում էին գիւղացիների հարուստ արտերը: Աւանի բնակիչները՝ շրջապատող բնութեան նման՝ ուրախ, զուարթ և կենդանութեամբ լի մարդիկ երևացին: Կամսարեանը սիրով պատասխանեց նրանցից մի քանիսի քաղաքավար ողջունին և սիրով էլ կը խօսէր նրանց հետ, եթէ Օվանէան իւր ձիերի շնորհքը մալականներին ցոյց տալու նպատակով՝ չըթոցնէր նրանց գիւղի միջով, ինչպէս արագաթե թռչունների:

Եւ որովհետև Պետրոսը փափագում էր Սեանը վայրկեան առաջ տեսնել, ուստի Օվանէսի եռանդը չուզեց չափաւորել: Նա գոհ եղաւ Միմեծնովկայի վրայ մի վերջին հայեացք ձգելով և ինքն իրեն մտածելով. — «Եթէ սա է «գիւղ» կոչուածը, ապա ուրեմն, կարելի է թէ ապրել և թէ գործել սրա մէջ»:

Միմեծնովկայից ճանապարհը սկսում էր փոքր ինչ ցածրանալ, իսկ բնութեան շքեղութիւնները նուազում էին: Մի քանի կանաչկոտ բլրակներ անցնելուց յետոյ՝ երևացին Զիբուխուլի աղքատիկ ցանքերը՝ հարուստ սևահողի վրայ: Կամսարեանը հենց նոր սկսել էր դիտել նրանց և զարմանալ այս տարօրինակ հակադրութեան վրայ, երբ մի նոր ու շքեղ տեսարան գրաւեց նրա ուշադրութիւնը: Նրա աչքերի առաջ բացուեցաւ յանկարծ մի բաց-կապուտակ դաշտ, որին նա սկզբում հորիզոնը փակող մշուշ կարծեց: Սակայն տիրացուի «ահա՛ ծովը» բացականչութիւնը սթափեցրեց

նրան: Նա, ուրեմն, հասել էր Հայաստանի բնութեան հրաշալիքներից մինին – պատմական Գեղամայ ծովակին: Եւ եթէ սկզբում չըկարողացաւ գուշակել թէ՛ իւր տեսածը, իրօք, Սեանն է, նա իրաւունք ունէր. որովհետեւ հեշտ չէր հաւատալ թէ՛ լեռների այդ բարձրութեան վրայ կարող է գտնուիլ այսքան ընդարձակ մի լիճ, որին, իրաւամբ, ծովակ անուն են տուել: Իրաւ է, Պետրոսը աշխարհագրութիւնից գիտէր որ Անտեան լեռները, Ալպեան ու Զուխարական բարձրաւանդակները շատ այդպիսի գեղեցկութիւններ ունին, այսուամենայնիւ, նման շքեղութիւն իւր հայրենիքին յատկացնելը չափազանցութիւն կը համարէր: Բայց այժմ, ահա, նա տեսնում էր Սեանը իւր առաջ փոռած, տարածուած 6—7000 ոտք բարձրութիւն ունեցող լեռների վրայ: Եւ ի՛նչպէս չըհրճուէր, ի՛նչպէս իւր հայեացքը չըյափշտակուէր նրանով...: Կամսարեանը բարձրացաւ իւր նստարանից և կառքի մէջ կանգնելով՝ սկսաւ գիտել ծովակի սիրուն մակերևոյթը, որի կապուտակը շարունակ փոխւում էր՝ առնելով երբեմն պարզ փրփուզի, իսկ երբեմն գորշ մշուշի գոյն, նայելով թէ կառքն ի՛նչ ուղղութեամբ էր ընթանում: Այսպէս բաւական տեղ նա կանգնած էր կառքում, մինչև որ վերջինս սկսաւ մօտենալ Զիբուխլուին: Այստեղից էլ ծովակը թւում էր անշարժ և միապաղաղ: Միայն նրա պայծառ հայելու վրայ նշմարւում էին հետզհետեւ բաց-կապտագոյն ժապաւէններ, որոնք հոսանուտի սահմաններն էին ակօսում: Շուտով երեաց և Սեանի՛ կղզին, որի տեսքը հեռուից թէպէտ չոր ու ցամաք՝

այսուամենայնիւ, Կամսարեանին հետաքրքրեց յուզելու չափ. որովհետեւ անցեալից յիշեցրեց նրան դէպքեր, որոնք կապ ունէին Սեան անուան հետ և որոնց մասին նա մտածել էր յաճախ:

Մինչդեռ երիտասարդը սրտայոյզ դիտում էր կղզեակին ու ծովը և նրանց շրջապատող լեռների տեսարանը, Օվանէսը կանգնուցրեց կառքը և հարցրեց.

- Ա՛ դա, որ դի տես վեր գալ (իջաւել):
- Ի՛նչպէ՛ս թէ վեր գալ, զարմացաւ Կամսարեանը:
- Բա ըստի չէ՞ս մնալու:
- Այստեղ ինչո՞ւ մնամ, Զիբուխլու պիտի գնանք:
- Սրանէ լաւ Զիբուխլու կըլի՞, նկատեց կառապանը ծիծաղելով:

— Ո՞րը, սա՛, հարցրեց Կամսարեանը, զարմացմամբ շուրջը նայելով:

— Հա՛, աղա՛, սա ա մեր գեղը, հաստատեց տիրացուն՝ ինքնագոհ ժպտալով:

Կամսարեանը յանկարծակի եկածի նման մի վայրկեան մնաց անխօս. ապա նորէն սկսաւ իւր շուրջը նայել՝ տեսնելու համար այն, ինչ որ տիրացուն «գիւղ» էր անուանում:

Տեղն, ուր կանգ էր առել կառքը, շինամիջով անցնող խճուղին էր, որ դեղնագոյն ժապաւէնի նման ակօսում էր գիւղամիջի սեահողը: Թւում էր թէ՛ դա միակ մաքուր տեղն է այն բոլոր տարածութեան վրայ, որ գիւղի շրջագիծն ամփոփում էր իւր մէջ: Վասն զի, միւս բոլոր տեղերում, գետինը ծածկուած էր աղբի շերտերով և աթարի (քակոր) փշուրներով, որոնցից նա խանձուել,

սև գոյն էր առել: Այդ ընդարձակ աղբիւսի վրայ՝ փողոցները փոխարէն՝ ընկած էին ինչ որ ծուռ ու մուռ անցքեր, իսկ դրանց երկու կողմերում ցրուած էին անկարգ ու շեղ ուղղութեամբ թմբածե, հողածածկ բարձրութիւններ, որոնց մի կողմերը կպած լինելով գետնին, միւսները բարձրանում էին խանձաքարերով շինուած ցածուն պատերի վրայ: Դրանք գիւղացիների տնակներն էին, որոնք սակայն չէին նմանում մարդկային բնակարանների: Որովհետև մեծ մասամբ գուրկ էին պատուհաններից, իսկ ելումուտի համար ունէին մի մի հատնեղ, ցածուն դռնակներ, որոնցից անցնելու համար՝ պէտք էր անշուշտ կորանալ: Լոյսն այդ տնակները ստանում էին երդիկներից որոնցից ամեն կտուրի վրայ գտնւում էր մի հատ: Այդ տուն համարուող խորշերից ոչ մէկի առաջ չէր երևում կանաչի նշոյլ: Իսկ գիւղի ամբողջ տարածութեան վրայ չըկար մի հատ ծառ և ոչ իսկ մի թուփ: Դրանց փոխարէն աչքի էին ընկնում գարշահոտ քակորի բլրակներ, որոնցից ամեն տուն ունէր մի կամ երկու հատ՝ փառքով բազմեցրած սեփհական բակում, կամ կողքին գտնուող ազատ գետնի վրայ:

Գիւղի ընդհանուր տեսարանը այնպիսի տխուր ու վնասեցուցիչ ազդեցութիւն էր անում որ կամսարեանը քիչ առաջ անցած Սեմեօնովկան սրահետ համեմատելով՝ չէր ուզում հաւատալ թէ՛ ինքն իսկապէս գտնւում է գիւղի մէջ, այն էլ Չիբուխլուի, որի անունն այնքան անզամ լսել էր ճանապարհին: Ուստի իւր տարակուսանքը փարատելու համար երկրորդ անգամ հարցրեց թէ՛ իրօք, սա՛ է Չիբուխլուն թէ՛ ոչ:

— Սա՛ ա, բա՛: Հրէն, չէս տեսում մեր Աստուածածինը՞. հին եղցի ա. մի քիչ դէնն էլ մեր դերի (քահանայի) տունն ա. հրէն ինքն էլ մրօքը չալին տալէն ցան (աթար) ա դարսում: Էն կուսինն էլ տանուտէրինն ա: Ըստիան էլ մի քիչ որ աշմիշ ըլենք, շէնի աղբիւրն ա, լաւ ջուր ունի, շատ, Մարալինջի տակիցն ա գալիս: Մի քիչ դէնն էլ Բաղչայն ա: Ծովն էլ հու ամեն օր առաջին ա: Մին խօսքով լաւ գեղ ա. տեսնիրու բաներ շատ ունի. հրէդ ման կըգաս կը տեսնես:

Կամսարեանը լսում էր տիրացուին և աչքերը մեքենայաբար դարձնում դէս ու դէն, առանց, սակայն, ուշադրութիւն դարձնելու նրա ցոյց տուած տեղերի վրայ: Որովհետև այդ վայրկենին նրան զբաղեցնում էր այն միտքը թէ՛ եթէ, իրաւ, սա՛ է հայ գիւղացու բնակավայրը, ապա հազիւ թէ հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ ու գործել: Եւ սակայն, չնայելով այդ կանխահաս վնասութեան, նա որոշեց մտնել այդ «գիւղ» կոչուած աւերանոցը, գոնէ, որոշ չափով նրան ճանաչելու և ուսումնասիրելու համար:

Տիրացուի խորհրդով և կամսարեանի համաձայնութեամբ Օվհանէսը կառքը քշեց դէպի տանուտէրի տունը: Գիւղի շները, որոնք սովոր էին լուրթեամբ նայելու խճուղին անցնող ճանապարհորդներին, մեծ աղբաղակ բարձրացրին գիւղը մտնել համարձակող կառքի և ձիերի դէմ, համարելով այդ անսովոր մի բան: Տիրացու Մօսին, իբրև ծանօթ անձն, իւր սաստող հրամաններն արձակեց շների դէմ, մի քանիսին, մինչև

անգամ, յականէ անուանէ կանչելով: Աղմկարարները կամաց կամաց ցրուեցան և կառքը կանգ առաւ տանուտէրի տան առաջ:

Թ.

— Աղջի, քեօխովէն տանն ա, հեղինակաւոր ձայնով հարցրեց Մօսին՝ տարօրինակ հագուստներով և գլուխը փաթաթած միջահասակ մի կնոջ, որ կանգնած էր բակում:

Վերջինս առանց ձայն հանելու՝ ձեռքով հովանի արաւ աչքերին, իբրև թէ դէմքը ծածկել ուզելով՝ ապա երեսը մի կողմը ծռած, շարժեց գլուխը բացասական կերպով, որ կը նշանակէր թէ՛ տանը չէ:

— Բա ո՞ր ա:

Կինը ձեռքի շարժումով ցոյց տուաւ գիւղի դուրսը, կամենալով հասկացնել թէ՛ հանդումն է: Բայց՝ միևնոյն ժամանակ, գուշակելով որ նորեկը, անշուշտ՝ հիւր պիտի լինի իրենց, մօտեցաւ դրան առաջ խաղացող տղային և նրա բերանով խնդրեց որ «աղան» շնորհ անէ կառքից իջնելու, մինչև որ ինքը մարդ կուրարկէ ամուսնու ետեկից:

Կամսարեանն իջաւ: Մօսին ու Օվանէսը վաթ առին կառքից նրա իրեղէնները: Իսկ մինչև այդ, գեղջիկուհին ներս վազեց տուն և բերելով այդտեղից մաքուր գորգ, փռեց սրահում դրուած թախտի վրայ:

Ապա Մօսու միջոցով խնդրելով հիւրին՝ հանգստանալ, ինքն շտապեց հարևաններից մէկին իւր մարդու ետեւից ուղարկելու:

Երիտասարդը մի վայրկեան գիւղի՝ իւր վրայ արած տպաւորութիւնը մոռանալով՝ սկսաւ հետաքրքրուել նշանացի խօսող կնոջ անձնաւորութեամբ: Նա նրան սկզբում համրի տեղ էր դրել: Բայց յետոյ տեսնելով որ խօսում է տղայի և ապա Մօսու հետ, հարցրեց վերջինիս՝ այդ միջակատակի պատճառը:

— Ձահիլ կնանիքը անխօս են ըլլում ըստեղ, պատասխանեց տիրացուն:

— Ի՞նչ է նշանակում անխօս լինել:

— Նշանակում ա որ նրանք չըպէտք ա իրանցից մենծերի, եա դարիբ (օտար) մարդկանց հետ խօսան:

— Ինչո՞ւ:

— Ամօթ ա:

— Ի՞նչպէս թէ ամօթ է, զարմացաւ կամսարեանը:

— Բա ջահէլ կնիկը որ չանէն (ծնօտը) ցցի իրանից մենծի հետ զրից անի, ամօթ չի:

— Չէ, ինչո՞ւ է ամօթ:

— Էս երկրումն ամօթ ա:

— Պատճառը:

— Ես իմ. վաղուցուայ դրած աղաթ (սովորութիւն) ա:

— Իսկ քեզ հետ ինչո՞ւ էր խօսում:

— Ինձ, միթօմ, մենծի տեղ չի գցում, պատասխանեց տիրացուն, կարծես, վիրաւորուած:

— Ուրեմն, կը ցանկանայիր որ քեզ հետ էլ չըխօսէր:

—Բա խի՞ չի ցանկանալ մարդ չի՞ ուզիլ որ իրան պատիւ տան:

—Դա պատիւ է:

—Պատիւ ա, բա:

Կամսարեանը այս նորութիւնը լսում էր գարմանալով և չէր կարողանում հասկանալ թէ՛ ի՞նչպէս կարելի է՝ որ մարդ արարածը չըխօսէ իւր նմանի հետ, կամ թէ այդ խօսելը համարէ ամօթ, պատիւ, կամ անպատուութիւն: Այդպիսի ըմբռնումներ չէին կարող ունենալ, նոյն իսկ, Աֆրիկէի վայրենիները. իսկ սրանք հօ, համեմատաբար, քաղաքակրթուած երկրի բնակիչներ էին, հետևապէս և պէտք է ազատ լինէին այդպիսի վայրենութիւնից: Բայց և այնպէս, փաստը իւր առաջն էր: Նա տեսնում էր մի կին, առողջ կազմուածքով, գործելու կարող, ընտանիքին պիտանի և սակայն, զրկուած Աստուծոյ տուած մեծագոյն բարիքից—խօսելու ազատութիւնից և այդպիսի մի անհեթեթութեան իրաւունքը պաշտպանում էր գիւղի գրագէտ մարդը:

Երիտասարդը դեռ գբադուած էր այս մտածութեամբ, երբ վերջինս շնորհակալութիւն անելով նրան՝ իրեն արած բարութեան համար, առաւ իւր աղքատիկ կապոցը և հեռացաւ, խոստանալով գարձեալ գալ «աղայի» կոչին, երբ սա կը հրամայէ:

Մի փոքր յետոյ ներկայացաւ կառապան Օվանէսը և խնդրեց նրան՝ արձակել իրեն:

—Ի՞նչ, գու վերադառնում ես, հարցրեց Պետրոսը:

— Հրամեյ ես, ադա:

— Մեղք չէ՞ն ձիերդ, ինչո՞ւ չես հանգստացնում:

— Հրէս գնամ Սիմօնովիւումը կորմ կը տամ, ընտեղ էլ կը հանգստացնեմ:

— Ինչո՞ւ այստեղ չես տալիս:

— Ըստեղ դժուար ա:

— Ինչո՞ւ է դժուար:

— Ապուռ (կեր) չըկայ. էլածն էլ թանգ ա:

— Իսկ այնտեղ աժան է:

— Աժան ա, բա:

— Ինչո՞ւ է այդպէս:

— Ընդուր որ ըստեղ հայեր են ապրում, ընդեզ՝ մալականներ:

— Այդ ի՞նչ է նշանակում:

— Էդ էն ա նշանակում որ հայերը աջիգ (տկար) մարդիկ են, էնքան են կարում վար ու ցանք անել որ մենակ իրանց է ա հերիք գալի: Նրանցից մինը թէ որ էսօր ինձ մի կող (չափ) գարի ծախի, էգուց ինքը պտի փող տայ մալականիցն առնի: Ամա դէ մալականը դհէ չի. նա համ փող ունի, համ ղօչաղ ա, համ էլ բանի դայդան (եղանակը) գիտում ա: Վարն էլ ա շատ անում, խտան էլ ա շատ հարում, նհենց (այնպէս) որ, իրան էլ ա հերիք գալի, ուրիշին էլ:

Կամսարեանի գաղափարը հայ գիւղացու արժանիքների մասին արդէն փոխուած էր, կառապանի բացազրութիւններն էլ պակասը լրացրին: Ուրիշ անգամ, գուցէ, նա ուշադրութիւն չըդարձնէր այդպիսի խօսքերի վրայ, բայց այս անգամ, նոյն իսկ, լուրջ մտա-

ծովթեանց առարկայ դարձրեց նրանց:—«Իրաւ, եթէ մի գիւղ՝ իւր անտեսական կարողութեամբ՝ այնքան է ողորմելի որ մինչև իսկ մի կառապան դժուարանում է այդտեղ իւր ձիերը կերակրել, մի՞թէ սա չէ նշանակում թէ՛ նրա բնակիչները այնքան են ծոյլ, անհոգ ու անշնորհք որ նրանց մէջ ապրել ու գործելը ոչ միայն դժուար, այլ և անհնարին է...»:

Այսպէս մտածեց երիտասարդը և իւր վերջին հետևութիւնը՝ փոխանակ նրան տխրեցնելու, ընդհակառակը, պատճառեց մի թագուն հաճոյք, որը բխողում էր այն նորածին մաքից թէ՛ գուցէ տեղական հանգամանքներն ստիպեն իրեն, հակառակ իւր կամքին, դրժել իւր ուխտին: Այն ժամանակ, ի հարկէ, ինքն այդ բանում մեղաւոր չէր լինիլ. չէ՞ որ տուած խօսքը նա արդէն կատարել է՝ հեռանալով քաղաքից և գիւղը գալով: Այժմ ի՞նչ անէ որ գիւղն ինքն է անհնար դարձնում այդտեղ մնալն ու գործելը...: Այսուամենայնիւ, այս մտածութիւնից առաջացած հաճոյքը նա լիովին չըվայելեց, վախենալով թէ՛ մի գուցէ ինքն սխալուում է՝ շտապով այդպիսի կարծիք կազմելովը. կամ թէ գուցէ հայ գիւղացին գեռ ունի համակրելի կողմեր, որոնք տակաւին անծանօթ են իրեն և որոնց պատճառով, թերևս, ինքն ապագայում տանջուի խրդճից, եթէ այսօր կայացնէ մի սխալ որոշում:

Իսկ այդ «որոշումը»... Ոչ. նա զրա համար գեռ չի մտածիլ. չէ կարող մտածել...: Ի՞նչ, գուք կարծում էք թէ նա՝ անհնարին գտնելով հայ գիւղում ապրելն ու գործելը՝ կորոշէ ձգել ու հեռանալ. ոչ. այդ՝

պիսի բան չի անիլ: Իրա նման մի միտք, այն, անցաւ նրա գլխով, երբ կառապանը խօսում էր, բայց դա միայն մի ցուք էր, մի չնչին ասուպ, որ վայրկենաբար փայլեց իւր մաքի աշխարհի հորիզոնի վրայ և անհետացաւ: Իսկ այնուհետև նրա հոգու աչքերը դարձեալ մնացին սևեռած այն լուսաւոր կէտին՝ որի վրայ գրուած էր՝ հայ գիւղացու բարօրութեան համար աշխատելու իւր հաստատուն վճիռը: Եւ նա շարունակ կընայէ այդ լուսին՝ ընտրած ճանապարհից չըշեղուելու համար: Իսկ առ այժմ... առ այժմ կաշիստէ ճանաչել գիւղը, նորից լսել, տեսնել, քննել, հետազոտել...: Անշուշտ նա գեռ շատ բան չըգիտէ և գուցէ հենց այդ չըգիտցածներն են, որոնք նորից պիտի ոգևորեն իրեն...: Այսպէս էր խօսում երիտասարդ համարեանի երկու «ես»-երից մինը. մինչդեռ միւսը՝ կարծես, սիրով սպասում էր որ նոր լսածն ու տեսածը, քննածն ու հետազոտածը հաստատեն դարձեալ այն, ինչ որ կայ, ինչ որ մինչև այդ երևան էր եկել...:

Այս պատճառով նա հանգիստ սրտով վճարեց կառապանին իւր հասանելիքը և ճանապարհ դրաւ նրան:

Շուտով հասաւ այստեղ և տանուտէրը: Դա միջահասակ, ամբողջամ, խոշոր դիմագծերով, խելացի աչքերով և բարեղէմ մի մարդ էր: Տան պատին յենելով ձեռքն ունեցած փոցխին, որով հենց նոր խոտ էր հաւաքել դաշտում, մօտեցաւ հիւրին, քաղցրաժպիտ ողջունեց, և, չընայելով որ նրա ում և ո՞ր տեղից լինելը չըգիտէր, այսուամենայնիւ, սկսաւ հարցնել նրա առողջութիւնից, ուղևորութեան հանգամանքներից և

ընդն մին յայտնել իւր շնորհակալութիւնը որ «աղան» պատիւ էր արել՝ իւր տանը հիւր լինելու:

Կամսարեանն իւր կողմից հարկ եղածը պատասխանեց, յայտնելով նրան իւր սով և սրտեղացի լինելը և ապա բացաղբեց որ ճանապարհորդելու նպատակով է՝ որ գտնուում է այժմ Զիբուխլուում:

— Մեր գեղից շատերն են ընցնում՝ էթում Երևան, Յէջմիածին, ես էն տեղից գալում յիջնում Դիլիջան ու ուրիշ եաներ (կողմեր), համա ըսկի մէկն էլ չի կայնում (մնում) էս գեղը: Էս մէջ ջոկ պատիւ ա որ արել ես մեզի... խօսեց տանուտէրը Բայագտեցւոց բարբառով *):

— Ինչո՞ւ չեն մնում, հետաքրքրուեց երիտասարդը:

— Ընդուր որ մեր կուշտ (մօտ) տենալու գատ չըկայ:

— Այո՛, ձեր գիւղը շատ խղճուկ բան է, նկատեց Պետրոսը:

— Համէն (ամեն) գեղերն էլ էսենց ին, յարեց տանուտէրը:

— Սխալում էք: Քիչ առաջ անցայ Սեմեօնովկայի միջով և նա բոլորովին ուրիշ գիւղ երևաց ինձ: Այնտեղ կային սիրուն տներ, լայն և ուղիղ փողոց, ծառեր, ծաղիկներ, բանջարանոցներ. իսկ ձեր գիւղն... այս ի՞նչ է. կարծես շէն չէ, այլ աւերանոց:

— Դորթ ա հրամանքդ. Սիմեօնովկում քո ասած

*) Զբուխլուեցիները գաղթած են հին Բայագիտի կողմերից (Արծափից):

համեն բանն էլ կայ. դէ ախր էն մալակնի գեղ ա, էս խայի:

«Սա էլ նոյն է ասում, ինչ որ կառապանը» մտածեց Կամսարեանը մի առանձին գոհութեամբ և ապա հարցրեց. — ուրեմն հայի գիւղը չի՞ կարող լաւ լինել:

— Դէ իմալ (ի՞նչպէս) ընի լաւ. գեղ ա էլի. գեղ դհայ (ուրիշ կերպ) իմալ կընի:

— Հէր-օրհնուած, Սիմեօնովկան էլ գիւղ չէ՞:

— Հրամել էք, գեղ ա:

— Էհ, նա ի՞նչու է լաւ:

— Ասի էլի, ընդուր վոր մալակնի գեղ ա:

— Ուրեմն որ հայի լինէր պէտք է վատ լինէր:

— Հալբաթ որ (ի հարկէ):

— Ինչո՞ւ:

— Ընդուր որ խայն համէն բանի մէջ անշնորհք ա:

— Ուրեմն, հայոց գիւղերն ամեն տեղ էլ նման են ձերինին:

— Խա, էդէնց ա:

— Ամեն տեղ էլ այսպէս չո՞ր, ցամաք, ծուռուժուռ փողոցներով, հողէ տնակներով, կեղտոտ բակերով:

— Խա, հրամել էք:

— Եւ չի՞ գտնուիլ հայ գիւղ, որ ծառազարդ լինի. ուղիղ փողոցներ, սիրուն տներ, այդիններ, ծաղկանոցներ և այլ այստեսակ բաներ ունենայ:

— Ի՞նչ ասեմ. կընի վոր պատայի խարիբի (հարիւրի) մէջ մէ խատ. համա էն էլ հրամանքիդ ասածի

նման չըլնի. ծուռումուռ բաներ շատ կըլնի: Ի՞նչ ասեմ. կը պատայի վոր ըլնին էլի նենց գեղեր, որ բա- կերի մէջ մէջ բանի խատ ծառ ըլնի, ես բոստան, ես մէ պատիկ բախչայ. համա տներն ու քուչէքն ինենց կըլնի՝ իմալ մերն ա: Ես շատ տեղեր եմ հելէ, շատ խայի գեղեր եմ տեսե, մերնից փսերն (վատերն) էլ շատ կան:

Այս տեղեկութիւնները, կարծես, դիւր էին գալիս կամսարեանին, որովհետե նա նրանց մէջ տեսնում էր հաստատութիւնն իւր այն կարծիքի թէ՛ անհնար է գիւղում ապրել ու գործել, ուստի շարունակեց հար- ցուփորձը:

— Այսուամենայնիւ, տանուտէր, դու գուցէ կա- րողանաս աւելի ճիշդ պատճառն ասել թէ՛ ինչո՞ւ մա- լականի գիւղը գեղեցիկ և մաքուր է լինում, իսկ հայինը տգեղ ու կեղտոտ: Անկարելի է որ դրա պատ- ճառը հայի անշնորհքութիւնը լինի. մի՞թէ բոլոր գիւ- ղերում էլ հայերն անշնորհք են:

Տանուտէրը մի վայրկեան մնաց լուռ և չըզիտէր ի՞նչ պատասխանել: Յետոյ կարծես նոր գիւտ անելով բացականչեց:

— Ախպէր, խայի գեղն կեղտոտ չըլնի, իմալ ըլնի. խայի գեղցու ցաւը, դարդը մէ չէ, երկու չէ, վոր թորգի (թողնէ) ու յիստակութենի ցաւը քաշի: Ախար նա ըսկի անշնորհք էլ չէ, թէկուզ էդ անունը տուի՞ քեզ յառէջ: Նա մալակնից էլ ա շնորքով, իրա մէկէլ արկեցից էլ: Խայի գեղցու ցաւն էն ա որ մէջը մարդ չըկայ. մէջքին դայազ (նեցուկ) տուող չըկայ. ինչ որ

աթատան, բաբատան (հորից, պապից) տեսե, սովրե, ինենց էլ անում ա. ինենց էլ ապրում ա: Քարձինի ծառ (վայրի տանձի) տեսած կա՞ս. էն որ մէջէն ա հընում. էն որ թորգեն (նրան որ թողնեն), խարիւր տարի կապրի, հմէն վախտ էլ պատիկ-պատիկ չոր ու ցամաք քարձին կը տայ. համա թէ մէ բարի ձեռ նրա ճղերը կտրի ու վրէն պատուաստի մալաչի դալար շվիւր (շիւղ), կը տէնաս մէ երկու տարուց յետոյ, էդ քարձինի ծառը մալաչի տանձեր կը բերա, խամով, խոտով ու կերածդ վախտն էլ բէրնիա ջուրը կէրթայ: Մեր գեղցին էլ որ կայ, մէջի ծառ ա, քոթուկը (բուն) խաստ, քոքերը (արմատները) դայիմ, համա բարը (պտուղը) քարձին ա. մէ ուստա ձեռ ա պէտք, որ ձղե- րը կտրի, վրէն պատուաստ անի, կուզես մեղրիկինի, կուզես գիւլ-աբի, էն վախտն էլ ընդու բարն էլ էն կըլնի, ինչ որ պատուաստելիս, խամով, խոտով, սի- րունութենով: Մալականը որ կայ, պատուաստած ծառ ա, վորն ա ընդու պատուաստողն, չիմ գինայ, ամա տէ- նում ենք բարը խամով ա: Հէնա Գեաջու եանն էլ նէմէցներ կան, ընդոնք էլ մալականներից են շնորքով, էրևում ա ընդոնք էլ են պատուաստ արած, ընդուր վոր ընդոնց արած բաներն էլ են դայգով (կարգին) լաւ, ընդոնց գեղն էլ ա թամուզ-յիստակ, ծառով լի- քը, վարժատունը մէջները, ժամն (եկեղեցին) էլ պայ- ծառ, բոստան ու բաղչէն դէմներն...: Մեր գեղը ըզենց բաներ չըկան... ընչի՞, ընդուր վոր էն օր, վոր օր- ուանից Աստուած մէ ծառ ա տնկե, անունը խայի շինական դրե, էն օրուանից դէսը էդ ծառի ճղերին

մէ ճղագող (յոտոց) չի դիպե, խաղար տարի ումբը ա քաշե (ապրել ա), խաղար տարուայ բարը համէն վախտ քարճին ա հէլե ու քարճին: Մալականը ինչ վախտ որ ուզում ա գեղ քցի, եա թէ չէ իր խամար շէնլիկ շինի, մէկէլ տէնում ես համէն եանից մարդիկ են բանում, ասում են, բարեկամ, էս էսէնց շինա, էս ընէնց շինա, եա ծուռ ա դրըստի, էս պստիկ ա ջոջացրու (մեծացրու), մէ խօսքով, խորհուրդ են տալում, խելքում-խրատում, գլխու քցում: Մալականն էլ բարի խրատն ընդունում ա, չըգիտցածը սովրում, ու բանը անում ինենց, վոր Աստծուն էլ ա դուր գալում բանտին (մարդկութեան) էլ: Համա խայի շինականը շէնլիկ չէ, թէկուզ ժամ էլ քցի, բսկի մէ վախտ մէ մարդի էրես չի տենա, որ մէ բարի բան սովրցնի, մէ դրուստ ճամբաղ նշանց տայ, ծուի դարարը (վասը) ու դրըստի օգուտը խասկցնի. էդու խամար էլ իմալ հինքն կարցե, ինենց էլ արե, ինչ խելքն կտրե, էս էլ շինե, էհ, ընդուր գիտցածն էլ հէլե էս ա, ինչ որ տենում ես, ընդուր իմալ մեղենք (մեղադրենք):

Կամսարեանի գլխին, կարծես, ջուր մաղեցին: Իւր հարցին նա չէր սպասում այս օրինակ պատասխան: Դա, իսկապէս, դատապարտութեան մի վճիռ էր, որ տանուտէրը կարդաց իւր երեսին: Ախար չէ որ այն ամենը, ինչ այդ գիւղացին ասաց, յայտնի էին իրեն վաղուց: Չէ որ հենց իրենց ընկերական ժողովներում յաճախ այն միտքն էր արծարծուել թէ՛ հայ գիւղացին տգէտ, յետամնաց, հետևապէս և թշուառ է մնում այն պատճառով, որ բոլոր իւր կեանքում գուրկ է մնում

առաջնորդից, սրտացաւ խորհրդատուից, բարի օրինակից: Լինէին դրանք և նա կաղատուէր դարերի ընթացքում իւր վրայ բռնացող ճակատագրական թշուառութիւնից: Արդ, ինքը եկել էր այդ առաջնորդը, այդ խորհրդատուն լինելու: Ինչո՞ւ էր, ուրեմն, երկար ու բարակ տանուտէրին հարցափորձում: Չէ որ նրա համար՝ որ իւր դրած ուխտն այժմեանից արդէն ծանր էր թուում իրեն և նա նրանից կամենում էր խուսափել...: Մի՞թէ ամօթ չէր այդ:

Այս յետադարձ միտքը ձգեց երիտասարդին վաւրանքի մէջ. խղճի մի թագուն խայթ սկսաւ անհանգըստացնել նրան, ուստի դադարեց հարցեր առաջարկելուց:

Այդ միջոցին վերագարձաւ տան տիրուհին՝ ձեռքին մի քանի նորաթուխ լոշեր: Ըստ երևոյթին, նա այդ օրը թաժայ հաց չունենալով՝ ըստ գիւղական սովորութեան՝ փոխ էր առել հարեանից, որպէս զի նորեկ հիւրին օթեկ հացով չըկերակրէ: Տանուտէրը կնոջը տեսնելուն պէս՝ վեր թռաւ տեղից, ինչպէս մեծ յանցանք գործածին մէկը.

—Ներողութիւն անդա, ասաց նա, ախր դու ճախիւից ես գալում, անօթի կըլնես. ես գինջ նստեր եմ, քե խեա գեալաջի (զրոյց) իմ անում: Դէ, Մալվի, շուտ արա, խացի թաղարէք (պատրաստութիւն) տես, դարձաւ նա դէպի կինը, որ արդէն մտնում էր տուն:

—Մի նեղանաք, խնդրում եմ. ես քաղցած չեմ, ճանապարհին նախաճաշել եմ, հանգստացրեց երիտասարդը տանուտէրին: Բայց վերջինս, այսուամենայնիւ,

կնոջ ետևից մտաւ տուն, որպէս զի հիւրին պատուասիրելու համար՝ հարկ եղած պատուէրը տայ կնոջը, կամ թէ նրա հետ խորհուրդ անէ:

Այսպիսով Կամսարեանը միայնակ մնալով՝ սկսեց լսածներն մասին լրջօրէն մտածել: Այս առիթով նա նորից յիշեց անցեալը, ուսանողական ժամանակի փայփայած մտքերը, իւր ոգևորութիւնը, խիզախ որոշումը և այդ ամենին հակադրելով իրականութիւնը, եկաւ այն եզրակացութեան, որ ինքն սխալուել է, թեթև աչքով նայելով առաջադրեալ խնդրի վրայ, կամ սպասելով որ գործը զիւրութեամբ սկսուի և զիւրութեամբ շարունակուի:

— «Այստեղ, հաստատուն կամքի հետ միասին, պէտք է ունենալ, նաև, մեծ համբերութիւն, խօսեց նա ինքն իրեն. — ծառից՝ ծառատակը միշտ մօտ է երևում, բայց երբ թռչում ես՝ այն ժամանակն է միայն տարածութիւնն իմացւում: Մինչև այժմ ես դեռ թռչելու որոշումն եմ արել և արդէն տարածութիւնն անհուն է թւում. ինչ կըլինի եթէ սկսեմ թռչել... արդեօք ոյժերս կը ներեն. թևերս չեն թուլանալ»...:

Այս մտածութեան հետ միասին անսպաս տեղից ծնունդ առաւ նրա սրտում պատուասիրութեան զգացումը. — «էհ, ամօթ է վերջապէս փոքրօրի լինել այսքան և վախենալ կեանքի գալոց զրկանքներից... Այս գիւղացիներն էլ մարդիկ են և ահա ապրում են զրկանքներով լի այդ կեանքով և չեն մեռնում: Ինչո՞ւ ուրեմն չըփորձեմ մի փոքր էլ ապրել նրանց հետ և նրանց նման. գուցէ հենց այդ փորձի մէջ գտնուեմ եմ

ես հնարն իմ խոստման տէր մնալու: Ինչո՞ւ յուսահատուել դեռ ոչինչ չըփորձած, դեռ ուժերս չըփորձած»...:

Այսպէս մտածեց Կամսարեանը տանուտէրի խօսքերի թարմ ազդեցութեան տակ և որոշեց անպատճառ «փորձել» իւր ոյժերը:

Այդ որոշումն անկեղծ էր. անձնասէր «ես»-ի ձայնը լսել էր նրա մէջ առ ըսպէ

Բայց հենց այդպիսի հանդիսաւոր վայրկենին սրանի առաստաղից թափուեց երիտասարդի գլխին չոր հողի մի վիժակ: Նա վեր թռաւ տեղից և վազեց դէպի բակը, կարծելով թէ՛ առաստաղը փլչում է գլխին: Սակայն այդպիսի բան չըկար: Հաւերը կտրանը քթութ էին արել, որով և հողի փխրուկ մասը շարժուելով իջել էր ներքև: Կամսարեանը հանեց լայնեզր գլխարկը և տեսաւ որ նա ամբողջապէս ծածկուած է փոշու հաստ շերտով. իսկ գլխարկի եզրը պահել էր իւր վրայ հողի մեծ քանակութիւն:

Մաքրասէր երիտասարդը զժգոհ եղաւ այդ բանից: Բայց ի՞նչ արած. դեռ մի ըսպէ առաջ էր որ նա որոշել էր՝ փորձել, ապրել գիւղացիների հետ: Պէտք էր ուրեմն համբերել: Բայց որովհետև համբերելուց անկախ՝ անհրաժեշտ էր մաքրել գլխարկը, նոյնպէս և վերնագգեստը, որի ուսերը ևս ծածկուած էին փոշիով, ուստի նա վերագառնալով սրանը, կանչեց տանուտէրին և խնդրեց նրան՝ առաջնորդել իրեն դէպի ներսի տունը, որպէս զի այդտեղ գտնուող իւր պայուսակից հանէ խոզանակը՝ հագուստը մաքրելու համար:

— Էս Բնչ ա, խոնդ ա թափե վրէդ... էյ Սալվի,
էս Բնչ ա, էլի էդ անիծուկ խաւերը կտուր քրճրճում
են, յիշկա (նայիր) աղի շորերն համէն խարաբ են արե:

Սալվին դուրս վազեց դէպի կտուրը՝ հաւերին
հալածելու, իսկ երիտասարդը ներս մտաւ իւր պայտ-
սակը որոնելու:

Տունն, ուր նա մտաւ տանտիրոջ առաջնոր-
դութեամբ, մի տարօրինակ շէնք էր, որի նմանը նա
չէր տեսած ոչ մի տեղ: Իւր քառակուսի ձևով՝ դա
նմանում էր մի սովորական ընդարձակ սենեակի, իսկ
չորս սիւների վրայ բարձրացող գմբէթարդ առաստա-
ղով՝ փայտաշէն մատուռի: Շէնքը ոչ մի կողմից պա-
տուհան չուներ և լոյսն ստանում էր առաստաղի վրայ
բացուած երթիկից: Սակայն այդ լոյսն էլ այնքան էր
նուազ որ երիտասարդը ներս մտնելուց՝ չըկարողացաւ
իսկոյն որոշել բնակարանի ձևն ու մեծութիւնը:
Միայն քիչ յետոյ երբ աչքերը վարժուեցան, սկսաւ
ամեն ինչ դիտել ուշադրութեամբ:

Տան ետեի պատն ամբողջապէս, իսկ աջ ու ձախ
կողմերինը՝ կիսով չափ կտրուած էին հողից և այն՝
այնչափ տգեղ ձևով որ շատ տեղերում երևում էին
սակրի կամ բրի քաշած աղօսները: Իսկ առջևի պատը
և աջ ու ձախ կողմերինը մասամբ՝ շինուած էին կրա-
շաղախի և գետաքարերի անարուեստ զանգուածով:
Ինչպէս տան չորս պատերը, նոյնպէս և առաստաղն
ու նրան բռնող փայտէ չորս սիւները ծուխից սեւ-
ցած էին այն աստիճան որ շատ տեղ փայլում էին
լուսի առաջ: Առաստաղի աւելի մութ խորշերը առա-

տօրէն բռնուած էին սարդի ոստայներով, որ ապա-
ցուցանում էր թէ՛ այդ տան մէջ չըկար չար ձեռք, որ
վրդովէր այդտեղ ապրող միջատների խաղաղութիւնը:

Տան մէջ եղած կարասիներն էին. մի փայտէ, ծը-
խահար ամբար, որի մէջ ալիւր էր պահուում. մի մեծ,
կաւածեփ կթոց, որ ցորենի պահարանն էր. մի փայ-
տեայ խարխուլ և լայն մահճակալ, որ ծառայում էր
լիբրե դարակ, թէ՛ տան մէջ գտնուող արկղիկների և
թէ՛ հնամաշ կողինքի ու օթոցների համար: Պատերից
մէկի տակ գտնուում էին՝ երկու հողէ կուժեր, մի քա-
նի սեւացած պտուկներ, մի փոքր և մի մեծ տաշտակ
և երկու փայտեայ խաներ: Իսկ դրանք հանդէպ գրա-
նուող պատի տակ, որ, ըստ երևոյթին, պատուաւոր
կողմն էր, շինուած էր մի հողէ բարձրութիւն՝ թախտի
ձևով, չորս կողմից կաւածեփ և ծածկուած հնամաշ
կապերտով: Տան յատակը հողից էր, տեղ տեղ փոս և
ցեխոտ լինելու չափ թաց: Հենց այդ յատակի վրայ,
ուղղակի երդիկի տակ գտնուում էր կրակարանը, ուր
այդ միջոցին վառուած աթարի վրայ դրուած էին մի
հողէ պտուկ և մի պղնձէ կաթսայ, երկուսն էլ այնպէս
սե ու մրապատ որ կարծես ածուխից էին շինուած:
Ինչ էին եփում այդ սեւակոլով ամաններում, յայտնի
չէր. միայն թէ կամսարեանը նայելով նրանց վրայ՝
զգաց մի խոր զգուանք և դրա հետ էլ երկիւղ թէ՛ մի
գուցէ նրանց մէջ պատրաստուած կերակրով հիւրա-
սիրեն իրեն:

Որովհետև տան միջի օդը տոգորուած էր աթա-
րից առաջացող զարշահոտ ծուխի, այլ և խոնաւութեան

անախորժ հոտով, ուստի երիտասարդը այդտեղ չբացաւ պայուսակը, որպէս զի ստիպուած չլլինի մի քանի վայրկեան աւելի ծծելու ապականուած օդը, այլ առնելով այն՝ տարաւ դուրս:

Հանելով պայուսակից սպիտակամագ ու արծաթէ մէջքով շինած խոզանակը, որ բնաւ չէր յարմարում շրջապատող անմաքրութեանց, նա սրբեց նախ գլխարկը և ապա հանեց վերնագգեստը: Վերջինս մաքրելու ժամանակ զրպանից գետին ընկաւ իւր Note-երի յայտնի տետրակը: Կամսարեանը վերցրեց այն այնպէս շտապով որ կարծես գողացած իր էր և պէտք էր իսկոյն թագցնել: Որովհետև տետրակի տեսքը վայրկենաբար յիշեցրեց նրան այնպիսի բաներ, որ նա կուզէր այժմ մոռանալ...

Երբ երիտասարդը բոլորովին մաքրուեցաւ, եկաւ նստեց սրահում զրած թախտի մի ուրիշ կողմը, որ իւր կարծիքով ազատ պիտի լինէր հողի իջուածքից և սկսաւ խօսել տանուտէրի հետ, այժմ արդէն մեծ սրտով:

— Քիչ առաջ ասում էիք թէ՛ հայ գիւղացին ի՞նչ անի. միջումը մարդ չունի. մէջքումը դայտաղ չունի՞ բան սովորացնող չունի և այլն: Ասացէք, խնդրեմ, այսպիսի մի պարզ բանի համար ձեզ ինչ սովորացնող է հարկաւոր: Տեսնում էք, այս առաստաղի ձողերը շարել էք միմեանցից մի մի թիզ հեռու, յետոյ վրան ցախ ու ցաք դնելով՝ հող լցրել: Մի՞թէ չէիք կարող նախ՝ այս ձողերի փոխարէն լայն տախտակներ շարել՝ երկրորդ՝ եթէ ձողեր էիք շարում, ընտրելիք ուղիղ

ձողեր և ոչ թէ այս ծուռ ու մուռ ձողերը. յետոյ նրանց տաշէիք, միմեանց մօտեցնէիք և ապա թէ վրան հող լցնէիք: Այն ժամանակ հաւ չէ, անասուն էլ որ ման գար կտրանը, հողը չէր թափուիլ: Ախար սա այնքան պարզ բան է, որ սրա համար ոչ սովորեցնող է հարկաւոր, ոչ խորհրդատու:

— Շատ դորթ ես հրամայում, աղա. խօսել սկսաւ տանուտէրը. դորթ վոր էն ձողերի տեղի թէ տախտակ հըլնէր շատ լաւ կըլնէր, համ խող չի թափուի, համ էլ յառիքը (առաստաղը) սիրուն կըլնէր: Համա մէ բան կայ, վոր դու չես գինա. շինականի խամար մէ մանէթը էնդդայ աժի, ինչդդայ քաղքցու խամար խարիը մանէթը: Էսդգա տեղը տախտակելու խամար եռսուն մանէթ խէրիք չէր գայ, համայ ես էս հմմէնին չորս մանէթ եմ տուե, էն էլ անջախ եմ ձարե: Չողերն էլ որ մօտիկ մօտիկ հընէր, խարիը խատ չէր խերիք գայ, համա ես քառսուն խատով բանը եօլա եմ տարե: Մէկ էլ թէ էսոնք դուզեր (ուղիղներ) հընին, մէշաբակին (անտառապետը) երեք խեռ աւելի փարայ կուզէր համա էժան ա տուե: Ասենք իմ մէ դագախիցի բարեկամն ասեց թէ՛ «դու որ չորս մանէթ փարա ես տուե բլէթին, իրաւունք ունէիր էգ բլէթով էն դդայ դուզը ձողեր կտրել, ինչ դդայ ծուռն ես կտրե»: համա ես գեղցի ուամիկ մարդ եմ, իմալ կանամ արեզչիկի (անտառապահ) յառեջ ձէն ձուն խանել. էն թըղթին յիշկում ու ասում ա. «էս թուղթ ծուռը փէտերի խամար ա, չըյիշխնաս (համարձակուես) դգերը կտրել»: Ես էլ իմալ ընդու հրաման չանեմ: Բան ա թէ շշկուիմ

(սխալուելիմ) եա յիշխնամ մէ խատ դուզը փէտ կտրեմ, մէկէլ տենաս բոռալով գալում ա վրէս ու մէ չափալախ (ապտակ) քիթուբէրնիս գարկում... Հարամգադա, ասում ա, էդ իմնլ յիշխցար թագաւորական մէշի մէջ գակօնի դէմ բան բռնել, հէս ա պրատակօլ կանեմ, քեզի նաբախտ (բանա) կը տանեմ: էդ վախտը անճարանում եմ, ոտ ու ձեռն ընկնում, ասում. «աղա, ի սէր Աստուծոյ բախշի, ինձ բռնաւոր մի անի, ճգերս ու օղլուշադս (ընտանիքս) մեղք են»: Էստուց յետոյ որ տէնուեմ չեմ կանում աղա արէշչի սիրտը շահել իրաճս կտրում ա, ջէբս էլած մէ քանի արասին ամին եմ դնում, գնում, գլուխս պրծցնում:

Տանուտէրի պատմածներէից Պետրոսը վրդովուեցաւ, մանաւանդ արեգդչիկի դիւղացուն ապտակելն ու օրէնքի անունով նրան հարստահարելը վառեցին երկտասարդի բոլոր իրաւագիտական գայրոյթը: Նա մոռացաւ որ տանուտէրը ընդդիմախօսում էր իրեն և ոչ թէ պաշտպանութիւն խնդրում. ուստի վրդովուած բացականչեց.

—Արեգդչիկը իրաւունք չունի քեզ ապտակելու կամ քեզանից ապօրինի փող առնելու. այդպիսի անկարգութեան համար նրան ոչ թէ պաշտօնից կը զրկեն այլ և բանտ կը նստացնեն: Օրէնքը իրաւունք չէ տալիս նրան նոյն իսկ մեղաւոր մարդու դէմ բռնութիւն գործ դնել, ո՛ւր մնաց թէ հանգիստ ու խաղաղ դիւղացու դէմ: Անտառի պահպանութեան վերաբերմամբ որ և է մէկի կողմից անկարգութիւն տեսած ժամանակ, նա կարող է այդ մասին յայանել վերակացուին կամ

անտառապետին. բայց իւր ձեռքով դատաստան անել նա բնաւ իրաւունք չունի:

—Կըլնի էդ հմմէն դրուստ ես ասում. ես էլ զինամ օրէնքի մէջ անարթար բան չի ըլնի, համա մեզ նից վո՛ր մէկս ա օրէնք խասկնում, եա թէ չէ էն դադը մէշէն մեր ձէնը ո՞վ ա հիմանում, մեր գանգատն ո՞վ ա լսում: Բան ա, թէ հուշաթ ենք անում (հակառակում) եա ահ տալում թէ՛ կէթանք մէշարէկին գանգատ, էն իր դօշի կպած գատը նշանց ա տալում ու ասում. «էս գնակը տենում էս. էս հմմէն մարդու չեն տալում, ինձի որ տւել են, ընդուր խամար ա որ իմնլ ուզենամ էստով անիմ, թէկուզ սաղ աշխարը քանդեմ, վո՛րը կանայ առաջս կանգնել»: Հիմի սղա, ես որ յառէջ ասէցի որ մեր մէջ մարդ չունենք, մէջքներին դայաղ տուող չունինք, դու ինձի մէղ իր դնում. համա տենում ես, որ քե նման մէ խատ գրի սև ու սպիտակը ճանաչող, դիւան դադաստան խասկըցող մեր մէջ նսաած հինէր ու ինձի ասէր, օրէնքի մէջ գրած ա՛ որ դու քո չորս մանէթով կարաս քասուն խատ դուզ ծառը կտրել, թէ արէգչիկը իրաւունք չունի քե գարկելու, պրատակօլ շինելու, եա նաբախտ դնելու, ես էլ էն վախտ ասլան կը դառնայի, մէ արէշչիկ չէ, թէկուզ տասն էլ որ վրէս գային հմմէնի ջուզաբը (պատասխանը) կը տայի: Ա՛յ էն վախտ իմ յառիքի վրա դուզը ձողեր կ'ըլնեն, հմմէնն էլ մօտիկ մօտիկ շարած, դայիմցրած, խողն է՛ վերևից չէր թափուի, ես էլ պատուական դօնախի կուշտ սև էրես չէի մնայ:

Կամսարեանը լսեց այս ամենը ուշադրութեամբ և այլ ևս դիտողութիւն չարաւ:

Ժ.

Վերջապէս տան տիրուհու ճաշը պատրաստ էր: Նա շտապեց սեղան բանալ: Մոյզ կապտագոյն մի սփռոց, որ բաւական մաքուր էր, բայց որն իւր գոյնի ու հնութեան պատճառով կեղտոտ երևաց հիւրին, նա փոքեց տախտակի վրայ և վրան դարսեց սպիտակ ու փափուկ լօշեր: Ապա փայտեայ, բոլորչի խանի մէջ: Բերաւ մի քանի ամաններ, որոնց մէջ կային պանիր, կանաչ սոխ, մածուն և եփած ձուեր: Երրորդ վերադարձին՝ նա հանեց սեղանի վրայ նոր պատրաստած կերակուրը, որ էր՝ լօբիի բորանի և մի եփած հաւ: Տանուտէրն իւր կողմից բերաւ դեղնած մի շոու մօլի և հողէ գորակով գինի:

Կամսարեանն ուտել սկսելու փոխարէն՝ սկսաւ դիտել ամանները, որոնցով տան տիկինը ցուցահանել էր ուտելիքը: Նրանցից ոչ մինը նման չէր միւսին: Պանիրը դրուած էր պղնձէ, կլայեկած ամանում. մածունը՝ հողէ գաւաթում. ձուն՝ փայանսէ կապոյտ, հին ձևի մի ամանում, որն ուղիղ չէր մնում սեղանի վրայ, որովհետև կոտորուած լինելու պատճառով՝ մի կողմից կապուած և տակից կոծկուած էր: Իսկ այդ կոծիկը (կրի, ձուի և ծեծած կանեփի շաղախ) այնքան հաստ

էր քսուած որ ամանն իւր հարթութիւնը կորցնելով՝ հակոււմ էր մի կողմ: Վերջապէս բորանին լցուած էր հողէ քեղանի մէջ, իսկ հաւը՝ դրուած պղնձէ ափսէի վրայ:

Հազիւ տանուտէրը ձեռք առաւ օղիի շիշը որպէս զի հիւրին հրամցնէ, անս սրահի մէջ բուսաւ Տէր-Վանին, գիւղի քահանան:

Սա վաթսուենն անցած մի մարդ էր. բարձրահասակ, բայց նիհար մարմնով, նեղ ու երկար դէմքով, խոր ընկած աչքերով, դուրս ցցուած այտոսկրներով և, սակայն, հարուստ, ալեխառն մօրուքով, որ մեղմում էր դէմքի տգեղութիւնը և ծածկում երկար, դեղնած պարանոցը, որի վտիտ շուշակները գատուում էին փողից ինչպէս պինդ ձգուած պարաններ:

— Բարի աջողում, ասաց նա խաղաղ ու մէկին արտասանութեամբ և դաւազանը գեանին խփելով՝ կանգ առաւ, կարծես սպասելով թէ ի՞նչ ընդունելութիւն պիտի գտնէ:

Տանուտէրն խկոյն վեր կացաւ տեղից:

— Օրհնեա տէր. համեցիր. ասաց նա յարզանքով և իւր տեղն առաջարկեց քահանային:

— Նստիր տեղդ, ես ըստեղ կը նստեմ, ասաց վերջինս Ղազախեցւոց բարբառով և գաւազանը պատին լեներուց յետոյ, ձեռքը պարզեց Կամսարեանին. — բարով ես եկել, հազար բարով: Մօսին ասեց մի լաւ դօնաղ եմ բերել տանուտէրի հմար. Թիֆլիզեցի ա: Ասեմ, գնամ տենեմ ո՞վ ա, կըլի որ իմ բարեկամներից ըլի. չուն ես էլ Թիֆլիզում լաւ ծանօթներ ունեմ:

Կամսարեանն իւր ով լինելը յայտնեց քահանային:
— «Կամսարեան», էդ ի՞նչ լաւ անուն ա. կըլի
որ հին ազգից ըլէք. չուն հայոց Կատմութենումը
ըզենց մի անուն աչքովս ա ընկել:

— Երևի Կամսարական:

— Հա, էդ ա, Կամսարական: Ի՞նչ ընդո՞նցից ես:

— Ոչ, ինքս էլ չըզիտեմ թէ՛ ովքեր են իմ պա-
պերը:

— Բա էդ ո՞նց կըլի:

— Իդա վերջ կը խարցնես, հլա նստե խաց կե-
նկատեց տանուտէրը:

— Նստել պտեմ, բա ո՞նց 'տեմ անիլ. հազարանց
մէկ մեր գեղը ըսենց պատուական հիւր ա եկել, ո՞նց
կըլի որ մօտը չընստեմ, զրից չանեմ: Ամա դէ ես հաց
եմ կերել, դուք ինձ մտիկ չըտաք. անուշ արէք: Այս
ասելով՝ քահանան իւր շալէ փարաջի փեշերն ամփո-
փելով ծալապատիկ նստեց թախտի վրայ:

— Զարար (մնաս) չըկայ, մեզ խետ էլ կուտես,
ասաց տանուտէրը և օղիի բաժակը լցնելով՝ առաջար-
կեց քահանային:

— Բա, արադ էլ ես տալի. էդ հօ իշտանս (ախոր՝
ժակ) մէկ էլ նորանց բաց կանի. էնչախը ո՞նց կա-
նենք, ասաց քահանան ծիծաղելով:

— Իմա՛լ պիտ անենք, ինչ վոր Աստուած տուե,
համէն յառէջդ դնենք կուտես:

— Հալբաթ որ ըզենց ա. «եղիջիր դու զօրաւոր
ուտել զբարութիւնս 'երկրի», ասել ա մարգարէն.
կուտենք, բա ի՞նչ կանենք, սրախօսեց քահանան: Ապա

առնելով բաժակը օրհնեց հիւրին, տանուտէրին և
բարեմաղթելով որ վերջինի սեղանը լինի միշտ բաց
ու առատ, դատարկեց օղին մի ումպով:

Տանուտէրը նորէն լցրեց բաժակը և առաջարկեց
Կամսարեանին: Բայց սա հրաժարուեց խմելուց, առար-
կելով թէ՛ օղի չէ գործ ածում: Սակայն հրաժարուե-
լու պատճառը ոչ թէ այդ՝ այլ օղիի կէս կարմիր և
կէս գեղին գոյնն էր, որ Պետրոսի կարծիքով՝ առա-
ջացած պիտի լինէր շշի անմաքրութիւնից, կամ օղիի
հնութիւնից: Նոյն իսկ եթէ օղին նոր ու մաքուր լինէր,
դարձեալ նա չէր կարող բերանը տանել այն բաժակը,
որով իրենից առաջ մի ուրիշն էր խմել: Հենց այս
պատճառով էլ նա մի փոքր յետոյ հրաժարուեց, նաև
զինուց. որովհետև սեղանի վրայ միայն մի գաւաթ էր
դրուած: Տանուտէրն, ի հարկէ, այդպիսի նրբութիւններ
չըզիտէր: «Բարի գալուստ» մաղթելով հիւրին և քա-
հանայի օրհնութիւնն առնելով՝ նա սնկեց լցուած
օղին և ապա խնդրեց հիւրին վայելել Աստուծոյ տուածը:

Քահանան առաջարկութեան չէր սպասում: Նա
արդէն լօշերից մինը առաջ քաշելով՝ սկսել էր իւր
յարձակումը նախ պանրի ու սոխի և ապա ձուերի
վրայ. մինչդեռ Կամսարեանը դեռ նոր էր մտածում
թէ՛ ի՞նչ ուտէ: Ժամ առաջ տեսած սևակոլով պտուկ-
ները, (որոնց մէջ կերակուրներ էին պատրաստուել)
չէին հեռանում նրա աչքից: Այդ պատճառով նա չու-
զեց ձեռք տալ հաւին կամ բորանուն. ամենից վստա-
հելին՝ դարձեալ ձուաներն էին, որոնց պատեանը ազատ
է պահում ներսը անմաքրութիւնից: Երիտասարդն իւր

ծածր բացաւ այդ ձուաներով: Բայց որովհետև կերած երկու ձուն բաւական չէին իւր քաղցը յագեցնելու, ուստի պէտք եղաւ նոր ընտրութիւն անել: Այս անգամ վիճակն ընկաւ մածնի վրայ: Սակայն ինչո՞վ ուտել: Մածնի մօտ, ճիշտ է, դրուած էր մի փայտէ գդալ, որը շատ գործածութիւնից սևացել, արանոսի գոյն էր առել: Այդ գդալը նա իւր բերանը չէր տանիլ և եթէ տանէր էլ, միւսներն ինչո՞վ ուտէին:

Դեռ այս վարանման մէջ էր նա, երբ քահանան բորանի մի մասը իւր ամանը փոխադրելուց յետոյ՝ միևնոյն գդալով առաւ, նաև, բաւականաչափ մածուն և սկսաւ ուտել լօշի կտորներով՝ նախապէս նրանց կորացնելով և գդալի ձև տալով: Ուտելու այդ եղանակը դիւր եկաւ Կամսարեանին և նա նոյն ձևով էլ սկսաւ վայելել մածունը: Երիտասարդի ախորժակն հետզհետէ բացուում էր, կամ գուցէ նրա հետ կատարւում էր այն՝ ինչ որ հայկական առածն է բնորոշում «կը կակղես՝ կուտես»: Այժմ նա ցանկանում էր օգտուել, նաև, հաւից, որի գերութիւնից դեղնած տեսքը ցոյց էր տալիս որ շատ համով պիտի լինի: Այս պատճառով նա նախ՝ աշխատեց համոզել իրեն թէ՛ սևակոլով պտուկը միայն դրսից կարող էր կեղտոտ լինել՝ բայց ոչ, նաև, ներսից. և յետոյ թէ՛ եղած կեղտն՝ անշուշտ, ջրի մէջը կը մնար և ոչ թէ հաւի ներսը կը թափանցէր: Հենց այս մտածութեան վրայ՝ տանուտէրը պղնձէ ափսէն մօտեցրեց հիւրին, երևի վերջինի՛ հաւի վրայ յառած՝ հայեացքից գուշակելով նրա ցանկութիւնը:

— Հն, սրանից կարող եմ մի փոքր ուտել, բայց այստեղ... դանակ ու պատառաքաղ չկայ, ասաց Պետրոսը ժպտալով ու սեղանի շուրջը նայելով:

Տանուտէրը ձեռքը տարաւ գրպանը և հանեց եղջիւրի սև կոթով, տեղական դարբնի շինած մի դանակ: Բայց քահանան ժամանակ չըտուաւ նրան: Հաւն շտապով իւր առաջը քաշելով՝ նա սոթտեց թևերը.

— Աղբէր, էս քաղաքացիք ինձ ուտելու թահրը գիտում չեն: Բա ըսենց դեղին լալի (սաթի) պէս հաւին էրկաթ կը դիփցնեն. ափսոս չի... հրէս Աստօծ դանակ էլ ա տուել մեզ, չանդալ էլ: Այս ասելով՝ նա ձեռքերով պատառ-պատառ արաւ հաւը և ափսէն մօտեցրեց հիւրին: Բայց վերջինի համար նորէն ուտելու դժուարութիւն առաջացաւ: Քահանայի ձեռքերի արած ծառայութիւնը փակեց նրա ախորժակը, ուստի հաւի ափսէն հեռացրեց իրենից:

Տանուտէրն սկսաւ թախանձել: Իսկ քահանան զարմացաւ որ երիտասարդը մի փոքր առաջ ցանկութիւն յայտնեց ուտելու, իսկ այժմ հրաժարւում է: Նրանք չէին գուշակում հրաժարման պատճառը. և եթէ, մինչև իսկ, Պետրոսը բացազրէր, նրանք կը զարմանային, որովհետև հաւը դանակով ու պատառաքաղով կարտեղն աւելի անձահ բան կը համարէին, քան թէ ձեռքերով անդամատելը:

Վերջապէս Կամսարեանը չը կարողացաւ տանուտէրի խնդիրը մերժել, առաւ հաւի մի կտորը, հանեց նախապէս վրայի մորթը, որին կարող էր քահանայի ձեռքը դիպած չըլինել և խորելով կերաւ:

— Ես որ քե նման հաց ուտէի, հմի վաղուց մե-
ռած կը լէի, նկատեց քահանան ժպտալով:

— Ինչո՞ւ, հարցրեց Պետրոսը:

— Բա ըսե՞նց հաց կուտեն. էդ հու ծտի նման
ես ուտում:

— Ուտում եմ այնքան, որքան կարողանում եմ:

— Կարողանալին ո՞ւր ես մտիկ տալի. գոռով պտի
ուտես: Ամեն բան վարջիս (սովորութիւն) ա. թէ
վարջիս կանես, էն ա շատ կուտես. թէ չէ, հալբաթ
կերածդ ծտի փայ կը լի:

— Իսկ շատ ուտելն ի՞նչ օգուտ ունի:

— Ո՞նց թէ ինչ օգուտ. բա Աստօծ մեզ ընչի՞
հմար ա ստեղծել:

— Չըզիտեմ. միթէ միայն ուտելու համար:

— Բա էլ ընչի՞...

Պետրոսը ծիծաղեց:

— Խի՞ ես ծիծաղում. դէ ասա տենեմ էլ ուրիշ
ընչի՞ հմար ա ստեղծել:

— Կարծեմ ապրելու և գործելու համար:

— Հեր օրհնած, բա ապրելու ես գործելու հմար
չըպտի ուտես. սոված փորով գործիլ կը լի:

— Պէտք է ուտել, այո՞, բայց չափաւոր: Ով որ
շատ է ուտում, նա չի կարող շատ գործել:

— Եանդիշ ես (սխալում ես). ով որ շատ ա ու-
տում, նա էլ շատ գործ ա շինում: Ա՛յ, քե ըինակ էջը՝
ձին, եզը, նրանք որ շատ չուտեն, կարան բան անել՝
եա չէ, հրէս ես: Օրը իրեք անգամ որ լաւ, բաբաթ
չուտեմ, կարամ էս դադա բան շինել: Էս օր ըսաւօտ

էփ եմ վեկացել հա՛. ծէզը հլա ծեղած ոչ՝ մտել եմ
ժամն ասել. եզոյ գնացել եմ հանդը՝ իրեք սել խորան
(խուրձ) հւաքել բիրել տուն. եզոյ տիրակլինի կտրած
աթարը դարսել, հրէն սար եմ շինել. հմի էլ որ ըստեղ
եկած չըլինի, մի ուրիշ բան կանի: Համա դէ, ասենք,
— ըսէլ լաւ դառաւ. չուն եկանք, համ քե ծանօթուե-
ցինք, համ էլ տանուտէրի սեղանը պատուեցինք:

— Իսկ դուք շատ ուտելուց չէք հիւանդանում,
ժպտալով հարցրեց Կամսարեանը, որ ըստ երևութին,
ցանկանում էր քահանայի զրուցից իւր գործին պի-
տանի տեղեկութիւններ քաղել:

— Բա, խի՞ եմ հիւընդանում, քիչ որ ուտեմ, էն
չախը կը հիւընդանամ...:

Այդ միջոցին Սալբին եկաւ սեղանը հաւաքելու,
որովհետև ճաշը վերջացել էր:

Տէր հայրը, որ սկզբում մոռացել էր սեղանն օրհ-
նել, այս անգամ արդէն յիշեց իւր պարտքը և խօսքն
ընդհատելով՝ «լիութիւն սեղանոյս անհատ և աննուազ
արասցէ»... աղօթքը կցեց և ապա «Հայր մեր»ն ասե-
լով՝ յետ քաշուեցաւ:

Երիտասարդը շնորհակալութիւն յայտնեց տանու-
տէրին իւր հիւընդանութեան համար. իսկ վերջինս՝
համեստութեամբ յարեց.

— Աւել պակասը բաշխես, ադա, գեղի տուն ա,
հմմէն վախտ ազիզ (թանկագին) զոնաղի արժան բան
չըճարուիր:

— Այդպէս մի ասէք, խնդրեմ, շատ շնորհակալ
եմ, ընդհատեց Պետրոսը:

Իսկ քահանան, որ չէր սիրում ճաշելուց յետոյ իսկոյն հեռանալ, որպէս զի ստամորսին ժամանակ տայ իւր մարսողական գործողութիւնն սկսելու, կցեց ընդհատուած խօսակցութիւնը, որի նիւթն, իւր կարծիքով, պէտք է հետաքրքրում լինէր կամսարեանին.

— Ասում ես՝ շատ ուտելուց հիւրնդանում չես... էս ա վաթսուեն արեկան մարդ եմ. սատանի անգաջը խուլ, հլա մի տեղս ցաւած չի: Աորթ ա, ջանով չաղ (գեր) չեմ, համա օսկորս ընենց դայիմ (ամուր) ա, որ ձեռս երկաթ տաս միջից կը ծալեմ: Էս դիֆ նրանից ա, որ լաւ ուտում եմ: Հրէս, տանոււտէրն էլ գիտում ա. թէ որ ուզեմ, էրկու դագան (պղինձ) կերակուրը մի նափասըմը (շնչումը) կուտեմ: Անգաջը կանչենք Սոլոմոն սարկաւազին: Մի օր Սեանայ վանքումը նստած ենք, էլի ըսենց ուտելի վրայ խօսք վեր եկաւ: Սոլոմոնն ինձ հարցրեց թէ՛ «այ էրէց, քանի՞ իշխան (իշխանաձուկ) կարաս մինհետանց (միանգամից) ուտել»: Ասի, սարկաւազ, հինգը կուտեմ: Ասաւ՝ կարալ չես: Ասի մարջ (գրագ) գանք. ասաւ՝ գանք:

Մարջ եկանք էն պայմանով, թէ որ ես հինգ իշխանն ուտեմ, հօ ուտեմ, ինձ հալալ. թէ չէ, մին արծաթի բնօթաման առնեմ տամ իրան: Իմ բողոքից էդ օրն էլ Ելէնովկի դօլիցը (կողմից) խի բօլ (առատ) իշխան ին դրկել վանքի հմար: Ամա ի՛նչ իշխան, էս դաշաղ (մաքսանենգ) իշխաններից չըմանաս է, որ թիֆլիզ տեսել ես, էն որ մինը ըսկի էրկու գրվանքայ գալիս չի. սրանց մինը՝ չորս, ես հինգ գրվանքայ կրէր: Հէնա սարկաւազը հինգ մենձ մենձը ջոկեց,

տուաւ աշշուն (խոհարարին), ասաւ.— Ադա, էս դիֆ կը տանես մենձ դագանումը կը խաշես. եդոյ սինումը (սկուտեղ) կը դարսես կը բերես: Ասաւ՝ «աչքիս վրան»: Բլբիւլեանց վանահայրն էլ, Աստօձ կարգի, պատարագի պահի, խի լաւ մարդ ա, ասեց, «ադա, աղը տեղն արան, անալի չըլի, թէ չէ տէրտէրի փորը կը ցաւի»: Ասեց՝ «ըգենց կանեմ, Հայր սուրբ»: Էն ա ըսկի մի սհաթ չըքաշեց, տենեմ դոշաղ աշշին հինգ իշխանն էփած, սինումը դարսած, տաք-տաք, շալքը (գոլորշին) բանցրանալէն բերաւ դրաւ առաջս, հետն էլ չորս լաւ փափուկ հացեր: Օրը ըսենց լաւ օր էր, մենք էլ հայաթումը (բակում) ուռի ծառերի տակին, կանաչկոտումը նստտած: Միաբաններն էլ դիֆ հաքուել են գլխիս որ տենան թէ՛ հինգ իշխանը ո՞նց պտի ուտեմ: Էն ա հենց որ աշշին սինին դրաւ առաջս, էրեսիս խըչըհանեցի, ու «Աստուած իմ, ի քեզ յուսացայ, մի ամաչեցից, և մի ծիծաղեսցին զինև թշնամիք իմ»... ասեցի՝ հու կցեցի ուտիլը... Մինը կերայ, էրկուսը կերայ, իրեքը կերայ, չորանջինումը ուզեցի նափաս (շունչ) քաշեմ: Քուրդ Գրիգոր վարդապետը ասաւ՝ «այ տղայ, բանդ բուրդ ա ըլում». ասի չէ, հայր սուրբ, եանդլիշ ես: Իգնատիոս վարդապետն էլ, որ հլա էն վախտը սող էր, ասաւ՝ «այ էրէց, ընենց արան որ Աագախեցուց էրեսը սև չըթողաս»: Ասի արխային կաց, հայր սուրբ, էրկու էսքան էլ որ ընի, կուտեմ, միան թէ կարաք մի քիչ գինի հասցրէք ինձ: Ասաւ «էս սհաթին»: Էն ա լուսահոգին կանչեց փոքրաւորին, ասեց. «ադան, գնա իմ գուլատ-

բուժը (պահարան) պատի կուլի (դորակ) մէջ գինի կայ, բեր»: Փոքրաւորը վազ տուաւ, բերաւ: Էդ աղբաթըխէր գինին գլխիս քաշեցի թէ չէ, մին էլ տենամ ինչ որ կերել չի, քշեց տարաւ, ընէնց որ ասես ըսկի բան չեմ կերել: Ասի, Սոլոմոն սարկաւագ, էս էրկուսն էլ ուտիլու եմ, համա սրանէ բան չի լիւ. մի իրեքն էլ խաշիլ տու բեր: Տենեմ սարկաւագիս ռանգ ըռուշը գնաց:

— Էդ հլա կեր, խաշիլը հեշտ ա, ասաւ: Էն ա ես նոր մէկելանց կցեցի ուտիլը: Տասը մնուտ չըքաշեց, քու արևը, էրկու իշխանն էլ մաքրագարդեցի. ինչ կըլի գլխների զօդերն (ուղեղն) էլ թամուզ ծծեցի, կուլի մնացած գինին էլ վրան քամեցի ու եդ նստայ:

— Ապրես, աէր-Վանի, ապրես, կերածդ քե հալալ, ասեց վանահայրը: Մնացած վարդապետնին էլ գուժեցին ինձ. ամա դէ Սոլոմոնի սրտին որ դանակ խփիր, արին չէր դուրս գալ. մին ընդիւր հմար, որ մարջը տանուլ էր տւել. մին էլ ընդիւր՝ որ ինքը վանքի տնտեսն էր, նըհախ (ի գուր) տեղը հինգ իշխան էր կորցրել, էդ ոնց պտէր մուռանալ: Այ էդ օրուանից դէսն ա որ դիփ իմ հունարը ճանաչում են:

Կամարեանը, որ քիչ առաջ լսում էր քահանային հեռաբրբրութեամբ, յուսալով թէ՛ նրա զրուցից կարող է քաղել «պիտանի» տեղեկութիւններ, այժմ արդէն ճանձրացաւ՝ տեսնելով որ նա այդքան երկար խօսում է միայն շատ ուտելու վրայ, կամ գովում է իւր որկրամուլութիւնը այնպիսի պարծանքով, ինչպէս մի ուրիշը կը գովէր իւր քաջութիւնը, կամ մեծ գոր-

ծերը: Այդ հանգամանքը, նոյն իսկ շարժեց երիտասարդի դժգոհութիւնը, այն պատճառով որ նրա առաջ բացաւ դարձեալ գիւղացու ցաւերից մինը և յիշեցրեց նրան թէ՛ որքան անհրաժեշտ էր իրեն՝ հաւատարիմ մնալ իւր ուխտին: Ուստի նա կտրուկ և մի քիչ էլ կոշտ ձայնով հարցրեց:

— Տէր հայր, դուք ուտելուց զատ ուրիշ բանի մասին չէ՞ք կարող խօսել

Քահանան հասկացաւ տրուած հարցի ոչ—յարգական նշանակութիւնը և լուրջ կերպարանք առնելով՝ պատասխանեց:

— Ընչի՞ չեմ կարող, որդի. հենց դրան համար չեմ եկել ըստի: Էլ վախտ (քիչ առաջ) ախար իմ տիրացուն ասեց թէ՛ էն թիֆլիզեցի աղան եկել ա որ մեր շէնըմը կենայ. թէ՛ թարսաչայի ըմամտիտելը (վերակացուն) ասել ա, միթօմ, դու եկել ես ըստի ապրես ու մեր գեղացուց օգնես, բաղդաւորացնես: Ասի՛ Ասծու խէր խաբարը քե, ա Մօսի, էդ ի՞նչ լաւ բան ես ասում. մեր գեղն հենց դհէ (այդպիսի) մին մարդի ա կարօտ... ամա չի՞ թէ սխալում ես, ես քե հետ զարաֆաթ (կատակ)՝ լեն արած. Ասաւ՝ գիտում չեմ. լսածս եմ ասում: Հմի ես էլ եկայ որ իմանամ թէ՛ էդ բանը զորթ ա թէ սուտ:

Պետրոսը յանկարծակիի եկաւ. նա այդ տեսակ հարցի չէր սպասում, ուստի և չիմացաւ ի՞նչ պատասխանել:

Մինչդեռ տանուտէրը, իբրև թէ հիւրի դիտաւորութեանը լաւ տեղեակ, շտապեց պատասխանել.

— Հալբաթ որ գարաֆաթ են արէ. քաղքցի աղա մարդ իմալ կանայ գեղ նստիլ. էն կուգա համէն եաներ շուռ գալ, գեղեր, քաղաքներ տեսնալ, ընդիւր խամար էլ կայներ է մեր գեղ:

— Դրուստն էդ կլի: Ախար ես էլ ասըմ եմ՝ նա ըստի ճնց կարա մնալ, հաստատեց քահանան, ապա դառնալով երիտասարդին՝ հարցրեց. — ասել ա. (կընշանակէ) դու հմի ճամբորդութի՛ն ես անում:

Կամսարեանը գլխով հաստատութեան նշան արաւ:

— Ո՞նց ա, մեր գեղին համնում ես:

Երիտասարդը բացասեց, դարձեալ նշանով, չըկամենալով կարծես խօսել: Իսկ տանուտէրը յարեց.

— Աղան մեր գեղ ըսկի չըխաւնիր, համէն գեղերէն փիսն էս ա, ասում ա:

— Հա՛. բա էդ խի՞ չես համնում, հարցրեց քահանան:

— Սրա ի՞նչը հաւանեմ, սա հօ գեղ չէ, աւերանոց է, խօսեց վերջապէս Կամսարեանը:

Այս գիտողութիւնը քահանայի ինքնասիրութիւնը գրգռեց. «ճնց թէ իմ հովուած գիւղին աւերանոց անունը տայ». մտածեց նա երեւի և տաքացած ասաց, — Տես հլա ի՞նչ ա ասում... ա, սրանէ լաւ գեղ կլի... Բա էն արարած աշխարի տէր թագաւորը մեր Չըբխլուին հաւանել ա, էդ դու ճնց չես համնում:

— Ո՞ր թագաւոր, հարցրեց Պետրոսը:

— Հանգուցեալ Նիկողայ Պաւլիչը, բա մանում չես:

— Ո՞նց է հաւանել, չեմ իմանում:

— Ընենց ա հաւանել որ եկել ա մի գիշեր ըստեղ կացել:

— Այդ ես չըգիտեմ.

— Բա խի՞ չես գիտում. յուսում որ առնումէք, ըսենց բաները կարթըմ չէք:

— Այդ մէկը չեմ կարողացել:

— Դէ հէն ա, ասա, մենծ բաները թողնում էք, պուճուր բաները կարթըմ լի՞. նկատեց քահանան, իբր թէ կամենալով ստացած վիրաւորանքի փոխարէնը հատուցանել:

— Դա մեծ բան չէ, մի հասարակ տեղեկութիւն է. նկատեց երիտասարդը:

— Բա որ մենծ բան չի, խի՞ հրէն Սեանայ սուրբ Աստուածածնի եղցու գաւթումը գրած կպցրած ա թէ՛ «Յ՛ թուին, հոկտեմբերի 6-ին, չորեքշաբթի օրը մեծագոր կայսր Նիկողայ Պաւլիչը եկել ա մեր Չըբխլուումը մին գիշեր կացել»:

— Կարող է պատահել:

— Ո՞նց թէ կարող ա պատահել. քե ասըմ եմ պատահել ա, բա հայելար չեմ ասըմ:

— Հաւատում եմ, էլի:

— Բա որ հատում ես, խի՞ մեր գեղին հաւան չես կենում:

Կամսարեանն այս անգամ չըկարողացաւ ծիծաղը զսպել և վեր կենալով տեղից, ասաց.

— Դէ որ այդպէս լաւ գեղ ունէք, տարէք ինձ ցոյց տուէք:

— Լաւ, գնանք, ասաց Տէր Վանին և վեր կացաւ տեղից: Տանուտէրը նոյնպէս ընկերացաւ նրանց:

ԺԱ.

Գիւղամիջից անցնելիս՝ նրանք հանդիպեցին յիսուներ անցած մի կարճահասակ, փոքրադէմ, խուզած մօրուքով, սուր հայեացքով և գօտեպինդ հագնուած մարդու, որ, չընայելով տարիքին, ճանապարհն ընթացնում էր ժրութեամբ: Մօտենալով քահանային, նա հանեց մորթէ գդակը, «օրհնե՛ս տէր» ասաց և ապա նորէն գլուխը ծածկելով՝ բարևեց տանուտէրին և նրա հիւրին:

— «Աստուած օրհնեացէ», սուտա Պետի, էդ սըր ես գնում, հարցրեց քահանան:

— Ա՛, դէր, ասըմ են Սօջան եկել ա, հրաման ա բիրել որ էն խեղճ Սայու տունը վեր գրի, գնըմ եմ տենամ կարամ խնդրեմ, աղաչեմ. բալքի թէ (գուցէ), մարդ ա, սիրտը ռահմ (գութ) ընկնի, մի քիչ էլ ա մոհլաթ (միջոց) տայ:

— Ա՛ Պետ, ես Սօջին տեսայ, գընըմ էր Սեմենովկայ, ասեց էգուց եմ եդ գալու, յայտնեց քահանան:

— Հա՛:

— Հա՛:

— Դէ էն ա, ասա, գնացել ա պրիստաւի եղնից էլի՛, չուն պրիստաւը էրէկ ընդեդ էր... էդ հու բանը դժարացաւ, գուշակեց գիւղացին:

— Դէ խի՛ ա դժուարանում. թէ մոհլաթ տալու ըլի, էգուց էլ կը տայ, յուսադրեց քահանան:

— Չէ, ա դէր, պրիստաւը որ եկաւ, բանը խարաբ կըլի. ոուս մարդ ա. լիզուն գիտում չենք, խօսքը հսկանըմ չենք. «պաշօլ, դուռակ» ա ասիլու հու խեղճի էլած չեղածը փեչատի (կնքէ). նրա հետ մենք սնց խօսանք:

— Ա՛, հրէս խօսողն ըստի չի՛, ասլանի տօլ կանգնած. ոուսի լիզուն էլ գիղայ, փռանգինն էլ, ասաց քահանան, ցոյց տալով կամարեանին:

— Հա՛, դէ սըր ա. էդ հու Ասծու օղորմութիւնը կըլի:

— Ի՞նչ բան է այդ, հետաքրքրուեց երիտասարդը:

— Ըստեդ մի գեղացի ունենք, Սօջա Միրզին փող ա տալացուք (պարտ). սա ուզում ա բարեխօսի, բալքի թէ խօջան մի քիչ էլ ա մոհլաթ տայ, բացադրեց քահանան:

— Պարտականը, երևի, դրա ազգականն է, հետաքրքրուեց Պետրոսը:

— Չհ, հեռու մարդ ա. ամա դէ սրա հմար դիփ էլ ազգական են: Ով որ էս գեղըմը նեղութեան մէջ ըլի, սա պտի վազ տայ քէօմակ անի (օգնէ): Աստօծ օրհնի, լաւ ջան (հոգի) ա: Ամա մին փիս խասեաթ ունի. շատ ա ճշմարտախօս. (ասենք Ղազախեցիք դիփ ըղենց են. սա էլ Ղազախիցն ա քոչած): Հարիր անգամ ասել եմ՝ ա՛ Պետ, խօսքն ընենց մարդու ճակատմէջին ես խփըմ որ նա շշկուում ա. ըղենց մ՛անիլ, որդի: Ասում ա, չէ, ա՛ դէր, դու գիտում չես, լաւն հենց էդ ա:

— Ի հարկէ, լաւը նա է որ մարդ ճշմարտախօս լինի և խօսքը ճակատին ասէ, հաստատեց Կամսարեանը:

— Բն, դու էլ ես ըզենց ասում. դէ էն ա, ասա, երկուսդ մին դինի (հաւատի) մարդիկ էք էլի: Դէ որ ըզենց ա եկ, ծանօթուիր էս ուստին: Ա՛ Պետ, գի՞ տում ես սա հով ա, դարձաւ քահանան գիւղացուն:

— Չէ, գիտում չեմ. պատասխանեց վերջինս:

— Սա Թիֆլիզից ա եկել. յուսումնական սողայ ա. մեր մհայները (գաւառները) ման ա գալիս, տենում ա, քննում ա. կըլի որ էդ տեհած, քննածն էլ գիր շինի, եա գազէթ գցի: Ամա դէ մեր գեղին հաւան չի կենում: Վախում եմ մեզ վրա փիս բաներ գրի՛ չմի էս ա տանում եմ շէնը ման ածեմ, բալքի չըտեհածը տենայ, հւանի: Դու էլ մեզ հետ եկ. դոչա՞յ մարդ ես. կըլի մի մի հետ էլ դու սրա ջուղաբը տաս, ասաց քահանան ծիծաղելով:

— Լաւ կըլի. գնանք, համաձայնուեց գիւղացին:

— Տէր հայր, ես գիր շինող, կամ գազէթ գցող չեմ. ինչո՞ւ այս մարդուն սխալ տեղեկութիւն ես տալիս, նկատեց Կամսարեանը ժպտալով:

— Դիփ մէկ ա, էս օր չըշինես, մէկէլ օրը կը շինես. եա չէ մին տարուց եղբ: Յուսումնականներին ես լաւ եմ ճանաչում: Գալիս են ըստեղերք ման գալիս բաներ տենում, լսում, իմանում, եդոյ գնում: Անց ա կենում մին, էրկու, իրեք, եա չէ հինգ տարի: Մին էլ տենում ես էն բաները որ ըստեղ տեհել, իմացել են, դիփ մին մին դուս են տւել գազէթում: Մարդ արմանում ա թէ՛ ախպէր, բա էդ սնաքանդին էս

հինգ տարուայ միջումը ըսկի մի բան էլ ա մտահան չարի՞ն: Մի հետ ըստեղ մի թեմական էր եկել, հոգևոր Տէրի հրամանովն ուզում էր ըբխանց հմար յուսումնարան բանայ. անումը Պոօշեանց էր, գիտում չեմ, ճանաչում ես թէ չէ:

— Ճանաչում եմ, ասաց Պետրոսը:

— Հա, ուզում էր բանայ: Դորթ ա էլլիկը (ժողովուրդը) փող չունէր, յուսումնարանի բանը գլուխ չեկաւ, ամա դէ ինքը խի՞ լաւ մարդ էր. հետը քաղցր զրից ինք անում: Չուն նրա մին գիրը Դիլի ձեռքս էր ընկել, կարգացելի, գիտում ի որ լաւ գրող ա: Մին օր հարցրի թէ՛ պարուն թեմական, էդ հին հին բաները ո՞րդից ես մացել որ գրել ես: Ասաւ՝ ըբխութիւնից: Ասի՛ բա էդ ո՞նց ա որ քսան, էրսուն տարումը մուռացել չես, դիփ ընենց սարքին գրել ես: Ասաւ՝ ընենց ա, մուռանալ չեմ: Ասի՛ բա խի՞ ես մուռանում եմ: Ասաւ՝ ընդուր որ Աստօժ քու գողէն ուրիշ թահր ա շինել, իմն ուրիշ: Ասի՛ բա խի ըզենց շատ էք գրում. ախր մինը գրում էք, բոլ ա (բաւական է), էրկուսը գրում էք բոլ ա. խի՞ որ ճոնդը կցում էք, էլ բաց չէք թողնում: Ասաւ՝ ընենց ա, ճար չի լի. որ չըզրենք՝ ջանըներս մղմող (ցեց) կընկնի:

— Բա է, ասել ա հիւանդութիւն ա լի՞ գարմացաւ Պետին:

— Հիւանդութիւն ա, բա: Չէս տենում, մինը որ մեր շէնից գնմա արանը հունձի, ընտեղի դարասուից (ճահճաջուր) խմում, գալիս ա ըստի՛ շերմը բողազիցն ա կենում: Տարութէնի թիւնդը վախար տէլ ա տալի

(զառանցում է). ասում ա՛ «հրէն սատանէն էկաւ, հրէն դժոխքը բացուել ա. եա չէ՛ հրեշտակնին կռիւ են տալի սատանոց հետ»: Ասում ես. ա բալամ, ըստի սատանայ չըկայ, ըստի դժողք չըկայ, էդ խի՞ դէ է բաներ ես խօսում: Ասում ա՛ «բա քոն էք, տենում չէք էն պուզաւոր (եղջիւրաւոր) մենծ սատանէն, որ հաքին կռացրած, ալաւի (բոցողէն) ջիդան (նիզակ) ձեռքումը, կռքները (ատամները) զրճըցնելէն հրէս գալիս ա թէ մեզ կո՛ւլ տայ»: Հմի ասելս էն ա թէ՛ էդ յուսումնականնին էլ, ուզեն չուզեն, պտի գրեն. չուն յուսումը որ առնում են, դէ է մին հիւանդութիւն մտնում ա մէջները: Իրանք էլ չեն գիտում թէ՛ խի են գրում. ամա դէ որ չըգրեն, սրտները կը ճաքի, եա ոնց որ թեմականն էր ասում, ջանքները մղմող կրնկնի

Տէր Վանին, որ չէր մոռանում. Կամսարեանի՛ «ուտելու» մասին արած վերջին դիտողութիւնը, այժմ արդէն աշխատում էր ոչ միայն գատ խնդիրների, գլխորդների կամ ուսումնականների մասին խօսել, այլ և ընդունելով՝ որ երիտասարդը դրանցից մինն է (թէ՛ պէտ և նա հերքեց), կձու ակնարկներ էր անում նրա հասցէին:

Պետրոսը, սակայն, գուարձանում էր տէր-հօր այդ ուշադիր ջանքը տեսնելով:

Երբ նրանք մի քանի ծուռ անցքեր անցնելով հասան մի բարձր տեղ, քահանան կանգ առաւ և երեսը դէպի ծովակը դարձնելով՝ ասաց Կամսարեանին.

— Դէ հմի մտիկ տո՛ւ, տես, սրանէ լաւ գեղ կըլլի՛. այ, դէսը մտիկ տո՛ւ. դէսը մտիկ տո՛ւ. էս վերևի կա-

պիտը տես... այս ասելով նա ցոյց էր տալիս շրջակայ լեռների, ծովակի և կղզու տեսարաններն ու գեղեցիկ հորիզոնը, որ պարփակում էր երկնքի պայծառ կապուտակը:

— Իրանք ձեր գիւղի առաւելութիւնները չեն, այլ բնութեան, նկատեց Կամսարեանը. այդպիսի առաւելութիւններ ամեն տեղ կարելի է գտնել: Ի՞նչ ունէք դուք ձեր գիւղում՝ ձեր ձեռքով շինած, այն ցոյց տուէք:

— Ի՞նչ պտի ունենանք. այ էս տներն են, էս էյվանները, էս մարաքները... հօ տենում ես:

— Տեսնում եմ, բայց դրանք տներ չեն, այլ ախոռներ. մարդ արարածը չը պէտք է ապրի դրանց մէջ

— Բա մենք խի՞ ենք ապրում:

— Հենց ես էլ դրա վրայ եմ զարմանում թէ՛ ի՞նչպէս էք կարողանում ապրել:

— Գիտաս ինչ կայ, աղա, մէջ մտաւ ուստայ Պետին. ես, դորթ ա, հմի գեղըմն եմ ապրում, ամա շատ ման եկած, շատ աշխարհ տեսած մարդ եմ: Ինձ որ ուստայ են ասում, նրա հմար ա որ փեշակով (արհեստով) դիւլգեար (հիւան) եմ, քաղաքներում շատ եմ բանել: Բիւան էլ եմ ըլել, Բագու էլ, Թիֆլիզ էլ: Վերջն ամեն տեղից գզուել՝ եկել եմ էս գեղը, մտել իմ շինած կօկալի (խրճի) տակը, թէ ի՞նչ ա, մի քիչ դինջ ապրեմ էս հալալ ու սայայ (արդար և պարզ) մարդկանց հետ:

«Դու որ ըրմանում (զարմանում) ես թէ՛ մենք ոնց ենք կարում էս ախոռներումն ապրիլ, ես ըսկի

ըրմանում չեմ քու ըրմանքի վրէն. չուն քաղքի սիրուն աներումը ծնուած, փափուկ ապրած, փափուկ մենծացած աղան ո՞նց կարայ գիտայ թէ՛ էս ախոռներումն էլ ապրիլ ա ըլում: Ամա դէ ես, որ տենում եմ թէ՛ գլխացին ո՞նց ա գործ շինում, ո՞նց ա ըռաւօտից ինչ կլի բիկուն քար ու քոլին կպչում, հողի հեա կոխ տալի, արևի տակ քրտնում. ես կարամ ասիլ՝ որ էն թահր նեղութիւն քաշողի հմար՝ էս ախոռնին էլ շատ են: Չուն վաստակած ջանը, թիլացած օսկրները դինջացնելու հմար, ամարաթ (ապարանք) չի պէտք. բաւական ա որ մի ծածկած քիւնջ ըլի ու էդ քնջումը մարթ իրան փրտակի (ծածկի), միան էնքան ըլի որ թոռ ու թացը չընեղեն. ես չէ քամին քրտնած մէջքը չըստոցնի: Ըստեղ ո՞նց որ տղամարդը, ընենց էլ կինարմատը սող օրը գործ են շինում, չուն ցաւերնին շատ ա, կարիքնին մենծ, պտի անեն որ ապրեն, ծերը ծերին հասցնեն. չանողը կը մնայ սոված, նրան ոչ Աստօծ, ոչ էլ բանգան հաց կը տայ: Դրա հմար ա որ ըստեղի մարդը տան սիրունութենի, ես կարգ ու սարգի վրայ մտածում չի. չուն սոված փորի հմար ամենից առաջ հաց ա հարկաւոր, տկոթ ջանին էլ՝ մի կտոր կտաւ: Դէ մարդ որ էդ էրկու բանը գօռով ըլի՝ ձեռք բերում, էլ ուրիշ բանի վրայ ո՞նց կարայ մտածիլ:

«Ա՛յ, ուրիշ ա ձեր քաղքի բանը. ընտեղ փողը չիբ ա (չոր միբրգ. այսինքն՝ առատ). էնքանը բիրդան (միանգամից) ո՞նց են հաքում, գիտում չեմ, միան էս կայ որ՝ մինը թէ աշխատում ա, տասը մուֆթայ են ուտում, ոչ ջափայ կայ, ոչ նեղութիւն: Մեր տեղը

թէ որ կնիկը մարդու դագար (չափ) չըբրտնի, տանը կէսը կը մնայ սոված. ամա ընդի՛ կնանիքը դիփ պարապ են ման գալի: Չեր էն Սաղարի (փոխարքայի) տան ուշի քուչէն չըկայ, ընդեղով շատ եմ անցկացել: Էդ քուչէն ըռաւօտից ինչ կլի բիկուն ման եկողով լիքն ա ըլում. մարդ որ մտիկ ա տալի, մնում ա ըրմացած թէ՛ բա էս մարդիկը բան ու գործ չունեն, էս խի՛ ըսենց պարապ ման են գալի: Ես չէ էդ կնանիքը էդ աղջկերքը, ես հարիբ ասեմ, դու հագար ասա, դիփ հագուած, գարթարուած, քարեղաննին վրան, թուբուն-թուբուն (խումբ խումբ), կոնափոնուկ (թեանցուկ), ծիծաղելով, հոհուլով, բաշ-աշաղայ, բաշ-խխարի (գլխիվայր, գլխիվեր), գնում, գալիս են: Մտածում ես թէ՛ բա սրանք տուն չունեն, տեղ չունեն, քիլիթաթ (գաւակներ) չունեն. կար ու կարկատան չունեն, հաց ու լուաց չունեն, էդ խի՛ ամեն բան թողած՝ ըստեղ բօլթա են քաշում (ձեմում են):

«Մի օր էս բաները հարցրի մեր Խաչթառակցի վարժապետին, նա գլուխը ժաժ տուաւ հու ասեց. — ունին բա չունին. էդ կնանուց մեծ փայը մարդ էլ ունին, բեխերք էլ, տուն ու տեղ էլ, ամա դէ՛ դիփ վեր են ածում հու գալիս ըստեղ բօլթա քաշում: Աստօծ, ասաւ, հաստատ պահի թագաւորութիւնը. բոլ (շատ) յուսումնարաննի ա շինել. բէխերքը ըռաւօտանց զրկում են ընտեղ, մարդիկն էլ գնում են իրանց քեասիբութենին. էդ վախտը էնա կնանուց աստղը աչըլմիշ ա ըլում (բացւում է). շուտ են անում հագւում. գուգում, գրթարում, անուշ հոտերը վրան

շաղ տալի, տուն ու տեղը թողնում նօթարի արով (յուսով)։ Թէ պատի ըէխերք էլ ունեն՝ նրանց էլ ծծմերի եւ զարավաշի (աղախնի) վրէն վեր գցում ու իրանք դուրս պրծնում, գալիս ըստեղ – սէյր անում. մինն՝ իրա դօստի (բարեկամի), մէկէլը սիրեկանի հետ, շատերն էլ հենց մենակ, չանէն ցից արած՝ չափում, չափչփում են քուչէքն ու մէյգաննին։ Էսենց-ներն էլ կան, ասաւ, որ հաքում են իրանց մի թայգաշի (ընկերուհու) տունը ու օր ու ցերեկով նստում, ինչկլի ճաշի վախտը դումար խաղում։ Եփ տղամարդի տուն գալու վաղէն համնում ա, գալիս, հետը հաց են ուտում, ու նրա դուս գալուց եղը, էլ մէկէլ նորից տուն տեղ թողնում, գնում դումարբաղխանէն...։ Աստօժ վկայ, ասեց վարժապետը, էս թահրի կնանուց հէօքմը (իրաւունքը) որ ինձ տան է, դիփունանց մի թոկով կը կապեմ հու բերեմ Սեանն ածեմ։ Ասի, ա բալամ, էլ խի էդ զիբիլները բերում Սեանն ես ածում, ու նրա անմահական ջուրը մուռտառում, հազիր էս լղղած Քուռն ածես պրծնես։

«Ըսենց էրկանցնելիս միտքն էն ա որ ասեմ թէ՛ քաղաքումը չոր դէէ շատ փող կայ, հալբաթ մուֆտայ ապրողնի էլ շատ կլեն։ Դէ քէ այան ա (յայտնի) որ մուֆտայ ապրողի իշտահը համեշա (միշտ) բաց կլի. էս օր որ մին կերակուր ա ուտում, էգուց՝ էրկուսը, իրէքը, եւ չորսը կուզի. էս օր որ բուրդ ա հագնում, էգուց արբէշում, զառ ու զարբար կուզի, էս օր որ մի էտաժանոց տան ա կենում, էգուց էրկու եւ իրեք էտաժանոց կուզի. դհենցով՝ (ջանը դուրս գայ

աշխատողին) ուտին էլ կը բուանայ, հագնին էլ կը ճխանայ, տունն էլ կը սարգուի, քաղաքն էլ կը գրթարուի։ Ամա դէ ըստեղ ոչ հեշտ աշխատիլ կայ, ոչ մուֆտայ ուտիլ. դրա հմար էլ կարում չեն սարգ ու կարգի եղից ընկնիլ։ Այ, հրէս էս կաուրն անց-նենք, եկ, մտիկ տու տես, մեր կնանիքն ինչ են անում. տես ձերունք ըսկի սրանց քաշած նեղութենի հարիր փայից մինը կարան քաշիլ...։

Այս ասելով, ուստա Պետին ուղեկիցներին առաջ-նորդեց դէպի մօտիկ կալը, ուր այդ միջոցին մի մայր, երկու հասակաւոր և մի փոքր աղջիկ, ութամեայ մի տղայի հետ՝ զբաղուած էին ցորեն կալսելով։ Մայրը եղանը (հեծանոց) ձեռքին՝ պտտում էր կալի շուրջը և շարունակ հասկերը հաւաքում կալամէջ, ուր պտտում էին երեք գոյգ կամներ։ Դրանցից երկուսը լծած գոյգ եզներով, վարում էին երկու մեծ աղջիկները, իսկ երրորդը, որին լծած էր մի մատակ, վարում էր փոքրիկը, հեծնորդ եղբօր օգնութեամբ։

Արևը թէպէտ այրում էր վերևից, սակայն կալսողներն աշխատում էին ժրութեամբ։ Երկփեղկ կամները, որոնց վրայ ամուր կանգնած էին աղջիկները, պտտում էին կալում գոյգը գոյգի ետևից և իրենց կայծաքարէ, սրածայր ատամներով անտեսանելի կերպով ցողունը կտրտում, հասկերը տրորում և կալի յարթածածկ մակերևոյթի վրայ ցորենը փռում։ Փոքրիկ տղան շարունակ երգելով, կամ ճշարով խրախուսում էր իւր ձին, որ առաջնորդում էր եզներին. մինչդեռ աղջիկները համեստ ու լռակաց, երբեմն միայն հա-

բուածում էին ամոններին, երբ սրանք ծանրացնում էին իրենց ընթացքը, կամ ցուռկներն իջեցնում գէպի փափուկ յարդը, մի քանի ցօղուն յափշտակելու յուսով:

— Տենում ես, մատնացոյց արաւ Պետին աշխատողները վրայ, սրանք Աւանանց բխեքն են: Հերը՝ մենծ տղի հետ հրէն հանդումը ուրիշի հունձն ա անում, թէ ինչ ա, կարայ մի քանի շահի տուն բերել՝ ըստեղ էլ կնիկն ու աղջկերքը իրանց կալն են կալտում: Չորսն էլ կինարմատ են, էն պատիկն ա տղայ. ամա դէ դիփ էլ տղամարդի բարեբար գործ են շինում: Հենց գիտում ես հեշտ բան ա էս կէծ արևի տակին սաղ օրը կաղնիլն ու պտիտ պտիտ անիլը: Ձեր խանրմներից (տիկիներից) մինը թէ որ հինգ մուտ էս կամներից մի վրէն մնայ, գլուխը շուռ կը տայ, տափը կը պրանի (վայր կընկնի): Հրէս դու էլ տղամարդ ես, ամա կարում չես տաքին դիմանալ, զօնդիկը բռնել ես որ արևով չընկնես: Ամա էն շահէլ աղջկերքը, տես, ըսկի այնումնին (հոգերնին) ա. ուրախ, զվարթ իրանց գործին են: Էս ա էրկու սնաթից ետը բանը քութան կանեն (կը վերջացնեն), Աւանն էլ տղի հետ հանդից կը գառնայ, էրկտով, ես իրեքով եղանը ձեռք կառնեն, դարմանը քամուն կը տան. մութը հլա չընկած, ցորենը տուն կը բիրեն, դարմանը մարաքը կածեն, իրանք էլ կը գնան Ասծու տուած մի կտոր հացը կուտեն ու կը քնեն: Հմի սաս տենեմ. ըսաւօտից ինչ կլի բիկուն բանած, վաստակած էգ խալիսի հմար շատ հարկաւոր ա որ ամարաթ չունեն, ես չէ փափուկ կողինք, որ միջումը քնեն: Այ, հենց էս կտրանը ես չէ տանը՝

տափի վրէն մի խսիր են գցում հու պրանում. դժարն էն ա որ աչկը հուփ կալան (փակեցին), ընենց դինջ քնում են որ ասես դրախտումն են: Ամա ձեր տեղը, էն ամարաթները միջումը շատերը կարում չեն թէ գշերը քնեն. փափուկ կողէնքումը տապակ տապակ են գալի: Էդ նրա հմար ա որ գործ չեն շինում, ջանըներին ջափայ (նեղութիւն) չեն տալի, թէ ինչ ա, մի քիչ էլ ա յոգնեն, անուշ քնի համ տենան: Հմի դու կասես թէ՛ ըստոնք էլ էդ ա մինջա (մի հատ) կալ ունեն, ըսօր կը պրծնեն, էգուց էլի պարապ են: Ամա դէ դհե չի: Այ, ըստեղ համեցէք, ուրիշ բան շանց տամ:

Այս ասելով՝ Պետին առաջնորդեց ուղեկիցներին դէպի մի ուրիշ կտուր և այդ տեղից ցոյց տուաւ դիմացի տան սրահը, ուր մի քանի կանայք նստած բուրդ էին գգում:

— Տենում ես, ըստոնց կալաբանը վերջացել ա. ցորենը խորել են, դարմանը հաքել. տան իրեք տղամարդից մինն էն ա մալի (ապրանքի) հետ, մէկէլը ձիանը առած՝ քրահտարութիւն ա անում, մինն էլ մէշումը տախտակ ա քաշում: Կնանիքն էլ, տենում ես, պարապ չեն ըսկի. սանդերքը առաջներին՝ հայահայ (շտապ-շտապ) բուրդ են գգում: Հրէն էն պառաւն էլ տենում ես՝ ճխարակի տակին. լուսինը չըծէգած՝ նա ընտեղ նստած ճլվգտացնում ա. հարմները գգած բըրթից թահր թահր (տեսակ-տեսակ) թէլ ալ մանում. բարակը՝ շալի հմար, միջնակը՝ գուլբի, մի քիչ հասալը՝ կարպետի, չուալի, ես խուրջինի. քօլբի (տականք) թելիցն էլ չուան են գործում, ես շարիդ (թոկ)

հրորում: Ասենք էդ բաները հմի չեն անում: Էս ա ձմեռը որ գայ, ձիւնը գուսը կոխի, մեր կնանոց ներսի գործը ըսենց բաներ ա ըլելու: Այ, տենում ես էս չուխէն (կապա) ու շարվարը, սրանց թելը մերս ա մանել, շալը՝ կնիկս ա գործել. էնքան պինդ ա որ հինգ տարի կը դիմանայ. էս տոլաղներս (սրնապան) քուրս բանն ա. գուլպաներս իմ պզտի աղջիկն ա արել: Ուզում եմ ասել որ մեր կնանիքը պարապ օր չունին. վարուցանից, հունձ ու կալից, չիբ ու բլիթից եղը՝ դալիս են ըսենց բաները: Հաց ու լուացը, կար ու կարկատանն էլ համեշայ (միշտ) կայ ու կայ:

—Ա՛ Պետի, բա խի՞ քու բիբու (մօրաքրոջ) վէստանը (ոստայն) շանց չէս տալի. հրէն էյվանումը երհանած, մատնացոյց արաւ քահանան:

—Դէ էն ա տենում ա ըլի՞, նկատեց Պետին:

—Տենում ա, հա՛, ամա դէ մին ասա թէ՛ էն ի՞նչ ա է՛:

—Ի՞նչն է ինչ. հարցրեց Պետրոսը:

—Այ, էն գօրբա (գօրեղ) սարը, շարունակեց քահանան, ցոյց տալով տներից մէկի սրահում կանգնեցրած գորգի ոստայնը. —նրա էրգենքը հինգ գազ ա, լէնքը՝ իրեք: Էն ա որ գեօրծէն պրծնեն՝ կարպետի էրգենքը տասը գազ ա դառնալու: Էդ սրա բիբու տունն ա. չորս տղայ ունի, չորս էլ հարս: Էնու գեօրայ (ըստ այնմ) էլ՝ Աստօժ պահած՝ բոլ թոռներ, տղայ ու աղջիկ: Նրանց կէսը հունձ ու կալով ա ըլած (գբաղած), կէսն էլ հրէն շար են ընկել վէստանի ուալին՝ կարպետը գործում են: Մին էրկու ամսից եղը պատրաստ ա ըլելու, հարիբ մանէթն էլ ականջիցը կախ:

Կամսարեանը հետաքրքրուեց գորգի գործով և հարցրեց թէ՛ արդեօք չի՞ կարելի մօտ գնալ ու նայել:

—Բա խի՞ չի կարելի, գնանք, ասաց ուստա Պետին և առաջ անցաւ:

Տան սրահին մօտենալուց՝ ոստայնի առաջ նստող հարսներն ու աղջիկները ոտի կանգնեցին. նրանցից առաջինները երեսները սքօղեցին, մինչդեռ վերջինները հետաքրքիր աչքերով նայում էին եկողներին: Գորգի գործին նայելուց առաջ՝ կամսարեանի ուշադրութիւնը գրաւեցին կանանց տարօրինակ հագուստները, որոնք, իրենց տեսակում, ներկայացնում էին ազեղութեան մի ուրոյն տիպար: Նրանք, իսկապէս, որոշ ձև չունէին, այլ կազմում էին զանազան տարագների աններդաշնակ մի խառնուրդ: Կանանց գլուխներն, օրինակ, կապուած էին վիրականի նմանութեամբ, մինչդեռ բերանները ծածկուած էին քնթկալով՝ արցախեցւոց պէս: Հագուստնին էր կարճ դերիա, որի տակից, մօտ երկու թիզ երկարութեամբ երևում էր՝ նուխեցի կանանց յատուկ՝ կարմիր ու լայն վարտիք. դերիայի վրայից կապած ունէին գոգնոց, իսկ նրա վրայից հագած թաթար կանանց բաճկոնակ: Այդպիսով այդ հագուստը, որ մեծ մասամբ հին էր և պատառատուն, ստանում էր մի տգեղ ձև, որ ակելի ևս տգեղացնում էր կանանց կազմուածքը, որն, առանց այն էլ, հեռի էր գրաւչութիւնից: Նրանց մէջքերնին հաստ էր ու տափակ, փորերնին դէպի կուրծքը բարձրացած, դէմքերնին տգեղ, բերաննին մեծ, իսկ մորթերնին արևահար: Կանանց ձևով հագած էին և աղջիկները,

միայն այն զանազանութեամբ որ սրանց երեսները բաց էին և միայն գլուխները ծածկուած հասարակ չթէ աղուխով:

Մինչդեռ Կամսարեանը զննում էր կանանց սոցեղ արտաքինը և յիշում Աբովեանի «Վէրք»ում կարգացած նկարագիրը հայ գեղջկուհու մասին, ուստա Պետին մօտեցաւ ոստայնին, բացաղբութիւններ աուաւ նրա կազմութեան, թելերը հինելու, գորգը գործելու և այն կարելու, կամ ոստայնի վրայից հանելու մասին: Ապա դառնալով հարմներին ասաց.

— Բա խի՞ էք կաղնել, նստեցէք բան արէք. էս դոնաղը ճանապորհ ա. ուզում ա տենալ ո՞նց էք կարպետ գետրծում:

Կանայք իսկոյն իրենց տեղերը բռնեցին և գոյնզգոյն թելերը նորէն ձեռք առնելով, սկսան արագ արագ գործել՝ իւրաքանչիւրն իւր բաժին հինուածքի վրայ:

Այս անգամ արդէն Պետրոսը դիտում էր գեղջկուհիների գործը ճշմարիտ հետաքրքրութեամբ և զարմանում թէ՛ ինչպէս նրանք, առանց առաջները որ և է նկար ունենալու, թելերի այդ պարզ հինուածքի վրայ հետզհետէ հանում էին կանոնաւոր գծերով գեղեցիկ նկարներ, կամ թէ ինչպէ՞ս մի քանի զոյգ ձեռքերի գատ գատ գործուածքը վերջն ստեղծում էր մի ամբողջ նկար:

— Այ, սա լաւ բան էր, սրան հաւանեցի, ասաց Կամսարեանը, երբ նրանք հեռացան գորգ գործողներին:

— Ա՛, մեր ո՞ր բան չի լաւ է. դու հլա ի՞նչ ես տեսել, պարծեցաւ Տէր-հայրը:

Այս խօսքի վրայ նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով, ուր ընտանիքի մայրը և իւր երեխաները զբաղուած էին մի տարօրինակ աշխատութեամբ:

Բակի մի անկիւնում տղաներից երկուսը, մերկ ոտքերով ու սրունքներով կոխկրտում էին մի ինչ որ սև զանգուած, որի վրայ երրորդը՝ հետզհետէ ցրում էր դարմանի աւելցուկ: Մի փոքր հեռու՝ մայրը նոյն զանգուածից մի մասն առանձին առած՝ մեծ ջանքով հունցում էր. իսկ միջահասակ մի աղջիկ, կոները սոթտած՝ այդ հունցուող մասից շինում էր բլիթներ և ուժով զարկում տան արեգընդդէմ պատին: Այնպէս որ կրաշաղախով ծեփուած այդ պատը՝ հետզհետէ սևուկ բլիթներով ծածկուելով՝ ստանում էր մի շատ ազտեղի կերպարանք:

— Այդ ի՞նչ են անում, հարցրեց Կամսարեանը:

— Ցան են շինելում, պատասխանեց տանուտէրը:

— Ցան:

— Հա:

— Ի՞նչ բան է ցանը:

— Ցան չէ՞ս գիտալի, էն որ էս օր մեր օջախ կը վառէր:

— Ցանը սրանք աթարին են ասում. հրէն, էն որ ընդի ամբիւզ տուած (զիգուած) ա. բացաղբեց տէր հայրը, ցոյց տալով Կամսարեանին դիմացի բակում գտնուող քակորի կոյսը.

— Ինչից են պատրաստում, հետաքրքրուեց Պետրոսը:

— Ձեռ տենում ընչից ա, հարցրեց քահանան:

— Տեսնում եմ միայն սև-կանաչ գոյնի մի ցեխ. կարծեմ մէջը խառնուած է տաւարի...

— Ոչ թէ խառնուած ա, հենց ինքը տեղն ու տեղը տաւարի թրիք ա, ընդհատեց քահանան, և ապա կամենալով մի գիտական ծառայութիւն անել երիտասարդին, սկսաւ բացատրել թէ՛ ինչպէս են պատրաստում աթարը: — Էս որ կայ, ամենից լաւ տեսալն ա, չուն տաւարի անխառն թրիք ա: Սրան էս ա սրհենց թագա թագա (թարմ) հւաքում էն, հետը դարման խառնում ու պատի վրէն բլիթում: Էս որ չուրանայ, ընենց ա էրիւու, սնց որ խաղալը (չոր տերև): Ամա էն մէկէլը, որ ընդի դարսած ա, ըսենց չեն շինում: Եփոր ձմեռը տաւարը տանն ա ըլլում, կիւմըմը (գոմումը) բոլ (առատ) թրքում ա. էն թրիքը հւաքում են դիւս բիրում հայաթն (բակ) ածում. նրա հետ էլ շատ վախտ խառնում են ձիան թրիք, եա ոչխարի կտիտ. ամա դէ լաւն էն ա որ ըսկի չըխառնեն, չուն նրանք լաւ չեն էրում: Ետոյ էդ հայեաթի մէջ ածած թրիքը մին դոլից կոխ են տալի— մաքր թէ անասուն, մին դոլից էլ վրէն աւելցնում: Գարունքին, եփ որ տաւարը դիւս ա գեալի չոլ, հայեաթի թրիքը շատ կոխաալուց չուրացած ու տափակած ա ըլլում: Էն ա սկսում են բահով կարիլ ու մէկ էլ երեսով արիւումը շարիլ: Եփոր լաւ չուրանում ա, սկսում են դարսիլ, դէգ շինիլ: Վերջը էգ դէգի չորս դոլը ցխով ձեփում

են որ անձրևից չըթրջուի, եա արևից ցրիւ չըգայ: Ում աթար էլ որ գարունքին չուրացած չի ըլլում, նա էլ պահում ա, ամառը կտրում: Ըսենցով ամեն մարդ իրա վառելիքի պատրաստութիւնը տեսում ա որ ձմեռը նեղութիւն չըքաշի:

— Եւ բոլոր տարին, ուրեմն, դուք այդ դարշահոտ քանկորն էք այրում, հարցրեց կամսարեանը, զգուանքից երեսը թթուացնելով:

— Էլ ին՞ ա դարշահոտ. դու որ սըվոր չես, քե դէե ա թւում. ամա մեզ հմար, ամօթ չըլի ասիլը հըլա մի քիչ էլ անուշահոտ ա, ասաց քահանան ու ծիծաղեց:

Կամսարեանի դէմքին խաղաց մի ժպիտ, որ արտայայտում էր խոր արհամարհանք: Տէր հայրը սակայն չըմբռնեց այդ ժպիտի նշանակութիւնը. մինչդեռ ուստայ Պետին չըկարողացաւ լուիլ.

— Աղա, մեզ վրայ, տեսում եմ, ծիծաղում ես. դէ որ դէե ա, մի ասա տեսեմ սնց անենք. մեր հացն ընչո՞վ թխենք. կերակուրն ընչո՞վ էփենք, եա տունը ընչո՞վ տաքացնենք:

— Ինչո՞վ է եփում, կամ տաքացնում մալականը:

— Փէտով:

— Դուք էլ փայտ վառեցէք:

— Բա որ փէտ չունենք:

— Ինչո՞ւ նա ունի:

— Մէշան նրանից մօտ ա, մեզանից հեռու, համ էլ նրանք հարուստ են, մենք աղքատ: Էն փողը որ պտի տանք փէտի, տալիս ենք մի ուրիշ պակասու-

թէնի, օրինակ մի ձի ենք առնում՝ որ մեզ հմար բան անի. եա կով ենք ձեռք բիրում՝ որ նրա կաթով ըն- խանցը պահենք. եա չէ շորի, փալասի ենք տալի՝ որ մեր տանեցոց տկորուծիներ ծածկենք. պակասութիւն շատ, եա ո՞ր միսն ասեմ: էհ, աւարի թրիքն էլ, որ ուրիշ զեղերում տան ըռաջին կիտում են, շէնը հու- տացնում, մենք փետ ենք շինում, էրում. ըսենց դէյ- րաթ (խնայողութիւն) անելին, եա նամուս պհելին խի՞ չես հւանում:

— Դա ոչ դէյրաթ անիլ է, ոչ նամուս պահիլ. այլ ուղղակի ծուլութիւն: Օգտում էք այն բանից, ինչ որ ունիք, ինչ որ պատրաստ կայ. թէկուզ այդ պատ- րաստը լինի՝ կեղտ կամ ապականութիւն:

— Ուրեմն քու ասիլով մենք ծիււ մարդիկ ենք էլի՞:

— Հա, ծոյլ էք. ծոյլ որ չըլինէիք, հիմա այս սա- րերը ծառերով ծածկել էիք, անտառը բերել, ձեզ մո- տեցրել: Ժամանակով, երևի, բոլոր այս լանջերը ծած- կուած են եղել ծառերով, ձեր պապերը նրանց անխնայ կոտորել են, դուք էլ, ահա, եկել, մի շիւ չէք տըն- կում. ճարներդ կտրած, ի հարկէ, քակոր պիտի այրէք, ուրիշ ի՞նչ անէք:

— Էդ քու ասիլով քակորը որ փիս բան ա, մէջ մտաւ քահանան, բա խի՞ Աստուածաշնչումը, մարգա- րէն ասում ա՝ «անն, ետու քեզ քակոր արջառոյ... և նովաւ արասցես զհաց քո...» Ուրեմն Աստօծ էլ ա հրամայում որ հացը քակորով թխենք:

— Էհ, Տէր-հայր. դու էլ մի քանի բան ես բերան

արել, տեղի անաեղի խարջում ես... խօսք եմ ասում, խօսքս լսիր, նկատեց կամսարեանը տաքանալով:

— Ո՞նց թէ մի քանի բան... ուզում ես սաղ Դաւթի Սաղմոսը, եա Առակաց գիրքը, եա Ժողովողին գլխից ինչ կլի տակը անգիր ասեմ, մգեար դու Տէր-Վանուն ընչի՞ տեղ ես դրել:

Կամսարեանն այս անգամ, նոյն իսկ, ուշադրու- թիւն չըդարձրեց քահանայի խօսքերին և դառնալով Պետուն ասաց.

— Այո, բարեկամ, այս ժողովուրդը ծոյլ ժողո- վուրդ է. նա որ ծոյլ չըլինի, կաշխատի, մարդավարի կապրի. սա կեանք չէ, որ նա վարում է. սա գիւղ չէ, որ նա ապրում է. նայիր է. մի կոտորուած ձեռք չի գտնուել այս ամբողջ շէնի մէջ, որ մի տեղ, զոնէ, մի հատ ծառ տնկէ... սա խայտառակութիւն չէ:

Այս ասելով՝ նա դարձաւ տանուաէրին և ցան- կութիւն յայտնեց տուն վերադառնալու, որովհետև մանգալուց արդէն յոգնել էր: Քահանան ու Պետին բաժանուեցան նրանցից, իսկ տանուաէրն իւր հիւրին առաջնորդեց դէպի տուն:

ԺԲ.

Արևը մայր մտնելու մօտ՝ ծովակի կողմից՝ սկսել էր փչել զով քամի, որին գիւղացիք սպասում էին ժամ է ժամ: Նրա անելիք ծառայութիւնը մեծ էր:—

Յորենի խուրճերը կալսել, հասկերը տրորել էին, այդ քամին պիտի դար, որ դարմանը դատէր: Եւ անա կալերի վրայ, որոնց մեծ մասը գտնուում էին կտուրներին, սկսուել էր մեծ շարժում: Ամեն տեղ ձեռքերը գործում էին ժրութեամբ. եղանակները բարձրանում ու իջնում էին և իրենց հետ միասին՝ օդի մէջ մրրկում յարդի փոշեխառն վիժակներ: Դրանցից քամին դարմանը խելով տանում, փռում էր կալի եզերքին, իսկ ցորենը նորէն գետին իջնելով՝ կազմում էր մաքուր հատիկների կոյտեր:

Կալերում սկսուած այդ աշխատանքը գիւղի օդը տոգորել էր դարմանի մղմեղ փոշիով: Երիտասարդ Կամսարեանը մի քանի տեղերից անցաւ, գրեթէ, փախչելով, որպէս զի օդում փոթորկուող այդ փոշիից ազատէ թէ թորքերը և թէ հագուստը: Երբ նա տուն հասաւ, մի առանձին հաճութեամբ նայեց սրահում դրուած ինքնայեռին, որ հակառակ սպասածին, բաւական մաքուր էր և որի մէջ ջուրը եռում էր արդէն: Տան աիկինը սպասում էր ամուսնուն որ սա գայ թէյը պատրաստելու, ըստ որում գիւղերում այդ ոչ սովորական գործողութիւնը կինը իւր ուժից և իրաւունքից վեր բան է համարում:

Թէյ խմելու մեծ ցանկութիւնը յիշեցրեց Կամսարեանին ճաշի պատրաստութեան բոլոր պատմութիւնը և զգուշացրեց նրան միջոցներ ձեռք առնել՝ մաքուր թէյ խմել կարենալու համար:

— Ես լաւ թէյ ունիմ, թողէք նրանից զնեմ, ասաց երիտասարդը և առնելով թէյնոցը, որ հենց նոր

տանուտէրը ստացել էր կնոջից, իւր ձեռքով լուացաւ, մաքրեց հին կեղտերից և ապա տուն մտնելով, հանեց պայուսակից իւր թանգանոց թէյը, մի քանի պտղունց դրաւ թէյնոցի մէջ, եռման ջրով մի անգամ ողողեց և ապա նորէն վրան ջուր լեցնելով՝ դրաւ ինքնայեռի վրայ:

— Էդ իման՝ օղողիր, չայի խամ կորսրվաւ, նկատեց տանուտէրը:

— Չէ, չի կորչիլ. չայի վրայ միանգամ պէտք է քիչ ջուր լցնել, թափել, որ փոշիից մաքրուի և ապա նորից լցնել, բացաղրեց Կամսարեանը:

— Մէ խետ պրիստաւ էկաւ մեր գեղ, մեզի դօնաղ էղաւ. ինոր չայ ուզեցի քեզի պէս վրամ (լուամ). էն չըթորգեց, ասաւ խարաբ կեզնի:

— Պրիստաւը չի հասկացել, կարճ կապեց Կամսարեանը:

Թէյը պատրաստելուց յետոյ՝ երիտասարդն իւր ձեռքով լուացաւ նաև բաժակներն ու պնակները և սեփհական սրբիչով սրբեց: Ապա թէյն ածելով՝ բաժակներից մինը դրաւ տանուտէրի և միւսն իւր առաջ: Յետոյ հանեց նոյնպէս մաքուր քսակից շաքար և դրաւ մէջտեղ:

Տանուտէրը իւր բաժակն առնելով մի ումպ ճաշակեց և բացականչեց.

— Օխայ, էս ինչ անուշ ա. իման՝ մեր չայ խենց խոտ չի տարում: Էրևում ա, մենք շինել չենք զինա:

— Չէ, ոչ թէ շինել չըգիտէք, այլ թէ ձեր չայը լաւ տեսակից չի լինում. լաւ տեսակը թանգ է:

— Խա, իդենց ա. համաձայնուեց տանուտէրը:

Բայց, ինչպէս երևաց, վերջինս չար աչք էր ունեցել. երիտասարդը դեռ բաժակը բերանը չէր տարել որ նոր բարձրացած մի քամի՝ հարևան կալի կողմից՝ բերաւ մանրամաղ դարմանի փոշին ու տանուտէրի սրահը լցրեց: Պետրոսն իսկոյն փակեց աչքերը՝ փոշիից նրանց ազատելու համար: Ապա երբ քամին անցաւ, առաջին բանը, որ նա տեսաւ, իւր թէյի բաժակն էր, որ ամբողջովին ծածկուել էր դարմանով ու փոշիով:

— Փու, ինչ խայտառակութիւն, շնչաց նա ինքն իրեն և բաժակն աննելով՝ թէյը թափեց գետին:

— Էդ իմա՛լ դէն ամիր, դարման ա, բան չըկայ. այ ձեռքով դուս խանեմ, համէնը կը թամրզի, ասաց տանուտէրը և մասները խրելով իւր բաժակի մէջ, սկսաւ դարմանի փշուրները հանել և ապա խմել:

Կամսարեանը թթուած գէմքով նորէն լուացաւ բաժակը, նորէն լցրեց և այս անգամ արդէն զգուշութեան համար պնակը դրաւ բաժակի բերանին, որպէս զի մինչև սառչիլը՝ փոշի-բան չընկնէ մէջը:

— Դժուար է, շատ դժուար է այստեղ ապրել, նկատեց Կամսարեանը՝ գլուխը շարժելով:

— Խա, քե նման աղա մարդու խմար դժար ա, ամա մեզ խմար խեշտ ա, յարեց տանուտէրը և խօցակցութիւնը այս անգամ սրանով վերջացաւ:

Մութը կոխելուց՝ տանուտէրը կամենում էր ընթրիքի պատրաստութիւն տեսնել, բայց Պետրոսն ասաց որ չի պիտի ընթրէ. միայն խնդրեց որ իրեն քնելու

տեղ ցոյց տայ, որովհետև շատ յոգնած է և կամենում է հանգստանալ:

Տանուտէրն առաջարկեց քնել ներսի տանը, ասելով որ դրսում կարող է մրսել, որովհետև գիշերը ծովի կողմից երբեմն փչում է ցուրտ քամի:

Պետրոսն համաձայնուեց և ներս գնաց որ տեսնէ թէ՛ սրբան է այդ տունը յարմար, գոնէ, մի գիշեր քնելու համար: Բայց ինչպէս ցերեկով, նոյնպէս և այժմ, այդտեղ բուրում էր խոնաւութեան ու ծուխի անախորժ հոտ:

— Այստեղ չեմ քնիլ, ասաց նա և դուրս եկաւ:

— Էս մէ օթախն էլ տես, թէ խաւնիս, իստեղ քնա. ասաց տանուտէրը և բաց արաւ սրահի վրայ գտնուող մի ուրիշ դուռ:

Պետրոսը ներս մտաւ: Դա սենեակի նման բան էր, միջից ցածր ցանկով կտրուած: Առաջին մասը փոքր ի շատէ մաքուր էր և պատի տակն ունէր տախտակաշէն մի թախտ: Միայն թէ այստեղից էլ փչում էր թրիքի չափազանց սուր հոտ:

— Այս հոտը սրտեղից է, հարցրեց Պետրոսը քիթը վեր քաշելով:

— Էն մէկէլ եանը տաւարի գոմն ա. խոտը նրանից ա. ամա տաւար իստեղ չի, էն դրսի եանն ա. մինալ ձին ա կապած:

— Դուք ուրեմն այստեղ նստում կամ քնում էք:

— Խրամանք ես. ձմեռը շատ փայ էսօր մէջ ենք նստելում, եա քնելում. ընդուր որ տաւար մէջն ա ըլում, էդ պատճառի էլ տաք ա ըլում:

Պետրոսը գլուխը շարժեց և դուրս գնաց:

— Այստեղ լաւ է, այստեղ կը քնեմ, ասաց նա, ցոյց տալով սրահում գրած թախար:

— Կամք խրամանքիդ ա, պատասխանեց տանու-
աէրը և հրամայեց Սալբէին անկողին պատրաստել:

Մինչդեռ երիտասարդին պաշարել էր այն միտքը թէ՛ ի՞նչ անկողին պիտի բերեն իրեն և թէ արդեօք ինքը կարճո՞ղ պիտի լինի քնել նրա մէջ, տանտիկինը դուրս հանեց գունաւոր կտաւի մի կապոց, որի մէջ իննամբով պահուած էր մի ձեռք մաքուր անկողին: Նա բացաւ կապոցը, անկողինը պատրաստեց և հե-
ռացաւ:

Պետրոսը անկողնի մաքրութիւնը տեսնելով հան-
գատացաւ: Բայց անյայտ անմաքրութիւնից ազատ
լինելու համար էլ՝ նա կարևոր համարեց հանել պայու-
սակից երկու մաքուր սաւան, որոնցից մինը փոքեց
ներքնակի վրայ, իսկ միւսը՝ վերմակի տակից: Երբ
տանուաէրը «բարի գիշեր» մաղթելով հեռացաւ, Պետ-
րոսն իսկոյն հանուեց ու պառկեց: Յոգնածութիւնն
ու գով գիշերը անուշ քուն բերին երիտասարդի աչ-
քերին:

Հետևեալ առաւօտ նա աչքերը բացաւ արշալու-
սից առաջ: Եւ որովհետև այդ ժամին տանուաէրի
ամբողջ սունը ոտքի վրայ էր, ուստի ինքն ևս շտա-
պով հագնուեցաւ: Կամենալով լուացուել աղբիւրի
սառը ջրով, նա իւր հետ առաւ լուացման պարագա-
ները և հարցնելով աղբիւրի տեղն ու ճանապարհը՝
ուղղուեցաւ այն կողմը:

Ուղին, որ տանում էր դէպի ջուրը, անցնում էր
մի թմբից, որի առաջ այդ վայրկենին բացում էր
բնութեան գեղանկար մի պատկեր, որի հանդիսարանը
Գեղամայ ծովակն էր: Այդտեղից նայելուց՝ երևում էր
նրա ընդարձակ դաշտը, որ կարծես շրջակայ լեռները
յետ մղելով՝ ձգւում, տարածւում էր դէպի արևելեան
հարաւ, փայլելով առաւօտեան վճիտ երկնքի տակ
գորշ-կապոյտ գունով: Թեթև մկանունքները հազիւ
շարժում էին խաղաղ մակերևոյթը, որ հեռուից թւում
էր անշարժ ու միապաղաղ: Քանի դեռ արևելքը չէր
բոցավառում, երկնքի վրայ լողացող ամպերից՝ նրա
հոսանքներում անդրադառնում էին սպիտակ ու մոխ-
րագոյն շերտեր: Բայց երբ նա շառագունեց, ծովակն
սկսաւ փոխել իւր պատկերը: Շրջակայ ափերը փալ-
փլում էին ոսկու պէս, մինչդեռ խոր հարաւը հետզհե-
տէ ներկւում էր քրքումի գունով: Մի փոքր ևս, և
ահա արևի սկաւառակը փայլեց Մարալ-Դաղի կանա-
չագուրկ կատարին և իւր առաջին ճառագայթներով
սկսաւ ոսկեգօծել լճի արևմուտքը բռնող Չիչէկլիի և
հարաւը փակող Իւչթեփէլերի լանջերը: Այդ տեղերից
հետզհետէ նրա շողերն իջնելով՝ վառում էին Սևանի
մենաւոր կղզին և ապա ծովակի ընդարձակ մակերե-
ւոյթը, փոխելով նրա գեղածուփ մկանունքները ոս-
կու, կամ արծաթի, և փայլեցնելով նրանց բիւր
աղամանդ աչերով:

Երկար դիտելով այդ գրաւիչ տեսարանը, Կամ-
սարեանը յանկարծ յետ նայեց դէպի գիւղը, տեսաւ
նրա գձուծ և տխուր պատկերը, յիշեց այն ամենը,

ինչ որ մի օրում նա այդտեղ տեսել ու քննել էր և և նրա սրտից ակամայ դուրս թռաւ մի հառաչանք.

—Ախ, եթէ կարողանայի, եթէ հնարաւոր լինէր...

Այդ նրա բարի, գաղափարական, «ես»-ի ձայնն էր որ բնութեան հրաշափառ տեսարանի առաջ դարձեալ իշխեց հնչելու... Բայց անձնասիրութեան «ես»-ն ևս քնած չէր այդ ժամանակ. նա էլ իւր կողմից շնչում երիտասարդի հլու ականջին.

—Ի հարկէ, չես կարող. ի հարկէ, անհնար է... այս ժողովրդի կեանքն ու վիճակը քսան երեք դար առաջ այսպէս է նկարագրել Քսենոփոնը, քսան երեք դար յետոյ էլի այսպէս կը նկարագրէ մի ուրիշ Քսենոփոն... այստեղ դու ոչինչ փոխել չես կարող:

Ըստ երևութին այդ «ես»-ին էր վիճակուած տանել յաղթութիւնը: Որովհետև, երբ երիտասարդն աղբիւրին հասնելով տեսաւ նրա վիճակը, — մի յորդառատ ու վճիտ աղբիւր, որ մարդկանց ծարաւը յագեցնելու համար՝ սողում, անցնում էր Այծեմնասարի, ո՞ գիտէ, քանի թագուն խորշերից և հասնելով այստեղ՝ փոխանակ սրբատաշ աւազանում ցայտելու, անարգ ու անպատիւ գետահետում էր ընդարձակ տիղմի և անասունների արաթորութեանց միջով — նա գլուխը շարժեց և ասաց.

—Ոչ, անկարելի է, մեր ուժից վեր է... դա միայն ցնորք է և բանդադուշանք: Ես ի զուրկեմ այստեղ ժամավաճառ լինում:

Այսպիսի որոշման գալուց յետոյ, այսուամենայնիւ,

աղբիւրի ականակիտ վիժակը հրապուրեց երիտասարդին: Նա տիղմի մէջ ընկած քարերը կոխելով՝ մօտեցաւ սառ ջրին, առատօրէն լուացուեցաւ և երեսը սրբելով՝ վերադարձաւ գիւղը:

Իւքնայեւոր դարձեալ ետում էր: Առաջին օրուայ եղանակով՝ Պետրոսը պատրաստեց թէյը և հրաւիրելով Տանուտէրին, սկսան խմել և դրա հետ միասին էլ վայելել լոշից, պանրից և խաշած ձուերից բաղկացած մի նախաճաշ: Դրանից յետոյ Տանուտէրը յայտնեց հիւրին որ ինքը մի քանի ժամով մինակ պիտի ձգէ նրան, որովհետև հանդումն անհրաժեշտ գործ ունի:

— Իսկ ես կամենում եմ գնալ Սևանը տեսնել և հենց այսօր էլ վերադառնալ Դիլիջան, ասաց երիտասարդը, ինքն էլ զարմանալով որ կարողացաւ այդպէս շուտ իւր որոշումը յայտնել ուրիշին:

— Էս մէ օրվայ մէջ Սևան էթալ, դառնալ ու էստիէն մին էլ Դիլիջան յիջսել դժվար ա, ես քէ ինէնց եմ խէյրաթ (խորհուրդ) տալում որ վանքէն դառնաս, գիշերն յանցնես մեր կուշտ, եդոյ էն բաշտան (առաւօտանց) Սիմօնովկէն տրոյկը (սայլակ) ապսպրինք, նստես էթաս:

— Շատ լաւ, այդպէս կանենք, համաձայնուեց երիտասարդը, ուրախանալով որ գործն այդպէս հեշտ է վերջանում: Յետոյ ուզեց իմանալ թէ՛ ինչո՞վ պէտք է գիւղից գնալ մինչև Սևան:

— Իստեղից ձի կը խեծես մինչի էն ճոճ թումբը, որ մեր յառէջն է. ինոր մօտ կը յիջասս ծովի դրադ.

ՓՈՒՐԵՑՆԵ Ն ՀՆՏ.

ինտելից թիւֆէնկով ձէն կը տաս. գեամըչին կը կեայ, կառնի, կը տանի:

— Չիու հետ միասին.

— Չէ, ձին կը թորգես ծովի զրադ:

Կամսարեանը ինզրեց որ տանուաէրը տնից ելնելուց առաջ՝ վարձէ իւր համար ձի. այլ և մի ընկեր, որ առաջնորդէ իրեն մինչև կղզու հանդիպակաց ափը, թէպէտ և այդ տարածութիւնը տասը վերատից աւելի չէր:

Կէս ժամից յետոյ ամեն ինչ պատրաստ էր: Երիտասարդը թամբել տուաւ ձին՝ իւր հետ բերած նոր թամբով, որ շատ գեղեցիկ էր և պրաւեց մօտ եղող գիւղացիների հիացմունքը: Ապա մի ուսով կախեց դաշտային, մեծկակ զիտակը, իսկ միւսովն իւր նոր, գեղեցիկ հրացանը, որ առաջին անգամն էր պատեանից հանում և յետոյ ձին աշտանակելով՝ առաջ անցաւ: Առաջնորդ գիւղացին, որ միկնոյն ժամանակ ձիու տէրն էր, գնալիք ճանապարհը ցոյց տալուց յետոյ՝ հեռեկեց «աղին» օտքով:

ԺԳ.

Երկար չըսեց ճանապարհորդութիւնը, թէպէտ Կամսարեանը կը ցանկանար որ նա մի քիչ երկարէր: Որովհետև իւր նոր թամբի և աշխոյժ ձիու վրայ նա այնքան էր իրեն երջանիկ զգում և փայլուն հրացանը,

որ ուսից կախած էր, այնպիսի մի յարգարժան առաւելութիւն էր տալիս իրեն, որ նրան թուում էր թէ՛ այդպիսի տրամադրութեամբ ու պատրաստութեամբ ուղեւորութիւն կատարած ժամանակ՝ ինքն հոգևով ու սրտով աւելի է «մեծանում»՝ քան թէ էր իսկապէս, կամ ընդունակ դառնում կատարելու «մեծ գործեր», որոնց մասին նա առաջ այնքան շատ երազում էր, իսկ այժմ վստիկանում՝ մինչև իսկ մտածել...: Եթէ երիտասարդի այդ տրամադրութեան վրայ աւելացնէինք, նաև, հրաշալի եղանակը, որն արևի թեթև ամպերով սքօղուած լինելու պատճառով՝ զով էր ու դիւրեկան, այլ և ճանապարհի հանգստութիւնը, ըստ որում խճուղին ոչ խոչ ունէր ոչ խուժ, նոյնպէս և լճափի անուշ հովերը, որոնք իրենց սոյլի հետ բերում էին նաև դաշտային թռչունների բեկբեկ երգերի ձայներ և վերջապէս լճի սիրուն տեսարանը, նրա ալիքների փնթիւր ծփանքը, որոնք յսճախ գալիս, ողորում էին խճուղու եզերքն ու արահետը, այն ժամանակ հասկանալի կըլի՛նի թէ՛ ինչո՞ւ Կամսարեանը ցանկանում էր որ իւր ճանապարհը երկարէր: Բայց չընայելով այդ ցանկութեան, նա հասաւ «ճոճ թմբին» աւելի վաղ, քան սպասում էր:

Անցնելով այդ թումբն եզերող ճանապարհը, նա, առաջնորդի ցուցմամբ, իջաւ լճափը և մօտեցաւ խճաւազի մէջ ցցուած ժայռերի մի շարի, որ համարւում էր նաւամատոյց: Լճափին կային, նաև, ուրիշ ուխտաւորներ, որոնք սպասում էին կղզուց գալիք նաւակին: Որովհետև այդ կէտում, (չընայելով որ նա

աւելի մօտ էր կղզուն, ուստի և աւելի էլ եկեորներ էր գրաւում), չըկային վարձու նաւակներ, ըստ որում տեղը ամայի էր և բնակութիւնից հեռու: Եկողը պէտք է հրացանով նշան տար, որպէս զի կղզուց նաւակ բերէին: Բայց որովհետև ուխտաւորները հրացան չունէին, ուստի սպասում էին որ կամ կղզուց նշմարուին և կամ բաղդը իրենց մի հրացանաւոր հասցնէ: Վերջին անկալութիւնը կատարուած էր: Կամսարեանն շտապեց փորձել իւր երկփողեայ ամբրիկականի զօրութիւնը, դնելով նրա մէջ երկու փամփուշտ և արձակելով նախ՝ աջ և ապա՝ ձախ փողերից: Հրացանի ոյժն, արգարև, սաստիկ էր և որոտն աճաւոր: Կղզեցիներն, անշուշտ, իմացան որ այդ ձայնը աղքատ գիւղացու հրացանի ձայն չէ. որովհետև երկրորդ հարուածից յետոյ, իսկոյն կղզու նաւամատոյցի վրայ բուսան երեք հոգի, որոնք մտնելով այնտեղ կապած նաւակներից մինը՝ սկսան առաջանալ դէպի եկեորները:

— Կը տեսնաս, բարեկամ, խօսեց ուխտաւորներից մինը իւր ընկերոջ հետ, քեասիբն ընրու խամար ա կորում, վոր քեասիբ ա: Էս ճոճ մարդ եկած չընէր մեզի սաղ օր կը թորգին ըստեղ... Էս խօքևորի արձրք ա:

— Ո՞վ է մեղաւոր որ դուք հրացան չունէք, որպէս զի նշան տար, մէջ մտաւ Կամսարեանը, տեսնելով որ գիւղացին անիրաւ տեղն է արանջում:

— Խրացան էլ ընի, գեղցուն էլի բանի տեղ չեն դնի, առարկեց ուխտաւորը:

— Ինչո՞ւ:

— Ընդուր վոր գեղցին բան չունի նրանց տալու:

— Է՛հ, ամեն տեղ այդպէս է, ով չի տալիս, նա չի էլ ստանում:

— Համէն տեղն ուրիշ ա, վանքն ուրիշ. էս խօքևոր տուն ա, բիւթիւնն էլ (բոլորը) իստեղ խաւասար ին. որ ճոճ պէտք ա ընի, ոչ պատիկ:

— Բայց տեսնում ես որ կայ:

— Սա, տեսում եմ. իմա՛լ չեմ տեսում. ընդուր խամար էլ ասում եմ, էս փիս բան ա, Ասծուն տուրեկան չի...:

— Բայց ախար առանց տալու էլ չի լինիլ: Եթէ ես չըտամ, դու չըտաս, մէկէլը չըտայ, վանքն ինչո՞վ կառավարուի:

— Աստուած խօքին լուսաւորի խայոց թագաւորների. Էնքան մալ ու դէօվլաթ ին թողե վանքի խամար Էնքան միւլքեր, գեղեր վոր վանքն էլ ուտի, խայի քեասիբն էլ, ըսկի չի վերջնայ մինչ գալուստն Քրիստոսի: Համա ի՞նչ անես որ քեասիբին հեշ յիշկող չըլայ. ով վոր զօռ ունի, էն աւնում տանում ա: Դիւն, էրէվում ա, դարիբ մարդ ես, վանքի աւնալ (դրութիւն) չիս գինա. ամա մենք մօտիկ ենք. համէն բանն էլ մեր յատէջն ա: Իստեղ մի սարկաւազ կայ, քառսուն տարի ա վանքը կոխած ուտում ա. հէշ մինն էլ ա չատում՝ էդ իմա՛լ ես անում: Ծոճ ուխտաւոր վոր գալում ա. պաշտում, պատում ա, ամա քեասիբին՝ հեշ դսի տունէն ներս էլ չի թորգում...:

Կամսարեանը, որ մի առանձին ջերմեռանդութեամբ էր մօտեցել Սեանին և սրտատրոփ սպասում էր տեսնել ու համբուրել պատմական սրբավայրերը,

ծանօթ չըլինելով գիւղացիների բամբասասիրութեան, հալած իւղի տեղ ընդունեց գեղջուկի բոլոր խօսքերը: Եւ համոզուելով որ, ուրեմն, հայոց սրբավայրերում իսկ անկարելի է հանդիպել միխիթարական երևութի, ճշմարտապէս տխրեց և այդպէս նախապաշարուած էլ ոտք դրաւ անարուեստ ու հնաձև նաւակը, որ արդէն մօտեցել էր ափին:

Երբ բոլոր այդտեղ զանուոգները, բացի ձիապահից, տեղաւորուեցան նաւակում, երկու հօկու թիափարներ սկսան առաջ վարել ծանրաշարժ մակոյկը, իսկ երրորդը դեկը բռնեց:

Հեռուից կղզու տեսքը գրաւիչ ոչինչ չունէր: Նա տխուր էր և մուայ: Արևը, կարծես, այրել, մրկել էր նրան: Կանաչ ծառերի խումբը, որ երևում էր մասամբ եղերքին և մասամբ անշուք շինութիւնների ետևում, այլ և բարտինների շարքը, որ պատում էր կղզու հիւսիսային ջրափը, չէին մեղմում նրա կոշտացած պատկերը: Կամսարեանին թւում էր թէ՛ խիստ անհիւրընկալ մի տեղ է դա, ուր դարձեալ պիտի կրէ ծանր հիասթափութիւն:

Բայց երբ նաւակը մօտեցաւ ափին և երիտասարդը ոտք կոխեց գետին, տեսաւ որ հեռուից չոր ու ցամաք և հազիւ բլրակի չափ երևացող այդ թումբը՝ կանաչագարգ և բաւական ընդարձակ մի գեղափայր է, հինաւուրց ուռիներով տնկագործուած: Կղզու գիրքը՝ հարաւ արևմտեան կողմից՝ ներկայացնում էր լայնագիր մի տափարակ, սիրուն կանաչով ծածկուած: Այդ տափարակի վրայ՝ լճակից քիչ հեռու՝ կարգով

շինուած էին ուխտաւորների սենեակներ, որոնք իրենց կէսը դէպի հարաւ, իսկ կէսը՝ արևմուտ ունեցած դիրքով, ներկայացնում էին կղզու ներսը փակող մի ուղիղ անկիւն և ծառայում այդ կողմից պաշտպանող պատուարի տեղ: Այդ շինութեան մէջ բացուած դռնից մտնելուց՝ Կամսարեանի առաջ բացուեց մի ընդարձակ և սիզաւէտ բակ, որի արևմտեան և հիւսիսային կողմը երկարանալով ձգւում էր հեռու, մինչև լճափը և փակւում բարտինների և ուռիների շարքերով: Իսկ հարաւ արևելեանը՝ կազմում էր վանքի բուն բակը, հովանաւորուած հաստաբուն և ստուերաշատ ուռիներով: Այս մասի շարունակութեան վրայ գտնուում էին՝ Ս. Աստուածածնի սագաշէն եկեղեցին և միաբանութեան բազմաթիւ խցերն ու կացարանները. իսկ դրանց ետևից անմիջապէս բարձրացող և բուն կղզին ներկայացնող բլրի վրայ՝ Սեանի ուրիշ մասուունները:

Հենց վանքի բակում միաբանութեան անդամներից երկու արեղաներ սիրով ընդունեցին թէ՛ երիտասարդին և թէ՛ միւս ուխտաւորներին և քաղաքավար հարցուփորձից յետոյ՝ իմանալով որ առաջինը շուտ պիտի վերադառնայ, իսկ վերջինները պիտի գիշերեն հրամայեցին փակակալին սենեակ յատկացնել գիւղացիներին և նրանց հարկ եղած պէտքերը հոգալ. իսկ երիտասարդին իրենց հետ առնելով՝ սկսան պտտեցնել կղզին:

Միաբանների քաղցր վարմունքը գեղջուկ ուխտաւորների հետ՝ մտածութեան առիթ տուին երիտա-

սարգին: — Արդեօք հոգևոր հայրերը իւր՝ իբրև զարգացած հիւրի ներկայութեամբ էր որ այդպէս քաղցր ընդունեցին զիւզացիներին, թէ՛ նրանք հենց միշտ այդպէս էլ ընդունում են նրանց և, սակայն, զիւզացիները սիրում են զուր տեղը բամբասել: Եթէ այս վերջին ենթադրութիւնը ճիշդ էր, ապա պէտք էր կարծել որ հայ զիւզացին, ուրիշ շատ թերութիւններէ հետ միասին, ունի, նաև, ստոր հակումներ:

Երբ այս մասին հարց տուաւ Կամսարեանը արեղաներին, նրանցից մինը պատասխանեց.

— Խաւար ու զիջին նկուղներում, ուր որ արև չէ թափանցում, վխտում են միշտ գեռուներ: Գիւղերում այնպիսի խաւար է տիրում և այնպիսի խոր սգիտութիւն, որ բնաւ չըպիտի դարմանաք եթէ տեսնէք որ զիւզացին բամբասանքից ու զըսխոսութիւնից զատ, վարակուած է նաև ուրիշ չար ախտերով: Արև է հարկաւոր, որ նրանց սառ հոգին ջերմացնէ, նրանց մտքի անօթը լուսաւորէ. այդ արևը չըկայ, երբէք չէ ծագում. զիւզացին ի՞նչ անէ...:

Կամսարեանը, որ այդ վայրկենին մոռացել էր իւր ուխտը, կամ որին այնպէս թուաց թէ՛ հոգևորական եղած տեղը՝ աշխարհականը չըպիտի ժողովրդի վրայ մտածէ. մի անգուսպ պահանջ զգաց յիշեցնել հոգևոր հայրերին իրենց պարտականութիւնը: — Ինձ թւում է, ասաց նա, որ հենց դուք ինքներդ կարող էիք դառնալ այդ արևը և ցրել զիւղերում տիրող խաւարը: Ինչո՞ւ ուրեմն չէք անում: Մի՞թէ, արդարև, աւելի լաւ չէ մտնել ժողովրդի մէջ, ծառայել նրա

բարոյական ու մտաւոր շահերին, քան թէ ապարդիւն ճգնուիլ անապասում:

Սուտղ արեղան չըպատասխանեց, բայց նրա ընկերը, որ աւելի երիտասարդ էր և աւելի աշխուժոտ, կանգ առաւ հին մատուռի կիսաւեր աւերակի առաջ, որի մօտով անցնում էին և ասաց.

— Չըզիտեմ դուք ինձ ճանաչում էք թէ՛ ոչ, բայց ձեզ, պարոն Կամսարեան, ես լաւ եմ ճանաչում: Այն ժամանակ, երբ դուք զիմնազիծն աւարտելով՝ գնացիք Պետերբուրգ, ես էլ Ներսիսեան դպրոցն աւարտած՝ սարկաւազ էի: Յետոյ անցայ էջմիածին և վարդապետ ձեռնադրուեցայ: Իսկ այսօր, ինչպէս տեսնում էք, ճգնուում եմ Սևանում: Բայց չընայելով այս ճրգնութեան, որ իւր ապարդիւն խտութիւններն ունի, այսուամենայնիւ, չեն մարած սրտիս աշխոյժն ու եռանդը. ասպարէզ եղած տեղը՝ կարող եմ գործել, իսկ չեղած տեղը՝ գէթ ազատ խօսել: Թոյլ տուէք ուրեմն որ ձեր հարցին պատասխանելուց առաջ, ինքս ձեզ տամ մի հարց, որ, միևնոյն ժամանակ, կը լինի նաև ձեր պատասխանը:

Կամսարեանը լարեց ուշադրութիւնը:

— Ասացէք խնդրեմ, շարունակեց արեղան, մինչև երբ պէտք է դուք նման պահանջներ անէք մեզնից՝ առանձին, թէ՛ հրապարակով և հաւատաք թէ՛ արդար պահանջ էք անում: Որ հոգևորականը աղօթելուց, մկրտելուց և թաղելուց զատ ուրիշ շատ վսեմ պարտաւորութիւններ էլ ունի, այդ ես չեմ հերքում: Հոգևորականն, այն, կարող է լինել հենց այն արևը,

այն պայծառ լուսատուն, որ փարատում է ժողովրդի մտքի խաւարը: Նա իւր բարձր կոչման շնորհիւ՝ մեծ էլ զիւրութիւն ունի այդ ժողովրդի ամեն խաւերը մտնելու, իւր հօտի ամեն մի անդամին մտերմանալու, նրա սրտի, հոգւոյ և զգացմունքների հետ խօսելու և այդպիսով էլ մեծ արգիւնք առաջ բերելու: Բայց ո՞ր հոգևորականը կարող է այդ անել. միթէ մե՞նք, արդի հոգևորականներս: Երբէք: Մենք ինչացո՞ւ ենք. ո՞վ է մեզ սուել այդպիսի կարողութիւն. ո՞վ է մեզ պատրաստել զրա համար: Մենք հո երկնքից չե՞նք իջել, այլ ելել ենք ձեր միջից. ինչ որ դուք էք, նոյնն էլ մենք. փշիցը խաղող չեն քաղիլ, ոչ էլ տատասկից՝ թուզ: Տուէք, որ ստանաք, սերմեցէք՝ որ հնձէք: Մի գուցէ կարծում էք թէ՛ հոգևոր կոչման հետ միասին՝ մենք ստանում ենք, նաև, խելք, գիտութիւն, գործելու շնորհ, կամ թէ՛ գերբնական մի զօրութեան շնորհիւ, ազատուում ենք մեր մարդկային, սովորական կրքերից, ցանկութիւններից...: Մի՞թէ չըզիտէք որ հոգևորականների մեծամասնութիւնը հոգևոր կոչումն առնում է իւր վրայ միայն իւր գոյութիւնը պահպանել կարենալու համար...: Մի՞թէ չըզիտէք որ ծուլութիւնը, հեշտ ապրելու տենչը, արիւթեան և աշխատասիրութեան պակասութիւնն է, որ ծնել է մեր այսօրուայ հոգևոր պաշտօնեաների լեգէօնը և ոչ թէ անձնութեան ու առաքելութեան վսեմ գաղափարը, որի մասին նրանք, նոյն իսկ, հասկացողութիւն չունին: Այո՛, զիտէք: Գիտէք նոյնպէս որ հազուագիւտ բացառութիւններ են նրանք, որոնք այդ գաղափարով

ողևորուած՝ մտել են հոգևոր զինուորութեան մէջ, յուսալով կարենալ՝ օգտակար լինել ժողովրդին. բայց որոնք իրենց սակաւաթիւ լինելու պատճառով՝ խեղդւում, ոչնչանում են հոգևորականութեան ամբօրը կազմող մեծամասնութեան մէջ...: Այս այսպէս լինելուց յետոյ, էլ ո՞րտեղ է մնում ձեր իրաւունքը՝ պահանջներ անելու հոգևորականութիւնից: Պահանջներ անելու իրաւունք գիտէ՞ք ո՞վքեր ունին. — այն հոգևորակաները, որոնց ես բացառութիւն անուանեցի և որոնք յաճախ կսկիծը սրտում և արտասունքն աչքերին՝ զէնքը դնում են վար, որովհետև «Մեծաւորը» հրամայում է՝ «Սուս կաց. դու գիտում չես. առաջնորդը ես եմ, բակլան խաշած եմ ցանում»: Այո՛, այդ ճնշուածները, գործելու տենչով վառուած, բայց միշտ իրաւագուրկ զինուորագրեալներն են, որ իրաւունք ունին պահանջներ անելու... այն էլ զիտէք ումից — ձեզնից, մտաւոր ու նիւթական հարստութեամբ օժտուած երիտասարդներից. նրանք են, որ պիտի ձեզ ասեն. — պարոններ, դուք ամեն տարի տանեակներով աւարտում և վերադառնում էք հայրենիք. ձեր մտաւոր պատրաստութեան շնորհիւ՝ դուք լաւ ըմբռնում էք ժամանակի պահանջը և ճանաչում ժողովրդի ցաւերն ու կարիքը. միևնոյն ժամանակ, ձեր բազմաթիւ լինելու շնորհիւ՝ դուք պատկառելի ոյժ էք կազմում և այդ ուժով կարող էք մեծ անիւներ դարձնել: Ինչո՞ւ ուրեմն չէք գործում, կամ ինչո՞ւ չէք մօտենում մեզ, սակաւաթիւ զինուորներիս և մեզ հետ միասին զիմում դէպի այն ցանկալի բարձրութիւնը,

ուր պէտք է վառել ժողովրդի խաւարը փարատող արևը...: Հայ արժանաւոր հոգևորականը երբէք չի ունեցել և այժմ էլ չունի ոչ առանձին շահ, ոչ ջոկ միտումներ: Նա հնունն ապրել ու մեռել է ազգի համար, այսօր էլ նոյնը կանէ. ուրեմն, մի բաժանէք նրան ձեզանից, արհեստական անջրպետ մի՛ ստեղծէք և «կղերական» անունով մկրտելով՝ դատ շահերի, դատ ձգտումների տէր մի՛ հուշակէք նրան: Այդպէս է եղել և է, արդարև, կաթօլիկ հոգևորականութիւնը, որի պատմութիւնը ուսանում էք դուք յօժարութեամբ, բայց այդպէս չէ եղել երբէք հայ հոգևորականութիւնը, որի պատմութեան, աւանդ, մնացել էք միշտ անծանօթ: Եւ հենց այդ անծանօթութիւնն էլ եղել է պատճառ որ հայ հոգևորականութեան արժանիքը չափել էք դուք միջնադարեան արհաւիրներն ստեղծող և, այսօր իսկ, ազգերի խաղաղութիւնը վերիվայր շրջող կաթօլիկ կղերի արարքներով: Բայց դա մոլութիւն է և ճշմարտութեան անխիղճ յեղաշրջումն: Ժամանակ է որ զէթ այժմ ձգէք մոլորութիւնը և հայ հոգևորականութեան պատմութիւնը ուսանիք: Ժամանակ է որ դուք միանաք մեզ հետ և ձեռք ձեռքի տուած մանենք ժողովրդի մէջ: Դուք աջից՝ մենք ձախից գործենք անընդհատ, քրտնենք, վաստակենք և այդ վաստակի ազնուական պտուղը—ստեղծած բարիքը մեր աչքով տեսնելու և մեր ձեռքով շօշափելու քաղցրութիւնը վայելենք միասին...:

Երիտասարդ արեղան, որ, ըստ երևութիւն, իւր յիշած բացառիկ զինուորներից մինն էր և, անշուշտ,

քաղցր յուսով Սևան մտնելով, հանդիպել էր գուցէ դառն հիասթափութեան, փորթկում էր, կարծես, վաղուց ի վեր իւր սրտում ամբարած ցաւերը, առանց մտածելու թէ՛ արդե՞ծք պատշաճի դէմ չէր՝ առաջին իսկ ժամում՝ մեղադրութեան ձառ կարդալ ուխտաւոր այցելուի երեսին:

Սակայն նա լռեց, հենց որ հեռուում նշմարեց ծերուկ վանահօրը, որ իրեն հասակակից մի ուրիշ վարդապետի հետ առաջանում էր դէպի այցելուն:

Կամսարեանը դեռ չէր տեսել նրանց, ուստի գլուխը խոնարհած՝ ակնապիշ նայում էր առջևը գտնուած աւերակի բեկորներին և իբրև յանցաւոր՝ սպասում թէ՛ ուրիշ էլ ի՛նչ պիտի լսէ խօսող արեղայից:

Յանկարծ հնչեց վանահօր թաւ ձայնը:
—Հա, էդ ի՛նչ էք էտեղ կայնել:

—Ուխտաւոր է, հայր սուրբ... Պարոն Կամսարեան... Գուցէ ճանաչում էք, շտապեց յայտնել առաջին արեղան և ապա դառնալով Կամսարեանին, կամացուկ շնչաց. —մեր այստեղի վանահայրն է:

—Աստուած օգնական, ասաց Կամսարեանը և մօտեցաւ վանահօր աջն առնելու:

—Աստուած պահապան, որդի, բարով ես եկել. բա հէ՛ր ես էտեղ կայնել...:

—Պարոնին ման ենք ածում, հայր սուրբ, խօսեց երիտասարդ արեղան:

—Ման էք ածում... բա դուք ման ածին ի՛նչ էք գիտում... հեզնեց վանահայրն արեղաներին և ապա մի առանձին լրջութիւն տալով դէմքին՝—զը-

նացէք, գնացէք, ճաշի ժամն*) սկսել են, իմ հիւրին ես ման կածեմ... ասաց և արեղաները լուռ հեռացան դէպի Ս. Աստուածածնի եկեղեցին:

Կամսարեանին մի կողմից անախորժ թուաց վանահօր անտակտ դիտողութիւնը, բայց միւս կողմից էլ գոհ եղաւ նա որ վերջինի միջամտութիւնը ազատեց իրեն դժուար կացութիւնից:

—Ատում ա «ման ենք ածում», խօսել սկսաւ վանահայրը. սաղ սհաթ ա, էնտեղից մտիկ եմ տալի, տեսնում եմ հալա սուրբ Մինասի (քանդած մատուռի) մօտ... ա տնաշէներ, բա դա մանածիլ ա. ախար ուխտաւոր ա, եկել ա որ բան տեսնի, իրա ուխտն անի, ի՞նչ էք եախան (օձիքը) բռնել, ջօշ եկել (շատախօսում):

Այս ասելով՝ վանահայրը սկսաւ առաջանալ կամսարեանի և մօտը եղող վարդապետի հետ և, միևնոյն ժամանակ, շարունակել իւր խօսքը.

—Այ, էդ ջահիլները դիժի էսենց են. թէ որ թողնես, խամ մարդ ճանգեն, առաւօտից մինչ իրիզուն հետը խօսան. բայց թէ բան ու գործ անե՞ն, չէ: Մենք էլ ենք ջահել էլել. ամա դրանց պէս չենք էլել. Օղորմած հոգի Օհանէս վարդապետը, որ իմ ջահել վախտը վանահայր էր, շատ խիստ մարդ էր. հէշ թողիլ չէր որ միաբանը, ժամից դուրս գալուց եզը, մի տեղ էլ ա երևայ. պոտի իրա խուցը մտնէր, սուրբ զիրք կարգար: Մին էլ էն ա ճաշի վախտը կէթար սեղանա-

տուն, իրա ճաշը կուտէր ու մէկ էլ եդ կը մտնէր իրա օթախը: Ամա դէ ես էդէնց խիստ չեմ. ազատութիւն տալիս եմ. ինչ արած որ էդ տնաքանդները իմ տուած ազատութիւնը չարն են գործ դնում: Տեսնում ես էս հէր-օրհնածը (ցոյց էր տալիս հետը եղող վարդապետին) վանքի լուսարարն ա. ասիլ հոգևորական ա. քառասուն ու հինգ տարի ա էս վանքումը. հալա ոտը ըստեղից դուրս չի դրել: Որ հարցնես թէ՛ քաղաքն ի՞նչ ա, գիտալ չի թէ ի՞նչ ա. չուն ոչ գնացել ա, ոչ տեսել: Ամա էդ ջահիլներին որ բաց թողնես, ամեն օր վաղ կը տան Րևան ես Գիլիջան: Դէ էդէնցով բան կըլի: Ես որ իմ պաշտօնին էսենց արի ու զգաստ չէի էլել, կարո՞ղ էի էսքան բարեկարգութիւններ անել էս վանքում: Տեսնում ես, շատ բան էստեղ իմ շինած ա:

Այս ասելով վանահայրը ցոյց էր տալիս հեռուից վանքի շինութիւնները, եկեղեցին, մատուռները, միաբանութեան կացարանները և համառօտ բացադրում թէ՛ ո՞րը երբ և ինչի՞ համար է շինուած: Այսպէս զրուցելով նրանք սկսան բարձրանալ դէպի կղզու բլուրը՝ նրա լանջի վրայ շինուած կեռամաններով: Ճանապարհին շարունակ վանահայրը պատմում էր թէ՛ որքան մեծ գործեր է կատարել Սեանում, թէ վանքը որքան երախտապարտ է իրեն և թէ նա իւր այժմեան «պայծառութիւնը» պարտական է իւր (վանահօր) քսանհինգամեայ վանահայրութեան:

Այս ասելով նա մտնում և ցոյց էր տալիս բլրի արևելեան կողմը գտնուող Ս. Կարապետի մատուռը

*) Սեանում ամեն օր կատարուում է չորս ժամերգութիւն—գիշերային, ճաշու, երեկոյեան և հանգստեան:

և հարաւային կողմի Ս. Առաքելոց եկեղեցին, որոնք ոչ միայն գուրկ էին «պայծառութիւնից» այլ և մութ, անշուք, իսկ առաջինը մինչև իսկ ճաքճքած պատերով, կիսախարխուլ գմբէթով, վայր իջած գաւթով: Իսկ դրանց զարգերը ոչ այլ ինչ էին՝ եթէ ոչ փայտէ անգարդ խաչկալ, չթէ վարագոյր, մի քանի հասարակ մոմակաշներ և անարուեստ ու գռեհիկ պատկերներ, որոնք, ո՞ գիտէ, ո՞ր գեղջուկի ձեռքով մօտակայ բազարներում գնուած և նուիրաբերուած էին «հինաւուրց Սեանին» — ըստ որում նրանցից մի քանիսն ունէին, մինչև իսկ, ոռուներէն մակազրութիւններ:

Այս ամենը երիտասարդի վրայ ծանր տպաւորութիւն արին. սակայն նա լուռ էր, լուռ էր միայն վանահօրը և մեքենաբար նայում նրա ցոյց տուած տեղերին:

Բլրի գագաթին հասնելուց, վանահայրը մատնացոյց արաւ քառակուսի մի շէնքի հազիւ մի կանգուն բարձրութեամբ որմերի մնացորդը և յայտնեց որ դա Սեանի անդրանիկ եկեղեցին, Ս. Յարութեան տաճարն է, որ հիմնել է Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

— Եթէ այդպէս է, դա մի պատկառելի հնութիւն է, նկատեց երիտասարդը:

— Հա հնութիւն, ա, հաստատեց վանահայրը:

— Հապա ո՞ւր են աւերակի գլխաւոր մասերը: Անկարելի է որ այսպիսի մի ընդարձակ տաճարից այսքան միայն մնար. մանաւանդ որ սա կղզու մէջն է և սրա քարերը չէին կարող շրջակայ բնակիչները յափշտակել, տանել:

— Ո՞վ ա գիտում, ո՞ւր ա. հրէն ընդի մատան ա շինուել, փետատուն ա շինուել, ուխտաւորի համար օթախներ են շինուել. ուրիշ տեղերից որ քար կրէին ո՞նց կըլէր. հազիր էստեղ էլել ա, առել բանացրել են:

— Այդ հո բարբարոսութիւն է, բացականչեց կամսարեանը սաստիկ վրդովուելով:

— Ինչո՞ւ ա բարբարոսութիւն. վանքի համար որ խնայողութիւն են արել, վատ բան ա:

— Դա ի՞նչ խնայողութիւն է. հինաւուրց մի տաճարի աւերակը նորոգելու, կամ ինչպէս որ կայ՝ սրբութեամբ պահպանելու փոխարէն՝ դուք առնում, քանդում էք և ասում թէ դա բարբարոսութիւն չէ:

Վանահայրը զարմացած նայում էր երիտասարդին և չէր կարողանում հասկանալ նրա գայրոյթի պատճառը:

— Ես հլա ասում եմ, Հայր սուրբն էդ մնացածն էլ քանդիլ տայ, տեղը թամրգի (մաքրի), խօսեց լուսարարը:

— Ինչո՞ւ, գրեթէ սարսափով հարցրեց երիտասարդը:

— Ինքը գիտում ա, կասի, պատասխանեց վարդապետը, ձեռնհաս չըհամարելով իրեն բացազրութիւն տալու:

— Գիտան ինչ կայ, խօսել սկսաւ վանահայրը — առաջ էստեղ թամուղ էր. չուն երևացող քարերը տարել, բանացրել էին, մնացած պատերն էլ հողում թաղուած՝ չէր էրևում: Էստեղ մի Մելքոն ճգնաւոր կար, Աստուած հողին լուսաւորի, վանքի վրան երախտիք ունի. էս ճանպաներն էլ նա ա շինել — ցոյց տուաւ:

վանահայրը բլուրը հանող կեռամանները. - նա երբ իմանում աս որ Գրիգոր Լուսավորչի ձեռքով շինած Մ. Յարութեան տաճարն էստեղ աս, սկսում աս իրա ձեռքով հողը քանդել ու կամաց կամաց տաճարի հիմքերը բանալ: Երկար ամիսներ մեն մենակ աշխատելով՝ էս դիֆ, ինչ որ հիմա տեսնում ես, լուս աշխարհ աս հանում ու էնդուց եղբ մեռնում: Մի օր էստեղ մեր վանքը մի ուսումնական էր եկել: Նա էս աւերակը որ տեսաւ, ասեց թէ՛ պատմութիւնից էրևում աս որ սա ոչ թէ Գրիգոր Լուսավորչի ձեռքով շինած տաճարն աս. այլ թէ հին, Սիւնեաց ժամանակի կռատունը: Մ. Յարութեան տաճարը, ասեց, պէտք աս ուրիշ տեղ էլած ըլի, ես չէ հենց էն տեղումը, որտեղ հմի Մ. Աստուածածինն է աս շինուած: Այ, էն օրից դէսը մեր սիրտը շաք (կասկած) աս ընկել, ասում ենք՝ դորթ չըլի՞ սա կռատունն աս: էս միաբանն էլ հմի էն աս ասում թէ՛ դրուստ, թէ որ սա կռատուն աս. լաւ կըլի որ մէջտեղից վերցնենք:

— Ի սէր Աստուծոյ, հայր սուրբ, այդպիսի բան մի մտածէք. բացականչեց Կամարեանը. դա պատմութեան ու գիտութեան դէմ յանցանք գործել է նշանակում: Կռատուն չըլինի, թէկուզ կրակատուն լինի, այս աւերակը դարձեալ սրբութեամբ պիտի պահուի:

— Իէ ո՞վ աս ասում չըպահուի, որդի, խօսքը տեղը եկաւ՝ խօսեցինք: Ինձ հարցնես, ես կասեմ մնայ. չուն դա որ հմի աւերակ աս, միւս տաճարներին էլ ինչ փասս կարայ տալ:

Վանահայրը թէպէտ առ երես հակուեցաւ երի-

տասարդի կողմը, բայց այդ արաւ լոկ դէպի քաղաքացի «աղան» ունեցած ակնածութիւնից. ապա թէ ոչ, նա մինչև վերջն էլ չըհասկացաւ թէ՛ այդ մարդն ինչո՞ւ է պահանջում որ կռատան աւերակը պահուի:

Այժմ նրանք նորէն պիտի իջնէին վար՝ միաբանական կացարանները նայելու: Բայց այդտեղից բացւում էր այնպիսի մի սիրուն ու գրաւիչ տեսարան որ փոքր ինչ աւելի այնտեղ չըկանդնելն ու այդ տեսարանով չըհիանալը՝ յանցանք գործել կը նշանակէր: Այդ պատճառով Կամարեանը ցանկութիւն յայտնեց բլրի գլուխը բարձրանալու, որպէսզի այնտեղից կարողանար կղզու ամբողջ շրջապատը տեսնել, որովհետեւ բլրի՛ մինչև գագաթ հանող լանջը՝ ծածկում էր իւր աչքից արևելեան լճամասն ու նրան պատող լեռնագօտին: Վանահայրն ու լուսարարը ընկերացան երիտասարդին:

Տաճարի աւերակից մի քանի հարիւր քայլ դէպի արևելք բարձրանալով՝ նրանք կանգ առան բլրի կատարին: Այդտեղից արդէն կղզեակն երևում էր ողջ ջրապարփակ և իւր թմբածև, սապատաւոր դիրքով՝ նմանում ծովային առասպելական մի կենդանու, որ մարմնի կէսը ալիքներից վեր հանած՝ ներս է շնչում օդի կարևոր պաշարը՝ նորէն ջրի տակ սուզուելու համար: Ծովակի կապոյտ դաշտը, որ պատում էր նրան չորս կողմից, սկսել էր յուզուել Սողի^{*}) ընդհատ

^{*}) Սևանի վրայ խաղացող քամիներից՝ Արևելեանը կոչւում է այդ անունով՝ Սողի գաւառից փչելուն համար, Արև-

բամուց: Փոքրիկ մկանունքները, որոնք մինչև այն հազիւ կնճռոտում էին ջրի երեսը, տակաւ առ տակաւ փոխւում էին ալիքների և իրար հրելով, կամ միմեանց թևակոխելով՝ մերթ ուռչում, բարձրանում էին ու խուլ փշշոցով իրար վրայ փլչում, մերթ գալիս, մօտենում բլրի ստորոտին և ուժգին շառաչով ժայռերին զարկում: Իսկ ծովակի խորքերում այդ յուզումը հետզհետէ երևան էր հանում նորանոր պատկերներ. նա մերթ արևից շողեր կորզելով՝ նրանցով փրփրուն ալիքներն էր ոսկեզօծում. մերթ խուսափուկ ամպերից ստուեր աններով՝ լճի կապուտակը՝ սպիտակ կամ գորշ սաւաններով էր ծածկում: Մինչդեռ շուրջ պատող թումբերն ու լեռները, իբրև հանդիսատես հսկաներ, դիտում էին հեռուից ծովակի յուզումը, մերթ ժպտում ուրախ, երբ բացւում էր արևը, մերթ յօնքերնին կիտում, երբ ծածկւում էր նա և այգալիսով, կարծես, յայտնում իրենց գոհութիւնն ու դժգոհութիւնը, որից և ողջ հորիզոնը ստանում էր մերթ վեհ, մերթ ակնապարար տեսք:

Գեղեցիկ շրջանկարը գրաւեց երիտասարդին: Նա չըզոհացաւ սեփհական աչքերով և դիմեց իսկոյն դիտակի օգնութեան:

Նրա առաջ, արևմտեան հարաւից, բացւում էր

մտեանը՝ դաշտի քամի, որովհետև գալիս է Արարատեան դաշտից. Հիւսիսայինը քուլի քամի, որ նշանակում է անտառային, ըստ որում այդ կողմերն են Գուգարաց անտառները. իսկ Հարաւայինը՝ Ձինգիլներու քամի, Վայոց ձորի նոյնանուն գիւղի անունով:

մի լեռնադաշտ, որի վրայ ցրուած էին մանր ու խոշոր բլուրներ՝ իրենց գլուխ ունենալով նախ՝ կրկնաթումբ Դօշ-դարը, որը տեղ տեղ տակաւին ծածկուած էր կանաչով. ապա Գեղամայ հարագատ լեռները՝ եռակատար Խւչ-Թափան և Ահմանկանը, իրենց գորշ կապոյտ լանջերով. վերջն՝ Սպիտակ լեռը (Ադ-Դաղը), որի կատարին դեռ նշմարւում էին ձիւնի նուրբ շերտեր և հեռուից տալիս նրան մի հրապուրիչ գեղեցկութիւն:

Ուղիղ արևմուտքից երևում էր պատմական Յամաքաբերդը, որի սակաւաթիւ տնակներն ու հիւղերը ցրուած էին ջրապատ հրուանդանի վրայ: Վերջինի ծայրին բարձրացող բլրին՝ նշմարւում էր աւերակը Կուսանաց վանքի, որ կառուցել էին երբեմն Սիւնեաց Պայազատները և որը, ո՞ գիտէ, որքան սրտառուչ անցքերի ու դէպքերի հանդիսատես էր եղած...:

Յամաքաբերդից դէպի հիւսիս բարձրանում էին Բարաթայ լեռը և Մաշտոցներ կոչուած բլուրները:

Արևմտեան հիւսիսից երևում էր ամբողջապէս չարաբաստիկ Չիբուխլուն իւր գեանափոր աներով, հողածածկ խրճիթներով, աթարի դէգերով և չոր ու ցամաք տեսքով: Նրանից դէպի հիւսիս բարձրանում էր կանաչագուրկ Մարալինջան կամ Այծեմնասարը, որ իւր չոր բազուկները ձգում, տարածում էր դէպի՝ ծովակի արևելքը պարսպով՝ Շահ-Դաղի լեռնագօտին, հիւրընկալելով իւր ձորակներում հազիւ մի քանի չքոտի մացառուտներ:

Նայելով դէպի արևելեան հարաւ, թւում էր թէ

ծովակը չունի այլևս պատուար. ըստ որում հեռաւոր Գարա-արխաչի գօտին, ըստ սովորականին, ծածկուած լինելով մշուշով, անտեսանելի էր դարձնում այդ կողմի ցամաքը և կարծել տալիս թէ՛ երկնակամարը համբուր-ւում է այդտեղ Գեղամայ թագուհու հետ...: Եւ հենց այդ պատճառով՝ եթէ մի կողմից շրջակայ լեռներն՝ իրենց լայնանիստ լանջերով՝ պինդ գրկած պահում էին գեղանի թագուհուն, միւս կողմից էլ նրանց բարձ-րահայեաց կատարները անհանգիստ կասկածով նայում էին դէպի հարաւ, ուր նա ազատ փուռւմ, տարածում էր հեռուն իւր ջրածուփ դաշտը, կարծես սպառնա-լով՝ այդ կողմի բացով փախչիլ, հեռանալ նախանձոտ պահանջողներից և միանալ երկնքի ջինջ կապուտա-կին, որի հարազատ մի կտորն էր ինքը...:

Երկար նայում էր Կամսարեանը այս գեղեցիկ տե-սարաններին և նրանցով հիանում. երբեմն էլ հարցեր տալիս վանահօրը՝ իրեն անձանօթ այս ու այն տեղի, լեռան կամ բնակութեան մասին և լսում նրա բա-ցազրութիւնները առանց, սակայն, աչքերից դիտակը հեռացնելու:

Նշմարելով լճակի հարաւակողմում երկու փոքրիկ կղզեակներ, որոնց վրայ չըկային ոչ շինութեան հետ-քեր և ոչ էլ կանաչ, երիտասարդը հարցրեց վանահօրը թէ՛ ի՞նչ բաներ են նրանք:

—Նրանք այս ծովակի «անառակ որդիներն» են, պատասխանեց վանահայրը ծիծաղելով:

—Անառակ. ինչո՞ւ այդ անունն էք տալիս նրանց:

—Էնդուր որ չոր, ամայի բաներ են. ոչ ասու-

նի են պէտք, ոչ անասունի. դատարկ տեղից գլուխ-ները վեր են ցցել որ ասեն թէ՛ հա՛, մենք էլ կանք: Էդ թահր մարդիկ էլ շատ կան աշխարհում: Այ, հենց մեր էս պուճուր (փոքրիկ) Սեանը որ ման գաս, էլի միջումը մի քանի հատ կը գտնես. վրաները մտիկ տաս, կասես վարդապետ են. ամա որ մէջները պտրես, կա-սես՝ ըսկի մարդ էլ չեն:

Վանահայրն, ըստ երևութին, կամենում էր դար-ձեալ խօսքը բերել երիտասարդ վարդապետների վրայ, որովհետև այն կարծիքին էր թէ՛ նրանք իւր մասին պէտք է որ աննպաստ բաներ խօսած լինին Կամսա-րեանի առաջ: Այդ պատճառով աշխատում էր որ վերջինս հասկանայ թէ՛ ի՞նչ մարդկանց հետ է գործ ունեցել ինքը, որպէս զի իւր մասին վատ գաղափար չունենայ:

Բայց երիտասարդը տրամադիր չէր նման զրոյցներ լսելու, այդ պատճառով խնդրեց որ այժմ վանահայրը ցոյց տայ իրեն միաբանութեան կացարանները:

—Հա, լաւ կըլի, գնանք: Այ հենց էստեղից էլ երևում ա. տեսնում ես ինչքան տեղ ա բռնած. հա-զար սաժին կըլի:

—Ո՞րը. ես ոչինչ չեմ տեսնում. ասաց Պետրոսը, նայելով վանահօր ցոյց տուած կողմը:

—Այ էն մեծ տափարակը որ Ս. Աստուածածնին կպած ա:

Երիտասարդը նորից նայեց և ոչինչ չը տեսաւ: Բլբի բարձրութիւնից, արդարև, երևում էր մի ինչ որ ընդարձակ, բարձրկէկ տափարակ, որի վրայ տեղ տեղ

երևում էին փոքրիկ ծինելոյգներ ու ցածր երգիկներ, կիսով չափ ծածկուած դեղնած խոտերի մէջ: Վերևից թւում էր՝ թէ այդ տափարակը բակի մի մասն է: Մինչդեռ վանահայրը բացաղբեց թէ՛ հենց դա է կազմում կտուրը միաբանական այն կացարանների, որոնց մեծ մասը՝ Ս. Աստուածածնի հետ միասին՝ շինուած են Սիւնեաց Մարիամ Տիկնոջ ձեռքով 877 թուին:

— 877 թուին. ուրեմն հազար տարուայ հնութիւն ունին դրանք, զարմացաւ երիտասարդը:

— Հազար տարուց աւելի ա, բա՛. հաստատեց վանահայրը:

— Գնանք, ուրեմն, գնանք: Հետաքրքրական է տեսնել այդ շէնքերը, ուր հազար տարի շարունակ ապրել են ձեր նախորդները, ասաց երիտասարդը և առաջ անցաւ:

Բլրի լանջն աղօսող կանոնաւոր կեանքներից դէպի տափարակն իջնելով՝ նրանք մտան մի գոնով, որ բլրի ստորոտից հեռի էր միայն մի քանի քայլով: Այդ գուռը նրանց մի կարճ միջանցքով մտցրեց մի ուրիշ, աւելի երկար, համեմատաբար լայն, բայց և խիստ մթին միջանցք, որի երկու կողմից, կրկնաշար ուղղութեամբ շինուած էին միաբանական միայարկ խուցերն ու խցիկները: Դրանց մուտքերը հազիւ նշմարւում էին շնորհիւ մի նուազ լոյսի, որ մտնում էր այդտեղ՝ երկար միջանցքի երկու հանդիպակաց գոներից, (որոնցից մինը հանում էր ծովափը, իսկ միւսը՝ բակի հեռաւոր մի կողմը, ուր գտնւում էին

ուրիշ, երկրորդական շինութիւններ, ինչպէս օրինակ, փայտատուն, մարագ, ախոռ, դարբնոց և այլն): Այս ընդանուր միջանցքի երկու կողմից շինուած կացարանների թիւը մօտ երեսուն էր: Մի կարգի սենեակներում ապրում էին՝ վանահայրը, վարդապետները և միաբանութեան ուրիշ անդամները: Այդ կարգում գետեղուած էին և վանքի զրատունը և հանդերձատունը: Իսկ հանդիպակաց կարգում գտնւում էին միաբանութեան ընդարձակ սեղանատունը, խոհանոցը, մառանը, հացատունը և մի քանի ուրիշ սենեակներ, որոնք երբեմն ծառայում էին նաև իբրև իջևան՝ ուխտաւորների համար, եթէ դրսի սենեակները բռնուած էին լինում բոլորը: Ընդհանուր միջանցքի վրայ բացւում էին, նաև, մի քանի ուրիշ, երկրորդական միջանցքներ, որոնցից երկուսը տանում էին դէպի զանազան ամբարանոցներ ու մառաններ, երրորդը՝ դէպի բլուրը իսկ չորրորդը՝ դէպի բակի կողմը և այլն: Բոլոր այս խուցերը, կացարանները ամբարներն ու միջանցքները ծածկուած էին մի ընդհանուր, միապաղաղ կտուրով, որով և բոլորը միասին կազմում էին մի ծածկուած ամբողջութիւն: Այդ պատճառով մի կարգի խուցերը միայն ունէին նեղ-հեղ, փոքրիկ պատուհաններ, որոնցից ոմանք բացուած էին դէպի բլրակի և ոմանք՝ բակի կողմը, մնացեալ բոլոր սենեակները լոյսն ստանում էին երգիկներից: Ինչ վերաբերում է միջանցքներին, նրանք այնքան մութ ու խաւար էին որ կամարեանին թւում էր թէ՛ ինքը կարող էր մոլորուել նրանց մէջ, եթէ միայնակ մտած

լինէր այդտեղ: Բոլոր շէնքերն, առ հասարակ, իրենց մուտքերով ու միջանցքերով հին լաբիրինթոսի նմանութիւն էին բերում. իսկ դրանց միջի օդն այնքան էր ծանր, խոնաւ ու գարշահոտ, որ երիտասարդը մի մի անգամ, նոյն իսկ, դժուարութեամբ էր շնչում:

Վանահօր սենեակը ոչնչով չէր տարբերւում միւս միաբանների խուցերից, որ ապացուցանում էր թէ՛ հաւասարութեան սկզբունքը հինուց անտի յարգուած է եղել այդտեղ:

Կամսարեանի հարցին՝ թէ ի՞նչպէս են կարողանում այս մութ ու գիջին սենեակներում ապրել, վանահայրը պատասխանեց:

— Հմի դեռ հալա շատ լաւ ենք ապրում: Երսուն տարի սրանից առաջ, երբ ես դեռ վանահայր չէի, էս խուցերը ոչ թէ մահճակալ, սկի տախտակի պօլ էլ չունէին. ամենքս էլ նամ (խոնաւ) գետնի վրան էինք նստում կամ պարկում:

— Եւ այդպէս ապրելով չէի՞ք հիւանդանում:

— Փառք Աստուծոյ, հրէս տեսնում ես. 49 տարի է, ինչ էստեղ եմ. էս լուսարար հայր-սուրբն էլ, ոնց որ ասեցի, 45 տարի է՝ որ ապրում է մեզ հետ. ուրիշ միաբաններ էլ կան մեզ հասակակից. բոլորն էլ ողջ առողջ: Սովորութիւնից ա կախուած. ոնց որ քեզ կը սովորացնես, էսէնց էլ կապրես: Քաղաքներում մարդիկ շատ են կոտորւում նրա համար, որ շատ են փափուկ ապրում:

Վանահայրն իւր հիւրին ամեն տեղ շրջեցնելուց

յետոյ, առաջարկեց նրան տեսնել, նաև, գրադարանը, որ նրա ասելով, բարեկարգուել էր միայն իւր վանահայրութեան օրով:

— Հէնց էդ պատճառով էլ բանալին համաշայ (միշտ) մօտս եմ պահում. ով որ գիրք ա ուզում, ինքս եմ գալիս բանում, գիրքը տալիս ուզողին, ու էլ եդ փակում, բանալին ջէբս դնում, ասում էր վանահայրը:

Երիտասարդը հետաքրքրութեամբ մտաւ այն խուցը, որին վերջինս «գրադարան» անունն էր տուել՝ յուսալով գտնել այդտեղ հին գրչագիրների մի հարուստ դարան: Բայց նա այստեղ տեսաւ հազիւ երկու հարիւրի չափ հին ու նոր հատորներ, որոնց մի մասը ոչ շատ կարևոր գրչագրեր էին, իսկ միւսը՝ Վենետիկի հինաւուրց հրատարակութիւններ, դարսուած փայտաշէն դարակների վրայ:

Երբ երիտասարդը յայտնեց իւր գարմանքը՝ հինաւուրց անապատի այդ աստիճան աղքատ գրատուն ունենալու մասին, վանահայրը բացաղբեց որ եղածն էլ արդէն իւր շնորհիւն է, որ կայ, ապա թէ ոչ, այս վերջին 25 տարուայ ընթացքում, եթէ իւր փոխարէն լինէր մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ եղածն էլ կը մատնուէր կորստեան, ինչպէս որ մատնուել են նրանից առաջ եղած գրական գանձերը: Եւ իբրև ապացոյց նա պատմեց թէ՛ ինչպէ՞ս Սիմէօն կաթողիկոսի օրով, Յովհաննէս անունով մի անարժան վանահայր, բերով որ կաթողիկոսը գալիս է այցելութիւն Սևանայ անապատին և իմանալով որ գրասէր Հայրը պիտի

հետաքրքրուի վանքի գրատան վիճակով և տեսնելով այն անկարգ ու անինամ (ըստ որում իւր իսկ վանահօր անհոգութիւնից գրչագրերի մեծ մասը խոնաւութիւնից փտել կամ ցեցակեր էին գարձել), պիտի գայրանայ իւր դէմ—նա բոլոր այդ տեսակ հնամաշ գրքերն ու յիշատակարանները հաւաքել է տալիս քըսակների մէջ և իրեն խորհրդակից ապիրատների ձեռքով՝ թափել տալիս ծովը, որպէս զի կաթողիկոսը՝ Սեան մտած ժամանակ՝ հին ու փչացած ոչինչ չէ տեսնէ գրատանը:

— Ի՞նչ գարհուրելի բարբարոսութիւն, բացականչեց Կամսարեանը, սրտի խորքից վրդովուելով:

— Բարբարոսութիւն ասիր պրծա՞ր. անաստուածութիւն ասա, անխղճմտանքութիւն ասա, ձայնակցեց վանահայրը երիտասարդին:

— Երևակայում եմ թէ՛ ինչպիսի՞ թանկագին գանձեր են անհետացել այդ թշուառականի ձեռքով:

— Դրուստ որ թշուառական. էդ տեսակ վանահօր յիշատակը պէտք ա անիծուի սերունդից սերունդ. յարեց վանահայրը:

— Իժբախտաբար անէծքը չի վերադարձնիլ մեր կորուստը:

— Ծշմարիտ ա, չի վերադարձնիլ. ամա մնացածներին կղզուշացնի որ էդենց անաստուած թահրով վանքի գոյքը չըփչացնեն:

Գրադարանից երնելուց՝ ծերունի վանահայրը յոգնած զգալով իրեն, խնդրեց երիտասարդին մնացած տեղերը շրջել լուսարարի հետ, մինչև որ ինքը յոգ

նածութիւնն առնելով՝ կը գար իւր հետ միասին ճաշելու:

Լուսարարը մի առանձին հոգածութեամբ առաջնորդեց Պետրոսին դէպի թանգարանը, որի պահպանութիւնը յանձնուած էր իրեն:

Այդ թանգարան կոչուածը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի հասարակ խուց, ուր պահուում էին եկեղեցական այնպիսի սպասներ, որոնք թէ թանկագին և թէ քիչ գործածական էին. ինչպէս, օրինակ, արծաթէ բուրուառներ, խաչեր, սկիհներ, մեռնի տուփեր, թագեր, սաղաւարտներ, գաւազաններ և այլն: Դրանց մէջ ոչ միայն թանգարանի վայել «հնութիւններ» չըկային, այլ և շատերը «եարմուկի» ապրանք էին՝ պատրաստի գնուած նիժնայում կամ Մոսկվայում: Այդ ապացուցանում էին իրերից մի քանիսի շուրջը քանդակուած ոռւերէն աղօթքներն ու մակագրութիւններն, որոնք «հնի» դէմ կազմում էին «նոր», խայտաբղէտ հակադրութիւն և կարծես ծաղրում Սեանի անապատում «հին յիշատակներ» պարօղներին...:

Այս մասին Կամսարեանը մտածեց մի քանի վայրկեան «իբրև ճշմարիտ ուխտաւոր» և նրա շրթունքներին խաղաց դառը ժպիտ:

— Ինչո՞ւ այս խուցին «թանգարան» անուն էք տալիս, հարցրեց նա լուսարարին:

— Ի՞նչ կը լինի որ, նկատեց վերջինս:

— Ախար «թանգարան» այն տեղին են ասում, ուր շատ հին ու թանկագին բաներ են պահուում. ձեր ունեցածը միայն եկեղեցական սպասներ են:

— Մենք էլ ունենք շատ հին ու թանկագին բաներ, հիմա պիտի շանց տամ որ համբուրես. քե հենց դրա համար եմ բիրել ըստեղ, ասաց վարդապետը մի առանձին վատահուլթեամբ: Ապա մօտենալով թախտի վրայ դրուած մի սնտուկի, բացաւ նրա խուփը և մի ազօթք մրմնջալով՝ սկսաւ հետզհետէ դուրս հանել այդտեղից մետաքսեայ թաշկինակներում փաթաթած սակեզօծ ու ակնագարդ խաչեր, նշխարատուփեր, արծաթակազմ աւետարանիկներ և այլ կերտուածներ և շարել նրանց մի սկուտղի վրայ, ուր վաղօրօք դրուած էր մի պղնձէ ափսէ՝ արծաթէ փողերով ու թղթադրամներով:

— Սրա մէջ Յովհաննէս-Մկրտչի մասունքն ա դրած, բացադրեց վարդապետը, ցոյց տալով մի ակնագարդ խաչ, որ դրուած էր արծաթեայ երկփեղկ պահարանում—սրա մէջ էլ՝ Պետրոս Առաքեալի մասունքն ա, ցոյց էր տալիս մի ուրիշ, նոյնպէս ականաւիւռ խաչ.—սրա կազմի մէջ էլ Սուրբ Գէորգ Զօրավարի նշխարն ա դրած, այդ էլ արծաթապատ մի աւետարան էր.—էս մասնատուփումն էլ Ս. Կարապետի իրեք մանր նշխարներն են դրած: Իսկ էս ջիփթիշ փոքրիկ խաչումը Կենաց փայտի կտորն ա: Սրա մէջ էլ—ցոյց էր տալիս մի փոքրիկ արծաթէ տուփ—էլի Ս. Գէորգի մասունքն ա: Դէ հմի մէկ մէկ համբուրիր և ուխտդ արա: Թող էս սուրբերը բարեխօս ըլին, Աստուած էլ լսող ու կատարող:

Կամարեանը լսեց վարդապետի բացադրութիւնները և մեքենայաբար խոնարհելով՝ համբուրեց մա-

սունքները, առանց ներսում զգալու հաւատոյ կամ ջերմեռանդութեան որ և է յուզում: Միայն ափսէի մէջ դրուած դրամներից գուշակելով որ այդ արարողութեան պիտի յաջորդէ, նաև, դրամական տուրք, ծոցից հանեց քսակը և մի կարմիր տասնոց դրաւ ափսէի մէջ:

Լուսարարը, որ երեւի, վաղուց էր ինչ չէր տեսել այդպիսի առատ նուէր, օրհնեց երիտասարդին սրտաբուխ խօսքերով և ապա մի զգացուած «պահպանիչ» էլ ասելով՝ ճանապարհ դրաւ նրան դէպի միջանցքը:

Եւ որովհետև հենց թանգարանի դիմաց, ընդհանուր միջանցքի վրայ, բացուած էր մի դուռ, որ հանում էր դէպի Ս. Աստուածածնի եկեղեցին, ուստի վարդապետը առաջարկեց Պետրոսին անցնել այդ դռնով, եթէ կամենում էր «տաճարը» տեսնել: Իսկ ինքն իւր «ծառայութիւնը» կատարած համարելով, դարձաւ նորէն դէպի թանգարանը, ցուցահանած մասունքներն ու ստացած նուէրը իրենց տեղն ամփոփելու:

Ճաշու ժամն աւարտած՝ ժամերգուները դուրս էին գալիս, երբ երտասարդը մութ միջանցքից ելնելով՝ մտաւ եկեղեցու փայտաշէն գաւիթը, իսկ այնտեղից՝ եկեղեցին, ուր ի միջի այլոց, նա հանդիպեց նորէն երիտասարդ աբեղաներին: Վերջիններս դարձեալ մօտեցան նրան, հարց ու փորձ արին տեսածների մասին և ապա սկսան բացադրութիւններ տալ նկատմամբ Ս. Աստուածածնի եկեղեցու, որ, շքնայելով իւր հազարամեայ հնութեան, տակաւին շէն

էր և ամբակուռ: Գալով բարեգարդութեան, սա էլ աչքի ընկնող ոչինչ չունէր իւր մէջ.— գարդերն ու սպասները աղքատ էին, պատկերները՝ գոեհիկ և անարուեստ: Միակ արժանիք ունեցողը՝ սեղանի առաջ դրուած Կոթայ Սուրբ Նշանն էր, որ յայտնի էր իւր բազմադարեան հնութեամբ: Դա պարզ երկաթից շինած մի խաչ էր, կէս կանգուն երկարութեամբ և թևերին ունէր մի մի հատ, ոչ մեծագին, քարեր: Աբեղաները բացաղբեցին որ այդ խաչը, ըստ աւանդութեան, պահում է իւր մէջ մի կտորը այն երկաթէ տաշտին, որի մէջ Կոյս Մարիամը լողացնում է եղել մանուկ Յիսուսին և թէ դա համարուում է Սևանայ անապատի ամենամեծ սրբութիւնը: Ապա երիտասարդ արեղան Կամսարեանի ուշադրութիւնը հրաւիրեց Ս. Աստուածածնի մի փոքրիկ պատկերի վրայ, որը կախուած էր սեղանի աջ կողմը և որը, չընայելով իւր ծխից ու հնութիւնից սևացած լինելուն, երևում էր շնորհալի վրձինի արտադրութիւն:

— Սա այն պատկերն է, ասաց արեղան, որի առաջ Մխիթար Սեբաստացին, Վենետիկեան միաբանութեան հիմնադիրը, աղօթում է եղել, երբ կոյր աչքերով գտնում է եղել Սևանում և որի առաջ նա իւր յայտնի ուխտն է արել...: Շատ ժամանակ չէ, ինչ դիպուածով գտել են այս Ս. Առաքելոց եկեղեցու խորշերից մինում՝ անխնամ ընկած ու փոշոտուած...:

Երիտասարդը սկսաւ ուշադրութեամբ դիտել պատկերը:

— Ի՞նչ մտքեր է սա գարթեցնում ձեր մէջ, հարց-

րեց արեղան, կարծես շտապելով, մի նոր բան ասելու, քանի դեռ ոչ ոք չէր խանդարում իրենց:

— Մտածում եմ թէ՛ եթէ այսպիսի մի սիրուն գործը, որ դարերից ի վեր գտնուելով Սևանում, հոգածու խնամքի արժանանալու փոխարէն՝ ընկած է եղել անյայտ խորշերում և երևան է եկել միայն դիպուածով, ի՞նչ թանկագին հնութիւններ, ուրեմն, չէին կարող անհետանալ այստեղ, հոգատար սրտի և խնամող ձեռքերի պակասութիւնից:

— Այդ էլ պատշաճ մտածութիւն է. բայց ես կարծում էի թէ՛ այս պատկերը մի ուրիշ միտք կը ծնեցնէր ձեր մէջ:

— Այսինքն, ի՞նչ:

— Այն թէ՛ շուտով կը լրանայ երկու հարիւր տարին այն օրից, ինչ այս պատկերի առաջ աղօթողը Սևանից հեռանալով՝ հիմնեց օտար երկրում միաբանական մի ուխտ: Ձեզ յայտնի է թէ՛ ի՞նչ ծառայութիւն արին այդ ուխտի անդամները հայ գրականութեանը: Մի կողմը թողնենք նրանց՝ ազգի մէջ կաթողիկոսութիւն տարածելու և պատմական գրքերում՝ հայ եկեղեցուն ու եկեղեցականներին վերաբերեալ փաստերը յեղաշրջելու տխուր ջանքն ու ձգտումը: Ամեն լոյս ունի իւր ստուերը, ամեն մաքրութիւն՝ իւր բիծը: Բայց անհերքելի է այն, որ Մխիթարեան միաբանութիւնը գնահատելի գործ կատարեց՝ հնութեան և անյայտութեան փոշիներից դուրս հանելով հայ լեզուի թանկագին արտադրութիւնները, նրա ոսկեղինիկ մատենագրութիւնը և նրա ընդհանրացնելովը սիրելի

գարձրեց մեզ մեր նախնեաց լեզուն ու անցեալը, ընդ նմին սովորեցնելով մեզ, ապրել և ոգևորուիլ նրանցով...: Սա, արգարև, մեծ գործ էր, արժանի յարգանքի և երախտագիտութեան: Այսպիսի մտածութեան, բնականաբար, յաջորդում է մի ուրիշը. — միթէ Սևանը ևս չէր կարող դառնալ մի Ս. Ղազարու կղզի. միթէ Սևանը չէր կարող արտագրել մի նոր Մխիթարեան ուխտ: Սա, ի հարկէ, չէր ունենալ Ս. Ղազարի առաւելութիւնները, որովհետև չէ գտնուում Եւրոպայի սրտում, զարգացած ու բարեկիրթ ազգերի մէջ: Բայց մենք էլ Սևանից չէինք պահանջիլ այն, ինչ որ տուաւ Վենետիկը. այլ գոնէ նրա կէսը, թէկուզ, կիսի կէսը: Սևանը մի կողմից էլ այն առաւելութիւնը կունենար, որ տուածը կը լինէր անխառն, հարազատ...: Ճշմարիտ է, այն ժամանակ, երբ Ս. Ղազարու հայրերը իրենց խուցերում խաղաղ նստած՝ հանգիստ աշխատում էին՝ ոչ յարձակման սպասելով, ոչ կողոպտուելուց վախենալով, Սևանը գտնուում էր բարբարոս խաների դժոխային լուծի տակ, միշտ ահի ու սարսափի մէջ, սեփհականութեան իրաւունքից զուրկ և կեղեքիչների քմահաճութեան ենթակայ. բայց չէ՞ որ ահա, եօթանասուն տարի է, ինչ ոուսաց տիրապետութեան շնորհիւ այս երկիրը խաղաղել, արհաւիրները վերացել են և այս վանքի միաբանութիւնը ստացել է հանգիստ ու ապահով վիճակ: Արդ, միթէ չէր կարելի այս եօթանասուն տարուայ ընթացքում ստեղծել այստեղ մի գործ, որ իւր արժանիքով հաւասար լինէր Վենետիկցիներին, գէթ, յիսունամեայ

գործունէութեան: Միթէ չէր կարելի հիմնել այստեղ ժառանգաւորաց մի բարեկարգ դպրոց, որի սաները աշխարհային աղմուկից ու ապականութիւնից հեռու, այս առողջարար օդում, այս պայծառ երկնքի տակ ապրելով և ուսանելով՝ պատրաստէին հասարակաց ծառայութեան համար...: Միթէ չէր կարելի ժողովել այստեղ հմուտ, բանիբուն, գիտութեամբ ու առաքինութեամբ յայտնի հոգևորականներ և կազմել նրանցից մի գիտնական կաճառ, որ պարապէր հին զրականութիւնը մշակելով և նորը զարգացնելով: Դուք հո ձեր աչքով տեսաք մեր այստեղի գրադարանը: Ո՞րքան աղքատ, խղճուկ... մինչև իսկ ամօթ է գրադարանանունը տալ նրան. մի քանի տասնեակ կիսամաշ ձեռագիրներ, մի երկու հարիւր հնատիպ գրեանք... քաղաքներում տիրացուներ կան, որոնք զբանցից աւելին ունին: Բայց չէ՞ որ Սևանը հնումն յայտնի էր իւր բազմահարուստ մատենադարանով. չէ՞ որ շատ տեղերի գրական գանձերը այստեղ էին ամբարուում, կամ աւանդ պըւում: Այժմ ո՞ւր են նրանք: Բարբարոս թշնամիների աւերը, այն, շատ բան է կորցել Սևանից. նոյն իսկ նրա գրագէտ միաբանութիւնը՝ անխիղճ կերպով է նրա գրական հարստութիւնը վատնել: Բայց որքան աւելի զրկանք են պատճառել նրանք, որոնք այս եօթանասուն խաղաղ տարիների ընթացքում ձեռքերնին ծալած նստել են այստեղ և բաւականացել միայն աղօթելով, կամ հսկումներ կատարելով...: Ինչո՞ւ արդեօք Սևանը, որ գտնուում է հայրենի հողի վրայ, նրա սրտի ու հոգու մէջ, ինքը չէ տալիս Վենետիկին՝ այս հողին

ու ջրին, սրա անցեալին ու ներկային վերաբերող ուսումնասիրութիւնները, սրա սրտին ու հոգուն հարագատ յուշերը և, ընդհակառակը, ինքն է նրանից մուրում: Ինչո՞ւ... Բայց այդ «ինչո՞ւ»ները անթիւ են և դրանց բոլորի պատասխանը մէկ. այսինքն այն՝ որ այսքան տարիների ընթացքում, չի գտնուել մեր երկրում մի մարդ, աշխարհական լինէր նա թէ հոգևորական, որ ոգևորուէր Մխիթարի զգեցած ոգևորութեամբ և վառէր Սեանում լուսոյ այն ճրագը, որ առաջին նուազ վառեց Լուսաւորիչ և որն ապա տգիտութիւնն ու խաւարը հանգցրին...: Այո՛, եթէ այդ մի հաս մարդը գտնուած լինէր այստեղ, ապա դուք այսօր Սեանը չէիք տեսնիլ այսքան անշուք, անփառունակ. չէիք տեսնիլ նրա կեանքը այս աստիճան անշարժ, ոգին՝ մահամերձ...: Իբրև նիւթական ապացոյց այստեղ ապրողներին անշարժութեան, ահա այն կացարանները, որ դուք տեսել էք, որոնց մէջ ապրել են նախկին միաբանութիւնները և որոնց մէջ, ահա, ապրում ենք նաև մենք: Այդ շինութիւնների կառուցումից մինչև այսօր՝ անցել են հազար երկար տարիներ: Եւ սակայն նրանք մինչև այսօր էլ նոյն խոնաւ, բորբոսնած, հոգածածկ կառուրով խցերն ու խցիկներն են, որոնք ամենից առողջ մարմիններն իսկ մաշելով, մաշել ու ծիւրել են նաև նրանց հոգին և անընդունակ դարձրել մի ճշմարիտ ու էական բարիք ստեղծելու...: Անշուշտ դուք անցաք այդ կացարանները իրար հետ միացնող բաւզածև անցքերից. տեսա՞ք թէ ինչպիսի խաւար է տիրում նրանց մէջ...: Հարկաւոր չէր ոչ մեծ խելք)

ոչ էլ ճարտարապետական տաղանդ, որ մարդ իմանար թէ՛ այդ միջանցքների վրայի կտուրը ծակելով և մի քանի տեղ, եթէ ոչ ապակէ պատուհաններ, այլ գէթ հասարակ երգիկներ դնելով՝ կարելի էր բոլոր անցքերը միանգամից լուսաւորել: Սակայն հազար տարի այս խաւարում խարխափող միաբանութիւնների մէջ, չի գտնուել մի գլուխ, որ այդ հասարակ ճանապարհով Աստուծոյ տուած լոյսն այդ անցքերը մտցնէ և նրանց անթափանցելի խաւարը փարատէ: Ճիշդ այդ ձևով էլ խաւար են մնացել այդ խուցերում ապրող մարդկանց ոգիները. արդիւնքը եղել է այն, ինչ որ տեսնում էք այսօր...:

Երիտասարդ արեղան, երևի, դեռ երկար կը ճառախօսէր, եթէ խմբին չըմօտենար վանքի տնտեսը և վանահօր կողմից չընթաւիրէր հիւրին ճաշի:

Այդ հրաւէրը զգաստացրեց թէ՛ խօսողին և թէ՛ լսողներին. ուստի ամենքը միասին ելնելով եկեղեցու գաւթից՝ առաջացան դէպի բակի սիգաւէտ կողմը, ուր հովանաւոր ուղիների տակ, բացուած էր ընդհանուր սեղան, որը և բոլորեցին նրանք, իրենց գլուխ ունենալով վանահօրը:

Վերջինս սեղանն օրհնելով՝ առաջարկեց հիւրին՝ վայելել վանական «անպաճոյճ» ճաշը, որի ալրատը բաղկացած էր պանրից, եփած ձուերից և աղած կողակից, իսկ խորտիկը, որ յետոյ բերին, թանապուրից, նոր խաշած իշխաններից և ձաւարով ու իւղով պատրաստած «քաշով»ից: Սեղանի վրայ պակաս էր միայն միսը, կամ նրանից պատրաստած կերակուրը: Վանա-

հայրը բացաղբեց որ վանական խստակեցութեան օրէնքը արգելում է իրենց գոհի մտից դատ, ուրիշ միև ուտել, կամ գործ անել այն կերակուրի մէջ:

Մի քիչ յետոյ, սակայն, Կամսարեանը նկատեց որ վանահայրը, երևի, համեստութիւն էր անում «անպաճոյճ» անուանելով առաջարկուած ճաշը. ապա թէ ոչ, վերջինս ոչ միայն հեռի էր անպաճոյճ լինելուց, այլ և չէր կրում խստակեցութեան կնիք:

— Ես «անպաճոյճ» անուանեցի ձեր տեսակէտից, իսկ մեզ համար՝ սա մինչև անգամ փարթամ ճաշ աս, բացաղբեց վանահայրը ծիծաղելով: Ապա կամենալով մի գաղափար տալ հիւրին իրենց խստակեցութեան մասին, ծանօթացրեց նրան Սևանայ անապատում ընդունուած պահեցողական կարգերին, որից երևաց որ նրանք տարուայ մեծագոյն մասը անցնում են պահքով: Որովհետև բացի հասարակ ու շաբաթական պասերը, նրանք պահում էին, նաև, երեք «մեծ պասեր»: Դրանցից առաջինը՝ սովորական մեծ պասն էր, որ բուն բարեկենդանից սկսուելով՝ վերջանում էր գատկին. երկրորդը՝ Հոգեգալստից մինչև Վարդավառ, որ տևում էր ութ շաբաթ. երրորդը՝ Վարդապայ խաչի տօնից՝ մինչև Յիսնակի պասը, որ դարձեալ ունէր ութ շաբաթ—էդ բոլոր կարճ ու երկան պասերին, շարունակեց վանահայրը, մեր միաբանութեան կերածըն լիում աս ձէթ, լոբի, սիսեռ, ոսպ ու կանաչի: Միայն ուտիքին աս որ իւր, կաթ ու ձու կարող ենք ուտել, կամ բրինձ ու ձաւար: Ծովից հանած ձկներից էլ, ի հարկ է անուշ ենք անում, որքան պատահում աս:

— Հէր օրհնած, էլ ուրիշ ի՞նչ ես ուզում... կամացուկ շնջաց երիտասարդ արեղան, որ նստած էր Կամսարեանի կողքին:

Վերջինս ծիծաղեց:

— Ընչի՞ ես ծիծաղում, հարցրեց վանահայրը ժրպտալով:

— Ոչինչ. մտածում եմ թէ՛ ի՞նչ կանէի ես, եթէ ձեր միաբանը լինէի:

— Ի՞նչ պըտի անէիր. կապրէիր էսէնց, ոնց որ մենք ենք ապրում: Ըստոնք էլ քեզ պէս տղերք են ըլել, հօ վարդապետ չէ՞ն ծնուել: Այ, տեսնում ես, ցոյց էր տալիս վանահայրը արեղաներին— ամեն բան սովորել են, կարգի ու կանոնի վարժուել, հմի սիրով ապրում ու ըսկի դժգոհում չեն:

Ճաշը վերջանալուց՝ Կամսարեանն շտապեց իւր շնորհակալութիւնը յայտնելու վանահօրը և բոլոր միաբանութեանը՝ իրեն ցոյց տուած սիրալիւր ընդունելութեան համար և ապա պատրաստուեց հեռանալ կղզուց: Բայց որովհետև հենց այդ միջոցին յիշեց որ բացի «թանգարանին» տուած նուէրը, անհրաժեշտ է, նաև, միաբանութեան օգտին նուիրաբերել մի բան. ուստի խնդրեց վանահօրը՝ բերել տալ նուիրատուութեան մատեանը՝ որպէս զի իւր տուրքը արձանագրէ այնտեղ:

Վանահայրը սկզբում չըհասկացաւ նրա ասածը, ապա երբ երիտասարդն իւր խնդիրը կրկնեց, նա ժրպտալով նկատեց:

— Էհ, որդի. մեր վանքումն ի՞նչ աս շինում մատ-

եանը... մենք նահապետական մարդիկ ենք. ուխտա-
ւորը գալիս ա, իրա ուխտն անում, եղոյ վանահօր աջն
առնում, մի աջահամբոյր տալիս, գնում: Նրանից եղը
էլ ո՞վ ա հարցնում թէ՛ ի՞նչ տուաւ, ի՞նչ չըտուաւ.
եա չէ մեզանից ո՞վ պտի հաշիւ ուզի: Էդ որ աջահամ-
բուրի համար էլ գիր ու կիրակոս պահենք, ծէրն ո՞ւր
կերթայ,

— Բայց ես կարծում եմ որ եթէ այդպիսի մի կարգ
սահմանէիք, այսինքն ամեն տուրք մատեանի մէջ
արձանագրուէր, վատ չէր լինիլ: Դա, մինչև անգամ,
օգուտ կը բերէր վանքին: Նախ՝ որ այդ մատեանը կա-
րելի կը լինէր առաջարկել ամեն այցելուի. երկրորդ
որ վերջինս հաստատ գիտենալով թէ՛ իւր տուածը
արձանագրուում է մի տեղ և այն էլ ի տես ուրիշ այ-
ցելուների, կը նուիրաբերէր աւելի առատօրէն:

— Էդ հու էս ջահիլների խօսքն ա. էրևում ա դու
էլ ըսողնցից ես լսել, նկատեց վանահայրը, կարծես
վերաւորուելով:

— Դա ի՞նչ մի նոր բան է որ ես սրանցից լսեմ.
բոլոր աշխարհում ընդունուած, ամեն տեղ գործա-
դրուող մի սովորական բան է:

— Չէ, որդի, ես մատեան բան չեմ գիտում: Միշտ
ասել եմ, էս օր էլ կասեմ. վանքի մատեանը նրա
վանահայրն ա. ով նրան հաւատում ա, նրա վրէն վըս-
տահ ա, թող տայ, ինչ ուզում ա. ով չի հաւատում,
Տէրը նրա հետ. էդենց մարդու տուրքն էլ ըսկի վան-
քին պէտք չի:

Կամսարեանին այլ ևս առարկելիք չէր մնում. նա

շտապեց իւր սխալը ուղղել նրանով, որ ջերմութեամբ
համբուրեց վանահօր աջը և մի տամոց դրաւ նրա
ձախում:

Վանահայրն, ի հարկէ, հաշտուեց իւր սրտում
երիտասարդի հետ և քաղցր խօսքերով օրհնելով նրան,
մաղթեց, նաև, բարի ճանապարհ:

Պետրոսը նորից իւր շնորհակալութիւնը յայտնեց
միաբանութեան բոլոր անդամներին և բարեկամաբար
նրանց ձեռքը սեղմելով՝ մտք բարև ասաց և հեռա-
ցաւ: Աբեղաներից մի քանիսը, նոյպէս և լուսարարը
ուղեկցեցին նրան մինչև լճափը:

Այստեղ նրանք հանդիպեցին վանքի ել և մտից
կառավարիչ Սարկաւագին, որ հենց նոր էր վերադար-
ձել Յամաքաբերդից, ուր գտնուում էր վանքի «Դրսի
տունը» այն է՝ նրա տնտեսութեան արտաքին բաժան-
մունքը և ուր սա յաճախ երթևեկում էր գործով:

Լուսարարը երիտասարդին ծանօթացնելով նորեկի
հետ, ցաւ յայտնեց որ վերջինս վաղ չէր վերադարձել,
ապա թէ ոչ, ասաց—նա ընենց պատիւ կը տար քեզ,
որ քո օրում Սևանը ըսկի չէիր մոռանայ:

— Շնորհակալ եմ. դուք էլ լաւ պատուեցիք, Սևանը
դարձեալ չի պիտի մոռանամ, յարեց երիտասարդը:

— Չէ, մեր բանն ուրիշ ա, Սարկաւագինն ուրիշ.
սա բանի զայգան լաւ ա գիտում, կրկնեց լուսարարը
ծիծաղելով:

Սարկաւագի աստիճանում Կամսարեանը տեսել
էր միշտ մի երիտասարդ, յաճախ աշխարհականի շո-
րերով. բայց նորեկը՝ վաթսունն անցած մարդ էր,

բարձրկեկ հասակով, առողջակազմ, միայն մի քիչ թալկադէմ: Ունէր շէկ, ալեխառն մօրուք և ծաւի, խորհայեաց աչքեր: Հագուստը ոչնչով չէր գանազանուում վարդապետների հագուստից, որովհետև բազկանում էր նոյն մոյգ-կապոյտ կտաւէ կապայից, շալէ գօտուց, կոշտ բրդէ փարաշայից և խայտապղէտ գուլբաներից ու քօշերից: Միայն թէ վեղարի փոխարէն՝ գլխին ծածկած էր գառան մորթու տափակ գդակ, որ գարիբալդի կոչուածի ձևն ունէր և որի մէջ այնպէս խոր էր մտցրել գլուխը, որ ծածկել էր ճակատը՝ մինչև թաւամազ յօնքերը:

Ժպիտը, որ նա խաղացրեց շրթունքներին՝ հիւրին ողջունելու ժամանակ, բռնագբօսիկ էր և չէր յարմարում գէմքին, որ, կարծես, ստեղծուած էր միշտ խիստ ու մտախոհ երևալու համար: Առաջին տպաւորութիւնը, որ նա արաւ երիտասարդի վրայ, այն էր թէ՛ նա բանի տեղ չէ դնում միաբանութեան անդամներին: Որովհետև մօտենալուց՝ նա ոչ միայն չընայեց վերջինների վրայ, այլ և, մինչև իսկ, չըտեսնելուն տուաւ, իբրև այնպիսի մարդկանց, որոնց հետ չունէր որ և է առնչութիւն, կամ որոնց գոյութիւնը չէր հետաքրքրում իրեն՝ լոկ այն պատճառով՝ որ գիտէր թէ՛ նրանցից ոչ մէկը չէ կարող իւր յայտնի վիճակի վրայ ունենալ լաւ կամ վատ ազդեցութիւն:

Սովորական քաղաքավարութեամբ երիտասարդի «քէֆը» հարցնելուց յետոյ, նա ցանկացաւ իմանալ թէ՛ ինչո՞ւ վերջինս չէ մնում իրենց մօտ մի քիչ աւելի:

— Ուրախութեամբ կը մնայի, բայց իմ ձիապանն,

ահա, նստած լճափին սպասում է ինձ, առարկեց երիտասարդը:

— Վնաս չունի, նրանք սովոր են սպասել, նկատեց Սարկաւազը այնպիսի մի եղանակով որ կարծես այդ «նրանքը» իսկի մարդիկ չէին:

— Բայց, միևնոյն է, ես արդէն ձեր վանքում ամեն ինչ տեսայ, ամեն բանի ծանօթացայ, աւելի մնայնայլ ևս միտք չունի:

— Հա՛, դէ որ էդպէս ա, լաւ ա: Ասենք շատ տեսնելու էլ բան չունենք, մէ դարտակ վանք ա, մին էլ մի քանի սևագլուխներ. եկողն ուրիշ ինչ պտի տեսնալ, նկատեց Սարկաւազը ժպտալով. սպա նայեց արեղաներին այնպիսի մի հայեացքով, որով կարծես կամենում էր ասել՝ «չըլինի թէ սխալուիք ուրիշ կարծիք յայտնել»:

Նրա դիտողութիւնը, սակայն, ոչ ոք առաւ ուշադրութեան, իսկ Պետրոսը շտապեց դէպի նաւակը, որ սպասում էր իրեն:

Ծովակն անհանգիստ էր, թէպէտ ոչ անսաստ յուզուած: Ալիքները դեռ ևս խաղում էին իրար հետ և կարծես զգուշանում միմեանց ընդհարուելուց, որպէս զի ծովակի ժպտուն դէմքը չըխուովն:

Կամսարեանի հարցին թէ՛ արդեօք ջրի անհանգստութիւնը վտանգ չէ սպառնում, Սարկաւազը պատասխանեց.

— Էդ տեսակ անհանգստութիւնից հէջ վտանգ չըկայ. ուրիշ ա որ քիչ յետոյ քամին սաստկանայ, բայց մինչև էն վախտը դու կընես Չիբուխլուում:

Մինչդեռ ուղեկցող արեղաներից մինը, որ մեր ծանօթ բողոքարկուն էր, երիտասարդին աւելի միամտացնելու համար՝ պատրաստականութիւն յայտնեց ուղեկցել նրան մինչև դիմացի ափը:

Կամսարեանը սիրով ընդունեց այդ առաջարկութիւնը և նրանք միասին մտան նաւակը, որ խոյն էլ առաջացաւ դէպի խորը:

Սակայն այստեղ ալիքները թւում էին հետզհետէ աւելի անհանգիստ և, հետեւապէս, աւելի ահարկու: Թէպէտ թիավարների հօկու բազուկների շնորհիւ հնատարազ նաւակը սուրում էր արագ, այսուամենայնիւ, ծփանքը նրան այնպէս էր տատանում որ թւում էր թէ՛ ահա, ուր որ է մի յորձանք կը խուժէ նաւակի խորը և լցնելով այն՝ ուղևորների հետ միասին կիջեցնէ յատակը:

Երիտասարդ արեղան տեսնելով որ Կամսարեանը երկիւղ է կրում, սկսաւ նախ նրան հանգստացնել՝ ասելով որ ծովակի աւելի յուզուած ժամանակն իսկ ամենքը նրա վրայ երթեկում են աներկիւղ, ըստ որում մինչև այսօր դեռ ոչ ոք այդտեղ վտանգի չէ հանդիպել: Իսկ հապա նրա ուշադրութիւնը ուրիշ բանի վրայ դարձնելու համար, սկսաւ նորէն խօսել վանքի ցաւերից:

— Գիտէ՞ք, բարեկամ, ես շատ ուրախացայ, երբ դուք վանահօրից նուիրատւութեան մատեան պահանջեցիք: Թէպէտ ցաւալի էր որ նա կարծեց թէ՛ դուք մեր խօսքն էք կրկնում և ոչ թէ ձեր սեփական ցանկութիւնը յայտնում, այսուամենայնիւ, լաւ եղաւ որ

այդ բանն արիք. որովհետև դրանով մեր դատին ոյժ տուիք: Երանի թէ ամեն այցելու այդպիսի մի պահանջ անէ նրանից: Այն ժամանակ նա կիմանայ որ որ համեստութեան պակասութիւնը, կամ ըմբոստութիւնը չէ պատճառ որ մենք ևս յաճախ նման պահանջներ ենք անում, այլ մեր դիտակից պարտաճանաչութիւնը, որին իրաւունք չունինք դաւաճանելու, լռելով այնտեղ, ուր պէտք է խօսել: Դուք նուիրատւութեան մատեանն էք ասում. մի հարցրէք թէ՛ ուրիշ որ և է մատեան ունի՞ մեր վանքը: Տեսա՞ք դուք այդ սարկաւազին, որ նոր վերադարձաւ: Ուշադրութեան արժանի անձնաւորութիւն է դա: Ով որ կամենում է մեր մի կարգ գործերի անյաջողութեան գաղտնիքը լուծել, նա պէտք է ուսումնասիրէ այդ տեսակ անձանց, որոնք չընայելով իրենց ոչնչութեան, այսուամենայնիւ, մեծ դեր են խաղում մեր բազմ տնօրինելու կարևոր գործում: Սկանում, օրինակ, այդ մարդը վայելում է մեծ իրաւունքներ: Չեմ սխալուիլ, եթէ ասեմ թէ դա է, մինչև անգամ, մեր ամենի գլխաւորը և ոչ թէ վանահայրը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խեղճ ու ազէտ մարդ: Վերջինս, իսկապէս մեզ չէ սիրում նրա համար, որ իրենից յաճախ անում ենք այնպիսի պահանջներ, որոնց խորհուրդը նա չէ հասկանում: Միւս կողմից էլ նրան լարում են մեզ դէմ իւր մտերիմները և մանաւանդ սարկաւազը, որին նա հաւատում է միամտաբար, կամ, գուցէ, հարկից ստիպուած: Ով է սակայն սարկաւազը, որ այսքան ոյժ ունի.— մի ազէտ ու գոեհիկ մարդ, որ անյիշա-

տակ ժամանակներից գտնուելով այս անապատում, իւր ժրութեան և ճարպիկութեան շնորհիւ արժանացել է «աներևոյթ կարգադրիչներին» ուշադրութեան և նրանց ջանքերով էլ «վերևից» կարգուել վանահօր օգնական: Նրա պաշտօնն է, իբրև վանքի գործակատար՝ հսկել նրա կալուածներին, ժողովել եկամուտը, և երբեմնապէս գնալ մօտիկ քաղաքները, թէ՛ այդ տեղերի կալուածոց արդիւնքը գանձելու և թէ՛ միաբանութեան համար հագուստ կամ այլ պիտոյք հայթայթելու: Բայց նա իւր պաշտօնը կատարում է ոչ թէ իբրև գործակատար, այլ իբրև վանքի տէր ու իշխեցող: Եկամուտ ձեռք բերելու դժուարին մասը նա, ի հարկէ, յանձնում է վարդապետներին. սրանք են, օրինակ հաւաքում միաբանութեան հասանելիք «պողի բաժին» — ոչխարը, պանիրը, ձէթը, ցորենը և այլն: Այս առիթով խեղճերը սարերն են բարձրանում, ձորերն են իջնում, դաշտերն ու գիւղերն են չափում, և սակայն այդ ամենը վանքը մտնելուց յետոյ՝ ենթարկւում է սարկաւազի միահեծան իշխանութեան: Ինչ վերաբերում է գրամական գործերին. գրանք արդէն նրա ձեռքումն են: Ի՞նչ մուտք ունի վանքը և ի՞նչ ելք. այդ մենք չըզիտենք, բայց զիտէ սարկաւազը և եթէ հարկ լինի որ և է հաշիւ տալ մէկին, այդ կը տրուի այնպէս, ինչպէս որ սարկաւազը կուգէ և ոչ թէ այնպէս, ինչպէս որ իրօք կայ: Այսօր կղզին մտնելուց՝ դուք խօսեցիք գիւղացիների տրտուենջի մասին, որը սակայն ընկերս համարեց զրախօսութիւն, բայց նա սխալւում էր: Գիւղացուց տրտուենջն էլ ունի իւր հիմ-

քը: Մեր գործերն առհասարակ, այնպէս են ընթանում որ հետուից նայողը պիտի կարծէ թէ՛ այս անտէր հայոց ազգում ոչ մեծ կայ՝ ոչ փոքր. ոչ տէր կայ՝ ոչ տիրական: Այլ կան մի մի սարկաւազներ, որոնք յենուած իրենց պաշտպան «ոյժերին», գործում են, ինչ կամենում են և ոչ ոք նրանց չէ իշխում խանգարել: Եւ հենց այդպէս էլ է. եթէ երբեմն մարդիկ համբերութիւնից ելնելով սկսում են տրտնջալ, կամ ուր հարկն բողոքել, այդ ամենի արդիւնքը լինում է այն՝ որ սարկաւազը կատարում է մի փոքրիկ ճանապարհորդութիւն, համբուրում է «աներևոյթ կարգադրիչներին» ձեռքը և վերադառնում դարձեալ իւր պաշտօնով ու իրաւունքներով: Այնուհետև շուրջ դարձեալ հոսում է իւր հին ճանապով, և մարդիկ յոգնած՝ հաշտւում են այդ դրութեան հետ: Այս է իսկապէս պատճառը որ վանահայրն ամեն բանում համակերպւում է սարկաւազին: Նրա մէջ այլ ևս մեռել է տրտնջող ու բողոքող հոգին և մնացել միայն մի փոքրիկ փառասիրութիւն, որ գոհ է, գէթ նրանով, որ ինքն աշխարհի առաջ համարւում է «վանահայր»: Իսկ թէ այնուհետև ի՞նչ է կատարւում շուրջը, այդ ամենի համար նա կարող է աչք գոցել, որպէս զի «աներևոյթ» պաշտպանները չըզրգուով: Այս կերպով են վարւում մեր գործերը շատ տեղ, և «խօհեմ» մարդիկ չեն վրդովւում այդ դրութեամբ, որովհետև հաւատացած են թէ՛ ոչինչ այլ ևս չէ կարելի փոխել: Բայց մի՞թէ այդպէս է: Մի՞թէ այդ ձևով պիտի մտածենք նաև մենք, որ մտել ենք հոգևոր զինուորութեան մէջ գաղափարով

ողևորուած... Ի՞նչպէս թէ մի տգէտ ու գոեհիկ գեղջուկ միահեծան տէր լինի այս հինաւուրց անապատին... Ի՞նչպէս թէ այդ պաշտօնը նա գնէ այնպիսիներէից, որոնց մի պուզ աղած կողակի նուէրը աւելի է զբաղեցնում, քան թէ Սեանի շուրջն ապրող ժողովրդի ցաւերն ու կարիքները...: Եւ երբ այս մասին մտածում ես, երբ երեւակայում ես թէ՛ ի՞նչ կարող էր լինել պատմական Սեանը, ինչէ՞ր կարող էին լինել հռչակաւոր Տաթևը, Սանահինն ու Հաղպատը, Գանձասարն ու Ամարասը և ուրիշ շատերը, որոնք սակայն այսօր ոչ այլ ինչ են, եթէ ոչ աւերանոցներ, գայրութից քիչ է մնում որ խելագարուիս...: Ահա, այսպիսի դէպքերումն է, պարոն Կամարեան, որ մենք յիշում ենք ձեզ, զարգացած ու կարող երիտասարդներից և կարօտում ձեր օգնութեան...:

Վերջին բացագանչութիւնը նեղը պիտի լծէր Կամարեանին, եթէ նրա բաղդից նաւակը չընամներ ափին: Բայց նա ոչ միայն հասել՝ այլ և կողն արդէն դէմ էր արել ժայռին: Պէտք էր ուրեմն ելնել: Այս դէպքում, ի հարկէ, պատշաճից դէմ չէր որ երիտասարդը՝ իրեն ուղղուած սրտառուչ գիմումին յարմար ու վայել պատասխան չըտարով, շատացաւ միայն աբեղայի եռանդը մի քանի խօսքով գովելով: Յետոյ բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով, շնորհակալութիւն յայտնեց սիրալիբ ուղեկցութեան համար և յատկապէս ինչորեց որ հայր սուրբը հաճի վստահօրէն գիմել իրեն, երբ հարկ լինի յանձնել իրեն որ և է պատուէր կատարելու:

— Պատուէրներ տալ ձեզ՝ չեմ համարձակուիլ, բայց դուցէ խնդրեմ որ երբեմն ինձ համար նոր գրքեր ղըրկէք, դրանով դուք ինձ շնորհապարտ կը կացուցանէք, ասաց արեղան:

— Ամենայն սիրով և ուրախութեամբ, յարեց երիտասարդը և մակուկավարներին առատօրէն վարձազրելով, դուրս ելաւ ափը:

Մի քանի ըոպէից յետոյ նաւակը հեռանում էր՝ տանելով իւր հեռ բողբարուկու արեղային, իսկ Կամարեանն իւր ձին խրախուսելով՝ դիմում էր դէպի Չիբուխու:

ԺԳ.

Դեռ բաւական օր կար որ Պետրոսը հասաւ գիւղ: Տանուտէրը տանը չէր. նրան դիմաւորեց տանտիրուհին, որի հետ խօսել նա չէր կարող: Ի՞նչպէս անցցնել ուրեմն օրուայ մնացորդը, կամ ուր գնալ, մտածեց երիտասարդը և իսկոյն էլ մտաբերեց տիրացու Մօսուն: — «Այցելեմ նրա դպրոցը, այս կարող է ուրախացնել տիրացուին», խօսեց նա ինքն իրեն և դուրս գնաց:

Առաջին պատահող անցորդը ցոյց տուաւ նրան տիրացուի տեղը, դէպի ուր և ուղղեց իւր քայլերը:

Տնակն, ուր ապրում էր Մօսին, գտնուում էր դիւղի ծայրում և բաղկացած էր մի հատ երդիկաւոր,

միադուռն օգայից և ցածուն, բայց լայնագիր սրահից, որի առաջ գտնուում էր նաև փոքրիկ բակ, կիսով չափ պարսպած գետաքարերի անշաղախ պատով: Հովանաւոր սրահում, այլ և բակի այն մասում, որի վրայ հարևանի աթարի դէզը տարածել էր լայն ստուեր, անկարգ ու խառն ի խուռն նստոտած էին մօտ երկու տասնեակ տղաներ, ոմանք կտաւի փոքրիկ մինդարներ, կամ հին կապերաի կտորներ, ոմանք պատերի տակ ընկած սալաքարերի, իսկ ուրիշներն՝ ուղղակի հողի վրայ: Նրանք ձեռքերին մի մի գիրք առած կարգում էին, երբեմն կամացուկ, երբեմն մըմուռով, իսկ յաճախ բարձրաձայն, առանց մէկը միւսին նայելու, որից և բակի ու սրահի մէջ բարձրացել էր աղմուկ ու ժխոր:

Տիրացուն, որ կամսարեանին հանդիպած ժամանակ երևում էր կորաքամակ, այստեղ, աշակերտների առաջ ձեմում էր ձգուած ու բարձրագլուխ: Մինչև անգամ մորթէ գգակը, որ նա ճանապարհին քաշել էր գլխին մինչև ականջները, այժմ ոչ միայն բարձր էր՝ ճակատը երևալու չափ, այլ և քէշ (ծուռը) դրուած, որով նրա դէմքը ստանում էր համարձակ ու ինքնավստահ արտայայտութիւն: Նա ձեռքին ունէր հասարակ փայտից շինած մի երկար քանոն, որ նմանում էր որոմնադրի գազի և որը շարունակ աջ ու ձախ ձօձելով՝ մօտենում էր մերթ այս՝ մերթ այն աշակերտին և փոխանակ խօսքով դիտողութիւն անելու, նրա ծայրով բռնում էր՝ կամ մէկի կրծքին՝ կամենալով ուղիղ նստեցնել նրան, կամ միւսի գլխին՝ որպէս

զի սա շատ չըկորացնէ այն, իսկ յաճախ զարկում սրա ու նրա գրքին, որպէս զի ծնկների վրայ դնելու փոխարէն, ձեռքերնին առնեն նրանց:

Հեռուում՝ ձայնը մի աշակերտի, որ կարգում էր կանգնած, յաղթում էր ընդհանուր ժխորին: Այդ նշանակում էր թէ՛ նա դաս է ասում:

— Ի՞նչ է պաճարը որ դու... կարգում էր աշակերտը մայրենի լեզուից:

— Պաճարը չի, ա լակոտ. պատճառն ասա, ուղղում էր տիրացուն:

— Պատճառը որ դու աղպէս...

— Ա հայվան, աղպէսը ո՞րն ա, մի շանց տու տենեմ. ասում էր տիրացուն և քանոնը ձօձելով խոյանում դէպի աշակերտը:

Վերջինս՝ մէկ ձօձող քանոնին, մէկ գրքին նայելով, շփոթուած պտրտում էր աղպէսը,

— Ո՛ւր ա, դէ շանց տու տենեմ. շանց տու, շուտ, կրկնում էր տիրացուն անհանգստութեամբ:

Աշակերտը վերջապէս գտաւ աղպէսը և ցոյց տուաւ:

— Ադա, էշի ծէք, բա էդ աղպէս ա, էս յի՛ն տենում չես. աչքդ բո՞ւ ա. հմի թխեմ դրուտ քուացնեմ... ասում էր վարժապետը և ապա ուղղում— ասի՛ այդպէս:

— Այդպէս:

— Չո՞ւ... դէ հմի միտդ պահի:

— Այդպէս ուրախ ծիծաղում ես... շարունակեց աշակերտը:

Կամսարեանը, որ մի քանի վայրկեան ցանկա-

պատի ետևը կանգնած տեսնում ու լսում էր այս ամենը, վերջապես մտաւ բակը:

Տիրացուն հենց որ նշմարեց նրան, ձեռքը բնազդաբար դէպի գլուխը տարաւ և գրակի դիրքը ուղղելով՝ շտապ շտապ մօտեցաւ երիտասարդին:

— Բարով ես եկել, աղա, հազար բարով, էս օր խաչից ա՛ մեզ միտդ ես պցել, ասաց նա ժպտալով և սև ու կոշտ ձեռքը կամսարեանին ուղղելով:

— Եկել եմ քո ուսումնարանը տեսնելու, պատասխանեց վերջինս և թեթևակի ու կէս անուշադիր սեղմեց Մօսու ձեռքը:

— Շնորհակալ եմ... Աստօծ էլ քե մհալ պցի (ուշագիր լինի) ոնց որ դու մեզ մհալ ես պցում... ամա դէ կը բախշես, քու տենելու լայեղ յուսումարան հունեմ:

— Հող չէ, ինչ ունես, այն կը տեսնենք:

— Լաւ կըլի, համաձայնուեց տիրացուն և դառնալով աշակերտներին՝ կէս բարձր ու կէս խեղդուած ձայնով հրամայեց— ադա վե կացէք, աղին գլուխ տվէք:

Աշակերտները մէկը միւսի ետևից վեր կացան տեղերից և շուարած ու երկչոտ հայեացքով սկսան գիտել «աղին»:

Նրանց արտաքինը չափազանց տխուր ազդեցութիւն էր անում: Մօս երկու տասնեակ աշակերտների մէջ՝ հազիւ մի երկուսը հագնուած էին օրինաւոր, այսինքն, ունէին չրմաշուած շոր և կաշուէ ոտնամաններ: Միւսները, գրեթէ, ցնցոտիների մէջ էին, ոմանք մինչև իսկ, կիսամերկ և բոկոտն: Կային և այնպիսի-

ները, որոնք արխալուխի (բաճկոն) տակ շապիք չունէին, կամ եթէ ունէին, այնքան էր կեղտոտ, որ կտաւի ինչ գոյն լինելը չէր որոշուած:

— Ադա ձեզ ասըմ չեմ գլուխ տվէք, կրկնեց տիրացուն իւր հրամանը:

Աշակերտներից մի քանիսը գլուխ իջեցրին. աւելի փոքրերը դեռ նայում էին. ապա ընկերներին հետևելով՝ նրանք էլ գլուխ տուին, առանց իմանալու թէ՛ ինչո՞ւ են այդպէս անում:

Մի փոքրիկ դալկադէմ տղայ, որ դեռ քարի վրայ նստած՝ իւր մեծ մեծ, սիրուն աչքերը յառել էր «աղին» և չէր մտածում ոտքի երնել, գրգռեց տիրացուի զայրոյթը:

— Ա, լակոտ, խի՞ չես վե կենում, խուլ ձայնով ճչաց նա, և իւր բարկացայտ աչքերը սևեռեց երախայի վրայ:

Վերջինս վեր թռաւ, իբրև օձահար և երկչոտ հայեացքը սկսաւ պտտեցնել մերթ «աղի», մերթ վարժապետի վրայ:

Հին պատառոտուն հագուստը, որ շատ տեղ, նոյն իսկ, չէր ծածկում տղայի նիհար մերկութիւնը, անմեղ ու տխուր հայեացքը, որ մի առանձին գրաւչութիւն էր ստացել զգացած երկիւղի ազդեցութեան շնորհիւ, այնպէս յուզեցին կամսարեանի սիրտը, որ նա չրկաբողանալով իւր դժգոհութիւնը գսպել, ծանր դիտողութիւն արաւ վարժապետին որ նա կոպտաբար է վարուում երախաների հետ:

— Որ դհե չանես, սրանք մարդ չեն դառնալ:

Գու գիտում չես թէ՛ ի՞նչ թանր թայփայ (ցեղ) են: Ափսոս չեն մերոնք (ղազախեցիք). ընդոնցում խելք կայ, շնորհք կայ. ըստոնք ջլիզ (բոլորովին) հայվան են, առարկեց տիրացուն:

—Գէհ, լաւ, բաւական է. աշակերտներին չեն հայհոյիլ, կամացուկ նկատեց Կամսարեանը և ապա մօտենալով տղաներին, սկսաւ նրանց խօսեցնել, հարցափորձել, մէկին կամ միւսին կարգացնել, կամ նրանց գրքերին ու տետրակներին նայել:

Տղաներից ոչ մէկը, նոյն իսկ մեծերից, որոնք ձեռքերնին աւետարան ունէին, կանոնաւոր կարգալ չէր իմանում: Գրելու մէջ, մանաւանդ, յետ էին մնացած բոլորը: Մի երախայի տետրակի վրայ նա տեսաւ վարժապետի գրած մի քանի տող օրինակը, որ անկանոն ձևով գրուած լինելուց դատ, լի էր նաև տառասխալներով:

—«Եթէ սա է վարժապետը, ի՞նչ կը լինի աշակերտը» մտածեց Կամսարեանը և գլուխը շարժեց:

—Տենում եմ որ հաւանում չես իմ յուսումարանին, ժպտալով և, միևնոյն ժամանակ, քաշուելով նկատեց տիրացուն, երբ Կամսարեանը իւր հարց ու փորձն աւարտելով, կամենում էր հեռանալ:

—Ի՞նչ ասեմ, Մօսի, լաւ կը լինէր որ դու այս ուսումնարանը փակէիր, ասաց երիտասարդը:

—Ընչի՞ հմար, զարմացաւ տիրացուն:

—Նրա համար որ դու ոչինչ չես սովորեցնում այս երեխաներին:

—Եանի օնց չեմ սովորցնում: Բա դու քու աչ-

քով տեսնիր ոչ՝ օնց են կարդում, եա անգիր ասում:

—Տեսայ. բայց թէ՛ կարգացածները և թէ՛ անգիր ասածները՝ բոլորն էլ սխալ էին ու անկանոն:

—Գէ որ դրանից լաւ կարում չենք սովորցնենք...

—Այն ժամանակ աւելի լաւ է որ իսկի չըսովորեցնես:

Այս գիտողութիւնը տիրացուի ինքնասիրութեան դիպաւ, ուստի նա համարձակութիւն առաւ խօսելու:

—Գիտաս ինչ կայ, աղա. օրինակի հմար ասենք. մի մարդ կայ, որ քաղցած ա. ընենց քաղցած, որ ուզում ա թիլանայ, ի՞նչ արած, ցորեն հաց չըկայ որ տանք իրան ուտի: Ես ասըմ եմ ըստի մի կտոր ճաթ (կորկահաց) կայ. բերէք տանք իրան. դու ասըմ ես՝ չէ, ճաթը դժար կը մարսի: Հեր օրհնած, մարդը սոված թիլանում ա, ցորէն հացը որ չկայ, ճաթն էլ ա տանք որ ուտի չըմեննի է...: Հմի մեր էս ըխերքն են: Լաւ, օսալ, մի բան սովորցնում ենք: Ասում չեմ՝ քերականութիւն եա ճարտասանութիւն եմ սովորցնում, ըզոնք սկի ես էլ չեմ կարգացել: Ամա դէ մի քիչ գրածանաչ ենք անում որ թղթի սեն ու սիպտակը ջոկեն, եա հարկաւոր վախտը՝ մի բարովագիր, եա սանաղ (մուրհակ) գրեն, եա չէ, սուղը (դատարան) կանչած վախտը՝ իրանց անումն ու փամիլան կարան ձեռք քաշիլ:

—Ախար եթէ դու այս ուսումնարանը չունենաս, գիւղացիք կը տեսնեն որ իրենց երեխաները մտում են անուսում, կը հաւաքուեն, կը մտածեն և իրենց համար մի կանոնաւոր ուսումնարան կը հիմնեն:

Տիրացուն ծիծաղեց:

— Ինչո՞ւ ես ծիծաղում, հարցրեց Կամսարեանը:
 — Բա ոնց չըծիծաղեմ. խաչն իմն ա, գորութիւնը
 ես եմ գիտում: Մեր ժողովուրդը ընե՞նց ժողովուրդ
 ա որ իրանից մի բան ունի: Հրէս ամեն մի ըէխին
 ամսեկան իրեք շահի, եայ մին աբասի փող դեն տալ,
 սկի էն էլ տալիս. չեն պահում, գցում են կալավախ-
 տին, թէ ինչ ան, փողի տեղ ցորեն, ես գարի տան: Էն
 էլ թէ տարին առատ ա ըլում, տալիս են, թէ չէ,
 ասում են գեալաջախ (գալ տարի) կը տանք: Ընենց
 մարդ էլ կայ՝ փողի տեղ ձու, ձուտ, ես հաւ ա բե-
 րում. շատ վախտ էլ բերում չի: Այ, տենում ես էն
 պուճուր տղան, որ հմի քարիցը վե չէր կենում, նա
 եթիմ (որբ) ա, մի ըրբեերի (այրի) վեր ունի: Ասաւ՝
 բեխիս կարդացրու, ամսեկան մի ջուխտ գուլպայ կը
 տամ: Ես էլ էս ա օխտն ամիս ա կարդացընում եմ:
 Ամա դէ մի ամսուայ հմար մի ջուխտ բերել ա ու ըն-
 դուցը եղը էլ բերում չի: Ասում եմ. — ան նան (մայրիկ),
 բա խի պարտքդ տալիս չես. ասում ա. — վարժապետ,
 դուբան ըլեմ քե, բուրդ չունեմ թէ մանեմ. մի քիչ
 մոնլաթ տուր, էս ա գնալ դէմ Նորատուզ, իմ քօր
 տունը. ընտեղից բուրդ կը բերեմ, թէլ կը մանեմ ու
 դուբեքդ կը գործեմ կըտամ: Ես էլ տենում եմ որ խեղճ
 կնիկ ան, ըսկի հաց չունի թէ բեխին կուշա փորով ուտա-
 ցի, բուրդ սրդիան գի գտնիլ որ թել մանի: Ըսենցով
 սիրաս ցաւում ա. ասում եմ, նանի ջան, փիքը մի
 անիլ (մի մտածիլ), ես քու բեխին մուֆտայ (ձրի)
 կը կարդացնեմ: Էն ա նա էլ ուրախանում ու օրհնում
 ա ինձ: Սրանով բանը քութան ա ըլում (վերջանում է):

«Հմի քե եմ հարցնում. ամիսը իրեք շահի, ես մին
 աբասի տալով, կալափայ, ձու, ջուտ, ես փողի տեղ՝
 օրհնութիւն հաքելով ժողովուրդը կարանյ յուսումնա-
 րան բանալ...: Այ ուրիշ բան էր էն, որ գալիս վախ-
 տը ճամպին ասում իր ինձ թէ՛ եթէ մի մարդ իրա
 ծախքովը ուզի յուսումնարան բանալ, գեղացիք ճօ չեն
 հկառակիլ: Ես էլ ասեցի՝ բա խի՞ են հկառակում.
 մարդ իրա աչքը քոն կուզի: Հմի թէ որ ըղենց մի
 բարի մարդ գտնուի, էն չախը հա՛ կը հաւատամ որ մի
 բան կըլի. թէ չէ, ժողովրդին որ թողնես, ինքն իրա-
 նից բան չի շինիլ:

Կամսարեանը զարմացաւ, տեսնելով որ այնքան
 գուհիկ երևացու այդ տիրացուն կարողանում է իւր
 (Կամսարեանի) առարկութիւնները հիմնաւոր կերպով
 ջրել. ուստի յանցանքի մէջ բռնուած մարդու նման՝
 չիմացաւ ի՞նչ պատասխանել: Մի քանի վայրկեան լուռ
 մտածելուց յետոյ, ասաց.

— Դու էլ իրաւունք ունիս:

— Հարկ է որ ունիմ. ինչ կլի բանը չիմանամ,
 ես սկի կը խօսեմ, սրտաւորուեց տիրացուն:

Երիտասարդն ուրիշ առարկութիւն չարաւ և մնաց
 բարեւ ասելով՝ հեռացաւ:

Ճանապարհին, սակայն, նա մտածում էր: Գա-
 ղափարական «եսը» դարձեալ շնջաց նրա ական-
 ջին: Նա յիշեցնում էր տիրացուի խօսքերը, բացա-
 դրութիւնները, նրա կարեկից վարմունքը՝ աղքատ այրիի
 հետ: «Այս չքաւոր ու կիսակիրթ տիրացուն, իւր
 ողորմելի պատրաստութեամբ, աւելի շատ է գործում և

աւելի շատ օգնում խեղճ ժողովրդին, քան թէ մենք, զարգացածներս՝ մեր բարձր գիտութեամբ, մեր ունեցած հարստութեամբ», ասում էր այդ «ես»ը: Եւ երիտասարդը լսելով նրան, թէ համոզուում և թէ զայրանում էր:

— Ցած ու ստոր արարածներ ենք և ուրիշ ոչինչ, բացականչեց նա յանկարծ և քայլերն արագացրեց:

Ճանապարհի կիսում նա հանդիպեց ուստա Պետուն, որ շտապ շտապ գալիս էր իրեն գտնելու:

— Աղա, ախր ես քե եմ մանգալի (պտրտում): Էս օր էրկու հետ (անգամ) գնացել եմ տանուտէրի տունը՝ Սալբուն հարցրել. ասել ա՛ «հլա Սևանից եկել չի»: Քե մատաղ, աղա, թէ կարաս, ջափայ (նեղութիւն) քաշի, եկ էն մարդին մի բանով օգնի. խեղճ ա, տունը քանդուում ա:

— Ի՛նչ մարդ, չեմ հասկանում, հարցրեց Կամսարեանը, սկզբում չիմանալով թէ՛ որի՞ մասին է խօսքը:

— Մեր էն խեղճ Սային... բա էրէկ չ'ասի՞ թէ՛ Խոջան հրաման ա բիրել որ նրա էլած չելածը ծախի: Այ հմի պրիստավը վէ կալած եկել ա, խեղճի դուռը կտրել: Քանի մարդիկ մէջ ընկան, խնդրեցին, աղաչեցին թէ՛ մի քիչ էլ ա մոհլաթ տայ. ասաւ՝ «տալ չեմ. փողս բիրէք տուէք. պրիստաւին վեր ունեմ գնամ. թէ չէ, ի՛նչ ունի չունի, պտի վեր գրեմ, ինչ կլի կնկանը շորերն էլ...»: Դէ մենք փող որդիսն գտնենք էս սհաթին. գեղականի ջանումը հա՛լ ա միացել որ հւաքի տայ:

— Գնանք, գնանք, ուրախութեամբ կ'օգնեմ, եթէ

հնար լինի, ասաց Կամսարեանը, դո՛հ լինելով որ քիչ առաջ յուզուած իւր խիղճը պիտի հանգստացնէ մի բարի գործով:

— Հնար կլի, խի՞, չի լիլ: Հենց որ դու ուսեմվար պրիստաւին հասկացնես թէ՛ ախար էս մարդը Խոջին պարտ ա լել քսան մանէթ, էդ խի՞ քսանը հարիր էրսուն ա դառել, էն ա նա էլ Սայուն գօւիլ չի:

— Ուրեմն Սայու պարտքը 20 մանէթ է եղել և հիմա նա 130 է ուզում, հարցրեց երիտասարդը:

— Բա՛:

— Քանի՞ տարի է:

— Չորս:

— Ճշմարիտ:

— Սաղ գեղին ա յայտնի:

— Գնանք, գնանք, դա հետաքրքրական է. ասաց երիտասարդը և շտապեց:

Գիւղերում արտաքոյ կարգի մի դէպք պատահած ժամանակ, ուրախութեան առիթով լինի այդ թէ տրխուութեան, գիւղացիք սովոր են խոնուիլ այն տան բակը, ուր դէպքն է պատահել և հետաքրքրուիլ նրանով՝ իբրև սեփական գործով: Սայու բա՛կն էլ այդ վայրկենին լիքն էր ժողովուրդով:

Պրիստաւը, որ մօտ քառասնամեայ, բարձրահասակ շիկահեր և բարեղէմ մարդ էր, կանգնած խօսում էր մի քանիսի հետ. իսկ խոջա Միրզան, որ պարտատէր լինելուց զատ՝ թարգմանչի դեր էլ էր կատարում, ձեռքերին ու ոտքերին անելով՝ բացադրում էր պրիստաւի խօսքերը:

Սօջան արտաքինով, անշուշտ և ներքինով՝ պրիստաւի հակապատկերն էր: Դա մի գիրուկ, կարճահասակ մարդ էր, արևահար դէմքով, մանր ու շարժուն աչքերով, որոնց կոպերը՝ արտևանունքներից զուրկ լինելուց զատ, խիստ կարմիր էին և նրա հայեացքին տալիս էին ոչ միայն խորամանկ, այլ և լպլերշ արտայայտութիւն: Կարճ, քիչ ջարդուած քիթը, որ անշուշտ իւր անցեալ պատմութիւնն ունէր և սուր կզակի վրայ՝ տեղ տեղ միայն բուսած՝ նօսր ու գորշ մօրուքը, լրացնում էին նրա դէմքի տգեղութիւնը, որ իւր մէջ ունէր, նաև մի ժանտ գիծ, որից ռամիկը կամայ, ակամայ պիտի վախենար:

Պրիստաւը խօսում էր այնպիսի մարդկանց հետ, որոնք եկել էին Սայու համար նրա օգնութիւնը հայցելու. զրանց թւումն էր և տանուատէրը:

Մինչդեռ պարտապան Սային, որ աղքատ հագնուած, նիհար և, ինչպէս ասում են, մազն երեսին չորացած մի ծերուկ էր, մորթէ կտակը կռան տակն առած և մէջքը սրահի սիւնին յենած, խեղճ ու կրակ նայում էր մէկ պաշտօնեային, մէկ խօսող մարդկանց, առանց մի բառ արտասանել կարողանալու և ապա հայեացքը ձգում իւր վերջին յոյս ու ապաւէն ձիուն ու մի հատ կովին, որ գոմից դուրս հանած՝ պատրաստուում էին առաջինը վեր գրել, իբրև արժէքաւոր իրեր:

Սայու կինը, ցնցոտիների մէջ փաթաթուած, ձեռքերը խաչած, կանգնած էր կովի մօտ. իսկ նորա կողքին գտնուում էին իւր մեռած որդու երկու մանկահասակ, նիհար, կիսամերկ և բոկոտն որբուկները, մի

տղայ և մի աղջիկ, որոնք վախեցած աչքերով և մանկական յուսահատութեամբ նայում էին մերթ խօսող պաշտօնեային, մերթ պարտատէր Սօջին, որ իւր ժանտ դէմքով, սրածայր գդակով և մահուդից կարած երկար կապայով նրանց աչքին, այդ ըսպէին, թւում էր իբրև մինն այն դեերից, որոնց մասին իրենք լսել էին հեքեաթներ՝ պապից կամ տատից:

Մտնելով Սայու բակը, կամսարեանն ուղղակի դիմեց պրիստաւին և յայտնելով նրան իւր անունն ու ազգանունը, խնդրեց ծանօթանալ:

Վերջինս սիրով ընդունեց այդ ծանօթութիւնը և ուրախութիւն յայտնեց որ Չիբուխլուի նման մի յետ ընկած անկիւնում պատահում է պարոնի նման մի երիտասարդի, ուստի խօսակիցներից հեռանալով, սկսու գրուցել վերջինի հետ:

Պետրոսը, առանց ուշացնելու, յայտնեց պաշտօնեային իւր նպատակը, որ էր՝ օգնել գիւղացուն՝ դժուար կացութիւնից ելնելու:

— Դուք, երևի, կամենում էք նրա պարտքն առնել ձեզ վրայ, հարցրեց պաշտօնեան, լաւ չըմբռնելով կամսարեանի խօսածը:

Ոչ, ես իմացայ որ պարտատիրոջ պահանջն անարդար է, այդ պատճառով կամենում եմ որ մասնաւոր կերպով քննութեան առնենք այդ խնդիրը:

— Այդպիսի քննութեան ես, դժբախտաբար, չեմ կարող մասնակցել և դա գործնական հետևանք էլ չի ունենալ: Որովհետև պարտատէրը ներկայացրել է ինձ գատարանից առած օրինաւոր հրամանագիր (կատա-

րողական թերթ) և յայտնելով որ պարտապանը յօժարութեամբ չէ վճարում իւր պարտքը, պահանջում է վեր գրել նրա ստացուածքը և աճուրդով վաճառել. ես չեմ կարող օրէնքի հրամանը չըկատարել:

— Ես ինքս իրաւաբան եմ և այդ ամենը գիտեմ: Օրէնքի հակառակ ոչինչ չեմ առաջարկիլ: Այս մէկն եմ միայն ինդրում որ ժամանակ տաք ինձ այս մարդու հետ խօսելու: Սրա պահանջը հիմնուած է յայտնի խարդախութեան վրայ, որի համար քրէական պատժական օրէնքը սպառնում է յանցաւորին իրաւունքների զրկանք և բանտարկութիւն:

— Ի՞նչ խարդախութիւն կարող է լինել. նա դատարանին ներկայացրել է 131 բուբլու օրինաւոր մուրհակ և այդքան գումարի էլ հրամանագիր առել:

— Բայց գիւղացին պարտ չէ նրան այդքան:

— Գուցէ: Այսուամենայնիւ, ես իրաւունք չունեմ այդ իմանալու:

— Բայց ես խօսում եմ ձեզ հետ ոչ իբրև պաշտօնական անձի, այլ իբրև ճշմարտութեան նախանձախնդիր բարեկամի հետ:

— Համեցէք, ես ձեզ լսում եմ:

— Գիւղացին այս մարդուց, չորս տարի առաջ, ստացել է միայն 20 բուբլի: Այդ 20 բուբլին այսօր դարձել է 131: Այս հանելուկը չէ հետաքրքրում ձեզ:

— Չափազանց: 20 բուբլին ի՞նչպէս կարող է չորս տարուայ ընթացքում դառնալ 131:

— Այ, հենց ես էլ այդ եմ ուզում հարցնել պատատէրից:

— Հարցրէք, իմացէք, դա հետաքրքրական է:

Սօջան, որ մի փոքր հեռու կանգնած՝ դիտում էր խօսակիցներին և վատ բան գուշակում վարժ ուսերէն խօսող երիտասարդի ներկայութիւնից, իբրև իրաւատէր, շտապեց միջամտել և ձայնը բարձրացնելով՝ գիմեց պաշտօնեային և իւր աղջատած ուսերէնով ասաց.

— Ղասպատին պրիտաւ, դէն կօնչիլսա, իդի պիշի, դա:

Ուզում էր ասել. պարոն պրիտաւ, օրը մի՞նում է, արի, վեր գրի, վերջացրու:

Պաշտօնեան չըպատասխանեց և նրա փոխարէն կամսարեանն առաջանալով՝ հարցրեց.

— Ի՞նչ է քո պահանջը այս մարդուց:

— Իմ պահանջն ինչ որ ա, էն ա գրած ա սպօլ-նիլիստումը, պատասխանեց Սօջան փորձառու դատախազի յաւակնութեամբ:

— Այնտեղ գրուած է որ սա պարտ է քեզ 131 բուբլի: Բայց մի՞թէ ճիշդ է այդ:

— Բա որ ճիշդ չըլինի կը գրե՞ն. քո ասիլով դատարանը սո՛ւտ ա խօսում, նկատեց Սօջան՝ չարախնդիր մարդու նենգամտութեամբ:

— Դատարանը սուտ չի խօսիլ. բայց դու այն ասա. այս մարդուն 131 բուբլի՞ ես տուել:

— Բա չե՞մ տվել:

— Սօջա, քե դուրբան, իմա՞լ դիւզը չեա ասելիտիւն ինձի մինակ քսան մանէթ ես տուե, միջամտեց Սային յուսահատ ձայնով:

— Բա շահ չըկան, միւրաթ չըկան... բարկացաւ Սօջան:

— Հա, իդենց ասան. միւտադ հալբաթ որ կայ... համաձայնուեց Սային՝ ձայնը ցածրացնելով:

— Քանի տարի է որ քսան մանէթ ես տուել սրան, հարցրեց Կամսարեանը:

— Ի՞նչ գիտամ, շատ...:

— Էլի, մի ասան:

— Չորս տարի ա, այդա, պատասխանեց Սային:

— Այնպէս է, չորս տարի է, հարցրեց Պետրոսը Սօջին, բայց նա չըպատասխանեց:

— Չորս տարի ա, չորս, հաստատեցին զիւրացիներն ամեն կողմից:

— Քանիսով ես շահ հաշուել որ 20 մանէթը չորս տարուամբ դարձել է 131 մանէթ:

— Էդ իմ բանն ա, քե ի՞նչ, եա դու ո՞վ ես որ իմ գործումը խառնուում ես, նկատեց Սօջան կոշտ կերպով, կամենալով այդպիսով վիրաւորել և հեռացնել անսպաս միջամտողին: Ապա դառնալով պրիստաւին ասաց — դասպաղին պրիստաւ, պաժարուտա, իդի կօնչի. մինէ վաժնի դէլը եատ, դօլգի նէ մագու իզդէս սիդէթ: Կամենում էր ասել՝ պարոն պրիստաւ, խնդրում եմ, եկ, վերջացրու, կարևոր գործ ունիմ, չեմ կարող այստեղ երկար մնալ:

Պրիստաւը մօտեցաւ:

— Գիտէ՞ք ինչ կայ, Վասիլ Իվանիչ, դարձաւ Պետրոսը վերջինիս. այս մարդը 4 տարի չառաջ 20 ռուբլի է տուել իւր պարտապանին և այժմ նրանից պահան-

ջում է 131 ռուբլի: Ես հետաքրքրում եմ իմանալ թէ՛ քանիսով է տոկոս հաշուել, բայց նա չի ուզում պատասխանել:

— Сколько процентов считали?, հարցրեց պրիստաւը ծիծաղելով:

— Կակօյ տէրէ դէլը. իսպօլնի լիստ շտօ գաւարիտ, տակ նազը դէլայտ, պատասխանեց Սօջան, կամենալով ասել՝ «քեզ ի՞նչ. հրամանագիրն ինչ ասում է դու այն պէտք է անես»:

— Հիմա դո՞ւք պատասխանեցէք, ասաց պրիստաւը Կամսարեանին և ժպտալով հեռացաւ:

— Այդպէս կանէ, մի վախենար. միայն թէ ասան, քանիսով ես տոկոս հաշուել, հարցրեց երիտասարդը:

— Ախպէր քե ի՞նչ. ես հօ քեզանից չեմ փող ուզում:

— Ինձ ի՞նչ. այ, ասեմ քեզ: Ես փաստաբան մարդ եմ: Փաստաբանը գիտէս ինչ է. — ատուակատ: Այն դատաւորը, որ քեզ իսպօլնիտերնի լիստ է տուել, ինձանից աւել չէ օրէնք իմանում: Իսկ իմ իմացած օրէնքների մէջ գրուած է թէ՛ ով որ իրա պարտապանից հարիւրին 12 տոկոսից աւելով շահ առնէ, նրան պէտք է պատժել՝ զրկելով ամեն իրաւունքներից և բանտ նստացնելով: Այ, հմի դու այսքան մարդկանց մէջ այս խեղճ Սայուցը 20 մանէթի համար 111 ռուբլի շահ ես առնում: Ես կարող եմ Սայու գործը յանձն առնել, այս մարդկանցն էլ վկայ գրել ու քեզ քաշ տալ դատարան, իսկ այնտեղից ուղղակի զրկել էջի դրախտը. հասկանում ես:

Այս խօսքերն ասուեցան այնպիսի մի խիստ եղանակով որ Սօջան երկիւղից քաջութիւնը կորցրեց:

— Աղբէր, ախար դու լաւ մարդ ես էրևում, ի՞նչ ունես դարմադալում. ինձանից դու հօ առնելիք տալիք չունիս. էս մարդը փող ա պարտ, իմ փողն ուզում եմ, դու խի՞ ես մէջ ընկնում:

— Չէ, պիտի ասես, քանի՞ տոկոս ես հաշուել:

— Մանէթին մի շահի, ասաց Սօջան, տեսնելով որ «ատուակատից» պրծում չըկայ:

— Բուբլուն 5 կոպէկ, զարմացաւ Կամսարեանը.

— Հա:

— Ինէնց ա. մանէթին մի շահի ենք խօսե, հաստատեց Սային:

— Տեսնում ես, հենց գիտաս սուտ եմ ասում, նկատեց Սօջան:

— Սպասիր սպասիր: Դու բուբլուն 5 կոպէկ ես ասում, չէ՞. դէ ես 10 կոպէկ կը հաշուեմ. տեսնենք սրբան է լինում:

Այս ասելով Կամսարեանը հանեց յուշատետրը, որն այժմ իւր աչքին ատելի չէր երևում և նրա մի ազատ երեսի վրայ սկսաւ մատիտով հաշուել.

— 20 բուբլին՝ հարիւրին 10-ով՝ մի տարումը կտայ 2 բուբլի: Այս 22 բուբլին երկրորդ տարումը կըբերի 2 ը. 20 կոպէկ. ուրեմն բոլորը 24 ը. 20 կոպէկ: Սա էլ երրորդ տարումը տոկոս կըբերի 2 ը. 42 կոպէկ, միասին կանէ՛ 26 ը. 62 կոպ.: Այս 26 ը. 62 կոպէկն էլ չորրորդ տարում կը տայ 2 ը. 66 կոպէկ: Ուրեմն չորս տարուց յետոյ քո առած 20 բուբ-

լին կը դառնայ 28 ը. 28 կոպ. որից 8 բուբլի 28 կոպէկը իւր արդար շահն է: Եթէ, մինչև անգամ, հարիւրին 12 տոկոս հաշուենք, բոլոր գումարը կը լինի 31 բուբլի և մի քանի կոպէկ: Հապա մնացած հարիւրը սրտեղից ես դուրս բերել:

Պարտապան Սային, որ սկզբում մեծ հաւատ ունէր երիտասարդի հմտութեան վրայ և յոյս էր տածում թէ՛ նա մի բանով կը թեթևացնէ իւր ծանր դրութիւնը, տեսնելով այժմ որ նա տոկոսը չափազանց շատ պահսեցրեց, եկաւ այն եզրակացութեան թէ՛ այդ տղան ուրեմն բան չէ հասկանում, ուստի սկսաւ վհատուիլ: Նոյն կարծիքին էին և ուստա Պետին ու տանուտէրը:

Հենց այդ պատճառով էլ Սօջան, կարծես, ոգի առաւ.

— Էդ դու ո՞նց ես հաշուում որ իմ առնելիքը շուր ես կարացնում... Հաշիւ անելը որ մանում չես, խի՞ ես բանի մէջը խառնում, նկատեց նա մեծ սրտով:

— Ի՞նչպէս չեմ իմանում: Դու չե՞ս ասում թէ մանէթին 5 կոպէկ:

— Հա:

— Դէ ես 10, 12 եմ հաշուում և այդպէս է դուրս գալիս: Ուրիշ կերպ լինել չէ կարող:

— Ո՞նց չի կարող. դէ հմի ես հաշուեմ դու մտիկ արա:

Այս ասելով Սօջան հանեց ծոցից մի փոքրիկ, խաղաղիքի պէս համարիչ և հաստ ու սև մատերով՝ նրա հատիկները դէս ու դէն անելով, սկսաւ հաշուել.

—Մի մանէթին որ 5 կոպէկ ըլի ամսումը, մի տարումը կըլի 12 հետ 5 կոպէկ. չուն տարին 12 ամիս ա: էս քե 60 կոպէկ: Հմի դուն ես իմ աղէն, մանէթը որ մի տարումը 60 կոպէկ բերի, 10 մանէթը կը բերի 6 մանէթ. 20 մանէթն էլ կը բերի 12 մանէթ: Է՛, հմի իմ 20 մանէթը, մի տարուց եղը դառաւ 32 մանէթ...

—Սպասիր, սպասիր. ուրեմն դու ըուբլուն 5 կոպէկ հաշում ես միայն մի՞ ամսումը, հարցրեց Կամսարեանը զարմանալով:

—Բա մի՞ տարումը: Խի՞, փող եմ գտել, թէ՞ գլխիս ձի ա քացի տվել...: Հրէն ուրիշները մի ամսումը մանէթին 10 ես 12 կոպէկ են առնում. ես 5 եմ հաշուել. սրանէ էվել խղճմտանքով բան կըլի՞:

Կամսարեանն ապշած նայում էր Սօջայի կարմիր կապիճներում պլպլացող աչքերին և մի քանի վայրկեան ոչինչ չէր խօսում: Ապա դառնալով պրիստաւին՝ ժպտալով ասաց.

—Վասիլ Իւանիչ, գիտէ՞ք այս մարդը քանիսով է հաշուել տոկոսը:

—Քանիո՞ով, հետաքրքրուեց պաշտօնեան:

—Հապա, գուշակեցէք:

—Քսանո՞վ, քսան հինգո՞վ...:

—Ի՞նչ քսան, ի՞նչ երեսուն. ո՞չ աւել և ո՞չ պակաս, հարիւրին վաթսուն:

—Անկարելի է:

—Հաւատացէք:

—Օ՛, ճ... բացականչեց պրիստաւը:

—Ըշտօ, պէտ կապէկ միօգժ, (ի՞նչ, հինգ կոպէկը շմտ է) շփոթուած հարցրեց Սօջան:

—Պետար Կիրիլիչ, սա հինգ կոպէկ է ասում, դարձաւ պրիստաւը երիտասարդին:

—Այո, 5 կոպէկ. բայց ըուբլուն 5 կոպէկ մի ամսումը: Ուրեմն մի տարում 12 անգամ 5 կոպէկ, որ կանէ 60:

—Այդպէ՞ս է, հարցրեց պաշտօնեան Սօջային:

—Դա, դա, վերնը (այո՛, այո՛, ճիշտ է), հաստատեց Սօջան:

—Օ, это ужъ черезчуръ! բացականչեց Վասիլ Իւանիչը:

—Դուք, պարոն պրիստաւ, խնդրեմ իբրև դատարանի պաշտօնեայ, վկայ լինի՞ք որ այս մարդը, ձեր և ժողովրդի ներկայութեամբ՝ ասաց և հաստատեց որ ինքը հարիւրին ստանում է վաթսուն տոկոս:

—Ուրախութեամբ, ուրախութեամբ, համաձայնուեց պաշտօնեան:

—Էդ ի՞նչ ա է, խի՞ չէք թողնում որ էդ մարդը իրա գործը վերջացնի... հարցրեց Սօջան, գուշակելով որ մի ինչ որ վատ բան է պատրաստում իրա համար:

—Ի՞նչ է. այ, իսկոյն կասեմ: Բայց թող մի ես էլ քո ասած ձևով հաշուեմ ու տեսնեմ թէ՛ արդեօք մանէթին հինգ կոպէկ է գալի թէ աւել...:

—Դրուստ ա, աղբէր, դրուստ, ես խաբող մարդ չեմ. էս սաղ մհալը գիտայ թէ Սօջայ Միրզան ի՞նչ մարդ ա:

— Հա, սվ ինչ է ասում. բայց թող մի հաշուենք...: Այս ասելով Կամսարեանն սկսաւ հաշուել: — 20 բուբլին 60 կոպէկով՝ մի տարումը կը բերի 12 բուբլի: Ճիշտ է: 12 և 20, կը լինի 32: Այդ 32 բուբլին միւս տարումը կը բերի 19 բ. 20 կոպէկ: Ուրեմն երկու տարումը քո փողը կը դառնայ 51 բ. 20 կ.: Ճիշտ է: Այդ 51 բ. 20 կոպէկն էլ երրորդ տարումը կը բերի շահ 30 բ. 72 կ., երկուսը միասին՝ կը լինին 81 բ. 72 կ.: Բարի: Այդ 81 բ. 72 կոպէկը 4-րդ տարումը կը տան տոկոս 49 բ. 15 կոպ.: Ուրեմն բոլորը միասին 131 բ. 7 կոպէկ: Շատ ճիշտ է, Սօջա, ասաց Կամսարեանը հեզներով:

— Բա որ ասում եմ... պարծեցաւ Սօջան իւր ճշգրտութեամբ և մէջքն ուղղելով՝ հանգիստ շունչ առաւ:

Սայու և իւր պաշտպանների վրայ կարծես ջուր մաղուեց:

— Բայց գիտե՞ս ինչ կայ, նորէն խօսեց Կամսարեանը:

— Ի՞նչ:

— Ահա պրիստաւի և բոլոր ժողովրդի ներկայութեամբ հաստատուեց որ դու պարապում ես անխիղճ վաշխառութեամբ, այսինքն ժողովրդից առնում ես այնպիսի մեծ տոկոս, որն օրէնքը արգելելով արգելում է: 100-ին 60 կոպէկ շահ առնելը այնպիսի յանցանք է, որ օրէնքը դրա համար կը պատժէ քեզ՝ զրկելով որոշ իրաւունքներից և բանտարկելով մէկից մինչև երկու տարի: Հիմի դու կարող ես, եթէ ուզում ես, վեր գրել տալ այս մարդու կովն ու ձին, բայց ես

թոյլ չեմ տալ որ դու նրանց ծախես: Ահա հենց այսօր ես խնդիր կը գրեմ Սայու կողմից և իմ ձեռքով կը հասցնեմ պրօկուրօրին: Գործը կերթայ դատարան: Ես այնտեղ կը պաշտպանեմ Սայու իրաւունքը, իսկ պրօկուրօրը կը մեղադրէ քեզ: Սային իւր կովն ու ձին յետ կստանայ, իսկ դու կը նստես բանտում: Այնուհետև հազարներ էլ որ ծախես, չես կարող ազատուել: — Այդպէս է, թէ ոչ, Վասիլ Իւանիչ, դարձաւ երիտասարդը պաշտօնեային:

Վերջինս, որ ոչինչ չէր հասկացել Պետրոսի հայերէն խօսածներից, հարցրեց:

— Ի՞նչն է այդպէս:

Կամսարեանը կրկնեց իւր խօսածները ուսերէն:

— Այն, այդպէս է. օրէնքը ծանր պատիժ է տալիս վաշխառուներին. իսկ ձերը նոյնպէս վաշխառութիւն է, հաստատեց պաշտօնեան:

Սօջայի գոյնը երկիւղից թռաւ: Նա ձայնը ցածրացնելով ասաց,

— Աղբէր. ընչի՞ էք ուզում ինձ վրաս տալ: Ախար ես լաւութիւն եմ արել, վատութիւն հօ չեմ արել: Մարդը սոված ա էլէլ, փող եմ տուել. սերմացու ա առել. ցանել ա, հնձել ա. չորս տարի ապրել ա...

— Սերմացուի փող ես տուել որ հիմա գաս կովն ու ձին յափշտակե՞ս, ընդհատեց Պետրոսը դայրացած. — ախար քո տուածից ու նրա տոկոսից աւել արժէ հենց միայն այս կովը, հապա ձիւն ուր ես տանում:

— Դէ ո՞ւր ա որ տանում եմ, ասում էք, ես էլ

թողիլ չեմ որ վեր գրի. բերէք իմ փողը տուէք, անց կենամ գնամ:

—Չէ, դու փող չես ստանալ: Քոնն այս կովն ու ձին են, վեր գրել տուր, տար, եթէ կարող ես: Մենք էլ յետոյ մեր գիտցածը կանենք:

—Չեմ ուզում, աղբեր, երեսուն մանէթը բաշխում եմ, իմ հարիւր մանէթը տուէք, վեր կենամ գնամ:

—Քեզ համներիքը 28 ըուբլի է. եթէ ուզում ես, ստացիր և գործը վերջացրու. եթէ ոչ, պատրաստուիր որ տարի ու կէս բերդումը նստես:

—Աղբեր, խի՞ էք տունս քանդում, բա ես մեղք չեմ... ախար ես էլ մարդ եմ. տուն ունեմ. տեղ ունեմ, օղուշաղ ու էրէխեք ունեմ... Աստօծ վեր չունիլ որ իմ հալալ աշխատած փողը ձեռքիցս խլում էք... աղաչաւոր ձայնով խօսում էր Սօջան և պատրաստուում, կարծես, լաց լինելու:

—Ի՞նչ է պատահել, հարցրեց պրիստաւը՝ տեսնելով որ Սօջան խօսում է լալաձայն:

—Ոչինչ, վաշխառուն այժմ էլ դերասանութիւն է անում, բացաղբեց կամսարեանը:

—Հա, հիմա ի՞նչ ես ասում, վեր դրեմ թէ ոչ, ուշանում ենք, գիմեց պրիստաւը Սօջային:

—Ոչ, ոչ, ես հաշտութեամբ եմ ուզում վերջացնել, ուզում եմ լաւութիւն անել, շտապով յատարարեց Սօջան, համոզուած լինելով որ բացուած խարդախութիւնը կարող է ցաւ բերել իւր գլխին:

Մի թագուն ուրախութիւն, որից դեռ անբաժան

էր երկիւղի զգացմունքը, պաշարեց Սայուն: Մինչդեռ ուստա Պետին ու տանուէրը Սօջայի նուագած ձայնից արդէն գուշակելով որ նրա բանը փրթուկ է, սկսան շտապեցնել վախճանը, ամեն կողմից համոզելով որ Սօջան իւր ասած լաւութիւնն անէ, վերջացնէ:

Բայց կամսարեանը թոյլ չըտուաւ որ վերջինս մինչև իսկ «լաւութիւն անելու» պատրուակով գործն աւարտելու միջիթարութիւնն ունենայ:

—Սյդպէս մի՛ խօսէք և մի՛ սխալեցնէք ձեզ լսողներին, սաստեց նա Պետուն և միւսներին: Այս մարդը լաւութիւն չէ անում: Եթէ մենք համաձայնուենք որ սա 28 ըուբլին ստանալով՝ գործը խաղաղութեամբ վերջացնէ, այն ժամանակ մենք ենք լաւութիւն անում սրան և ոչ թէ ինքը՝ մեզ: Սյդ պէտք է սա իմանայ, շնորհակալ լինի, և խոստանայ որ այսուհետև ձեռք պիտի վերցնէ իւր այս անպիտան ու վնասակար արհեստից: Հակառակ դէպքում, ես հենց այս երեկոյ կը գրեմ իմ բողոքը և կուղարկեմ պրօկուրօրին:

Մի քանի թեր և դէմ խօսքերից յետոյ, վերջապէս Սօջան համաձայնուեց ստանալ 28 ըուբլին, որից տասն ունէր Սային, ութը Պետին պարտք տուաւ, իսկ մնացորդ տասը նուիրեց կամսարեանը:

Երբ Սօջան ու պրիստաւը հեռացան, իսկ տանուէրը գնաց ճանապարհ դնելու նրանց, Սայու կինը վագեց, ընկաւ Պետրոսի ոտքերը և ուրախութեան արտասուքն աչքերին, սկսաւ համբուրել նրա ծնկները և օրհնել նրան սրտաշարժ խօսքերով:

Հազիւ երիտասարդը բարձրացրեց կնոջը, մօտե-

ցաւ ծերուկ Սային, որ ուրախութիւնից համրացած՝
չէր կարողանում խօսել, բայց դողդոջուն ձեռքերը
բարձրացնելով՝ աշխատում էր երիտասարդի գլուխը
բռնել և համբուրել:

Կովի մօտ կանգնած փոքրիկ աղջիկը՝ մեծերի
աղմուկին չըմանակցելով՝ գրկել էր հեզիկ կենդանու
գլուխը և շարունակ նրա աչերն ու դունչը համբու-
րելով՝ ասում էր ուրախ ուրախ:

— Յիշկա, մարալ ջան. էլ քե չեն տանելում. տիւն
կացիր մեր կուշտ, քո հորթն էլ քո կուշտ... օխայ,
ինչ լաւ է...:

Իսկ եղբայրը, որ մինչ այն՝ ձիու կապը ձեռքին՝
կանգնած էր այդտեղ, այժմ ուրախութիւնից միւս
մարդկանց չը տեսնելով՝ ճշում էր անընդհատ.

— Ճոճ պապ, ճոճ պապ, ձին իմնը անեմ, իստեղ
պախեմ, թէ՛ թորգեմ էթայ խոտին...:

Կամսարեանին միւս կողմից շրջապատել էին գիւ-
ղացիները և շնորհակալութեան տարափ էր, որ այս ու
այն կողմից տեղում էին նրա գլխին: Երիտասարդը
շտապեց հեռանալ, փախչելով, համարեան, անվերջ շը-
նորհակալիքներից:

Սակայն կատարուած իրողութեան լուրը տարա-
ծուել էր գիւղում կայծակի արագութեամբ. ուստի
որ կողմից էլ անցնում էր երիտասարդը, կանայք ու
տղամարդիկ, կտուրները վրայից թէ ցանկերի ետևից,
օրհնում ու գովում էին նրան:

Արդէն մութ էր, երբ Պետրոսը տանուտէրին պա-
տահելով, նրա հետ միասին վերագարձաւ տուն: Վեր-

ջինս ամենից շատ էր ուրախ. որովհետև իւր տա-
հիւրն էր, որ գիւղացիներից մինին այդպիսի մեծ բա-
րիք էր արել այսօր: Անկարելի էր որ այդ դէպքը չը-
շոյէր նրա պատուասիրութիւնը: Այդ էր պատճառը
որ նա այսօր մի առանձին հոգածութեամբ էր թա-
խանձում որ երիտասարդը հրաման տայ Սալբիին՝ ընթ-
րիք պատրաստելու: Բայց Պետրոսը մերժեց և բաւա-
կանանալով միայն երկու բաժակ թէյով, խնդրեց սր
իւր համար անկողին պատրաստեն, ըստ որում յոգ-
նած էր և ցանկանում էր վաղ քնել:

Եւ, սակայն, մինչև որ անկողինը կը պատրաս-
տէին, նա բարձրացաւ տան կտուրը՝ մի քանի վայր-
կեան ինքն իւր հետ այդտեղ առանձին մնալու և օրուայ
ընթացքում պատահածների մասին խորհելու համար:
— Արդէն պարտապան գիւղացուն ծանր պատուհասից
ազատեին ու նրան հետևող անվերջ օրհնութիւններն
ու շնորհակալութիւնները լսելը, այնքան էր յուզել ու
ցնցել նրա հոգին, որ նա չէր կարող հանգիստ քնել,
եթէ այդ ամենի առիթով հետզհետէ իւր գլխում ծա-
գող հարցերին՝ պատշաճ լուծում ու պատասխան չը-
գտնէր:

Ինչպէս ամբողջ օրը, նոյնպէս և այժմ ամպերը
շարունակ բաց խփուկ էին անում երկնքի երեսին,
որից լուսինը մերթ պայծայռ բացուում, լուսաւորում
էր աղքատիկ գիւղն ու նրա խղճուկ տները և ծովակն
ու կղզին՝ շրջապատող դաշտերով, թմբերով ու լեռ-
ներով, մերթ լողում, սուզում էր ամպերի ետևը և
հրապուրիչ տեսարանները խաւարով ծածկում: Սա-

կայն հորիզոնի արևելեան հիւսիսը ծածկուած էր թանձր, կապարի պէս սև և միապաղաղ թուղպերով, որոնք, թուում էր թէ՛ պիտի վրդովէին գիշերուայ խաղաղութիւնը:

Բայց կամարեանը չէր հետաքրքրուում այժմ բնութեան երևոյթներով: Որքան շատ բան էր տեսել նա այսօր, որքան նորութիւններ իմացել. դրանց մասին էր մտածում:

Նա զեռ երէկ այն կարծիքին էր թէ՛ ոչինչ չէ կարելի անել գիւղում, թէ՛ ամեն բան այնպէս սառած ու քարացած է այստեղ, որ իւր նման մարդկանց ձեռքերը, որքան էլ նրանք զինուած լինին զօրեղ գործիքներով, չեն կարող ոչ հին սառոյցը հալել, ոչ էլ քարացած կոշտերը մաշել: Բայց այսօր, ահա, նա կատարեց մի գործ, որն իւրմով լուծեց մահու և կեանքի խնդիր:—Նա վերահաս կործանումից ազատեց մի տուն. վերջնական անկումից փրկեց մի ընտանիք և դրա համար շատ քիչ, կամ գրեթէ ոչինչ աշխատութիւն գործ դրաւ...:

Եւ սակայն որքան շատ կային այդպիսի թողուած ու լքուած տներ և ընտանիքներ. որքան շատ բան կարելի էր անել դրանց համար: Եւ նա երևակայեց թէ՛ ինչ կը լինէր այսօր խեղճ Սայու գրութիւնը, եթէ ինքը, բողոքի բերմամբ, չըհանգիպէր այստեղ, չըզսպէր Խօջայի աւարառութեան տենչը, չըպաշտպանէր անգոր, անօգնական գիւղացուն...: Ապա նա յիշեց տիրացուի դպրոցը, երախաներ կրթելու և ուսուցանելու վայրենի եղանակը և, մի և նոյն ժամանակ, Մօսու

իրաւացի դիտողութիւնը թէ՛ «երբ ցորեն հաց չըկայ, պէտք էր քաղցածին տալ գոնէ ձաթ, որպէս զի նա սովից չըմեռնի»: Վերջը նա մտքով փոխադրուեց Սեւան, յիշեց նրա անշարժ ու քարացած դրութիւնը, արեղայի բողոքը, նրա երկար զրոյցները, յայտնած ցանկութիւնները և անապատը վերակազմելու ու պայծառացնելու նկատմամբ՝ նրա առաջարկած միջոցները:

Այս ամենը յիշելուց և դրանց վերաբերմամբ երկար մտածելուց յետոյ, երիտասարդը եկաւ այն եզրակացութեան թէ՛ անհրաժեշտ է աշխատել՝ հնարաւոր դարձնել գիւղում ապրելն ու գործելը...:

Այդ վայրկենին նորէն լուսինը բացուեցաւ և պայծառ լուսով երկիրն ողողելով, երևան հանեց գեղեցիկ ծովակն ու շրջակայ լեռները և դրանց հետ միասին... Չիբուխլուի չոր, գձուծ պատկերը, իւր գեանին կպած տներով, իւր աթարի դէգերով...:

Երիտասարդը նայեց իւր շուրջը, զգաց դարձեալ մի անհաճոյ անհանգստութիւն և չըկամենալով այլ ևս դրա մասին մտածել, իջաւ ներքև:

Մի քառորդ ժամից՝ նա Մորփէոսի գրկումն էր:

ԺԵ.

Կէս գիշեր էր: Խոր ու քաղցր քնի մէջ Պետրոսն է հարկէ չէր տեսել թէ՛ ինչպէս հորիզոնը փակող սև

ամպերը բարդ բարդ վերանալով՝ լուսինը ծածկեցին և ապա հետզհետէ թանձր մառախուղը երկրի երեսը պատեց: Քիչ յետոյ սկսաւ շողել թեթեւ անձրև, որն ապա գնալով՝ սաստկացաւ ու յորդացաւ և մեծ աղմուկով սկսաւ բաց գետինն ու տան կտուրը ծեծել: Հովը, որ երկոյեան մեղմ էր ու քնաբեր, այժմ գորացել, փոխուել էր քամու և ուժգին շառաչելով՝ փոթորկում էր անձրևը և յաճախ նրա հոսանքն ուղղում գէպի սրահն, ուր թախտի վրայ, քաղցր քնի մէջ հանդչում էր այդ վարկենին քաղաքացի հիւրը:

Երկւոր անձրևը ծեծում էր դուրսը, երկւոր օդի մէջ շառաչում քամին, և սակայն Պետրոսը քնած էր հանգիստ և չէր գգում, նոյն իսկ, ցրտութիւնը ցօղի, որ քամին յաճախ շողում էր իւր գէմքին: Բայց, ահա յանկարծ ճայթեց մի որոտ. Մարալինջի և Ահմանկան բարձունքը դողդացին և անձրևի շառաչը, կարծես, կրկնապատկուեց: Երիտասարդը վեր թռաւ և սարսափով տեսաւ ոչ միայն օդի մէջ մըրկող հեղեղը, այլ և այն որ իւր անկողնի երեսը թրջուած է բոլորովին: Բացի այդ, նրա վրայ տեղ տեղ կտուրից ծորում էր անձրևաջուր:

Անախնկալ պատահարից շփոթուած՝ Պետրոսը վեր կացացաւ տեղից և կամենում էր տան դուռը ծեծել՝ ներս մտնելու համար: Բայց մտածելով որ այդտեղ տանուտէրը քնած է՝ կնոջ և երեխայոց հետ, անյարմար տեսաւ զարթեցնել նրանց: Բայց ի՞նչ անել. չէ որ անհնար էր գիշերն անցցնել անձրևի տակ: Իսկոյն նա մտաբերեց փոքրիկ սենեակը, որ կից էր ախո-

ւին և առանց երկար մտածելու, բացաւ դուռը և անկողինը հաւաքելով՝ մտաւ ներս:

Ախոսի սուր, անախորժ հոտը, տոգորուած աւելի ևս անխորժ ջերմութեամբ՝ դիպաւ նրա քթին. բայց այժմ արդէն ժամանակը չէր՝ թերութիւններ քննելու: Պետրոսին հարկաւոր էր մի ծածկարան՝ անձրևից պատսպարուելու համար, և նա ահա գտել էր այն: Շտապ շտապ փռելով անկողինը այդտեղ գտնուող թախտի վրայ, նա դուռը փակեց ու պարկեց, կարծելով թէ՛ պտի քնէ: Բայց չանցաւ քառորդ ժամ և ախոսից փչող հոտը սկսաւ անհանգստացնել նրան: Նա բացաւ սենեակի դուռը և նորէն պառկեց: Այժմ որովհետև դրսից եկող թարմ օդը շոյում էր նրա դէմքը, ուրեմն, կարող էր քնել: Երիտասարդը փակեց աչքերը և աշխատեց մտածութիւնները հեռացնել իրանից, լաւ իմանալով որ քնել կարողանալու համար, ամենից առաջ ուղեղը պէտք է քնացնել: Բայց այդ էլ չօգնեց: Որովհետև չէր անցել դեռ կէս ժամ՝ որ նրան սկսան անհանգստացնել լուսնները, որոնք հողէ յատակ ունեցող և, մանաւանդ, փակ պահուող այդպիսի տեղերում վխտում են ամառը: Երիտասարդն սկսաւ շուռ ու մուռ դալ, աջ կողմի վրայ պառկել, ձախի վրայ փռել, երբեմն էլ անկողնից ելնելով՝ շապիքը հանել ու թափ տալ, բայց իզուր: Արեան ծարաւի այդ լուսնները, որոնք տաւարը գոմից հեռացնելուց յետոյ զրկուած էին բաւարար կերակրից, վաղուց, շատ վաղուց սպասում էին այսպիսի մի համեղ որսի, այն էլ ինչ որս... քաղաքացի, մաքրակենցաղ...: Լուսններն, ի հարկէ,

չըզիտէին որ Կամսարեանը համալսարանական է և իրաւաբուն. այդ պատճառով ծծում նրա արիւնը անգլթաբար, առանց դատաւորից կամ դատաստանից վախենալու:

Այսպէս անցան մի երկու ժամեր. բայց ի՞նչ ժամեր... պէտք էր Կամսարեանի տեղը լինել՝ հասկանալ կարենալու համար թէ՛ որպիսի տանջանքի և նահատակութեան ժամեր էին դրանք: Եւ եթէ դուք, սփ համալսարանական ընկերներ, որոնք ոգևորուող Կամսարեանի խոստումը լսելուց՝ նրան ծափահարել և ձեր ձեռքերի վրայ օդն էիք բարձրացրել, գտնուում լինէիք այդ վայրկեանին նոյն հոտած ախոռին կից սենեակում և տեսնէիք նրա անլուր տանջանքը, անպատճառ կասէիք. — Թող, եղբայր, ի՞նչ ես տանջում քեզ... վեր կաց, հաւաքիր իրերդ, գնա այնտեղ, ուր մարդիկ ապրում են իսկական մարդն և ոչ անասունի նման:

Բայց թէ ինչ էր խօսում ու մտածում այդ միջոցին ինքը Կամսարեանը, այդ մասին լաւ է լուել, որպէս զի եթէ երբ և իցէ նման ոգևորութեամբ վառուին ուրիշ երիտասարդներ, նրանց անձանօթ մնայ առաջին ոգևորուողի յուսահատ տրտունջը:

Անտանելի ժամերի հետ միասին վերջապէս անցաւ և անձրևը, դադարեց քամին և աղօթարանն սկսաւ հետզհետէ պարզուիլ ու բացուիլ:

Կամսարեանը որոշեց դուրս գալ իւր տանջարանից: Բայց որովհետև սրահի առաստաղից դեռ կաթկթում էր ջուրը և, հետևապէս, նրա տակ պառկել անհնարին էր, ուստի կիսով չափ հագնուելով՝ նա

դուրս եկաւ սրահը և այդտեղ դրուած թախտը մի կերպ քաշքշելով տարաւ բակը, ուր օդը թարմ և մաքուր էր: Ապա անկողինն էլ ներսից հաւաքելով՝ մի լաւ թափ տուաւ՝ որպէս զի անամօթ լուերին հալածէ և նորէն փռելով թախտի վրայ, մէջը մտաւ ու պառկեց: Դրսի թարմ օդն ու կրած նեղութիւններից զգացած յոգնութիւնը շուտով քուն բերին երիտասարդի աչքերին:

Սաղաղութեան հրեշտակը շատ անգամ, անգործութիւնից, թէ՛ որոշ նպատակով, իւր խնամքին յանձնուած մահկանացուների հետ կատակներ է անում: Նա ծանր ու զարհուրելի երազներ է տալիս նրանց, որոնք արթնութեան ժամանակ շրջապատուած են լինում կեանքի դիւրութիւններով և, ընդ հակառակը, հեշտալի ու քաղցր երազներով զգուում է նրանց, որոնք արթնութեան միջոցին գտնուում են ծանր ու անհամբոյր վիճակում:

Մեր Կամսարեանին էլ նա անուշ քուն տալուց յետոյ, տարաւ յանկարծ Բորժում:

Օ՛հ, ի՞նչ էրջանիկ հակադրութիւն: Առաւօտ է: Փառաշէն վիլլայի պատուհանները ողողուած են արևի պայծառ շողերով. բայց բաց-կանաչ մետաքսեայ վառագոյրը չէ թողնում որ նրանք թափանցեն ննջարանը, ուր այդ վայրկեանին Պետրոս Կամսարեանը՝ անկողնի մէջ նստած՝ առաւօտեան թէյն է վայելում: Նա այդպէս սիրում էր անել, երբ օրը կիւրակի էր և իւր գործը ոչ այլ ինչ, եթէ ոչ՝ հագնուել և ժամը 12-ի մօտ ելնել այցելութեան: Կանաչ վարագոյրի

ստեղծած փափուկ ու քնքոյշ լոյսը գգուում է ննջարանի հարուստ զարդարանքը այնպիսի գոյներով որ կարծես թէ՛ նրանց վրայ նայում ես երփներանգ ծիածանի միջից: Ամեն տեղ պերճութիւն, թաւիշ ու կերպաս. ամեն տեղ ընտիր ճաշակի՝ նրբութիւն...: Իսկ երիտասարդի անկողինը, դա կոմֆորտի վերջին խօսքն է: Մահճակալն ամբողջապէս ձուլուած է բրօնզից և զարդարուած ոսկեքանդակ փղոսկրով: Նրա յատակն ուսցրել են փափուկ, փետրալից օթոցներ, որոնք ծածկուած են ձիւնի պէս սպիտակ սաւանով. իսկ գեղեցիկ, վանդակազարդ սնարը՝ կիսով չափ փակուած են աղուափետրով լի բարձեր՝ ծածկուած նուրբ կտաւով և զարդարուած ծակոսակէն ժանեակներով (կրուժեա): Թեթև բէճէզից կարած և շքեղ մետաքսով երեսած վերմակը, որ այժմ կիսածալ ընկած է մի կողմ, լրացնում է կազմուածքը հարուստ անկողնի, որի մէջ նստած է երիտասարդը՝ ճենապակեայ ոսկեզօծ գաւաթը ձեռին: Մահճի առաջ դրուած փոքրիկ նզոյրի վրայ գտնուում են սեր, կարագ և ընտիր շաքարահացեր: Երիտասարդը վայելում է և, միևնոյն ժամանակ, խօսում իւր մօր հետ այն մասին թէ՛ ինչպէս ինքը յիմարութիւն էր արել «կոճների» երկիրը գնալով և այնտեղ անլուր տանջանքների ենթարկուելով: Լիզիա Պավլովնան կարեկցում էր որդուն և, միևնոյն ժամանակ, աշխատում որ իւր քնքոյշ հոգատարութեամբ մոռացնել տայ նրան կրած նեղութիւնները: Բայց տեսարանը փոխուում է: Բնութեան ու արհեստի շքեղութիւններով զարդարած «Հանքային» պար-

կում, կարկաչանոս Բորժոմկայի ափին, ծառերով հովանաւոր մարմանդի վրայ խմբուած է ամարոցաբնակ տիկնանց, երիտասարդների ու երիտասարդուհիների մի փայլուն բազմութիւն, որի մի մասը կրօկէս է խաղում, միւսը զուարճախօսում է, իսկ իրեն, կամսարեանին շրջապատողները ճառում են բարձրի, գեղեցիկ և վսեմի մասին...: Յանկարծ մի սիրուն, արծաթահնչիւն ձայն առաջարկում է բազմութեանը՝ թողնել խաղերն ու գրոյցը և կատարել մի զբօսանք, անցնելով Բորժոմկայի եօթ կամուրջները: Ամենքն համաձայնուում են, որովհետև առաջարկողը գեղանի Ադելինան է, փայլուն բազմութեան այդ վայրկենի թաղուհին...: Եւ խմբակն իսկոյն բաժանուում է զոյգ-զոյգ, եռեակ, կամ քառեակ մասերի, որպէս զի այլեաներով ու նեղ կամուրջներով անցնելու ժամանակ իրար չըխանգարեն:

Կամսարեանն, ի հարկէ, իւր թիւն է առել չքնաղ Ադելինային, որ այդ վայրկենին քնքոյշ էր աւելի՛ քան զարնան վարդը, զբաւիշ ու քաղցրաբոյր՝ քան ծաղկոցի շուշանը և սիրախօս ու գեղաձայն՝ քան այգածին սոխակը...:

Խմբակի մասերը դիմում էին առաջ խօսելով, ճշարով կամ ուրախ կարկաչելով. երբեմն իրար միանալով, իսկ յաճախ անջատ քայլելով: Զորրորդ թէ հինգերորդ կամուրջն էին անցնում, երիտասարդը չէր յիշում և անա խիտ ծառերի մի սիրուն բուրակ շքրջապատեց նրանց: Մի վայրկեան նրանք տեսան իրենց միայնակ և կանգ առին հովանաւոր ծածկարանի մէջ:

Գեղանի կուսի լուսավառ հայեացքը սևեռուեց երիտասարդի սիրայոյց աչերին և վարդազոյն շուրթերը՝ ժպտի աննման ծիածանի միջից՝ շնչացին կիսաձայն.

— Ինչո՞ւ այդքան ուշացար... Եթէ գիտենայիր թէ՛ որքան անձկութեամբ էի սպասում քեզ... որպիսի կարօտով իմ օրերն անցնում...:

Եւ շուշան բազուկները պատեցին իսկոյն պարանոցը երիտասարդի, որ գրկեց նրան քնքաբար և սեղմեց կրծքին մեղմով...: Հրատապ շուրթերը հանդիպեցան իրար և արքայութիւնը մի վայրկեան իջաւ երկրի վրայ...:

Յանկարծ մի ահաւոր գոռոց շրջապատը թնդացրեց: Երիտասարդը վեր թռաւ: Առաջին բանը, որ աչքին զարկաւ, աթարի դէզն էր, որի շուրջն անձրևը գոյացրել էր աիդմի ընդարձակ ճահիճ... Սա ուրեմն դարձեալ չարաբաստիկ Չիբուխլուն էր: Բայց ինչ գոռոց էր այն, որ զարթեցրեց երիտասարդին իւր անուշ քնից և երազի արքայութիւնը փոխեց իրական դժոխքի: Դա խանդակաթ բառաչն էր տանուտէրի այն կովի, որին Սալբին կթելուց յետոյ՝ բաց էր թողել իւր հորթին մօտենալու համար. իսկ անմիտ անասունը չըհամբերելով այնքան՝ որ հասնէ հորթուկին, շտապել էր ճանալի կիսից իւր գուարթ ձայնով աւետել նրան իւր գալուստը, առանց մտածելու թէ՛ այդտեղ քնած է կամսարեանը, որ անոյշ երազ է տեսնում:

— Фy, что за безобразіе! բացագանչեց երիտասարդը, այս անգամ արդէն ուսներէն և բարձրանալով տեղից, սկսաւ շուտ-շուտ հագնուիլ: Երբէք գիւղն ու գիւղացին այնքան զգուելի չէին երևացել Պետրոսի

աչքում, որքան այս վայրկենին: Այդ պատճառով հենց որ տանուտէրը երևաց, նա դիմեց նրան դժգոհութեամբ.

— Ի սէր Աստուծոյ, տանուտէր, մարդ զրկիր Սեմեօնովկայ որ շուտ տրօյկայ (սայլակ) բերեն. ես մինչև երկու ժամը պիտի ճանապարհուեմ անպատճառ:

— Տրոյկը ուր վօր ա, էս ա կը խասնի, ես իրիկուան եմ ապսպրե... ասաց տանուտէրը և սկսաւ հարցափորձել թէ ի՞նչպէս է պատահել որ նա քնելու թախտը դուրս է բերել բակը, կամ թէ անձրևի ժամանակ ձրտեղ է պատսպարուել:

Պետրոսը պատմեց իւր գլխին եկածը՝ դժգոհութեամբ լի խօսքերով, որոնք ծանր ազդեցութիւն արին տանուտէրի վրայ: Սա անկեղծ ցաւ յայտնեց՝ որ չէ իմացել անձրևի գալը, ապա թէ ոչ, կարող էր հենց ներսի տանը քնելու տեղ պատրաստել երիտասարդի համար: Շատ բարկացաւ, նաև, Սալիբի վրայ, որ բաց էր թողել «անիծուկ կովը», իսկ սա իւր բառաչով խանդարել էր «աղի» անուշիկ քունը:

Հենց այս գրուցի ու բացադրութեանց ժամանակ լսուեցաւ հեռում փոստային սայլակի զանգի զօղանջը:

Հրէն տրոյկը գալում ա. աւետեց տանուտէրը:

— Այդպէս շուտ, զարմացաւ կամսարեանը և ուրախանալով որ վերջապէս ազատոււմ է նեղութիւններից, իւր սրտում հաշտուեցաւ բոլոր անցածի հետ, մոռանալով թէ անձրևը, թէ լուաները և թէ կովի բառաչը: Շուտով հասաւ սայլակը՝ եռալոյծ ձիաներով:

— Տօնական, դ՞ու ես եկե, հարցրեց տանուտէրը: ծանօթ կառապանին:

— Ես եմ եկել բն, ըսկի կը թողամ որ իմ աղին ուրիշ մարդ տանի՞, ասաց կառապանը վստահութեամբ, չընայելով որ տանելիք աղին առաջին անգամն էր տեսնում իւր կեանքում:

— Ի՞նչպէս է որ այդպէս վաղ ես եկել, հարցրեց երիտասարդը:

— Բա ըսկի կը եղանամ: Խօջա-Միրզէն վեց շահի բախշեց. ասաւ՝ Տօնական, քե տենեմ ուսուար ծէքը ծէքին Չբխլում:

— Խօջան ինչ ունի այս գործում, գարմացաւ Պետրոսը:

— Իննեց ա. իրիգուան խօջի խեան եմ ապսպրե, բացաղրեց տանուտէրը:

— Եւ նա քեզ վեց շահի բախշեց, հետաքրքրուեցաւ երիտասարդը:

— Բախշեց բն: Ասաւ, Տօնական, ընենց արա որ էս օր ճաշի վախար աղին հասցնես Դիլի: Էրևում ա լաւ բարեկամդ ա, քե համար հոգում ա:

Երիտասարդը չըպատասխանեց: Նա մտածում էր այն մասին թէ՛ ինչպէս ժլատ ու դձուծ վաշխառուն սիրով գրկուել է իւր 30 կոպէկից, միայն այն պատճառով որ իրեն (Կամսարեանին), իբրև վնասակար մարդու, մի փոքր աւելի վաղ հեռացնէ գիւղից: Այս մտածմունքը, սակայն, փոփոխութիւն չստացարեց երիտասարդի որոշման մէջ: Նա սիրով սկսաւ իւր իրեղէնները կապկպել, որի ժամանակ՝ մի փոքր տարակուսեց միայն բերած գրքերի մասին, չիմանալով թէ՛ ինչ անէ նրանց, որովհետև տեսնում էր թէ՛

անօգուտ է այլ ևս այդ ծանրոցքը տանել թիֆլիս. և այս, գուցէ, այն պատճառով, որ չէր ուզում այնտեղ, իւր աչքի առաջ ունենալ այնպիսի իրեր, որոնք յիշեցնէին նրան իւր «առաքելութեան» պատմութիւնը:

Շուտով մի գեղեցիկ միտք փարատեց նաև այդ մտմունքը: Նա յիշեց որ բողոքարկու արեղան գրքեր էր խնդրել իրենից: — «Արի այս կապոցը զորկեմ նրան և սա կլինի մի գեղեցիկ նուէր», մտածեց երիտասարդը և գրքերի կապոցն առանձնացնելով՝ խնդրեց տանուտէրին՝ հաւատարիմ գնացողի ձեռքով հասցնել այն արեղային: Թէ ինչ օգուտ պիտի քաղէր վերջինս Марксъ-ի Полный курсъ охоты և Освальдъ-ի Лягавая собака գրքերից, դրա համար Պետրոսը աւելորդ համարեց մտածել:

Մի ժամից արդէն ամեն ինչ պատրաստ էր: Երիտասարդը կամեցաւ վարձագրել մի բանով հիւրասէր տանուտէրին, բայց վերջինս բաց է ի բաց մերժեց տանուտէրին, բայց վերջինս բաց է ի բաց մերժեց ընդունել որ և է վարձագրութիւն, ասելով թէ՛ իւր պարտքն էր պատուել Աստուծոյ հիւրին, եթէ նոյն իսկ ամիսներով նա ապրէր իւր տանը: Միայն շատ երկար թախանձելուց յետոյ, Պետրոսը կարողացաւ մի թղթագրամ խրել հիւրընկալի ձեռքը, իբրև հագուստի նուէր Սալիբիի և երեխայոց համար:

Արևը մի չուան բարձրացել էր Մարալինջից, երբ Կամսարեանն իւր սրտազին շնորհակալութիւնը յայտնելով տանուտէրին և նրա կնոջը, ողջունեց նրանց վերջին անգամ և բարձրացաւ սայլակը: Տօնականը մի գօրաւոր բացականչութեամբ խրախուսեց

ձիերին և նրանք աշխուժով սլացան դէպի խճուղին։ Այստեղից Սեմեօնովկայ և այնտեղից Դիլիջան՝ ուղևորութիւնն անցաւ յաջող և առանց պատահարների։ Գիշերուայ յորդ անձրևից յետոյ՝ եղանակը հրաշալի էր, օդը թեթև ու կազդուրիչ, իսկ բուսականութիւնը՝ զուարթ և փայլուն։ Կամսարեանին թւում էր թէ՛ Սեմեօնովկայից մինչև Դիլիջան տանող ճանապարհը, անշուշտ, իւր կեանքի վրայ պիտի աւելացնէ մի աւելորդ տարի։ Վասն զի այդ հովաշունչ ժամերին՝ Մայմեխի թաւշապատ լանջերի վրայ, նրա թաւուտների և անտառների մէջ խաղում էին այնպիսի հովեր ու սղոխներ, տոգորուած կանաչի ու ծաղկանց բուրմունքով, որ ամեն անգամ շունչ քաշելիս, նրան թւում էր թէ՛ շունչի հետ միասին մտնում է իւր թոքերը ոչ թէ օդի ալիք, այլ կենսատու պալասան...։

Դեռ կէս օր չէր որ Կամսարեանը հասաւ Դիլիջան։ Մինչև այստեղ նա շարունակ աշխատել էր չըմտածել այն ամենի մասին, ինչ որ կարող էր իւր արամադրութիւնը խանգարել։ Նա ջանացել էր, մանաւանդ, որ գաղափարական «ես»ը չարթնանայ և յիմար բաներ չըշնջայ իւր ականջին, — «Այսպէս պիտի լինէր... ուրիշ կերպ չէր լինիլ... որովհետև հնար չըկայ...» այս դարձուածներով էր օրօրել նա այդ «ես»-ին և նրա խիղճը քնացրել։ Բայց Դիլիջանում նա յիշեց յանկարծ Թարսաչայի կայարանի վերակացուին, Հայոց նախկին «Գիւղական ուսուցչին» և արդի «չորքոտանիների վարժապետին»։

«Ի՞նչ պատասխան պիտի տամ նրան, եթէ հարցնէ

թէ՛ ինչո՞ւ վերադարձայ»... մտածեց Կամսարեանը և տեսաւ որ հարցը բաւական լուրջ է։

«Աւելի լաւ է թողնել փոստի սայլակը և գնալ մասնաւոր կառքով...» մտածեց նա և այդպէս էլ արաւ։ Փոստի կայարանում, ճանապարհորդներին դիւրութիւն տալու համար՝ յարմարեցրուած էր ճաշարանի նման մի բան։ Այդտեղ երիտասարդը կուշտ նախաճաշ արաւ և ապա մասնաւոր մի կառք վարձելով՝ շարունակեց իւր ուղին։

Այժմ նա դարձեալ ոչնչի մասին չէր մտածում և զբաղուած էր դիտելով ճանապարհի նոր հանդիպող տեղերը, կամ լեռների ու ձորերի այն տեսարանները, որ կարծում էր թէ՛ գալիս ժամանակը չէր նկատած։ Միայն թէ Աղստևի կամրջին մօտեցած ժամանակ՝ նա մի վայրկեան մտածեց այն մասին թէ՛ երբ կառքը կը մօտենայ Թարսաչային ինքը կը հրամայէ կառապանին՝ այնպէս արագ անցնել կայարանի առջևից որ «չորքոտանիների վարժապետը» մինչև իսկ չի որոշիլ թէ՛ ո՞վ է նստած կառքում։ Եւ այս մտածմունքի մէջ՝ նա ձեռքը տարաւ ծոցը, որպէս զի պորտսիգարը հանէ. սակայն նրա փոխարէն՝ դուրս եկաւ դարձեալ չարաբաստ Note-երի տետրը, որն այս անգամ, արդէն, ատելի լինելու չափ անհաճոյ երևաց նրան։ Առանց երկար մտածելու՝ երիտասարդը շարտեց այն կամուրջի վրայից դէպի շուռաչող գետը։

Ոսկեզօծ տետրակը փայլեց մի վայրկեան արևի առաջ և անհետացաւ Աղստևի տխրակարկաչ ալիքներում...։

ԺԶ.

Թիֆլիս հասնելով՝ Կամսարեանը զարմացաւ երբ ծառան յայտնեց թէ՛ Կիրիլ Կարպիչը մի օր առաջ գնացել է Բորժոմ: Իբրև սկզբունքի տէր վաճառական նա լուր օրերը չէր գոհում գուարճութեան: Ի՞նչն էր ուրեմն պատճառը որ նա այս անգամ բացառութիւն էր արել.— «Մի գուցէ մերոնցից մէկը հիւանդացել է», մտածեց Պետրոսը անհանգստութեամբ: Բայց երբ ծառան յայտնեց թէ՛ «աղան գնացել է նրա համար՝ որ էգուց, աղջիկ պարունի ծնունդին՝ էնտեղ լինի», երիտասարդը թէ՛ ուրախացաւ և թէ՛ շփոթուեց:

— Իրաւ, վաղը մայրիկի ծնունդն է... Ինչպէս էի մոռացել... Բայց էլի լաւ եմ հասել... մտածեց նա ինքն իրեն և շտապելով դէպի իւր սենեակը, հանեց գորոցից ու պահարանից իւր նոր շորերը, արդուզարդի պատկանելիքը և այն ամենը, ինչ որ կարող էր պէտք գալ ամարանոցում թէ՛ զբօսանքի և թէ՛ հանդէսների ժամանակ: Եւ այս ամենը զգուշութեամբ ու կարգով ձամպրուկում տեղաւորելուց յետոյ՝ շտապեց առաջնակարգ վարսաւիրայի մօտ իւր գլխի արտաքինը կանոնաւորելու, այն է՝ խուզուելու և ամփոփուելու:

Երեկոյեան վեց ժամից մի քանի րոպէ անց՝ Բաթում ճանապարհուող գնացքը առաւ իւր հետ նաև Կամսարեանին՝ իւր ձամպրուկով ու կապոցներով և մի

քանի ժամից հասցրեց նրան Միխայլովօ: Այստեղից մինչև Բորժոմ պէտք էր ճանապարհը շարունակել կառքով, վասն զի այդ ժամանակ դեռ չէր շինուած երկաթուղու Բորժոմ տանող գիծը:

Պայծառ լուսնկայ գիշեր էր: Հարթ ու ողորկ խճուղին, որի նմանը չըկար Կովկասի ոչ մի կողմը, ախորժելի դարձուց նաև այս ուղևորութիւնը:

Կէս գիշերից անցած՝ երիտասարդը հասաւ անտառապատ ձորի մէջ փակուած Բորժոմը և փոխանակ ուղղակի իրենց վիլլան գնալու, դիմեց հիւրանոց, այն պատճառով որ նախ՝ գիշեր ժամանակ տուն մըրանելով՝ անհանգիստ չանէ իւրայիններին և երկրորդ՝ որ հետեւալ առաւօտ մաքուր հագնուած ու վայելուչ կերպով գնայ մայրիկին շնորհաւորելու և նրան այդպիսով մի հաճելի անակնկալ (սիւրպրիզ) անելու: Այս նպատակով նա խնդրեց նաև հիւրանոցի տիրոջը՝ կանխաւ պատրաստել տալ մատակարարին՝ ամենաարնաիր ծաղիկներից մի թանկագին փունջ, «սիրելի մայրիկին» տանելու համար:

Հետեւալ օրը վաղ՝ Լիդիա Պաւլովնան զբաղուած էր գալիք հիւրերի համար սուրճ ու շոկոլադ պատրաստելով, կամ սեղանատանը՝ շաքարահացերի և այլ ուտելիքների սեղանն ու սպասը կարգաւորելով: Նա թէպէտ ուրախ էր որ իւր ծննդեան յիսուն երկուերորդ տարեդարձը կատարում էր հարուստ ու բաղտաւոր, շրջապատուած դեռ ևս սիրելի ամուսնով, առողջ գաւակներով, բայց մի մեծ պակաս ունէր իւր ուրախութեան մէջ. զա սիրելի Պետեայի բացակա-

յուլթիւնն էր, որը հնար չըկար ոչնչով փոխարինելու...: Օ՛. ինչպէս կատարեալ կը լինէր նրա ուրախութիւնը եթէ այսօր Պետեան գտնուում լինէր այն փայլուն հիւրի հետ, որոնք շնորհաւորութեան գալուց յետոյ, պիտի հրաւիրուէին ճաշի Վարձնցովի պարկում...:

Իեռ այս մտածմունքների հետ էր Լիդիա Պաւլովնան, երբ երեխաները մի շշուկ բարձրացրին վիլլայի ծագկանոցում, որ գտնուում էր գետափեայ փողոցի վրայ: Նա դուրս թռաւ խկոյն վարագոյրներով զարդարուն փոքրիկ պատշգամբ և այգտեղից իմացաւ անակնկալ նորութիւնը:

«Իմ սիրելի Պետեան, իմ աննման որդին չի մոռացել իւր մօր ծննդեան օրը. նա գործը թողել, շտապել, եկել է մայրիկին շնորհաւորելու...» մտածեց իսկոյն Լիդիա Պաւլովնան և ուրախութեան արցունքը նրա աչքերը թրջեցին:

Պետրոսը դիմեց դէպի մայրը ուրախութեան ու գոհութեան ժպիտը երեսին և գրկելով ու համբուրելով նրան, շնորհաւորեց ծննդեան տարեգարձը: Լիդիա Պաւլովնան որդու բերած փունջը գտաւ հրաշալի և գուշակեց որ ոչ ոք ապագայ շնորհաւորողներից կարող է նմանը նուիրաբերել իրեն:

Պետրոսի գալով կամսարեանների վիլլան նոր փայլ ու շուք ստացաւ: Մեծ գոհունակութեամբ լսեց այդ լուրը, նաև, Կիրիլ Կարպիչը, որ դահլճի մի կողմ նստած՝ նարդ էր խաղում իւր հին բարեկամ Մարկ Իւանիչ Մարկոզովի հետ: Վերջինս, որ ծաղրում էր էտիկէտի օրէնքները, վաղ առաւօտից էր եկել տիկ-

նոջը շնորհաւորելու և տեսնելով նրան դեռ ևս պենիւարի մէջ, ասել էր որ այդ շորը նրան աւելի է սագում, որովհետև նրա մէջ տիկինը աւելի է «թրմփիլիկ, գլորիկ»:

— Կուգէր, բաս չէր գայ... կռօների մօտ հօ չէր մնայ, նկատեց նա Լիդիա Պաւլովնային, որ եկել էր ամուսնուն որդու գալուսան աւետելու:

— Եւ տես թէ՛ ի՞նչ օր է եկել է, հենց իմ ծննդեան օրը...:

— Բանիդ կաց... ծնունդ էլ որ չէր էլել, էլի կուգէր... շէշ ու չհար, Կիրիլ Կարպիչ, քարդ դիր... շարունակեց խաղը Մարկ Իւանիչը, որ ուրախ բնութեան տէր ու կատակասէր մէկն էր:

Մի երկու ժամից արդէն բարեկամներն ու բարեկամուհիները գալիս էին շնորհաւորելու: Կանայք ու տղամարդիկ, օրիորդներ ու երիտասարդներ, ոմանք գատ գատ, ոմանք խմբովին, հետզհետէ լցնում էին վիլլայի դահլիճն ու նրան կից վերանդան, որ զարդարուած էր շքեղ վարագոյրներով: Հաճելի աղմուկով ներս ու դուրս էին անում, մանաւանդ, երիտասարդուհիները, որոնց զրուցի մեծ մասն, առնասարակ, բաղկացած էր լինում ձայնարկութիւններից ու բացականչութիւններից:

Լիդիա Պաւլովնան իւր զուլիւր կը կորցնէր, եթէ երիտասարդ որդին, որ քաջ կենցաղաղէտ էր, կարգով, կանոնով ամենքին չընդունէր, հարկ եղած տեղը սիրով չըժպտար, կամ ուր որ պէտք էր, հաճոյախօսութիւն չանէր:

Ճիշդ յարմար ժամին, այսինքն ընդունելութեան տաք միջոցին, վիլլայի առաջ կանգ առաւ Մարկոսեանների կառքը, որից տիկինն իջաւ նագելով և, անպատճառ, սպասաւորի օգնութեամբ, մինչդեռ Ադելինան ներքև թուա թեթև թռչունի պէս:

Տեսնելով Պետրոսին դահլճի դռան առաջ, ուր նա եկել էր իրենց դիմաւորելու, օրիորդը բացականչեց:

— Ի ուր այստե՞ղ... այս հրահր է. և նրա ձայնի արծաթեայ հնչիւնը ալիքներ տալով՝ անցաւ դահլճի մի ծայրից միւսը:

— Հրաշքեմէն քիչ պակաս է... էն էլ էս օր կու-
թամամինք... նկատեց հայրը բարձրաձայն ծիծաղելով:

— Աստուծով, յարեց Կիրիլ Կարպիչը, բայց այնպէս ցած, որ միայն ինքը և խաղընկերը լսեցին:

— Ուրեմն դուք այստե՞ղ էք, նորէն կրկնեց օրի-
որդը, սեղմելով երտասարդի ձեռքը.

— Ինչպէս տեսնում էք, պատասխանեց վերջինս՝
ժպտող հայեացքը Ադելինի սիրուն աչքերին ուղղելով:

— Չէի կարող հաւատալ, ոչ ոք չէր սպասում...:

— Ես սպասում էի... Ինչպէ՞ս կարող է մարդ իւր
մօր ծննդեան օրը մոռանալ. նկատեց տիկին Մար-
կոսեանը, իբր թէ աղջկայ սխալն ուղղելով:

— Աբա մէ ասա, թէ Աստուծոյ կու սիրիս, քու մէրը
երբ է ծնուել, հարցրեց Մարկ Իււանիչը կնոջը այնպի-
սի մի եղանակով որ ամբողջ դահլիճը ծիծաղից թուլացաւ:

— Երանի իմանամ քեզ ո՞վ է խօսեցնում, նկա-
տեց տիկինը նոյնպէս ծիծաղով և դէպի Լիդիա Պաւ-
լովնան առաջանալով:

— Այստեղ համեցէք, այստեղ, խնդրեց վերջինս՝
ցոյց տալով թաւշեայ փափուկ բազմոցը:

— Հա, ես այդտեղ կը նստեմ. սիրում եմ երբ իմ
տեղը լայն է լինում ու արձակ:

— Մետեխցիք էլ դրուստ էդենց ին ասում, ամա
որ խեղճերուն ոչով չի լսում, յարեց Մարկ Իււանիչը:

— Տօ, շէշդ դէր, շէշդ, ի՛նչ ես մարդկանց խան-
գարում, նկատեց Կիրիլ Կարպիչը իւր խաղընկերին:

— Էս էլ իմ շէշդ. եքը՝ չունիմ:

— Չհար ու դու... խաղը շարունակուում էր:
— Ասում էք որ ոչ ոք չէր սպասում ինձ, խոր-
հրդաւոր ժպտով հարցրեց Պետրոսը Ադելինային:

— Ոչ, այդ չէի ուզում ասել... Բայց... ի՛նչպէս
է հայերէն... Ուզում էի ասել թէ՛ ոչ ոք յոյս չունէր
թէ՛ կարող կը լինէիք թողնել ձեր գործը և գալ. հաս-
կանում էք, ուղղեց օրիորդն իւր սխալը, որից, սա-
կայն, նրա այտերը թեթև շառագունեցան:

— Հասկանում եմ... Ոչ ոք յոյս չունէր: Բայց ես,
ահա, եկայ:

— Ի՛նչպէս լաւ է որ եկաք. եթէ գիտենաք թէ՛
որքան պէտք ունինք ձեզ:

— Եթէ կարող եմ մի բանով ծառայել օրիորդին...:

— Ոչ, հասարակութեանը.

— Հարկաւ, ձեր հրամանով:

— Այդպէս ընդունեցէք, եթէ կամենում էք, ասաց
օրիորդը քնքշաբար ժպտալով:

— Այդպէս եմ ընդունում, հաճեցէք հրամայել:
— Այսօր ճաշին մենք ձեզ հետ ենք, Վարօնցովի

պարկուճ... Այնպէս է, Լիդիա Պաւլովնա, դարձաւ օրիորդը տիկնոջը:

— Այո, սիրելիս, բոլոր հիւրերին յայանուած է:

— Իսկ երեկոյեան մենք կուենենանք նուագահանդէս:

— Բարեգործական նպատակով:

— Այո, և հարուստ ծրագրով:

— Եւ մենք ուրեմն պատիւ կուենենանք ձեր հրաշալի ձայնն ու դաշնամուրի նուագը լսելու:

— Այսինքն, պատիւ կանէք մեզ լսելու:

— Եւ ի՞նչ կտորներ կերգէք, կամ կը նուագէք:

— Այդ կիմանաք աֆիշայից. բայց բանն այդ չէ:

— Հապա՞:

— Նուագահանդէսից յետոյ մենք կուենենանք պարահանդէս:

— Կօտիլիօնով... Ճշաց դահլիճի միւս կողմից Ադելինայի ընկերուհիներից մինը:

— Այդ էլ լաւ է:

— Լաւ է այն պատճառով որ դուք այստեղ էք:

— Այդ ի՞նչ է նշանակում, ժպտաց երիտասարդը:

— Երևակայեցէք որ մինչև այժմ մենք դեռ չըզիտենք թէ՛ ով պիտի լինի մեր dirigeur-ը, որովհետև չենք ընտրած: Այստեղի երիտասարդների մէջ, ճշմարիտը խոստովանած՝ շնորհքով մէկը չըկայ:

— Ինձ կուշուկէիք էլի. կատակեց դարձեալ Մարկ Իւանիչը, որ այժմ տարած քարերն էր համարում:

Իհարկումն նորէն ծիծաղ բարձրացաւ:

— Չէք կարող երևակայել թէ՛ սրբան ուրախ եմ:

Գուք ի հարկէ, կը կառավարէք մեր պարերը: Այժմ արդէն պարահանդէսը կը լինի իսկական պարահանդէս:

— Իսկ եթէ ես խնդրէի որ ինձ ազատէք այդ պաշտօնից:

— Եւ ոչ մի խօսք այդ մասին, յարեց օրիորդը վճռաբար:

— Այո, այո, ոչ մի խօսք. — դուք հրաշալի dirigeur էք — դուք չի պիտի մերժէք... Սօսեցին այս ու այն կողմից Ադելինայի ընկերուհիները:

— Բան է, թէ վուր Պետար Կիրիլիչը իրիկուան ատկազ արաւ, ես հազիր եմ. ձիգ էնէնց լազաթով պար ածիմ, որ ասիք — մաշալա Մարկ Իւանիչ... զուարճախօսեց Ադելինայի հայրը և ծիծաղը նորից ընդհանրացաւ:

Յերեկուայ երրորդ ժամին կամսարեանների հիւրերը հետգհետէ հաւաքուում էին Վարանցովի պարկը, որ գտնուում էր Բորժոմի գեղեցկութիւնը կազմող անտառապատ բարձունքներից մէկի վրայ: Գեղուղէշ ծառերի հաճելի հովանու տակ բացուած էր ընդարձակ սեղան՝ զարդարուած կանաչով, ծաղկափնջերով և հարուստ սկրապի բազմատեսակութեամբ:

Ճաշը նշանակուած էր սովորականից վաղ, որպէսզի երեկոյթ կազմող օրիորդները թէ՛ հացկերոյթին մասնակցէին և թէ՛ ժամանակ ունենային հանդիսի համար պատրաստուելու:

Ընտիր խորտիկները և ընտրելագոյն գինին, միացած ընտիր երաժշտութեան հետ, որի արձագանքը թնդում էր անտառի հեռաւոր ծմակներում, շուտով

ստեղծեցին Վարանցովի պարկում էպիկուրեան հա-
եացքների երկրպագու մի ամբոխ, յարած երկու գատ,
բայց միմեանց հետ սերտ կապ ունեցող տեսութեանց:
Տարիքաւորները՝ համակերպելով մեր ծանօթ Տէր Վա-
նու կարծիքին՝ ընդունում էին որ՝ այս անցաւոր աշ-
խարհում, կայ միայն մի քան, որի համար արժէ ապ-
րել, այն է՝ լաւ ուտել: Մինչդեռ երիտասարդները՝
այդ միակ քանը գտնում էին լաւ սիրելի մէջ:

Այս պատճառով էլ, եթէ առաջինները իրենց
տուել էին համեղ խորտիկներն ու անուշ գինին ուշա-
գիւր ջանքով և գիտակցաբար վայելելու դժուարին
աշխատութեան, վերջիններն, ընդհակառակը, զբա-
ղուած էին քնքոյշ ժպիտների, կրակոտ հայեացքների
և խորհրդաւոր ակնարկների փոխանակութեամբ: Սիրոյ
և մտերմութեան այդ հրապուրիչ տուրեւում՝ գերա-
զանցում էին բոլորին Պետրոսն ու Աղելինան, որոնք
պատահաբար նստած էին իրար մօտ...: Ճաշը վեր-
ջանալու վրայ նրանք ասել, վերջացրել էին այն ամե-
նը, ինչ որ անհրաժեշտ էր երկու սիրող սրտերին՝
իրենց գգացածը միմեանց հասկացնելու համար— թէ-
պէտ և այդ անելիս՝ նրանք չէին արտասանել և ոչ
մի պարզ խօսք:

Հասաւ երեկոն: Հանքային պարկի ոտտօնդան լու-
սաւորուած էր շքեղօրէն: Գոյնզգոյն լապտերները,
որոնք կախուած էին պատշգամի սիւնաշարերն ու
մօտակայ ծառերը միմեանց հետ կապող կանաչահիւս
ժապաւէններից, մոգական խորհրդաւորութիւն էին
տալիս կեանքով ու լուսով ողողուած այն կէտին, որ

ամփոփուած էր անտառապատ բարձրաւանդակներով
պարսպուած ձորակի մէջ: Կարգադրիչներն ամեն կերպ
աշխատել էին զբաւիչ ու հետաքրքրական դարձնելու
պարկի այդ մասը, ուր ոտտօնդան էր և ուր նուա-
հանդէսն ու պարերը պիտի տեղի ունենային, որպէս
զի ժողովուրդը ցանկալի չափով մասնակցէր հանդէս-
ներին և բարեգործական եկամուտը մեծացնէր: Այդ
պատճառով հանդիսի ընդարձակ գահլիճը, դեռ ութից
առաջ, լցուած էր երկսեռ բազմութեամբ: Իսկ նուա-
գահանդէսն սկսելուց՝ ոչ միայն չըկար պարապ աթոռ,
այլ և դռների ու պատուհանների առաջ խոնուած էր
մեծ բազմութիւն, որ փող էր վճարել, գէթ մօտիկ
կանգնելու իրաւունք ունենալու համար:

Գեղեցիկ վարագոյրներով ու արեւադարձային ծա-
ղիկներով զարդարուած բեմի վրայ, առաջին անգամ
երևաց Աղելինան իւր ընկերուհու հետ: Նա հագած էր
մետաքսեայ նուրբ, ձիւնափայլ շոր, հոլանի թևերով
ու կրծքով, որ զարդարուած էր մարգարտածաղկի և
շուշանների հիւսերով: Կիսաբաց կրծքին, ուր հագչում
էր սպիտակ վարդի մի ոստ, այլ և հարուստ մագե-
րում, որոնք սանրուած էին à la moderne, աստղե-
րի պէս փայլում էին հարուստ ազամանդներ: Անմե-
ղութեան խորհուրդն ամփոփող սպիտակ հագուստներում
և մանաւանդ բամպի այլակերպող լուսի առաջ, գեղանի
Աղելինան դարձել էր, գրեթէ, երկնային:

Երբ ընդունելութեան ծափերը դադարեցին, օրի-
որդն ու ընկերուհին, որ նոյնպէս զբաւիչ էր իլլի-
գիայի շնորհիւ, սկսան դաշնամուրի ձայնակցութեամբ,

երգել մի սրտաշարժ duo, որ յարուցեց դահլճի մէջ ծափահարութիւնների և bis-երի որոտնդոտ աղմուկ, որից ստիպուած՝ նրանք երգը կրկնեցին:

Հեռեեալ համարը պատկանում էր մի երիտասարդի, որ ջութակի վրայ նուագեց իւր բաժինը և, ինչպէս սիրող, արժանացաւ դարձեալ ծափահարութիւնների:

Երրորդ համարը Մոցարդի VI-րդ սոնատն էր, որ Ադելինան և մի ուրիշ օրիորդ նուագեցին դաշնամուրի վրայ:

Չորրորդին դուրս եկաւ Ադելինան միայնակ և նուագեց նոյն հեղինակի Rondo alla Turca-ն, որ իւր արևելեան ճաշակի նուրբ ու քնքոյշ մեխամադձոտութեամբ սրտաշարժ ազդեցութիւն ունեցաւ հանդիսականների վրայ:

Որոտալից ծափահարութիւնների աղմուկով փակուեցաւ նուագահանդիսի առաջին բաժինը:

Երկրորդին և երրորդին մասնակցեցին նոր մարդիկ—մի վիօլօնչելիստ, մի սրնգահար, մի solo երգիչ. ապա երգչուհիներ, որոնց մի trio-ին միացաւ դարձեալ Ադելինան: Բացի այդ, նա երկրորդ ու երրորդ մասերում յանձն առաւ լուրջ մասնակցութիւն՝ մէջ ընդ մէջ նուագելով դաշնամուրի վրայ Բէթհովէնի Quasi una fantasia սոնատը, Շումանի Warum-ը, նրա կարնավալի խոստովանանքը և Շոպէնի Nocturnus-ը, որով, համարեա՛, ներկայացաւ նուագահանդիսի գլխաւոր տիրապետուհին՝ ոչ միայն իւր գեղեցկութեամբ ու շնորհաշուք շարժուածքով, այլ և այն ար-

ժանիքով, որ ցոյց տուաւ նա երաժշտական մասում ունեցած իւր հմտութեամբ:

Կամսարեանը, որ բոլոր ժամանակ հոգիացած՝ դիտում էր գեղանի օրիորդին և լսում նրա շնորհալի երգը, կամ դաշնակի նուագները և ընդ նմին ականջում ժողովրդի գովութիւններին, հետզհետէ սկսում էր զարմանալ իւր յիմարութեան վրայ՝ որ մինչև իսկ մի վայրկեան թոյլ էր տուել իրեն մտածել թէ՛ կարելի էր երբ և իցէ ձեռքից թողնել այդ գանձը...: Եւ այդ իսկ պատճառով, որպէսզի նորոգուած մտերմութիւնը ոչնչով չըթուլանայ, նա իւրաքանչիւր խաղամիջոցին վազում էր բեմի ետևը և հիացած բացականչութիւններով Ադելինային դրուատում:

— Չեր երգը, օրիորդ, գիւթիչ էր և հրաշալի... ձեր սօնատն աննման էր... ձեր Rondo-ն ինձ լացարեց... ասում էր նա: Իսկ դահլճը վերադառնալուց՝ սկսում էր օրիորդին համեմատել իրեն հետ և գտնում որ նա, արդարև, արժանի է իւր կենակիցը լինելու: Հենց այս պատճառով էլ՝ տեսնելով որ Ադելինան տիրում է հանդիսի վրայ, ցանկացաւ որ ինքն ևս աչքի ընկնէ մի բանով, ուստի որոշեց ընդունել գիրիփօրի պաշտօնը, որ դեռ առաւօտը կամենում էր մերժել:

Եւ որովհետև գիտէր թէ՛ ամեն մարդու բան չէ պարերը կառավարել այնպէս որ ընդհանուր գոհութեան ու կենդանութեան հետ միասին՝ դաշլիճում տիրէ, նաև, կատարեալ կարգ ու ներդաշնակութիւն, ուստի առաջուց հպարտանում էր որ ինքը պիտի կարենայ լիւրի ցոյց տալ այդ բանում իւր հագուա-

գիւտ շնորհքը: Այս պատճառով նա շաապեց օգտուել վերջին խաղամիջոցից և հենց նստած տեղը կազմել tour-երի ընդհանուր ծրագիրը, որ շատ էլ հեշտ բան չէր:

Նուագահանդէսը վերջացաւ մի քուարտէտով, որին մասնակցեցին՝ ջութակահարը, վիօլօնչեկիստը, սրնգահարը և trio երգող երեք օրիորդներ, որոնցից մինն էր Ադելինան:

Ծափահարութիւնները երկար դըրդեցնում էին դահլիճը և երևի գարմացնում մօտակայ անտառներում թառած թռչուններին, որոնք եթէ խորհելու գէշ սովորութիւնն ունենային, անշուշտ շատ աննպաստ բաներ կը մտածէին մարդ արարածի մասին:

Շուտով ծառաները դահլիճի միջից դուրս հանեցին աւելորդ աթոռները, որպէս զի պարերի համար հրապարակ բացուի: Ադելինան և ընկերուհիները, որոնք չէին կասկածում թէ՛ լաւ dirigeur ունին, եկան մի անգամ էլ ստուգելու թէ՛ արդեօք երիտասարդը հօ չէ պնդում մերժման վրայ: Եւ գոհ եղան տեսնելով՝ որ վերջինս արդէն իւր գերի մէջ է և հրամաններ է տալիս ոչ միայն ծառաներին՝ դահլիճը կարգաւորելու, այլ և երաժիշտներին՝ պարերգի եղանակները դասաւորելու այնպէս, ինչպէս որ ինքը ծրագրել էր արդէն:

— Տեսնում էք, օրիորդներ, այն, ինչ որ նախօրօք ինքներդ պիտի կազմէիք, այն էլ պարունն է շտապել կազմելու, նկատեց նորատի մի տիկին, աչքէ անցնելով tour-երի ցանկը, որ գծել էր կամսարեանը իւր այցեառման վրայ:

— Միթէ՞ չըգիտէինք թէ՛ ինչո՞ւ ենք պարունին dirigeur ընտրում, վրայ բերաւ Ադելինան քաղցր ժպտալով:

— Ինձ թւում է թէ՛ ով յանձն է առնում մի պաշտօն, նա ինքն էլ պիտի հոգայ նրա անթերի կատարման համար, պաշտպանեց օրիորդին կամսարեանը՝ կարող մարդու յաւակնութեամբ:

— Այո՛, բայց աշխատանքի բաժանումը հեշտացնում է գործը, աւելացրեց տիկինը:

— Օ՛, և մի՞թէ սա գործ է. այսպիսի գործերում ես ինձ գգում եմ...

— Ինչպէս ձուկը՝ ջրում, այնպէս չէ՞, ընդհատեց Ադելինան, ծիծաղելով:

— Այո՛, միայն այն զանազանութեամբ որ ձուկը լողում է անխօս, մինչդեռ մեր դիրիժօրը պիտի լողայ այսօր շարունակ բարբառելով, կատակեց մի ուրիշը:

— Բայց դուք այստեղ ժամավաճառ էք լինում. առէք այս ցանկը և երկու թերթերի վրայ օրինակելով՝ փակցրէք դահլիճի պատերին, որպէս զի պարողները ծանօթանան tour-երի կարգին, խօսեց նորատի տիկինը, որ, ըստ երևութիւն, շտապում էր վայրկեան առաջ սուրալ դահլիճի փայլուն յատակի վրայ:

— Անհանգիստ մի՛ լինիք, դրա մասին էլ ես կը հոգամ, ասաց կամսարեանը և ներողութիւն խնդրելով հեռացաւ խմբակից:

Քիչ ժամանակից յետոյ բոլոր պարող տիկիներն ու օրիորդները իրենց ձեռքում ունէին դիրիժօրի այցեառմանը՝ tour-երի ցանկով:

Պարահանդէսն սկսուեց Valse générale-ով, որի ժամանակ յայտնուեցաւ որ նուագահանդիսի նախկին թագուհին՝ այժմ պիտի դառնայ դիրիժեօրի եռանդը վառող անբաժան ոգին, Եւ դրանք երկուսն, արդարեւ, այդ վայրկենին արժանի էին իրար՝ իրենց գեղեցիկ արտաքինով, համաչափ հասակով, շնորհալի շարժմունքներով, երիտասարդական գուարթութեամբ և, նա մանաւանդ, աշխուժի ու եռանդի բացարձակ գեղումով, որ վարակում էր նոյն իսկ տարիքաւորներին, մտցնելով նրանց մէջ կենդանութեան նոր գրգիռ:

Որովհետև այդ ժամանակ դեռ ֆրանսիական քաղաքները իբրև հնութիւն՝ չէր հանուած ընդհանուր պարերի ցանկից, ուստի նա հետևեց Valse générale-ին: Դրանից էլ, իսկապէս, սկսեց Կամսարեանի տիրապետական փայլը:

Ասպետներն ու տիկիներն իրար ընտրելուց յետոյ, ընտրել էին նաև իրենց աթոռները և կապել նրանց թաշկինակներով, որպէս զի շուրջ խոնուող հասարակութիւնը չըքաշէ նրանց դէս ու դէն:

— Avancez... passez... retournez á vos places... Որոտաց դիրիժեօր Կամսարեանի ձայնը, ինչպէս զօրապետի մի խրոխտ հրաման և դահլճի ազատ հրապարակը վայրկենապէս ծածկուեցաւ պարողների բազմութեամբ: Սպիտակ կերպար, փրփուր բասիտը, ծաղիկն ու ադամանդը խառնուելով իրար, ստեղծեցին այգտեղ գարնան թիթեռների խայտապղէտ մի պար, որի մէջ ադամարզիկ, իրենց սև գգեստներով՝ յիշեցնում էին բզեզների ու մեղուների խառնուրդը:

— Les dames, avancez... reculez... avancez et balancez vos cavaliers vis-à-vis... հնչում էր Պետրոսի ձայնը հետզհետէ առուզանալով:

— Ինչպէ՞ս էք հաւանում մեր զօրապետին... հարցրեց Ադելինան իւր vis-à-vis ասպետին՝ balance-ի ժամանակ:

— Հրաշալի է, պատասխանեց վերջինս և ժպտալով անցաւ:

— Avancez et balancez vos cavaliers premiers...

— Ձեզ համար ասում են որ հրաշալի dirigeur էք, շնչաց Ադելինան Պետրոսի հետ պատելիս:

— Բայց չէ՞ն ասում որ տիրուհուս արժանի երկրպագու չեմ, նկատեց Կամսարեանը ինքնագոհ ժրպիտով:

— Չափազանց համեստ էք:

— Ասացէք՝ ճշմարտախօս... Messieurs, avancez, reculez... avancez et balancez vos dames vis-à-vis:

— Ասացէք Ադելինային որ շատ չըբըբըուի, ապրապրեց կատակով Կամսարեանի հետ պատող vis-à-vis օրիորդը:

— Ձեր ընկերուհին պաշտելի է, մի՛ զրպարտէք նրան... նկատեց դիրիժեօրը և շարունակեց Avancez et balancez vos dames premières:

Ի՞նչ էր ասում ձեզ Իդան, հարցրեց Ադելինան Պետրոսին, երբ նա figure-ն աւարտելուց յետոյ նրատեց իւր կողքին:

— Ձեմ կարող ասել:

— Խնդրում եմ:

— Հարցրէք, հարցրէք, յորդորեց օրիորդը դիմացի շարքից:

— Դէհ, այժմ ասացէք. ինչ էր ասում նա, ստիպեց Ադելինան զուարթ հետաքրքրութեամբ:

— Ասում էր՝ իբր թէ դուք շատ քրքրում էք:

Ադելինան նայեց իւր ընկերուհուն և ժպտալով ասաց:

— Ինքներդ դատեցէք, մի՞թէ իրաւունք չունիմ... Հապան, համեմատեցէք... Եւ այս ասելով նա մատնացոյց արաւ ընկերուհուն՝ նրա ասպետը, որ ճաղատ գլխով, ոչ գեղեցկադէմ մի գրող էր:

— Մի վիճէք, եղներք. Messieurs, avancez. Ghaine, les dames à la main... գոչեց դիրիժօրը և պարը շարունակուեց:

Այս ձևով իրար յաջորդում էին figure-ները մինչև վեցերորդը. բոլոր այդ ժամանակ Կամսարեանը հանգիստ սիրախօսում էր Ադելինայի հետ: Բայց galop-ի ժամանակ նա արդէն դարձաւ մարմնացեալ եռանդ. որովհետև հրամանները պէտք է տար զգուշութեամբ, որպէս զի grand rond-ի վախճանը լինէր թէ սահուն և թէ յաղթական:

Բարեբաղդաբար այդ լուրջ խնդիրն էլ լուծուեցաւ յաջողութեամբ: Երբ corbeille-ից յետոյ վերջին անգամ հնչեց դիրիժօրի ձայնը՝ Remerciez vos dames! ամենքն արդէն գիտէին որ կարգադրիչ պարոնի շնորհիւ սխալ քայլ չէին արած: Այդ պատճառով շնորհակալութիւնները երկուստեք էլ սրտագին էին:

Քաղրիլից յետոյ սկսուեցան ազատ պարերը, որոց ժամանակ Ադելինան, հակառակ նոյն իսկ bon-ton-ի պահանջին, յաճախ անբաժան էր շնորհալի դիրիժօրից: Գուցէ և այս այն գիտակցութեամբ թէ՛ հիւրերից շատերն, արդէն ծանօթ են իւր զգացմունքներին, հետևապէս, խստապահանջ չէին լինիլ գէթ այս անգամ: Եւ իրաւ նրանց երկուսի համաչափ ու ներդաշնակ շարժումներից արդէն դիտող աչքը կարող էր որոշել չափն այն համակրութեան, որ երիտասարդ սրտերը տածում էին դէպ իրար: Եթէ պարից բան հասկացող հանդիսականը ծագրում էր այնպիսիներին, որոնք պարելու փոխարէն քաշկրտում էին, կամ իրենց կոր մէջքով և գոեհիկ pas-երով տանջանք պատճառում իրենց dame-երին, ընդհակառակն, հոգեկան մեծ հաճոյք էր զգում նայելով Կամսարեանի և Ադելինայի վրայ, որոնք իրենց թեթև ու շնորհալի քայլերով և հանգիստ ու ճօճուն պտոյաներով գրեթէ միշտ իրենցից կազմում էին մի անձն, որ իւր շարժումներում միաժամանակ փայլեցնում էր որքան շնորհք, նոյնչափ և արուեստ:

Պարերը, սակայն, շարունակում էին երկար, վասն զի երիտասարդները չէին յոգնում, իսկ տիկիւններն ու օրիորդները պատրաստ էին, նոյն իսկ, առաջիկայ ցերեկը փոխել գիշերի, միայն թէ կարենային անվերջ պտտել ու սուրալ՝ երաժշտութեան հաճելի աղմուկով արբած...

Բայց հասակաւոր հայրերն ու մայրերը սկսում էին յոգնել. շատերն էլ ստամոքսի տրտունջն էին

լուծմ: Այդ պատճառով սկսան յիշեցնել «Չահիրներին» թէ՛ ժամանակ է արդէն իրենց եռանդը չափաւորելու: Այդ յուշարարների թուին պատկանում էին, նաև, Կամսարեան ու Մարկոսեան ամուսինները, որոնց խորհրդին, սակայն, հետևեց իսկոյն ինքը դիրքիփօրը, սկսելով Cotillon-ը իբրև վերջապար:

Բայց որպէս զի տիկիներն ու օրիորդներն հաճոյքը ևս կարողանար գրաւել, նա Cotillon-ը փոխանակ քաղբիլի ու մագուրկայի պարզ խառնուրդով վերջացնելու, աշխատեց բարդել վայլսի ու պօլկայի երկարատև tour-երով: Եւ թէպէտ նա խստութեամբ հետևում էր արշաւին և հարմոնեան ոչնչով չըխանդարելու համար՝ աշխատում որ գոյգերը ձեռքից չըտան իրենց հերթը, այսուամենայնիւ վերջում երևեցաւ որ բոլոր ասպետներից աւելի շքանշան ինքն է ստացել:

Երբ promenade-ն ու petit-rond-ը աւարտելով դիրքիփօրը գոչեց՝— Voyagez à quatre coins à la isvostchik!, նա ձեռքին ունէր մետաքսեայ սանձերը երեք գեղեցկուհիների, որոնցից միջինը չքնաղ Ադելինան էր և որոնք՝ իրենց ջերմութիւնից շիկնած վարդագոյն դէմքերով՝ յիշեցնում էին Ապօլոնի հրաշունչ նժոյգները՝ Արշալուսի բացած դռներով ելնելիս...:

— Trois en avant! գոչում էր երիտասարդը և իւր նժոյգներով պատում ու սուրում գահլճի շուրջը: Նրան հետևում էին ուրիշները, բայց հակառակ կազմուածքով. — շատ տիկիներն ու օրիորդներ լծել էին երիտասարդներին և վարում էին նրանց՝ ինչպէս Դիանաներ՝ իրենց էրէներին:

— Այ դրուստն էս ա. չուն հմիկուայ վախար՝ աղջկերքն ին տղերանանցը լծում, Ամա էն ինչի՞ քու տղէն իմ աղջկանն ա լծել. սաբաբն ի՞նչ ա, հարցրեց ծիծաղելով հայր Մարկոսեանը՝ իրենից անբաժան Կիրիլ Կարպիշին:

— Մարկ Իւանիչ, էգենց էլ ա լինում. խան մէկն ա լծում, խան մէկէլը. դու ասա ճամպէն դրուստ գնան, չըվերննգնեն, թէ չէ լծելուց ի՞նչ վաաս... այլաբանական հարցին՝ այլաբանօրէն պատասխանեց հայր Կամսարեանը:

Երբ Պետրոսն ու Ադելինան թև թևի տուած մօտեցան ծնողներին, Մարկ Իւանիչը կատակով նկատեց.

— Աբա մէ ասա, Պետր Կիրիլիչ, կոծնելի երկրումը որ մնացել էիր, քիզ ո՞վ կուտար էս դագա մեդալնիր ու խաչիր... Տես է, խտակ պօլկօնիկ իս դառի:

Ադելինան ու շրջապատողները ուրախ ուրախ ծիծաղեցին. մինչդեռ Պետրոսը կեղծեց թէ ծիծաղում է. որովհետև Մարկոսեանի արած դիտողութիւնը մի տեսակ ցուրտ փչեց իւր ջերմացած սրտին:

Այսուամենայնիւ, պարկի ծառագարդ մի անկիւնում ընթրիքի համար բացուած սեղանը, որի վրայ դրուած արծաթ ու քրիստալ սպասները փայլուն էին առատ լուսի առաջ, իսկ տեսակ տեսակ ակրասն ու գլինին զրգռում, նոյն իսկ, կուշտ մարդու ախորժակը, ցրեցին, նաև, երիտասարդ Կամսարեանի ախորժեան հովերը և հաւատացրին նրան թէ՛ աւելի լաւ է վայելել քան թէ մտածել...:

Այդ բանին, մանաւանդ, լաւապէս օգնեց Մարկ

Իւանիչը, որ սեղանը բոլորող փոքրիկ հասարակութեան խնդրանօք դարձաւ կառավարիչ: Առաջարկած կենացները նա համեմուժ էր գուարթ կատակներով և երբեմն, մինչև իսկ, յաջող սրախօսութիւններով. այնպէս որ ընթրողներն աւելի ծիծաղում, քան ուտում էին: Չամանանալի էլ չէր՝ որ այսպիսի ընդունակ կառավարչի շնորհիւ, դեռ երկրորդ կերակուրը չբերած՝ շիշերի գինին կիսից ցած լինէր, իսկ երրորդը՝ սկսելուց՝ արդէն վերջացած: Այս կշռաչափը թէպէտ մեծ բան չէր «լաւ խմողի» համար. բայց Բորժոմի պարկում ընթրողին՝ պատշաճ չէր դրանից աւելին վայելել, ուստի պէտք էր ընդունել որ այդքանով էլ մեր հիւրերն արդէն գուարթացած էին:

Քաղցրեղէնը բերելու ժամանակ ընթրողների տրամադրութիւնը այնքան էր քնքշացել, որ կարծես թէ՛ անձ, ուր որ է բոլորը պիտի ձուլուին մի սրտի և մի հոգու մէջ: Այսպիսի յաջող տրամադրութիւնից օգտուելով, Լիդիա Պավլովնան, որ բոլոր ժամանակ գուարձանում էր Պետրոսի և Ադելինայի միմեանց հետ փոխանակող քաղցր ժպիտներն ու հայեացքները դիտելով, կամ նրանց գողտրիկ սրախօսութիւնը լսելով, իբրև թէ արդէն համբերութիւնից ելած, ժպտալով բացականչեց.

— Իէ վերջ տուէք, էլի...:

— Իրուստ ա սսում, վերջ տուէք... յարեց իսկոյն Մարկ Իւանիչը և քան քան ծիծաղեց:

Եւ որովհետև ամենքի համար պարզ էր թէ՛ ինչի՞ մասին է խօսքը, ուստի Կիրիլ Կարպիչը, որ ամեն բանի մէջ սիրում էր հանդիսաւորութիւն, բարձրանալով

տեղից՝ բռնեց որդու ձեռքը և տալով Մարկ Իւանիչին ասաց.

— Ահա քու փեսան:

Տիկին Մարկոսեանը հետեւելով նրան, առաւ աղջըկայ ձեռքը և տալով Կիրիլ Կարպիչին, յարեց.

— Էս էլ քու հարսը...:

Թէ Պետրոսի և Թէ Ադելինայի դէմքին խաղացին լուռ երանական ժպիտեր: Իրանով նրանք իրենց համաձայնութիւնն էին տալիս ծնողների արածին:

— Շնորհաւոր, շնորհաւոր, գոչեցին այս ու այն կողմից:

— Մատանին տուր, խնամի, մատանին... բացականչեց Մարկ Իւանիչը, իբրև գործնական հայր:

Լիդիա Պավլովնան ընտրեց իւր մատի մատանիններից ամենարնտիրն ու թակագինը և հագցնելով Ադելինայի մատին, համբուրեց նրան և ասաց.

— Սա թող լինի մեր զաղատկան (առհաւատչեան):

— Ես էլ հմի իմ փեսին, ասաց տիկին Մարկոսեանը և չիփ չափ համբուրուեցաւ Պետրոսի հետ:

— Շնորհաւոր, շնորհաւոր, կրկնեցին ձայները:

— Շամպայն, շուտ. էս գինիքը դուս տարէք, հրամայեց Կիրիլ Կարպիչը և ծառաները մի ակնթարթում անհետացրին սեղանի վրայից նորոգուած շիշերի մնացորը (որ մի քիչ յետոյ իրենց պիտի հարկաւորուէր) և նրանց փոխարէն շարեցին Reoderer-ի շամպայնը:

Շնորհաւորանքներն ու բարեմաղթութիւնները ընդհանրացան: Նոյն իսկ հարեան սեղաններից՝ բարեկամ

մարդիկ մօտեցան և շտորհաւորեցին յանպատրաստից տեղի ունեցած նշանադրութիւնը:

Եւ սակայն այս ամենը կատարուեց այնքան տարօրինակ կերպով, որ ոչ ոք մտածեց հարցնել աղջկայ կամ աղի համաձայնութիւնը: Եւ երբ այս մասին մի յոռետես իւր դիտողութիւնն արաւ, Մարկ Իււանիչը հրամայեց որ Պետրոսն ու Աղեւիկնան պատասխանեն նրան իսկոյն:

Երիտասարդն ու օրիորդը հասկացան արուած հրամանի նշանակութիւնը և քաղցրաժպիտ մօտենալով իրար՝ ջերմագին համբուրուեցան:

Ուրախութեան բացական չութիւնները սկսուեցան նոր ուժով և շամպայնը նորոգեց իւր շրջանաւորութիւնը:

Այժմ արդէն իմ ընթերցողները չեն պահանջիլ որ ես իմ պատմութիւնը շարունակեմ: Որովհետեւ լազիտեն թէ՛ այսպիսի մի նշանադրութեան ի՞նչ է հետեւում.— հարկաւ, պսակադրութիւն, շքեղ հարսանիք և մեղրալուսնի ճանապարհորդութիւն... իսկ այնուհետեւ զալիս է ամուսնական խաղաղ ու քաղցր կենակցութիւնը, մինչև ցնոր կարգադրութիւն...

— Իսկ Չիբուխլոն... Սեանը...:

— Նրանք զարձեալ մնացին իրենց տեղն անշարժ անփոփոխ, ինչպէս հարազատ մասունք անփոփոխելի յաւիտենականութեան...:



Handwritten numbers and calculations: 336, 244, 92, 92, 189, 163, 19.

ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՅԻ

Առաջին անգամ լոյս է տեսել Վնոր-Դար»
լրագրում 1889 թուականին:



Ամեն ամեն ասեմ ձեզ, եթէ ոչ
Համե ցորենոյ անկեալ յերկիր մեռա-
նեցի, ընդ միայն կայ, ապա եթէ մե-
ռանելի՞ ըստում արդեւնա ասեմ:

Ա.Ե.Տ. Յովն.

Ամենալաւթար դաստիարակութիւ-
նըն իսկ, որ անձնուրացութիւն է սո-
վորեցնում, ըստադոյն է, ըստ այն
դաստիարակութիւնը, որ անձնուրա-
ցութիւնից դատ ամեն ըստ սովորե-
ցնում է:

Ջոն Ասերլին:



Եթմ ես կարող եմ այդ կնոջ մա-
սին խօսել, որովհետեւ նա այլ ևս
չըկայ...: Տարիներ են անցել
այն օրից՝ որ նա իւր վերջին
բարեւ տուաւ այս աշխարհին,
թողնելով իւր յիշատակն անձա-
նօթութեան մէջ: Նրա գերեզ-
մանը վաղուց ծածկուել է կա-
նաչով և շուրջ անկուած ուռենիները մեծացել, ուռ-
ճացել են և իրենց քաղցր սօսաւիւնով օրհներգներ են
մրմնջում նրա արգար հոգւոյ համար:

Մեր այս ինքնապաշտ ժամանակում, երբ անձնուրու-
թիւնը դարձել է անգիւտ, ըստ որում մարդիկ նրա
պաշտամունքը յատկացրել են անձնասիրութեան, այդ
կի՛նն իւր սեռի մէջ միակն էր ու առաջինը, որ հա-
սարակաց բարւոյն նուիրուելու ծանրագոյն խաչն
ստանձնեց, առանց սակայն աշխարհում ձայն ու աղ-
մուկ հանելու: Նրա պատմութիւնը մեծ չէ, բայց ար-
ժանի է ուշադրութեան. դրան ծանօթանալու համար՝
բաւ է որ դուք թերթէք այս յիշատակարանը, որ ես
դնում եմ ձեր առաջ՝ այն քաղցր մտածութեամբ թէ՛
եթէ ձեզանից որ և է մէկին վիճակուած է ժառան-
գել այս միանձնուհւոյ հոգին, ապա իմ յիշատակարանը
կարող է նրան սփոփել և մանաւանդ թէ կազդուրե՛ր
եթէ բարձա՛ծ խաչի ծանրութիւնը յոգնեցնէ այդ խա-
չակրին:

188* Մայիս 25 X. քաղաք:

Մայիսը վերջանում է: Արևի ճառագայթները ջեր-
մացնելու փոխարէն սկսել են այրել. քաղաքի օդը
գնալով թանձրանում և ապականւում է: Բժիշկը խոր-
հուրդ է տալիս ինձ՝ հեռանալ ամառանոց, որովհետև
նա էլ գիտէ որ դեռ կամենում եմ ապրել:

Մեր ամառանոցները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մեր
գաւառի հովաճար գիւղերը, կպած լեռների կանաչ
լանջերին, կամ թառած բլուրների կատարների վրայ՝

ուր օդը գուարթարար, ջուրը անապակ և կեանքը
խաղաղ է միշտ:

Այդ գիւղերից մինը ես պիտի ինձ համար ընտ-
րեմ ամառանոց: Բարեկամներիցս ոմանք խորհուրդ են
տալիս ինձ՝ շատ չընեռանալ քաղաքից, որպէս զի թէ՛
իրենք միջոց ունենան ինձ այցելելու և թէ՛ իմ օրերը
միօրինակ չանցնեն: Բայց ես որոշել եմ հեռանալ այն-
պիսի գիւղ, որ քաղաքից կտրուած լինի շատ ու շատ
լեռներով: Ցանկանում եմ ապրել այնպիսի մի տեղ,
ուր մարդկանց հետ միասին ապրում է նաև նահա-
պետականութիւնը, ուր կեանքի պարզութեան հետ՝
պահպանւում է նաև բարքի մաքրութիւնը, սրտի ան-
կեղծութիւնը: Ես յոգնել ձանձրացել եմ սովորական
կեանքից, սովորական մարդկանցից և, մանաւանդ թէ՛,
սովորական բարեկամութիւնից, որն իւր մէջ՝ ինձ հա-
մար՝ չունի այլ ևս ոչինչ նոր ու նրա անխար-
արդէն պարում եմ նախկին մարդն ու նրա անխար-
դախ և, թէկուզ, կիսով չափ վայրենի ընկերակցութիւնը:

Գուցէ այս էլ նետրդային հիւանդութեան քմա-
հաճոյք է, ինչպէս բժիշկս է նկատում, չըգիտեմ, միայն
ինձ թւում է թէ՛ այդ տեսակ ընկերակցութեան մէջ
իմ սիրտը հանգիստ և հոգիս խաղաղ պիտի լինի: Այս-
տեղ էլ, ճիշդ է, ոչ ոք չէ վշտացնում ինձ, ամենքն
աշխատում են իմ սիրտն ուրախացնել, ինձ հաճոյ
լինել, բայց այդ նպատակի համար գործ դրած եղա-
նակն իսկ տհաճութիւն է պատճառում ինձ: Չըգիտեմ,
չըջապատիս մէջ է անկեղծութիւնը պակասում, թէ՛
իմ մէջ հաւատը. այսքանը միայն կայ՝ որ քաղաքում

ամեն ինչ ձանձրացնում է ինձ: Ես կարծում եմ թէ՛ միայն ազատ բնութիւնն է, որ անհաճոյ ոչինչ չունի իւր մէջ: Այժմ կը փորձեմ ապրել նրա գրկում:

Յունիս 1. Դ. գիւղ:

Այսօր առաւօտ ժամ 5-ին դուրս եկանք քաղաքից ձիով: Ինձ ընկերակցում է Պետօ անունով մի գիւղացի երիտասարդ, որ, միևնոյն ժամանակ, իմ առաջնորդն է: Դա մի բարի տղայ է, առողջ կազմուածքով և հաճելի դիմազօծերով: Նա ճարպիկ է, թեթևաշարժ և, ըստ երևոյթին, քաջասիրտ: Բայց սիրում է շատախօսել, մանաւանդ, երբ կարգը գալիս է իւր քաջութիւնները պատմելուն: Ուրիշների քաջութեան մասին էլ չէ զլանում երկարել, եթէ միայն ինքը մասնակից է եղել նրանց գործերին: Երկու դէպքումն էլ համբերութեամբ լսում եմ, որովհետև տեսնում եմ որ լաւ ընկեր է և փորձուած առաջնորդ: Իսկ այդպիսի մարդկանց՝ արժէ երբեմն վճարել համբերութեան մի թեթև հարկ:

Արդէն մի քանի փարսախ հեռացել էինք քաղաքից, երբ չոր ու ցամաք խճուղուց ազատուեցանք: Իրաւ որ հաճելի չէ ձիով ճանապարհորդել այդ կոշտ ու փոշոտ ճանապարհների վրայ: Ինձ թւում է թէ՛ նոյն իսկ ձիաներն ուրախանում են, երբ դուրս են գալիս կարծր ճանապարհից: Կանաչով ու թուփերով եղերուած արահետը նրանք անցնում են աւելի աշխոյժով:

Այստեղից մեր առաջ տարածուած են ցորենի ընդարձակ արտօրաններ: Ամարային հովը փչում է հանդարտ, բարձրահասակ հասկերը խոնարհում են նրա առաջ ոսկեփայլ գլուխները և կարծես մի զօրեղ հրամանից ազդուած՝ միմեանց հրելով վազում են առաջ:

— Տեսնում ես, արտը «գնում է հօրանց», ասում է ինձ Պետօն ժողովրդի ստեղծած այլաբանութեամբ:

Արդարև, թւում է թէ՛ արտը շարժւում է, գնում դէպի առաջ: Եւ նրա այդ խաղաղ, մեղմաշարժ հոսանքը հանգստացնում է նեարդերս, ազդելով հոգուս յոյգերից ազատ մի առոյգ կենդանութիւն: Քիչ յետոյ արդէն ճանապարհն անցնում է այդ արտերի միջով: Ազահ երկրագործն երկու կողմից հերկելով՝ այնքան է նեղացրել անցուղարձի ուղղին որ մենք շատ տեղ ստիպուած ենք միմեանց ետևից գնալու, որպէս զի միտհաւասար ձիավարելուց՝ արտերը չըկոխտանք, որ ըստ ինքեան յանցանք է: Վասն զի եթէ ամեն ճանապարհորդ մի քանի հասկ պակսեցնէ, զրանով արդէն գիւղացին կը զրկուի մի քանի խուրձերից:

Հեռուից, լեռան կրճքին կպած՝ երևում է Դ... գիւղը, ուր մենք այս գիշեր պիտի իջնանենք: Բայց մինչև այնտեղ հասնելը դեռ բաւական ճանապարհ կայ: Դաշտերի վերջանալով՝ սպառուում են նաև արտերը և մենք այնուհետև բարձրանում ենք դէպի վեր: Ճանապարհն այժմ անցնում է ընդարձակ մացառուտի միջով և որովհետև ձիերը դանդաղ են գնում, ուստի Պետօն սկսել է մի պատմութիւն, որի նիւթը վերաբերում է հենց այդտեղ կատարուած մի սպանութեան:

Ճանապարհորդութեան ժամանակ հաճելի է լինում պատմութիւններ լսելը, մանաւանդ երբ ստիպուած ես ձիերի կամքով առաջ գնալ: Ես էլ լսում եմ Պետօին, բայց նրա պատմութիւնը հետաքրքրական չէ: Նա սովորական դէպքերից մինն է:—Երկու թուրք Ղլաղ գիւղից մի ձի են գողանում. ղլաղեցի երկու հայ ընկնում են նրանց ետեւից. թուրքերը փախչում են, հայերը հետևում են, թուրքերը հասնելով այս մացառուտին՝ թագնւում են թփերում. հայերը հասնելով մինին սպանում՝ միւսին փախցնում են, իսկ ձին վերադարձնում: Բոլոր պատմութիւնը այս էր, բայց Պետօն պատմեց մի ամբողջ ժամ, այնպէս որ նրա պատմութեան հետ մացառուտն էլ վերջացաւ և մենք սկսանք իջնել դէպի մի խորածոր:

Արդէն կէս օր էր. արևը կանգնած էր մեր գլխին: Բաւական ճանապարհ էինք կտրել. պէտք էր մի փոքր հանգստանալ, մի փոքր ճաշել և մի փոքր էլ կեր ու հանգիստ տալ ձիերին: Այդպէս էլ արինք:

Պետօն առաջնորդեց ինձ դէպի ձորամէջը, անցաւ այգանդ հոսող առուակի վրայից և նրա ուղղութեամբ դէպի խորն առաջանալով՝ կանգ առաւ մի բարձր և ստուերաշատ կաղնու տակ: Երբ իջանք ձիերից, այդ ժամանակ միայն նշմարեցի վճիռ ու յորդ աղբիւրը, որ բղխում էր կաղնին պատող ժայռերի տակից և հեզասան մրմունջով հոսում դէպի ձորամէջը:

—Օհ, ինչ հրաշալի տեղ բերիք ինձ, Պետօ, բացականչեցի հիացած, այստեղ կարելի է ամբողջ օրերով մնալ:

—Այստեղ կարելի է միայն լուացուել, ճաշել և մի ժամ քնել, նկատեց Պետօն:

—Ուրիշ ոչինչ, հարցրի ես:

—Մէկ էլ ինձ ու քեզ նման քաջերին թալանել, պատասխանեց նա և սկսաւ ծիծաղել:

Ես էլ ծիծաղեցի, բայց ոչ Պետօի չափ սրտանց: Նրա կատակի մէջ կար մի ճշմարտութիւն, որ չափաւորեց իմ ծիծաղը: Այդ տեղն, արդարև, բանաստեղծական գեղավայր էր. բայց զուրկ չէր նաև գլուխներ թոցնելու յարմարութիւնից: Իսկ գլուխ թոցնողներ, մանաւանդ ամրան ամիրաներում, երբ թափառական ցեղերը դաշտերից չւում են լեռները, վխտում էին ամեն տեղ՝ Իմ ուրախ տրամադրութիւնը փոխուեցաւ. բայց ոչ նրա համար որ աւազակներից վախեցայ, այլ որովհետև սկսայ մտածել թէ՛ այս երկրի խաղաղակեաց և աշխատասէր ժողովուրդը իւր ո՞ր մեղքերի համար է դատապարտուել աւազակ ու մարդասպան դրացիների հետ կենակցելու:)

Այս մտածմունքներն, արդարև, կնձուեցին իմ ճակատը. բայց ես անձնատուր չեղայ նրանց, որովհետև յիշեցի բժշկիս խօսքը թէ՛ մի՛ մտածիր այն ցաւերի մասին, որոնց դարմանելը վեր է քո ուժից: Ուստի մօտենալով ականակիտ աղբիւրին՝ առատօրէն լուացուեցայ նրա սառը ջրով և ապա պայուսակս բանալով՝ հանեցի պաշարի կապոցը և սեղան պատրաստեցի: Պետօն, որ ձիերը տարել էր արօտի կապելու, վերադարձաւ և մենք նստանք ճաշի:

Որպէս զի տրամադրութիւննիս նորէն զուարթա-

նար, ես զօր տուի բարերար զինուն և սխալ չարի: Կէս ժամից յետոյ մենք ոչ միայն ուրախ ծիծաղում, այլ և երգում էինք: Ամեն մտածմունք մոռացուել էր: Եւ ինչը՞ չէ մոռացուում աշխարհում...: Որքան թշուառ կը լինէինք մենք, եթէ մոռանալու ունակութիւնը չունենայինք: Արդարև, կան ցաւեր, որոնց չըպէտք է մոռանալ. բայց որքան շատ են և այն վշտերը, որոնց եթէ չըմոռանայինք, կեանքը մեզ համար կը դառնար դժոխք:

Ճաշը վերջանալուց յետոյ՝ ես քաշուեցայ կահնու առաւել ստուերաշատ կողմը. Պետօի այծենակածը (եափնջի) փոեցի խոտերի վրայ և պայուսակա բարձի փոխարէն գլխիս տակն առնելով՝ քաղցր քուն մտայ:

Ի՞նչ արաւ ինձանից յետոյ Պետօն, չըգիտեմ, միայն երբ ինձ զարթեցրեց, արդէն ժամի չորսն էր և արևը հակուած դէպի արևմուտք: Երեկոյի գովը փչում էր ախորժ, իսկ ձորալանջին երգում էին սարեակները՝ մի թուփից՝ միւսի վրայ թռչկոտելով:

Ամեն բան պատրաստ էր: Ես կրկին մօտեցայ յորդանոս աղբիւրին, նայեցի մի բոպէ նրա վճիա վիժակին, ախորժանօք լուացուեցայ և ապա ձիերը նստելով՝ շարունակեցինք ճանապարհը, որ ձորից սկսած բարձրանում էր դէպի վեր:

Անցնելով մի մեծ թաւուտ, որ տարածւում էր մինչև հանգիստակաց սարահարթը, այստեղ նորէն մեր առաջ բացուում էին ցորենի և գարու արաբեր, որոնք սակայն մեծ մասամբ դեռ կանաչ էին՝ բարձր ու հովանար դիրք ունենալու պատճառով: Դալարի անոյշ

բոյրը գգւում էր այստեղ մեր հոտտակիքը մի առանձին քնքշութեամբ: Եւ չընայելով որ արևը տաքացնում էր դեռ, այսուամենայնիւ, ցուրտը զգալի էր սարահարթում:

Երկու ժամաչափ ճանապարհորդելուց յետոյ, մենք պատահեցինք գիւղի հարուստ նախրին, որ վերադառնում էր արօտից: Տուարածները ուրախ և անհոգ, կատակներ անելով ու երգելով առաջ էին գնում, չշտապելով բնաւ որ շուտ հասնեն տուն, որովհետև ամեն տեղ նրանց նոյն երկինքը և նոյն հանգստարանն էր էր սպասում: Եթէ աւազակների երկիւզը չըլինէր, էր սպասում էլ չէին վերադառնալ դաշտից, որովհետև գիւղում ոչինչ չէր աւելանում նրանց՝ ինչպէս և գաշտում չէր պակասում ոչինչ:

Մի փոքր ժամանակ տուարածներին ընկերանալուց և նրանց անմեղ կատակներով զուարճանալուց յետոյ՝ առաջ վարեցինք մեր ձիերը և արևը մայր մըտնելու մօտ՝ հասանք գիւղի աղբիւրին, որ գտնուում էր շէնից ներքև, կազամախներով հովանաւորուած մի ձորակի մէջ: Աղբիւրի առաջ դրուած էր անագին ձորակի փորած նաւակ, որ անասունների բնապահն էր: Այդ իսկ ժամին՝ սափորները ձեռքերին՝ շրջապալէր: Եթէ նաւակը բազմաթիւ հարս ու աղջիկներ, տած էին նաւակը բազմաթիւ հարս ու աղջիկներ, որոնցից իւրաքանչիւրը սպասում էր իւր հերթին առանց ձանձրանալու: Որովհետև գեղջկուհիների ապառանջ տեսակցութեան տեղը միայն աղբիւրն է, ուր կարողանում են նրանք լսել որ և է նորութիւն, կամ հաղորդել այդպիսին ընկեր-հարեանի: Ա. դ իսկ պատ-

ճառով, նրանցից ամեն մինը սիրով օգտուում էր հերթին սպասելու համար սահմանուած ըտպէներէից:

Երբ մենք մօտեցանք փորածոյ նաւակին մեր ձիերը՝ ջրելու, իսկոյն հարսները մի կողմը քաշուեցան՝ երեսները դէպի կաղամախներն, իսկ թիկունքները դէպի մեզ դարձներով. բայց աղջիկները չըհեռացան. նրանք հետաքրքիր աչքերով դիտում էին, մանաւանդ, ինձ, որ երևի իբրև քաղաքացի, մի բանով արժանանում էի նրանց հետաքրքրութեան:

Երբ ձիերը յագեցան, Պետօն առաջնորդեց ինձ դէպի տանուտէր Ակոբի տունը: Բայց մինչև այդտեղ հասնելը բաւական թուով շներ թափեցան մեզ վրայ և սկսան իրենց անընդհատ հաջիւնով հետևել մեզ: Նրանցից սրտոսները գնում էին առաջից՝ աշխատելով իրենց աղմուկով ձիերի ընթացքը կասեցնել, իսկ թոյլերը գալիս էին ետևից և ծուլաբար ոռնում: Թուում էր թէ գիւղում աղամարդ չկայ: Տների սրահներում (էյվան) երևում էին միայն կանայք, որոնք կամ ճախարակն էին հաւաքում, կամ հաւերը տուն անում և կամ վառած թոնրի ու օճախի շուրջը պտտում: Իսկ բակերում և կաուրների վրայ խաղում ու վազվզում էին բոկոսն ու կիսամերկ երեխաներ:

Բոլորովին անսպաս տեղից դուրս եկաւ գիւղի գգիբը, որ իւր հոնի երկար մահակով հաւաքուած շներն այս ու այն կողմը ցրելով՝ ազատեց մեզ նրանց անախորժ երաժշտութիւնից:

Եւ անս այժմ մենք տանուտէր Ակոբի տանն ենք: Մեր հիւրընկալը մի բարի, անկեղծ և ուրախ մարդ է:

Թէյից յետոյ, որը մեծ ախորժակով խմեցինք, նա պատրաստել տուաւ մեզ համար հարուստ ընթրիք, որ բաղկացած էր իւր տան մէջ գտնուած բարիքներից: Դրա հետ միասին՝ նա հիւրասիրեց մեզ պատուական գինով, որն իւր ասելով՝ պահում էր պրիստաւի համար:— «Բայց հոգ չէ, դու էլ պրիստաւից պակաս մարդ չես», ասում էր նա պարզութեամբ և բաժակները լցնում:

Տանուտէրը միայն մի մաքուր սենեակ ունէր, որ պահում էր քաղաքացի հիւրերի համար: Այդտեղ, փայտեայ մահճակալի վրայ, նա պատրաստել տուաւ մաքուր անկողին և հրաւիրեց ինձ հանգստանալ: Եւ ինչ հաճելի հրաւէր էր այդ. երբէք այնպիսի հոգեզմայլութեամբ չէի մտել իմ քնարանը, ինչպէս այս դիշեր. հաւատում էի որ աչքերս պիտի բանամ արշալուսի հետ, այնքան մարմինս յոգնած ու թուլացած էր:

Յունիս 2, Ն. գիւղ.

Առաջնորդս արի մարդ է. արշալոյսը դեռ չըշառագունած՝ զարթեցրել է ինձ: Կարծում էի թէ գիւղում ես ու Պետօն ենք միայն արթուն, բայց դուրս եմ գալիս տեսնում որ ամեն տեղ էլ շարժումն սկսուած է: Տուարածն իւր նախիրը տանում է արօտ. խոտահարը գերանդին ուսին՝ դուրս է գնում դաշտ. սայլորդը եգները լծած՝ վարում է անտառ. հարս ու աղջիկներ կուժերը ուսին՝ գնում են ջրի, կամ

դառնում աղբիւրից. հիւրընկալիս մայրը վաղուց նստած էյվանում, շիլա դօշակի վրայ՝ վզգացնում է ճախարակը, իսկ հարսը մեզ համար պաշար է պատրաստում: Ինչ վերաբերում է տանուտէր Ակոբին, նա ծալապատիկ նստած սրահի թախտի վրայ, ինքնայեռը կողքին, բաժակները մաքուր սրբած՝ սպասում է՝ գիւղացուն հպարտացնող թէյով մեզ հիւրասիրելու:

Ես իմ կողմից, ի հարկէ, սպասել չըտուի. ծալապատիկ նստայ հիւրընկալիս մօտ և սկսայ վայելել նրա սրտեռանդն հիւրասիրութիւնը: Մենք կաթով թէյ խմեցինք, նոր կարած մեղրով սեր ու կարագ կերանք և վերջը մի համեղ ձուագեղ սպառելով՝ վեր կացանք: Տանտիկինը պատրաստած ճանապարհի պաշարը յանձնեց Պետօին, որ դրաւ իւր պայուսակում:

Երբ ամեն ինչ վերջացաւ, շնորհակալութիւն արինք տանուտէր Ակոբին և նրա ամուսնուն՝ մեզ ցոյց տուած քաղցր հիւրասիրութեան համար և ճանապարհ ընկանք:

Մի քանի փարսախ հեռացել էինք գիւղից՝ երբ արեգակը մշուշով ծածկուած լեռների ետևից իւր հրափայլ գունդը հանեց և խտողիչ ճառագայթները սփռեց կանաչագարդ բլուրների և արտերով ծածկուած գաշտերի վրայ: Ինչ հրաշալի էր այդ ժամանակ Սիւնեաց երկրի բնութիւնը. նա կարծես նոր էր մարմին առնում Արարչապետի ձեռքից: Հրաշալի էր, մանաւանդ, այն վայրկենին, երբ ազօտ մշուշը տեղի տալով արևի պայծառ շողերին, երևան էր հանում գեղեցիկ լեռները, բլուրներն ու հովիտները, որոնք

ասես խնդում, ծիծաղում էին: Բազցրաշունչ գեփիւոր, որ հեռուից թռչելով քերում էր բուրակներն ու կանանչ մարմանդները, գալիս շփուում էր դէմքիս այնպէս մեղմ ու անսւշ որ նրան լիովին վայելելու համար՝ ցանկանում էի ձիուս ընթացքը կասեցնել:

Երբ գիւղի սահմաններն անցնելով՝ սկսանք առաջին լեռնալանջը բարձրանալ, առաջնորդս յայտնեց որ այդտեղից սկսում են Ն. գիւղի դժուարագնաց ճանապարհները, որոնք շարունակ անցնում են սարերի, ձորերի և գետերի վրայով: Մենք ուրեմն մտնում էինք Սիւնեաց երկրի լեռնային թագաւորութիւնը, որի սահմանն սկսւում էր հանդիպակաց լեռան բազուկներից:

Ճանապարհը, որով բարձրանում էինք, կոշտ առապար էր, ուստի ձիերը մեծ նեղութիւն կրեցին, մինչև հասան սարի բաշը. այդ տեղից ահա մեր առաջ բաշուեցաւ փառաւոր անհունութեան մի ակնապարար տեսարան:— Դա լեռների, բլուրների և սարահարթերի մի լայնածաւալ տարածութիւն էր, որի միջից մի ընդարձակ խորածոր, տեղ տեղ անասառապատ, ձգւում էր հիւսիսից դէպի հարաւ՝ անսահման երկարութեամբ: Նրա լայնագիր խորքերը դեռ բռնուած էին ծուխի պէս թանձր մշուշով, որով և խորածորը ջրապարփակ ծովածոցի նմանութիւն էր բերում: Հետզհետէ առաջանալով՝ մենք տեսնում էինք հեռւում արևով ողողուած հովիտներ, մարգեր ու մարմանդներ, որոնց վրայ ճապաղում էին ոչխարի հօտերն

ինչպէս միջօրէի սպիտակ ամպեր՝ լողացող կապուտակ երկնակամարի վրայ: Դրանց յաջորդում էին բազմաթիւ թումբեր ու բլուրներ, որոնցից մօտիկները կանաչով, իսկ հեռաւորները՝ մշուշով ծածկուած. ապա շղթայաշար լեռներ, որոնք կոնակաւէտ բաձրութիւններով յաջորդում էին միմեանց, մերթ ահարկու և պարեխաւոր՝ մերթ անտառապատ և գեղատեսիլ գագաթներով:

Մեր ճանապարհն առ ժամանակ սարի բաշտփն էր անցնում: Ապա իջանք ձորի եզերքը, ուր մի նեղ կածան գնալով հակուում էր դէպի անդունդը: Ձիերը այդտեղով քայլում էին զարմանալի զգուշութեամբ, որովհետև ամենափոքր տատանումը կարող էր գլորել նրանց դէպի ահարկու գառիվայրը, որի ստորոտը անտեսանելի էր վերեկից: Քիչ ժամանակից յետոյ՝ նորէն սկսանք բարձրանալ, բայց այժմ արդէն չոր բլրակի կողերով, որոնց վրայ բարձրից հոսող հեղեղները պատառուածքներ բանալով՝ աննշմարելի էին կացուցել ճանապարհի հետքերը: Ձիերը շարունակ սահում էին այդ գառիվայրի վրայ, որովհետև հողը փխրուկ լինելով՝ փշրում էր նրանց ամբակների տակ:

Բարեբաղդաբար անախորժ ճանապարհը կարճ էր: Բլրակը անցնելուց յետոյ մենք մտնում էինք մի կանաչ թաւուտ, որին ապա յաջորդում էր գեղեցիկ անտառ: Այստեղ արահետը թէպէտ անհարթ ու մանուածապատ, սակայն հետզհետէ հովանաւորում էր սաղարթախիտ ծառերով: Արևի ճառագայթները չէին թափանցում և մենք շարունակ գնում էինք բնական

ծառուղիների միջով: Օդը թեթև ու ախորժելի էր և սողորուած նուրբ բուրմունքով: Փոքրիկ դեփուռը, որի շունչը չէր լսում բաց ճանապարհի վրայ, այստեղ, ծառերի մէջ մի ախորժալուր շրշիւն էր հանում: Չընայելով որ այս ուղղութեամբ մենք բաւական ճանապարհ անցանք, այսուամենայնիւ, անտառը դեռ չէր վերջանում և ծառերն անընդհատ հովանաւորում էին մեզ: Այդպիսով մենք անցնում էինք մեծ և փոքր ձորակներ, մանր ու խոշոր բլրակներ, քերում էինք սարերի կողերը, թեքում աջ, թեքում ձախ և սակայն շարունակ անտառի միջով: Անշուշտ արևը այրում էր դրսում, վասն զի թուշունները ձայն չէին հանում, բոլորը դարել, դադարել էին բունիկների մէջ: Միայն անհանգիստ ճնձղուկներն էին, որոնք չըթչըթում էին արեգընդդէմ մացառներում, կամ մի քանի սարեակներ, որոնք մի ծառից միւսի վրայ թրուշ կտատելով՝ լսեցնում էին մեզ իրենց փափուկ շվշվոցը:

Շուտով հասանք մի տեղ, ուր ընդարձակ տարածութեան վրայ, ծառերի փոխարէն, շեղջակոյտ դարսուած էին հսկայածե ժայռեր ու խոշոր ամբարտակներ: Ինձ թւում էր թէ անտառն արդէն վերջացաւ: Բայց Պետօն բացադրեց որ տարիներ առաջ՝ այդ տեղը նոյնպէս ծածկուած էր ծառերով. սակայն մի սասնոյնպէս ծածկուած էր լեռան կողերից իջած տիկ երկրաշարժի ժամանակ՝ լեռան կողերից իջած այդ փլուածքը ծածկել է անտառի ծառազարդ մասը և նրա հետ միասին անհետացրել մի յորդ աղբիւր, որ և իրաւ էր հենց նոյն փլած տեղի վրայ: Եւ իրաւ, բղիւում էր հենց նոյն փլած տեղի վրայ: Եւ իրաւ, երբ այդ քարակարկառն անցնելով՝ խոտորեցինք

սարի աջակողմը, տեսանք որ իսկապէս այս տեղից է սկսուում իսկական անտառը, ուր սակայն ծառերը խիտ չէին այնպէս, ինչպէս մինչև այժմ: Այստեղ մի ծառի բունը հեռու էր միւսից հինգ կամ տասը քայլով, բայց և այդ ծառերը մի մի բուրգեր էին: Մի տեղ հինաւուրց կաղնին իւր հսկայ բունով և անագին ձիւղերով գրաւում էր գետնի մի ընդարձակ շրջապատ, ճնշելով իւր հովանու տակ փոքրիկ ու նիհար ծառեր: Մի ուրիշ տեղ՝ հաճարուկն իւր անոստ բնով ձգուելը բարձրացել էր ինչպէս սրբազան տաճարի սիւնը և պսակած և կատարը մատնել հողմերին: Նրանցից հեռու խրոխտաբար կանգնած էր հաստարմատ հացին, հաստաբուն ճիւղերով և մանր ու սուր տերևներով: Սրան մրցակից էր մեծափառ սօսին՝ բրգած և բունով և լայնասողարթ ոստերով: Մի փոքր հեռու տատանում էին ուղղաբերձ կաղամխը, սգատերև նօճին և այլ բազմազան ծառեր, որոնք տասնեակ հազարներով ծածկում էին սիւնեաց այդ դժուարագնաց լեռները՝ ձորերը և լանջերը:

Այդ միջոցին, իսկապէս, մենք գտնուում էինք ամենաբարձր լեռներից մէկի լանջին, որտեղից, ծառերի միջով դէպի վար նայելուց՝ երևում էին մեզ այն բլուրներն ու ձորերը, որոնց վրայով քիչ առաջ անցել էինք. զարմանում էի որ այժմ գտնուում ենք այդպիսի բարձրութեան վրայ, ուր հասել էինք գրեթէ անզգալի կերպով: Օգը սակայն այստեղ խոնաւ էր և ցուրտ, հողմի շունչը նոյնպէս աւելի զգալի, իսկ գետինը՝ արևի պակասութեան պատճառով կանաչագուրկ և

թաց: Անտառի լուսեան մէջ, որ զգալի էր լինում հողմի վայրկենական գաղարից յետոյ, տարօրինակ ձայներ էին հանում մեր ձիւղի քալուածքը, նա մանաւանդ ցետոտ տեղերում, ուր թոււմ էր թէ՛ չարածճի տղաներ լճակի ավին կանգնած՝ քարեր են ճղփացնում նրա խաղաղ ջրի մէջ:

Կէս օրից քիչ անցած՝ հասանք մի յորդ աղբիւրի, որ բղխում էր մամոսպատ ժայռերի միջից և կարկաչելով թափւում դէպի ձորակը տանող զառիվայրը: Նրա մօտ իջանք ձիւրից, լուացուեցանք և նստելով մի կնձենու հովանիում, բացինք տանուտէրի կնոջ մեզ համար պատրաստած պաշարը, որ բաղկացած էր տապակած վառեկներից, եփած ձուերից, պանրից և մի քանի հատ նոր թխած հացերից: Եւ որովհետև այսօր երէկուայ ժամանակից ուշ էինք ճաշում, այդ պատճառով էլ աւելի քաղցած էինք: Եւ չընայելով որ գինին քիչ էր և նրա պակասը ստիպուած էինք աղբիւրի սառը ջրով լրացնել, այսուամենայնիւ, ճաշն արինք մեծ ախորժակով:

Մի փոքր հանգստանալուց յետոյ, երբ պատրաստուում էինք մեր ճանապարհը շարունակել, նկատեցինք որ ամպերը հիւսիսը ծածկեցին և կամաց կամաց առաջանալով՝ տարածւում են արդէն մեր գլխի վրայ:

— Անձրև պիտի ուտենք, նկատեց առաջնորդս:

— Կարծում ես որ կանձրևէ, հարցրի ես:

— Փառք պիտի տանք եթէ միայն անձրևէ. ես փոթորկից եմ վախենում, պատասխանեց Պետոն յօնքերը կիտելով:

րոպէ սպասում մի դժբաղդութեան, որովհետև շարունակ իջնում էինք ներքև, իսկ ձիերի սմբակները գետինը չէին բռնում, նրանք շուտ շուտ սահում և գրեթէ մեծ մասը փորի վրայ էին սուրում: Իսկ անտառը, որ արև ժամանակն արդէն ստուերաշատ էր, փոթորկի պատճառով, համարեան, մթնել էր. միայն թուխ ամպերի մէջ շուտ շուտ փայլատակող կայծակն էր, որ ընդհատ լոյս էր սփռում նրա մէջ և ապա անեղ որոտմունքով ծմակի խորքերը դղրդեցնում: Այս դրութեան մէջ շարունակեցինք ճանապարհը գրեթէ մի ժամ:

Ապա քամին քիչ քիչ դադարեց, փայլակն սկսաւ շողալ մերթ ընդ մերթ և որոտը լսում էր երկնքում աւելի խուլ: Այդ նշան էր որ փոթորիկն անցել է հեռու կողմեր: Բայց անձրևը տեղում էր նոյն ուժով: Նրա ձայնը, որ այժմ չէր ընդհատուում ոչ քամու մոնչիւնով և ոչ ամպերի գոռոցով՝ լսում էր անտառի մէջ ինչպէս վարարած գետի խոխոջ, կամ բարձրից հոսող ջրվէժի շառաչ: Շարունակելով ճանապարհը, շուտով հասանք մի հեղեղատի, որից պիտի անցնէինք Ուզուն-Գարա կոչուած կիրճը մանելու համար: Բայց այդտեղից արդէն հոսում էր գետի չափ ջուր, որի մէջ մտնելն յանդգնութիւն էի համարում: Եւստի խորհուրդ տուի առաջնորդիս՝ մի առժամանակ սպասել, մինչև որ հեղեղը դադարէր և ապա թէ անցնէինք:

— Եթէ քո խորհրդին հետևեմ, այս գիշեր պիտի անտառում քնեմ, նկատեց Պետօն հեզնութեամբ. այս

ջուրը գնալով պիտի մեծանայ, ուստի որքան շուտ անցնենք, այնքան մեր օգուտն է: Այս ասելով նա մտրակեց ձին և աներկիւղ մտաւ հեղեղատը:

Ես ևս, կամ աւելի ճիշդն ասած՝ իմ աշխուժոտ ձին հետևեց նրա օրինակին և մենք յաջողութեամբ դուրս եկանք ձորակի հանդիպակացը: Անցնելով այդ լանջի վերը և յետոյ մի ուրիշ բարձրաւանդակ, այդ տեղից ապա իջնում էինք մի կանաչազարդ հովիտ, որ Ուզուն-Գարայի բերանն էր համարուում:

Այստեղ արդէն անձրևը հետզհետէ դադարեց և քամին սկսաւ երկնքի վրայ կուտակուած ամպերը ցըրել: Տեղ տեղ երևաց և պայծառ կապուտակը՝ արևելեան շքեղ փիրուզի գունով: Սրևի ճառագայթները ամպերի արանքից շեղակի թափանցելով՝ ոսկեգօծեցին անձրևից լուացուած լեռներն ու սարերը, իսկ նրանց կոհակաւէտ բարձրութիւնների վրայ՝ հրաշալի ծիածանն իւր կամարը կապեց:

Մինչդեռ ես հիացած նայում էի նրան և յիշում Աստուծոյ ուխտը Նոյի հետ՝ «Չաղեղն իմ եղից յամպս և եղիցի ՚ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր»։ Պետօն գլխարկը հանած խաչահանում էր և աղօթում:

— Ի՞նչ ես աղօթում, Պետօ, հարցրի նրան:

— Գոհանում եմ Աստուծուց, որ փոթորկից ազատուեցանք:

— Չազատուած՝ ի՞նչ պիտի լինէինք:

— Այն՝ ինչ որ ուրիշները:

— Այսինքն:

— Կայծակահար... ամեն տարի քանիսի՞ն է խը-
փում այդ կրակը հենց այս սարերում:

Ես նոր սկսայ խորհել զլխաւոր վտանգի մասին,
որ էր՝ փոթորկի ժամանակ ամպրոպների այդ հայրե-
նիքում գտնուելը: Բայց աւանդ, ես աղօթել չըկարո-
ղացայ. Ինձ պակասում էր Պետօի հաւատքն ու ջեր-
մեռանդութիւնը: Եւ հենց այդ պատճառով սկսայ
մտածել թէ՛ որ դէպքումն է մարդ աւելի երջանիկ-
արդեօք անցնէ՞ երբ հաստատ գիտէ թէ՛ ինչո՞ւ է անձ-
րեկից յետոյ ծիածանը կապում. թէ անցնէ՞ երբ յիշում
է Աստուծոյ ուխտը Նոյի հետ և հաւատով աղօթում...:

Աւելի առաջ գնալով՝ մենք մտնում էինք գրե-
թէ նոր աշխարհ: Օգն այստեղ աւելի պայծառ, արևն
աւելի փայլուն իսկ սղօթները՝ փչում էին անուշ:
Եթէ հեռուից չէրեւէին այն անտառապատ լեռները,
որոնցից մենք նոր էինք իջել և որոնց վրայ տեղ տեղ,
թանձր ծուխի պէս գեռ նստած էր մառախուղը,
մենք փոքր առաջ կրած մեր նեղութիւնը երազ կը
կարծէինք: Սակայն այսպէս է Սիւնեաց գեղեցիկ եր-
կիրը: Մի տեղ տիրում է անձրև, աղմուկ ու փոթո-
րիկ, միւս տեղ պայծառ արև, ջինջ կապուտակ և
բաղբը հովեր:

Արևը գնալով տաքանում և մեր թրջուած շորերը
ցամաքեցնում էր:

Ահա վերջապէս և Ուզուն-Գարան (երկայն ձոր):
Նա ձգւում է երկու կողմից բարձրացող շղթայաշար
լեռների միջով՝ մի քանի փարսախ երկարութեամբ,
երբեմն ուղղաձիգ և երբեմն աջ ու ձախ խոտորելով:

Նրան աղօսում է մի փոքրիկ գետակ, որը սակայն
ահարկու և անանցանելի է դառնում գարնան վերջե-
րում, երբ սարերի ձիւները հալչելով՝ աղբիւրանում
են դէպի ցած: Մեր անցնելու ժամանակ նոյնպէս նա
յորդ էր և նորեկ անձրևից պղտորած, իսկ նրա խո-
խոջը՝ կրճի մի քանի տեղերում՝ փոխւում էր խուլ
որոտման:

Ճանապարհն անցնում էր այդ գետակի երկարու-
թեամբ, այլ և երբեմն նրա երկու կողմից բարձրացող
սարերի դժուարագնաց լանջերով: Տեղ տեղ այդ
հանդիպակաց սարերն այնպէս էին միմեանց մօտե-
նում որ կարծես հսկայական պատուարներ էին՝ իրար
դէմ կանգնած և նրանց ահարկու ու միապաղաղ ժայռե-
րը, որոնք կախուած էին օդի մէջ, սարսափեցնում
էին տեղին անծանօթ անցորդին: Ուրիշ տեղ, ժայռե-
րի փոխարէն՝ կախւում էին կրճի բարձրութիւնների
վրայ հինաւորց ծառեր՝ կորացած ու մամռապատ
բուներով և նրանց մերկ ու բազմաճիւղ արմատները
ժայռերի վրայ ճապողելով՝ գալիս հասնում էին մինչև
ճանապարհի եզերքը և կամ նրա միջից անցնելով՝ թաղ-
ւում գետակի մէջ: Շատ տեղ էլ կրճի լանջերը ծած-
կուած էին ահարկու և անմատչելի անտառներով,
որոնք ձգւում, տարածւում էին մինչև սարերի ամե-
նաբարձր կատարները: Այդ անտառների անծանօթ
խորշերից խոխոջալով իջնում էին հարիւրաւոր առու-
ներ՝ երբեմն սիգաւէտ մարդերի վրայ գետահետելով,
իսկ յաճախ՝ ժայռերի բարձրութիւնից մեծաշառաջ
դէպի ձորերը գահավիժելով:

Շարունակելով մեր ճանապարհը բնութեան այդ շքեղ հանդիսարանի միջով, հետզհետե հանդիպում էինք նորանոր գեղեցկութիւնների:—Մի տեղ մեզ հիացնում էր հսկահասակ մի սօսի, որի բունը եօթ մարդու գրկաչափ էին ասում և որն իւր խոռոչի մէջ տեղատարափի ժամանակ՝ պատսպարում էր մի քանի զոյգ ուղևորներ: Այդ խոռոչը մի փոքրիկ խրճիթի չափ ընդարձակ էր և կամարակապ մատուռի նմանութիւն էր բերում: Սակայն նրա վրայ սաւառնում էին դեռ հաստաբուն ճիւղեր՝ առատօրէն պսակուած սաղարթախիտ ոստերով, որոնք, անշուշտ, մեծ հողմերի ժամանակ մաքառում էին նրանց հետ՝ ինչպէս բազուկները զօրաւոր հսկայի:—Մի ուրիշ տեղ, գետի ափին, ուղղաձիգ անկուած է միսպաղաղ մի քառաժայռ, մի քանի կանգուն բարձրութեամբ, ինչպէս փոքրիկ մի աշտարակ: Նա արձանագրութիւններ չունի, նա վայրենի է, ինչպէս այն լեռը, որի կրճից պուկուել ու գրորուել է, բայց նա աւելի դիտէ՝ քան մեր պատմութիւնները. նա այդ լեռնային աշխարհի երջանիկ և գժբաղտ օրերի յաւիտենական վկան է: Եւ թէ կարողանար խօսել՝ որքան յիշատակաց արժանի դէպքեր կը պատմէր մեզ, դէպքեր, որոնց յիշատակն այսօր կօրել, անհետացել է... կը պատմէր թէ՛ քանի քանի բանակներ, որոնց մասին չէ խօսել պատմութիւնը, մերթ ինդագին և մերթ յուսահատ եկել, անցել են իւր մօտից՝ հայրենի սահմանների վրայ կոռուելու համար. քանի՞սը յաղթական վերադարձել, քանի՞սը սպառնապուռ ջնջուել... թէ որքան ժողովուրդ, թշնամու

երեսից հալածական, Միւնեաց ամբողջիւններին ապաւինելու համար՝ իրար թևակոխելով՝ անցել են իւր մօտից. թէ որքան հալածանքների ու կոտորածների հանդիսատես է եղել ինքը և որքան ողբացել հայրենի երկրի աւերմունքների համար...: Կամ, գուցէ, պատմէր մի իթարական դէպքեր, որոնք սովորեցնէին մեզ՝ դէն ձգել մեզանից յուսահատութիւնը և շարունակ մեր անշարժութիւնը դատապարտող յուսատեսութիւնը և խրախուսուել լաւագոյն մարդկանց փառաւոր օրինակներով...:—Մի երրորդ տեղ պատահում է հրաշալի ջրվէժ, որ անագին աղմուկով թափւում է լեռան բարձրութիւնից և ամբողջ ձորը որոտումով լցնում: Նրա շառաչման արձագանքը՝ անլուրի երաժշտութեան նման՝ հնչում է մինչև անգամ հեռու լեռներում: Կանգնելով ջրվէժի առաջ և վայելելով անոյշ գովը, որ ուժգին հոսանքը սփռում է երեսից, ընդ նմին ցօղելով վրադ ջրի մղեղ փոշին, ցաւում ես որ միայնակ ես, որ գուցարական գեղեցկութեանց սիրահարները չեն ընկերանում քեզ, որպէս զի քո հայրենիքի բնական գեղեցկութիւններով պարծենայիր նրանց առաջ...—Վերջապէս մի չորրորդ տեղ դու ակամայ կանգնում, նայում ես կրճի երկու կողմից օդի մէջ կախուած միակտուր ամբարտակների, որոնք կենդանակերպերի նման գնալով մօտենում են միմեանց և այդպիսով յօրինում մի բնական կամուրջ՝ կրճի անդունդում որոտացող գետակի վրայ: Զուարճութեամբ լսում ես այն առասպելները, որ գիւղացին համոզմունքով պատմում է այդ կամրջի մասին, աշխատելով

հաւատացնել քեզ թէ՛ այդ հրաշալիքը սատանաներն շինել մեղաւոր հոգիներին դրա վրայով դէպի դժոխքը առաջնորդելու համար:

Արևը մայր մտնելու մօտ դուրս եկանք Ուղուն-Դարայից և սկսանք բարձրանալ դէպի Ն. գիւղի բարձրութիւնները, որոնք հետզհետէ մացառուտից ազատուելով՝ ծածկւում էին նոր գեղնոց արաերով: Ծանապարհը գնալով՝ լայնանում և արահետ էր դառնում: Մեզ պատահում էին գիւղացիներ, ոմանք լծած սայլերով, ոմանք բեռնաբարձ ձիերով ու աւանակներով, իսկ շատերը՝ միայնակ, մի ցուպ ձեռքերին կամ մի պարկ շալակած: Այդ բոլորից արդէն երևում էր որ մենք հեռու չենք այն գիւղից, որ իմ ամառային կայանն էր լինելու:

Յունիս 3.

Մութը կոխել էր: Լուսնի արծաթափայլ սկաւառակը յուշիկ բարձրանում էր լեռների ետևից և ազօտ լուսով սար ու ձոր լուսաւորում: Շրջակայ գառիվայրերը հետզհետէ ծածկւում էին արօտից վերադարձող նախիրներով ու հօտերով: Կովերի բառաչը, մաքիների մայիւնը, տուարածի հն-հօ-ները և հովուական սրնգի մելամաղձիկ երգը, որ հնչում էր մթապատ ձորամիջում, խառնուելով միմեանց, մի հաճելի աններդաշնակութիւն էին կազմում: Որքան մօտենում էինք գիւղին, այնքան աղմուկն ու շշուկը աւելանում

էր: Ն. գիւղը հասնելով՝ մենք իջանք տեղական քահանայի տանը:

Հայոց գիւղերում երկու տուն կայ, ուր ճանապարհորդը վստահութեամբ և առանց հարց ու փորձի կարող է իջնանել: Առաջինը՝ տանուտէրի տունը, որ աւելի պաշտօնական մարդկանց է հիւրընկալում, երկրորդը՝ քահանայի, ուր ամեն բարի հայ սիրով է ընդունւում: Թէպէտ հասարակ գիւղացին էլ իւր հիւրասիրութեամբ յետ չէ մնում այդ երկուսից, այսուամենայնիւ, ճանապարհորդը միշտ չէ վստահանում մօտենալ նրան՝ զգուշանալով աւելորդ նեղութիւն պատճառելուց:

Երբ ներս մտանք քահանայի տան բակը, մեզ իսկոյն դիմաւորեց մի բարձրահասակ և բարեկազմ երիտասարդ, որ ուրախ ժպիտով մեզ ողջունելուց յետոյ, մօտեցաւ ինձ օգնելու որ ձիուց իջնեմ: Ես ի հարկէ նեղութիւն չըտուի նրան և իսկոյն իջնելով՝ սեղմեցի ձեռք, որ նա կանխաւ ուղղել էր ինձ՝ առանց սպասելու որ ուղեկիցս յայտնէ նրան իմ ով լինելը:

Դա, ինչպէս յետոյ իմացայ, քահանայի ամուսնացած որդին էր:

Երիտասարդի հրամանով մի ծառայ սկսաւ մեր ձիերը պատեցնել մինչև որ նրանց քրտինքը ցամաքէր և ապա ախոռը տանէր: Իսկ մենք, հիւրընկալի առաջնորդութեամբ մտանք սրահը, ուր երիտասարդի ամուսինը մի ակընթարթում արդէն ընդարձակ թախտի վրայ վրձել էր մաքուր գորգ և վրան էլ օթոց:

Քահանան տանը չէր: Իմ հարցին թէ՛ ուր է նա.

երիտասարդը պատասխանեց թէ՛ դեռ եկեղեցուց չէ վերադարձել:

— Միթէ՞ այստեղ այդպէս ուշ են սկսում ժամերգութիւնը, հարցրի ես:

— Միայն շաբաթ երեկոնները, որպէս զի հանդից վերադարձողը կարողանայ եկեղեցի գնալ:

«Գեղեցիկ կարգ է», մտածեցի ես և հենց պատրաստուում էի հարցնել թէ՛ արդե՞օք հին սովորութիւն է դա, թէ՞ Տէր հայրն ինքն է սահմանել, մէկ էլ տեսայ որ վերջինս բազր մտաւ:

Իս բարձրահասակ, առողջակազմ, ալեխառն մօրուքով և քաղցրադէմ մի քահանայ էր, որ առաջին վայրկեանից իսկ ախորժ տպաւորութիւն արաւ ինձ վրայ: Նրան տեսնելուն պէս՝ ես ոտքի ելայ և յառաջանալով, համաձայն գիւղի սովորութեան, աջը համբուրեցի:

Տէր հայրը շատ սիրով ընդունեց ինձ և ձեռք բռնած՝ բերաւ իմ տեղը նստացրեց: Շուտով մենք ծանօթացանք միմեանց: Ես իմ ո՞վ, ո՞րտեղացի լինելը և ի՞նչ նպատակով իրենց գիւղը գալս յայտնեցի, իսկ ինքը, մանրամասն տեղեկութիւններով, ծանօթացրեց ինձ իւր անձին ու ընտանիքին:

Տէր Յովսէփ հայրը, ինչպէս ինքն ասաց, յիսուն և վեց տարեկան էր և քահանայի որդի: Ձեռնադրուած էր 1859 թուականին Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանից: Մարիամ ախրուհին 8 տարով իրենից փոքր էր և նոյնպէս քաջառողջ մի կին, որ Տէր-հօր գալուց յետոյ միայն եկաւ և բարեկեց ինձ: Նրանք ունէին

երկու որդի, որոնցից մեծը, Սարգիս անունով՝ մեզ ծանօթ երիտասարդն էր և 28 տարեկան լինելով՝ արդէն ամուսնացած և մի տղայի էլ տէր էր: Հարսի անունը Հերիքնազ էր, որ Տէր-հօր հրամանով եկաւ ինձ բարեկու և, գիւղական սովորութեան համաձայն, կամենում էր ձեռս համբուրել, բայց ես թոյլ չըտուի և միայն բարեկամաբար ձեռը սեղմեցի: Գեղեցիկ էր թէ՛ ոչ, չիմացայ, որովհետեւ երեսը ամբողջապէս ծածկուած էր շարղաթով — թէպէտ տեղական սովորութեան համաձայն՝ իբրև երեխայ ունեցող կին, նա իրաւունք ունէր արդէն երեսը կիսով չափ բանալու: Տէր հայրը գովում էր որ նա ժրագլուխ և աշխատասէր կին է: Քահանայի կրտսեր որդին, Յակոբը 25 տարեկան էր: Նրան նոր էին նշանել. այդ պատճառով էլ այդ օրը տանը չերկաց, որովհետեւ մերձակայ գիւղը՝ աներոջ տունն էր գնացել:

Տիրուհին ամենից առաջ շտապեց մեզ համար պատրաստել թէյ, որ վաստակած ձանապարհորդի համար ամենազիւրեկան ըմպելիքն է լինում: Եռացրեց նոյնպէս նոր կթած կաթ և զրա հետ միասին բերաւ նոր թխած գաթայ, որն իւր ասելով, նորահարսի համար այդ օրը պատրաստած և զրկած «պաշարից» էր:

Մենք վայելում էինք ախրուհու պատրաստած բարիքը և շարունակ խօսում: Տէր-հայրը խիստ հետաքրքրում էր ինձ իւր խօսակցութեամբ և յայտնած կարծիքներով: Դրանցից մի քանիսը լսելուց յետոյ, ես եկայ այն եզրակացութեան որ նա գոեհիկ քահանաների թուին չէ պատկանում: Իբրև գիւղական քահա-

նայ, նա մինչև անգամ աւելի բան գիտէր, բան սպասելի էր: Ինձ շատ զարմացրեց մանաւանդ այն՝ որ նոյն իսկ օրուայ խնդրի մասին, որ այդ ժամանակ կաթուղիկոսական ընտրութիւնն էր, նա նորութիւններ գիտէր և յայտնում էր բանաւոր կարծիքներ: Նա ծանօթ էր ոչ միայն Ներսէս պատրիարգի, Խրիմեան Հայրիկի և Մելքիսեդեք սրբազանի անուններին, այլ և նրանց գործերին, անձնական արժանիքներին և կենսագրութեանը: Նա հարցնում էր ինձանից նաև բացառութիւններ՝ նկատմամբ լրագրական այնպիսի ակնարկութիւնների, որոնք իւր ուշադրութիւնից չէին վրիպել: Իմ տարակուսանքն ի հարկէ փարատուեց, երբ իմացայ որ Տէր-հայրը ստանում է Թիֆլիսում հրատարակուող հայոց թերթերը: Հասկանալի է որ լրագիրը շատ բան կը սովորեցնէր նրան: Բայց և այնպէս այդ մեկուսացած լեռների մէջ՝ այսպիսի մի քահանայ տեսնելն ինձ համար մի հաճելի անակնկալ էր:

— Ինչպէս տեսնում էք, մենք բոլորովին կտրուած ենք աշխարհից, ասում էր Տէր-հայրը. օրհնուի լրագիր հնարողը. այս հեռու անկիւնում, ուր տարիներով քաղաքացու երես չենք տեսնում, մեր միակ մխիթարութիւնը լրագիրներն են: Մյնքան անձկութեամբ ենք սպասում նրանց, որ եթէ որոշեալ ժամանակից ուշանում են, իսկոյն ձի եմ նստում և նրանց ետևից, կէս օրուայ ճանապարհ—մինչև վանքը գնում: Քաղաքից կօնսիստօրը վանահօր անուամբ է զրկում թերթերը, իսկ հայր-սուրբը շատ անգամ ուշադիր չէ լինում ժամանակին հասցնելու:

Իմ հարցին թէ՛ այդ լրագիրները միայն ինքը, տէր-հայրն է օգտուում, թէ՛ ժողովրդին էլ մասն է հանում, նա պատասխանեց.

— Ինքս էլ շատ տարի չէ ինչ սկսել եմ լրագիր կարդալ: Օրհնուի մեր կոյսը, նա վաղուց էր թերթ ստանում և յաճախ կարդում ինձ մօտ, աշխատելով սիրելի անել ինձ իւր կարգացածները: Եւ իրաւ, մի տարուց յետոյ՝ ես այնքան սիրեցի լրագիրը որ կարևոր համարեցի ինքս ստանալ և անձամբ կարդալ, որպէս զի կոյսին միշտ նեղութիւն չըպատճառեմ: Փառք Աստուծոյ, ես նիւթապէս ապահով եմ և հեշտութեամբ էլ վճարում եմ լրագրի գինը: Երբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտացաւ, մեր կոյսը խորհուրդ տուաւ ինձ՝ հետաքրքրական և հեշտ հասկանալի կտորները կարդալ և հասկացնել նաև իմ ժողովրդին: Ես հետևեցի նրա խորհրդին և մի կիրակի՝ ճաշից յետոյ, երբ գիւղի գլխաւորները հաւաքուել էին ինձ մօտ, կարգացի նրանց առաջ լրագրի մի քանի կտորներ և բացաղբեցի: Այդ նորութիւնն այնքան զիւր եկաւ նրանց որ այդ օրից սկսած՝ ամեն կիրակի՝ ճաշից յետոյ հաւաքուում է մեր բակը բազմաթիւ ժողովուրդ և սիրով լսում է իմ ընթերցումն ու բացաղբութիւնները:

Տէր-հօր հաղորդածները ինձ համար հաճելի նորութիւններ էին: Այդպիսի քահանայի հովուութեան յանձնուած գիւղում, անկարելի էր որ, նաև, դպրոց չըլինէր: Ուստի ցանկացայ իմանալ՝ ունին թէ ոչ:

— Ինչպէս չէ և ինչ հրաշալի դպրոց, բացա-
ՄՈՒՐԱՅԵՆ Ա. ՀԱՏ.

կանչեց Տէր-հայրը հպարտութեամբ. եթէ տեսնէք կը հաւանէք: Օրհնուի մեր կոյսը, նա է հիմնողը, ինքն էլ կառավարում է:

Այս քանի՜երորդ անգամն էր որ «կոյսի» անունը լսում էի Տէր-հօրից, ուստի հետաքրքրուեցայ իմանալ թէ՛ ո՞վ է այդ կոյսը, արդեօք վարժուհի՞ է, թէ՛ որ և է անապատի հաւատաւոր կին:

— Այդ կոյսը քոյր-Աննան է, մի՞թէ չէք ճանաչում, հարցրեց ինձ Տէր-հայրը:

— Ո՛չ, չեմ ճանաչում, պատասխանեցի ես:

— Ամբողջ Սիւնիքը ճանաչում է մեր կոյսին, ամենքին յայտնի է նրա անունը, այդ ի՞նչպէս է որ դուք չէք ճանաչում:

— Այդպէս է, Տէր հայր, չեմ ճանաչում. անունն անդամ չեմ լսել:

— Ճշմարիտ էք ասում, հարցրեց քահանան գարմանալով:

— Ի հարկէ, ճշմարիտ, ի՞նչպէս կարող եմ ստել նկատեցի ես:

Տէր-հայրը սկսաւ մտածել. յետոյ ինքն իրեն մի քանի բառ շնչաց և ապա դառնալով ինձ՝ շարունակեց.

— Իրաւունք ունիք, որդի, մեր այս կորած անկիւնից ո՞վ է ձեզ համար լուր բերում: Ասենք թէ՛ շատ էլ բերին, ի՞նչ նշանակութիւն ունին ձեզ համար գիւղի նորութիւնները: Քոյր-Աննան և նրա գործերը մեր, գիւղացիներին աչքումն են մեծ բաներ երևում. ապա թէ՛ ոչ, դուք այնքան նշանաւոր մարդիկ ու գործեր ունիք որ մեր հսկաները թզուկներ կ'երեան ձեզ:

— Ասենք այդտեղ սխալում էք. մենք ոչ նշանաւոր մարդիկ ունինք, ոչ նշանաւոր գործեր. Բայց թողնենք այդ հարցը: Կարո՞ղ էք կոյս-Աննայի ո՞վ լինելն ինձ յայտնել:

— Ի՞նչպէս չէ, ասացի որ նա մեր գիւղական դպրոցի հիմնադիրն է և կառավարողը. այժմ աւելացնեմ՝ որ դասատուն էլ ինքն է: Նա մի բարի, ազնիւ և առաքինի կին է. ուղիղ տան և ինն տարի է որ գտնւում է մեր գիւղում: Իմ ձեռնադրութիւնից վեց տարի յետոյ եկաւ այստեղ: Այդ ժամանակ ո՞վ գիտէր թէ՛ ի՞նչ բան է գիւղական կանոնաւոր դպրոցը: Ես էի մի քանի տղաներ գլխիս հաւաքել և լաւ, վատ կարգացնում էի: Բայց երբ կոյս-Աննան եկաւ, նա իւր ծախքով և, ի հարկէ, նաև մեր օգնութեամբ շինեց դպրոցական տուն, որ անշուշտ կը տեսնէք: Նա հաւաքեց իւր մօտ թէ՛ տղայ և թէ՛ աղջիկ երեխաներ և սկսաւ կարդացնել: Այժմ մեր գիւղում քիչ երիտասարդ կայ, որ հայերէն գրել, կարդալ չիմանայ: Այս բոլորն էլ դպրոցը մօտ հարիւր յիսուն աշակերտ և աշակերտուհի ունի՝ ժողովուած թէ՛ մեր և թէ՛ շրջակայ գիւղերից: Դրանք բոլորն էլ կարդում են ձրիաբար: Եւ դեռ պէտք է գիտենալ թէ՛ կոյսի դպրոցն որքան գրադէտներ է տուել մեր գաւառին այսքան տարուայ ընթացքում: Ճշմարիտն ասած՝ այդ կոյսը մեր բարերարուհին է, մենք բոլորս պաշտում ենք նրան: Իմ ու տանուտէրի խօսքից աւելի՝ նրա խօսքն ունի արժէք գիւղացու համար. բոլորը նրան լսում են՝ ինչպէս իրենց իմաստուն մօրը: Եւ ի պատիւ նրա՝ պէտք է

ասել՝ որ մօր նման էլ խնամք է տանում գիւղացիներին վրայ. օգնում է կարօտեալին, այցելում է հիւանդին, պաշտպանում է այրիներին, անգոր որբուկներին, ես ո՞ր մէկն ասեմ: Սկսած այն օրից որ կոյսը մեր գիւղումն է, գրեթէ ոչ մի տան, կամ ընտանիքում խռովութիւն ու գժտութիւն չէ պատահել: Հենց որ լսում է թէ՛ մի տեղ անհամաձայնութիւն, վէճ կամ կռիւ կայ, խկոյն դիմում է այնտեղ և խաղաղութեան հրեշտակի պէս ամենքին հաշտեցնում, երբեմն խրատելով, երբեմն յանդիմանելով, բայց շատ անգամ էլ քաղցրութեամբ համոզելով: Իսկ ով համարձակում է քոյր-Աննային ընդդիմանալ կամ նրա խրատներն արհամարհել, նրա հետ այլ ևս ոչ ոք չէ խօսում, մինչև որ վերջինս համոզուելով՝ թողութիւն չէ խնդրում: Մեր գիւղական գործերի մէջ նոյնպէս քոյր-Աննան օգնում է մեզ իւր իմաստուն խորհրդներով և առհասարակ այն գործը, որ նրա ցոյց տուած ճանապարհովն ենք սկսել և շարունակել՝ միշտ յաջողութեամբ է պսակուել: Բացի այս, դուք մեզ մօտ կը տեսնէք գեղեցիկ կարգեր ու սովորութիւններ, որոնք միւս գիւղերում չըկան. դրանք բոլորը նոյնպէս քոյր-Աննային ենք պարտական: Միով բանիւ, այդ կոյսը մեր բարերարը և խնամակալուհին է, որին՝ կը խնդրեմ Աստծուն՝ պարգևել երկար կեանք և առողջութիւն:

Տէր-հօր պատմածները վերին աստիճանի գրգռեցին իմ հետաքրքրութիւնը:

— Բայց ո՞վ է վերջապէս այդ կինը, ո՞ր տեղացի

է, ո՞րի աղջիկն է. ո՞րտեղ է սովորել, հարցրի ես շտապաւ:

— Նա միանձնուհի է, պատասխանեց քահանան միամտաբար:

— Բայց ո՞րտեղից, ո՞ր քաղաքի կուսանոցից:

Տէր-հայրը մնաց կանգնած: Նա չէր կարողանում որոշ պատասխան տալ, ուստի մի փոքր մտածելուց յետոյ՝ ասաց.

— Ճշմարիտը խոստովանած չը գիտեմ:

— Բայց մի՞թէ այսքան տարիների ընթացքում երբէք չըհետաքրքրուեցիք իմանալ թէ՛ ո՞րտեղից է նա լոյս ընկել այս լեռների մէջ:

— Ի՞նչ մեղքս ծածկեմ, չեմ հարցրել. այսքանը միայն գիտեմ որ նա միանձնուհի է և գալով մեր գիւղը հաւանել է նրան և վճռել՝ ապրել այստեղ և օգտակէտ լինել մեզ:

— Իսկ նա հասակաւ ո՞ր է, թէ՛ երիտասարդ:

— Նրա տարիքը քառասունից աւելի է:

— Ուրեմն, այդքան միայն գիտէք նրա մասին:

— Այո՛, միայն այսքան:

Այժմ ես տեսայ որ Տէր-Յովսէփս ինքնիրեն բուսած մի ծառ չէ, այլ, անշուշտ, այդ խորհրդաւոր կնոջ ստեղծագործածն է: Տէր-հօր այն խոստովանութիւնը թէ՛ այսքան տարիների ընթացքում չէ հետաքրքրուել այդ կնոջ ո՞վ լինելն իմանալու, ինձ անկեղծ էր թւում, ուստի նրա վարկը որոշ չափով նուազեցաւ իմ աչքում. որովհետև, այդպիսի մի անտարբերութիւնը յանցանքի չափ ծանր էր թւում իմ աչքում: Բայց

յետոյ մտածեցի թէ՛ գուցէ այդ կինը ինքն է փախուստ տուել քահանայի հետաքրքրութիւնից, առիթ չըտալով նրան՝ այդպիսի հարցերի դիմելու: Թէպէտ այն էլ գիտէի որ հեշտ չէր գիւղում այսքան տարի ապրել և ազատ մնալ գիւղացիների հարցասիրութիւնից: Սակայն բոլոր այս մտածութիւններն ուղեղս լարելուց զատ՝ ուրիշ մի եզրակացութեան չէին բերում: Մընում էր որ ինքս ծանօթանայի այդ կնոջը և նրա ունի և ի՞նչ անձնաւորութիւն լինելը ստուգելի անձամբ:

—Ե՞րբ կարող էք ծանօթացնել ինձ ձեր միանձնուհուն, հարցրի Տէր-հօրը:

—Երբ կամենաք, ասաց նա, վաղը կիւրակէ է, ես պատարագ ունիմ. կը գաք եկեղեցի, ներկայ կը լինիք պատարագին և երբ ժամերգութիւնը կաւարտի, ես ձեզ կը ծանօթացնեմ նրան:

—Շատ լաւ, ասացի ես և որովհետև ընթրիքն արդէն պատրաստ էր, ուստի շուտով սեղան նստանք:

Տէր-հայրը բոլոր ջանքը դործ էր դնում ամենալաւ կերպով ինձ հիւրասիրելու: Եւ թէպէտ իւր գինին արժանիքով ստոր էր տանուէր Ակոբի գինուց, այսուամենայնիւ, մենք նրանով էլ մի քանի կենաց բաժակներ դատարկեցինք:

Տէր-հօր հիւրասենեակում ինձ համար քնելու տեղ պատրաստեցին, ուր և առանձնացայ խաղաղութեան հրեշտակին յանձնուելու համար:

Յունիսի 4.

Չընայելով որ ամբողջ նախընթաց օրը ճանապարհորդել էի, այսուամենայնիւ, երէկ շատ վաղ զարթեցայ: Գիւղը, կարծես, ինքն է զարթեցնում քեզ: Մարդ այստեղ ամաչում է, եթէ չասենք ափսոսում, առաւօտեան զով ժամերը քնին նուիրելու: Երբ դուրս եկայ բակն, արշալոյսը դեռ նոր էր շառագունում, բայց Տէր-հայրն արդէն գնում էր եկեղեցի:

—Միթէ՞ այսքան վաղ պիտի սկսէք ժամերգութիւնը, հարցրի ես:

—Ոչ, դեռ սաղմոս պիտի քաղեմ, դուք կարող էք կէս ժամով ուշ գալ, պատասխանեց նա:

Ես որովհետև եկեղեցում երկար կանգնել չէի կարողանում, ուստի որոշեցի օգուտ քաղել ժամանակից և բարձրանալով գիւղի վերնակողմը՝ նրա ընդհանուր դիրքը և շրջապատը տեսնել, որպէս զի հաւաստիանամ թէ՛ ռքքան յարմար ամարանոց եմ ընտրել:

Բակի մի անկիւնում Տիրուհին և իւր հարսը կը թում էին կովերը, որպէս զի նախիրը արօտ ուղարկեն: Սարգիսը մօտ կանգնած՝ օգնում էր նրանց՝ առաջ բերելով կովերը: Որպէս զի նօթի տանից դուրս չըգայի, մօտեցայ նրանց և մի բաժակ կաթ խնդրեցի: Հերիքնազն իսկոյն վայր դրեց կովկիթը և վազելով սուն՝ բերաւ մի մեծ բաժակ և իւր ձեռքով կթելով կաթը նրա մէջ, տուաւ ամուսնուն և վերջինս՝ ինձ: Ես ախորժանօք դատարկեցի անուշահամ ըմպելիքը և

լենդրեցի երկրորդը, որը նոյն հողածուծեամբ դարձեալ լցուեցաւ և նոյն ճանապարհով յանձնուեցաւ ինձ: Իմ նախաձաշը վերջացել էր, որի համար շնորհակալութիւն անելով՝ հարցրի Սարգսից գիւղի վերին կողմերն անցնելու ճանապարհը և հեռացայ:

Ես գնում էի մանուածապատ, նեղ և գառիվեր փողոցներով, որոնցից շատերը կազմում էին պարտէզների շրջապատ ցանկերը: Ուրախ էի որ ոչ մի տեղ շներ չըպատահեցին՝ իրենց աղմուկով ինձ ուղեկցելու համար: Երբ գիւղի վերին ծայրը հասայ՝ արևի առաջին ճառագայթներն ընկան մօտիկ բլրի վրայ, որ ծածկուած էր գեղեցիկ անտառակով: Հասնելով այդ բլրին, սկսայ նրա վերին կողմից դիտել գիւղը և նրա շրջապատը:

Ն. գիւղը, որ գուտ հայաբնակ է, գտնուում էր մի գեղեցկադիր և արեգընդդէմ լեռնալանջի վրայ, որի շարունակութիւնը դէպի լեռը՝ ծածկուած էր ամբողջապէս անտառով: Գիւղի դիրքը մասամբ սարահարթ և մասամբ գառիվայր էր: Տները, որոնց թիւը երկու հարիւրից աւելի պիտի լինէին, շինուած էին խառն ի խուռն և, մեծ մասամբ, ետևի կողմից գեանին հաւասար: Գեանի մակերևութից բարձր տներ, առանձնապէս, գտնուում էին գիւղի այն մասում, որի դիրքը սարահարթ էր: Գիւղն ըստ ամենայնի, նման էր միւս բոլոր հայաբնակ գիւղերին, միայն այն առաւելութեամբ, որ այստեղ ամեն տուն ունէր իւր մեծ կամ փոքր պարտէզը և սարերից իջնող ջրերն այնքան էին առատ որ գրեթէ ամեն տուն առու ունէր իւր բա-

կում: Գիւղի վերջին ծայրում, մի կանաչազարդ բարձրաւանդակի վրայ, կառուցած էր եկեղեցին, որ հետուից բաւական կոկիկ և գեղեցիկ էր երևում: Նրա մօտ կար միայարկ, բայց ընդարձակ և սիրուն ծառերով շրջապատուած մի ուրիշ շինութիւն, որ անշուշտ ուսումնարանը պիտի լինէր: Գիւղի ընդհանուր պատկերն առաջին անգամ ինձ վրայ ախորժ տպաւորութիւն արաւ: Սակայն աւելի գեղեցիկ էին նրա շրջակայ տեսարանները: Գիւղի առաջև ընկած էր ընդարձակ և անտառախիտ խորածոր, որի միջից խոխոշալով անցնում էր մի գետակ: Նրանից այն կողմը, ինչ-պէս և գիւղի ետևից, բարձրանում էին վիթխարի լեռներ, փառանեղ գագաթներով, որոնցից մի քանիսի վրայ դեռ նշմարուում էին հին դարերում ապրող Սիւսկուում էր մի հովտաձև սարահարթ, որ գնալով լայնանում ու դաշտանում էր և որի վրայ տարածուում էին գիւղացիների արտերը:

Այս բոլորը տեսնելուց և գննելուց յետոյ՝ ես կամաց կամաց իջայ գիւղը, բռնելով այնպիսի ուղղութիւն, որ ինձ պիտի տանէր դէպի եկեղեցին:

Ձարմանալի շարժում էր տիրում այդ ժամանակ գիւղի փողոցներում: Կարծես բնակիչները մի հրաշք տեսնելու կամ հրդեհ հանգցնելու համար էին շտատեւում: Կին, տղամարդ, ծեր և երիտասարդ աճապապում էին դէպի եկեղեցին, նրանք գնում էին աղօթելու:

Այս տեսարանը որքան ուրախացնում, նոյնքան և զարմացնում էր ինձ և այդ զարմանքը կրկնապատկուեց, երբ ուրիշները հետ ես ևս եկեղեցին հասնելով՝ տեսայ այդտեղ հաւաքուած ժողովրդի բազմութիւնը: Ես հայոց շատ դիւղերում էի եղել, բայց ոչ մի տեղ ժողովրդի մէջ այսքան ջերմեռանդութիւն չէի նկատել: Սա ինձ յիշեցնում էր Կովկասի գերմանական մի գաղթավայր, ուր յաճախ գտնուել և միշտ հիացել էի գերման ժողովրդի եկեղեցասիրութեան վրայ և տիրել՝ որ մեր գիւղերում, ընդհակառակը, ժողովուրդն օր ըստօրէ սառչում է եկեղեցուց, առանց սակայն մի ուրիշ հոգեշահ գործի մօտենալու:

Գրեթէ զօրով ներս մտայ եկեղեցին և զօրով էլ առաջ անցայ, որովհետև խոնուած բազմութիւնն իւր միջից անցնելու ճանապարհ չէր թողել:

Եկեղեցում, ամենից առաջ, ուշադրութիւնս գրաւողը բազմախումբ դպիրների երգեցողութիւնն էր, որին ես երբէք չէի սպասում: Աւելի յառաջանալով՝ աւելի ևս զարմացայ, տեսնելով որ մօտ 20 հոգուց բաղկացած խմբի մէջ, տղաների հետ միասին կանգնած էին և հասակակից աղջիկներ, որոնց բոլորին դպրապետութիւն էր անում բարձրահասակ, գլուխը սև շղարշով փաթաթած և մթազոյն շապիք հագած մի կոյս, յար և նման մեր կուսանոցի միանձնուհիներին:

Իսկոյն յիշեցի Տէր-Յովսէփի կոյս-Աննան և չերկմտեցի որ իմ առաջ կանգնած դպրապետուհին նա ինքն է: Բայց նախ քան կուսի անձով հետաքրքրուելս՝ իմ լսելիքը զբաւեց Սրբասացութեան խորհրդաւոր եր-

գը, որ նա հրաշալի ձայնով սկսաւ երգել: Բայց ինչ երգ, ինչ ձայն էր այն: Ոչ մի եկեղեցում նմանը չէի լսած: Մի քանի րոպէ ինձ այնպէս թուաց թէ՛ հնչող ձայնը ոչ թէ մարդկային կրծքից այլ մի կախարդական սրնգից կամ երգեհոնի միջից է բղխում, այնքան հնչեղ և, միևնոյն ժամանակ, գողարիկ ու ակորթալուր էր նա: Երգչուհու ձայնը, նայելով երգի աստիճաններին, գնալով գօրանում ու զուարթանում էր. եկեղեցու կամարները կարծես ձայնակցում էին նրան դիւթական հնչիւններով: Ես հիացայ, յափշտակուեցայ և գիւղական եկեղեցում գտնուելս մոռացայ: Ես ամբողջապէս լսելիք էի դարձել, նոյնն էր և ժողովուրդը. ոչ ձայն, ոչ շշուկ, բոլորն էլ յափշտակուած լսում էին հրաշալի մեղեդին և ջերմեռանդութեամբ աղօթում: Եւ սրբան սէր, սրբան հաւատ այդ ծնկաչոգ և ձեռնամբարձ պաղատողների մէջ... չըզիտեմ ինչպէս, ես էլ արդէն չոքել էի խոնաւ գետնի վրայ (որն ուրիշ տեղ չէի անում) և գիւղացիների հետ միասին աղօթում էի...: Եւ իմ երիտասարդական կեանքի մէջ դա առաջին ջերմեռանդ աղօթքն էր...:

Շուտով խումբն էլ սկսաւ դաշնակցիլ դպրապետուհուն: Երգեցողութիւնը յորդոր՝ բայց ներդաշնակ կերպարանք առաւ: Այս բոլորը լսում էի հրճուախառն հիացմունքով և զգում որ այդ գիւղական եկեղեցում կատարեալ քրիստոնեայ եմ դարձել՝ նման այն բարեպաշտ քրիստոնեաներին, որոնք ապրում էին այդ սրբազան կրօնի հալածանքների դարերում, երբ իշխանն ու ստրուկը, տիկինն ու աղախինը, միևնոյն

մթին գեանափորում, միասին պաշտում և աղօթում էին քրիստոնէութեան հիմնադրին և միևնոյն սեղանի վրայ՝ հաղորդում Նրա կենարար մարմինն և արեանը:

Քաղաքի եկեղեցիներում, խոստովանում եմ, խորշում էի փոքր ի շատէ գծուծ հագնուած մի մարդու մօտ կանգնելուց, վախենալով շորերս կեղտոտել... բայց այստե՛ղ, ժհ, ի՛նչպիսի սիրով ողջունեցի ես մի աղքատ, կորաքամակ և կոշտ հագուստներով ծերուկ գիւղացու, երբ սարկաւագի «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...» խօսքերը լսեցի: Ես պատրաստ էի՝ իմ ողջունի հետ միասին՝ նոյն իսկ համբուրել ծերուկին...—Ի՞նչ յեղափոխութիւն էր այս, որ կատարւում էր իմ մէջ. չըզիտէի: Ո՞ւր էին այն թերահաւատ մտածմունքները, որոնք ճնշում էին ուղեղս մեր եկեղեցիներում. չըկային, անհետացել էին: Արդեօք հրաշալի երգչունու և նրա խմբի ներդաշնակ ու ոգևորող երգեցողութիւնը չէր իմ մէջ կատարուող այս յեղափոխութեան պատճառը...:

Ամենամեծ հաճութեամբ լսեցի պատարագի մնացորդ երգեցողութիւնը, շարունակ հիանալով դպրապետունու զիւթական ձայնի վրայ: Մսկայն քանիցս փորձ փորձեցի տեսնել նաև նրա դէմքը, բայց այդ չըյաջողեց ինձ, որովհետև նա իւր դէմքը ոչ մի կողմ չէր դարձնում, իսկ իմ կանգնած տեղից առաջ գնալ չէի կարող: Բոլոր ժողովուրդը սպասեց մինչև վերջին «Օրհնեալ եղերսւք»ը, ես ևս նրանց հետ, առանց մի վայրկեան ձանձրանալու:

Իսկուհի գալով եկեղեցուց, սկսայ նրա շուրջը

պտտել և ապա ուսումնարանի կողմն անցայ՝ բայց աչքս միշտ եկեղեցու դրանը, որպէս զի կուսի ելնելը տեսնէի:

Եկեղեցին թէպէտ հնաշէն ու պարզ, բայց բաւական ընդարձակ էր, սպիտակ ներկած թէ՛ դրսից և թէ՛ ներսից: Եկեղեցու ներքին զարդարանքն այնքան էր, որքան մի գիւղական եկեղեցի կարող էր ունենալ՝ առանց ժողովրդին աւելորդ ծախքի ենթարկելու: Նա ունէր նաև մի փոքրիկ զանգակատուն երկու հին զանգակներով և մի երկաթէ սևացած խաչով: Իսկ ուսումնարանը՝ երեք ընդարձակ և լուսաւոր և երկու էլ փոքրիկ սենեակներից բաղկացած մի տուն էր, նոյնպէս ընդարձակ և լայնադիր պատշգամով: Ուսումնարանի չորս կողմը անկուած էին մի քանի կարգ գեղեցիկ ծառեր, որոնք ամբողջ շէնքի շուրջը կազմում էին կանոնաւոր ծառուղիներ: Ընդհանրապէս, թէ՛ եկեղեցու և թէ՛ դպրոցի շուրջը գտնող ծառերից ազատ տեղերը ծածկուած էին կանաչ ածուներով և ծաղիկների թփերով, որոնց բոլորի վրայ, երևում էր, որ հսկում է մի հողատար ձեռք: Այս բոլորը, սակայն, մի հայ գիւղի վերաբերմամբ այնքան անբնական, կամ, գոնէ, անսպաս բաներ էին որ ես ինձ զգում էի մի ինչ որ անհասկանալի դրութեան մէջ և անհանդիստ սպասում՝ այդ դրութիւնը ստեղծող հանելուկների լուծման: Իհե՛տ զբօսնում էի եկեղեցու բակում, երբ Տէրհայրն ու կոյս-Աննան եկեղեցուց դուրս գալով՝ ուղղուեցան դէպի ինձ: Ես ևս իմ կողմից առաջացայ դէպի նրանց:

Բայց, Աստուած իմ, այս կիներ ինձ հանդիպող հանելուկների մեծագոյնն էր: Այս յետ ընկած հայ գիւղում, այս վայրենի լեռներում գիմում էր գէպի ինձ Կոմուլետտի «քոյր-թերեզան»: Նոյն գեղեցիկ հասակը, նոյն սիգածեմ գնացքը, նոյն աղնուական տիպարը, որ ես թատրոնի բեմի վրայ, կուսանոցի պատերում քոյր-թերեզայի մէջ էի տեսել, այդ բոլորը ճշգրտութեամբ գտնում էի այստեղ՝ ինձ մօտեցող կնոջ մէջ: Կարո՞ղ էի միթէ գարմանքս չափաւորել և ապուշի կերպարանք չ'առնել:

Իմ բաղդից ժամաւոր կանանցից մինը, հենց ճանապարհի կիսում, կանգնեցրեց երկուսին և ինչ որ բան էր հարցնում, կամ հաղորդում նրանց: Ես ժամանակ ունեցայ զգաստանալու և, մինչև անգամ, խօսելու նիւթ ընտրելու:

Երբ իրար մօտեցանք, ողջունեցի Տէր-հօրը և կոյս-Աննային ասելով.

— Այսօր ես այստեղ երկու խիստ ուրախացնող անակնկալների հանդիպեցայ. առաջին՝ ձեր եկեղեցու հրաշալի երգեցողութեանը, որի նմանը, խոստովանում եմ, լսած չէի ոչ մի տեղ և երկրորդ՝ այս գեղեցիկ գալրոցական շէնքին, որի գոյութիւնն, այսպիսի մի հեռաւոր գիւղում, չէի կարող երևակայել:

— Այդ բոլորը, ահա, մենք այս քրոջն ենք պարտական. նրան պէտք է շնորհակալ լինել: Այս ասելով՝ Տէր-հայրը ծանօթացրեց ինձ կոյս-Աննային, յայտնելով իմ ո՞վ, ո՞րտեղացի լինելս և ի՞նչ նպատակով իրենց գիւղն այցելելս:

— Շատ ուրախ եմ որ երկար պիտի վայելենք ձեր ընկերակցութիւնը, ասաց միանձնուհին, վաղուց է քաղաքացի հիւր չենք ունեցել: Իսկ այս գիւղն, աւելացրեց նա, առողջարար է, կարող էք յուսալ որ կատարեալ առողջութիւն կը գտնէք:

— Ուրախ կը լինիմ եթէ ձեր գուշակութիւնը կատարուի, ասացի, բայց եթէ չըկատարուի իսկ՝ դարձեալ ես գոհ եմ որ այս գիւղն այցելելով՝ ձեզ ու ձեր գեղեցիկ գործերին ծանօթացայ. այս արդէն մեծ բաղդ եմ համարում ինձ համար:

— Ձեր խօսքերը պէտք է ընդունեմ իբրև խրախուսանք, ապա թէ ոչ ես այդքան էլ գովութեան արժանի գործեր չունիմ, նկատեց կոյսը ժպտալով. իմ կողմից կը ցանկանամ որ մեր լեռները ձեզ պարզեն կատարեալ առողջութիւն, որովհետև առանց դրան՝ մարդն անկարող է, նոյն իսկ, բարին ու գեղեցիկը տեսնել կամ սիրել:

— Անշուշտ, անշուշտ, դուք ինձանից աւելի կառողջանաք. մեր գիւղը թշնամի է ամեն տեսակ տկարութեան, յարեց Տէր-հայրը:

Այսպէս խօսելով մենք առաջ անցանք: Այժմ միջոց ունէի միանձնուհուն գիտելու:

Ձրնայելով տարիքին, որ, Տէր-հօր ասելով, քառասունից աւելի էր, այդ կիներ տակաւին մի կատարեալ գեղեցիկուհի էր: Նա ունէր բարձր ու բարեկազմ հասակ, որ մի առանձին շուք ու վեհութիւն էր տալիս նրա ախուր հանդերձին, գեղեցիկ ու սէգ գլուխ, որ սքողուած էր միանձնուհու սեւթոյր շար-

շով, գողտր ու ազնուական դէմք, ուր կարծես վարդապոյնը թաղկանում էր սպիտակ մարմարիոնի վրայ և մեծ մեծ, սևորակ աչեր, որոնց մէջ վառում էր մի դիւթող կրակ՝ անբաժան սակայն սրբազան կայծերից: Երկայնատէգ արտևանունքներ եղբրուում էին նրա այդ լուսոյ լիճերը և գեղակամար յօնքեր՝ հովանաւորում նրանց: Նուրբ, սղորկ քիթը և փոքրիկ, սիրուն բերանը՝ հազիւ գունաւոր շրթունքներով՝ լրացնում էին նրա կլասիքական գեղեցկութիւնը: Միայն մի անոյշ տխրութիւն մեղմում էր նրա աչքերի կրակը և նուագեցնում դէմքի դիւթական աշխոյժը: Սակայն դրանց փոխարէն՝ նրա թափանցող հայեացքի մէջ փայլում էր խելք և առաքինութիւն, իսկ դէմքի վրայ ազնուական վեհութիւն

Առաջին վայրկենից իսկ այդ կինը մի հզօր պատկառանք ազդեց ինձ և ես, չըգիտեմ ինչո՞ւ, սկսայ ճնշուիլ նրա առաջ և չըգիտէի թէ՛ ուրիշ ինչ նիւթի վրայ խօսեմ: Նա ինքն էլ կարծես զգալով իւր՝ ինձ վրայ արած ազդեցութիւնը, սկսաւ շարունակել խօսակցութիւնը, հարցնելով ինձանից տեղեկութիւններ մեր քաղաքի, նրա ուսումնարանների և ազգային մի քանի հարցերի մասին, որոնք այդ ժամանակ առօրեայ էին: Ես գիտցածս հազորդում էի նրան:

Երբ այսպէս խօսակցելով գիւղամէջը հասանք, միանձնուհին ներողութիւն խնդրեց որ մեզ պիտի թողնէ, մօտիկ մի հիւանդի այցելելու համար: Տէր-հայրն առաջարկեց գալ մեզ հետ ճաշելու, բայց նա հրաժարուեց, առարկելով թէ՛ այդ խօստուփն արած է ուրիշ:

Ես ի հարկէ շատ ցաւեցի, որովհետև ցանկանում էի խօսել նրա հետ երկար: Բայց երբ իմ ցաւը յայտնեցի Տէր-հօրը, նա ասաց.

— Հոգ չէ. էլի կը տեսնուինք. նա յաճախ գալիս է մեր տունը: Իսկ այժմ երևի անկարող էլ ընդունել իմ խնդիրը, որ մերժեց: Երբ քոյր-Աննան ասում է մի խօսք, այդ խօսքը պէտք է ընդունել այնպէս, ինչպէս որ լսում էք, որովհետև նրա այո՞ն այո՞ է և ո՞չն. ո՞չ:

Հասանք քահանայի տունը, ուր ճաշի սեղանը պատրաստած՝ սպասում էին մեզ:

Այստեղ ծանօթացայ Տէր-հօր կրտսեր որդու Յակոբին, որն իմանալով թէ իրենք հիւր ունին, շտապել էր աներոջ տնից վերադառնալու, որպէս զի իւր բացակայութիւնը տան հիւրի աչքին չըղարնէր: Սա նոյնպէս բարեկազմ, առողջ, բայց ըստ երևոյթին աւելի կրակոտ մի երիտասարդ էր: Իմ հարցին թէ՛ եկեղեցո՞ւմն էիք. նա համարձակ նկատեց.

— Կարելի է միթէ կիրակի օրն եկեղեցուց յետ մնալ:

Բայց երբ իւր հարսնացուի որպիսութեան մասին հարցրի, նա զլուխը խոնարհեց և միայն մի քանի, անլսելի բառեր շնչաց.

— Էհ, սիրելիս, Յակոբի համար դեռ վաղ է իւր նշանածի մասին խօսելը, նկատեց Տէր-հայրն, օգնութեան համելով որդուն, նա ինքն էլ մեզանից է տեղեկութիւններ հարցնում:

Ես ծիծաղեցի, բայց ի հարկէ երիտասարդի ներ-

կայութեամբ հակառակ կարծիք չըյայտնեցի, մտածելով որ պարկեշտութիւնն ու ամօթխածութիւնը վնաս չեն բերիլ նրան այս դէպքում:

Տէր-հօր երկու որդիներն էլ քոյր Աննայի աշակերտներն էին: Ճաշի նստելով՝ մենք բոլոր ժամանակ դարձեալ խօսում էինք նրա մասին: Երբ ես կրկին անգամ իմ գոհութիւնը յայտնելով եկեղեցում տեսածս կարգապահութեան և գեղեցիկ ու ներդաշնակ երգեցողութեան մասին յարեցի թէ՛ «արդարև, շատ քաղաքների եկեղեցիներ կարող են նախանձել ձեր գիւղական եկեղեցուն», Տէր-հայրը պատասխանեց:

—Շատերը կը նախանձեն մեր գիւղին, նաև նրա ուրիշ առաւելութիւնների համար, որ դուք ի հարկէ ձեր աչքով կը տեսնէք և որոնց բոլորի սկզբնապատճառն այդ միանձնուհին է: Այո, մենք նրան շատ ենք պարտական. այդ գիտէ ինքը, մեր ժողովուրդը: Եւ եթէ նրան այժմ հարցնես թէ՛ քոյր Աննայի՞ց կուգես զրկուիլ, թէ՛ քո ստացուածքից, նա ուրախութեամբ վերջին զրկանքը կ'ընարէ, որովհետև փորձով գիտէ թէ՛ ո՞ր աստիճան բարի, առաքինի և ամբողջ գիւղի համար ցաւող ու հոգացող կին է նա: Հազար անգամ մենք ինքներս մեզ հարցրել ենք թէ՛ Աստուած մեր ո՞ր բարի գործի համար է այս բարերար հրեշտակն ուղարկել մեզ.

Այս բոլորը թէպէտ աւելի և աւելի զրգոտւմ էին իմ հետաքրքրութիւնը կոյս-Աննայի վերաբերմամբ, այսու ամենայնիւ, այն բոլորից որ ես Տէր-հօրից իմացայ թէ՛ նա չըգիտէ այդ կնոջ ո՞վ և ո՞ր տեղացի լի-

ները, ես այլ ևս այդ մասին ոչինչ չէի հարցնում նրան, ինձ վերապահելով՝ երբ և իցէ այդ գաղտնիքը պարզելու նախաձեռնութիւնը: Բայց և այնպէս, իմ հետաքրքրութիւնը աճում էր ժամերով:

Ճաշից յետոյ, երբ առանձնացայ հանգստանալու, իմ մտածմունքը դարձեալ քոյր-Աննայի մասին էր: Շարունակ ինքս ինձ հարցնում էի թէ՛ արդեօք ի՞նչն է ստիպել այդ կնոջը՝ հեռանալ աշխարհից և քաշուել իրեն անձանօթ և հեռաւոր մի գիւղի անկիւնը: Նրա թէ՛ արտաքինից, թէ՛ խօսքերից և թէ՛ շարժմունքից պարզ երևում էր որ հասարակ կին չէ. հետևապէս, չէր կարող լով բարեպաշտական զգացմունքից զրդուած գալ միանձնուհի լինելու դժուարին որոշման: Մեր ժամանակում, երբ կեանքն իւր բազմակողմանի հրապոյրներով այնքան է սիրելի դարձրել աշխարհը որ մարդիկ ամենաթանկագին սրբութիւններն անգամ գոհ են բերում նրա սիրուն, տարօրինակ է որ սիրելու և սիրուելու բոլոր բարեմասնութիւններով օժտուած մի կին փախչում է այդ սիրագուարճ աշխարհից և փակում իրեն մի հեռաւոր և անձանօթ անկիւնում, գիւղական կոշտ ու կիսավայրենի ժողովրդի մէջ՝ լով նրան ծառայելու պաշտօնը ստանձնելով:

Այս ամենն ինձ համար առեղծուածներ էին, որոնց պարզելու համար, պակասում էր միջոց: Ես անհամբերութեամբ սպասում էի մեր երկրորդ տեսակցութեան, հաւատացած լինելով թէ՛ այդ ժամանակ արդէն կը յաջողուի ինձ լուծել այս տարօրինակ հանելուկը:

Յունիս 5.

Հետևեալ օրը, վաղ առաւօտից, գբօնում էի եկեղեցուն մօտ գտնուող անտառակում: Աքանչեի եղանակ էր. ցանկանում էի մի քանի ժամ անցցնել այդպէս. բայց դպրոցական գանգի ձայնը լսելով՝ շտապեցի այն կողմը:

Պատշգամի վրայ պատահեցի քոյր-Աննային, որ քաղցր ժպիտով իմ ողջոյնն ընդունեց:

—Ներեցէք որ այսքան վաղ եմ այցելում ձեր դպրոցը, ասացի ես, որովհետև ցանկանում եմ օրուայ բոլոր պարապմունքին ներկայ գտնուիլ:

—Շնորհ արէք, ինչդեմ, դուք մեծ հաճոյք կը պատճառէք ինձ, հրամեցէք լսեցէք, հարցաքննեցէք, պատասխանեց քոյր-Աննան ուրախ պատրաստակաւնութեամբ:

—Հարցաքննել, ոչ. մի խօսքով անգամ չեմ խանգարիլ ձեր պարապմունքը. միայն կը լսեմ, ասացի ես և մենք միասին մտանք դպրոցի առաջին դաստոռներ:

Մաքուր և ընդարձակ սենեակի մէջ, մի քանի կարգ կոկիկ նստարանների վրայ, շարուած էին աշակերտները մէկ՝ և աշակերտուհիները՝ միւս կողմից: Երբ ներս մտանք, բոլորը համեստութեամբ ոտքի ելան, ողջունեցին մեզ և վարժուհու հրամանով սկսան երգել առաւօտեան աղօթքը, որ եկեղեցում լսածս երգեցողութեան չափ քաղցր էր և ներդաշնակ:

Աղօթքից յետոյ սկսուեց դասը, որ հայոց լեզուից

էր: Դասագիրքն էր աւետարան, որից աշակերտները կարդում, թարգմանում և գրատախտակի վրայ գրում էին: Վարժուհին սիրով ու աշխուժով բոլորին հարցնում, լսում, ուղղում և բացադրում էր: Իրենք աշակերտներն էլ Սիւնեաց երկրի ծնունդ լինելով՝ մեծ մասամբ ընդունակ և սրամիտ երեացին ինձ. պատասխանողներից ոչ մինը դժգոհութիւն չըպատճառեց վարժուհուն:

Յետոյ քոյր Աննան սկսաւ խօսել նոր դասը՝ կարգալով աւետարանից մի ուրիշ գլուխ և թարգմանելով: Դժուարիմաց բառերն ու մտքերը նա ուշադիր հոգածութեամբ բացադրում և հասկացնում էր, կրկնել տալով նոյնը թոյլ աշակերտներին: Նրա բացադրութիւններն, առհասարակ, այնքան պարզ և դիւրամբօնելի էին որ ինքս էլ լսում էի մեծ հաճութեամբ: Ինձ համար աննկատելի չանցաւ այն՝ որ նրա բոլոր դասաւանդութեան ժամանակ, ես լսում էի ոչ թէ պաշտօնական վարժուհու, այլ գորովագութ մօր ձայնը և երևի այդ էր պատճառը որ նրա աշակերտները մէջ՝ համեստութեան հաւասար ցոլանում էր և հոգւոյ արիութիւն:

Դասն աւարտելուց յետոյ՝ դուրս եկանք պատըշգամ, իսկ աշակերտներն ու աշակերտուհիները բակն իջան խաղալու:

Վերջինների մի մասը, գեղջիուհիներին յատուկ ամաչկոտութեամբ, հաւաքուեց ծառաստանի մի անկիւնը և չէր մասնակցում փոքրիկների խաղին: Այդ հանգամանքը իմ աչքին գարկաւ:

— Գեղջկուհին միշտ գեղջկուհի է մնում, նկատեցի ես, ինչո՞ւ այդ աղջիկները չեն խաղում, նրանք այնքան մեծահասակները չեն որ մեզանից քաշուէին: Մի՞թէ դպրոցական կեանքը ոչինչ յեղափոխութիւն չէ մտքրել նրանց մէջ:

— Այդ դէպքում՝ ո՞չ և ես չեմ ցանկանում այդ պատասխանեց քոյր-Աննան լրջօրէն: Ես պահանջում եմ, մինչև անգամ, որ գեղջկուհին միշտ գեղջկուհի մնայ: Ես չէի ցանկանալ որ դպրոցը կապուէր նրանցից այն թանկագին հարստութիւնը, որը նա յետոյ չէր կարող վերադարձնել առանց ծանրագին աշխատութեան: Խօսքս վերաբերում է այն ցեղական պարկեշտութեան, որ մեր գեղջկուհիներն ունին: Ես ի հարկէ սովորեցնում եմ նրանց կարգալ և գրել, աւանդում եմ՝ ինչ որ ուսման համար կարևոր և իրենց անձին օգտուէտ է, աշխատում եմ որ նրանց մտքերի հետ միասին կրթութիւն և ազնուաման նրանց հոգիները, հաստատում և ամրապնդում եմ նրանց կրօնական զգացմունքները, միով բանիւ, ամեն ջանք գործ եմ գնում որ նրանցից պատրաստութիւն որոշ չափով կըրթուած հայ գիւղացիներ, բայց, միևնոյն ժամանակ, զգուշանում եմ որ իմ ներշնչած այդ նորութիւնները չըխեղդեն նրանց մէջ գիւղացու այն յատկութիւնները, որոնք նրանց բարոյականի հաստատուն հիմունքներն են կազմում և որոնք, իմ աւանգած սահմանափակ ուսումովը չէին արմատանալ նրանց մէջ, եթէ նրանք այդ չըժառանգէին ծնողներից, գիւղական անարատ միջնորդութիւն: Եթէ մենք եղած հինը քանդելով կա-

րողանայինք նրա տեղ նորը, բայց լաւագոյնը հաստատել, այն ժամանակ այդ հինը աներկիւղ կը քանդէինք: Բայց քանի որ ցանկալի ոյժն ու միջոցները չունինք, անհրաժեշտ է որ եղած լաւ յատկութիւնները խնամենք և պահպանենք՝ նոյն իսկ իրենց հին կերպարանքի մէջ: Այդ յատկութիւններն են՝ գեղջուկի ամօթխածութիւնը, բարեպաշտութիւնը, պարզասիրութիւնը և աշխատասիրութիւնը: Ես մեծ խնամքով եմ վերաբերում այդ գեղեցիկ յատկութիւններին՝ աշխատելով ի հարկէ որ նրանցից մի քանիսը ծայրայեղութեան չըհասնեն. օրինակ, որ նրանց ամօթխածութիւնը չըհաւասարուի երկչոտութեան, իսկ բարեպաշտութիւնը՝ չըսնանայ նախապաշարմունքով: Թէպէտ այս վերջին դէպքում ևս զգուշութեամբ եմ վարում, որովհետև գեղջուկի կրօնականը նման է հնադարեան մի սրբազան շինութեան, որի վրայ, հարկաւ, դարերի ընթացքում նստել է և՛ փոշի և՛ անմաքրութիւն. բայց նրան այդ փոշիներից մաքրելու համար զգուշաբար պիտի վարուի մեծագրել գիտցող հնագէտը, որպէսզի սխալմամբ գեղեցիկ քանդակներից մէկը չըփշրէ, կամ ընտիր միւսիծններից մինը չէղծանէ: Ահա այգպիտի զգուշութեամբ եմ վարում և ես իմ աշակերտների ու նրանց ծնողների հետ, երբ հարկաւոր է լինում նրանց որ և է կրօնական նախապաշարման գիմախօսել:

— Իսկ ես կարծում եմ որ այդքան յամր ընթացալով՝ շատ աննշան յառաջագիմութիւն կանէք, նկատեցի ես:

— Ձեր կարծիքը մասամբ իրաւացի է, պատաս-

Լեանեց կոյսը. (բայց զորն է աւելի լաւ, քիչ յառաջադիմելը, թէ՛ դէպի կորուստ փութալը:)

— Ի հարկէ առաջինը, ասացի ես:

Մնա, այդ պատճառով էլ ես յամբ՝ բայց ուղիղ ընթանալու կողմն եմ. որովհետեւ գեղջուկն ու նրա գաւակը մեր քայլերով ընթանալ չեն կարող: Նրանք նման են նոր ոտքի ելած մանուկների, որոնց եթէ շտապեցնես, կը սայթաքեն և կը գլորուեն ճանապարհի վրայ: Որդեսէր և հասկացող մայրը, որքան էլ առողջ ոտքեր ունենայ, այսուամենայնիւ, նա իւր ետեկց քաշ չի տալ մանուկին, այլ, ընդհակառակը, կը յարմարեցնէ իւր քայլերը աղայի դողդոջուն քայլիկներին մինչև որ այգալիսով նրան կանոնաւոր քայլել սովորեցնէ:

Միսկ ինչ վերաբերում է գեղջուկի բնական աշխատասիրութեան ու պարգասիրութեան, շարունակեց կոյսը, ես աշխատում եմ աւելի և աւելի զարգացնել նրա մէջ այդ յատկութիւնները: Ես գովում ու խրատում եմ աշակերտին կամ աշակերտուհուն, երբ պատահում եմ մինին՝ դասից ազատ միջոցին անտառից փայտ բերելիս, միւսին՝ խոտ հարելիս, երբորդին՝ ջրի սափորով վերադառնալիս, չորրորդին՝ այգում քաղհան անելիս և այլն: Այդ իսկ պատճառով ես սկզբից արդէն սահմանել եմ որ իմ աշակերտներն ու աշակերտուհիներն իրենց միւս օրուայ դասերը պատարաստեն դպրոցում՝ իմ հսկողութեան ներքոյ, որպէս զի տուն վերադառնալուց՝ թէ՛ ազատ լինեն դասերի ճնշումից և թէ՛ կարողանան ընտանեկան գործերում օգնել իրենց ծնողներին: Այդ տեսակ ազատ պարապ-

մունքը կը ծառայէ նրանց նաև իբրև մարմնամարզութիւն, որի օգուտը վաղուց ճանաչուած է:

«Միևնոյն ձևով ես հոգում եմ որ պարգասիրութիւնն արիւն ու մարմին դառնայ նրանց մէջ, շարունակոււմ էր միանձնուհին: Ես անպայման ատեցող եմ ցոյց տալիս ինձ հարուստ ու շքեղ հագնուելուն, թէպէտ մաքրասիրութիւնը գովում եմ: Պատահել է որ իմ աշակերտներից մինը, հարուստ ծնողների գաւակ լինելուն համար, գիւղում գործած շալի փոխարէն՝ մահուդ է հագել, կամ աշակերտուհիներից մինին իւր ծնողները բամբակէ շիլայի փոխարէն՝ մետաքսէ դանաւագից շապիք են հագցրել: Ես այդպիսիներին, բոլոր աշակերտների ներկայութեամբ, քաղցրութեամբ յանդիմանել եմ և իսկոյն յետ դարձրել տուն, պատուիրելով որ նախկին, կոպիտ շորերը գերադասեն այդ թանկագին հագուստներին, որովհետև, ասել եմ, դրանք գիւղացու համար անվայել հագուստներ են: Բայց, միևնոյն ժամանակ, չեմ մոռացել նախատել և այն աշակերտին, որ հերարձակ, ցեխոտ փեշերով, կամ կեղտոտ օձիքով համարձակուել է մտնել դասատուն: Այս բոլորից արդէն կարող էք մակաբերել թէ՛ ես ինչ աչքով եմ նայում գիւղացու կրթութեանը և զորքան հակառակ եմ որ գիւղացին՝ իւր մասնաւոր ուսումն ու կրթութիւնը ստանալուց յետոյ՝ գիւղացի լինելու փոխարէն՝ ձգտի լինել մի ուրիշ բան:»

Մինչդեռ ես ուշադրութեամբ լսում էի քոյր-Աննային, զանգակը հնչեց և աշակերտները կարգով սկսան հաւաքուել դասարանները: Այդ ժամանակ միայն նկա-

տեցի աշակերտներն բազմութիւնը և հարցնելով տեղեկացայ որ դպրոցը կազմուած է երկու նախակրթական և մի առաջին դասարաններից: Իմ հարցին թէ՛ ովքեր են դասախօսում նախակրթարաններում, քոյր-Աննան ժպտալով պատասխանեց.

— Իմ պատրաստած վարժապետն ու վարժուհին:

— Ո՞ւր են նրանք, հարցրի ես հետաքրքրութեամբ:

— Ահա՛ վարժապետը, ահա՛ վարժուհին, ցոյց առաւ նա պարզ հագնուած մի գիւղացի պատանի և նոյնպիսի հագուստով մի պատանեկուհի, որոնք աշակերտների ետևից մտնում էին դասատուն:

— Դրանց ես սովորողների տեղ էի ընդունում, այնքան մանկամարդ են, նկատեցի ես:

— Ո՛չ, դրանք իմ օգնական դասատուներն են. հաճեցէք ներկայ լինել նրանց դասերին, եթէ կը ցանկանաք, յուսով եմ, կը հաւանէք:

— Շնորհակալ եմ, մեծ ուրախութեամբ, ասացի ես և չըկամենալով այլևս ուշացնել քոյր Աննային, ինքս առաջինն ուղղուեցայ դէպի այն դասարանը, ուր երիտասարդը պիտի դասախօսէր:

Նոյնպիսի յարգանքով ընդունեցին ինձ և այստեղ: Գեղջուկ վարժապետը քաղաքավարութեամբ աթոռ առաջարկեց ինձ. ես նստայ և սկսայ լսել:

Հարցնելու և ուղղելու միևնոյն ձևը, դասախօսելու և բացազրելու նոյն եղանակը, ինչ որ քոյր Աննայի՛ նոյնն և այս երիտասարդի մէջ նկատեցի. սա նրա հարազատ պատճէնն էր: Զարմանում էի այս գեղեցիկ նմանութեան և առաւել ևս այն համբերու-

թեան վրայ, որ նորատի երիտասարդն ունէր: Որպիսիք քաղցրութեամբ և որքան հանգիստ սրտով ուղղում էր նա մի երկու, ըստ երևոյթին՝ բացառութիւն կազմող, աշակերտների շարունակ կրկնուող միևնոյն սխալները: Ո՛չ միայն բարկանալն՝ այլ և կոշտ խօսելը, կարծես, յանցանք էր համարում. մի յատկութիւն, որ ճրագով ենք որոնում մեր վարժապետների մէջ: Սիրով լսեցի երիտասարդ ուսուցչի ամբողջ ժամուայ դասախօսութիւնը, որ ըստ ամենայնի գոհութիւն պատճառեց ինձ:

Բոլորովին ուրիշ ազդեցութիւն գործեց ինձ վրայ գեղջուկ վարժուհին, երբ երրորդ դասին նրա դասատուներ մտայ: Նրան տեսնելուց և մի փոքր լսելուց յետոյ, ես նմանեցրի նրան այն թանկագին գոհարին, որ գեռ նոր հողի միջից հանուած՝ իւր անողորկ տեսքի պատճառով թւում է մի աննշան ապակի, բայց հմուտ ակնագործը գուշակում է թէ՛ դր թագուհու ճակատը կարող է նա զարգարել, եթէ ինչպէս հարկն է յղկուի ու կոկուի:

Իւր հագուստով նա չէր զանազանում աշակերտուհիներից: Հագած էր հասարակ շօնից արխալուխ, կարմիր շիլայից երկար շապիք, նոյն կտորից կապած մի գօտի պատում էր մէջքը, իսկ մի փոքրիկ, կանաչ չարդաթ ծածկում իւր գլուխը: Ահա, այս էր վարժուհու բոլոր հանդերձանքը: Եթէ ես պատահէի նրան աղբիւրի վրայ, ջրի սափորն ուսին, ոչնչով չէի գանազանիլ միւս գեղջուկուհիներից: Բայց այժմ՝ նա իմ առաջ կանգնած դաս էր խօսում մաքուր հայերէն լե-

գուով և այն՝ որքան հմտութեամբ, շնորհքով, քաղցր ու գրաւիչ ձայնով: Մի՞թէ չըպէտք է զարմանայի և հիանայի: Ես այնքան զգացուել, ոգևորուել էի, որ երբ գասը վերջացաւ և ես գուրս գալով պատշգամ պատահեցի քոյր-Աննային, կամենում էի առնել նրա ձեռքերը և ջերմագին, անվերջ համբոյրներով ծածկել՝ ՚ի նշան իմ սրտնեռանդ շնորհակալութեան: Բայց աւանդ, չէի կարող այդ անել և չը գիտէի ի՞նչ պէս զեղանել նրա առաջ իմ անկեղծ զգացմունքները: — Ձեր գործը գովելու համար ես լեզու չունիմ, ասացի նրան, ընդունեցէք, գոնէ, իմ ջերմագին շնորհակալութիւնը, իբրև իմ ներքին գոհունակութեան և, առաւել ևս, իմ մեծագոյն զարմացման մի տկար առհաւատչեայ:

— Շնորհակալ եմ, դուք ինձ քաջալերում էք, երևում է որ հաւանել էք թէ վարժապետիս և թէ վարժուհուս, պատասխանեց քոյր-Աննան քաղցր ժրպտալով:

— Այո՛, սրանցից լաւը ես չեմ տեսել, գոնէ, մեր քաղաքի դպրոցներում:

— Ես դրանց պատրաստել եմ այն չափով որ ազատ կարող են սովորեցնել նախակրթարանում, ընդունելով ի հարկէ որ նախակրթարանի ուսուցչից ևս պահանջուում է որոշ չափով հմտութիւն. իսկ քիչ ժամանակից յետոյ, նրանք պատրաստ կը լինին այնքան՝ որ կը կարողանան իմ տեղը բռնել:

— Ի՞նչպէս, մի՞թէ դուք մտադիր էք երբ և իցէ թողնել այս գիւղը, հարցրի ես:

— Թողնել, երբէք, պատասխանեց միանձնուհին. բայց ո՞վ կարող է երաշխաւորել թէ՛ որքան կարող եմ ապրել: Ես այն կարծիքին եմ թէ՛ մի գործ մշտնջենաւոր անելու համար՝ անհրաժեշտ է որ սկսող մարդը՝ գործի գոյութիւնը իւր գոյութեան հետ չըկապէ: Հակառակ դէպքում, գործը մեռնում է, եթէ մեռնում, կամ հեռանում է գործի հիմնադիրը: Մեր մէջ, առհասարակ, շատ օգտաւէտ գործեր ոչնչանում են նոյն իսկ իրենց հիմնադիրների փառամոլութեան շնորհիւ: Որովհետև քիչ չէ թիւն այն մարդկանց, որոնք մի հասարակական բարի գործ սկսում և առաջ են տանում ոչ թէ նրա համար որ հասարակութեանն օգնեն, այլ որ նրա մէջ երևան և նրանից փառք ու պատիւ վայելեն: Այդպիսիները, մինչև անգամ, չեն ցաւում, եթէ իրենց հեռանալուց յետոյ՝ ընկնում, ոչնչանում է գործը, որովհետև այդ առիթ է տալիս նրանց ապացուցանելու թէ՛ իրենք յայտնի ոյժեր են և թէ իրենց չեղած տեղն՝ երկիրը չէ կարող խոտ բուսցնել...: Այդպիսիներն իմ աչքում նոյն ոճրագործներն են, որոնք իրենց անձի դիւրութեան համար անշնչացնում են միանգամ շունչ տուած գաւակին: Պէտք է միշտ ապրել գործի կենդանութեան համար. իսկ եթէ հարկը պահանջէ մեռնել, որպէս զի օգտաւէտ գործն ապրի, այդ գոհն էլ պէտք է բերել՝ առանց տրանջալու:

«Ես սիրում եմ իմ սկսած գործը. ցանկանում եմ որ նա յաւիտեան ապրի, որովհետև հաւատում եմ նրա մեծութեան ու կենարար ուժին՝ ապագայի նկատմամբ: Այդ պատճառով էլ աշխատում եմ այնպիսի հիմ-

քերի վրայ դնել այդ գործը որ իմ մեռնելուց յետոյ նա չբախարանայ, որ հողմերն ունեղեղը չբասսանեն նրան: Այժմեանից արդէն ես արժանաւոր և գուցէ ինձանից աւելի լաւ գործող՝ յաջորդներ եմ պատրաստում և երգմամբ պիտի պարտաւորեցնեմ նրանց՝ նոյնն անել որդւոց որդի: Եւ որովհետեւ ես վստահ եմ իմ ներշնչած ոգուն, ուստի և կարող եմ հանգիստ սրտով մեռնել:)

Ես ուշադիր լսում էի քոյր Աննային և սրտանց ցանկանում որ նա աւելի խօսէր: Ոգևորում էի նրա զրոյցներով, ուստի և փափագում շարունակ լսել նրան...: Բայց աշակերտներն արձակուեցան. ժամանակ էր և ինձ հեռանալ: Միայն խնդրեցի որ նա պաշտօնապէս ծանօթացնէ ինձ իւր վարժապետին ու վարժուհուն: Քոյր-Աննան կատարեց խնդիրս սիրով: Իմացայ որ վարժապետի անունը Պետրոս է, Կովիկեան ազգանունով, իսկ վարժուհունը՝ Մանիշակ Սահակեան: Մի քանի խօսք էլ դրանց հետ փոխանակեցի, որի ժամանակ նորատի վարժուհին շարունակ շիկնում էր: Յետոյ կրկին անգամ շնորհակալութիւն արի քոյր-Աննային, ողջունեցի նրա երիտասարդ օգնականներին և հեռացայ՝ քայլերս ուղղելով դէպի իմ հիւրընկալ Տէր-Յովսէփի տունը:

Յունիս 7.

Անցեալ օրը քոյր Աննայից հեռանալով՝ բաւական մտածում էի իմ տեսած ու լսածների վրայ: Ինձ զբաղեցնում էին միանձնուհու յայտնած կարծիքներն

ու հայեացքները, երկար որոճում էի նրա գեղեցիկ խօսքերը և վերջը գալիս այն եզրակցութեան թէ՛ արդարև այդ բոլորը երագներ չեն և գոյութիւն ունին: Բայց նախկին մտածմունքը դարձեալ տանջում էր ինձ. — «Ո՞վ է վերջապէս այդ կինը...»: Ես անպատճառ ցանկանում էի իմանալ, նման այն մանրակրկիտ հետաքրքրին, որ արհեստի մի հրաշալիք տեսնելուց՝ չէ բաւականանում նրա վրայ նայելով ու գուարձանալով, այլ և հետամուտ է լինում նրա ստեղծագործութեան գաղտնիքն իմանալու:

Արդէն որոշել էի դիմել քոյր-Աննային և առանց այլևայլութեան խօսել նրա հետ՝ ինձ մտատանջութիւն պատճառող հարցի մասին: «Երբ մի կին այս աստիճան հետաքրքրում է ինձ իւր հասարակական օրինակելի գործունէութեամբ, յանցանք չէ որ ես փափագեմ նրա անձին ու անցեալին ճշմարտապէս ծանօթանալու. այստեղ քաշուելու բան չըկայ», մտածում էի ես:

Այդ իսկ պատճառով երէկ, դեռ առաւօտունից, դարձեալ դպրոցումն էի: Տեսնուեցայ քոյր-Աննայի հետ, լսեցի նրա դասերը, խօսեցինք զանազան նիւթերի վրայ, բայց և այնպէս, չըկարողացայ մօտենալ իմ նպատակին:

Չարմանալի և տարօրինակ մի կին է այդ միանձնուհին: Երբեմն այնքան մեղմ, քաղցր ու հեզահամբոյր է, որ մարդ կարծում է թէ նրա ամբողջ գոյութիւնը կարող է առնել իւր ափի մէջ, իսկ երբեմն այնքան լուրջ, սառն և բարձրայօն որ ես համարձակ չեմ կարողանում նայել երեսին:

Այսու ամենայնիւ, երէկ ճաշից յետոյ դարձեալ
գնացի նրա մօտ, վճռած լինելով իմ մտքում յայտնել
նրան իմ ցանկութիւնը առանց տատանուելու:

Քոյր-Աննային պատահեցի ուսումնարանի բա-
կում օրիորդ Մանիշակի հետ: Նրանք զբաղուած էին
իրենց ծաղիկներով: Կոյսն ինձ տեսնելով՝ թողեց
գործը, մօտեցաւ և բարևեց. ապա աթոռներ բերել
տալով՝ առաջարկեց նստել հովանաւոր նշդարիների
տակ:

Սկանք խօսել: Մի քանի թեթև հարցեր շօշա-
փելուց յետոյ, ես աշխատեցի մեր զրոյցը դարձնել
այնպիսի խնդիրների վրայ, որոնց միջոցով կարելի
լինէր պարզել իմ հայեացքներն այս ու այն հարցի
վերաբերմամբ և այդ ճանապարհով ծանօթացնել քոյր-
Աննային իմ ներքին աշխարհին, համոզմունքներին և
գաղափարներին՝ որպէս զի զրանով նրա հոգեկան մը-
տերմութիւնը վաստակէի: Եւ որովհետեւ ես այն կար-
ծիքին էի թէ՛ ոչ մի արտաքին հանգամանք այնպէս
շուտ չի զբաւիլ կնոջ բարեկամութիւնն ու մտերմու-
թիւնը (խօսքս ի հարկէ լրջամիտ և զգայական կեան-
քով չապրող կնոջ մասին է), որքան ներքին համոզ-
մունքների և գաղափարների միութիւնը, ուստի ան-
չափ գոհ եղայ, երբ տեսայ որ նա՝ շատ հարցերի
նկատմամբ՝ համամիտ ու գաղափարակից է ինձ: Ու-
րեմն, կարելի էր յուսալ թէ՛ շուտով պիտի համանեմ
նպատակիս: Որովհետեւ մի անգամ ինձ ճանաչելուց
յետոյ՝ հեշտ կը լինէր նրան այնուհետեւ բացուիլ իմ
առաջ: Այդ իսկ պատճառով այժմ էլ սկսայ խօսել

այնպիսի հարցերից, որոնք առիթ պիտի տային ինձ
ուղղակի ցանկացածս խնդրին դիմելու:

Սակայն այդ միջոցն ևս ապարդիւն անցաւ: Քոյր-
Աննան, կարծես, գուշակելով իմ դիտաւորութիւնը,
յաճախ մի խօսքի կամ լոկ մի բառի բացադրութեամբ
այնպէս անսպաս շրջում էր խօսքի ձևը, կամ զրուցի
ընթացքը փոխում, որ ես մնում էի կանգնած հենց
նոյն տեղը, որտեղից սկսել էի: Ես նորից փորձ էի
անում, նորից նամանօրինակ նիւթի վրայ խօսում և
այն ժամանակ, երբ մտածում էի թէ՛ անհ, հասել էմ
նպատակիս, դարձեալ նրա բոլորովին նոր հարցով կամ
դիտողութեամբ ստիպուած էի լինում ճանապարհս
կորցնել և իւր ետևից գնալ: Յուսահատութիւնը տիրում
էր ինձ: (Ես նմանում էի ծովամոյն եղող մի մարդու,
որ ալիքների հետ կռուելով՝ աշխատում է ափին մօ-
տենալ և հենց այն բոլակին որ ձգում է ձեռը ժայռե-
րից բռնելու, անհ մի կոհակ գալիս, խփում է նրան
և հեղձամղձուկ անելով՝ կրկին ծովի խորը նետում.
նա նորից փորձ է անում, նորից մօտենում ափին և
դարձեալ ալիքներից մղւում դէպի ծովի խորքերը:)

Քոյր-Աննան այժմ երևում էր ինձ իբրև մի ան-
մատչելի աշտարակ, որի վրայ պէտք էր նայել հեռուից
և նրա արտաքինով միայն զուարճանալ, առանց իրա-
ւունք ունենալու ներքինը դիտելու: Այժմ ես այլ ևս
չէի մեղադրում Տէր-Յովսէփին իւր անտարբերութեան
համար. որովհետեւ տեսայ որ նա այդ կէտում յանցանք
չունէր: Կեանքումս առաջին անգամ էի պատահում մի
կնոջ՝ այդքան գերազանց ուժով:

Առանց մի բաւարար եզրակացութեան գալու մեր բոլոր խօսակցութիւնից՝ վերադարձայ տուն, գրեթէ յուսահատ:

Յունիս 10.

Երեք օր էր որ չէի տեսել քոյր-Աննային: Այդ բոլոր ժամանակը շրջում էի գիւղի մօտակայ անտառներն ու լեռները Տէր-հօր կրտսեր որդու Յակոբի հետ: Մենք որսում էինք: Այդ զբաղմունքը այնքան էր ինձ գրաւել որ ես որոշել էի այսօր ևս լեռներում անցցնել՝ գնալով աւելի հեռաւոր կողմեր: Բայց Յակոբը չըկամեցաւ ինձ ընկերանալ՝ առարկելով թէ՛ կիւրակէ լինելու պատճառով չէ կարող գիւղից հեռանալ: «Պէտք է եկեղեցի գնանք, պատարագ լսենք», ասում էր նա: Իսկ ես այդ օրուայ կիւրակի լինելը մոռացել էի:

Հարկ չըկայ ասել որ իւր ժամանակին եկեղեցումն էի: Ինչ գուարձութիւն կարող էր գեռակշռել քոյր-Աննայի և նրա խմբի հրաշալի երգեցողութիւնը լսելու հաճոյքին:

Պատարագը վերջանալուց յետոյ՝ դուրս եկայ եկեղեցու բակն, ուր պատահեցի վարժապետ Պետրոսին: Ինձ ողջունելուց յետոյ՝ նա յայտնեց թէ՛ քոյր-Աննան մի քանի անգամ հարցրել է իմ մասին և անհանգիստ է եղել որ այսքան ժամանակ չեմ երևացել: «Նա կարծում էր թէ հիւանդ էք, շարունակեց Պետրոսը, բայց

ես եկայ և Տէր-հօրից իմացայ որ որսորդութեան էք գնացել»:

—Այո, կամենում էի ծանօթանալ ձեր լեռներին, ասացի ես, բայց ի՞նչպէս է քոյր-Աննայի առողջութիւնը:

—Փառք Աստուծոյ, նա միշտ առողջ է և այդ մեզ շատ է ուրախացնում, պատասխանեց Պետրոսը այնպիսի մի եղանակով որ կարծես ամենասիրելի մօր համար էր խօսում:

Մենք զրուցելով առաջացանք դէպի ուսումնարանի բակը, ուր Պետրոսը ներողութիւն խնդրելով, բաժանուեց ինձանից, որովհետև աշակերտներն եկեղեցուց եկել էին ուսումնարան, պէտք էր արձակել նրանց:

Շուտով երևաց և քոյր-Աննան, որ սիրով ու մրտերմաբար ինձ ողջունելուց յետոյ՝ մեղադրեց որ իմ պարտքը չեմ կատարում՝ այցելելով իրեն ամէն օր:

—Գիտէ՞ք, չի վայելիլ որ ես ձեզ պտրեմ, նկատեց նա անկեղծօրէն, դուք երիտասարդ էք և աւելի ազատ, դուք պէտք է գաք մեզ մօտ: Եւ ես սպասում ձեզ իրաւունքով, որովհետև միայն մի երկու ամիս էք այստեղ. իսկ ձեր հեռանալուց յետոյ, գուցէ երկար ժամանակ ձեզ նման հիւր այլ ևս չունենանք:

Ես ներողութիւն խնդրեցի քոյր-Աննայից, յայտնելով որ երեք օր իրեն չայցելելուս պատճառն որսորդական զբօսանքներս էին, որոնց իսկապէս ձեռնարկեցի նրա համար, աւելացրի ես, որ չէի ցանկանում իմ յաճախակի այցելութիւններով իւր պարտգումունքը խանդարել:

—Օ՛, դրա համար մի՛ մտածէք, գիւղում այնքան էլ թանկ չէ ժամանակը, նկատեց քոյր-Աննան ժպտալով. բայց թանկագին և հագուազիւտ են մարդիկ, որոնց կարելի լինէր լսել: Մի՞թէ չկարծում էք թէ՛ հեշտ բան է ստիպուած լինել միշտ խօսել, միշտ լսողներ ունենալ, բայց անկարող լինել երբ և իցէ լսել մի ուրիշին, կարծիքներ իմանալ, մտքեր փոխանակել...:

Քոյր-Աննան այնպիսի մի մտերմական եղանակով արտասանեց այս խօսքերն որ ես գգածուեցայ:

«Արդարև, ապրել շարունակ գիւղում, տեսնել շուրջ միայն գիւղացին և նրա միօրինակ կեանքը, չ'ստանալ նրանից ոչինչ նոր, ոչինչ թարմացնող և ստիպուած լինել սպասել նրա համար ինչ որ ունիս պաշարած, սա դժուար կացութիւն է: Պէտք է մարդ այս դէպքում հոգու գերազանց ոյժ և կորով ունենայ ձանձրոյթից բոլորովին չըխեղդուելու համար...»:

Այս մտածմունքը բոպէսպէս անցաւ իմ գըլխով և ես, չըզիտեմ ի՞նչպէս, համարձակութիւն առի՛ այնքան շատ ինձ մտատանջութիւն պատճառող հարցի մասին՝ ուղղակի խօսել:

—Հասկանում եմ ձեր ասածը և գգում ձեր դրութեան բոլոր ծանրութիւնը, պատասխանեցի ես, բայց չեմ հասկանում մի բան, որը ինձ շատ է մտածել տալիս:

—Ի՞նչ, հարցրեց քոյր-Աննան հետաքրքրութեամբ:

—Այն թէ՛ Նախախնամութեան սրպիսի տնօրինութեամբն էք գտնւում դուք այս լեռների մէջ:

Քոյր-Աննան լուրջ կերպարանք առաւ. նա անշուշտ չէր սպասում այս հարցին և, կարծես, պատ-

րասուում էր նկատել թէ՛ ինչո՞ւ ես այդքան համարձակութիւն առի: Բայց ես նրան խօսելու ժամանակ չըտուի:

—Մի վշտանաք իմ հարցից, յարգելի քոյր, ասացի նրան. ձեր այս բոլոր գործերը տեսնելուց յետոյ, գործեր, որոնք արդիւնք են մեծ անձնագոհութեան և որոնք ժողովրդի բազմն են կառավարում, ես, իբրև հայ մարդ, իբրև իմ արիւնակիցների ուրախութեան ու վշտերին բաժանորդ, բնական է որ հետաքրքրուեմ ձեր անցեալով, ոչ իբրև մասնաւոր անձի, այլ իբրև հասարակական անձուէր գործչի: Ծանր է ինձ, արդարև, ծանօթ լինել ձեր անուանը և ստեղծած գործերին և, միևնոյն ժամանակ, չիմանալ թէ՛ դուք ո՞վ էք կամ ո՞ր աշխարհի ծնունդ... Ներեցէք որ ես պահանջում եմ աւելին, քան զուցէ այժմ թոյլագրելի է ինձ, բայց հաւատացէք որ ես չեմ ներիլ ինձ, եթէ հեռանամ այստեղից լոկ այն ծանօթութեամբ, ինչ որ ունիմ ձեր մասին:

Քոյր-Աննան մի ներողամիտ հայեացք ձգեց վրաս և ժպտաց: Այդ ժպտալը նոր վստահութիւն ներշնչեց ինձ. ես աւելացրի.

—Ուրեմն, մի մերժէք ինձ, խնդրում եմ, պատմեցէք ձեր մասին մի քանի բան, ծանօթացրէք ինձ ձեր անցեալին, որքան այդ հնարաւոր է և դա կը լինի ամենամեծ շնորհը, որ դուք կանէք ինձ:

—Իմ անցեալի՞ն... հաւատացէք որ նա հետաքրքրական ոչինչ չունի իւր մէջ:

—Թող այդպէս լինի, այսուամենայնիւ, ես ցան-

կանում եմ լսել ձեզ և այս ցանկութիւնից յետ կը կենամ միայն այն ժամանակ, երբ կասէք թէ՛ անհաճոյ է ձեզ՝ ծանօթացնել ինձ այդ անցեալին, որն, հաւատացած եմ, նոյնպիսի հիացում պիտի պատճառէ ինձ, որպիսին պատճառում է ներկան:

— Ի՞նչ կը կամենայիք, օրինակ, որ ես պատմէի ձեզ, նոյն մեղով ժպիտով հարցրեց ինձ քոյր-Աննան:

— Օրինակ թէ՛ ի՞նչ դիպուածներ ստիպեցին ձեզ հեռանալ մեր սիրելի աշխարհից և ապաստանել այս հեռաւոր լեռներին:

— Մի՞թէ այս լեռները ձեր աշխարհում չէ՞ն գտնուում, հարցրեց նա ծիծաղելով:

— Ոչ, ինչպէս և միանձնուհիները չեն ապրում մեր աշխարհում:

— Հասկանում եմ. բայց, ասացէք ինդրեմ, կ'այ ձեր աշխարհում աւելի քաղցր ու սիրելի մի կեանք, քան ինչ որ այստեղ վայելում եմ ես:

— Չըկայ, այդ ճշմարիտ է. բայց այդ կեանքի քաղցրութիւնը ճանաչել կարողանալու համար, շատ փոքր պիտի լինէր այն հասակը, որ ունեցել էք դուք այստեղ գալու ժամանակ: Ես իմացայ որ քսան տարուց աւելի է, ինչ գործում էք այստեղ:

— Ընդունեցէք ուրեմն որ այստեղ գալու ժամանակ էլ քսան տարեկան էի: Եւ մի՞թէ այդ հասակը բաւական չէր որ ես ճանաչէի սիրած աշխարհի ոչնչութիւնը և նրա մէջ ինձ համար գրաւիչ ոչինչ չըգտնելով՝ հեռանայի նրանից՝ աւելի բարձր կեանքի նուիրուելու համար:

— Անկարելի է, բացականչեցի ես, աշխարհը որքան էլ ոչինչ, որքան էլ ունայն լինի, դարձեալ մի քսանամեայ երիտասարդ աղջկայ համար շատ հրապոյներ ունի իւր մէջ: Անկեղծ եղէք ինձ հետ, աղաչում եմ և խելամուտ արէք ինձ ճշմարտութեանը: Դուք, ուրեմն, մեզ բոլորովին անյայտ մի աշխարհի ծնունդ էք, որ այդ հասակում կարողացել էք անձնուիրութեան մասին մտածել: Մեր երկրում այդպիսի բոյսեր չեն աճում. գուցէ և նրա համար որ սերմանող չըկայ: Բայց ինձ, որ պաշտում եմ ձեր մէջ այդ մեծ առաքինութիւնը, թոյլ տուէք հետաքրքրուել և սովորել թէ՛ ի՞նչպէս է նա մարմնացել ձեր մէջ: Հաւատացէք որ ես ձեր յայտնութիւնների և զգացմունքների ամենահաւատարիմ աւանդապահը կը լինեմ:

Քոյր-Աննան ոչինչ չըպատասխանեց. նա իւր աչքերը յառեց իմ աչքերին, կարծես կամենալով կարգալ նրանց մէջ իմ խօսքերի անկեղծութիւնը: Բայց այդ հայեացքը այնքան զօրեղ էր որ ես աւիամայ փախցրի իմ աչքերը նրանից: Կարճ լուծիւնից յետոյ սկսաւ խօսել:

— Ես կըկնում եմ որ իմ անցեալի պատմութիւնը չի կարող ձեզ հետաքրքրել: Կան դրութիւններ, որոնց պատճառած հաճոյքն ու վիշտը զգալու համար, պէտք է անպատճառ այդ դրութիւններին ենթարկուել: Հետեւապէս, նա, որ միայն այդ դրութիւնների նկարագիրն է լսում և, բնականաբար, չի բաժանելու դրանց պատճառած հաճոյքն ու վիշտը, կարող է աւիամայ ցաւ պատ-

ճառել նկարագրողին: Թոյլ տուէք ուրեմն որ ես այդ մասին ոչինչ չըխօսեմ:

—Չեմ կարծում թէ դուք կամենում էք ինձ վիրաւորել, բայց հաւատում եմ որ զգալու և հասկանալու ընդունակ չէք համարում ինձ, այդ դէպքում ինձ մնում է յետ առնել իմ խնդիրը, վշտացած նկատեցի ես:

—Որպէս զի ապացուցանեմ թէ դուք սխալուում էք, ես կը կատարեմ ձեր խնդիրը, ասաց քոյր-Աննան քաղցրութեամբ. բայց ես այդ կանեմ ո՛չ այս ըոպէին: Ինձ ժամանակ պիտի տաք ամփոփելու յիշողութեանս մէջ՝ քսան տարի առաջ տեղի ունեցած անցքերի պատմութիւնը:

—Շնորհակալ եմ. դուք ինձ ամենամեծ պատիւն էք անում. ուրեմն երեկոյեան դէմ շնորհ կունենամ ձեզ լսելու, ասեցի ես:

—Այդքան շուտ, նկատեց քոյր-Աննան ժպտալով, դուք ուրեմն կը խեղդէիք ձեր պարտապաններին, եթէ նրանք պայմանաժամը չըյարգէին:

—Այս դէպքում, անպատճառ, պատասխանեցի ես ծիծաղելով. ձեր պարտքը այնքան մեծ արժէք ունի իմ աչքում, որ ես ժամ առաջ կը կամենայի գանձել այն:

—Թող այդպէս լինի, ասաց քոյր Աննան և ես շնորհակալութիւն յայտնելով հեռացայ:

Յունիս 11.

Նշանակած ժամին դարոցումն էի, բայց քոյր-Աննային տանը չըգտայ: Ուսումնարանի աղախինն ասաց թէ՛ նա հենց նոր օրիորդ Մանիշակի հետ իջաւ փոքրիկ անտառակը, որ գտնուում է եկեղեցուց ներքև: Ես ևս այն կողմն իջայ, պտրեցի նրանց, բայց չըկարողացայ գտնել: Մօտիկ հոսող առուակի ափին, հովանաւոր լաստենու տակ, շինուած էր մի տախտակէ նստարան, որի վրայ նստայ և սպասեցի: Ուր որ էլ լինէին, տուն վերադառնալու համար, նրանք այգտեղից պիտի անցնէին:

Ամարային այն գեղեցիկ երեկոներից մինն էր, որ բնութիւնը միայն այս լեռներին է պարգևում: Արևը թէպէտ անցել էր անտառապատ սարերի ետևը, բայց նրա ճառագայթները դեռ վառում էին գիւղի հանդիպակաց լեռան գագաթը: Միջանցուկ ձորը՝ իւր խիտ անտառներով՝ ստուերի մէջ էր և զովարար գեփիւռը գուրգուրում էր այդտեղ ծաղիկ: ու խոտը, մացառն ու ծառը, փշելով մերթ թոյլ, մերթ գօրեղ շունչով: Անտառային թռչունները երգում էին հատ ընդ հատ, մինչդեռ ճնճղուկները աղմկում օգը իրենց ճուղղիւնով: Կողքիս հոսող առուակը խոխոջում էր մեղմաձայն և վարսագեղ ափերը հանդարտ քերելով՝ սահում դէպի խորունկ ձորի լանջի վերը և աղմկում այնտեղ տիրող լուսթիւնը: Ես նստած սպասում էի և անտառի քաղցրաքոյր հովը վայելում:

Եւ ահա քոյր-Աննան երեւոյ ծառերի մէջ: Նա առաջանում էր դէպի ինձ լուռ և մտախոհ: Այդ վայրկենին նա այնքան էր վեհ ու գեղեցիկ որ ես ակամայ հայեացքս սեւեւեւով՝ սկսայ դիտել նրան անյապ հիացմունքով: Հոյակապ հասակը, սիգածեմ գնացքը և ազնուաշուք դէմքը նմանեցնում էին նրան անտառային մի դիցուհու, կամ հայոց պաշտած սուրբ կոյսերից մինին: Պակասում էր միայն մի լուսապսակ, որ իւր մէջ ամփոփելով այդ հողաստեղծ արարածին, դարձնէր նրան երկնային — այնքան գեղանի և վեհաշուք էր նա, չընայելով որ տարիքը անցած էր քառասունից...:

Մօտենալով առուակին, նա նշմարեց ինձ նստարանի վրայ և ժպտաց:

— Անշուշտ չէք բարկանում որ ես ճշդութեամբ հետևում եմ պարտապանիս, ասացի ծիծաղելով և ոտքի ելայ:

— Ի հարկէ ոչ, ես էլ իմ պարտքը չէի մոռացել: Բայց իմ օրիորդին ճանապարհ դնելու համար այս կողմն անցայ. նա գնում է իրենց «գոմի տունը», որ մօտ է այս տեղից:

Մենք միասին բարձրացանք դէպի ուսումնարանը և նստանք բակում գտնուող ծառերի տակ, ուր արդէն աթոռներ կային: Քոյր-Աննան հրամայեց աղախնին թէյ բերել մեզ, իսկ մինչև այդ՝ նա լուռ մտածում էր, անշուշտ կամենալով անցեալը, կարելոյն չափ, կենդանացնել յիշողութեան մէջ: Քառորդ ժամից յետոյ նա սկսաւ խօսել:

ՔՈՅՐ ԱՆՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՕՐ

— Թէ ի՞նչպէս են անցել իմ մանկութեան օրերը, չեմ յիշում. բայց այն օրից որ սկսայ գիտակցաբար ապրել, գրեթէ ոչինչ, նոյն իսկ մի աննշան դէպք, ես չեմ մոռացել: Տասներկու տարեկան աղջիկ էի, երբ հայրս, որ Շ. քաղաքում պաշտօնական անձն էր, ինձ կարգացնելու որոշումն արաւ: Այդ ժամանակ աղջիկ կարգացնելը մի հազուագիւտ և միայն հարուստ աներին վայել սովորութիւն էր: Լաւ յիշում եմ թէ՛ այդ օրը ի՞նչ մեծ տօն էր ինձ համար: Հայրս, մինչև անգամ, մի փոքրիկ հացկերոյթ էր սարգել՝ հիւրասիրելու՝ ինձ համար նշանակուած վարժապետին, որ մեր քաղաքի ամենագիտնական քահանան էր: Նա առաջին անգամ իմ ձեռքը տուաւ մի պատկերազարդ այբբենարան: Առաջին դասս սկսայ «Սնչ, օգնեա ինձ» բառերով. բառեր, որոնց ես այդ ժամանակ թութակի պէս արտասանեցի, բայց որոնք յետոյ իմ դժուարատար օրերի միակ սխիթարիչ հառաչանքները դարձան...:

Ես սկսայ սովորել եռանդով: Քերականը աւարտելուց յետոյ, սաղմոսն ու ուսերէնը միասին սկսայ: Երկու տարուց յետոյ, իմ հօր կարծիքով, ես հայերէնն

արդէն աւարտել էի. որովհետեւ աւետարանը կարգում
և թարգմանում էի, ցանկացածս նամակը գրում էի.
կրօնից էլ արդէն դիտէի մի փոքր բան. ուրեմն գրա-
նից աւել սովորելիք չէր մնում: Այդպէս էր ասում
գոնէ հայրս, որի հեղինակութիւնը մեծ էր իմ աչ-
քում: Բայց ուսներէնը դեռ երկար պիտի շարունա-
կէի, մինչև որ այդ լեզուով ազատ խօսելն ու անսխալ
գրելը սովորէի, որպէս զի հարկաւոր գէպքում, հօրս
չամաչացնէի իւր պաշտօնակիցների առաջ: Բայց որով-
հետեւ իմ վարժապետ քահանայի ուսներէն լեզուի
պաշարը մեծ չէր, ուստի հարկաւոր եղաւ արքունա-
կան դպրոցի ուսուցիչներից մինին վարձել: Վերջինս,
թէպէտ ծերուկ, բայց եռանդով էր պարապում ինձ
հետ. այնպէս որ կարճ ժամանակի մէջ, հօրս սպա-
սածից աւելի առաջադիմութիւն ցոյց տուի ուսներէ-
նում: Ես ոչ միայն ազատ խօսում ու գրում էի, այլ
և կարող էի մասնաւոր վարժուհու պաշտօն կա-
տարել:

Այնուհետեւ ինձ համար բացւում էր ասպարէզ՝
համարձակ մտնելու այն շրջանները, ուր մեր քաղաքի
զարգացած մարդիկ, կանայք և օրիորդներն էին լի-
նում: Գաւառական քաղաքներում, առ հասարակ, բարձր
շրջանը կազմում են մի քանի ազնուական տներ և
պաշտօնական անձանց ընտանիքներ: Ես և՛ ազնուա-
կան և՛ պաշտօնական մարդու աղջիկ էի: Իմ հայրը,
Սիմօն-բէկը, քաղաքի գաւառապետի օգնականն էր:
Այդ մի մեծ պաշտօն էր այն ժամանակ: Նա շէնք ու-
շնորհքով մարդ էր և բաւական ազդեցիկ: Բացի այդ,

նա իւր բարի և միշտ օգնող բնաւորութեամբ սիրելի
էր ամենին, մեծից սկսած՝ մինչև փոքրին:

Ինչպէս մեր, նոյնպէս և մեր շրջանին պատկա-
նող ընտանիքներում, յաճախ տեղի էին ունենում
ինչոյքներ, հացկերոյթներ և պարահանդէսներ, ուր
հրաւիրուած էր լինում քաղաքի ընտիր հասարակու-
թիւնը: Ես իմ ծնողների հետ գնում էի անխտիր ամեն
տեղ: Սիրում էի պարել, խօսել, ծիծաղել, ուրախա-
նալ և ուրախացնել: Ամենքը սիրում էին ինձ, ես էլ
սիրում էի շատերին: Ի՞նչ էր մտածմունքը, ի՞նչ էր
տխրութիւնը, չը գիտէի: Բոլոր ժամանակ որ նստած
էի լինում տանը, ես զբաղւում էի միայն մի հաշուով.
— Ծվ և Էրբ պիտի այցելէ մեզ. Ծւ և Էրբ պիտի
այցելենք մենք, Ծվ ունի ինչոյք, Ծվ պարահանդէս.
Էրբ պիտի պարենք, Էրբ ուրախանանք...: Ես մի ան-
հոգ, անմեղ և միշտ հրճուող թուշիկ էի: Նոյն իսկ
ծնողներս, որոնց միամօր աղջիկն էի ես, ոչինչ չէին
իննայում ինձ ուրախացնելու և զուարճացնելու համար:
Նրանք շրջապատում էին ինձ ամեն տեսակ զգուանք-
ներով:

Այդպէս անցաւ կեսնքս մինչև իմ տասն և վեցե-
րորդ տարին: Իսկ այնուհետեւ արդէն դիպում էին
աւանջիս նոր բառեր, նոր խօսքեր: Ասում էին որ ես
արդէն հարսնացու եմ, որ ինձ համար այս ու այն
երիտասարդը առաջարկութիւն են անում, որ ես շատ
զեղեցիկ եմ...: Իմ ընկերուհիները նախանձով էին
նայում վրաս: Ասում էին թէ՛ ես զբաւել, կաշկանդել
եմ երիտասարդներին, թէ՛ նրանք ամեն տեղ միայն իմ

մասին են խօսում: Այս խօսքերից շատերը ես չէի հասկանում, բայց աշխատում էի հասկանալ:

Շատ ժամանակ չէր ինչ այս նորութիւնները սկսել էին ինձ զբաղեցնել, երբ անսպաս մի հանգամանք մտաւայնել տուաւ նրանց և իմ կեանքի ընթացքը բոլորովին փոխեց:

1864 թուականն էր: Մեր քաղաքի հայոց հոգևոր դպրոցի համար նոր տեսուչ և նոր վարժապետներ էին եկել: Ի՞նչ մարդիկ էին նրանք, չը գիտէի. միայն թէ նրանց գալն ու սկսած գործերը մեծ աղմուկ էին հանել քաղաքում: Ամեն տեղ նրանց մասին էին պատմում, խօսում և վիճում: Այդ առիթով մեր տանը նոյնպէս սկսան խօսել: Մեզ մօտ յաճախող բարեկամների ու ծանօթների զրոյցն էլ այդ մարդկանցն էր վերաբերում: Ինչ տուն կամ ընտանիք որ մտնում էի, այնտեղ էլ նրանց մասին խօսք կար: Ես այդ ժամանակ միայն հայոց հոգևոր դպրոցի ինչ լինելն իմացայ և զարմանում էի թէ ինչո՞ւ մինչև այն՝ ոչինչ չէի լսել նրա մասին:

Բոլոր խօսք ու զրոյցներից յայտնւում էր՝ որ հայոց հոգևոր դպրոցի նախկին տեսուչն ու վարժապետները հեռացուած և նրանց փոխարէն նորերն են կարգուած: Այդ պատճառով քաղաքի մէջ երկու կուսակցութիւն էր կազմուել. մէկը՝ հին խմբի պաշտպան և նորերին թշնամի, միւսը՝ նորերին պաշտպան և հներին թշնամի: Հայրս, իբրև յառաջագէտ խմբի կուսակից, վերջինների կողմն էր և իւր ազդեցիկ ձայնով մեծապէս նպաստում էր նոր խմբի ձեռնարկութիւնների յաջողութեան:

Անզգարապէս ես էլ սկսայ այդ նորութիւններով հետաքրքրուիլ: Ամեն օր երբ հայրս վերադառնում էր տուն, անպատճառ մի նոր և ինձ հաղորդելու արժանի նորութիւն էր բերում: Այս պատճառով նրա գալստեան ես սպասում էի այժմ մի առանձին հետաքրքրութեամբ:

Մի երեկոյ մեր տունը հաւաքուեցան քաղաքում ձայն ու կշիռ ունեցող մի խումբ մարդիկ, որոնց հետ և նորեկ վարժապետներից մի քանիսը: Առանձին սենեակում փակուած նրանք երկար խորհրդակցում էին: Շատ սպասեցի որ խորհուրդը վերջանար և ես իմ հօրից խորհրդի ի՞նչ լինելն իմանայի. բայց այն շուտ չըվերջացաւ և ես քնեցի:

Հետևեալ առաւօտ հայրս յայտնեց որ արդէն որոշել են մեր քաղաքում բանալ հայոց օրիորդական դպրոց, (որ առաջին փորձն էր), թէ հարուստներից մինն արդէն իւր տան մի յարկը ձրիաբար դրել է ապագայ դպրոցի դրամադրութեան ներքոյ և թէ շատ շուտով դպրոցական պարագաները պիտի պատրաստուին, որպէս զի աշակերտուհիների ընդունելութիւնն սկսուի: — «Դու էլ, սիրելիս, կը շարունակես այդտեղ քո ուսումը, աւելացրեց հայրս, քեզ դեռ շատ բան է պակասում»:

Հօրս վերջին խօսքն ինձ զարմացրեց: Ես արդէն ուսումնաւարտ աղջիկ էի համարում ինձ, իսկ նա դեռ նոր էր ասում թէ՛ շատ բան է պակասում ինձ:

— Ի՞նչ պիտի սովորեմ այնտեղ, հարցրի ես հեղնական ժպիտով:

— Հայերէն, սիրելիս, հայերէն, այդ բանում դու շատ յետ ես մնացել:

Ես բոլորովին գարմացայ:

— Բայց չէ՞ որ դու ասում էիր թէ՛ հայերէնի համար աւետարան կարդալ ու թարգմանելը և մի փոքր էլ նամակ գրելը բաւական է, հարցրի ես տարակուսած:

— Այն, բայց այն ժամանակ քո առողջութիւնը թոյլ էր, ես չէի կամենում որ երկու առարկայի դասերով ծանրաբեռնուիս: Բայց այժմ որ բաւական առողջ ես, ուսմանդ պակասը պիտի լրացնես, պատասխանեց նա:

Սակայն բուն պատճառը ուրիշ էր: Հայրս թէպէտ շատ բարի, բայց սեփնական կարծիք ու համոզմունք ասած բաները չունէր: Ամեն մի գորեղ լեզու կարող էր նրան իւր գերին դարձնել: Առաջ նրան այնպէս էին հասկացրել որ հայերէն շատ սովորել հարկաւոր չէ, ուստի ինքն էլ նոյնն էր կրկնել: Այժմ հակառակն էր լսել և կամենում էր ըստ այնմ գործել: Եւ նրա այդ պահանջի դէմ, ես իսկապէս ոչինչ չունէի: Մինչև անգամ ուրախ էի կատարել այն, որովհետև հետաքրքրւում էի տեսնել թէ՛ ի՞նչ բան է «օրիորդական» կոչուող դպրոցը և ի՞նչպէս պիտի հաւաքուին այդտեղ բազմաթիւ աղջիկներ՝ միասին սովորելու համար:

Մի անգամ հայրս հացկերոյթ սարգեց և հրաւիրեց հայոց ուսումնարանի տեսչին՝ իւր վարժապետական խմբով և դրանց հետ միասին իւր կուսակցութեան պատկանող քաղաքի առաջաւոր անձերից շատերին, այլ և մեր շրջանի տիկիներէից նրանց, որոնք վերջին անցքերով հետաքրքրուողներ էին:

Այդ օրը մեր տան մէջ բոլորովին անսովոր կերպարանք առաւ հացկերոյթը: Չը կային առաջուայ հասարակ ձևի զրոյցները, աննպատակ վիճաբանութիւնները, անհամ կատակները, անտեղի երգ ու պարը: Այստեղ քչերն էին խօսում և, գլխաւորապէս, վարժապետական խումբը: Իսկ մնացածներն ուշադիր լսում էին, կամ մերթ ընդ մերթ մի նկատողութիւն անում: Բոլորի կերպարանքն էլ, թէպէտ ուրախ ու զուարթ, բայց սքողուած էր մի ինչ որ լրջութեամբ:

Տեղի ունեցող ընդհանուր խօսակցութիւնը թէպէտ իմ ականջներին անսովոր, այսու ամենայնիւ, հետզհետէ զրաւում էր ինձ. ես լսում էի այն ուշադրութեամբ: Գործ դրուած բառերն ու խօսքերը մի տեսակ մօտիկ, ընտանի էին թւում սրտիս: Այդ տեսակ խօսակցութիւն, յիշում էի, որ երբեմն ունենում էր հօրս հետ՝ նաև իմ դասատու քահանան, բայց հայրս արհամարհանքով և հեգնութեամբ էր վերաբերւում նրան. ուստի վերջինս զգուշանում էր երկրորդ անգամ խօսելուց, որովհետև բաւական քաջութիւն չունէր համոզելու:

Իսկ այժմ, ես բոլորովին գարմանում էի թէ՛ ի՞նչպէս նոյն հայրս, այն արհամարհող, հեգնող և ոչ ոքին իրենից բարձր չը համարող մարդը խորին ակնածութեամբ, աչքերը ձառախօս տեսչին յառած՝ լսում էր նրան և նրա ամեն մի խօսքին հաւանութեան նշան անում գլխով:

Որքան յիշում եմ, այդ օրից արդէն արթնացաւ իմ մէջ ազատ խորհելու և ազատ գործելու բնական

եռանդը: Որովհետև հօրս, որին ես մինչև այն ինձ առաջնորդ և իմ կեանքի ղեկավար էի ընդունում, տեսնում էի արդէն թափուր այն ուժից, որը ես նրա մէջ երևակայել էի: Այժմ կարծես մի նոր, մի գորեղ հեղինակութիւն էի որոնում, որին կարողանայի հպատակել և որը կարողանար առաջնորդել ինձ դէպի լաւագոյնը, դէպի կատարեալը: Որովհետև բոլոր այդտեղ խօսածներէից, բոլոր իմ լսածներից ու հասկացածներից ես եկայ այն եզրակացութեան թէ՛ որքան փոքր ու չնչին արարած եմ ես, թէ՛ դեռ որքան շատ է պակասում ինձ փոքր ի շատէ կատարեալ լինելու համար:

Երբ ներկայ եղող հիւրերին առաջարկուեց խմել հայոց դպրոցների յառաջադիմութեան «կենացը», վարժապետներից մինը, որի համար հայոց լեզուի ու պատմութեան դասատու էին ասում, բարեկազմ, գրաւիչ դէմքով և կրակոտ աչքերով մի երիտասարդ, բաժակը ձեռքն առնելով՝ սկսաւ խօսել: Նա բացադրում էր թէ՛ ի՞նչ ոյժ է դպրոցը և թէ՛ ի՞նչ կարող է անել նա: Այդ պատճառով խօսում էր հայոց հին անցեալից — Մեսրոպի և Սահակայ դարերից. պատմում էր նրանց սկսած և կատարած գործերը, խօսում էր մեր հին վանքերի մասին և այն գերազանց ոգւոյ ու զգացմանց համար, որ այդ վանքերը ներշնչել էին ուսանող երիտասարդութեանը. խօսում էր երկար և վերջը գալիս այն եզրակացութեան թէ՛ մեր եկեղեցին և ուսումնարանը այն անբաժան ու սրբազան հաստատութիւններն են, որոնցից ներշնչուած ուժով միայն մենք պիտի մաքառենք տղիաութեան և խաւարի բռնութեան դէմ:

X

Այո՛, նա խօսում էր երկար. բայց ի՞նչպէս էր խօսում. կարո՞ղ էք միթէ՞ երևակայել: Նրա խօսքերը նմանում էին մի յորդանոս աղբիւրի, որ խոխոջալով բղխում է անսպառ ակունքներից և գետանեալով մարգերի ու մարմանդների վրայ՝ սուղում իւր ականակիտ և գուարթարար ջրով խոտ, բոյս, թուփ, ծառ և ամենը, ինչ որ պատահում է նրան ճանապարհին՝ արևի կիզիչ ճառագայթներից պասքած ու թառամած...:

Ես հիացած ու ակնկառոյց նայում էի այդ երիտասարդին. նայում էի և չէի կշտանում: Նրա դէմքի վրայ վառւում էր մի սուրբ, մի ազնուական կրակ, որի կայծերը թափանցում էին իմ սրտի խորքը առանց որ ես կամենայի: Չը գիտեմ ինչո՞ւ, բայց ես հետեւում էի յափշտակել նրա հայեացքը, որի մէջ այնքան կեանք ու կենդանութիւն էին ցոլանում: Նրա խօսքերը կարծես հրաշէկ երկաթով դրօշմւում էին իմ սրտին, ես կամենում էի որ նա անվերջ խօսէր, որ ես շարունակ լսէի նրան...: Պատահե՞լ է ձեզ երբ և երբէ գրաւուիլ այնպիսի երգով, որը ցանկանայիք շարունակ ու անվերջ լսել և որի լռելը ցաւ պատճառէր ձեր սրտին... Ահա՛ այդպիսի մի երգ էր երիտասարդի բանախօսութիւնը, որի վախճանը ես չէի ուզում տեսնել: Բայց նա աւարտեց և դահլիճը թնդաց երկաւրատե և անլռելի ծափահարութեամբ:

Այդ երիտասարդի անունը Գարեգին էր:

Մի քանի օրից յետոյ ես կրկին պատահեցի երիտասարդ ուսուցչին մեր բարեկամներից մէկի տանը, ուր դարձեալ հրաւիրուած էր վարժապետական խում-

բը: Հացկերոյթն այստեղ էլ նոյն բնաւորութիւնն ունէր, ինչ որ մեզ մօտ: Այստեղ էլ խօսքը, զրոյցը, վիճարանութեան նիւթը հասարակական հարցերն էին և գլխաւոր խօսողները՝ տեսուչն ու վարժապետները: Բայց ամենին դարձեալ գերազանցեց երիտասարդ Գարեգնի ճառը, որը նա խօսեց նոր բացուելիք օրիորդական դպրոցի մասին: Նա մասնացոյց արաւ մեր օրիորդների դաստիարակութեան անհրաժեշտութիւնը և ճշաւիբեց ներկայ եղող կանանց աջակցել այդ սուրբ գործի յաջողութեանը: Մինչև այժմ էլ դեռ կենդանի են յիշողութեանս մէջ նրա իմաստալից խօսքերը, որոնք դեռ այն ժամանակներից զրուած են իմ յիշատակարանում և որոնց ես այսօր մի անգամ էլ կարդացի որովհետև կամենում էի անցեալը նորոգել յիշողութեանս մէջ: — «Մօր կոչումը մեծ է և սուրբ, ասում էր նա, որովհետև Նախախնամութիւնը նրան է յանձնել մարդկային ազգի բաղբը, նրա ձեռքումն է գտնւում և՛ եկող սերնդի ապագան:» Հետևապէս, մայրերը կարող են երջանիկ անել այդ սերունդը, կամ մասնել կորստեան: Մայրն է, որ խնամում է այն մանկութիւնը, որ կրում է իւր մէջ կատարեալ հասակի արմատները: Եթէ այդ արմատներն առողջ են, եթէ նրանք ապականուած ջրով և վնասակար հիւթերով չեն սնուել, ապա ուրեմն ծառը հաստատուն և պտուղները բարի կը լինին: Չը պէտք է տարակուսել այն սերնդի առաքինութեան վրայ, որին դաստիարակում են առաքինի մայրեր: Առիւծներն աղուէսներին կաթ չեն ջամբում և ոչ էլ դիւցազնուհիները կաճաճներ են սնու-

ցանում: Աւելի մեծ է այն ազգը, որ արժանաւոր մայրերով է հարուստ, քան այն ազգը, որ իւր թընթանօթներով է պարծենում: Նին պատմութիւնից մի օրինակ աւելի լաւ է ապացուցանում այս ճշմարտութիւնը: — Հռոմայեցիների զօրքերը փախուստ տուին հայրենակից Կորիոլանի երեսից, որն իւր հայրենիքէ դէմ ապստամբուելով՝ յարձակուել էր Հռոմի վրայ՝ թշնամի Վօլսկաց զօրքերով: Քաղաքը սարսափի մէջ էր. ձերակուտի խնդիրն ու աղաչանքը արհամարհուեցան, Կորիոլանը անդրդուելի էր. նա սպանում էր Հռոմը կործանել...: Բայց երբ քաղաքի պարիսպներից դուրս երևաց Կորիոլանի մայրը, Պառաւ Վետուրիան և որդին դիմեց նրան գրկախառնուելու, մայրը բացականչեց. — «Հեռու ինձանից... Թող տեսնեմ որդու մօտ եմ գալիս, թէ՛ թշնամու. գերի՞ եմ քո բանակում, թէ՛ մայր... Մեթէ երկար ապրեցի նրա համար որ քեզ տեսնեմ ապստամբ ու թշնամի: Ի՞նչպէս համարձակուեցար աւերել այն երկիրը, որ ծնեց քեզ, ինչպէս չըթուլացաւ քո գայրոյթը, երբ հայրենիքի սահմանները մտար. ի՞նչպէս կարողացար հեռուից տեսնել Հռոմը և չըյիշել որ այնտեղ բնակում են մայրդ, կինդ և զաւակներդ...» Եթէ ես քեզ չը ծնէի, Հռոմը չէր վտանգուիլ այս կուռից, եթէ ես որդի չունենայի, ապա կը մեռնէի իմ ազատ հայրենիքում...»: Մօր խօսքերը ապստամբ որդու սիրտը շանթահարեցին. Կորիոլանի գայրոյթն իջաւ. նրա ոտքերը թուլացան և մօր գիրկն ընկնելով՝ բացականչեց. — «Մայր իմ, հայրենիքդ փրկեցիք, բայց որդիդ կորուսիք.» և Վօլս-

կայ ձեռքը մասնուելով՝ համաձայն իւր դաշինքին, սրախողխող եղաւ: Տեսէք ուրեմն թէ ո՞վ է մայրը՝ տեսէք թէ՛ որի՞ դաստիարակութեան համար է, որ մենք պիտի զոհենք ամեն բան: Կանայք, ոգևորուած բացա- կանչում էր երիտասարդը, հանեցէք ձեր զարդերը, տուէք մեզ ձեր մատանիները, ձեր գինդերը, ձեր ապարանջանները, ո՞չ որ ոսկի հորթ ձուկէնք ձեզ համար, այլ որ ձեր աղջիկների կրթութեան և դաս- տիարակութեան համար հիմնենք տաճար ու սրբարան, որ ապագայում լուսաւոր, առաքինի և ձեր անուանը փառք ու պատիւ բերող որդիք ու թոռներ պիտի շը- նործէ ձեզ: Դուք, հայ կանայք, որ մինչև այսօր օրի- նակելի առաքինութեամբ ապրելով՝ հայ ընտանիքի սրբութեան ու հաստատութեան խարխախտ էիք կազ- մում, իմացէք որ ձեզանից յետոյ, նոյնը լինել չեն կարող ձեր որդիները, եթէ միայն ձեր չափով լուսա-ւորուեն. որովհետև դարը փոխուում է, կեանքը այլա- կերպւում, ապականութիւնը զօրանում և առաքինու- թիւնը նուազում...: Պէտք է այդ շարիքների դէմ թումբեր հաստատել և այդ թումբերն են՝ հիմնաւոր ուսումը և ճշմարիտ լուսաւորութիւնը: Դրանց տա- րածելու համար՝ մենք կարօտում ենք ձեր աջակցու- թեան և օրհնութեան»:

Մեր տանը եղած ժամանակ ես յարմարութիւն ու միջոց չունեցայ աւելի մօտ ծանօթանալու այդ վարժապետին: Բայց այստեղ դէպքը ինքն իրեն ներ- կայացաւ: Ծաշից վերջը նա մօտենալով ինձ և ընկե- րունիներին՝ տեղեկութիւններ հարցրեց մեր ուսման

ու պարապմունքի մասին: Երբ կարգը հասաւ ինձ և ես իմ սովորածների հաշիւը տուի, նա ասաց.

— Դուք դարձեալ պիտի շարունակէք սովորել և եթէ եռանդ ու ցանկութիւն ունենաք, կարող էք պատ- րաստուիլ վարժուհի մեր նոր բացուելիք դպրոցի հա- մար: Կը գայ մի օր, երբ մենք չենք լինիլ և դուք պատրաստուած լինելով՝ մեր սկսածը կը շարունակէք: Իւրաքանչիւր մարդու վրայ, կին լինի նա, թէ տղա- մարդ, սրբազան պարտք կայ որոշ չափով հասարակու- թեան ծառայելու: Ի հարկ է, շատ ունեցողը շատ կը տայ, քիչ ունեցողը քիչ. բայց այդ պարտքից ազատ չէ ոչ ոք: Զգուշացէք, օրիորդներ, ասում էր նա՝ դառնալով բոլորիս, որ ձեր ծաղկող հասակն ապար- դիւն չ'անցնէ նման բարտի ծառին, որ ուռձանում, բարձրանում է մինչև ամպերը, բայց ո՞չ հովանի է տալիս արևակէզ անցորդին և ոչ էլ պտուղ՝ տնկող մշակին: Սյժմեանից արդէն պիտի սովորէք օգտաւէտ լինել այն հասարակութեան, որին ձեր հարազատն էք անուանում: Մի նուիրէք ձեր սիրտը վաղանցուկ հրա- պոյրների և ոչ էլ շլացէք փայլուն երևոյթներով: Դրանք ասուպներ են, որոնք մի վայրկեան վառուե- լով երկնակամարի վրայ, ապա հանգչում, անհետանում են մթութեան մէջ: Հետևելով դրանց՝ դուք կը մոլո- րուիք և ի գուր կը վասնէք ձեր թանկագին հարստու- թիւնը, այն է՝ երիտասարդական հասակի աննման եռանդն ու կորովը և այդպիսով ձեր ժառանգները կը մասնէք բարոյական աղքատութեան: Մի օր յետ կը նայէք և կը տեսնէք թէ՛ որքան դատարկ, որքան

ապարդիւն է անցել ձեր կեանքը, բայց այն ժամանակ արդէն ուշ կը լինի: Փափուկ և անդորր ապրողից աւելի՝ երջանիկ է այն մարդը, որ կեանքը նուիրում է իւր նմաններին օգնելուն, մանաւանդ բարոյական ձեռնաուկթեամբ: Սովորեցէք ապրել այդ կեանքով, սովորեցրէք նոյնը և նրանց, որոնց առաջնորդ պիտի լինիք: Այդպիսով դուք ապագայ սերունդը կը բաղաւորացնէք և Աստուած ու մարդիկ կօրհնեն ձեզ»:

Այս և սրա նման շատ բաներ էր խօսում երիտասարդը: Նա կարծես հետևում էր հին առաքեալներին, նպատակ ունենալով՝ «քարոզել և ուսուցանել» ուր և լինէր, դպրոցում թէ՛ եկեղեցում, ընտանիքներում, թէ՛ հրապարակում: Նա միշտ զգացուած, միշտ ոգևորուած էր: Նրա խօսքերն աղբիւրանում էին ոչ իբրև հասարակ զրոյց, այլ իբրև հրահալելիք, որ կրակուած ծորում ու թափանցում է կաղապարի ամենաթափազուն խորշերը...:

Եւ որքան հիացմունքով, որպիսի յափշտակութեամբ էինք լսում մենք նրա քարոզները:

Մի շաբաթ անցաւ այս օրից և այդ բոլոր ժամանակ ես մտածում էի երիտասարդ վարժապետի վրայ: Նրա բոլոր խօսածները կենդանի էին դեռ իմ լսողութեան մէջ. ես շարունակ որոճում, քննում էի նրանց, կամ աշխատում բացազրել՝ ինչոր ինձ համար մութ ու անհասկանալի էր մնացել: Ես նկատում էի որ իմ մէջ սկսում է մի ինչ որ յեղափոխութիւն, մի ուժգին ձգտումն՝ լինելու այն, ինչ որ երիտասարդ ուսուցիչն էր կամենում: Նա շատ լաւ սպաւորութիւն էր

թողել և ծնողներին վրայ, որոնք շարունակ նրա մասին էին խօսում: Այս բանը ինձ մեծ հաճոյք էր պատճառում: Ի՞նչ տարօրինակ համակրութիւն էր այս, որ ես մտածում էի դէպի երիտասարդ վարժապետը, չըզիտեմ, միայն թէ ցանկանում էի լսել նրա մասին շարունակ: Գարեգին անունն իսկ, երբ արտասանում էին, քաղցր էր հնչում իմ ականջին: Բոլորովին նոր, բոլորովին աննման բարեկամութեան մի զգացմունք էր այս, որպիսին ես, արդարև, չէի տածել երբէք դէպի ոչ մի իմ ծանօթն ու ընկերուհին: Ցանկանում էի որ նա իմ եղբայրը լինէր, որ մեր տան մէջ, մեզ հետ միասին ապրէր, որ ես շարունակ առիթ ունենայի նրան տեսնելու, նրա գրաւիչ և ոգևորող խօսքերը լսելու: Երբ պատահում էի իմ ընկերուհիներից միսին, մեր խօսակցութեան առարկան անպատճառ Գարեգին վարժապետն էր: Մենք բոլորս էլ համաձայն էինք նոր բացուելիք օրիորդական դպրոցում նորից աշակերտելու, եթէ միայն մեր ուսուցիչը Գարեգինը լինէր:

Շատ չանցաւ, դպրոցի բացման օրն էլ հասաւ: Ընդարձակ և զարգարուն դահլճի մէջ հաւաքուել էր խուռն բազմութիւն: Այդտեղ էր սրբազանը՝ իւր քահանաներով, տեսուչն՝ իւր վարժապետական խմբով, ընդունուած աշակերտուհիներն՝ իրենց ծնողների և բարեկամների հետ, դպրոցի բացման նպատող պատուաւոր քաղաքացիներն ու նրանց կանայք—դպրոցի նորընտիր խնամակալուհիները, որոնցից միմն էր և մայրս, ապա ուսանողներ, արհեսաւորներ և ուրիշ շատերը:

Ես էլ իմ ընկերուհիները հետ՝ առանձին կանգնած՝ հետաքրքրութեամբ դիտում էի հանդէսը, որ բացուեց սրբազանի մի փոքրիկ ճառով, կաթողիկոսի կոնդակի ընթերցումով և քահանաների հոգևոր երգերով: Ապա գեղեցիկ և ազդու բանախօսութիւն արատեսուչը, նիւթ առնելով իրեն կանանց ազդեցութիւնն ընդհանուր մարդկութեան վրայ և, հետևապէս, նրանց կրթութեան և զարգացման նշանակութիւնը՝ ընտանիքների երջանկութեան և ազգերի յառաջադիմութեան համար: Մեր նոր սերունդը, որ շատ է խօսում այժմ հայ կնոջ կրթութեան մասին, չէ հետաքրքրում սակայն՝ մեր մէջ սկսուած այդ գործի ուսանելի անցեալով: Եւ այդ է պատճառը որ այդ գործի հիմնադիրնա համարում է միայն վերջին ժամանակի այս ու այն գործչին, անտես անելով այդպիսով պատմական ճշմարտութիւնը: Եթէ դուք չէք պատկանում անցեալի ուսումնասիրութիւնից խորշոզ երիտասարդների թուին, ապա ուրեմն կարդացած կը լինիք տեսչի այդ բանախօսութիւնը 64 թուականի «Մեղու»-ի համարներում, կամ 71 թուականի «Սիօն» ամսաթերթում: (Ես խոստովանեցի իմ անձանօթ լինելը յիշուած թուականների թերթերին): Հոգ չէ, շարունակեց քոյր-Աննան, ես ունիմ «Սիօն»-ի համարը և կը տամ ձեզ կարդալու այդ ճառը, որ կանանց լուսաւորութեան գործի մի հրաշալի ներբողն է, որի նմանը, չեմ յիշում թէ, լոյս տեսած լինի երբէք հայ լրագրութեան մէջ և որը մեծ նշանակութիւն ունի, մանաւանդ, այն պատճառով, որ արտասանուել է քառորդ դար մեզանից առաջ:

Արժէր որ այսօր էլ այդ գրուածքը կարդային ամեն տեղ և իւրաքանչիւր հայ ծնող՝ իւր աղջիկը դաստիարակելու գործում՝ առաջնորդուէր նրա մէջ արտայայտուած մտքերով:

Բայց ես դառնամ իմ պատմութեան:— Տեսուչն, որ իւր վեհ և պատկառելի կերպարանքով գրեթէ սուրբի տպաւորութիւն էր անում մեզ վրայ, իւր այդ ճառով այնպէս վառեց ու բորբոքեց ներկայ եղողներին, որ բացի առատ նուէրներն, որ ստորագրեցին նրանք անդրանիկ դպրոցի օգտին, այլ և քառասունից աւելի տիկնայք որդեգրեցին աղքատներից մի մի որդեգրուհի՝ խոստանալով հոգալ նրանց մտաւոր ու նիւթական բոլոր պիտոյքը: Նոյն իսկ առաջնորդը հետեւեց կանանց օրինակին՝ որդեգրելով երկու աղջիկների: Այսպիսով ծնունդ առաւ մեր քաղաքի անդրանիկ օրիորդական դպրոցն, որ կնքուեցաւ Ս. Մարիամեան անունով:

✓ Իմ ուրախութեան չափ չըկար, երբ մի քանի օրից յետոյ՝ հայրս տուն վերադառնալով յայտնեց թէ՛ օրիորդական դպրոցում արդէն բացուում է այն դասարանը, ուր ես և իմ ընկերուհիներն, իբրև հասակաւորներ, առանձին պիտի հայերէն սովորենք Գարեգին վարժապետի մօտ: Օ՛հ, ինչ հրճուանքով, ինչպիսի բերկրութեամբ լսեցի ես այդ լուրը և ինչպէս պինդ սեղմեցի հօրս իմ կրծքին:

Հասաւ ցանկալի օրը: Վեց աշակերտուհիներ, բոլորս էլ համարեան մի աստիճանի զարգացումով, հաւաքուած օրիորդական դպրոցի մեզ համար նշանա-

կուած դասարանը, ուրախ ուրախ խօսում և պատմում էինք միմեանց հազար և մի դպրոցական նորութիւններ և սպասում մեր սիրելի ուսուցչին:

Վերջապէս նա եկաւ և ողջունեց մեզ մի սրտաշարժ ճառով. ապա բաժանելով իւրաքանչիւրիս մի մի Աւետարան ու Եղիշէ ասաց. «այս երկու գրքերը կը լինին ձեր ուսման սկիզբը և վերջը»:

Մեզանից ոչ ոք, ի հարկէ, չըմբռնեց իսկոյն այդ խօսքերի իմաստը: Ես, մինչև անգամ, դժգոհ եղայ որ դեռ նոր պէտք է աւետարան կարգամ, մի գիրք, որ արդէն քահանայ վարժապետիս մօտ կարգացել, վերջացրել էի: Ինձ վրայ, նոյն իսկ, մի տխուր հիասթափութիւն եկաւ: Ես ինչեր էի երազել՝ թէ պիտի սովորեմ Գարեգնի մօտ և այժմ ի՞նչ գրքեր էր նա մեր ձեռքը տալիս:

Իայց անցաւ մի քանի դաս և ես զղջացի իմ դժգոհութեան վրայ, որովհետև տեսայ թէ՛ որքան մեծ և որքան բարձր ուսում է եղել այդ՝ ինձ «մի հասարակ գիրք» երևացող՝ աւետարանի մէջ. ուսում, որն ըմբռնելու և իւրացնելու համար հարկաւոր էր մեզ դեռ երկար աշխատութիւն: Անշուշտ, նոյնը կը լինէր և Եղիշէի գիրքը, որի մասին, ի հարկէ, ես չէի կարող դեռ կարծիք յայտնել, բայց աւետարանի վրայ առածս դասերից դատելով՝ արդէն հաւատում էի իմ ուսուցչի արժանաւոր ընտրութեան:

Այստեղ մենք ուսանում էինք կրօն՝ աւետարանի վրայ, լեզու՝ Եղիշէի վրայ, և ազգային պատմութիւն՝ վարժապետի բերանացի պատմածներով:

Կրօնի դասերն, ի հարկէ, չէին նմանում այն դասերին, որ մի ժամանակ աւանդում էր ինձ քահանան. չոր ու ցամաք աղօթքների փոխարէն՝ ուսուցիչն այժմ ծանօթացնում էր մեզ աւետարանի վարդապետութեան, բացազրելով Քրիստոսի պատուէրները պարզ և դիւրըմբռնելի ոճով: «Կրօնը, ասում էր նա, սովորեցնում է մեզ սիրել բարին, ճշմարիտը և ընկերը և հեռանալ այն ամենից, ինչ որ արգելք է լինում այդ սիրոյ աճելութեան»: Այսպէս սահմանելով կրօնը, նա աշխատում էր զարթեցնել մեր սրտերում սիրոյ գեղեցիկ զգացումը: Եւ նրա աշխատութիւնը ապարդիւն չէր անցնում: Գոնէ իմ վերաբերմամբ կարող եմ ասել թէ՛ իւրաքանչիւր դասից յետոյ ես ինձ զգում էի մի տեսակ փոխուած, մի ինչ որ թեթև ու բարձր մթնոլորտում, ինձ թւում էր թէ՛ այդ միջոցին ես աւելի եմ սիրում ինձ շրջապատողներին, աւելի քաղցր ու ներող աչքով նայում նրանց թերութիւններին: Ինչ վերաբերում է ազգային պատմութեան, դա արդէն ոգևորութեան անսպառ աղբիւր էր մեզ համար: Ուսուցիչն այդ առարկան աւանդում էր մեզ ո՛չ իբրև դաս, այլ իբրև հոգի, կենդանացնելով մեր առաջ անցեալը և սովորեցնելով՝ ներկայի համար՝ նրանից օգտուելու ճանապարհը:

Պէտք է ասել՝ որ իմ ընկերուհիների մէջ ամենից աւելի եռանդով սովորում էի ես: Ուսուցչիս արտասանած ամեն մի բառը, խօսքը, պատմածը յափշտակում էի ազանութեամբ: Իսկ զրանից յետոյ՝ էլ ոչ մի գործ կամ զբաղմունք չէին կարողանում հեռացնել

ինձ ստացածս դասերը պատրաստելուց: Իմ ուրախութեան չափ չէր լինում, երբ առանց ամենափոքր սխալի և դժուարութեան պատասխանում էի դասերս: Ուսուցիչը գովում էր ինձ յաճախ, բայց ես չէի կամենում որ նա գովէր ինձ իմ ընկերուհիների ներկայութեամբ. դրա համար ամենափոքր ինքնասիրութիւն անգամ չունէի: Ես կամենում էի որ նա միայն ինքը հասկանար թէ՛ իւր տուած դասերը չէի կարող չըստփորել, որ իմ միակ ուրախութիւնն ու ցանկութիւնը՝ իրեն գոհութիւն պատճառելս էր:

Մի քանի ամսից յետոյ հայրս յայանեց ինձ թէ՛ ուսուցիչս խորհուրդ է տուել իրեն՝ հանել ինձ դպրոցից: Ես բոլորովին զարմացայ. սա անսպաս նորութիւն էր:

— Ի՞նչպէս, բացականչեցի ես, մի՞թէ նա իմ մէջ պակասութիւն է նշմարել:

— Ոչ, սիրելիս, նա կամենում է քեզ հետ մեր տանը պարապել, ասաց հայրս մեղմով ժպտալով:

— Բայց պատճառը:

— Պատճառը յարգելի է. նա ասում է թէ՛ «ձեր աղջիկը չափազանց ընդունակ է և տրամադիր արագ յառաջադիմելու. բայց իւր ընկերուհիները խանգարում են նրան իրենց յամբ ընթացքով. պէտք է ձեր աղջկան ազատ ասպարէզ տաք առաջ գնալու»:

— Իսկ դ՞ու, հայրիկ, մի՞թէ համաձայն չես, այժմ արդէն սրտատրոփ հարցրի ես:

— Ես կանեմ այն, ինչ որ դու կը ցանկանաս, սիրելի աղջիկս, ասաց նա գգուանքով և ես ուրախութիւնից խելագարուած՝ նրա գիրկը թռայ:

— Այո՛, հայրիկ, ես կամենում եմ որ նա այստեղ, մեր տանը դասախօսէ, ասացի ես: Իրաւ որ իմ ընկերուհիները խանգարում են ինձ. նրանք սովորելու ոչ եռանդ և ոչ ցանկութիւն ունին: Առաջին օրերը միայն ոգևորուած էին. իսկ այժմ, ճի՛շտ, ես ամաչում եմ նրանց տեղ, գրեթէ ոչինչ չեն սովորում. հենց որ վարժապետը դասախօսում է, նրանք դարձեալ ոգևորում են, բայց տուն վերադառնալուց՝ կրկին նոյն սառն ու անզգայ աղջիկներն են դառնում, ինչ որ են իսկապէս:

— Թող ցանկացածդ լինի, ասաց հայրս, ես կը խնդրեմ Քարեգինն որ վաղուանից գայ մեզ մօտ:

Օ՛հ, ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ աւետիք էր այս ինձ համար: Եւ որպիսի սիրով, որքան խանդադատանքով զրկեցի ես նորէն իմ բարի հօրը. ինչպէ՞ս նրան այժմ ջերմութեամբ էի սիրում:

Եւ իրաւ, իմ ընկերուհիները խանգարում էին ինձ: «Այժմ ես տամնապատիկ աւելի եռանդով կը սովորեմ, մտածում էի ես, իմ թանկագին ժամանակն էլ չեմ գոհիլ իմ ընկերուհիների աննպատակ շատախօսութեանը... այժմ արդէն արագ կը յառաջադիմեմ»: Եւ իմ ենթադրութիւնները սխալ չէին:

Սկսած այն օրից, որ Քարեգինն եկաւ մեր տանը դասախօսելու, ես հետզհետէ մեծ յառաջադիմութիւն արի: Մի քանի ամսուայ մէջ հայերէնից արդէն բաւական բան էի սովորել, պատմութիւնը կիսել և կրօնի ուսմունքը, գրեթէ, աւարտում էի: Այժմ իմ ուսանելի առարկաների թուին աւելացրեց ուսուցիչս և

հայոց գրականութեան ու եկեղեցական պատմութեան դասեր: Յետոյ տալիս էր ինձ մեր մատենագրութիւններից ամենաընտիրները՝ շարունակ կարդալու: Երբեմն ժամերով նստած՝ նա խօսում էր ինձ այնպիսի դասեր, որ ես ոչ մի գրքում չէի կարող կարդալ, և այդպիսի հոգեշունչ դասերին յաճախ ներկայ էին լինում հայրս, մայրս և մօտիկ ազգականներս, որոնք բոլորն էլ հիանում և մխիթարում էին:

Այսպէս առաջ էր դնում ուսմանս գործը, որին ես նուիրուել էի հոգևով ու սրտով:

ԵՐԿՐՈՐԿ ՕՐ

Այժմ պէտք է պատմեմ ձեզ իմ կեանքի, այսպէս ասած, հոգեկան մասի պատմութիւնը, որն իմ վերաբերմամբ բաւական տխուր էջեր է պարունակում:

Ի հարկէ, եթէ քսան և մի երկար տարիներ անցած չը լինէին այն ժամանակի վրայ, որին պատկանում է այս պատմութիւնը և եթէ ես արդէն սիրով ու համոզմամբ հաշտուած չըլինէի այն գրութեան հետ, որի մէջ գտնուում եմ այժմ, ինձ համար ոչ միայն ծանր, այլ դուցէ և անհնարին լինէր այդ պատմութիւնն անել, ինչպէս և ոչ մէկին չեմ արել մինչև այսօր: Բայց ժամանակը, որ ամեն ինչ մաշում է, հնացրել է արդէն և իմ վերքերը, թէպէտ բոլորովին չէ բուժել նրանց: Ուստի այժմ հանգիստ և առանց յուզուելու կարող եմ պատմել ձեզ բոլորը, ընդունելով թէ՛ ես էլ այս աշխարհում ունեցայ մի օր մի եղբայր,

որին կարողացայ բանալ իմ սիրտը՝ անցեալի վերաբերմամբ:

Բայց տարին լրանալու մօտ, ես մի տարօրինակ փոփոխութիւն էի նշմարում իմ մէջ: Մի ինչ որ անձուկ ճնշում էր սիրտս և անհանգստացնում հոգիս: Ինձ այլ ևս չէին գոհացնում ստացածս դասերի յաջող պատրաստութիւնը և ուսուցչիս այդ առթիւ յայտնած շնորհակալութիւնը: Երբ նստում էի դաս պատրաստելու, դեռ կէսը չանցած, միտքս թռչում էր ուրիշ տեղ, աչքերս սեւուում էին մի առարկայի վրայ և երբեմն ժամերով մնում էի այդպէս, կէս քուն, կէս արթուն: Ինքս էլ չըզիտէի ինչո՞ւ եմ նրասել անգործ, ինչի՞ վրայ եմ մտածում...: Եւ երբ ուշաբերելով՝ նորէն սկսում էի կարդալ, տեսնում էի որ սովորածս արդէն մոռացել եմ: Շատ անգամ փախչում էի իմ ծնոգների ընկերակցութիւնից, քաշում էի սենեակս, կեղծելով, իբր թէ, գիրք եմ կարդում և սակայն այդտեղ անձնատուր էի լինում մտածութեան: Ի՞նչն էր իսկապէս իմ մտածմունքի առարկան, չըզիտէի, կամ գուցէ թւում էր ինձ թէ՛ չըզիտեմ...: Այսքանը ճիշդ էր որ երեակայութեանս առաջ յաճախ պատկերանում էր իմ ուսուցիչը: Ես նայում էի նրան կարծես գողունի հայեացքով, դիտում էի նրա գուարթ և վստահ պատկերը, նրա կեանքով ու կրակով լի աչքերը, լսում էի կարծես նրա քաղցրահնչիւն ձայնը, հոգեշունչ խօսքերը, խրատականները... և յանկարծ սթափուելով՝ բարկանում էի ինձ վրայ, խանգարում երեակայութեանս թուիչքը, ցրում մտածութիւններս և

ինքս ինձանից կամենում էի փախչել, ինչպէս մի մարդ, որ հալածւում է իւր խղճից՝ մի յանցանք գործած լինելուն համար: Եւ սակայն խիղճը չէր, որ հալածում էր ինձ, այլ բանականութիւնը, որ սրտիս հետ միացած՝ փորձում էր մեղադիր լինել իմ անպարտ խղճին...: Շատ անգամ իմ մէջ զարթնում էին հակառակ զգացումներ, միմեանց հակասող յուզմունքներ: Երբեմն մի հասարակ մտածմունք, որ կապ ունէր իմ բուռն ցանկութիւնների հետ, այնպիսի ուրախութիւն էր պատճառում ինձ՝ որ ես կամենում էի երգել, խաղալ, թռչկոտել: Իսկ երբեմն, դարձեալ, մի չնչին պատճառից՝ տրտմութիւնն ու թախիժը պաշարում էին ինձ, մաքերս մոլորում և ես սէր գտնուելու անգիտանում էի:

Մի քանի անգամ փորձեցի ստիպել ինձ՝ նախկին զգաստութեամբ և աշխատասիրութեամբ պարսպել իմ դասերով, կամ առանին գործերով: Պատահում էր, նոյն իսկ, յաղթահարում էի ինձ և շարունակում գործս ուշագիր լրջութեամբ, բայց այդ լինում էր մի քանի օր: Փոքրիկ առիթ պատահած ժամանակ՝ մտածմունքներն ու յուզմունքը նորէն պաշարում էին ինձ:

Երբ ուսուցչիս գալու ժամը մօտենում էր, ես, փոխանակ դասերիս ընթերցումը շարունակելու, գնում, կանգնում էի այն պատուհանի մօտ, որտեղից նրա գալը կարող էի տեսնել: Եւ երբ նա երևում էր, սկըսում էի զիտել նրան հեռուից, քննել նրա շարժումները, քալուածքը և, եթէ կարելի էր, նոյն իսկ դէմքն ու հայեացքը, մինչև որ նա գալիս մտնում էր բակը և սկըսում սանդուխտով բարձրանալ: Այնուհետև ես փոք-

րիկ, չարածճի աշակերտի նման վազում, հաւաքում էի զրքերս և նստում իմ սովորական տեղը: Բայց սիրտս այդ միջոցին տրոփում էր անհանգիստ, կուրծքս բարձրանում և իջւում. ես սկսում էի կասկածել՝ ինձ շրջապատող առարկաներից, կարծես հաւատարով թէ՛ նրանք կը մատնեն ինձ...: Երբեմն շփոթուելուց, մինչև անգամ, տեղիցս չէի բարձրանում՝ երբ մտնում էր ուսուցիչս. երբեմն էլ դժուարանում էի ուղիղ նայել երեսին: Բայց նա ծանրութեամբ նստում էր իւր տեղը, սովորական կերպով հարցնում կամ դասախօսում և առանց ամենափոքր ուշադրութիւն դարձնելու իմ շփոթութիւնների վրայ՝ հեռանում: Ուսուցչիս ՚ի հարկէ ես ճանապարհ էի գնում մինչև սանդուխտը. յետոյ պատշգամի վրայ կանգնած՝ հետևում նրան երկար, անթարթ աչքերով, մինչև որ նա հեռանում, ծածկւում էր իմ աչքից: Պատահում էր նա և որ ես ամբողջ ժամով մնում էի այդտեղ կանգնած և աչքս յառած այն կէտին, որտեղից անհետացել էր նրա երևոյթը և այդ յափշտակուած զրութիւնից հանում էր ինձ կամ հայրս, որ ծառայութիւնից վերադառնալով՝ երևում էր հեռուից, կամ ձայնը իմ մօր, որ խօսում էր աղախնի կամ ծառաների հետ:

Շատ անգամ ինքս ինձ մտածում էի թէ՛ ի՞նչ պիտի լինի իմ այս տարտամ և անհանգիստ զրութեան վերջը: Երբեմն որոշում էի թողնել պարսպմունքս, բաւական համարելով արդէն սովորածներս, որովհետև կարծում էի թէ՛ ուսուցչիս երկար բացակայութիւնը կը բժշկէ իմ այս հիւանդութեան նմանող այլայլու-

թիւնը: Բայց երբ մտածում էի թէ՛ այդպիսով կարող եմ գրկուել նրան տեսնելու, լսելու, հետը խօսելու անհուն հաճոյքից, երկիւղով շնջում էի — «անկարելի է, անկարելի է. նա երբէք չի պիտի հեռանայ ինձանից...»:

Բայց ի՞նչ տարօրինակ և անծանօթ բարեկամութեան մի անձուկ է այս, որ պատել, պաշարել է ինձ, մտածում էի երբեմն. ես կորցրել եմ իմ հոգու խաղաղութիւնը, սրտիս անդորրութիւնը. էլ ուրիշ ոչնչի վրայ չեմ ուզում մտածել, ամեն ընկերութիւն ինձ նեղացնում, ամեն ուրախութիւն՝ տաղտկացնում է. միայն լուռ ու մութ անկիւններն են, որոնք քաշում են ինձ դէպի իրենց և ուր խորհում, մտորում եմ միայն և միայն նրա համար... ի՞նչ է արդեօք այս փոփոխութեան անունը. մի՞թէ ես սիրում եմ նրան...:

«Սիրում եմ». այս երկու բառերն իսկ կապում, կաշկանդում էին լեզուս. ես կամենում էի արտասանել նրանց յաճախ, բայց ինքս ինձանից քաշում էի:

Վերջին ժամանակներն աւելի ու աւելի սկսայ անձնատուր լինել իմ թագուն մտածմունքներին: Առողջութիւնս հետզհետէ խանգարւում էր, երեսս՝ գոյնը նետում, ախորժակս փոխւում և մի ընդհանուր թուլութիւն տիրում էր վրաս: Ծնողներս սկսան անհանգրստանալ. — «Ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ գունատ ես, ինչո՞ւ տխուր ես», շարունակ հարցնում էին և անհանգստացնում ինձ, սակայն ես չը գիտէի ի՞նչ պատասխանել: «Ոչինչ և ոչինչ», այս էր իմ միակ պատասխանը:

Այսուամենայնիւ, ես արդէն հաշտուել էի այն մտքի հետ թէ՛ սիրում եմ երիտասարդ Գարեգնին...: Եւ այս սէրը նոր չէր և ոչ էլ օրերի, կամ շաբաթների ծնունդ. նա դարբնուել էր իմ սրտում ամբողջ տարուայ ընթացքում մի մի կայծերով, որոնք տակաւ առ տակաւ միանալով այժմ վառում էին այդտեղ անշիջանելի հնոց սիրոյ և հիացման... Եւ այդ կրակն, հարկաւ, ես չէի կարող մարել. նա պէտք է վառէր, բորբոքէր իմ սիրտը, գուցէ նա լափէր, սպառէր իմ գոյութիւնը. այդ ճակատագրից այլ ևս անկարող էի ազատուել: Միայն թէ մի բան անհրաժեշտ էր այդ դէպքում. այն է՝ աշխատել, որքան հնար էր, երևալ արտաքուստ նոյնը և մշտականը, որպէս զի ծնողներիս հետապնդութիւնիցն ազատուէի. որովհետև ներքին ճնշումից աւելի՛ վատ էր ազդում վրաս արտաքին այդ ճնշումը: Այս պատճառով հետզհետէ սովորում էի ոչ միայն քողարկել զգացմունքներս, թագցնել յուզմունքս, այլ և կեղծել ուրախութիւն, աշխատելով նոյն իսկ խաղալ, երգել, զբաղեցնել շրջապատողներիս և այս ամենը նրա համար՝ որ իմ ներքին աշխարհը անտեսանելի կացուցանեմ օտար աչքերից... իսկ այս դէպքում՝ օտար էի համարում ես ամենքին, նոյն իսկ ծնողներիս: Այսու ամենայնիւ, այս դրութիւնն էլ երկար չը տևեց: Կեղծելն, որ առաջ հետապնդութիւնից ազատուելու միջոց էի համարում, շուտով դարձաւ ինձ անտանելի. ես սկսայ ամաչել նոյն իսկ ինձանից և իմ ցաւը դարմանելու համար աշխատել՝ դիմել ազնիւ միջոցի: — «Ի՞նչո՞ւ համար եմ ստորացնում ինձ, մտա-

ծում էի ես. մի՞թէ արդարև յանցանք եմ գործում՝ սիրելով երիտասարդներից ամենագնւին և արժանաւորին. ինչո՞ւ այս բանը չը յայտնեմ ծնողներին, ինչո՞ւ օրն ի բուն զուր տեղը տառապիմ. մի՞թէ նրանք սիրաչունին, զգալ չը գիտե՞ն, կամ երբէք չե՞ն սիրել...:

Հագիւ այս մտածմունքը հանգստացնում էր սիրտս, կամ փոքր ինչ յուսադրում ինձ, և անձ մի ուրիշը գալիս ոչնչացնում էր նրա ազդեցութիւնը:— «Ի՞նչ եմ ասում. մի՞թէ խելագարուել եմ... հնարաւոր բան է արդեօք հօրս նման մի խիստ մարդուն այսպիսի անլուր, անօրինակ նորութիւն յայտնել: Ո՞վ է այդ բանն արել այս քաղաքում, որի՞ն կարող են յիշել ծերունիները...: Եւ մի՞թէ սա կայծակի մի հարուած չի լինիլ իմ պատուասէր հօր համար, որն այնքան բարի և ազնիւ սրտով ընդունեց իւր տան մէջ օտար երիտասարդին: Կարո՞ղ էր մի՞թէ նա երևակայել թէ՛ իւր պարկեշտ, ամօթխած Սննան, այսօրինակ համարձակ ընարութեամբ ամօթահար կանէ իրեն՝ իւր բարձակիցների առաջ...: Եւ մի՞թէ Սիմօն-բէկը, քաղաքի առաջնակարգ, պատուաւոր և հարուստ մարդը կը կապէ իւր միամօր աղջկայ բազը մի վարժապետի հետ...:

Բայց երբ նորէն առողջ դատողութիւնը յաջորդում էր իմ նախապաշարմունքներին, ես ինձ հարցնում էի.— «Ինչե՞ր եմ խօսում. ովքե՞ր են այդ պատուաւոր քաղաքացիները. ինչո՞վ են նրանք աւելի բարձր ու ազնիւ անձնուէր հայ ուսուցչից. մի՞թէ իրենց գիրքով, իրենց հարստութեամբ, կամ այն համոզմունքով, որ իրենք իրենց համար կազմել են սգիտաբար:

Քանի՞ փող արժէ այն գիրքը, այն հարստութիւնը, որ միայն իրենց անձին և գոյութեանը դիւրութիւն տալուն է ծառայում: Մի՞թէ բարձրը և ազնուագոյնը սիրել գիտցող սիրար պիտի ակնածէ՞ այդ անկենդան կուռքերից: Ի՞նչ պէտք է ինձ նրանց հայեցակէտը, քանի որ ես իմ սեփականն ունիմ: Գարեգինն ամբողջ գլխով բարձր է իրեն շրջապատող հասարկութիւնից. այդ հարուստ ու պատուաւոր մարդիկ գլուխ պիտի խոնարհեցնեն նրա ազնիւ սրտի և հայրենասէր հոգու առաջ...»:

Եւ այսպիսի ժամանակ, երբ մտածում էի թէ՛ սիրում եմ նրան, որի վրայ բոլոր աչքերը նայում են սիրով ու յափշտակութեամբ, մի ներքին հպարտութիւն լցնում էր հոգիս և ես հաստատապէս վճռում էի՝ տանել ամեն նեղութիւն ու զրկանք, բայց երբէք չը հրաժարուիլ սիրածս անձից:

Սակայն այսպիսի որոշումով զգացածս ուրախութիւնը դարձեալ թունաւորում էր մի ուրիշ մտածմունքով.— Մի՞թէ ամուլ չէ այս սէրը, հարցնում էի ինքս ինձ. ի՞նչպէս իմանամ թէ Գարեգինը նոյնպէս կը սիրէ ինձ, թէ նա կը բաժանէ իմ հրատոշոր զգացմունքը...: Մի՞թէ նրա վեհ, բարձրաթուիչ հոգին կարո՞ղ է երբ և իցէ դեզերել եսասիրութեան այն նեղ միջնորդում, ուր ապրում է իմ հոգին: Կայ իմ մէջ մի արժանիք, որ նրա արժանիքներից փոքրագունին հաւասարէր կամ մի ձիրք, որ նրա հիացումը գրաւէր: Հասարակ մի աղջիկ, ողորմելի զարգացումով և աւելի մա ողորմելի ձգտումներով, մի՞թէ ես իրաւունք ու-

նիմ սիրել նրան կամ յուսալ՝ նրանից սիրուելու...: Օհ, ոչ, սա տղայական մի ցնորք է, որին ի վուր հետևում է իմ թոյլ ու անգոր սիրտը: Աւելի լաւ է զգաստանամ և աշխատեմ մոռանալ նրան...», որոշում էի ես վերջապէս և սակայն այդ որոշումը ևս թողնում անգործագիր:

Եւ այսպէս օրերն անցնում էին, իսկ իմ գրութիւնը մնում էր նոյնը կամ գնալով վատթարանում: Այժմ արդէն ծնողներս պարզ կերպով հետևում էին իմ քայլերին, աշխատելով որսալ իմ բերանից բառեր, կամ խօսքեր, որոնք հարկաւոր էին նրանց իմ գաղտնիքներին հասու լինելու համար: Այդ պատճառով ես հետզհետէ դառնում էի աւելի զգաստ և խորագէտ, փախուստ էի տալիս նրանց նպատակաւոր զրոյցներից, կամ աշխատում շփոթել այդ զրոյցները՝ խնդրին չը վերաբերող հարցերով: Եւ ես, որ առաջ առիթ էի փնտրում միշտ Գարեգնի մասին խօսալու կամ նրա անունը յեղյեղելու, այժմ զգուշանում էի մինչև անգամ այդ անունն արտասանելուց: Գուցէ և իմ այսքան զգուշաւոր լինելն աւելորդ էր, բայց ուրիշ կերպ հանգիստ լինել չէի կարող:

Մի օր մենք հրաւիրուած էինք մեր բարեկամներից մէկի տունը: Գիտենալով որ ծնողներս անպատճառ պիտի գնան այնտեղ, որովհետև խոստացած էին, ես յայտնեցի թէ գլխացաւ ունիմ, ուստի չեմ կարող ընկերանալ իրենց: Ծնողներս առանց դժուարութեան թողեցին ինձ տանը՝ աղախնի հետ՝ և իրենք գընացին:

Մի ժամից յետոյ Գարեգինը պիտի դար դասի: Իմ գլխում մի յանդուգն միտք յղացաւ, այն է՝ բանալ նրա առաջ իմ սիրտը և անկեղծութեամբ խոստովանել զէպի իրեն ունեցածս ջերմագին սէրը: — «Ի՞նչ պիտի անէ նա ինձ, մտածում էի ես երկչոտ սրտին յատուկ զգուշութեամբ. շատ, շատ, գուցէ մի նախատինք, կամ յանդիմանութիւն լսեմ նրանից. այն ժամանակ՝ աւելի լաւ, ես կը բժշկուիմ այս մաշող ցաւից, կը վերադառնամ իմ նախկին, խաղաղ գրութեանը: Իսկ եթէ նա կասէ թէ՛ բաժանում է իմ զգացումը, ոհ, այն ժամանակ, հեռու ինձանից թախիծ ու մտածմունք, այն ժամանակ արդէն ես ամենաերջանիկ աղջիկը կը լինիմ աշխարհում և նոյն իսկ այդ երջանկութեամբ զօրացած կը ոչնչացնեմ իմ ճանապարհը փակող արգելքները. կը մեղմեմ, նոյն իսկ, իմ հօր խստասրտութիւնը և կստանամ մօրս օրհնութիւնը»:

Եւ այս մտածմունքով ոգևորուած՝ սպասում էի իմ սիրելի ուսուցչին:

Առաջին անգամ, երբ նրա ողջոյնը լսեցի, սիրտս մի յանկարծական ոտիւն արաւ, որին յաջորդեց անհանգիստ և երկարատև բաբախում: Այդ ժամանակ աչքս ընկաւ հանդիպակաց հայելուն և ես տեսայ թէ՛ ինչպէս շառագունել եմ: Իմ այս օրինակ յուզմունքից սաստիկ ամաչեցի:

Դաս ասելու ժամանակ՝ ես դարձեալ այլայլուած էի. մտքերս չէի կարողանում ամփոփել. սովորածս մոռացել էի: Տեսնելով որ այլայլութիւնս գնալով աւելանում է, «ներեցէք ինձ, խնդրեմ, ասացի ուսուցչիս,

այսօր դաս ասել չեմ կարող, սաստիկ յուզուած եմ...»: Այս ասելով՝ սկսայ գրքերս ժողովել:

Իմ այս տարօրինակ վարմունքը դարձացրեց Գարեգին: Մի քանի բոպէ նա լուռ սևեռեց հայեացքն իմ աչքերին և ապա հարցրեց.

— Ի՞նչ է պատահել ձեզ, օրիորդ. միայն այսօր չէ որ յուզուած էք դուք. վաղուց է ինչ ես նշմարում եմ ձեր մէջ մի տարօրինակ փոփոխութիւն... ո՞չ գէպի լաւը: Դուք չունիք այլ ևս սովորելու այն աշխոյժը, որ գոհութիւն էր պատճառում ինձ. ձեր ընդունակութիւնը, կարծես, կիսով չափ կորցրել էք: Արդեօք որ և է տկարութիւն ունի՞ք:

Ես աչքերս գեանին յառած չէի պատասխանում. բայց սիրտս անհանգիստ արօքում էր:

— Խնդրում եմ, ասացէք, ունի՞ք որ և է հիւանդութիւն, հարցրեց նա նորէն:

— Ոչ, պատասխանեցի ես կիսաձայն:

— Ուրեմն առողջ էք:

— Դժբաղդաբար, ո՞չ...

Գարեգինը ծիծաղեց...

— Այդ ի՞նչ է նշանակում. հիւանդութիւն չունի՞ք և, մի և նոյն ժամանակ, առողջ չէք:

— Այդ նշանակում է թէ... Ես չըկարողացայ շարունակել:

— Ի՞նչ է նշանակում. խօսեցէք, ինչո՞ւ էք լուռ:

— Այդ նշանակում է թէ՛ իմ հիւանդութիւնը այն տեսակներէն է, որ աչքի դարնել չի կարող:

— Այսուամենայնիւ, յայտնեցէք մեզ էութիւնը:

ցոյց տուէք նրա տեղը, գուցէ կարողանանք տեսնել և բժշկել, նկատեց նա ժպտալով:

— Օ՛, նա շատ խորն է... այնտեղ ուր մարդկային աչքը թափանցել չէ կարող, ասացի ես ջերմութեամբ և հեազհետէ սիրտ առնելով:

— Ձեր խօսքերը չեմ հասկանում, նկատեց ուսուցիչս:

— Ուրեմն, աւելի պարզ ասեմ, իմ հիւանդութիւնը գտնուում է իմ սրտի, իմ հոգու մէջ...:

Գարեգինը մի անհանգիստ շարժում արաւ և լռեց:

— Դուք հարցնելու այլ ևս բան չունի՞ք, նկատեցի ես՝ աչքերս գեանին յառած:

— Էլ ուրիշ ի՞նչ հարցնեմ, ասում էք՝ ձեր հոգին է հիւանդ, իսկ դրա համար բժիշկ չըկայ, դուք ինքներդ պիտի բժշկէք ձեզ:

— Բայց քանի որ չեմ կարողանում...:

— Դիմէ՛լ էք դուք ձեր ծնողներին:

— Ոչ:

— Ուրեմն յանձնեցէք ձեզ նրանց խնամքին և վրստահ եղէք նրանց բարութեան և գէպի ձեզ ունեցած սիրոյն վրայ: Նրանք կարող են ձեզ օգնել և, եթէ հնար է, նաև, բժշկել:

— Բայց եթէ ես դիմէի ուղղակի նրան, ով որ այս հիւանդութիւնը պատճառել է ինձ, մի՞թէ նա չէր կարող բժշկել, հարցրի ես ջերմութեամբ և դողացող ձայնով:

Ուսուցիչս թափանցել էր արդէն իմ սրտի խորքը:

— Օրիորդ, ես ակամայ ինձ չըվերաբերեալ խօսակցութեան մէջ մտայ, նկատեց նա, եթէ ձեր ծնող-

ներն այստեղ լինէին, ես հարկ եղածը նրանց հետ կը խօսէի և, գուցէ, կարողանայի իմ տուած խորհուրդներով օգնել նրանց՝ ձեզ ապաքինելու: Բայց քանի որ նրանք բացակայ են, թոյլ տուէք որ այս հարցի մասին ուրիշ անգամ խօսուի...:

Ես կամենում էի լուել, բայց մի ներքին ձայն դրդեց ինձ խօսել:

— Այսուամենայնիւ, դուք հենց այժմ կարող էք ինձ ասել թէ՛ իմ հոգուն այս հիւանդութիւնը պատճառող մարդուն եթէ դիմէի, կարող էր նա ինձ բժշկել, հարցրի կրկին, աչքերս միշտ խոնարհած:

— Չըզիտեմ, եթէ դուք կարծում էք թէ՛ նա կարող է բժշկել, դիմեցէք, պատասխանեց նա անսխալ եղանակով:

— Ուրեմն, բժշկեցէք իմ հոգին, դուք էք նրան հիւանդացրել. ես ձեզ եմ դիմում, բացազանչեցի յուզուած և այնպիսի համարձակութեամբ, որ ճնշման գէ՛մ ապստամբող հոգիներին է յատուկ:

Երիտասարդը մնաց շուարած: Ըստ երևութին, նա չէր սպասում այս դիմումին, ուստի և չըզիտէր ի՞նչ պատասխանել: Իսկ իմ մէջ եռանդը հետզհետէ աւելանում և երկիւղը տեղի էր տալիս անկեղծութեան. ես, գրեթէ ինձ մոռացած, շարունակեցի.

— Լսեցէք, սիրում եմ ձեզ... սիրում եմ ջերմ, սրտազին և անվերջ սիրով և ես յանցաւոր չեմ... դուք վառեցիք իմ մէջ այս կրակն... և այս խօսքերի հետ միասին, գրեթէ յափշտակելով, առի նրա ձեռքը և սեղմեցի իմ շրթունքներին:

Մի թոյլ, անլսելի հառաչանք դուրս թռաւ երիտասարդի սրտից, նա նայեց ինձ իւր հրացայտ աչքերով և ձեռքը քնքշութեամբ յետ քաշելով՝ տեղից բարձրացաւ:

— Ես կաշխատեմ օգնել ձեզ որ ապաքինուիք ձեր հիւանդութիւնից, գուցէ և բոլորովին մոռանաք այն, ասաց նա լուրջ և սառը եղանակով, ապա «մնաք բարով» ասելով՝ դուրս գնաց:

— Օ՛, ո՛չ, նա ինձ չէ սիրում, նա չէ կարող սիրել, նա արհամարհում է ինձ... գոչեցի ես արտասուքից խեղդուող ձայնով և սրտաբեկ ու յուսահատ ընկնելով բազկաթուռի վրայ՝ սկսայ դառնասուլէս լալ:

Հետևեալ օրը մեծ տագնապի մէջ էի: Իմ համարձակ որոշումն անյաջող էլք էր ստացել: Իսկապէս չըզիտէի թէ՛ ի՞նչպէս պիտի բացադրէի Գարեգնի խորհրդաւոր խօսքերը. — «Ես կաշխատեմ օգնել ձեզ որ ապաքինուիք ձեր հիւանդութիւնից, գուցէ և բոլորովին մոռանաք այն», ասաց նա: Ի՞նչ էր նշանակում այդ: Արդեօք մերժման խօսքեր էին դրանք: Չէ՞ որ մոռացումը հետևանք է լինում անյոյս սիրոյն... եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն այս անմիտ քայլն արի. ինչո՞ւ նուստացայ նրա առաջ... Մի՞թէ մի համեստ և օրինաւոր աղջկան կը վայելէր այդպիսի յանդուգն վարմունք, մտածում էի ես ու տանջուում: Ապա ցանկանում էի որ նա այդ օրը չըզար, որովհետև երէկուայ անցքից յետոյ՝ ես քաջութիւն չէի ունենալ նրա երեսը ելնելու: Միւս կողմից էլ մտածում թէ՛ լաւ կը լինէր որ դար, որպէս զի նրա հայեացքից

ու խօսքերից կարողանայի վերջնականապէս իմ ճակատագիրը որոշել: Ճիշդ է, սկզբում ծանր կը լինէր ինձ՝ դէմ առ դէմ խօսել հետը, բայց դրանով յետոյ իմ տապնապը կը նուազէր:

Որքան ոյժ ունէի, ժողովեցի՝ դաս պատրաստելու, որպէս զի գոնէ այսօր կարողանամ մի բան պատասխանել: Կարդացի, գրեցի, բայց առանց ոչինչ հասկանալու և մեքենայաբար: Յետոյ նստայ իմ սովորական տեղը, պատուհանի առաջ և սպասեցի նրան: Ժամը տամս երկուսը զարկեց: Ուր որ է նա պիտի երևար, այս նրա գալստեան ժամն էր: Սիրտս սկսաւ անհանդիստ տրոփել: Շարունակ մտածում էի թէ՛ ինչպէս պիտի նրա դէմը ելնեմ: Մտքիս մէջ խօսքեր, դարձուածներ էի պատրաստում, որպէս զի հարկաւոր դէպքում պատշաճաւոր պատասխան տամ: Մինչև անգամ մտածում էի թէ՛ դէմքի ինչ արտայայտութեամբ պիտի ողջունեմ նրան կամ նրա ողջոյնն առնեմ:

Սակայն անցաւ քառօրդ ժամ, անցաւ կէս ժամ և նա չըկար: Այսուամենայնիւ, ես սպասում էի: «Գուցէ մի անակնկալ դէպք ուշացրել է նրան, նա անպատճառ կը գայ» մտածում էի: Բայց անցաւ ամբողջ ժամ և նա դարձեալ չըկար: Սա չարագուշակ նշան էր, որովհետև Գարեգինը, բոպէսների նկատմամբ իսկ ճշդապահ էր: — «Զըլինի թէ ինձանից հեռացել է բոլորովին, մտածեցի ես և մի գաղտնի երկիւղ իմ սիրտը ճմլեց: Վայրկեանները սլանում էին և ինչպէս արագ, ինչպէս սրնթաց: Վերջապէս երկրորդ ժամը զարկեց: Ինձ հրաւիրեցին ճաշի և ես մտայ սեղանատուն:

— Այս ինչ է, վարժապետդ այսօր չեկաւ, հարցրեց հայրս:

— Ո՛չ, երևի մի անակնկալ դէպք արգելել է նրան, պատասխանեցի ես, ինքս իմ խօսքերից վախենալով:

— Բոլորովին անսպասելի էր, յարեց մայրս, ամբողջ տարուայ մէջ նա երբէք չէ բացակայել, չըլինի՞ հիւանդ է:

— Կարող է պատահել, երևի կիմանանք, սուլացրեց հայրս և սրանով հարցը փակուեց:

Բայց նրա «երևի կիմանանք» խօսքը դող հանեց սիրտս: Ես գուշակում էի նրա չըգալու պատճառը և չըզիտէի ինչ անել ամօթապարտ լինելուց ազատուելու համար:

Մեծ տանջանք կրեցի՝ ծնողներիս հետ ճաշի ժամն անցնելու համար. ախորժակ չունէի, բայց պէտք է ուտէի, խօսելս չէր գալիս, պէտք է խօսէի. տխրութիւնը սիրտս ճմլում էր, պէտք է զուարթ երևայի: Ուրիշ անգամ, գուցէ, այդքան չաշխատէի ծնողներիս: Ուշադրութիւնն ինձանից հեռացնելու, բայց այդ օրն, ուշադրութիւնն ինձանից հեռացնելու, բայց այդ օրն, ինձ թւում էր թէ՛ իմ լուսթեան ու տխրութեան ամեն մի վայրկեանը կարող էր ինձ մասնել: Օ՛հ, ինչպէս մի վայրկեանը կարող էր ինձ մասնել...: Միթէ ծանր է կեղծել. ինչպէս ծանր է ծածկել...: Միթէ ես այդ բաների համար էի ստեղծուած: Եւ սակայն հարկը ինչ բաների չէ վարժեցնում մարդուն:

Սեղանից հեռանալս ու իմ սենեակում փակուելս մէկ եղաւ: Ազդանին պատուիրեցի ոչ ոքի չըթողնել ինձ մօտ մտնելու, առարկելով թէ՛ կարևոր պարապմունք ունիմ:

Մտնելով սենեակս, սկսայ դարձեալ անձնատուր լինել իմ մտածմունքներին: Բայց տեսնելով որ դրանով միայն ուղեդս եմ լարում և ուժերս սպառում, որովհետև տանջուելուց զատ՝ ուրիշ բան չէի առաջացնում, աշխատեցի քնել: Դա միակ միջոցն է մաշող մտմտութից գէթ մի քանի ժամ ազատուելու համար, եթէ միայն յաջողի: Բարեբաղդաբար քնելն ինձ յաջողում էր:

X Հետևեալ օրը նոյնպէս Գարեգինը չերևաց: Իմ մէջ այլ ևս կասկած չըմնաց որ երիտասարդն իւր մշտական բացակայութեամբն է կամենում իմ հիւանդութիւնը բուժել: Դա մի սարսափելի ճշմարտութիւն էր ինձ համար:—«Այս ի՞նչ արի, ի՞նչ չարիք բերի իմ գլխին, մտածում էի ես. գոնէ առաջ ամեն օր տեսնում էի նրան, խօսում էի հետը մի ժամ, իսկ այժմ ի՞նչ է իմ դրութիւնը...»:

Այս ամենի վրայ աւելացաւ և՛ շուտով ամօթահար լինելու երկիւղն, երբ երեկոյեան դէմ հայրս գնաց հոգևոր դպրանոցն, ուր բնակում էր Գարեգինը, նրա բացակայութեան պատճառն իմանալու:

Տէր Աստուած, որքան հոգեկան տանջանք կրեցի ես այդ մի ժամուայ մէջ...: Արդեօք, ի՞նչ պիտի ասէր նա հօրս, ի՞նչ պատճառ պէտք է բերէր. չէ՞ որ իմ խոստովանութեան պատմութիւնը պիտի անէր... իսկ իմ հայրը... ճի խելագարում էի. որպիսի ամօթով որքան ճնշուելով պիտի լսէր նրանից՝ իւր պարկեշտ, ամօթխած ճանաչուած աղջկայ անյուր, անպատկառ արարքը... ճի, ինչպէս ծանր, ինչպէս անտանելի էր այդ սիրտս ուժգին բաբախելուց, ասես թէ, կա-

մենում էր դուրս թռչել, գլուխս այրում էր, մի վայրկեան հանգիստ չէի գտնում. մերթ նստում, մտածում էի, մերթ նորէն վեր թռչում տեղիցս. չըզիտէի ո՞ւր գնալ, ո՞ւր դիմել. նոյն իսկ սենեակները հալածում էին ինձ. իմ պարապմունքի սեղանը, իմ գրքերը՝ բոլորն էլ այդ վայրկենին դարձել էին ատելի, ոչնչով զբաղուել, ոչնչով իմ մտքերը ցրել չէի կարողանում:

Վերջապէս օրհասական վայրկեանը հասաւ. հայրս երևաց բակում: Բայց, ո՞վ դարմանք, հենց այդ ըտպէին էլ իմ յուզմունքը դադարեց, յուսահատութեանս ու երկիւղիս յաջորդեց բոլորովին ուրիշ, ինձ անծանօթ մի զգացմունք. իմ հոգին նոր ոյժ ու կորով ստացաւ, նա կարծես պատրաստուում էր ապստամբուելու իրեն ճշող, կաշկանդող ոյժերի դէմ:—Այո՛, սիրում եմ, այդպէս էլ կասեմ, ես յանցանք չեմ գործում, ուրեմն վախենալու էլ ոչինչ չունիմ...» ասացի ինքս ինձ և աներկիւղ սպասեցի հօրս ներս գալուն:

—Վարժապետդ շտապ աւարտելու գրելիք է ունեցել, այդ պատճառով չէ եկել. շատ ներողութիւն էր խնդրում. ես ասացի—ոչինչ, մի՛ նեղանաք: Բայց վաղուանից կը գայ, ասաց հայրս սենեակը մտնելով:

Ես մնացի ափշած. չէի կամենում հաւատալ ականջներիս, ուրախութիւնը կարծես չէր զօրում մօտենալ իմ կծկուած սրտին...: «Մի՞թէ այս ճշմարիտ է. մի՞թէ նա ճշմարիտը խօսեց...» մտածում էի ես: X

Բայց որովհետև հայրս ուրիշ ոչինչ չասաց և հանգիստ սրտով մտաւ սեղանատուն թէյ խմելու, ուս-

տի իմ մէջ այլ ևս կասկած չըմնաց որ անցեալ օրուայ պատմութիւնից նա ոչինչ չըզիտէ: Վասն զի հայրս չէր այն մարդկանցից, որոնք առանձին շնորհք են ունենում ամեն տեսակ գաղտնիք իրենց սրտում ծածկելու, իսկ դէմքի վրայ հակառակ զգացմունք արտայայտելու: Եթէ նա ունենար մի գաղտնիք և ստիպուած լինէր ծածկել, այնքան անշնորհք ձևով կանէր այդ, որ ամեն ոք կըզուշակէր իւր գաղտնիք ունենալը:

— Ազնիւ և առաքինի երիտասարդ, այժմ աւելի քան երբէք սիրում եմ քեզ... բացական չեցի ես, երբ մնացի միայն՝ իմ զգացմունքների հետ. այսուհետև այլ ևս տխրութիւնն ու մտածմունքը թող չըյուզեն ինձ. ես լուռ, անմոռնչ կըսիրեմ քեզ և եթէ դու չըբաժանես իսկ իմ զգացմունքը, գոնէ չես արգելիլ սիրել քեզ... ինձ այնքանն էլ բաւ է որ ամեն օր քեզ տեսնելու, քեզ հետ խօսելու բաղդը ունենամ...»:

Հետևեալ օրը Գարեգինն եկաւ իւր ժամանակին: Նա նոյն հանգիստ ու զուարթ դէմքով ողջունեց ինձ, ինչպէս և առաջ: Հարկ չը կայ ասել որ ամբողջ դասի ժամանակ ես չէի համարձակուում աչքերս բարձրացնել: Բայց երէկուանից արդէն, երբ յուզմունքս անցել էր, ես բաւական դաս էի պատրաստել, բաւական գրել էի և այս էր՝ որ մի փոքր անզգալի էր դարձնում մեր այդ օրուայ տեսակցութեան ազդեցութեան ծանրութիւնը:

Գարեգինն ուրախ տրամադրութեամբ հետևեալ դասերը խօսեց, կարգալու համար նոր գիրք նշանակեց, գրելու նիւթ տուաւ և քաղցրութեամբ ողջունելով՝ դուրս գնաց:

Երբէք այնպէս հանգիստ, այնպէս ուրախ չէի զգացել ինձ, ինչպէս այժմ:

Սրանից յետոյ մի շաբաթ ևս նա շարունակեց իւր այցելութիւնները: Բայց այդ բոլոր ժամանակ՝ նա կարծես իւր տուած դասերի ու սովորեցրածների վերջաբանն էր կազմում, նշանակելով միայն կարգալու հատուածներ և տալով շարադրութեան նիւթեր: Մի մի անգամ էլ յիշեցնում էր թէ՛ այսուհետև աւելի առաջ գնալու համար՝ ինձ մտում էր միայն շարունակ կարգալ և կարդացածից օգտուել, այնպէս որ իւր դալը, գրեթէ, աւելորդ էր:

Վերջին ուրբաթ նա միայն շարադրելու մի նիւթ տուաւ, այն է՝ գրել «մարդկային պարտուց» վրայ, պատուիրելով՝ բաժանել իմ շարադրութիւնը երեք մասերի և բացադրել նրանց մէջ թէ՛ ո՞րն է մարդկային պարտքը առ Աստուած, առ ընկերն և առ անձն:

— Այդ գրութեամբ դուք պիտի ապացուցանէք որ իմ այսքան ժամանակուայ աշխատութիւնն ապարդիւն չէ անցել, ասաց նա, ես կամենում եմ իմանալ թէ՛ ո՞ր աստիճան իրաւունք ունիմ այսուհետև պարծենալ ձեզմով ուրիշների առաջ:

Այս խօսքերն արդէն բաւական էին նոյն իսկ բանաստեղծական աւիւն ներշնչելու ինձ: Ես ամբողջ օրը և գիշերուայ կէսն աշխատեցի իմ շարադրութեան վրայ: «Մարդկային պարտքն առ Աստուած» բացադրելուց յետոյ, ես երկար կանգ առի «մարդկային պարտքն առ ընկերն» մտքի վրայ: Ժողովեցի իմ երևակայութեան առաջ պատմութեան նշանաւոր հերոսները,

յայանի հայրենասէրները, ժողովրդի նահատակները, թուեցի նրանց գործերը, դրուատեցի անձնագործութեան գաղափարական բարձրութիւնը, առաջ բերի Քրիստոսի այն մեծախորհուրդ խօսքը թէ՛ «ամեն ամեն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» և իմ բացաղբութիւններն ու մակաբերութիւնը կցեցի նրան: Շատ քիչ գրեցի սակայն «մարդկային պարտքն առ անձն» մտքի մասին, բաւականանալով միայն բացաղբութեամբ այն խորհուրդներին, որ կրօնը տալիս է մեզ «Աստուծոյ պատկերի և նմանութեան» հետ վարուելու համար:

Իմ շարաղբութիւնը շատ յաջող դուրս եկաւ և ես գոհ սրտով գնացի պառկելու: Խեղճ ես, զեռ չը գիտէի թէ՛ որքան ծանր ու դժուարին է գործով կատարել այն՝ ինչ որ այնքան յափշտակութեամբ գովել դրուատել էի...: Եթէ մարդիկ լաւ գործերը նախ կատարէին և ապա նրանց մասին գրէին, որքան քիչ բան կունենայինք այդ առթիւ կարդալու...:

Հետեւեալ օրը Գարեգինը որոշեալ ժամանակից ուշացաւ: Հայրս արդէն ծառայութիւնից վերադարձել էր և մենք նստած՝ հենց Գարեգինի վրայ էինք խօսում, երբ նա ներս մտաւ: Յետոյ իմացայ որ նա դիտմամբ էր ուշացել:

— Շատ ուրախ եմ որ ծնողներդ էլ այստեղ են, ասաց նա. նրանք էլ ձեր շարաղբութեան ընթերցումը կը լսեն. հապա, բերէք, կարդացէք:

Ես ուրախութեամբ վերցրի սեղանի վրայից իմ

երեք թերթից բաղկացած շարաղբութիւնը և սկսայ պարզ ու մեկին առողանութեամբ կարդալ:

Կարդացի, երկար կարդացի: Գարեգինը մերթ ընդ մերթ ընդհատում էր ինձ «կեցջիք», «ապրիք», «շատ զեղեցիկ» խօսքերով: Երբ ես աւարտեցի, նա սկսաւ խօսել.

— Իմ ուրախութեան չափ չը կայ, բոլոր աշխատութիւնս վարձադրուած եմ տեսնում այսօր. ես գոհ եմ, ասաց նա և ի նշան շնորհակալութեան իմ ձեռքը սեղմեց: Ապա դառնալով ծնողներին՝ շարունակեց.— Այսուհետև օրիորդ Աննան ինքը կարող է առաջ գնալ, որքան և ցանկանայ: Նա հայերէն լաւ գիտէ. պատմութիւն սովորել է. ռուսերէնին տեղեակ է. նրան մնում է կարդալ և միշտ կարդալ: Բայց այդ էլ, ի հարկէ, զգուշաւոր ընտրութեամբ: Ոչինչ այնպէս չէ խանգարում կանոնաւոր զարգացումն, ինչպէս խակ մտքերով և մոլար վարդապետութեամբ, տոգորուած գրքերը կամ լրագիրները: Այդ պատճառով ես ինքս կարող եմ միշտ ընտրել ընթերցանութեան համար պիտանի գրքերն և ուղարկել օրիորդին կարդալու: Ինչ վերաբերում է ինձ՝ ես ՚ի հարկէ այսօրուանից օրիորդի նկատմամբ յանձն առածս պաշտօնը կատարած, վերջացրած եմ համարում. հետեւապէս և ձեզ ամեն օր այցելելու պատիւը չեմ ունենալ:

Վերջին յայտարարութիւնը կարծես ինձ հարուածեց և բոլոր սուներ գլխիս շուռ բերաւ. բայց ես ջանք արի պահել ինձ գօրով:

Ծնողներս երկար և ջերմաջերմ շնորհակալութիւն

արին ուսուցչիս, խնդրելով նրան՝ յաճախ այցելել իրենց: Ես ևս, իմ շփոթութիւնը յայանի չըկացուցանելու համար՝ վերկացայ տեղից և հանդիսաւոր ձեով ասացի.

— Ձեր երախտիքն այնքան մեծ է ինձ վրայ որ ես ոչնչով չեմ կարող փոխարինել: Այդ պարտքի ծանրութիւնը ինձ անզգալի անելու համար՝ պէտք է որ դուք պաշտօնական բարեկամ լինելուց դադարէք: Իմ ծնողները ձեզ կընդունեն իրենց սիրելի որդու, իսկ ես՝ իմ հարազատ եղբօր տեղ: Այցելեցէք մեզ, խընդրում եմ, կարելւոյն չափ յաճախ: Մենք միշտ սիրով պիտի սպասենք ձեզ:

— Այո, այո, խնդրում ենք, շատ ենք խնդրում, դուք մեր որդին, մեր ընտանիքի անդամն էք, գրեթէ միաբերան ասացին ծնողներս:

Գարեգինը շնորհակալութիւն յայտնեց և խոստանալով որ կարողացածին չափ կաշխատէ մեզ այցելել, ողջունեց և դուրս գնաց:

Ես հետևեցի նրան մինչև բակի դուռը: Եւ երբ նա այդտեղից դուրս գալիս պարզեց ինձ ձեռը վերջին «մնաք բարևն» ասելու, ես ջերմութեամբ առի այն իմ ձեռքի մէջ և նկատեցի. — այսուամենայնիւ, պարոն Գարեգին, մնաց դարձեալ մի դաս, որը չըտուիք ինձ ուսանելու...:

— Ո՞րն է այդ դասը, հարցրեց նա ժպտալով:

— Ա՛յն թէ՛ ի՞նչ պէտք է անէ խեղճ օրիորդը, որի սրտում վառուած սուրբ սիրոյ կրակն՝ անարգւում է, նոյն իսկ, սրբութեան պաշտպանից:

— Դուք այդ դասը սովորելու կարիք չունիք, օրիորդ, պատասխանեց երիտասարդը ծանրութեամբ,

որովհետև սրբութիւնը չի կարող անարգուիլ իւր երկրպագուից...:

Եւ նա մի քաղցր հայեացք ձգելով վրաս, ջերմութեամբ սեղմեց ձեռս և հեռացաւ:

ԵՐՐՈՐԿ ՕՐ

Որքան մտատանջութիւնների պատճառ դարձան ինձ համար Գարեգինի՝ բաժանման բողբոջին արտասանած վերջին, խորհրդաւոր խօսքերը: «Սրբութիւնը չի կարող անարգուիլ իւր երկրպագուից» ասաց նա: Ո՞վ էր արդեօք այդ «երկրպագուն»: Կարո՞ղ էի միթէ յուսալ թէ՛ դա ինքն է, իսկ դրա համար ունէ՞ր ես ապացոյց, գէթ մի թոյլ փաստ, աւանդ, և ոչ մի: Եթէ նա բաժանում լինէր իմ զգացումներն, ինչո՞ւ ապա դիտմամբ պիտի հեռանար ինձանից: Նա ամենալաւ պատրուակն ունէր մեզ մօտ յաճախելու, միշտ ինձ հետ տեսնուելու, որովհետև նա իմ ուսուցիչն էր...: Բայց նա, ոչ միայն այդ պաշտօնից չըկամեցաւ օգտուիլ, այլ և ինձանից բոլորովին հեռանալու համար կիսատ թողեց ուսմանս գործը: Մի՞թէ, արդարև, ես այլ ևս սովորելու ոչինչ չունէի...: Բայց չէ, նա չըկամեցաւ իւր յաճախակի այցելութիւններով առաւել ևս բորբոքել մի անգամ արդէն վառուած կրակը: Անարգանք էր այս՝ ուղղուած իմ անկեղծ խոստովանութեանը, թէ՛ բարձրագոյն ազնուութեան ապացոյց՝ զի չըկամեցաւ իւր բարոյական խնամքին և դաստիա-

րակութեան յանձնուած մի օրիորդի թուլութիւնից օգտուել, — ճիշդը չըզիտէի, միայն ես հակուած էի դէպի վերջին կարծիքը:

Անցաւ մի ամբողջ շաբաթ և ես Գարեգնին տեսնել չըկարողացայ: Նա մեզ մօտ չեկաւ, իսկ ես՝ պըտըրտել նրան չէի կարող: Մի քանի անգամ մտադրուեցայ այցելել օրիորդաց դպրոցը, նրան այնտեղ պատահելու յուսով. բայց ամեն անգամ էլ պատուասիրութեան զգացումը թոյլ չըտուաւ ինձ այդ անել:

— Ինչո՞ւ այդ աստիճան ստորանալ, մտածում էի ես. եթէ նա պատճառներ է ստեղծում ինձանից հեռու մնալու, մի՞թէ կը վայելէ որ ես երթամ նրան պտրելու. ի հարկէ, ոչ: Գուցէ հենց այդ վարմունքով նա կամեցել է զգալ տալ ինձ թէ՛ իմ մասին նա բընաւ չէ մտածում: Ինչո՞ւ ուրեմն քաջութիւն չունենալ՝ մոռացութեան տալ նրան...»: Եւ ես այնուհետև որոշում էի աշխատել մոռանալ նրան:

Բայց մի՞թէ այդ հնարաւոր էր, մի՞թէ ես այդ կարող էի անել: Այդ տեսակ որոշումներն ոչ այլ ինչ էին, եթէ ոչ բռնի փորձեր՝ ներքին հրդեհի ոյժը մի քանի ժամերով միայն թուլացնելու: Անցնում էին այդ ժամերն և անհնարօք դարձեալ բորբոքում, դարձեալ նոր ուժով երևան էր գալիս, մանաւանդ, երբ մտածում էի թէ՛ իմ առաջ բերած պատճառներն անշան հիւլէներ են՝ համեմատած այն արժանիքների հետ, որոնցով զարդարուած էր երիտասարդն և որոնք իմ մէջ վառել էին սիրոյ այս չարաբաստ կրակն:

Ինձ մնում էր լուռ և անարտունջ տանել իմ հո-

գեկան տանջանքը, առանց շրջապատողներէս մէջ որ և է կասկած յարուցանելու:

Որքան զարմացայ և ուրախացայ, երբ երկրորդ կիրակի այցելութեան եկաւ մեզ Գարեգինը: Ինչպէ՞ս սիրտս հրճուանքից սկսաւ բաբախել, որքան յուզուեցայ...: Դեռ նա սենեակ չէր մտել որ մայրս նկատեց ինձ՝ «ինչո՞ւ ես շառագունել»: Նայեցի հայելուն և ամաչելուց աւելի ևս շիկնեցի. այդպիսի դէմքով չէր կարելի դիմաւորել նրան. ես քաշուեցայ իմ սենեակը՝ լուացուելու: Մի քառորդ ժամից, երբ յուզմունքս քիչ անցաւ, եկայ իմ թանկագին հիւրի մօտ: Նա խօսում էր արդէն ծնողներէս հետ: Տեսնելով ինձ վեր կացաւ տեղից, շատ սիրով ողջունեց. բայց այդ ողջունի մէջ, հակառակ սպասածիս, ես ջերմ ու սիրաշունչ ոչինչ չըգտայ: Այդ բանը սիրտս կոտրեց: Այսու ամենայնիւ պէտք է գոհ լինէի որ նա այժմ ինձ մօտ, իմ առաջ նստած էր:

Երբ դժգոհութիւնս յայտնեցի այն մասին թէ՛ նա շատ ուշ է մեզ այցելում, Գարեգինը պատասխանեց.

— Իմ ծանօթ ընտանիքների մէջ չըկայ մէկը, որին այնքան սիրով և հաճութեամբ կամենայի այցելել, որքան ձերն, օրիորդ: Բայց իմ զբաղմունքներն այնքան շատացել, այնքան ծանրացել են, որ ստիպուած եմ այդ հաճոյքից ևս զրկել ինձ: Երևակայեցէք, շաբաթուայ մէջ քսան և չորս դաս, տղայոց կամ աղջկանց դպրոցում. այնուհետև դպրոցական մի քանի գործերի վրայ անմիջական հակողութիւն. յետոյ ու-

սուցչական ժողովներ. ապա արձանագրութիւնների կազմութիւնը. այդ բոլորն այնքան ժամանակ են խրլում ինձանից՝ որ բարեկամներին այցելելու համար, գրեթէ, ժամանակ չէ մնում ինձ: Երբեմն, երեկոյեան դէմ, մի կամ երկու ժամ ազատ ժամանակ եմ ունենում. բայց այդ էլ գործ եմ դնում աւագ դասատան աշակերտներին ինձ մօտ հաւաքելով և նրանց հետ խօսելով: Գիտէ՞ք, շատ բան կայ դասից դուրս՝ նրանց հետ խօսելու: Ամեն այցելութիւն, ամեն զուարճութիւն պէտք է գոհել՝ այդ սուղ ժամանակը շահաւոր կերպով գործադրելուն: Վարժապետներին վրայ ծանր պարտք կայ, թէ ներկայի և թէ ապագայի վերաբերմամբ: Բաւական չէ վարձկան մշակի պէս նշանակած ժամերին դասախօսել և հեռանալ. պէտք է անձնուրութեամբ աշխատել, պէտք է գործին շունչ ու հոգի տալ, որովհետև նոր սերնդի՝ ապագայում արած սխալ քայլերի պատասխանատուն մենք ենք....:

Յետոյ նա պատմեց մի քանի անախորժ նորութիւններ այն մասին թէ՛ ինչպէս քաղաքում հակառակ կուսակցութեան մարդիկ աշխատում են իրենց՝ այնքան սիրով ու եռանդով սկսած դպրոցական գործը զանազան մեքենայութիւններով խանգարել: Յաւ յայտնեց որ այդ շարագործութեան հեղինակներն՝ ոչ թէ հասարակ, ուսումից ու կրթութիւնից զուրկ մարդիկ են, այլ նրանք, որոնց մի անգամ յանձնուած է եղել դպրոցի ղեկն ու բաղդը: Եւ այդ հասկացող ու զարգացած մարդիկ՝ դպրոցի դէմ նիւթում էին խարդաւանանք միայն այն պատճառով որ առիթ ունենան

պարծենալու թէ՛ իրենք կարողացան քանդել այն, ինչ որ ուրիշները կամենում էին շինել....:

Որքան էլ քաղցր էր ինձ՝ երկար լսել իմ սիրած երիտասարդին, այսուամենայնիւ, նա այդ հաճոյքը ինձ չըպատճառեց: Հազիւ մի ժամ մնաց մեզ մօտ և այդ մի ժամը ինձ համար անցաւ մի քանի բողբոջների պէս: Ներողութիւն խնդրելով՝ որ աւելի ուշանալ չէ կարող, ողջունեց մեզ և հեռացաւ, խոստանալով՝ դարձեալ այցելել, եթէ ժամանակ կը գտնէ:

Բայց այդ ժամանակը նա շատ ուշ գտաւ, կամ գուցէ չըկամեցաւ շուտ գտնել: Ես սպասեցի նրան երկար: Անցաւ առաջին կիւրակին, անցաւ երկրորդը, երրորդը և սակայն նա չերևաց մեր տանը: Այդ բոլոր ժամանակի ընթացքում, ես մի անգամ միայն պատահեցի նրան եկեղեցում, ուր նա դարձեալ սիրով ու ժպտադէմ ողջունեց ինձ և հեռացաւ:

Դրանից յետոյ իմ տխրութիւնն օր ըստ օրէ աւելացաւ. ես նորէն սկսայ անձնատուր լինել իմ թաքուն մտածմունքներին: Ընտանեկան գործերով չէի պարապում և բոլոր օրը, համարեան, հիւանդ էի հոգևով ու մարմնով,

Մայրս, որ, ինչպէս յետոյ իմացայ, վաղուց հետևելիս է եղել իմ քայլերին, մի օր կանչեց ինձ առանձին ու ասաց.

—Սիրելի Աննա, հինգ ամսից աւելի է՝ ինչ ես մի տարօրինակ փոփոխութիւն եմ նշմարում քո մէջ: Դու այլ ևս առաջուայ աղջիկը չես, այն զուարթ, ուրախ, միշտ երգող ու ծիծաղող աղջիկը: Ամեն օր

տխուր ես, ամեն օր մտածմունքների մէջ, մի տեսակ վերացած, յափշտակուած... անշուշտ մի ցաւ ունիս, որի մասին շարունակ մտածում ես: Ասան, հոգիս, ի՞նչ ցաւ, ի՞նչ հոգս է այդ, ասան, մօրիցդ մի՛ ծածկիր. քո սրտի ցանկութիւնը կատարելու համար՝ ես ամեն բան կանեմ, ամեն ինչ կը գոհեմ, միայն թէ դու անկեղծ եղիր, խոստովանիր ինձ ամեն բան ճշդութեամբ, առանց ամաչելու ու քաշուելու:

— Ոչ մի ցաւ չունիմ, պատասխանեցի ես:

— Անկարելի է. ցաւ չունեցողը տխուր չի լինիլ և ոչ էլ ամբողջ օրը մտածմունքների մէջ: Խոստովանիր, ասում եմ, ինչ որ սրտումդ կայ, եթէ քո ցաւը մօրդ չըյայտնես՝ ուրիշ էլ ո՞ւմ կարող ես յայտնել:

Ես կամենում էի բանալ նրան իմ սիրտը. կամենում էի խոստովանել իմ գաղտնիքը, մանաւանդ որ նա այնքան մտերմաբար սկսաւ խօսել հետս. բայց լեզուս չէր հնազանդում կամքիս, չէի կարողանում խօսել: Ես մնացի լուռ:

— Աննա, սիրելիս, յայտնիր ինձ ցաւդ, պատմիր մօրդ քո սրտի գաղտնիքը, թախանձեց կրկին մայրս: Բայց ես լուռ էի:

— Կը կամենաս որ ինքս ասեմ, հարցրեց նա ժրպտալով:

— Ի՞նչ, գարմացայ ես:

— Թէ ինչո՞ւ տխուր ու շարունակ մտածմունքի մէջ ես:

— Ասան, եթէ այդպիսի բան գիտես, պատասխանեցի ես անհանգստութեամբ:

— Դու սիրում ես Գարեգնին և նրա մասին ես այդքան շատ մտածում:

Ես մնացի ապշած և աչքերս լայն բանալով՝ հարցրի.

— Այդ ո՞վ ասաց քեզ:

— Դու ինքդ, սիրելիս, դու ինքդ:

— Ինչպէ՞ս թէ՛ ես ինքս, ես այդպիսի բան ասած չունիմ. խօսքդ չեմ հասկանում, նկատեցի ես:

— Արթուն ժամանակ դու ոչինչ չես ասել. բայց քնած ժամանակ շատ բան ես յայտնել: Դու գրեթէ միշտ գառանցում ես, բոլոր ժամանակ քո երագնեւում խօսում ես Գարեգնի մասին, կանչում ես Գարեգնին... ինչո՞ւ համար են ուրեմն այս բոլորը:

— Ա՛խ, մայր իմ, մայր իմ, դու արդէն բոլորը գիտես... բացականչեցի ես և հեկեկալով նրա գիրկն ընկայ: Արտասուքն սկսաւ վազել աղբիւրի պէս: Նա ջերմութեամբ սեղմեց ինձ կրծքին և սկսաւ համբոյրներով գլուխս ու երեսս ծածկել:

Մայրական սիրելի կրծքի վրայ՝ երկա՛ր գլուխս գրած լաց էի լինում: Նա չէր խանգարում իմ սրտի գեղումը, կարծես գուշակելով որ թափուող արտասուքը մի մխիթարութիւն, մի պալասան էր՝ այնքան երկար ինձ տանջող ու տոչորող ցաւերի համար:

Երբ մի փոքր հանգստացայ, մայրս սրբեց իմ աչքերը, համբուրեց նրանց և կրկին անգամ ինձ իւր կրծքին սեղմելով՝ խանդակաթ ձայնով ասաց.

— Իմ սիրելի, իմ անուշիկ Աննա, ի գո՛ւր ես քեզ այդքան երկար տանջել, ի գո՛ւր ես և այժմ այդքան վրդովում: Քո սրտի ցանկութիւնը կատարելու համար

ոչ մի դժուարութիւն չըկայ: Եթէ դու սիրում ես այդ երիտասարդին և այդքան էլ նրա համար այրում ու տոչորում, նա կը լինի ուրեմն քո փեսան, քո ամուսինը: Վաղուանից արդէն ես ամեն բան կը պատմեմ հօրդ և մենք, երկուսս միասին, կը տնօրինենք ամեն ինչ այնպէս, որ քո սրտի ցանկութիւնը անթերի կատարուի:

Ուրիշ ի՞նչ ուրախութիւն կարող էր հաւասարուիլ այդ բոպէին զգացած իմ ուրախութեան: Ես գրկեցի մօրս, սեղմեցի նրան կրծքիս և առանց շնորհակալութեան մի բառ արտասանել կարողանալով՝ ջերմաջերմ համբոյրներով նրա երեսն ու ձեռքերը ծածկեցի:

Սյդ բոպէին, արգարե, ես ամենաերջանիկ աղջիկն էի....:

Հետևեալ առաւօտ հայրս մտաւ ինձ մօտ և իւր սովորական անկեղծութեամբ ու ծիծաղով ասաց.

— Սյդ ի՞նչ է, Աննիկս, առանց իմ գիտութեան փեսայ ես ընտրել:

Ես ժպտացի և գլուխս խոնարհեցի. զգում էի որ երեսս այրում է:

— Մի ամաչիր, հոգիս, շարունակեց նա՝ մօտենալով և գլուխս շոշելով. ես ամեն բան գիտեմ. մայրդ արդէն պատմեց, ընտրութիւնդ վատ չէ, սիրածդ երիտասարդը միակն է բոլոր քաղաքի մէջ, ամենից խելօք, ամենից ազնիւ: Ի հարկէ, մի փոքր դժուար է ինձ համար՝ աղջիկս տալ մի աղքատ վարժապետի, մինչդեռ շատ հարուստ ու անուանի երիտասարդների

ես մերժել եմ: Բայց քանի որ դու նրան ես սիրում, ես զրա դէմ ոչինչ չունիմ: Դու փոքր չես, քո չարն ու բարին ինքդ կարող ես հասկանալ: Որ քո ընտրածը հարուստ չէ, այդ էլ, ասենք, ոչինչ. փողով հարուստ ու խելքով աղքատ մարդն էլ բանի պէտք չէ: Ինչ որ մենք ունինք, այն բաւական կը լինի ձեր երկուսին: Դու մեր միակ որդին ես, նա էլ թող երկրորդը դառնայ: Վաղուանից արդէն ես ամեն ինչ կը տնօրինեմ նայ: Վաղուանից արդէն ես ամեն ինչ կը տնօրինեմ նայ: Վաղուանից արդէն ես ամեն ինչ կը տնօրինեմ նայ: Վաղուանից արդէն ես ամեն ինչ կը տնօրինեմ նայ:

Բոլորովին հարց չ'եղաւ թէ՛ արդեօք երիտասարդն էլ սիրում է ինձ և համաձայն կը լինէր իւր բաղին ինձ հետ կապելու: Ծնողներս այն կարծիքի էին՝ որ եթէ իրենք համաձայնուին այդ շնորհը նրան անելու, այնուհետև վերջինիս մնում էր միայն՝ շնորհապարտ լինել իրենց յաւիտեանս յաւիտենից:

Պէտք է խոստովանել որ ես ևս նոյն կարծիքին էի: Ես, մինչև անգամ, հաւատացած էի թէ՛ Գարեթինը սիրում է ինձ նոյն չափով՝ որ չափով որ ես իրեն (թէպէտ տանջող մտածմունքերի ժամանակ՝ իսկ նրա շարունակ՝ իրեն հակառակն էի կարծում). իսկ նրա շարունակ՝ իրեն սառն և ինձանից հեռու պահելը վերագրում էի իւր զգուշաւոր ազնուութեան, այն մտքով թէ՛ յոյս չուրեք, նենալով երբ և իցէ համեմել ցանկալի նպատակին, նա աշխատում է աստիճանաբար նուազեցնել և

ի վերջոյ մարել մի անգամ արդէն վառուած սիրոյ կրակը:

Իսկ այժմ, երբ արդէն կասկածն ու տարակուսանքը անցել էին, երբ ծնողական համաձայնութիւնն, որ առաջին և վերջին արգելքը կարող էր լինել՝ ստացուել էր, ուրիշ ի՞նչ ոյժ կարող էր խափանել իմ երջանկութեան ճանապարհը. հարկաւ և ոչ մի: Ինձ մտում էր ուրախանալ, հրճուիլ, ծիծաղել, համոզուիլ թէ՛ արդէն բաղդաւոր եմ, արդէն երջանիկ եմ. թէ՛ վերջապէս հասել եմ այնքան ժամանակից ՚ի վեր իմ գուրգուրած նպատակին...:

Բայց ինչո՞ւ, չըզիտեմ, հենց այսպիսի ուրախութեան ժամանակ մի անախորժ կասկած, մի գաղտնի երկիւղ դարձեալ ճնշում էր սիրտս և թունաւորում իմ զգացած ուրախութիւնը: Ուրիշ ի՞նչ տխուր նորութիւն պիտի բացուէր ինձ համար. գուշակել չէի կարողանում, բայց, կարծես, սպասում էի նրան... կարծես մէկը շնջում էր իմ ականջին թէ՛ «այդպէս շուտ և այդքան շատ մի ուրախանար. դու չես կարող ժառանգել նրան»:

Հետեւեալ օրն արդէն, որ կիւրակի էր, ծնողներս յայանեցին թէ՛ հիւրեր պիտի ունենան, ուստի և պատուիրեցին ուշադիր լինել սենեակների կարգ ու սարգին: Ինձ համար անակնկալ մի հրաւէրք էր այդ. բայց իրենք, երևի, նախընթաց օրուանից էին դրա մասին հոգացել: Երբ հարցրի թէ՛ «ո՞վքեր պիտի լինին մեզ մօտ», նրանք ծիծաղելով պատասխանեցին՝ «միայն քո և մեր բարեկամները»:

Ես ուրիշ ոչինչ չըհարցրի. որովհետև ստացածս պատասխանի եղանակն զգուշացնում էր ինձ աւելին չըխօսել: Սակայն սիրտս զգում էր որ ծնողներս ուզում են մի ինչ որ անտեղի գործ կատարել:

Այսուամենայնիւ, ես նրանց ցանկութեան արգելք լինել չէի կարող, եթէ մինչև անգամ կատարելիք գործի փաստակարութիւնը գիտենայի: Որովհետև հայրս սիրում էր որ, նոյն իսկ չնչին գործերում, իւր հեղինակութիւնը յարգուի:

Ժամը երկուսին մեր տուն եկան պարոն Տեսուչը և Գարեգինը: Երբ նրանց մօտ մտայ, հայրս ծիծաղելով ասաց.— Ան՛ս այս օրուայ մեր միակ թանկագին հիւրերը:

Ես սիրալիր յարգանքով ողջունեցի երկուսին. իսկ հայրս բացաղբեց նրանց իւր տարօրինակ յայտարարութեան պատճառը.

— Սա իմ քմահաճոյքն է. շատ եմ սիրում իմ Աննային անսպաս ուրախութիւններ պատճառել: Ձեր գալու մասին ես նրան աւելի վաղ չըյայտնեցի նրա համար որ իւր ուրախութիւնը յանկարծահաս լինէր:

Հիւրերը իրաւունք տուին հօրս՝ նման հաճոյքներով գուարճանալու:

Չընայելով որ ճաշի վրայ միայն հինգ հոգի էինք, այսինքն, երեք մենք և երկու՝ մեր հիւրերը, այսուամենայնիւ, ուրախ և գուարճալի անցաւ այդ ընտանեկան հացկերոյթը: Երբ բաժակները մի քանի անգամ դատարկուեցան, հայրս մինչև անգամ իւր խոպոտ ու կերկեր ձայնով երգեց մի հին երգ, որին անմիջ-

Ղապէս հետևեց Գարեգինը իւր մի ախորժալուր և հոգեշունչ երգով:

Շատ սրտագին բարեմաղթութիւններ եղան մեր կենացների վրայ: Մինչև անգամ Տեսուչն ու Գարեգինը զգածուած բանախօսութիւններ արին: Ամեն հայր տուն ու ընտանիք ոգևորում էր այդ դպրոցական առաքեալներին. իսկ մեզ մօտ, նրանք արդէն, իրենց զգում էին հարազատների մէջ: Այդ 'ի հարկէ անկեղծ ուրախութիւն էր պատճառում թէ ինձ և թէ իմ ծրնողներին:

Բայց մի բան ինձ զարմացնում էր: Ես, որ մինչև այն՝ այնքան անձկութեամբ, այնքան տենչանքով փափագում էի Գարեգինն տեսնել, այժմ, երբ նա իմ առաջ նստած խօսում, երգում և զուարճանում էր, չէի կարողանում նրանով ուրախանալ, նրա ներկայութեան քաղցրութիւնը վայելել...: Ես, մինչև անգամ, չէի կամենում որ նա այդ բոպէին մեր տանը լինէր. սիրտս անհանգիստ էր, ինչպէս սիրտը մի գորովագութ մօր, որ որդու հետ միասին յանկարծահաս մի աղէտի պատահած լինելով՝ մոռանում է իւր անձը և միայն սիրելիի ազատութեան համար մտածում...: Եւ ինչպէս լաւ գուշակում էր իմ հոգին:

Ճաշից վերջը, երբ կրկին ինձ համար կենաց առաջարկուեց, հայրս բաժակը ձեռքն առնելով՝ 'ի մեծ զարմացումս իմ, անշուշտ և հիւրերի, հետևեալ անսպաս բանախօսութիւնն արաւ.

— Ձեզ յայտնի է որ ես միայն մի աղջիկ ունիմ. սա է թէ իմ և թէ իւր մօր միակ ուրախութիւնը բո-

լոր աշխարհում: Արդէն տեսնում էք, նա գեղեցիկ է ինչպէս հրեշտակ, իսկ նրա սիրան ու հոգին գեղեցիկ են աւելի, քան իւր պատկերը: Նրան ուսում ու կրթութիւն տալու համար ես ոչինչ չեմ խնայել: Մեր քաղաքում գտնուած ամենալաւ ոյժերից յետոյ՝ ես յանձնեցի նրան մեր լաւագոյն վարժապետի, մեր ամենից սիրելի Գարեգինի խնամքին: Ի՞նչ սովորեցրեց նա նրան, չըզիտեմ. բայց որ ինքը, վարժապետը գոհ է իւր աշակերտուհուց, այդ ինձ համար շատ բան է նշանակում: Կարող եմ հանգիստ լինել ուրեմն որ իբրև հայր, իմ դստեր վերաբերմամբ, իմ պարտականութեան մեծագոյն մասը կատարել եմ: Մնում է ամենափոքրը, այն է՝ ընտրել նրա համար մի արժանաւոր ամուսին: Այդ արժանիքն, իմ համոզմամբ, չէ կայանում երիտասարդի ո՛չ հարստութեան, ո՛չ կալուածների և ո՛չ համբաւի մէջ. որովհետև, Աստուծոյ ողորմութեամբ, ես այնքան հարստութիւն ու ստացուածք ունիմ, որ կարող է իմ այդ երկու որդիներին էլ բաւել շատ երկար տարիներ: Ես ցանկանում եմ միայն որ երիտասարդը լինի ազնուամիտ, բարեբարոյ, առաքինի և լուսաւոր: Ահա՛ հենց այդպիսի երիտասարդ էլ ես գտել եմ, որին նաև իմ դուստրը սիրելով սիրում է: Դա ամենիս սիրելի, մեր առաջ նստած Գարեգինն է: Ես նրան եմ յանձնում իմ Աննայի ձեռքը՝ հայրական վերջին պարտքից սիրով ազատուելու համար...:

Վերջացնելով խօսքը, հայրս բաժակը դատարկեց: Բայց ես ամօթից շփոթուել, շառագունել էի, քրտինքը

առուներով խաղում էր մարմնիս վրայ, չըզիտէի թէ՛
 ո՞ր կողմ դարձնեմ աչքերս՝ ոչ ոքին չընայելու, ոչ
 ոքին չըտեսնելու համար:

Տեսուչը զարմացած աչքերով նայում էր մերթ
 հօրս, մերթ ինձ և մերթ Գարեգնի վրայ: Իսկ վեր-
 ջինս միայն մի անգամ արաւ անհանգիստ շարժում և
 ապա անվրդով հօրս ամենավերջին խօսքին սպասեց:
 Այդ սպասող վայրկեանը իմ յոյսն արդէն կործանեց...
 մի ձայն կարծես շնչաց իմ ականջին թէ՛ «քո գու-
 շակութիւնը մարմին առաւ...»:

Երբ հայրս աւարտեց, վերկացաւ Գարեգինը: Նախ-
 կին զուարթութիւնը տեղի էր տուել նրա մէջ մի տե-
 սակ վեհ և պատկառելի թախծութեան: Ինչո՞ւ, չըզի-
 տեմ, ինձ այնպէս թուաց թէ՛ նա այդ բոպէին կանգ-
 նած է գլխատման բեմի առաջ և, իբրև արի նահա-
 տակ, պատրաստուում է իւր հաւատոյ հանգանակը
 փառաբանելու: Նա մեզմ ու ազգու ձայնով սկսաւ
 խօսել:

— Իմ կեանքը, սիրելի բարեկամներս, թէպէտ հա-
 սակաւոր չէ, բայց նա հոժ և լի է փորձերով ու պա-
 տահարներով: Ես բաւական շատ ասլրել եմ աշխար-
 հում, շատ չար ու բարի եմ տեսել, շատ տեսակ ան-
 ձանց ու ընտանիքների եմ ծանօթացել. բայց իմ այդ
 բոլոր կեանքի մէջ, իմ տեսած ու ապրած աշխարհի
 մէջ՝ ես միայն մի օրիորդի պատահեցի, որ իւր ան-
 նման արժանիքներով կարողացաւ գրաւել ինձ այնքան,
 որ քիչ էր մնում թէ՛ զէպի իմ սրբազան ուխտն ու
 երզումն ունեցածս հաւատարմութիւնը սասանեցնէ...:

Այդ աղջիկը, յարգելի բարեկամ, ձեր գուստը և իմ
 աշակերտունին է:

«Որովհետև դուք շատ անկեղծութեամբ ու պար-
 զութեամբ խօսեցիք, թոյլ տուէք որ ես էլ նոյն ձևով
 շարունակեմ և աւարտեմ իմ խօսքը:

«Ամենամեծ պատիւը, որ ինձ նման մի մարդու
 կարող էին առաջարկել, այդ ձեր առաջարկածն է,
 յարգելի բարեկամ: Ձեր աղջիկն արժանի է ոչ թէ ինձ
 նման մի հասարակ, նիւթական կարողութիւնից
 գուրկ, մի՛ որոշ անուն ու համբաւ չունեցող հայ վար-
 ժապետի, այլ ինձանից թէ՛ զարգացմամբ, թէ՛ կարո-
 ղութեամբ և թէ՛ արժանաւոր համբաւով շատ աւելի
 բարձր մի երիտասարդի ամուսինը լինելու: Եթէ ես,
 երբ և իցէ, մտադիր լինէի ամուսնական ընկերակցու-
 թեամբ ինձ երջանիկ անելու, արդարև, ձեր պատուա-
 բեր առաջարկութիւնը կընդունէի՝ իբրև երկնքից ինձ
 զրկուած մի շնորհ, մի պարգև: Որովհետև, գոնէ ձեր
 դատեր նկատմամբ, ճանաչել ու գնահատել զիտցող
 երիտասարդը կարող է վստահութեամբ ասել՝ անա-
 կին, որ պիտի երջանկացնէ իւր ընտանիքը...»:

«Սակայն ցաւելով պիտի խոստովանիմ որ ան-
 կարող եմ ձեր առաջարկութիւնն ընդունել, որովհետև
 ես ուխտել ու երզումել եմ նուիրել իմ անձը ոչ թէ
 սոսկ մի ընտանիքի, այլ իմ ամբողջ ազգին և այս
 ուխտը սուրբ է եղել ինձ համար պատանեկական օրե-
 րից սկսած մինչև այսօր: Աշխարհային ոչ մի բարիք,
 ոչ մի փառք և ոչ մի հրապոյր չէ գայթակղեցրել ինձ.
 Ես հաւատարիմ եմ մնացել իմ ուխտին և այսուհետև

էլ հաւատարիմ պիտի մնամ նրան, եթէ, մինչև անգամ, երկրի բոլոր բարիքները համահաւաք նուիրեն ինձ։

«Ո՞վ կարող է հերքել որ աշխարհում, ճշմարիտ երջանկութիւնն ձեռք բերելու համար, անհրաժեշտ է ամուսնանալ։ Ընտանիքը, մանաւանդ սիրոյ, առաքինութեան և աշխատասիրութեան հիմունքների վրայ հաստատուած ընտանիքն, այն կենարար աղբիւրն է, որից բղխում է մարդկային կեանքի երանաւէտութիւնը»
ամենքիս տենչալի երջանկութիւնը։

«Սակայն կայ և մի ուրիշ մարմին, որ աւելի սիրելի աւելի պաշտելի է քան մեր սեփնականը։— Այդ մարմինը՝ հայրենիքն է։ Ես ուխտել եմ իմ անձը նրան նուիրել, նրա սիրուց գատ՝ աշխարհում ուրիշ սէր չըճանաչել, նրա ցաւերից գատ՝ ուրիշ ցաւերով չըվշտանալ։ Նրա բաղդաւորութիւնից գատ՝ ուրիշ բաղդաւորութիւն չըխնդրել...։ Իմ ոյժերը փոխանակ մի ընտանիքի, կամ որոշ թիւ մարդկանց բաղդին նուիրելու, ես ուխտել եմ բոլոր ազգին նուիրել։»

«Այդպիսի մի մեծ մարմնի բարիքներին ծառայելու համար, արդարև, իմ ոյժն ու ցանկութիւնը փոքր են ու աննշան. սակայն ծովն էլ կազմուած է կաթիլներէից։ Ես աւելի լաւ եմ համարում կաթիլներից մինը լինել և ծովի յատակն իջնել, քան ծովի գոյութեան համար դառնալ անօգուտ գերան և լողալ նրա երեսին»։

«Ներեցէք ինձ, ուրեմն, աղաչում եմ ձեզ որ հրաժարուում եմ ձեր ինձ առաջարկած այդ գերազանց պատուից։ Որքան և ինձ համար, իբրև մահկանացուի, մեծ է այս գոհը, մանաւանդ որ ես հոգևով չափ սի-

րում եմ ձեր աղջկան, սակայն անհրաժեշտ է որ ես բերեմ այս գոհը, որովհետև իմ սրբազան ուխտին և երդմանը դրժել չեմ կարող...»։

Հայրս զարմանալի սառնասրտութեամբ լսեց այս խոստովանութիւնը և ծածկելու համար իւր ներքին վիրաւորանքը, որ բաւական կենդանի ցոլանում էր դէմքի վրայ, հարցրեց.

— Մի՞թէ քո ազգին օգնելու համար անպատճառ պիտի ամուրի մնաս և ամուսնանալով հանդերձ չե՞ս կարող նրա օգտին աշխատել։

— Ոչ, պատասխանեց Գարեգինը. որովհետև գեղեցիկ է աստուած. «Ո՞չ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ գմինն ատիցէ և գմիւնն սիրիցէ, կամ գմինն մեծարիցէ և գմիւնն արհամարհիցէ...»։ Ով որ կամենում է բոլորանուէր կերպով ծառայել ազգին, նա չըպէտք է ամուսնանայ։ Որովհետև ամուսնութիւնն ինքը ունի իւր որոշ պարտքերը, որոնց ամեն մի օրինաւոր ամուսին պարտաւոր է անթերի կատարել։

Այդ միջոցին անն, հօրս առաջարկութեամբ, մեր հիւրերը սեղանատնից հիւրասենեակը քաշուեցան, իսկ ես դուրս գնալով փակուեցայ իմ ննջարանում։ Այստեղ արդէն միայնակ տեսնելով ինձ՝ արտասուքս սկըսաւ հեղեղի պէս հոսել. ընկայ մահճակալի վրայ, ծածկեցի երեսս բարձերի մէջ և երկար, շատ երկար իմ դառն ու յուսահատ վիճակը ողբացի։

Թէ այնուհետև ի՞նչ խօսեց հայրս հիւրերի հետ, չիմացայ, միայն նրանց հեռանալուց յետոյ, նա մտաւ սենեակս, երևի ինձ մխիթարելու համար։ Տեսնելով

որ լալիս եմ, նա մօտեցաւ ինձ, քնքշաբար սեղմեց իւր կրծքին և ասաց.

—Մի լար, իմ սիրելի, իմ անուշիկ Աննա, եթէ քո սիրած երիտասարդը մերժեց քեզ, ես էլ իմ կողմից քո վրէժը կը լուծեմ: Քո հայրը մեռած պիտի լինի որ նա այսուհետև հանգստութիւն գտնէ... ես չարաչար կը հալածեմ նրան, տանջանքներ կը պատճառեմ և վերջը կոչնչացնեմ...:

—Ի՞նչ, դու պիտի սպանես նրան, ճշացի ես սարսափահար:

—Այո՞, բայց ոչ իմ ձեռքով, պատասխանեց նա այնպիսի մի եղանակով որ կարծես վրէժխնդրութեան դէն էր խօսում իւր մէջ:

Ես մի կողմ հրեցի հօրս և ձեռքս կրծքիս դնելով՝ զայրութից դողդացող ձայնով ասացի.

—Առաջին գնդակն այստեղ ուղղել տուր, իսկ երկրորդը՝ նրա վրայ. հեռացիր, դու իմ հայրը չես...:

Իմ յանկարծական զրգոտմը զարմացրեց հօրս. նա մնաց շուարած և չրգիտէր ի՞նչ պատասխանել: Խեղճ մարդ. ամեն տեսակ զգացմունքի վրայ էլ նայում էր պատուասիրութեան տեսակէտից: Նա այնպէս էր կարծում թէ՛ սիրածս երիտասարդի մերժումը՝ զայրոյթ կամ ատելութիւն պիտի ծնեցնէր իմ մէջ. նա չրգիտէր որ ճշմարիտ սէրն՝ ատելութեան չի փոխուիլ, որ մերժումը կարող է ճնշել, կամ խոցոտել այդ սէրը, բայց սպանել նրան՝ երբէք...: Երկար նայեց նա ինձ վրայ, սևեռեց հայեացքն ուղիղ իմ աչքերին, ցանկացաւ, երևի, որ նրանք տեղի տային իւր հօր

հայեացքին. բայց նրանք անբթիթ՝ արտայայտում էին իմ ցասումը...:

Վերջապէս նա մեղմանալով՝ մօտեցաւ ինձ և այս անգամ աւելի քնքոյշ ձայնով հարցրեց.

—Ուրեմն, դեռ էլի սիրում ես նրան:

—Այո՞. և ես նրան իմ մահուան օրը կը մոռանամ, պատասխանեցի ջերմութեամբ:

—Բայց նա քո հօրն անպատուեց, քեզ անպատուեց...:

—Նա չ'անպատուեց և ոչ մէկին: Պէտք է բաւական բարձր և ազնիւ լինել նրան հասկանալ կարենալու համար: Նրա խոստովանութիւնն անկեղծ էր. նրա ուխտը սուրբ է: Մինչև այժմ ես սիրում էի նրան. իսկ այսուհետև՝ պիտի պաշտեմ...:

—Ուրեմն ես թշնամի չի՞ պիտի լինիմ այդ մարդուն, հարցրեց նա:

—Երբէք, պատասխանեցի ես:

—Բայց կարո՞ղ եմ չը լինել. թո՞յլ կը տայ ինձ այդ իմ պատիւը:

—Եղբր ուրեմն և իմ թշնամին, եթէ այդ հաճելի է քեզ, ասացի ես:

Հայրս ոչինչ չը պատասխանեց և դուրս գնաց:

ՉՈՐՐՈՐԿԻ ՕՐ

Հարկ չը կայ ասել որ այս բոլորից յետոյ իմ զրուցիւնն աւելի վատթարացաւ: Տխրութիւնը տիրեց ինձ բոլորովին, ծիծաղ ու խնդում չքացան ինձ հա-

մար. տուն ու ընտանիք ունենալս մոռացայ. ինձ հետ խօսողներին կամ չէի լսում, կամ եթէ լսում էի՝ չէի հասկանում: Փախչում էի բոլորից և փակուում իմ սենեակում, կամ մեր պարտիզի մի անկիւնն առանձնանում՝ անձնատուր լինելով խորին մտածութեան: Իմ յիշողութիւնը բթացել, անզգայացել էր ամեն բանի համար, բայց չէր մոռանում միայն Գարեգին և այն բոլորը, ինչ որ կապ ունէր Գարեգին անուան հետ: Մտածում և երանում էի այն անցեալին, երբ նա իմ կոխքին նստած՝ այնքան մօտ որ ես նրա շնչառութիւնն էի լսում, դաս էր խօսում ինձ: Ես լսում ու նայում էի նրան անսահման սիրով, անհուն ցանկութեամբ... հիանում էի, երբ նա ամբողջապէս զգացմունք դարձած՝ խօսում ու քարոզում էր ինձ, կամ երբ ոգևորութիւնը վառում էր նրա աչքերում աշխուժի կրակը: Երանում էի այն ժամերին, երբ ես սրտատրուի սպասում էի նրան, կամ երբ նրա սիրալիր այցելութեամբն արդէն գոհ, ճանապարհում էի նրան՝ յուսալով մի օրից կրկին տեսնելու... Երբ հպարտացած նրան սիրելովս. մտածում էի թէ՛ նա իմն է յաւիտեան, թէ ոչ որ ինձանից չէ կարող խլել նրան...: Երանում էի նոյն իսկ իմ տխրութեան այն օրերին, երբ նա, թէպէտ ինձանից հեռացած, բայց դարձեալ նուազ յոյս էր ներշնչում թէ՛ այսօր չէ, վաղը, մի քանի օրից, կամ գուցէ մի շաբթից՝ կը գայ ինձ տեսնելու:

Իսկ այժմ... այժմ ամեն յոյս կորել, անհետացել էր: Գարեգինն այլ ևս իմը չէր. նրան այլ ևս չիպիտի

ժառանգէի...: Օ՛, ինչպէս ծանր էր մտածել այդ մասին... Յանկարծ չունենալ այլ ևս նրան, որին մի օր առաջ ունէիր, որը քո մտածութեան, քո քաղցրը երազների, քո ապագայ երջանկութեան սնուցիչն էր, որը քեզ կեանք և ուրախութիւն էր բերում, քեզ շունչ, սիրտ և հոգի էր տալիս... որի համար դու կամենում էիր ապրել, որի համար գործում, աշխատում, յառաջադիմում էիր, որի յաջողութիւնը քեզ ուրախացնում և յաղթանակը հպարտացնում էր...: Եւ յանկարծ դառնալ, նայել շուրջդ, տեսնել որ նա այլ ևս չըկայ, որ դու միայն ես, որ քեզ պատում է անպարունակ դատարկութիւն...:

Մայրս, որ գրեթէ նոյն չափ վշտահար էր այս դժբաղդ դէպքի պատճառով, հնարներ էր որոնում իմ թախիժը անցնելու և տխրութիւնս մեղմելու: Տեսնելով որ իւր խորհուրդներն ու մխիթարականները չեն կարողանում ինձ մաշող մտածմունքները ցրել, սկսաւ գրեթէ ամեն օր հրաւիրել իմ նախկին ընկերուհիներից մինին, կամ միւսին ինձ զբաղեցնելու և մտահոգութիւնս ցրելու համար: Ընկերուհիներս զալիս էին: Նրանց այնպէս էր հասկացրել մայրս թէ՛ ես տխրելու հիւանդութիւն ունիմ, ուստի և պէտք է ուրախացնեն ինձ: Ընկերուհիներս, ի հարկէ աշխատում էին այդ նպատակով, բայց առանց մեծ յաջողութեան: Միայն թէ նրանց բերած նորութիւններն սկսում էին հետզհետէ հետաքրքրել ինձ:

Այսպիսով, ես նրանցից իմացայ որ հոգևոր դըպրանոցի վարժապետական հին խմբի և նրանց պաշտ-

պանների լարած մեքենայութիւնները վերջապէս յաջողուել են, որով և նոր խումբը մնացել է նեղ դրութեան մէջ. որ հակառակորդներից ու դաւադիրներից կազմակերպուած բանալը կարողացել է ժողովրդի ամեն խաւերում տարածել և շատ շատերին համոզել թէ՛ վարժապետական նոր խումբը բողոքականութիւն է քարոզում աշակերտներին, անբարոյականացնում է նրանց, կամ թէ ծնողների դէմ ապստամբեցնում:

Այս անխիղճ զրպարտութիւններն, որոնք միշտ անագնիւ մարդկանց գէնքերն են եղած ագնիւ հակառակորդների դէմ, ոտքի էին հանել քաղաքում սինքթոր խութանը, որ առանց ճշմարտութեան հասու լինել կամենալու՝ հրապարակներում հաւաքուած՝ գոռում ու գոչում էր թէ՛ «խաչ հանեցէք դրանց»:

Մի փոքր յետոյ իմացայ որ այս զրպարտութեան ու խառնակութեան ձայներն էջմիածին հասնելով՝ համոզել էին նաև Մատթէոս կաթողիկոսին՝ կոնգակով հրամայել հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան՝ արձակել տեսչին իւր վարժապետներով: Պատմում էին թէ՛ սրպիսի աղիողորմ տեսարան էր ներկայացնում այդ ժամանակ՝ հազիւ բարեկարգ դրութեան հասած այդ ուսումնարանը, որին նորէն սպաննում էր աւերումն: Աշակերտները լալիս և փարում էին վարժապետներին, աղաչելով նրանց՝ չըթողնել իրենց վարձկան մշակների յուսով, չըյանձնել դպրոցը գառնագգեստ գայլերին...: Բայց ի՞նչ կարող էին անել վարժապետները. նրանց վերևից հրամայում էին հեռանալ, ուրեմն և պիտի հեռանային և իրենց նոր վարած ու ցանած բու-

րաստանը թողնէին ճանապարհի շահամուլ անցորդներին:

Այսուամենայնիւ, տեսուչը բարեկամների խորհրդով դիմեց մի վերջին միջոցի: Յանձնելով դպրոցը իւր հաւատարիմներին, նա առաւ իւր հետ Գարեգնին և պատուաւոր հոգաբարձուներից մինին ու գնաց էջմիածին իրերի դրութեանը Մատթէոս կաթողիկոսին ծանօթացնելու համար: Բայց նրա առաքելութիւնն ապարդիւն անցաւ, ուստի և յուսահատ ու վշտահար վերադարձաւ նա Թիֆլիս՝ իւր հայրենիքը: Մինչդեռ Գարեգինը նորէն եկաւ մեր քաղաքը՝ իւր սիրելի դպրոցն ու «բուրաստանը», (ինչպէս սիրում էր նա անուանել դպրոցը) վերջին անգամ տեսնելու և իւր ձեռնասուն աշակերտներին վերջին հրաժեշտի ողջոյնը տալու:

Մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ նրա վերադարձն իմացայ: Կարծում էի թէ՛ նա եկել է նորից մեր քաղաքում մնալու և իւր սիրած դպրոցում պաշտօնավարելու: Ուստի գոհ էի որ այժմ, գէթ հեռուից, երբեմն, երբեմն նրան տեսնելու բաղդը պիտի ունենամ:

Մի առաւօտ միայնակ զբօսնում էի մեր պարտիզում և, ի հարկէ, դարձեալ Գարեգնի վրայ մտածում: Սպասուհիս մօտենալով յայտնեց որ մի կին կամենում է ինձ տեսնել: Հրամայեցի կանչել նրան: Սա օրիորդական դպրոցի աղախինն էր, որ մօտենալով՝ մի նամակ յանձնեց ինձ: Դեռ չըհարցրած թէ՛ սկզբից է նամակը, նա անհետացաւ: Բանալով ծրարը, դարմացայ, տեսնելով որ գրողը Գարեգինն էր: Սիրտս թունդ ելաւ և սկսաւ սաստիկ տրոփել: Ի՞նչ է գրում

նա ինձ, ի՞նչ կարող է դրել... մտածեցի ես վայրկե-
նապէս և ապա շտապով սկսայ կարդալ նամակը,
որ, մօտաւորապէս, հետևեալ բովանդակութիւնն ունէր.

«Ազնիւ օրիորդ.

«Բարի մարդկանց մեքենայութիւնների շնորհիւ՝
«ստիպուած եմ հեռանալ ձեր հայրենի քաղաքից, որի
«հետ սիրտս կապուած է ամենաքաղցր յիշատակներով:
«Մակայն այստեղից հեռանալուց առաջ, փափաքելով
«փափաքում եմ տեսնել և իմ հրաժեշտի ողջոյնը տալ
«ձեզ: Բայց որովհետև ձեր տուն մտնելն անհնար է
«ինձ՝ այն ակամայ վիրաւորանքի պատճառով, որ ես
«ստիպուած հասցրի ձեր ծնողներին, ուստի խնդրում
«եմ, եթէ ձեզ նոյնպէս ցանկալի է, գէթ վերջին ան-
«գամ, տեսնուել ինձ հետ, բարեհաճէք այսօր և եթ
«մի քանի վայրկեանով մտնել օրիորդական դպրոցն,
«ուր գտնուում եմ այժմ և ուր կսպասեմ ձեզ մինչև
«ժամի տասներկուսը»։ ստորագրած էր՝ «Ձեզ նմա-
«նավիշտ Գարեգին»:

Ի՞նչ եղայ ես այդ բոպէին, չեմ կարող ասել:
Մի քանի տեսակ զգացմունքներ միասին թունդ ելան
իմ սրտում և՛ ուրախութիւն և՛ վարանք և՛ երկիւղ
և՛ տխրութիւն... բոլորը միմեանց հակասելով, մինը
միւսին յետ կամ առաջ մղելով...: Ուրախանում և
հրճւում էի՝ մտածելով որ, ուրեմն, խաբուած չեմ,
որ Գարեգինն ևս սիրում է ինձ, կամենում է տես-
նել, իւր հրաժեշտի ողջոյնը տալ ինձ: Այդ պատճա-
ռով ուզում էի իսկոյն և եթ թռչել նրա մօտ. մի
անգամ էլ տեսնել, մի անգամ էլ լսել նրան...: Բայց

վարանում էի իմ որոշման մէջ՝ մտածելով թէ՛ ար-
դեօք դա պատշաճից դէմ, կամ նոյն իսկ վիրաւորա-
կան չի լինիլ իմ ծնողների պատուի համար: Բայց
եթէ չըտեսնէի նրան, եթէ նա յաւիտեան հեռանար
ինձանից՝ առանց իւր վերջին խօսքն ինձ ասելու...
օ, ինչ կանէի ես այն ժամանակ. կարո՞ղ էի ներել
ինձ այդ յանցանքը: Եւ երբ յանկարծ մտածում էի
թէ՛ նա արդէն հեռանում է, թէ նրա նամակը մի ճշմա-
րիտ, բայց և չարագուշակ լուր է բերել ինձ, թէ ես,
ուրեմն, ընդ միշտ գրկւում եմ նրանից... գլուխս
ուղղակի այրւում, սիրտս փոթորկում էր և կամենում
կարծես դուրս թռչել իւր տեղից:

Բայց և այնպէս, պէտք էր օգուտ քաղել դէպքից:
Վերջին անգամ իմ սիրելուն տեսնելու համար՝ ինձ
մնում էր միայն մի երկու ժամ: Ուստի շտապով վե-
րագարձայ սենեակս, հագնուեցայ և սպասուհիս հետս
առնելով՝ դիմեցի դէպի օրիորդական դպրոցը:

Այստեղ պատահեցի Գարեգինն այն սենեակում,
ուր նա յաճախ առանձնանում էր դասից ազատ մի-
ջոցներին: Նա զբաղուած էր մի ինչ որ գրու-
թեամբ: Տեսնելով ինձ՝ իսկոյն բարձրացաւ տեղից և
իւր մշտածիծաղ ժպիտով ողջունելով ինձ, խնդրեց
նստել:

— Ուրախ եմ որ եկաք, սկսաւ նա խօսել՝ իմ
հանդէպ նստելով:— Մի քանի օրից, սիրելի օրիորդ,
ես հեռանում եմ այս տեղից և, հաւանական է, որ
այլ ևս չըվերադառնամ: Մեր սիրած դպրոցներն ևս
թողնում եմ, գրեթէ անտէր, որովհետև նրանք, որոնք

ստիպեցին մեզ բաժանուել դրանցից և որոնք մեր գործի շարունակողը պիտի լինին, ոչ այլ ինչ են, եթէ ոչ անսիրտ վարձկաններ: Վշտահար սրտով հեռացաւ մեր ազնուոգի տեսուչը, նոյնպիսի սրտով էլ հեռանում եմ ես, որովհետև մեր յոյսերն օդը ցնդեցան, իսկ ծրագիրները խեղդուեցան երկունքում...: Ի՞նչ արած, երևի այս երկրի դժբաղդ մանուկներին այսօր քանն էր վիճակուած:

«Սակայն այս վշտերի հետ միասին ծանրանում էր իմ սրտի վրայ և մի ուրիշ մեծ վիշտ, որն ամենից աւելի պիտի տանջէր ինձ, եթէ ես չըմտածէի թեթևացնել այն որ և է միջոցով:

«Այդ վիշտը, օրիորդ, ձեր առ իս ունեցած չարաբաղդ սիրոյ պատճառած վիշտն է:

«Դրա պատմութիւնը յայտնի է ձեզ այնպէս, ինչպէս և ինձ. այն նորոգելու, ի հարկէ, կարիք չըկայ: Բայց ես ցանկանում եմ մի քանի խօսք ասել նկատմամբ մի հանգամանքի, որին անձանօթ էք դուք և որը վերաբերում է ձեր յարգելի հօր ինձ արած առաջարկութեան: Այդ առաջարկութիւնը, սիրելի օրիորդ, որքան էլ գերազանց և ինձ պատուաբեր, այսուամենայնիւ մեծ վիշտ պատճառեց սրտիս նրա համար, որ այդ եղաւ ձեր ներկայութեամբ և որ ես ձեր ներկայութեամբ էլ ստիպուեցայ մերժել այն՝ շատերին ցանկալի՝ մեծագին պատիւը:

«Քանի որ դուք զիտէք այն ամենը, ինչ իմ մերժման է վերաբերում, ես կամենում եմ, դնալուց առաջ, իմացնել ձեզ, նաև այն, ինչ որ դեռ չըզիտէք, որպէս

զի դրանով հանգստութիւն տամ մի փոքր իմ չարատանջ սրտին:

«Իմ մերժումը լսելով՝ դուք անշուշտ համոզուեցաք թէ՛ շնորհներից քաղցրագոյնը այսքան կոպտութեամբ մերժող մարդու մէջ ոչ սիրտ կարող է լինել և ոչ զգացմունք և գուցէ անիծեցիք այն սուրբ, բոցավառ սէրը, որ տածել էք ինձ համար:

— Երբէք, երբէք, ընդհատեցի ես ջերմութեամբ, այդպիսի աննպաստ կարծիք ձեր նկատմամբ չեմ ունեցել. ես, մինչև անգամ, հաստատ հաւատում էի...

— Վերջացրէք, օրիորդ, դուք ուրեմն հաստատ հաւատում էիք թէ՛ ես նոյնպէս սիրում եմ ձեզ:

— Այո՛:

— Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ, դուք ինձ մխիթարեցիք. այժմ ես հանգիստ եմ, ասաց Գարեգինը մի առանձին խնդութեամբ և ապա շարունակեց. — այժմ լսեցէք: Ես վաղուց արդէն անտարբեր չէի դէպի ձեզ: Ես չըկարողացայ փակել իմ աչքերը՝ ձեր գրաւիչ գեղեցկութիւնն ու կախարդող հայեացքը չըտեսնելու համար, բթացնել իմացականութիւնս՝ ձեր ներքին արժանիքն ու փայլուն բարեմասնութիւնները չըճանաչելու համար կամ խեղդել զգացմունքս՝ ձեզ չըսիրելու և չըպաշտելու համար...: Գիտէք, մինչև ձեր ինձ սէր խոստովանելու օրն՝ իմ հոգին բիւր անգամ խոստովանել է ձեզ այն՝ լուրիկ և անձայն...:

«Սակայն մեզ, ուսուցանող երիտասարդներին վրայ սրբազան պարտք կայ՝ ջերմեռանդութեամբ պատկառ մնալ ուսանող աշակերտուհու առաքինութեան:

Ինձ համար, իբրև ուսուցչի, անհնար և նոյն իսկ ամօթ էր ամենաթոյլ ակնարկով իսկ ձեր զգացմունքը քաջալերել: Թէպէտ սէրը նոյն ինքն առաքինութիւնն է, սակայն ժամանակն ու հանգամանքները հազիւ են նրան իւր սկզբնական կամ որ նոյն է՝ առաքինական սահմաններում պահում: Այդ իսկ պատճառով ես պարտաւոր էի ամեն ջանք գործ դնել իմ սրտի հնոցը սառուցի կեղևով պատելու: Եւ եթէ ես մինչև անգամ այդ չ'անէի իբրև ուսուցիչ, գոնէ, իբրև կուսակրօնութեան ուխտեալ՝ պարտաւոր էի անել: Որովհետև, եթէ իրաւ ես պատրաստուում էի նուիրել ինձ մի սուրբ կոչման, ուրեմն և պիտի սովորէի արժանապէս ծառայել այդ կոչմանը, պիտի վարժեցնէի ինձ գրկանքների, անձնուիրութեան: Գտնուելով այսպիսի պայմաններում, հարկաւ, ինձ մնում էր տակաւ առ տակաւ մարել բնութեան ձեռքով իմ մէջ վառած կրակը, մարել այն մինչև վերջին առ կայծումը...: Սակայն, աւանդ, հազիւ կարողացել էի թուլացնել իմ մէջ վառուող այդ հրդեհն, երբ ձեր սիրավառ խոստովանութիւնը բորբոքեց այն կրկին: Այո, այն համբոյրը, որ դուք գրոշմեցիք իմ ձեռքին, թափանցեց սիրտս ինչպէս մի կայծակ, որ ամպերի միջից անտառին զարնելով՝ այրում, փաղաղում է հանդիպող ծառերը և նրանցով մայրի մէջ անշիջանելի հրդեհ բորբոքում: Կարող էք երևակայել թէ՛ ի՞նչ քաջեցի ես այն երկու օրը, երբ դիտմամբ հեռու մնացի ձեզանից: Որքան ոյժ գործ դրի ես՝ մինչև որ երրորդ օրը կարողացայ սառնասրտութեամբ ոտք դնել ձեր տանը և

քաջութիւն ունենալ՝ ողջունելու ձեզ սովորական ժպիտով: Այնուհետև ես արագ արագ աւարտեցի ուսմանդ գործը, միայն ձեր և իմ անձից փախչելու համար...:

«Երկրորդ և առաւել զօրեղ՝ հարուածը ձեր հօր առաջարկութիւնն էր, որ կարող էր տապալել իմ հաստատակամութիւնը և դրժել տալ ինձ իմ ուխտին ու երգմանը. մանաւանդ որ այդ ժամանակ դուք նրատած էիք իմ հանդէպ՝ զինուորուած ձեր բոլոր հրապոյրներով...: Բայց ես օգնութեան կանչեցի ինձ՝ հայրենիքի բարձրագոյն սէրը և նրա զօրութեամբ յաղթահարեցի սպառնացող վտանգը:

«Երբ վերջին անգամ, իբրև ուսուցիչ, ես հեռանում էի ձեզանից, դուք, քաջ զիտենալով որ ես փախուստ եմ տալիս ձեր սիրուց, ծանր դիտողութիւն պրիք ինձ ասելով՝ որ ես անարգում եմ ձեր սրտում վառուած սիրոյ սուրբ կրակը, մինչդեռ պաշտպան պիտի լինէի նրան: Դուք, անշուշտ, յիշում էք որ ես պատասխանեցի թէ՛ սրբութիւնը չի անարգուիլ իւր երկրպագուից: Դրանով կամենում էի ասել թէ՛ ես ձեր սրբազգաց սիրոյ շերմեռանդ երկրպագուն եմ: Եւ ինձ մշտական վիշտ պիտի պատճառէր այն մտածմունքը թէ՛ ես հեռացայ ձեզանից՝ առանց իմ զգացմունքներին ձեզ ծանօթացնելու:

«Այժմ դուք արդէն բոլորը գիտէք և ես հանգիստ եմ:

«Մնում է միայն մի հարց. — Արդեօք ներսում էք դուք ինձ այս գոհաբերութիւնը: Որովհետև այս դէպքում ես իրաւունք ունիմ միայն իմ սէրը խեղդելու, բայց ոչ նաև ձերը:

— Խոնարհում եմ այդ զոհաբերութեան առաջ, պատասխանեցի ես, որովհետև նա սուրբ է, որովհետև նա աւելի բարձրագոյն սիրոյ համար է: Որքան էլ ծանր լինի իմ զրկանքը, այսուամենայնիւ, ես նրա մէջ ունիմ այն մխիթարութիւնը թէ՛ դուք հեռանում էք ինձանից ոչ թէ մի ուրիշ կնոջ՝ այլ հայրենիքին ձեր սիրտը նուիրելու:

— Շնորհակալ եմ. այդպէս էլ հաւատում էի իմ ներշնչած ոգուն. գիտէի որ նա կարգարացնէ իմ յոյսը, ասաց Գարեգինը կարծես հրձուելով և սեղմեց ձեռս ի նշան շնորհակալութեան: Ապա կրկին դառնալով ինձ՝ աւելացրեց. — Իսկ այժմ, օրիորդ, դուք ազատ էք. աշխատեցէք սիրել ձեր առաքինութեան արժանի մի երիտասարդ, ամուսնացէք նրա հետ և երջանիկ եղէք: Ընտանեկան քաղցրութիւնը, որ ինձ վիճակուած չէր ճաշակել, անշուշտ մի գերագոյն բարիք է որ այնքան շատ երգուել է բանաստեղծներէց...:

— Ձեզանից յետոյ սիրե՛լ մի ուրիշին... մի՞թէ դուք ինձ ընդունակ էք համարում այդ բանին, հարցրի ես յուզուելով:

— Ժամանակը մոռացնել կը տայ ամեն ինչ, յարեց նա և այդ անհրաժեշտ է: Մի լաւ մայր լինել, կը նշանակէ ամեն բան լինել:

— Երբէք, երբէք. իմ կեանքում միայն ես ձեզ սիրեցի և այդ սէրն էլ ինձ հետ գերեզման կը տանեմ, ասացի ես ջերմութեամբ:

— Դուք այդ չէք անիլ և չէք կարող անել:

— Երգւում եմ իմ այս անդրանիկ սիրով. երգւում եմ և չեմ դրժիլ երգմանս:

— Ի՞նչ պիտի անէք ուրեմն:

— Ա՛յն, ինչ որ դուք:

— Մի երիտասարդ կարող է վարդապետ լինել, իսկ մի աղջիկ...:

— Միանձնուհի:

— Թողէք, ի սէր Աստուծոյ, այդ ցնորքը: Ի՞նչ պիտի անէք կուսանոցի բորբոսնած պատերի մէջ: Ինչո՞ւ այդ պայծառ կեանքը խաւարեցնել, մտածելու ընդունակ ուղեղը բթացնել, գործելու կարող աշխոյժը մարել, սիրելու ընդունակ սիրտը սպանել... ինչո՞ւ, վերջապէս, կենդանի թաղուել գերեզմանում այն ժամանակ, երբ ուրիշներն ապրում ու վայելում են Աստուծոյ լոյսն ու արևը, զգալ որ կարող ես նոյնն անել և դու, բայց սիրտդ սեղմելով՝ զրկուիլ այդ հաճոյքից...:

— Բայց ես չեմ դրժիլ երգմանս, չեմ սիրիլ ոչ ոքին. ցոյց տուէք ինձ ուրեմն այս աշխարհից փախչելու մի ուրիշ ճանապարհ, ապա թէ ոչ, ձեր հեռանալուց յետոյ՝ ես կսպանեմ ինձ, ասացի հաստատ ձայնով:

Գարեգինը նայեց ինձ մի վայրկեան սառը և խորախորհուրդ և ապա քաղցրութեամբ նկատեց. — Անձնասպանութեան մասին մտածելը փոքրոգութիւն է. աշխատեցէք՝ չլլինել փոքրոգի: Ով որ չէ ուզում ապրել և դէպի մարդիկ ունեցած իւր պարտքը կատարել, նա մի դասալիք է, որ թշնամու զօրութիւնից վախե-

նալով՝ թողնում է ընկերներին կռուի դաշտում և ինքը փախչում: Այդպիսի ճանապարհով ձեռք բերած փրկութիւնը՝ մահերից անարգն է. այդպիսի փրկութեան մի ձգտիք երբէք:

Ի՞նչ անեմ ուրեմն... ցոյց տուէք ինձ ազատութեան մի ուրիշ ճանապարհ. այս աշխարհում, այս մթնոլորտում ես այլ ևս չեմ տարիլ. զի ձեզանից յետոյ՝ նա ինձ համար պիտի դառնայ կատարեալ դժոխք...

Գարեգինը մի քանի բոպէ մնաց լուռ և աչքերը գեանին յառած՝ մտածում էր: Ապա դառնալով ինձ, հարցրեց.

— Ունի՞ք բաւական ոյժ ձեր ուխտին հաստատ մնալու:

— Կարող եմ պարծենալ, պատասխանեցի ես:

— Ուրեմն, համաձայն եմ, ուխտեցէք «միանձնուհի» լինել:

— Ի՞նչպէս, վարանելով հարցրի ես, չէ՞ որ դուք այդ կոչումը դատապարտեցիք:

— Այն, բայց այն ժամանակ իմ խօսքը անգործութեան մէջ իրեն սպանող միանձնուհու մասին էր:

Հեռացէք աշխարհից, բայց մի մանէք կուսանոց: Գնացէք հեռու հեռու, դէպի կորած հայ գիւղերը, դէպի այն ժողովուրդը, որին մոռացել են մեր գործողները. որի մէջ օր ըստ օրէ նուազում, հանգչում է կենդանութեան ոյժը: Գնացէք այնտեղ, ուր տգիտութիւնը բռնացած՝ քանդում, աւերում է, ինչ որ պատմական ժամանակներից մնացել է գեղեցիկ և յարգելի: Մտէք

այդ ժողովրդի մէջ, նուիրեցէք ձեզ նրա բարօրութեան և նրա մանկանց կրթութեան գործին: Սովորեցրէք նրանց ճանաչել իւր անցեալը, բարւոքել ներկան և գործել ապագայի համար: Ուսուցէք նրան՝ յարգել իրեն, սիրել ընկերին և պաշտպանել նրան, երբ հարկը պահանջէ: Եւ անձ այդ ժամանակ ձեր ուխտը սուրբ և նուիրումը պաշտելի կը լինի:

Ես ուրախութիւնից վեր թռայ տեղից, բռնեցի Գարեգնի ձեռքը և ջերմութեամբ սեղմելով այն, բացականչեցի.

— Շնորհակալ եմ, իմ ազնիւ, իմ միակ սիրելի Գարեգին. շնորհակալ եմ այդ գեղեցիկ խորհրդի համար, որով սովորեցնում էք ինձ առաւել բարձրագոյն սիրոյ հետ փոխանակել ձեզ համար զգացածս անվախճան սէրը: Ես հիացած եմ և պատրաստ այս բոպէին իսկ թուչելու դէպի այդ կորած անկիւնները: Ուխտում եմ ձեր առաջ և երդում ձեր սիրով որ ես «միանձնուհու» կոչումը կառնեմ վրաս և կը նուիրեմ ինձ այդ սրբազան գործին: Այժմ ես ձեր քոյրն եմ. համբուրեցէք ինձ ջերմ, եղբայրական սիրով և այդ համբոյրը թող օրհնէ իմ ճանապարհը:

— Գարեգինը ոտքի ելաւ, քնքշութեամբ գրկեց ինձ և յուշիկ իւր կրծքին սեղմելով՝ գրոշմեց իմ ճակատին մի ջերմ և անոյշ համբոյր, գլորելով երեսիս արտասուքի կաթիլներ:

— Գնա՛, սիրեցեալ քոյրիկ, ես օրհնում եմ քեզ, օրհնում եմ քո ճանապարհը. գնա՛, թող Աստուած լինի քեզ հետ... ասաց նա գրեթէ արտասուքից խեղդուող ձայնով:

Ես հեկեկացի և նրա գիրկն ընկայ. մի քանի բուպէ մենք այս գրութեան մէջ արտասուեցինք, ապա ջերմագին համբուրուելով՝ բաժանուեցինք միմեանցից յաւիտեան....:

Վերջին խօսքերը արտասանելիս՝ քոյր Աննայի շրթունքները շղաձգաբար դողդացին, նա հառաչեց և գեղանի աչքերում արցունքներ փայլեցին....: Քսան երկար տարիները դեռ չէին մարել ուրեմն սիրոյ սրբազան կրակը, նա դեռ մխում, առկայծում էր....:

Բայց ես, որպէս զի քոյր Աննայի թախիծը փարատուէր, խնդրեցի նրան իւր գրոյցը շարունակել:

— Գարեգնի հեռանալուց յետոյ՝ խօսել սկսաւ նա, ես, գրեթէ, շարունակ զբաղուած էի այն մտածութեամբ թէ՛ ի՞նչպէս պիտի իրագործեմ այն նշանաւոր միտքը, որ նա ներշնչեց ինձ՝ «լինել գործող միանձնուհի»: Այդ բանի վրայ մտածելն իսկ մոռացնել էր տալիս ինձ Գարեգնից հեռու և բաժանուած լինելս, մանաւանդ, երբ յիշում էի թէ՛ այդ նրա ստեղծած միտքն է, նրա սիրած ու գուրգուրած գաղափարը՝ մոռանալ ամեն ինչ և նուիրուել հասարակաց բարւոյն: Հետեապէս, եթէ ես կարողանայի իրագործել այդ միտքը այն ճանապարհով, որը նա գծեց ինձ համար, ես ամենաբաղտաւոր կիներ կը լինէի աշխարհում:

Ծնողներս ի հարկ է զարմանում էին՝ տեսնելով որ Գարեգնի հեռանալուց յետոյ, հակառակ իրենց սպասածին, ես ոչ միայն ախուր չէի, այլ և առաջուայ նման իրենց հետ ուրախ խօսում, ծիծաղում և ժամանակ էի անցնում:

— Այդպէս կը լինի, անփորձ աղջիկ է, ասում էր մի անգամ հայրս, մօրս հետ առանձին խօսելիս, երկտասարդը որ հեռացել է, ինքն էլ հետզհետէ կը սառչի և կը մոռանայ նրան:

Եւ ուրախանալով որ գործն այսքան դիւրութեամբ և առանց ծանր հետեանքների վերջացաւ, նոր խորհուրդներ ու ծրագրեր էին կազմում՝ ինձ համար նոր փեսացու ընտրելու:

Բայց նրանց ուրախութիւնը երկար չտևեց: Որովհետեւ շուտով երևան եկաւ մեր քաղաքի հարուստ և, իմ ծնողների կարծիքով, շատ յարմար մի երիտասարդի ինձ փեսայանալու առաջարկութիւնը, որի մասին նրանք խօսեցին ինձ հետ:

— Իմ ձեռքը մէկին, կամ միւսին տալու համար՝ այդ առաջին ու վերջին առաջարկութիւնը լինի, որ անում էք, ասացի ես նրանց հաստատ ու վճռական ձայնով. Գարեգնից բաժանուելուց յետոյ՝ մի կարծէք թէ իմ ձեռքը կը համաձայնուիմ տալ մի ուրիշին, թէ կուզ այդ ուրիշը իջած լինի երկնքից. երբէք: Ես ուխտել ու երգուել եմ՝ բնաւ չ'ամուսնանալ և այս ուխտից չեն կարող դարձնել ինձ ոչ ձեր խնդիրները, ոչ աղաչանքները և ոչ սպառնալիքները: Այս իմ առաջին ու վերջին խօսքն է:

Ծնողներս ի հարկէ շատ վշտացան իմ այս պատասխանի վրայ, երկար խօսեցին, խնդրեցին, թախանձեցին, բայց անօգուտ: Ես դարձել էի նրանց համար անզօնի մի քարաժայռ: Նոյն իսկ իմ մօր արտասուքները, որ նա յաճախ թափում էր իմ առաջ,

չըկարողացան իմ սիրտը մեղմել: Ես յափշտակուած, ոգևորուած էի այն մեծ ու վեհ մտքով, որ յղացրել էր իմ գլխում իմ պաշտելի ուսուցիչը: Իմ հոգին հրպարտանում և սիրտս լցում էր մի անսպառ ուրախութեամբ, երբ մտածում էի թէ՛ կարող եմ մի օր այդ միտքն իրագործել, այն է՝ լինել «միանձնուհի» և այն՝ իւր տեսակում առաջինը:

Մի տարուց յետոյ հայրս մի փոքրիկ ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ հիւանդացաւ սուր շերմախտով: Չընայելով որ ամեն միջոց գործ զրինք նրան առողջացնելու, բայց անօգուտ: Նա մեռաւ՝ թողնելով մօրս ու ինձ անմխիթար դրութեան մէջ:

Երբ այս ծանր վշտի առաջին ամիսներն անցան, մեր մօտիկ ազգականները խորհուրդ տուին մեզ՝ մեր վիշտը մեղմելու և հանապազօրեայ մտատանջութիւնները ցրուելու համար, դուրս գալ քաղաքից և ամառն անցցնել գիւղերը շրջելով:

Իմ ուխտն ի հարկէ ես չէի մոռացել, ուստի և այս ճանապարհորդութիւնը շատ յարմար էի տեսնում իմ նպատակների իրագործման համար: Այս պատճառով ես էլ իմ կողմից համոզեցի մօրս՝ ընդունել ազգականների տուած խորհուրդը:

Մայրս չընդդիմացաւ և մենք մեր երկու ազգականների ընկերակցութեամբ ճանապարհորդեցինք 1866-ի ամբողջ ամառը: Այդ առիթով մենք գրեթէ այս բոլորը նահանգը պտտեցինք, շատ գիւղեր անցանք, վանքեր, ուխտատեղիներ այցելեցինք և բերդեր ու աւերակներ տեսանք: Ինչ գիւղ կամ աւան

որ մանում էինք, ես խնդրում էի մօրս մնալ այդտեղ մի քանի օր և այդ բոլոր ժամանակ ուշի ուշով դիտում էի գիւղի զիրքն ու շրջակաները, տեղեկութիւններ էի հաւաքում բնակիչների նիստ ու կացի, սովորութեան, բնաւորութեան և, մանաւանդ, նրանց մտաւոր ու բարոյական կարօտութեան մասին, իմանալու համար թէ՛ սր գիւղը կամ աւանը աւելի յարմարութիւն ունի իմ ապագայ գործունէութեան կենտրոնատեղին լինելու:

Հասնելով այս գիւղը, մենք շատ հաւանեցինք սրա թէ՛ զիրքին, թէ՛ օդին, թէ՛ ջրին և թէ՛ բնութեան գեղեցիկ տեսարաններին, որոնց նմանը արդարև ուրիշ տեղ չէինք տեսած: Միւս կողմից էլ՝ քաղաքից շատ հեռու լինելու պատճառով, սա ամենից աւելի մոռացուած, աչքաթող եղած և մտաւոր ու բարոյական օգնականութիւնից զուրկ էր: Նոյն դրութեան մէջ էին և այն եօթ-ութ հայաբնակ աւանները, որոնք գտնւում են սրա շրջականերում և որոնց նոյնպէս մենք այցելեցինք:

Այստեղ մնացինք մի ամբողջ շաբաթ: Արդէն երկրորդ, թէ՛ երրորդ օրուանից որոշել էի որ այս գիւղն է իմ ընտրածը: Այդ պատճառով էլ հետամուտ եղայ, որքան կարելի էր, մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու թէ՛ սրա և թէ՛ շրջակայ գիւղերի մասին: Այդ ժամանակ Տէր-Յովսէփը մի երկու տարուայ ձեռնադրած քահանայ էր, բայց նրան այստեղ տեսնել չըկարողացայ, որովհետև մեր տեղս եկած օրերը նա գնացել էր քաղաք: Ստիպուած էի իմ տեղեկութիւն-

ները հաւաքել գիւղացիներէցից և, գլխաւորապէս, մեր հիւրընկալից:

Մի առաւօտ, երբ այս սիդաւէտ սարահարթի վրայ գբօնում էինք, մայրս սքանչանալով և կարծես մարգարէանալով բացականչեց. — «Երանի՛ նրան, ով այստեղ ապրում, այստեղ մեռնում և այս գեղեցիկ տեսարանների մէջ թաղւում է...»:

Օգոտ քաղելով դէպքից, ես խկոյն յարեցի. — «Մայրիկ, արի՛ հեռանանք քաղաքից և գանք, այստեղ հաստատենք մեր բնակութիւնը: Իրաւ, էլ ի՛նչ ունինք մենք այն խառնիճաղանճ մարդկանց բազմութեան մէջ: Հեռանանք բոլորից, ապրենք այս գեղեցիկ լեռներում, այս պարզ ու բարի գիւղացիների մէջ»:

— Է՛հ, որդի, մի՛թէ կարելի է, պատասխանեց մայրս հառաչելով. այնտեղ տուն ունինք, տեղ ունինք և չվերջապէս ինչպէս կարող ենք քո հօր գերեզմանը թողնել... այս խօսքի վրայ սկսաւ արտասուել:

Ես միտթարեցի նրան և այնուհետև այլ ևս այդ հարցին չըվերադարձայ: Բայց իմ մտքում արդէն որոշել էի հաստատապէս թէ այս գիւղը պիտի լինի իմ ապագայ գործունէութեան միջավայրը:

Երբ մեր ճանապարհորդութեան շրջանը լրացաւ, վերադարձանք քաղաք, արդարև հոգևով ու մարմնով բաւական կազդուրուած:

Այնուհետև ես շարունակ զբաղուած էի իմ ծրագրով և մտքումս գրել էի որ մի որոշ ժամանակ անցնելուց յետոյ, երբ մօրս սիրտը բաւական կամրանար՝ առնէի նրան և վերադառնայի ընտրածս գիւղը:

Սակայն ճակատագիրը ուրիշ կերպ անօրինեց իմ վիճակը: Քաղաք վերադառնալուց յետոյ՝ հազիւ անցան մի քանի ամիսներ և ահա կրկին ամուսնական առաջարկութիւնները նորոգուեցան: Մայրս տարօրինակ թախանձանքով սկսաւ ստիպել ինձ՝ ընդունել այդ առաջարկութիւններից միւնը, որն էլ ես կը ցանկանայի, որովհետև ինքը բոլորն էլ յարմար և արժանաւոր էր տեսնում:

— Հայրդ չըկայ, ուրիշ մէկը չունինք, որ մեր փակ դուռը բանայ. թո՛ղ գոնէ փեսայ ունենալու ուրախութիւնը, մեռնելուցս առաջ, մի քանի օր վայելեմ, ասում էր նա և խնդրում, աղերսում ու արտասուքն աղբիւրի պէս աչքերից հոսում:

Ես լսում ու տեսնում էի այդ բոլորը, սիրտս ճմլւում էր, որովհետև մօրս սիրում էի, ուստի և ցանկանում նրա կամքը կատարել: Բայց իմ ուխտին ու երդմանը նոյնպէս չէի կարող դրժել: Մնում էր ինձ բացէ ի բաց մօրս խնդիրը մերժել, որովհետև այդ աւելի հեշտ էր, քան ուխտից դառնալը: Աւելի ծանր ազդեցութիւն արին մօրս վրայ՝ իմ նպատակի մասին արածս յայտնութիւնները:

— Վայ ինձ, ուրեմն դու միանձնուհի պիտի լինիս, ասում էր նա լալով. մի՛թէ նրա համար պահեցի, պաշտեցի քեզ, նրա՞ համար այդ հասակին հասցրի որ դու սեպուղիների վանքը մտնես...: Խեղճ կինը չէր հասկանում իմ իսկական նպատակը, թէպէտ և ես բացադրում ու աշխատում էի հասկացնել: Նա տեսել էր վանքի մէջ փակուած միանձնուհիներ, լսել

էր շատ բան նրանց կրած հոգեկան գրկանքների մասին, գրկանքներ, որ նրանք չեն կամենում քաղցրացնել մի ուրիշ, հոգեկան բարձր գուարձութեամբ, այդ պատճառով էլ շարունակ իմ սև օրն ու սև բաղճն էր լալիս:

Ամուսնու կորուստի վրայ մայրս արդէն անմխիթար էր, իմ այս անդարձ վճիռն էլ վերջին հարուածը տուաւ: Նա օր ըստ օրէ սկսաւ մաշուել, տխուր մտածմունքներն ուժաթափ արին նրան և մի քանի ամիս շարունակ նա ծառայեց անկողնին: Ես պարզ տեսնում էի թէ՛ ինչպէ՞ս մայրս հետզհետէ նուազում, մօտենում է գերեզմանին, սիրտս կսկծում էր, ցաւում, վշտանում էի, գիտէի որ եթէ իւր կամքը կատարեմ, գուցէ նրան մեռելութիւնից դէպի կեանք վերակոչեմ: Բայց երբ յիշում էի և՛ Փարեգնի առաջ արած իմ հանդիսաւոր ուխտն ու երդումը, երբ մրտածում էի թէ՛ մահուան ճիրաններից մի մայր ազատելով՝ մեծ գործ արած չեմ լինիլ, մինչդեռ իմ ուխտին հաւատարիմ մնալով՝ գուցէ շատերին կարողանամ կոչել դէպի բարոյական կենդանութիւն, կրկին արիութիւն էր գալիս վրաս և վշտերս փոխւում էին ուրախութեան: — «Սրանք իմ բառնալիք խաչի թեթև ծանրութիւններն են, մտածում էի ես, թող պատրաստուիմ այսուհետև աւելի ծանրագունին հանդիպելու»:

1867 թիւ մայիս ամսում մայրս վախճանուեց:

Ծանր, շատ ծանր կորուստ էր սա ինձ համար: Աշխարհում այլ ևս ես մնում էի միայնակ...: Երբ չա-

մուսնացած աղջիկը չունի ծնողներ, եղբայր, կամ քոյր, նա գրեթէ այլ ևս ոչ ոք ունի աշխարհում...: Այդ միայնութիւնը ես աւելի զգացի, երբ մօրս մահուան պատճառով մեր տուն հաւաքուած բարեկամներն հետզհետէ սկսան իրենց տները քաշուիլ: Մօրս կողմից ես մօտիկ և, մանաւանդ, սրտացաւ ազգական չունէի: Ինձ մօտ մնաց հօրաքոյրս իւր մի աղջկայ հետ, որոնք և խնամում էին ինձ քնքոյշ հոգատարութեամբ:

Երբ իմ նորագոյն վշտի առաջին շաբաթներն անցան, ես նորէն սկսայ իմ ուխտի մասին մտածել: Եւ զարմանալի է թէ՛ որքան մխիթարութիւն էր բերում ինձ լոկ այդ մտածմունքը: Մինչև անգամ, սիրտս լցնւում էր մի տեսակ գաղտնի ուրախութեամբ, երբ երևակայում էի մեծութիւնն այն գործի, որ ես պիտի հիմնէի և որին ամբողջովին պիտի նուիրուէի:

Օգուտ քաղելով իմ կատարեալ ազատութիւնից, ես գրեթէ ամբողջ տարին զբաղուեցայ իմ ազգայ գործունէութեան ծրագրների կազմութեամբ և ուսումնասիրութեամբ: Եւ երբ մօրս մահուան տարեգարձը կատարեցի, սկսայ այնուհետև այդ ծրագրների սկզնական գործադրութիւնը:

Ինձ հաւատարիմ մի ազգակցի օգնութեամբ՝ վաճառեցի իմ ծնողներից ինձ ժառանգութիւն մնացած տունը, կալուածները, տան սարգ ու կարգը, նոյն իսկ իմ ունեցած զարդերն ու հագուստները և այն ամենը, ինչ որ գիւղ տանել, կամ գիւղում գործադրել չէի կարող և բոլոր գումարուած փողը աւանդ տուի իմ յիշեալ ազգականին, որ վերին աստիճանի ազ-

նիւ ու վստահելի լինելուց զմտ, չափազանց համակիր էր նաև իմ գաղափարներին:

Երբ ամեն բան պատրաստել էի դէպի գիւղը քաշուելու համար, հենց այդ ժամանակ իմացայ որ իմ սիրելի ուսուցիչն արդէն վարդապետական կոչումն է ստացել Երուսաղէմում, ուր նա խոյս էր տուել ճակատագրի հարածանքից ազատուելու համար: Այս լուրն անսահման ուրախութիւն պատճառեց ինձ: Ուրեմն մենք երկուսս նուիրուում էինք մեր ուխտին գրեթէ միաժամանակ:

Գործերս կարգի բերելուց յետոյ՝ ես միայն մի քանի շաբաթ մնացի բարեկամներիս հետ: Ապա պատրաստել տուի ինձ համար միանձնուհու սև սքեմ և այդ սքեմով էլ դուրս եկայ քաղաքից:

Վերջին անգամ իմ ծնողաց գերեզմանին այցելելով և վերջին անգամ նրանց շիրիմները համբուրելով՝ ես ճանապարհուեցայ դէպի այս գիւղը՝ ընկերակցութեամբ մի գիւղացու, որ առաջին անգամ հանդիպելուց՝ ինձ ճանաչեց իբրև միանձնուհի, կամ ինչպէս ինքն էր ասում՝ «ապաշխարող»:

ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ՕՐ

Երբ այստեղ մտայ, ինձ գրեթէ ոչ ոք չըճանաչեց, չընայելով որ երկու տարի առաջ՝ այս գիւղումն էի եղած մօրս հետ: Իմ առաջնորդի նման՝ գիւղացիներն ևս ընդունեցին ինձ իբրև իսկական միանձնուհու և սկզբից արդէն վերաբերուեցան ինձ յարգանքով:

Առաջին ծանօթս Տէր-Յովսէփն եղաւ, որի տանն էլ իջևանեցի: Բայց մինչև մի որոշ գործի ձեռք զարնելս, ոչ ոքին ոչինչ չըյայտնեցի իմ դիտաւորութեան մասին: Այժմեան եկեղեցուց ոչ հեռի՝ վարձեցի մի սենեակ և սկսայ ապրել այնտեղ իբրև մի ճշմարիտ «ապաշխարող»:

Իմ բնակարանը թէպէտ գիւղի մէջ եղածներէց լաւագոյնը, սակայն նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ խոնաւ, մութ, փոքրիկ պատուհաններով մի խցիկ: Դուրս գալ քաղաքի փառաւոր տանից և ապրել գիւղի այդ տեսակ մի հիւղում, դա արդարև չափազանց զգալի էր ինձ համար: Ես դժուարութեամբ էի շնչում այդ տեղի խեղդուած օդը և առաւել ևս դժուարութեամբ ընտելանում ինձ շրջապատող աղքատութեան: Երբեմն, մինչև անգամ, զղջման նման մի բան կարծես կամենում էր իմ կամքի հաստատութիւնը սասանել: Բայց երբ մտածում էի՝ որ այդ ամենը դեռ «սկիզբն է երկանց», որ իմ ուխտին հաւատարիմ մնալու համար դեռ պէտք է ուրիշ շատ նեղութիւնների հանդիպեմ և որ վերջապէս այս բոլորն այն մեծ ուսուրբ գործի համար է, որին նուիրուել է և իմ սիրելի ուսուցիչը և որն անշուշտ նստած է այդ բուպէին նոյնպիսի մի խցում, այն ժամանակ նորէն արիւթիւն էր գալիս վրաս, ես սկսում էի սիրել իմ մութ, աղքատիկ բնակարանը, իմ սև և տխուր սքեմը, իմ մենաւոր, անպաճոյճ կեանքը:

Աւելի շատ մխիթարուում էի, երբ դուրս գալով իմ տնակից, մտնում էի գիւղական խղճուկ եկեղե-

ցին աղօթելու և ապա պատահելով գիւղացիներին ու
 գեղջկուհիներին՝ խօսակցում էի նրանց հետ իրենց
 ցաւերի և կարօտութիւնների մասին: Նրանց պարզ և
 անկեղծիկ բնաւորութիւնը, մտերմական, բայց համեստ
 զրոյցները, անմեղ և շատ անգամ նախապաշարմուն-
 քով լի դատողութիւնները ինձ և՛ հիացնում և՛ գուար-
 ճացնում էին: Մի քանի ամիս շարունակ ես ուշա-
 զրութեամբ դիտում և ուսումնասիրում էի գիւղացի-
 ների բնաւորութիւնը, նիստ ու կացը, սովորութիւն-
 ները, ընտանեկան յարաբերութիւնները: Յետոյ կա-
 մաց կամաց սկսայ մտնել ընտանիքների մէջ և աշ-
 խատել, կապել նրանց ինձ հետ՝ օգնելով իւրաքան-
 չիւրին երբեմն խորհուրդներով, իսկ յաճախ գործով:

Ամենից առաջ ես ուշադրութիւն դարձրի գիւղի
 աղքատ և անօգնական ընտանիքների վրայ և նրանցից
 իւրաքանչիւրի կարօտութեան չափն իմանալուց յետոյ,
 յորդորեցի հարուստ գիւղացիներին՝ օգնել նրանց ինչ
 բանով որ կարող էին: Եւ որովհետեւ գիւղացու հա-
 մար օրինակն ամեն խօսքից զօրաւոր է, ուստի ամե-
 նից առաջ ես սկսայ օգնել կարօտներին: Իմ սեփական
 միջոցներով գնեցի եգներ, կովեր, այծեր և գիւղա-
 ցուն պիտանի ուրիշ պարագաներ և բաժանելով այդ՝
 ամենից աւելի կարիք ունեցողներին, նոյնը անել
 յորդորեցի և հարուստ գիւղացիներին, այն է՝ իրենց
 աւելորդից մի մի բան յատկացնել չունևոր դրացուն:

Մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ տեսայ թէ
 իմ օրինակն ու յորդորը ապարդիւն չանցան: Գիւղացի-
 ների մէջ զարթեց գեղեցիկ նախանձաւորութիւն՝

միմեանց օգնելու: Եւ այդ նորութիւնը ոչ միայն
 հետզհետէ գիւղի միջից հալածեց աղքատութիւնը, այլ
 և գիւղացիների մէջ հաստատեց սէր և բարեկամու-
 թիւն, սովորեցնելով ընկերին՝ սիրել ընկերոջն և և
 օգնել նրան:

Իմ երկրորդ գործն եղաւ մի կանոնաւոր ուսում-
 նարանի բացումը: Տէր Յովսէփը, ճշմարիտ է, ունէր
 իւր տան մէջ փոքրիկ դպրոց, ուր նահապետական
 ձևով մի քանի տղաներ էր կարդացնում. բայց ես
 համոզեցի նրան ընդարձակել այդ գործը:

Բաճանան, առ հասարակ, հեղինակութիւն ունի
 գիւղում. նա ժողովրդեան հոգևոր առաջնորդը լի-
 նելով, է մի և նոյն ժամանակ և նրա համոզմունքի
 կառավարը: Մի օգտաւէտ գործ առաջ տանելու հա-
 մար, պէտքէ աշխատել ամենից առաջ քահանայի հա-
 ճութիւնը վաստակել և, եթէ կարելի է, նոյն իսկ
 գործի սկսող և հեղինակ նրան հռչակել: Այդ բանը
 զգուս է քահանայի ինքնասիրութիւնը և նա փոխա-
 նակ գործին խափան դառնալու, ինքն է նրա յաջո-
 դութեան ճանապարհը հարթում: Մեր թերթերում շատ
 անգամ կարդում ենք՝ գիւղական վարժապետի և քա-
 հանայի մէջ տեղի ունեցած ընդհարումների մասին
 լուրեր կամ յօդուածներ: Ո՞վ է լինում արդար և ո՞վ
 մեղաւոր, այդ շատ անգամ չի պարզուում. բայց ինձ
 համար, գոնէ, մի բան մնում է միշտ պարզ. այն է՝
 որ գիւղերում ծառայող մեր երիտասարդները, որոնք
 անշուշտ սիրում են իրենց գործը, չեն կամենում
 նոյն իսկ ի սէր այդ գործի, իրենց փառասիրութեան

մի փոքրիկ մասը գոհել: Նրանք կամենում են հեղինակութիւններ ճանաչուել զիւղում, նոյնը ցանկանում է և՛ քահանան: Երկուսի շահերն ընդհարում են միմեանց և այդ ընդհարման ժամանակ գործը վրասում է: Բայց այդպէս չըպէտքէ լինի: Մեր վարժապետները, քանի որ ստիպուած են գործել զիւղերում ոչ աւելի լաւ, քան ինչ որ ունենք քահանաների հետ, պարտաւոր են ի սէր գործի յաջողութեան՝ գոհել իրենց ինքնասիրութիւնը, նոյն իսկ ազնիւ փառասիրութիւնը: Թող գործի հեղինակ համարուի քահանան, թող նա վայելէ յաջողութեան փառքը, նա լինի դարձեալ զիւղի առաջին յարգելին, միայն թէ գործը յառաջադիմէ: Հակառակելով քահանային և աշխատելով ձգել նրա վարկը ժողովրդի աչքում, դրանով ոչ միայն դպրոցական գործի յաջողութեանն ենք վրասում, այլ և գործում աններելի յանցանք, սառեցնելով զիւղացու կրօնական ջերմեռանդութիւնը, որն և պատճառ է դառնում նրա բարոյականի քայքայման: Իսկ երբ տգէտ զիւղացու մէջ մեռնում է բարոյականը, այնուհետև նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդակերպ մի հրէշ, որի խօսքերը զգուանք և գործերը սարսափ են բերում մարդու վրայ:

Որպէս զի Տէր-Յովսէփն իմ դիտաւորութեան մէջ իւր սկսած գործի խափանումը չընկատէր, ես նրան յանձնեցի ուսումնարանն ընդարձակելու հոգար: Հարկ չըկայ ասել որ կարևոր խորհուրդներն ու հրահանգները ես էի տալիս, իսկ ժողովրդի առաջ միայն ինքն էր երևում:

Մեր ժամանակաւոր ուսումնարանը քահանայի ընդարձակ ներքնատան մէջ էր, ուր ձմեռը կրակ էր վառում նոյն նահապետական օջախում և ծուխը բարձրանում նոյն վաղեմի երգիկով: Բայց նորութիւնն զգալի էր աշակերանների թուի մէջ, որ տասն և հնգից՝ հասել էր եօթանասունի. տեսակի մէջ՝ ըստ որում տղերանց հետ միասին՝ սովորում էին և՛ աղջիկներ, նոյնպէս դասաւանդութեան եղանակի և առարկաների մէջ, որոնց մեծ մասը ես էի աւանդում:

Առաջիկայ գարնան, ահա, այս ուսումնարանի շինութեան հիմը դրինք, որն և գրեթէ նոյն տարուայ մէջ աւարտուեց: Ճշմարիտ է, գլխաւոր և կշիռ ունեցող ծախսը ես արի, բայց զիւղացիներին էլ յորդորեցի մասնակցել գործին իրանց նպաստներով: Եւ այդ՝ ոչ թէ նրա համար որ իմ նիւթական ոյժը չէր բաւում ամբողջ շինութիւնն աւարտելու, այլ որպէս զի նրանք հասարակական գործի համար գոհաբերութիւն անելը սովորէին: Այդ առաքինութիւնը, մանաւանդ, անծախսօթ էր այն ժամանակ այս զիւղացիներին, գոնէ այն չափով, որպիսին ես էի պահանջում: Բայց բարի օրինակը վարակիչ դարձաւ: Զարմանալի եռանդով ու ոգեւորութեամբ ձեռք գարկեցին նրանք գործին, ինչպէս այդ անում են, առհասարակ, եկեղեցու շինութեան համար և շուտով աւարտեցին այն:

Ուսումնարանի շինութիւնն աւարտելուց և ուսման գործը կանոնաւոր ընթացքի մէջ անելուց յետոյ, ես քահանայի հետ շրջեցի մօտկայ զիւղերը և ամեն տեղից էլ աշակերտեր հաւաքեցի, որպէսզի մեր

դպրոցից միայն այս գիւղը չօգտուէր, այլ ուրիշներն
ևս շահուէին: Այսպիսով մեր գործը հետզհետէ ընդ-
արձակուելով՝ եկաւ, հասաւ նախանձելի դրութեան:
Այնուհետև աշխատեցի ուրիշ գիւղերից բերած մի քա-
նի ուշիմ աշակերտներից ուսուցիչներ պատրաստել
և նոյն իսկ իրենց գիւղերում փոքրիկ դպրոցներ
հիմնելով՝ նրանց կառավարութեան յանձնել, հարկաւ
իմ անմիջական հսկողութեան ներքոյ: Այդ գործն ևս,
ահա քանի տարի է, շարունակուում է արդիւնաւոր
կարգով:

Երբ դպրոցական գործը հաստատուն հողի վրայ
դրուեցաւ, ես ուշադրութիւն դարձրի գիւղական եկե-
ղեցու բարեգարդութեան վրայ: Ոչ մի հաստատութիւն
այնքան մօտիկ չէ գեղջուկի սրտին, որքան եկեղեցին
և ոչինչ այնքան չէ վառում, բորբոքում նրա սիրտն
ու հոգին, մեղմում բարքի կոշտութիւնը, սանձում
կրքերը և ընդունակ դարձնում նրան բարիք գործելու,
որքան ախորժալուր երգեցողութիւնը, հանդիսաւոր
պատարագը և մշտամրմունջ աղօթքները: Նրանք, որոնք
այս ժողովրդին վայրենի են համարում և անընդունակ՝
բարւոյ և գեղեցկի արժանիքը հասկանալու, չարաչար
սխալուում են: Գիւղացին, ճիշդ է, լեզու չունի իւր
զգացածն արտայայտելու և ոչ էլ շնորհք՝ նոյն իսկ
հիացման և յափշտակութեան ժամանակ իւր դէմքին
քնքոյշ արտայայտութիւն տալու, բայց նա բարւոյ և
գեղեցկի ստրուկն է. նրա ոգևորութիւնը անօգուտ չէ
անցնում, նրա զգացածը հեշտութեամբ չէ մոռացւում:
Իմ առաջարկութիւններից շատերն են արել եմ այդ

գիւղացիներին՝ մի հանդիսաւոր պատարագից, կամ
ժամասացութիւնից յետոյ, նրանց զգացուած և ոգե-
ւորուած միջոցին: Եւ այդ առաջարկութիւնները, որ-
քան էլ որոշ դժուարութիւնների հետ լծորդուած,
այսուամենայնիւ, ուրախութեամբ ընդունել և ան-
տրտունջ կատարել է ժողովրդի գոնէ մեծագոյն
մասը, համոզուած լինելով թէ՛ ինչ որ հասարակու-
թեան համար է անում, այն և իւր անձի համար է:
Այս իսկ պատճառով եկեղեցու պայծառութիւնը դըպ-
րոցական գործի յառաջադիմութեան հաւասար օգտա-
տէտ ճանաչելով՝ ես աշխատեցի, որքան ոյժերս նե-
րում էին, առաջ տանել նրան և հասցնել այն դրու-
թեան, որին ծանօթ էք արդէն:

Յետոյ կարգը գալիս էր գիւղացիների թէ՛ ներ-
քին, ընտանեկան կեանքի և թէ՛ նրանց դաշտային աշ-
խատութեան մէջ մի քանի նորութիւններ մտցնելուն:

Հեռուից դիտողն այնպէս է կարծում թէ՛ գիւ-
ղացին սովորած լինելով պարզ ու անպաճոյճ կեանքի,
շատ աննշան էլ կարիքներ ունի, թէ նա միշտ գոհ է
իւր վիճակից և թէ, առհասարակ, նրան շատ քիչ բան
է պակասում: Մի բան ճշմարիտ է. այն, որ գիւղացին
տրանջալու և ամեն անցորդի իւր ցաւերը պատմելու
սովորութիւն չունի: Նա գլխակոր և անմոռնչ աշխա-
տում է, ինչպէս և իւր անասունը: Բայց նա ամբող-
ջապէս կազմուած է կարիքներից...: Այն, պէտք է
ապրել նրա ընտանիքում, տեսնել և շօշափել նրա աղ-
քատութիւնը. ներկայ լինել դաշտում նրա կրած տան-
ջանքներին և չափել այդ տանջանքների գնով ձեռք

բերած արդիւնքի չնչին արժէքը, որպէս զի կարող լինի մարդ գաղափար կազմել գիւղացու կարօտութիւններէ մասին:

Իսկ այդ կարօտութիւնները միթէ կարծում էք թէ՛ միայն նիւթական օգնութեամբ են վերացում: Ո՛չ: Նիւթականը, հարկաւ, աւելի մեծ և աւելի արագ գործ է կատարում: Բայց սրտեղից ձեռք բերել այնքան նիւթական օգնութիւն, որով ամեն գիւղացի կարողանայ ապահովուել: Եղածը, հարկաւ, կը լինի ժամանակաւոր նպաստ. վերջինի պակասելուց՝ կարօտութիւնը դարձեալ երևան կը գայ նոր ուժով և այն լցնելու համար՝ գիւղացին դարձեալ կստիպուի խնդրել:

X Բայց կայ, արդարև, գիւղացուն մշտապէս կարօտութիւնից ազատող ապահով միջոց. այն է՝ սովորեցնել նրան ինքնօգնութեան, որը կայանում է իւր աշխատութիւնը և ստացած արդիւնքը տնտեսելու և խելացի կերպով գործադրելու մէջ: Այս միջոցն, արդարև, շուտով չէ լցնում գիւղացու կարօտութիւնը, բայց լինում է հաստատ և տևողական: Միանգամ արդէն զարթեց տկար մարդու մէջ ինքն իրեն օգնելու գիտակցութիւնը, նա այնուհետև ապահովուած է ամեն տեսակ կարօտութեանց դէմ: Միակ, փոքրիկ դժուարութիւնը՝ գիւղացուն այդ բանին վարժեցնելն է:

† Եւ անա այդ նպատակով ես շարունակ աշխատեցի, ժողովներ կազմեցի, խօսեցի, բացադրեցի, նոյնը նաև յաճախ քարոզել տուի Տէր-Յովսէփին, մինչև որ վերջ ի վերջոյ հասայ նպատակիս: Այժմ մենք ունինք այստեղ մի «հասարակաց շտեմարան» որին իւրաքան-

չիւր գիւղացի, տարուայ մէջ ստացած իւր արդիւնքից տալիս է տասանորդ — ցորեն, գարի կամ կորեակ, նայելով թէ՛ ի՞նչ արմտիք ունի ինքը: Իսկ կարօտութեան ժամանակ՝ նա անարգել օգուտ է քաղում այդ շտեմարանից փոխառաբար, այն պայմանով՝ որ պարտքը վերագարձնէ որոշ տոկոսի հետ: Այդ շտեմարանին տասանորդ չեն վճարում միայն չունեւորները. բայց կարիքի ժամանակ նրանք էլ համահաւասար իրաւունքով օգտուում են նրանից:

Մենք ունինք նոյնպէս «հասարակաց նախիր», որին ամեն մի ունեւոր տարուայ մէջ նուիրում է մի կամ երկու հորթ, նայելով թէ Աստուած սրբան է պարգևել իրեն: Այդ նախիրը գնալով հարստանում է և մենք նրանից լցնում ենք դարձեալ չունեւոր ընտանիքների կարօտութիւնը՝ մէկին մի կամ երկու կով նուիրելով՝ որ նրանց կաթով իւր երեխաները կերակրէ, միւսի գաշար ձրիաբար հերկելով, երրորդի խոտն ու խուրձերը հանգից տուն բերելով, չորրորդի կալը կալսելով և այլն:

Ունինք նաև մի փոքրիկ «փոխատու գանձարան», որի հիմնական գրամագլուխը ինքս եմ հոգացել, դարձնելով այն գիւղական հասարակութեան սեփականուածութիւն: Այդ գանձարանից, անա, հաւասարապէս օգուտ են քաղում թէ այս և թէ շրջակայ գիւղերի բնակիչները իրենց կարօտութեան ժամանակ, կարողը մի թեթև տոկոս վճարելով, իսկ աղքատը՝ առանց տոկոսի փոխ առնելով: Այս փոքրիկ և ըստ էութեան աննշան հաստատութիւնը, որի նմանը հարիւրներով կարող են

հիմնել մեր հարուստները գիւղերում, բացի գիւղացու կարիքը ժամանակին լցնելուց և նրա աշխատող ձեռքերին ազատութիւն տալուց, փրկում է նրան, նաև վաշխառուների ճանկերից: Վերջինները վաղուց է՝ ինչ հայաժական են այս կողմերից:

Այս ամենը կատարելու հետ միասին, զգալի էր լինում միշտ մի կարիք, որը լցուցանելու համար, դժբաղդաբար, ես բաւական պատրաստութիւն չունէի. այն է՝ սովորեցնել գիւղացուն՝ իւր աշխատութիւնից առաւել շահաւոր եղանակով օգտուելու ճանապարհը:

Այդ նպատակին մասամբ համեմատելով համար՝ ես բերել տուի գիւղատնտեսական գրքեր, երկրագործութեան, անասնապահութեան, հաւաքուծութեան, մեղուապահութեան և կաթնային տնտեսութեան վերաբերեալ և շարունակ կարգալով ու ուսումնասիրելով նրանց, սկսայ գործադրութեան յարմար եղածները սովորեցնել գիւղացիներին: Այդ նպատակով ես ձմեռ ժամանակ, դասից ազատ միջոցներին, հրաւիրում էի գիւղացիներին ուսումնարանի դահլիճը և գրքերից ուսածներս պատմում և հասկացնում նրանց: Հաւաքում էի յաճախ և գեղջկուհիներին և տնային տնտեսութեան վերաբերեալ հասկանալի դասեր խօսում նրանց: Այս նորութիւնները բոլորին էլ հաւասարապէս ուրախութիւն և գոհութիւն էին պատճառում:

Շատ անգամ անձամբ ներկայ էի լինում տանը՝ գեղջկուհու և հանդում՝ գիւղացու արած փորձերին. նրանց չընտանացածները ես նորէն կրկնում, նորէն բացազրում էի և երբ փորձերից մինն անյաջող էր

անցնում, քաջալերում, խրախուսում էի և փորձը նորէն կրկնել տալիս, մինչև որ յաջողութիւնը ձեռք էինք բերում:

✓ Այսպիսով, ըստ իմովսանն, օգնում էի գիւղացուն իւր դժուարաքիրտն աշխատութիւնը բարւոք գործադրելու: Եւ որովհետև այստեղի ժողովուրդն ինքն ի բնէ ուշիմ և ընդունակ է, ուստի իմ սովորեցրածները իւր ունեցած փորձառութեան հետ միացնելով, կարողանում է հին ժամանակներից աւելի օգուտ քաղել իւր աշխատութիւնից:

Քաղաքներում ապրող մեր գործողներն, առ հասարակ, այն կարծիքի են թէ՛ գիւղում գործելու ասպարէզ չըկայ, թէ՛ ձանձրոյթն ու պարապութիւնը կարող են այստեղ մարդուն խեղդել: Մինչդեռ ես՝ չը գիտեմ թէ՛ ո՞րքան ժամանակ էլ պիտի ապրեմ որ գիւղական ժողովրդի մէջ կատարելիք կարևորագոյն գործերի գէթ մի մասը կարողանամ կատարել: Քաղաքներին կեանք մատակարարողը գիւղն է, ինչպէս և ազգի կենդանութեան ոյժ տուողը՝ գիւղացին: Ով որ կամենում է ազգի կենդանութիւնը գորացնել, նա պիտի գիւղը գայ գործելու, զի ծառը ջրելու և ուռձացնելու համար, նախ նրա արմատները պէտք է յազեցնել....:

Քոյր Աննան իւր պատմութիւնը, գրեթէ, աւարտել էր: Այժմ ես գիտէի թէ՛ այնքան շատ ինձ հետաքրքրող «միանձնուհին» ո՞վ էր: Սակայն մնում էր

իմանալ էլի մի բան. այսինքն այն թէ՛ իւր թուած բոլոր այս գեղեցիկ գործերը, որոնցից աւելին ինքս ամեն օր տեսնում էի իմ աչքով, արդեօք նա առանց դժուարութեան և արգելքների էր սկսել և գլուխ հանել, թէ՞ հանդիպել էր նաև խոչընդոտների: Եւ եթէ այս վերջինները եղել էին, հապա ի՞նչպէս նա, մի տկար կին, կարողացել էր կոպիտ գիւղացու ստեղծած արգելքների դէմ կռուել: Իմ այդ հարին՝ նա պատասխանեց:

Ք Աշխարհում ես չը գիտեմ գեռ մի գործ, որի կատարելն ազատ լինէր արգելքներից: Գոնէ իմ փորձերից (սովորած՝ ես կարող եմ ասել թէ՛ նոյն իսկ ամենադիւրին համարուած գործը, կապ ունի միշտ մի արգելքի հետ: Սակայն այդ արգելքները, կարծում եմ, միշտ էլ փաստակար չեն: Ընդհակառակը, զրանք սովորեցնում են գործողին՝ իւր գործը դնել հաստատ հիմքի վրայ, կամ ապագայ շարիքների դէմ՝ դարձնել այն աննկուն ու գորաւոր:

Արգելքների մասին էք հարցնում. օ, ես նրանց շատ եմ հանդիպել, թէպէտ իմ պատմութեան ընթացքում և ոչ մինը յիշեցի: Եթէ իմ նուիրման գործում՝ զգացածս ուրախութիւնը թունաւորուել է երբ և իցէ, այդ պատահել է հենց արգելքներից հզորագունին հանդիպածս ժամանակ, մանաւանդ, երբ զրանց դէմ կռուելու համար իմ ոյժը նուազ և քաջութիւնն անբաւարար եմ գտել: Բայց համբերութիւնն ու անվհատ աշխատութիւնը ոչնչացնում են, նոյն իսկ, ամենագորաւոր արգելքները: Այդ ճշմարտութեան ես հասու

եղայ, դժբաղդաբար, մի փոքր ուշ. որովհետև համբերութիւնն էլ սովորեցնում է մարդուն փորձառութիւնը, որից ես գուրկ էի իմ առաջին ձեռնարկութիւնների ժամանակ:

Դժուար չէ ձեզ երեակայել թէ՛ որքան մեծ էր քր լինում իմ տանջանքը, երբ մի օգտաւէտ գործ սկսելու համար՝ ամեն ինչ մտածած, կշռած և կարևոր ծրագիրը կազմած՝ ուրախ ու յուսալիր դիմում էի գիւղացիներին և առաջարկում նրանց՝ օգնել ինձ այդ գործն սկսելու, հանդիպում էի սառն ու անտարբեր ընդունելութեան: Ճշմարիտ է, նրանք ինձ յարգում էին, ուստի և լսում ինձ յօժարութեամբ, շատ անգամ էլ, նոյն իսկ, գլուխները շարժում ի նշան համաձայնութեան, բայց զրանով էլ վերջանում էր նրանց ձեռնաւորութիւնը: Ամեն ոք անտարբեր գնում էր իւր գործին և ես դարձեալ մնում էի միայնակ իմ մտածմունքների և ծրագիրների հետ:

Դրանից յետոյ, ասենք, ես դիմում էի քահանային, խօսում էի նրա հետ ամբողջ ժամերով: Նա նոյնպէս ուշադրութեամբ լսում էր ինձ և, մինչև անգամ, համոզում որ ես հասարակութեան համար օգտաւէտ գործ եմ առաջարկում: Սակայն մի բան արգելում էր նրան համաձայնուել ինձ հետ: Ի՞նչ բան էր այդ, չը գիտէի, միայն ինձ թւում էր թէ՛ նա չէր կամենում այս դէպքում իւր խելքին հաւատալ, նա վախենում էր թէ՛ մի գուցէ իւր համաձայնութիւնից կամ առաջարկածս գործից մի փաստ հասնէ իրեն:

Նոյն ձևով էր վարւում և տանուտէրը, երբ խօ-

սուժ էի նրա հետ և սկսելիք գործի կարևորութիւնը բացատրում՝ իրեն մատչելի օրինակներով: Նա ինձ հասկանալով և իմ խօսքերից համոզուելով հանդերձ՝ խնդրում էր թողնել գործը մի ուրիշ անգամի, կամ գալ տարուան: «Մինչև այն ժամանակ, գուցէ, գիւղացիներին կարողանամ համոզել», ասում էր նա և սակայն այնուհետև գիւղացիներին հետ ոչինչ չէր խօսում, կամ եթէ խօսում էր, հարցն այն ձևով էր դնում որ լսողները ոչ հետաքրքրուում և ոչ էլ ուշադրութեան էին առնում այն:

Ո՛չ մի բանից այնքան չէ խորշում գիւղացին, որքան այն նորութիւններից, որոնք հակառակում են գիւղի նահապետական սովորութիւններին: Գիւղացու այդ յատկութիւնը յարգելի է արդարև իւր ունեցած առաքինութիւնների ու խիստ բարոյականի նկատմամբ. բայց նոյն յատկութիւնն անպայման վնասում է նրան, երբ խնդիրը գալիս է իւր աշխատութիւնը և արդիւնագործելու հին եղանակը բարեփոխելուն, կամ գիւղի մէջ հանքօգուտ մի հաստատութիւն հիմնելուն: Նա դրանց դէմ էլ, համարեան, նոյն ուժովն է կռուում, ինչ ուժով որ կը կռուէր՝ եթէ մինը համարձակուէր ձեռնամուխ լինել իւր բարոյականը խախտելուն: Ուղեղի ծուրութիւնն, առ հասարակ, թագաւորում է գիւղերում և այդ է պատճառը որ գիւղացին խորշում է միշտ սկսել այն՝ ինչ որ չեն սկսել իւր հայրը, կամ պապը:

Այսպիսի դէպքերում ես վերադառնում էի իմ խուցը տխուր և շատ անգամ յուսահատ: — «Ի՞նչ պիտի

կարողանամ անել այս ժողովրդի համար, քանի որ նա ինքը չէ կամենում իւր բարին, մտածում էի ես. — մի օր, այն, այն կարծիքին էի թէ՛ ամեն ինչ կարող եմ անել, ամեն արգելքների կարող եմ յաղթել, բաւական է որ հաստատ կամք և գործելու եռանդ ունենամ... բայց այժմ, ահա, տեսնում եմ որ բարիք գործելու համար էլ բաւական չէ գործողի կամքը, այլ նրան պիտի միանայ նաև բարիք ստացողի ցանկութիւնը»: Այսպէս էի մտածում, այն, բայց յետոյ տեսնում որ մտածելով ոչինչ չէր առաջանում. պէտք էր գործել: Եւ ես դարձեալ մտնում էի գիւղը. խօսում էի, յորդորում էի՝ որին էլ պատահում էի, ուր որ էլ նստում էի: Այդպիսով հետևում էի Քրիստոսի խօսած «գատաւորի ու այրու» առակին: Ես դարձել էի այրին, իսկ գիւղն՝ իմ գատաւորը. ես հանդիստ չէի տալիս նրան: Եւ պէտք է ասել, որ այդպիսի վարմունքս բաւական օգնում էր գործերի յաջողութեան: Հաւատացէք որ նոյն իսկ ուսումնարան մտցնելու նպատակով մի որ և է տանից՝ մի աւելորդ երեխայ դուրս բերելս մեծ նեղութիւն էր նստում ինձ: — «Մեր տանից մինը սովորում է, այդ էլ բաւական է, ասում էր մայրը, սրանք էլ պէտք է տանը մնան որ մեզ օգնեն»: Իսկ այդ «սրանք»ը շատ անգամ հինգ կամ վեց հոգի էին լինում: Կարելի էր միթէ այդքան երախտներն անփութութեամբ թողնել տգիտութեան մէջ: Իսկ ինչ աղջիկներին է վերաբերում, մինչև որ նրանցից մի քանիսը մեր ուսումնարանը մտցրի, զրեթէ տասը տարով պառաւեցայ: Ծնողները ոչ մի կերպ չէին կարողա-

նում հաշտուել այն մաքի հետ թէ՛ աղջիկը կարող է կարգալ: Չարմանում էին և, նոյն իսկ, յաճախ ծիծաղում ինձ վրայ. -- «Ինչի՞ն է պէտք աղջկան կարգալը՝ հապա, հասկացրէք մեզ», ասում էին նրանք: Իսկ գիւղացուն այդ բանն հասկացնելը այնքան էլ հեշտ չէր լինում: Ամբողջ ժամերով խօսում, բացադրում էի և այն բոպէին որ կարծում էի թէ՛ հն, այժմ՝ հասկացել ու համոզուել է, նա գլուխը շարժում և անտարբերութեամբ -- «էհ, ասում ես էլի...» նկատում ու հեռանում էր: Ես մնում էի ապշած նրա ետևից նայելիս:

Ուրիշ մի հասարակական գործ հիմնելու համար՝ առաջ էին գալիս այլ տեսակ արգելքներ: Այսօր, օրինակ, հաւաքել եմ գիւղացիներին և խօսում եմ նրանց հետ սկսելիք գործի օգտակարութեան և անհրաժեշտութեան մասին: Նրանցից շատերն, ասենք, խօսքերս հասկացել և գործն սկսելու համար համաձայնում են ինձ հետ: Միւսները, նոյնպէս, համաձայն են և գործի դէմ իսկապէս ոչինչ չունին: Բայց որովհետև առաջին համաձայնողները հետ մի հակառակութիւն կամ թշնամութիւն ունին, հետևապէս հակառակում են, նաև, իմ առաջարկած գործին: Մէկ էլ տեսար մի գիւղացի բարձրացաւ տեղից և մի անմիտ առարկութիւն արաւ առաջարկութեանդ դէմ: Մի հինգ, տասը հոգի էլ իրենց կողմից են սկսում աւելի անմտագոյն առարկութիւններ անել, առանց որ այդ առարկութիւնները կապ ունենային իրար հետ: Եւ անհ բարձրանում է ազմուկը. գոռում, գոչում են գիւղացու

առողջ ու գուարթ ձայներով և առանց միմեանց հասկանալու, սկսում նախատինք ու լուսանք թափել իրար վերայ: Այնուհետև ես ամեն խնդիր մոռացած՝ զբաղւում եմ քահանայի օգնութեամբ նրանց՝ հանգրստացնելով և ժողովը ցրելով:

Իրանից յետոյ, ասենք, գալիս էր ինձ մօտ հակառակ կուսակցութիւնը և իւր պատրաստականութիւնը յայտնում առաջարկութիւնս կատարելու: Բայց ես զգուշանում էի նրա պատրաստականութիւնից օգտուել, որովհետև զբանով պիտի գրգռէի միւս կուսակցութեան գայրոյթը և մշտական թշնամի դարձնէի նրան իմ բոլոր ձեռնարկութիւններին: Գիւղերում, մանաւանդ, պէտք է զգուշանալ այդպիսի բաժանումներ ստեղծելուց: Որովհետև, եթէ քաղաքներում իսկ՝ համեմատաբար աւելի հասկացող և զարգացած կուսակցութիւնը՝ կրքից կուրացած՝ չէ կարողանում հակառակորդ կուսակցութեան գործերի մէջ լաւ տեսնել և խոստովանել, ի՞նչ կարող է լինել գիւղերում, ուր ժողովուրդն աւելի տգէտ, աւելի նեղհայեաց, հետևապէս և աւելի եօսուէր է:

Այս պատճառով իսկ յաճախ իմ առաջարկած կարևոր գործը յետաձգելով՝ զբաղւում էի այս ու այն մարդու միմեանց հետ ունեցած թշնամութեան պատճառները հարցնելով ու քննելով և յետոյ ամեն հնար գործ դնում նրանց հաշտեցնելու, զժողովեան կրճիմը մէջ տեղից բառնալու, համոզուած լինելով որ դա ևս մի օգտաւէտ ծառայութիւն է և, մանաւանդ թէ, անհրաժեշտ: Որովհետև հակառակութիւնը մէջ տեղից

վերցուելուց յետոյ, գործի ճանապարհը հարթուում էր ինքն իրեն:

Բայց երբ մի քանի տարի անցան և գիւղացիներն իրենց աչքով տեսան իմ առաջարկած ու սկսած գործերի շոշափելի օգուտները, այնուհետև նրանք իմ հյուսիսատակները դարձան: Էլ կարիք չէր լինում նրանց հետ երկար խօսելու կամ համոզելու: Այժմ նրանք ինձ հաւատում էին կուրօրէն և վստահ էին իրենց յառաջագիմութեան նկատմամբ ունեցած սիրոյ վրայ: Այնուհետև ես ոչ թէ խնդրում, այլ պատուիրում էի և իմ պատուէրները կատարում էին ճշգրութեամբ:

Ով որ կոչուած է գիւղում գործելու, նա պէտք է իմանայ որ գործ ունի քմահաճ մի երեխայի հետ: Ինչպէս որ հոգատար դաստիարակը համբերութեամբ և առանց յուզուելու տանում է երախայի քմահաճութիւնները, չընդաժարուելով սակայն շարունակ նրան ուղղելու անհրաժեշտ միջոցներից և նրա ընդունակութեան չափով՝ նրան բարին ու ազնիւը ներշնչելու պարտաւորութիւնից, այդպէս էլ պիտի վարուի գիւղի մէջ գործողը: Նա չըպէտքէ նոյն իսկ ինքնասիրութիւն ունենայ կամ յուզուի ու վրդովուի, եթէ այդ ինքնասիրութիւնը կոպտութեամբ վիրաւորեն: Նա աւելի առաքեալի, քան հասարակ գործողի դեր պիտի կատարէ: Գիւղում հնձելու ոչինչ չըկայ. դա մի խորհրդացած, խոպանացած երկիր է. պէտք է հերկել, արօրագրել այն. պէտք է մշակել, պարարտացնել հողը և ապա թէ սերմանել: Այդքանն է միայն մեր ժամանակի մշակների գործը: Իսկ այդ գործի ազնիւ

պտղաբերութեան հունձը ուրիշ և աւելի բաղաւոր ժամանակի մշակները կանեն, օրհնելով անշուշտ այն անձուէր նախորդներին, որոնք հմտութեամբ մշակեցին երկիրը և «սերմանեցին զսերմն բարի...»:

— Որովհետև արգելքների մասին է խօսքը, շարունակեց բոյր-Աննան, ես կարծում եմ, դրանց թուում պէտք է դասել և այն արգելքները, որոնք երբեմն հասնում էին ինձ ոչ թէ արտաքուստ, այսինքն դիմացի մարդկանցից, այլ նոյն իսկ ինձանից: Կարող էք այդպիսի արգելքներ երևակայել:

— Չըզիտեմ. չեմ հասկանում ձեր խօսքը, պատասխանեցի ես:

— Այն, այդպիսի արգելքներ գոյութիւն ունէին և կարողանում էին երբեմն խանգարել ինձ, շարունակեց նա: Մի՞թէ կարծում էք թէ հնարաւոր է ապրել աշխարհում մօտ քսան տարի, սովորել կեանքի հրաբոյրներին, ի վերջոյ՝ ջերմագին սիրել — և այս ամենը միանգամից մոռանալ...: Ով որ չէ փորձել, նա գուցէ հասարակ աչքով նայէ այդ բոլորի վրայ: Բայց ես ասում եմ որ դրանք մարդկային կեանքի ծանրագոյն փորձերն են և դրանց բովից անվտանգ անցնելու համար՝ պէտք է ունենալ աւելի ոյժ, աւելի քաջութիւն, քան որքան այս զէպքում ենթադրելի է:

Պատահել է շատ անգամ, մանաւանդ, արտաքին արգելքների հանդիպածս ժամանակ, որ իմ ուխտը լեռան չափ ծանրացել է սրտիս վրայ: Այդպիսի ժամանակները փափագելով փափագել եմ գտնուել կրկին իմ նախկին ընկերուհիների շրջանում, այն անհող,

միշտ ուրախ և միշտ ծիծաղող հասարակութեան մէջ, ուր տխրութիւնը չէր կնճռում ճակատս, ուր ամենքը սիրում, զբաղեցնում էին ինձ, ուր կեանքը հրապոյ-
րով լի՝ ծիծաղում էր ինձ...:

Պատահել է որ ես անձկութեամբ ցանկացել եմ տեսնել իմ ծնողներին, մի անգամ էլ լսել նրանց քաղցր ձայնը, նրանց սիրապատար, անուշ խօսքերը, վայելել նրանց շերտ գրկախառնութիւնը, սիրաշունչ համբոյրը...: Բայց նրանք չըկային, այնպէս չէ: Գոնէ միանգամ շիրիմները տեսնէի և իմ արտասուքով թրջէի նրանց...: Պատահել է որ ես հիւանդացել եմ. ինձ սիրով այցելել, ինձ համար հոգացել են գիւղացի կա-
նայք, նոյնպէս և իմ սիրելի աշակերտուհիները: Բայց դրանց բոլորի մէջ հոգիս անձկութեամբ պտրել է իմ հարազատ մօրը: Ես կամեցել եմ լսել նրա ձայնը, զգալ նրա ձեռքերի շօշափը իմ այրուող ճակատի վրայ...: Յիշել եմ այն երջանիկ ժամանակները, երբ ես հիւանդանում էի և նա անհանդիստ, սրտադող և շունչը բռնած, պտտում էր անկողնիս շուրջը, սիրով ու խանդով լի աչքերը դարձնում վրաս, ճակատս քնքշութեամբ շփում, ձեռքերս ավերի մէջ ճմլում և անգամաբար «ինչպէ՞ս ես այժմ, իմ անուշիկ Աննա...», հարցնում ինձ այնպիսի մի քնքոյշ, խանդակաթ ձայնով՝ որ այժմ էլ յիշելուց սիրտս թուլանում է...:

Իսկ ի՞նչ ասեմ ես նկատմամբ Գարեգնի, որ իմ կեանքի մէջ այս դժուարատար յեղափոխութիւնը մտքրեց: Մի՞թէ կարող էի նրան մոռանալ, նրան, որ իմ բոլոր մտքերի, խորհուրդների և գործերի հեղինակն

էր. որին այնքան ուժգին, այնքան շերտութեամբ սի-
րեցի. բայց որն այժմ հազարաւոր մղոն հեռի էր ին-
ձանից: Երբեմն ժամերով նստած մտածում էի նրա համար: Նախկին կրակը բուռն կերպով արծարծւում էր իմ մէջ, փափագում էի տեսնել նրան միանգամ, լսել նրան միանգամ... յիշում էի մեր վերջին տեսակցու-
թիւնը և նրա վերջին, հրաժեշտի խօսքերը, «գնա սի-
րեցեալ քոյրիկ, ես օրհնում եմ քեզ, օրհնում եմ քո ճանապարհը, գնա, թող Աստուած լինի քեզ հետ», ասաց նա: Ես եկայ և մարմնացրի նրա ցանկութիւնը: Բայց ուր է նա ինքը: Ցանկանում էի որ նա տեսնէր թէ ի՞նչպէս հաւատարիմ մնացի իմ ուխտին, թէ ի՞նչ պէս իւր սիրոյ պատճառով՝ կնոջ համար ծանրագոյն խաչը ես բարձի... բայց նա չըկար, չէր կարող տես-
նել. գոնէ, իմանայի թէ նա մտածում է իմ մասին. յիշում է նա ինձ, թէ՛ մոռացել է իսպառ... Եւ այս վերջին միտքը ասնջում էր հոգիս:

Այսպէս, ուրեմն, թէ այս մտածութիւնները և թէ նորոգուող զգացումները նոյնպէս արգելքներ էին իմ ձեռնարկած գործին և մինչև իսկ, երբեմն, գորեղ արգելքներ: Յաճախ իմ հոգին թուլանում, ընկճւում էր դրանց ազդեցութիւնից, իմ աշխոյժը նուազում և գործելու եռանդը հանգչում էր, որովհետև աշխարհա-
յին կեանքը դեռ ամբողջապէս չէր մեռել իմ մէջ. նա օրհասական կոիւ էր մղում այն բարձր ու սրբա-
զան կեանքի դէմ, որ պատրաստւում էր շուտով իմ գոյութեանը տիրել:

Սակայն այս հոգեկան կոիւներն իմ մէջ կատար-

ւում էին, ի հարկէ, իմ նուիրման առաջին տարիներում, երբ մի կողմից էլ, ինչպէս ասացի արտաքին նեղութիւններն էին պաշարում ինձ: Ես սովորութիւն ունէի այգալիսի ճգնաժամերում կարգալ իմ յիշատակարանը և գլխաւորապէս նրա այն էջերը, ուր իմ սիրելի ուսուցչի խօսքերն էին գրուած: Նրանք ինձ մխիթարում ու քաջալերում էին: Մի անգամ այգալիսի մի յուզուած ժամանակ՝ ես պատահաբար նրա այն խօսքերին, որ ասել էր հօրս՝ իմ ձեռքը մերժելու ժամին. — «Կայ մի ուրիշ մարմին, որ աւելի սիրելի և աւելի պաշտելի է, քան մեր սեփականը. — այդ մարմինը, Հայրենիքն է: Ես ուխտել եմ իմ անձը նրան նուիրել, նրա սիրուց գատ աշխարհում ուրիշ սէր չըճանաչել, նրա ցաւերից գատ՝ ուրիշ ցաւերով չըվշտանալ, նրա բաղաւորութիւնից գատ՝ ուրիշ բաղաւորութիւն չըխնդրել...»: Եւ այս խօսքերը մեծ մեծ տառերով տախտակի վրայ օրինակելով՝ կախեցի իմ սենեակի ճակատին: Այնուհետև ամեն օր կարգում էի նրանց և հոգեպէս կազդուրուած՝ իմ գործը շարունակում:

Բայց յետոյ, ի հարկէ, տարիները հոլովուելով՝ վաղեմի զգացումներն էլ հետզհետէ թուլացան. մանաւանդ որ ես շարունակ ճնշում էի նրանց: Իմ սկսած գործը գնալով մեծացաւ, բարգաւաճեց և իմ բոլոր հոգսերն ու մտածմունքը գրաւեց: Այնուհետև շարունակ ես զբաղուած էի այդ գործերով և իմ ոյժը մինչև անգամ չէր բաւում բոլորին: Ես ստիպուած էի շատ բան թողնելու մեր քահանային, նախապէս

նրան գործելու եղանակը սովորեցնելով: Եւ Տէր-հայրը, պէտք է խոստովանել, ամենահաւատարիմ հետևողը դարձաւ իմ օրինակին:

Իսկ այժմ, երբ ես դառնում, նայում եմ իմ այսքանամեայ գործունէութեան վրայ, տեսնում եմ թէ՛ ինչպէս մի տկար կնոջ կամքը կարողացել է այսքան գործ կատարել, հրճուած, մխիթարուած եմ և շարունակ օրհնում իմ սիրելի և իմաստուն ուսուցչին, որ իւր հոգեշունչ խօսքերով վառեց, բորբոքեց իմ սիրալ և ուխտել տուաւ ինձ այս սրբազան ուխտը: «Հեռացէք աշխարհից, բայց մի մտնէք կուսանոց, ասաց նա ինձ. գնացէք հեռու, հեռու դէպի կորած հայ գիւղերը, դէպի այն ժողովուրդը, որին մոռացել են մեր գործողները, որի մէջ օր ըստ օր է նուազում, հանդուգում է կենդանութեան ոյժը. գնացէք այնտեղ, ուր տգիտութիւնը բռնացած՝ քանդում, աւերում է՝ ինչ որ պատմական ժամանակներից մնացել է գեղեցիկ և յարգելի: Մտէք այդ ժողովուրդի մէջ, նուիրեցէք ձեզ նրա բարօրութեան և նրա մանկանց կրթութեան գործին: Սովորեցրէք նրան՝ ճանաչել իւր անցեալը, բարւոքել ներկան և գործել ապագայի համար: Սուտեցէք նրան յարգել իրեն, սիրել ընկերին և պաշտպանել նրան, երբ հարկը պահանջէ...»: Ես լսեցի իմ ուսուցչին և հեռացայ աշխարհից. — անս իմ բոլոր պատմութիւնը...:

Սնկտեմբեր 15 X. քաղաք:

Երեք ամիս շարունակ մնացի ն. գիւղում և անցուցի այդտեղ ամենաքաղցը և յիշատակի արժանի օրեր: Բացի մենաւոր և որսորդական զբօսանքներս, որոնք հարուստ բնութեան ծոցում լինելուն համար մեծ հաճոյք էին պատճառում ինձ, ես բաղդաւոր էի նաև նրանով, որ շարունակ վայելում էի քոյր Աննայի սիրելի և անգուգական ընկերակցութիւնը: Թէպէտ ես արդէն դադարել էի նրա գեղեցիկ ստեղծուածներով հիանալուց, ըստ որում նրանց պատահում էի գրեթէ ամեն քայլափոխում, այսուամենայնիւ, դեռ նրա զրոյցներն ու կարծիքները լսելու ծարաւ էի: Այս պատճառով կը ցանկայի երկար մնալ այդ գիւղում և երկար վայելել ազնիւ կուսի ընկերակցութիւնը: Իրժբաղդաբար օգոստոսը վերջանում էր և ես պէտք է վերագառնայի քաղաք, որովհետև անձաական գործերս չէին ներում աւելի ուշանալ: Գրեթէ այս միակ պատճառով իմ հիւրընկալ Տէր-Յովսէփը, ցանկանալով արտաքոյ կարգի մի պատիւ անել ինձ, որոշեց իւր որդու՝ Յակոբի հարսանիքը իմ ներկայութեամբ կատարել:

— Գիւղացիներս, անհատարակ, ձմեռն ենք ազատ, ասաց նա ինձ մի օր և մեր հարսանիքները, գլխաւորապէս, այդ ժամանակն ենք անում: Բայց որովհետև ցանկանում եմ որ դուք իմ որդու հարսանիքը տեսնէք, այդ պատճառով որոշեցի այս ամսում կատարել:

Ես ի հարկէ շնորհակալութիւն արի Տէր հօրը՝ ինձ արած պատուի համար, որից չէի կարող հրաժարուել, եթէ մինչև իսկ կամենայի, որովհետև դրանով վիրաւորած կը լինէի քահայային: Այդ հարսանիքը տեղի ունեցաւ: Յակովբի հիւրերի հետ, որոնք բաղկացած էին գիւղի երիտասարդներից, ես էլ գնացի մօտակայ շէնը, ուսկից և բերինք նրա նորատի և գեղեցիկ հարմացուն: Գեղեցիկ եմ ասում նրա համար, որ ճանապարհին յաջողուեց ինձ մի վայրկեան տեսնել նրա երեսը, որ ծածկուած էր թանձր, կարմիր քողով: Հարսանիքը, հակառակ իմ սպասածին, կատարուեց շատ պարզ և անպաճոյճ ձևով: Ուրիշ գիւղերում տեսել էի որ նա տեսնու է երեք կամ չորս օր և այդ բոլոր ժամանակ ամբողջ գիւղն ուրախութեան և այդ բոլոր ժամանակ ամբողջ գիւղն ուրախութեան և գուարճութեան սէջ է լինում: Կովեր, եզներ են մորթում, գինին ու օղին ջրի պէս է հոսում. իսկ հրաւիրեալները հարսանիքատան ներսն ու դուրսը լցուած՝ ուտում, խմում են. մանաւանդ երբ հարսանիքը գիւղի հարստին է պատկանում: Բայց այստեղ տէր-հայրը միայն մի օր ունէր հացկերոյթ և այն՝ շատ պարզ պատրաստութեամբ:

Իմ հարցին թէ՛ ինչո՞ւ այս տեղի գիւղացիք ուրախանալ չը գիտեն, քոյր Աննան պատասխանեց.

— Գիւղացիք ամեն տեղ էլ նոյնն են: Մանաւանդ սիւնեցիք աւելի շքեղ սօներ կատարել գիտեն: Իմ նոր եկած սարիները ես այստեղ եօթ օր շարունակ հարսանիք եմ տեսել և սարսափել, որովհետև այդ ուրախութեան մէջ՝ գիւղացու տան իսկական աւերումն եմ

նկատել. մանաւանդ, երբ իմացել եմ որ դրանցից շատերը պարտքերով են այդ ուրախութիւնը կատարում: Իւր չնչին փառասիրութիւնը գոհացնելու համար, գիւղացին քաղաքում պարտք է վերցնում սոկոսով և երկու, երեք օրուայ մէջ փոխ առածն սպառելով՝ յաւիտեան ստրուկ մնում վաշխառուի ձեռքին: Այնուհետև նրա տունը, տեղը, անասունը, այգին վաշխառուի ստացուածքներն են: Պարտապան գիւղացին դողալով է իւր պարտատիրոջ երեսը ելնում: Նրա տարած ընծաները՝ կաթ, ձու, մածուն կարող կամ հաւ, որ նա շարունակ իւր երեխաների բերանից է խլում, վաշխառուն ընդունում է իբրև իրեն հասանելի եկամուտ, սակայն առանց գիւղացու պարտքից մի սև փող իջեցնելու: Եւ ինչո՞ւ համար այս բոլորը—միայն մի քանի օր գուարձանալու և հարեաններին գուարձացնելու համար:

«Սակայն շատ տարիներ են, ինչ այս գիւղում այդ շուայութիւնները վերացել են: Գիւղացին, առհասարակ, ինքն էլ ուրախ է լինում որ այդ ծանրութեան տակ չըմանէ, միայն թէ ընկեր-հարեանից է ամաչում: Պէտք է մինը լինի, որ ամենքին հաւասարապէս յորդորէ այդ կորստաբեր ճանապարհից հեռանալ: Եւ նրանք կը լսեն նրան: Ահա այդ դերն էլ ես յանձն առի, ժամանակին խօսեցի, բացաղբեցի, նոյն իսկ քահանային քարոզել տուի եկեղեցում, որից յետոյ գիւղացիներն իրենք արդէն եկան և մեր ներկայութեամբ համախօսական ստորագրելով՝ որոշեցին վերացնել իրենց միջից ամեն աւելորդ ծախք, որը սովորութիւն

ունէին նրանք անելու թէ ուրախութեան և թէ արբամութեան ժամանակ: Հակառակ վարուողը՝ տուգանք պիտի վճարէր գիւղական գանձարանին: Այդպիսի տուգանք ի հարկէ դեռ մինչև այսօր չէ մտել մեր գանձարանը, որ ապացուցանում է թէ՛ գիւղացին ինքը շատ գոհ է այդ որոշումից: Այստեղից օրինակ են վերցրել և հարեան գիւղերը. յոյս ունիմ թէ՛ ուրիշ հեռու տեղեր էլ կը հետևեն այս բարի սովորութեան:

Կարո՞ղ էի միթէ չըհամակերպել քոյր-Աննայի այս մտքերին, որոնք, որքան էլ պարզ և հասարակ երևային, այսուամենայնիւ, ամփոփում էին իրենց մէջ գիւղական ընտանիքի հաստատութեան պայմանները:

Յակոբի հարսանիքից մի քանի օր յետոյ, քոյր Աննան յայտնեց ինձ ուրիշ նորութիւն, այն է թէ՛ շուտով պիտի կատարել սոյ իւր ձեռնասուն վարժուհու և վարժապետի պսակը:

—Եթէ տէր-հայրը իւր որդու հարսանիքով կամեցաւ պատուել ձեզ, ես էլ իմ որդեգիրների հարսանիքով կը պատուեմ, ասաց քոյր Աննան ժպտալով: Կը ցանկանայի նաև որ դուք լինէիք նրանց խաչեղբայրը. այդ մեծ ուրախութիւն կը պատճառէր իմ որդեգիրներին. բայց գիւղական սրբագործուած սովորութեան դէմ չըպէտք է մեղանչել: Նրանց ծնողներն արդէն ունին իրենց հին կնքահայրը, որի ընտանիքի անդամները, նոյն իսկ որդուց որդի, պիտի կատարեն այդ պաշտօնը փոխադարձաբար: Մենք ուրեմն չենք խառնուիլ նրանց իրաւունքներին: Դուք կը լինիք հարսեղբայր:

բեր Չ-ին, կիւրակէ առաւօտ գնացի նրան իմ հրա-
ժեշտի ողջոյնը տալու:

— Ես հեռանում եմ այս տեղից, բայց տանում
եմ ինձ հետ ամենաթանկագին յիշատակներ՝ ձեր բա-
րեկամութեան ու գործերի, ասացի նրան: Եթէ բազմ
յաջողէ՝ ես կրկին կը վերադառնամ այստեղ՝ վա-
յելելու համար բնութեան և ձեր ձեռքով այս գիւղում
պատրաստուած բարիքները, որոնք մեծագնի էին ինձ,
մանաւանդ, ձեր անգուգական բարեկամութեամբ հա-
մեմուած լինելուն համար: Իսկ եթէ անկարող լինիմ
այդ փափագին հասնել, այն ժամանակ կը մխիթարուիմ
գէթ այն քաղցր մտածութեամբ թէ՛ միանգամ, գոնէ,
վայելեցի ես այդ բոլորը:

— Բարի ճանապարհ, ասաց քոյր Աննան, աշխա-
տեցէք ձեր խոստումը կատարել, իսկ եթէ չըկարո-
ղանաք, գոնէ մի՛ մոռանաք մեզ: Աշխատեցէք երբեմն
երբեմն նամակ գրել ինձ և տեղեկութիւն տալ այն
ամենի մասին, ինչ որ գիտէք թէ՛ պիտի հետաքրքրէ
ինձ և ինչ որ լրագրում անկարող եմ կարգալ: Ի վեր-
ջոյ, կատարեցէք իմ մի խնդիրը. — ո՛չ մի տեղ և ո՛չ
ոքի մօտ մի՛ խօսէք իմ մասին և մի՛ յիշէք իմ գոր-
ծերից ոչինչ:

— Ինչո՞ւ, զարմացմամբ հարցրի ես, չէ՞ որ բարի
գործերը արժանի են ամեն տեղ գովութեամբ հռչա-
կուելու և դա աւելի օգուտ, քան չարիք կարող է
բերել գործին:

— Ոչ, ես չեմ կամենում որ իմ գոյութիւնը յայտ-
նի լինի աշխարհին. անյայտութեան մէջ ապրել, ան-

յայտութեան մէջ մեռնել, այդ է իմ ցանկութիւնը:
Եւ դրա համար ես ունիմ յարգելի պատճառներ:

— Արդեօք չէիք կարող խելամուտ անել ինձ այդ
պատճառներից մէկին, հարցրի ես ժպտալով:

— Մի բան միայն կարող եմ ասել. Ով որ գոր-
ծում է և դրա համար էլ փող փչել տալիս հրապարա-
կում, նա հրաւիրում է մարդկանց՝ գալ և քանդել իւր
գործը: Թողէք որ ես ցորենի մի հատ լինիմ՝ այս
երկրի մէջ մեռած... Իսկ երբ այդ ցորէնը կը-
վերընծիւղէ, երբ նրա հասկերը կըլցուին և մարդիկ
պտուղը կըվայելեն, այն ժամանակ թող յիշեն նաև
մեռած ցորենը, որ կեանք տուաւ հասկերին և որին
այլ ևս յափշտակիչ թուշունները չեն կարող փորել և
հողից հանել...: Իսկ առ այժմ կամենում եմ անձանօթ
մնալ աշխարհին, քանի դեռ նրա օգտի համար եմ
վաստակում: Այո, չեմ կամենում փառաւորուիլ մարդ-
կանցից՝ մի բարի և օգտաւէտ գործ քանդելու գնով:
Ահա, ինչ որ կարող եմ ասել ձեզ...:

«Որքան սէր դէպի հասարակաց բարին և որքան
համեստութիւն, մտածեցի ես, — եթէ այս հոգևով վա-
ռուած մի քանի տասնեակ գործիչներ ունենայինք,
լեռներ կը շարժէինք, գետերի ընթացքը կը կասեց-
նէինք... բայց ո՞ւր են այդ գործիչները»:

Ես խոստացայ քոյր Աննային ճշդութեամբ կա-
տարել իւր պատուէրը և շերմութեամբ համբուրելով
նրա սուրբ ձեռքը՝ հեռացայ:

Տէր հայրը, իւր որդիները և Պետրոս վարժա-
պետը, որոնք ձի հեծած սպասում էին ինձ գիւղի

ծայրում, ճանապարհ ձգեցին ինձ բաւական հեռու:
Այնուհետև իջայ դէպի Ուզուն-Պարայի կրճերը,
իմ նախկին առաջնորդ Պետօի հետ: Այս անգամ մեր
ճանապարհորդութիւնն անցաւ առանց պատահարների:
Երկու օրից յետոյ ես արդէն քաղաքումն էի:

1887 Յունիս 5 Թիֆլիս.

Հայրենի քաղաքիցս հեռանալուց յետոյ, այսօր
առաջին անգամն եմ ձեռք առնում իմ յիշատակա-
րանը, որ ծածկուած մնացել էր իմ պահարանի մի
անկիւնում: Ես նորից կարգացի այն և անցեալի քաղցր
յիշատակները յուզեցին հոգիս: Այդ յուզմունքը, սա-
կայն, ուրախութիւնն չէր, այլ անդարձ կորուստի կրս-
կիծ և հառաչանք...

Ուզիդ երեք տարի է անցել այն երջանիկ օրից,
երբ ես Ն. գիւղում քոյր Աննային ծանօթացայ. սա-
կայն այդքան ժամանակի ընթացքում ես դեռ իմ յի-
շատակարանում նրա անձին վերաբերեալ պատմութիւնը
չաւարտեցի: Տխուր ժամանակը և տխրագոյն դէպքե-
րը վազուց իմ գրիչը դատապարտել էին անգործու-
թեան և բուլթիւնն ինձ համար դարձել էր հաճելի
հիւանդութիւն: — Բայց հիւանդութիւնն՝ ինչպիսին
էլ որ լինի, անբնական կացութիւն է և վասա-
կար, մանաւանդ, հոգւոյ առողջութեան. հետևապէս,
պէտք է ազատուել նրանից, եթէ կամենում ենք դեռ
ապրել, մտածեցի ես և նորէն ձեռք առի գրիչս: Ինձ
մոտ էր աւերացնել իմ յիշատակարանում դարձեալ

մի քանի երես և դրանով իմ «խորհրդաւոր միանձ-
նուհու» պատմութիւնը կը վերջանար: Այդ էլ ան-
անում եմ այժմ, մտածելով թէ՛ իրաւունք չունիմ
անյայտութեան մէջ թողնելու յիշատակն այն աննման
կուսի, որին իւր առանձնութեան մէջ ճանաչեցի, որի
արդիւնաւոր գործունէութիւնը տեսայ, որի անգու-
գական առաքինութեամբ հիացայ: Եթէ հարիւր ըն-
թերցողից գէթ մէկը ոգևորուի իմ «միանձնուհու»
ուխտով, այդ ոգևորութիւնն իսկ ապարդիւն չի ան-
ցնիլ, նա բարիք կարտադրէ, իսկ բարւոյն ամեն
տեղ կը դիմաւորեն գրկաբաց:

Ն. գիւղից վերադառնալով՝ ես աշունն ու ձմեռը
անցուցի մեր քաղաքում, իսկ 85 թուականի սկզբում
արդէն Թիֆլիսումն էի անձնական գործով: Մինչև
այստեղ գալս, մի քանի նամակներ ունէի գրած քոյր
Աննային և պատասխաններն ստացած. իսկ այստեղ
հասնելուց յետոյ, աւելի ևս յաճախ սկսայ գրել, որով-
հետև 85 թուականի առաջին քառորդը, մեզ համար
հարուստ ու հետաքրքրական էր ընդհանրական մի
խնդրի, այն է կաթոլիկոսական ընտրութեան վերա-
բերեալ տեղեկութիւններով: Եւ որովհետև հայ խմբա-
գրութիւններից մէկին մօտ էի ես, ուստի կարողա-
նում էի իմ բարեկամուհուն, գրեթէ ամեն շաբաթ,
նորանոր տեղեկութիւններ հաղորդել՝ նկատմամբ այն
անձի և նրա հետ կապուած խնդրի, որոնք այնքան
մօտ ու սիրելի էին իւր սրտին և որոնց մասին մենք
գիւղում խօսում էինք շարունակ: Իմ տուած տեղե-
կութիւնները, նայելով ժամանակի կուսակցական ոգուն

և հանգամանքների փոփոխութեան՝ լինում էին երբեմն ուրախ և երբեմն տխուր: Սակայն մտադրուած երջանկութեան մի յոյս թեւապարում էր մեր շուրջը: Ամենքս սպասում էինք թէ՛ որոշեալ օրն ու ժամին պիտի աւետենք միմեանց «արժանիքի յաղթանակն» ընտրութեամբ մի անձի, որի մասին գովութեամբ էին խօսում հայոց թերթերը և որի վրայ մեծ յոյս ու վստահութիւն ունէին հայրենասէրները: Սպասում էին տեսնել նրան բարձրացած վեհապետական այն գահին. գէպի որն ամեն հայ յառում էր իւր աչքը սիրով ու հաւատով, ջերմեռանդ ակնածութեամբ և որն իւր մէջ ամփոփում էր հազար վեց հարիւր տարուայ հայութեան հոգևոր կեանքի իղձերն ու մխիթարութիւնները: Այդ սրբազան պաշտօնին արժանի համարուած անձը՝ քոյր Աննայի անդուգական ուսուցիչը, հայրենավառ Գարեգինն էր, որը վաղուց արդէն եպիսկոպոսական աստիճանին հասած՝ այժմ արդէն նշանաւոր մի թեմի սիրուած ու մեծարուած առաջնորդն էր:

Եւ անա, արդարև, նոյն տարուայ ապրիլին ես կարողացայ մի աւետաւոր հեռագիր հասցնել քոյր Աննային, որին մի շաբաթից յետոյ, իբր պատասխան հեռեալ նամակն ստացայ:

«Ազնիւ բարեկամ.

«Ձեր հեռագիրը լցրեց իմ սիրտը անսահման բերկերութեամբ: Չրդիտեմ, ի՞նչպէս արտայայտեմ իմ շնորհակալութիւնը Ձեզ՝ որ այդքան սիրելաբար փութացել էք ինձ ուրախացնելու: Չընայելով Ձեր հաւաս-

«ախցումներին, ես, այնուամենայնիւ, յոյս չէի տա-
«ծում թէ՛ մեր ժամանակակիցները կը կարողանան
«այգպէս իմաստնաբար գնահատել արժանիքը: Օրհ-
«նեալ լինին նրանք, որոնք սուրբ գործի համար միա-
«ցան ի մի սիրտ և «գործեցին զբարին»: Եթէ ճըշ-
«մարտութիւնը յաղթանակում է, ուրեմն նրա զի-
«նուորները կարող են պարծենալ և քաջալերուիլ: Եւ
«սա կրկնակի բարիք է մեզ համար: Այսօրուանից
«արդէն գործելու նոր եռանդ է վառում իմ մէջ:
«Ես, որ մինչև այսօր «ի փոքուն եղէ հաւատարիմ»,
«այսուհետև պէտք է աշխատութիւնս կրկնապատկեմ.
«ըստ որում կայ մէկը, որ կարող է մեզ «ի վերայ
«բազմաց կացուցանել»:

«Ողջ եղէք, ազնիւ բարեկամ և ընդունեցէք իմ
«սրտագին շնորհակալութեան և անկեղծ յարգանաց
«հաւաստիքը, որով պիտի մնամ միշտ

«Ձեր խոնարհ աղախին՝ Աննա Ե . . . եան»:

Այդ օրից յետոյ անցան երկու յուսալիւր ամիսներ: Ես կրկին նամակներ գրեցի քոյր Աննային, միշտ ուրախ նորութիւններ հաղորդելով նրան և նոյնպիսի պատասխաններ էլ ստացայ: Բայց որովհետև յուլիս և օգոստոս ամիսներում Թիֆլիսից ելած՝ ճանապարհորդում էի, ուստի քոյր Աննային նոր նամակ գրելու առիթ չունեցայ: Երբ ամրան վերջը վերադարձայ քաղաք՝ այստեղ իմացայ որ ամեն բան արդէն փոխուել էր և մեր յոյսերն ու իղձերը իսպառ ոչնչացել...: Այդ նորութիւնը շատ ծանր ազդեցութիւն արաւ վերաս: Բոլոր աօրեայ խնդիրների հետ միասին՝ ես

մոռացայ նաև քոյր Աննային: Բայց նա ինքը ինձ
չէր մոռացել: Անգէտ լինելով իմ բացակայութեան,
նա կարծել էր թէ, ես նամակ չեմ գրում իրեն այն
պատճառով, որ վաղուց տեղեակ լինելով տխուր նո-
րութեանը, սիրտ չեմ անում այդ բանը իրեն յայտ-
նելու: Ուստի ինքը շտապել էր հետևեալ համառօտ
նամակն ինձ գրկելու:

«Ազնիւ բարեկամ.

«Այստեղ հասաւ սոյն թուականի օգոստոս 22-ին
լոյս տեսած «Մեղուն»: Ձեր լռութեան պատճառը
«հասկացայ. իրաւունք ունիք. լռեցէք...»

«Ձեր վշտահար քոյր Աննա»:

Եւ ես արդարև լռեցի: Ի՞նչ գրէի այնուհետև
նրան, ի՞նչ նիւթի վրայ խօսէի. չէ՞ որ մեր մտերմու-
թեան շունչ ու հոգի տուող խնդիրը մեռել էր և նրան
այլ ևս յարութիւն տալու յոյս չըկար...:

Անցան մի քանի ամիսներ: Ես ոչ մի նամակ չը
գրեցի իմ բարեկամուհուն. ոչ էլ նրանից ստացայ:
Սակայն մի օր ինքս ինձ մտածեցի. — «Սա արդէն ան-
քաղաքավարութիւն է: Գոնէ մի քանի տող գրութեամբ
նրա առողջութիւնից հարցնեմ: Խեղճ կինը առանց այն
էլ ճնշուած է վշտերի տակ, հետևապէս և կարօտ վըշ-
տակցութեան...»:

Եւ իսկոյն էլ նստելով՝ ոչ թէ մի քանի տող, այլ
շատ երկար մի նամակ գրեցի քոյր Աննային՝ աշխա-
տելով կարելոյն չափ սփոփել նրա սիրտը կամ գէթ
ապագայի յուսով պարարել:

Որքան մեծ եղաւ իմ զարմանքն ու ապշութիւ-

նը, երբ երկու շաբաթից յետոյ՝ փակած յետ ստացայ
իմ նամակը, Պետրոս վարժապետի հետևեալ գրու-
թեան հետ.

«Յարգելի բարեկամ.

«Վշտահար սրտով վերադարձնում եմ Ձեզ այն
«նամակը, որ ուղղել էիք իմ սիրեցեալ ուսուցչու-
«հուն: Նա այլ ևս չըկայ... Մի ամիս առաջ փոխուե-
«ցաւ երկինք, թողնելով մեզ անմխիթար սուգի մէջ...:
«Ներեցէք որ ինձ է վիճակուել այս տխուր նորու-
թիւնը Ձեզ հաղորդելու:

«Հաճեցէք ընդունել խորին յարգանքը

«Ձեր նուաստ ծառայ Պետրոս Կովիկեանի»:

Ահա մի անսպաս հարուած էլ: Մի՞թէ քոյր Աննան
մեռաւ. մի՞թէ արդարև այն մեծ, այն հոյակապ կինը
այլ ևս չէ ապրում աշխարհում...: Ես չէի կարողա-
նում հաւատալ. չէի կամենում որ դա ճշմարտութիւն
լինէր... Բայց աւանդ, վարժապետի գուժաբեր նամա-
կը կատակի համար չէր գրուած:

Սակայն ի՞նչն արդեօք սպանեց նրան. մի դաժան
հիւանդութիւն, թէ՞ իւր յայտնի վիշտը. չըզիտէի,
վարժապետն այդ մասին ոչինչ չէր յիշել:

Այսպէս թէ այնպէս, այդ գոյժն իմ սրտին կըս-
կիծ պատճառեց: Քոյր Աննայի մեռնելով՝ մենք կոր-
ցնում էինք մինն այն գերազանց ոյժերից, որոնք
ծնունդ էին առել վաթսուներկան թուականներին և
որոնց սակայն արժանաւոր հետևողներ չըգտնուե-
ցան մինչև այսօր: Սա մի անդառնալի կորուստ էր...:

86 Թուականի ամառը ես վերադաձայ իմ հայրե-

նի քաղաքը և ամենից առաջ սրբազան պարտք համարեցի գնալ քոյր Աննայի գերեզմանին այցելութիւն:

Գրեթէ միևնոյն ամսուայ մէջ ես անցայ իմ ծանօթ ճանապարհներով. տեսայ նոյն ժամանակուայ հարուստ դաշտերը, գեղեցիկ ձորերը, կանաչ բլուրները, գեղազարդ հովիտները, նոյն կուսական անտառները, նոյն անաւոր լեռներն ու կրճերը: Բոլորն էլ նոյնչափ գեղեցիկ, նոյնչափ հրաշալի՝ որչափ և այն ժամանակ: Սակայն այդ անփոփոխ գեղեցկութիւնների մէջ ես, կարծես, մի տխրութիւն էի նշմարում. բնութիւնն այլ ևս չէր ժպտում, արևի շողերը չէին ծիծաղում, գեփիւռի շունչը էլ չէր գուրգուրում... ես չէի ականջում ոչ սարեակի երգին, ոչ ջրվէժի շառաչին, սրտիս հետ խօսում էր միայն թփերի մէջ սահող առուակի մրմունջը, որ կարծես իւր տխուր, մեղմածիկ շշուշով՝ անյայտութեան մէջ մեռած հերոսուհուն էր ողբում...:

Երեկոյեան դէմ էր, երբ Ն. գիւղը հասայ: Իմ ծանօթներից, առաջին անգամ, Տէր-Յովսէփին պատահեցի: Նա դիմեց դէպի ինձ. մենք գրկուելով համբուրուեցանք, իբրև հայր և որդի: Որքան էր նա փոխուել երկու տարուայ մէջ: Նրա մազերն այժմ աւելի սպիտակ, իսկ դէմքը՝ գունատ էր:

— Էլ ուր ես եկել մեզ մօտ, որդի, սրաաշարժ ձայնով խօսեց քահանան. մեր գիւղը որբացաւ, անշքացաւ, նրա զարդն ու գեղեցկութիւնը կորաւ. քոյր Աննան էլ չըկայ, որին ես եկել տեսնելու...: Եւ այս խօսքերի հետ նրա աչքերը լցուեցան: Ես ևս յուզուե-

ցայ և արտասուեցի: Եւ ի՞նչպէս չարտասուէի: Ես մտել էի այն գիւղը, որի բնութիւնն ու մարդիկը սիրելի էին դարձել ինձ քոյր Աննայի շնորհիւ. իսկ նա այժմ չըկար. գիւղը կիսով չափ դատարկ, անշքացած և տխրամած էր երևում ինձ:

Հասանք տուն: Մեզ դիմաւորեցին քահանայի որդիքը, կինը և հարսները, վերջը եկաւ և Պետրոս վարժապետը իւր ամուսնու — Մանիշակի հետ: Իրանք բոլորն էլ տխուր, բոլորն էլ կարծես ընձուած էին նոյն թխածութեան ներքոյ: Ամենքին էլ ողջունեցի ինչպէս իմ սիրելի բարեկամներին, յետոյ սկսանք խօսել քոյր Աննայի մահուան վրայ: Խնդրեցի տէր-հօրը պատմել թէ ի՞նչ հիւանդութեամբ արգեօք մեռաւ խեղճ կինը և մի՞թէ չէին կարող բժշկական օգնութիւն հասցնել:

— Երևի Աստուծոց այդպէս էր վիճակուած, որդի, սկսաւ խօսել տէր-հայրը. նրա հիւանդութեան պատճառը ոչ ոք չիմացաւ: Դեռ անցեալ տարի այս ժամանակ ինչպէս նա առողջ էր. ուրախ, գուարթ և և յանկարծ օգոստոսի վերջերում փոխուեցաւ: Երկու ամիս շարունակ անկողնին ծառայեց: Շատ անգամ կամեցայ գնալ քաղաք բժիշկ հրաւիրելու, բայց ամեն անգամ էլ նա արգելեց: — Ինչո՞ւ համար ես բերում բժիշկը, տէր-հայր, ասում էր նա ինձ. կեանքն արդէն ինձ համար դարձել է ծանր բեռ, ո՞վ որ այն վերցնէ, շնորհապարտ կը լինեմ նրան...: Ինչո՞ւ համար էր այդպէս ասում, չէի կարողանում հասկանալ. որովհետև այդպիսի յուսահատական խօսքեր ես նրանից առաջ ները բնաւ չէի լսել: Եւ սակայն պատճառը չէի հա-

մարձակուում հարցնել: Այսպէս նա հալուեց, մաշուեց և ճրագի պէս հանգաւ:

Պետրոս վարժապետն ուրիշ մանրամասնութիւններ հաղորդեց:

—Անցեալ օգոստոսի 30-ին, ուրբաթ օր, ես լաւ յիշում եմ, ասաց նա, երեկոյեան դէմ քոյր Աննան, Մանիշակը և ես նստած էիք ուսումնարանի բակում և խօսում էինք: Վանքի ծառան բերաւ լրագիրները: Քոյր Աննան առաւ և սկսաւ թերթել: Դրանցից մինի հեռագիրները կարդալիս՝ նա յանկարծ բացականչեց. — «Օհ, ամեն բան կորաւ...» և ձեռքը դէպի ճակատը տանելով՝ բռնեց գլուխը և այդպէս, գրեթէ քառորդ ժամ, մնաց անշարժ, ընդարմացած:

—Ի՞նչ է պատահել, քոյրիկ, ինչո՞ւ տխրեցիր, հարցրեց Մանիշակը:

—Ինչ որ պատահել է, սիրելիս, նրա ցաւը դու շատ ուշ պիտի զգաս, ասաց նա մեղմով և լռեց: Մենք ուրիշ հարցեր չարինք, վասն զի տեսանք որ նա չէ ուզում խօսել: Եւ այդ օրուանից էլ կարծես դժբաղդ հիւանդութիւնը մտաւ նրա մէջ: Վասն զի միւս առաւօտ դասատուն չեկաւ և ինձ յանձնեց պարապել իւր դասը. իսկ հետեւեալ օրը՝ կիւրակի պատարագին չեկաւ և դպրապետութիւնը ես արի: Երկուշաբթի և երեքշաբթի դարձեալ դասերից բացակայ էր: Այդ բոլոր ժամանակ նա կամ փակուած էր լինում իւր սենեակում, կամ տխուր ու մտախոհ շրջում էր անտառում: Մի շաբաթից յետոյ՝ բոլորովին թողեց իւր պարապմունքը և ամեն առաւօտ կանչում էր ինձ ու

Մանիշակին և պատուիրում թէ՛ ի՞նչպէս պիտի մենք իւր դասերը պարապենք:

—Հիւանդ եմ, սիրելիներս, ասաց նա մի օր, էլ գործելու սիրաւ չունիմ. աշխատեցէք որ իմ բացակայութիւնը զգալի չլինի երեխաներին. պարապեցէք նրանց հետ սիրով, եռանդով: Դուք արդէն պատրաստուած էք դրա համար: Գուցէ մի օր ես չլինիմ, ուրեմն այժմեանից գործը կառավարելու հոգսը պիտի առնէք ձեզ վրայ:

—Աստուած չանէ, քոյրիկ, ինչո՞ւ այդպէս էք ստում, դուք մեզ անիծում էք, վշտացած նկատեցինք մենք:

—Չէ, սիրելիներս, մի նեղանաք. իմ սիրտը վկայում է որ վախճանս հեռու չէ, ասաց նա հառաչելով. տխրելու էլ ոչինչ չունիք. ոչ ոք աշխարհում յաւիտեան չէ ապրում: Սակայն ես ուրախ եմ որ ինձանից յետոյ պիտի թողնեմ ձեզ. վստահ եմ որ դուք հաւատարիմ կը մնաք ինձ:

«Այնուհետեւ նա դարձեալ մի մի անգամ մտնում էր դասատուն, առաջուայ նման քաղցրութեամբ խօսում էր աշակերտների ու աշակերտուհիների հետ. ասում էր նրանց որ այնուհետեւ միայն մենք պիտի պարապենք իրենց հետ և պատուիրում էր՝ հազամդ լինել մեզ:

«Մի քանի օրից յետոյ՝ քոյրիկը կանչեց մեզ, այլ և անցեալ տարում աւարտողներից՝ իրենց ընդունակութեամբ յայտնի մի աշակերտի ու աշակերտուհու. բոլորիս հետ միասին կազմեց դասերի նոր ցուցակ և

գլխաւոր առարկաները մեզ՝ իսկ երկրորդակիները վերջիններին յանձնելով՝ պատուիրեց որ այդ օրից արդէն ուսումնարանի բոլոր հոգսը առնենք մեզ վրայ: Այդ միենոյն օրը նա գանգատուում էր գլխացաւից, իսկ երեկոյեան դողդայցրեց. ապա սաստիկ ջերմ ունէր և ամբողջ գիշերը, ինչպէս Մանիշակն էր ասում, այրուել էր տաքութիւնից:

«Հետևեալ առաւօտ քոյրիկի դրութիւնը աւելի վատթարացաւ: Թիկունքում, կրծքում ու կողերում ցաւեր էր գգում. շնչառութիւնը ծանրացել էր, իսկ երեկոյեան՝ ջերմի սաստկութիւնից մինչև անգամ գառանցում էր: Այդ ամենի վրայ աւելացաւ նաև հազը, որ գնալով սաստկանում և քունն ու հանգստութիւնը խանգարում էր: Չընայելով որ տէր-հօր և տանուէրի խնդիրը մերժեց՝ թոյլ չըտալով բժիշկ հրավիրել քաղաքից, այսուամենայնիւ, մօրս աղաչանքը լսեց և թոյլ տուաւ որ գիւղի վարսաւիրան արիւն առնէ թիկունքից: Վերջինի ասելով՝ քոյրիկը թոքերի բորբոքումն ունէր և այդ միջոցը կարող էր նրան օգնել: Արդարև, արիւն առնելուց յետոյ՝ կրծքի ու թիկունքի ցաւերը հանգարտուեցան և շնչառութիւնը թեթևացաւ: Այնուհետև գործադրեցինք մի քանի անային միջոցներ էլ՝ գլխացաւի ու ջերմի դէմ, որով մի քանի օրից հիւանդութիւնը մեղմացաւ: Բայց ինքը, կարծես, չէր կամենում առողջանալ և խոյս էր տալիս օգտաւէտ միջոցների գործադրութիւնից: Նոյն իսկ բաւական չափով կերակուր չէր ընդունում, որից հետզհետէ մաշուում ու թուլանում էր: Այդ էր պատ-

ճառը որ չընայելով մեր անընդհատ հոգածութեան, նա, այսուամենայնիւ, անկողնից չելաւ և դրսում չերևաց: Գրեթէ մեզանից զատ՝ էլ ուրիշ ոչ ոքի չէր ուզում տեսնել. խօսում էր շատ քիչ և այն՝ միայն Մանիշակի հետ, իսկ երբեմն անկողնում դրում էր ինչ որ բան: Ախորժակը հետզհետէ փակուում էր և վերջին օրերում, համարեա, ոչինչ չըճաշակեց: Իսկ բժշկական օգնութիւնը, ինչպէս Տէր-հայրն էլ ասաց, նա բացէ ի բաց մերժել էր:

Հոկտեմբերի վերջին, նորէն սկսաւ խօսել Տէր-հայրը, նա կանչեց իւր մօտ ինձ, տանուտէրին և գիւղի մի քանի նշանաւոր մարդկանց և ասաց. — «Ձգում եմ որ վախճանս մօտեցել է. ես հեռանում եմ ձեզանից, բայց իմ սիրած գործերը, որոնց արդէն կտակած եմ և իմ մնացորդ կարողութիւնը, թողնում եմ ձեզ: Իմ ուսումնարանը, իմ սիրելի աշակերանները մնում են ձեր յուսով: Պահեցէք նրանց, պաշտպանեցէք նրանց, խնդրում եմ: Իմ վարժապետներն ու վարժուհիները դեռ երիտասարդ են և կեանքի մէջ անփորձ, օգնեցէք նրանց, թե ու թիկունք եղէք նրանց գործին և այդ՝ երջանկութիւն կը բերէ ձեզ...»: Մենք խոստացանք ու երգուեցինք հաւատարիմ մնալ նրա պատուիրանին: Նա սրտաշարժ խօսքերով օրհնեց մեզ և մենք արտասուելով դուրս գնացինք նրա մօտից:

— Նրա անկողնի մօտ հսկում էի ես, խօսել սկսաւ այժմ Մանիշակը. մեռնելուց մի օր առաջ խնդրեց ինձ օգնել իրեն՝ նստել անկողնում և կանչել իւր մօտ Պեարոսին և նորընտիր վարժապետին ու վարժու-

բարեբեր ծառը, որ արմատահան լինելով՝ դառնում է անընդունակ ապրելու և պտղելու... բայց ինչո՞ւ այս աստիճան...: Երբեմն այս մասին մտածում եմ ժամերով և ապա գալիս տխուր հետևանքի.— ինձ համար հետզհետե պարզում է մի հարց, որի մասին առաջ ես չեմ մտածել կամ գոնե ինձ թւում է թէ՛ չեմ մտածել: Այդ այն է որ ես այժմ ինձ տեսնում եմ անգոր այլ ևս արգելքի դէմ մաքառելու և դրա պատճառը համարում եմ այն՝ որ իմ մէջ տակաւին ապրում է կինը, նա, որին մեծ բանաստեղծն իրաւամբ է անուանել թուրուծին: Ո՞րքան է ուղիղ իմ հայեացքը այս խնդրի վրայ, չըզիտեմ. ես կը պատմեմ ձեզ իմ կրածն ու զգացածը այս վերջին ամիսներում և դուք նրանից ձեր եզրակացութիւնն արէք: Բայց... ձեռքս յոգնեց, գլուխս պատում է... խօսենք այս մասին վաղը:

«4 Հոկտ»

«Դեռ մի տարի սրանից առաջ որքան ինձ ուժեղ և անընկճելի էի համարում. որքան մեծ փափագ ունէի ապրելու, որովհետեւ ընտրածս ասպարիզի վրայ, տակաւին կատարելու գործեր ունէի: Յիշում եմ, նոյն իսկ ձեր հեռագրին տուած իմ պատասխանում ասել էի թէ՛ «այժմ իմ մէջ վառում է գործելու նոր եռանդ», վասնզի արժանիքն արդէն գնահատուել և ճշմարտութիւնը յաղթանակել է և թէ ուրեմն սրա զինուորները կարող են պարծենալ և քաջալերուիլ»:

Այդ զինուորների շարքում, հարկաւ, թւում էի և ինձ...: Բայց աւանդ, չանցաւ մի չնչին միջոց և անամենք զգացինք թէ՛ որքան վաղաժամ էր մեր ուրախութիւնը, թէ որքան զուրկ էինք մենք ոգևորուելու և նոյն իսկ յուսալու իրաւունքից...: Այսպիսի դէպքում ի՞նչ է անում արդեօք ուրիշ երկրում կինը, այն տկար արարածը, որին ոգևորութիւնը թևեր է տալիս, իսկ յուսախափութիւնը՝ զրկում մինչև անգամ կանգուն մնալու կարողութիւնից... չըզիտեմ: Ինձ համար միայն կարող եմ ասել թէ՛ փորձութեան այս հարուստ ծին դիմադրել չըկարողացայ. տխուր յայտնութեան առաջին վայրկեաններն իսկ բաւական եղան ինձ ընկճելու և վհատեցնելու: Եւ դրա պատճառը, ինչպէս երէկ էլ ասացի, համարում եմ այն որ իմ մէջ տակաւին ապրում է կինը. զգացմունքների և թուրութեան այն մարմնացումը, որ կրում է մի սիրտ՝ բոլորովին աննման տղամարդու սրտին...: Թէպէտ իմ անցուցած սահմանափակ կեանքը իրաւունք չի տալ ինձ դատել այս դէպքում կենցաղագիտի յաւակնութեամբ, այսուամենայնիւ, հիմնուելով այն ծանօթութիւնների վրայ, որ այսքան տարիներ ունեցել եմ մարդկանց հետ և, մանաւանդ, այն ծանր փորձերի, որոնց իբրև կին եմանալու, այն ծանր փորձերի, որոնց եմ պնդել թէ՛ տղամարթարկուել եմ անձամբ, կարող եմ պնդել թէ՛ տղամարդը անհատական կեանքով ապրելու համար օժտուած է աւելի զօրեղ կամքով ու կորովով, քան կինը. հետևապէս վերջինս իզուր է աշխատում մրցել նրա հետ այդ ասպարիզում: Տղամարդը, այո՛, կարող է ապրել միայնակ և ինքն իւր մէջ կենտրոնացած՝ նուիրուել իւր

սրտի մեծագրած շահերին (լինին զրանք անձնական, հասարակական թէ գաղափարական) և այդ նուիրման մէջ իւր սրտի հանգիստն ու գոհութիւնը գտնել: Հանգիստն սա մի գործում անյաջողութեան, կը փորձէ երկրորդը, երրորդը և սակայն յուսահատութիւնը չի ընկճիլ նրան: Մինչդեռ կինն այդպէս չէ. նա ծնունդ է ոչ թէ ոյժերի դէմ մաքառելու, այլ նրանց պաշտպանութիւնը վայելելու, ոչ թէ կռուելու կամ հալածուելու, այլ սիրելու և սիրուելու համար. ուստի նա լաւ է ապրում և լաւապէս գործում միայն այն ժամանակ, երբ սէրն ու գգուանքը անունդ են տալիս նրա սրտին և խրախուսում նրա ճիգն ու աշխատանքը: Այդպիսի ժամանակ կինը ընդունակ է նոյն իսկ մոռանալ իրեն և նուիրուել բոլորովին սիրած անձի էութեանը, նրա մտքերին ու գաղափարներին, նրա մեծագրած շահերին, նրա անուանն ու փառքին...: Կինը յաճախ աւելի սիրով դառնում է մի հիւլէ կամ ամենաշատը՝ լուսոյ մի շառաւիղ՝ այդ փառքի պատկերը լուսաւորելու համար, քան թէ փայփայում է իւր սեփականը՝ իբրև ուրոյն գործող երևալու համար: Եւ այդ անում է ոչ այն պատճառով որ ինքն աւելի է ընդունակ անձնուիրութեան, քան տղամարդը, այլ այն՝ որ աւելի է ապրում գգացմունքներով, այսինքն սրտով: Եւ որովհետև կնոջ սիրար միայնակ մնացած ժամանակ չի ջերմանում ինքն իրեն, ըստ որում նա ստեղծուած է մի ուրիշ էակի շնչով ջերմանալու, նրա ազդեցութեամբ բարախելու, նրա գգուանքով զօրանալու և, ի վերջոյ, նրա էութան մէջ լուծուելու և այդ լուծման մէջ իւր

երանութիւնը գտնելու համար, այդ պատճառով նա, ձգտելով դէպի իւր ընտրած էակը, ցանկանում է տեսնել նրան կարող ու զօրաւոր. որպէս զի ինքը՝ նրանից սիրուած ժամանակ, սիրուի գերազանցօրէն, բուն և ուժգին... Եւ հենց այդ պատճառով էլ նա սիրով տալիս է այդ էակին ամենը, ինչ որ ունի մեծագին, որպէսզի զբանով աւելի զօրանայ այն աղբիւրը, որ կեանք պիտի տայ իրեն: Այս իսկ է պատճառը որ կինն աւելի է ուրախանում սիրած անձին հասած մի յաջողութեամբ, կամ տխրում նրա կրած մի կորուստով, քան եթէ զբանք հասած լինէին իրեն: Վասն զի հաւատում է թէ՛ ինքը կարող է մնալ միշտ կանգուն և զօրաւոր, քանի զօրաւոր է սիրոյ առարկան, բայց կընկճուի, կոչնչանայ, երբ այս վերջինը զրկուի իւր ոյժից...: Եթէ տեսնէք մի կին, որ ապրում ու գործում է միայն նութեան մէջ, զ, այդտեղ էլ պտրեցէք այն աներևոյթ ուղին, որ նրան ընկերանում, շունչ ու կեանք է տալիս, հուր ու կորով է ներշնչում... այն, կնոջ սիրար լիս, հուր ու կորով է ներշնչում... այն, կնոջ սիրար մենակ ապրել չէ կարող, միայնութեան մէջ նա կը սառչի, կընդարմանայ և այդ է պատճառը, որ նա սրբապաշտ, կընդարմանայ և այդ է պատճառը, որ նա սրբապաշտ ձգտում է դէպի ջերմացնող ճառագայթները: Թող նրանց աղբիւրը գտնուի թէկուզ հեռում, անհութիւնը հասնում են իրեն. նա գոհ է լինում և այդքանով...: Բայց երբ այդ լոյսը մարում, երբ ճառագայթները ազդեցութեամբ չեն, զ, այն ժամանակ մի ներքի աղբիւրը ցամաքում է, զ, այն ժամանակ մի պտրէք կնոջը կենդանիների մէջ... ան, որքան թոյլ եմ... աչքերս խառնուում են, չեմ կարող շարունակել...:

«5 Հոկտ.

«Ի զուր չէ ասում լատինական առածը՝ «առողջ հոգին՝ առողջ մարմնի մէջ»: Ինձ թւում է թէ՛ յուսահատութիւնն այսքան չէր ընկճիլ հոգիս, եթէ ես չընկանդանայի. բայց այդ պատահեց անսպաս: Ձեր հեռագիրը ստանալուց յետոյ՝ ինձ այնպէս լաւ էի զգում, այնպէս երջանիկ որ կարծես նորէն երիտասարդացել էի: Ես, որ իմ գործունէութեան երկար շրջանում ոչ ցնորել էի և ոչ երագել, այժմ այդ անում էի ինչպէս կեանքի գարունը նոր ողջունող մի պատանեկունի: Գրեթէ օրերով մտորումէի այն մասին թէ՛ — Ահա, ուր որ է, «ընտրեալը» կը գայ, կողջունէ կարօտով սիրած հայրենիքը, կը բազմի հինաւուրց աթոռի վրայ և շուրջը խմբելով արժանեաց տէր անձինք, կը սկսէ վերաշինել խաթարեալ տունը, կը մաքրէ նրան փտութիւնից ու փոշուց և միջից հանելով հիւանդն ու օտարամուտը, տեղը կը հաստատէ առողջն ու հարազատը: Նա կը վանէ, ասում էի, այդ տան դռներից սեղանաւորներին, հացկատակներին, բանասարկու խռովարարներին, գայթակղութիւն սերմանողներին և դրանց փոխարէն կը կարգէ դէտ և խնամակալ անկաշառ, ուղղամիտ և արդարադատ անձանց, որոնք չարի փոխարէն՝ կը հաստատեն բարին, խռովութիւնը կը փոխարինեն խաղաղութեամբ, ատելութիւնը՝ սիրով, գայթակղութիւնը՝ ուղիղ հաւատով: Նա կընդդայնէ, մտածում էի, լուսաւորութեան աս-

պարէզը, գործի հրաւիրելով անձնուէր սրտերին, արժանաւոր մշակներին և քաջալերելով շնորհն ու առաքինութիւնը՝ կը հաստատէ մեր մէջ միայն բարձրին ու արժանաւորին երկրպագելու պաշտամունքը: Այդպիսով հետզհետէ մեր հոգևոր աշխարհից կը հալածուին տգիտութիւնը և այն շահագործող պաշտօնեաները, որոնց շնորհիւ շատ ջերմ սրտեր են սառել, շատ վեհ հոգիներ վշտացել, բարձրախոհ մտքեր ընկճուել, յոյսեր ու ակնկալութիւններ մարել...: Եւ երբ այսպիսով կը մաքրուի Վեհավայրը շրջապատող մթնոլորտը, երբ սեւթոյր ամպերը հորիզոնից կանհետանան և երբ արդարութեան արևը Սուրբ Խորանը կողողէ, այն ժամանակ այդ արևից կը ջերմանան նաև սառած սրբմանակ այդ արևից կը ջերմանան նաև սառած սրբտերը, կամօքուին, ոյժ կառնեն վշտացած հոգիները, նորէն կը վերածնուին և վեհ մտքերը և մեծ յոյսերը... Եւ ամենքը միահամուռ, մի սիրտ և մի հոգի՝ կը փառնուին իրենց Լուսածին Մօրը, կը տան նրան սիրոյ կաթորին համբոյր և նրանից կառնեն լոյս, ջերմութիւն և կենդանութիւն...: Այս ոգևորուած մտորումների ժամանակ, մի յանդուգն զգացմունք խտաղում էր սիրաս և լցնում այն անբացադրելի երանութեամբ: — Ես և լցնում էի թէ՛ ինչպիսի հոգեկան հրճուանքով մտածում էի թէ՛ ինչպիսի հոգեկան հրճուանքով պիտի զգուեմ այն միտքը թէ՛ այս մեծ անձը, որ այնքան առաքինաբար իւր նուիրման ընթացքը կատայնքան առաքինաբար իւր նուիրման ընթացքը կատարեց և օր քան զօր շնորհներով զարդարուելով՝ ազգի բեց և օր քան զօր շնորհներով զարդարուելով՝ ազգի միահամուռ ընտրութեան արժանացաւ, այս վեհ անձը, որ այսօր մեր հոգևոր կեանքի նաւը վարում է այսքան իմաստնաբար և հմտօրէն հեռացնելով խարակներից ու

նաչով, իւր վառվռուն ծաղիկներով, որ առատօրէն ամեն կողմ սփռելով՝ կը պճնէ, կը գարդարէ մարզն ու մարմանդը, դաշան ու բլուրը, լեռն ու քարափը և... մոռացնել կը տայ մարդկանց ժանտ ձմրան գոյութիւնը, նրա ցուրտն ու սառոյցը, նրա մահաշունչ բռնութիւնը...: Իսկ այդ գարսունը, օհ, Աստուած իմ, ես էլ չեմ տեսնելու... նրա արևն ու հովերը, նրա կանաչն ու ծաղիկները էլ իմ աչքերը չեն պարարելու...: Բայց, անխ, ինչպէս կը կամենայի ապրել... նորէն ոյժ առնել. նորէն տուգանալ, նորէն աշխատել, տքնել և գարնան բարիքներով իմ ջանքերը պսակել...: Ինչո՞ւ, ինչո՞ւ բնութիւնից դասեր չենք առնում. ինչո՞ւ նրա հարազատ ծնունդները լինելով՝ նրա ցոյց տուած օրինակներով չենք ոգևորւում և թոյլ ենք տալիս որ վհատութիւնը տիրէ մեր հոգուն, գերէ մեր սրտերը, սպանէ թանկագին տեսչերն ու իղձերը... Զէ՞ որ գիտենք թէ՛ մահաշունչ ձմրան յաջորդում է միշտ կենսաբեր գարունը. չէ՞ որ սա արդէն յաւիտենական ճշմարտութիւն է...: Եւ սակայն, աւանդ, սխալ գործեցի. մոռացայ մի վայրկեան մեծ ճշմարտութիւնը և այժմ արդէն ուշ է... Զրպէտք է մոռանալ... և ոչ իսկ մի վայրկեան...:

«14 Հոկտ.

«Կամեցայ դարձեալ գրել. բայց տեսնում եմ որ ոյժ չունիմ. ինքս չըկարողացայ նստել անկողնում. Մանիշակն օգնեց... Ախ այս հրեշտակը, այս բարի և ազնիւ հոգին... մի վայրկեան չի հեռանում ինձանից.

Իսկ Պետրոսը շարունակ պատում է միւս սենեակում: Ինչպէս տխուր ու ճնշուած են նրանց մատաղ սրբտերը... Իմ ցաւերը չեն տանջում ինձ այնքան, սրանց արտասուքն է, որ մարմոքեցնում է սիրտս... Օհ, այժմ, այժմ միայն կըցանկանայի ապրել որ սրբէի սրանց արցունքը և սովորեցնէի չըլալ, երբէք չըլալ, այլ արիա՛նալ և գործել... աւանդ, այդ դասը ես չըտուի նրանց, որովհետեւ չըզիտէի թէ՛ հարկ կը լինի լալ... այժմ տեսնում եմ որ անհրաժեշտ դասը մնացել է առանց խօսելու... ի՞նչ անեմ. ես այլևս անկարող եմ... մնում է օրհնել այն բերանները, որոնք այդ դասը կը խօսեն ոգևորութեամբ...:

«15. Հոկտ.

«Գրել այլ ևս անհնար է... գրիչս ընկնում է... նրա փոխարէն՝ զօրանում է արտասուքս... ծրարեմ այս թերթերը. եթէ առողջացայ, դարձեալ կը գրեմ, եթէ ոչ, խօսածս էլ բաւ է... արդէն գիտէք թէ՛ ինչո՞ւ մարեց կրակը... ընդունեցէք իմ ջերմագին ողջոյնը... Եթէ երբ և իցէ պատահէք իմ սիրելի ուսուցչին. պատմեցէք նրան իմ մասին մի քանի բան... Ասացէք որ իւր քաղցր պատուէրի համաձայն՝ «մեռաւ ցորեանն», զի բազում արդիւնս արասցէ...»:

Զեր քոյր Աննա»:

Այս ամենը կարդալու ժամանակ՝ ես շատ անգամ յուզուեցայ և երբեմն հազիւ էի ինձ զսպում որ բար-

ձրածայն չըհեկեկամ: Իսկ երբ աննման կուսի վերջին խօսքերը կարգացի, արտասուքս սկսաւ աղբիւրի պէս հոսել և ես գլուխս ձեռքերիս մէջ առած՝ երկա՛ր լաց էի լինում, ինչպէս թանկագին հարագատը կորցրած մի մարդ:

Հետևեալ առաւօտ, շատ վաղ գնացի քոյր Աննայի գերեզմանը համբուրելու: Նա գտնուում էր եկեղեցու արևելեան կողմը, փոքրիկ անտառի եզերքին, գեղեցիկ ու նորաստեղծ բարձրաւանդակի վրայ: Մի պարզ, սպիտակ տապանաքար ծածկում էր այդ սուրբ գերեզմանը, որի վրայ սաւառնում էին նորատունկ ուռիներ: Բարձրաւանդակն ամբողջապէս զարդարուած էր ծաղկանց տունկերով և նրանց շուրջը պատելով՝ խոխոճում էր փոքրիկ, ականակիտ առուակ, որ իւր մշտամոռնչ մրմունջը ուռիների սօսաւիւնին խառնելով՝ ասես թէ յաւիտենական մեղեդիներ էր երգում անգուգական կուսի հանգստեան համար:

Մենաւոր շիրմի շուրջը արոււմ էր վսեմ, խորհրդաւոր լուսթիւն, որ մարդուն ակամայ դարձնում էր ջերմեռանդ: Ես խորին ակնածութեամբ մօտեցայ շիրմին և երկիւղածութեամբ համբուրեցի այն: Տապանի վրայ, հանգուցեալի ցանկութեամբ, փորագրուած էր միայն երեք բառ. «Քոյր Աննայի հանգիստը»: Բայց որքան մտքեր, որքան պատմութիւններ կային այդ պարզ բառերի մէջ... Այդտեղ ամփոփուած էր գողարիկ զգացմունքների, սուրբ զաղափարների և ազնուագոյն ոգևորութեան մի ամբողջ աշխարհ... Այդ կանաչագարդ շիրմի մէջ հագչում էր Հայրենիքի

սուրբ սիրոյ նահատակը—մարմնացեալ անձնուիրութիւնը, որ սրի դէմ չէր գնացել, վառօդի դէմ չէր խիզախել, բայց մղել էր նոյն կուսը, ինչ որ ամեն մի մեծ հերոս...: Ո՞ր ճշմարիտ հայրենասէրը չէր խոնարհիլ իւր գլուխը այդ սրբազան շիրմի առաջ և ո՞ր երիտասարդ սրտին՝ սէր ու եռանդ չէր ներշնչիլ «Քոյր Աննայի հանգիստը»...:

Համբուրելով այդ շիրմը՝ ես չոգեցի նրա առաջ և աղօթեցի սրտայոյզ:

Իմ աղօթքը՝ մի ջերմ ցանկութիւն էր, տեսնել մեր մէջ, գոնէ այսուհետև, Քոյր Աննային և նրա Ուսուցչին արժանաւոր հետևողներ:




Յ Ա Ն Կ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

| | |
|--------------------------------|-----|
| | Էջ |
| Ընդդրոցողին | 3 |
| Նոյի ազուար | 7 |
| Առաքելալը | 79 |
| Խորհրդատր Միանձնունի | 339 |



«Ազգային գրադարան»



NL0351390

45113